

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱՐՈ ՊՈՂՈՍՅԱՆ

ՇԱՅԿԱԿԱՆ ՇԱՐՑԻ ԵՎ
ՇԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊՈՒՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՇԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ԳԻՐԶ ԱՌԱՋԻՆ

ՄԱՍ Ա

9(47.925)
մ-79

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ ԿԱՐՈ ՊՈՂՈՍՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Հատոր ԵՐԲՈՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ 1917Թ. ԵՐԿՐՈՐԳ ԿԵՄԻՑ
ՄԻՆՉԵՎ ՀՀ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Գիրք ԱՌԱՋԻՆ

Մա ս Ա

Երևան
«Հայաստան»
2004



3520

ՀՏԳ 941.(479.25)
ԳՄԳ 63.3(3հ 1գ)52
Պ 797

Հրատարակվել է պետական պատվերով

Պ 797 Ստ. Պողոսյան, Կ. Պողոսյան
Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն,
Հայկական հարցը 1917թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը,
III հ., գիրք I, մաս Ա: Եր. Հայաստան, 2004թ., 392 էջ:

Գրքում փրվում է 1917թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը ընկած ժամանակահատվածում Հայաստանում փեղի ունեցած պատմական դեպքերի և իրադարձությունների նկարագրությունը, ազգային և քաղաքական անցքերի վերլուծությունը:

0503020913
արտ.
701(01)04

ԳՄԳ 63.3(3հ(3))52

ISBN-5-540-01831-1

© «Հայաստան» հրատ., 2004թ.:
© Պողոսյան Ս., Պողոսյան Կ., 2004թ.:

1916 ԵՎ 1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ (Ներածության փոխարեն)

Հայոց ցեղասպանության երրորդ շրջանը սկսեց ձեւավորվել այն օրերին, երբ Արեւմտյան Հայաստանի տարածքը շարունակում էր մնալ պատերազմական գործողությունների բառերաբեմ: Դա Հայկական հարցի լուծման նյութականացված հնարավորության ժամանակաշրջանն էր, այն դիվանագիտական քննարկումներից, կաբինետային գրույցներից դուրս էր եկել ռազմադաշտ եւ միտված էր լուծվելու ռուսական զենքի ուժով: Այդ գործում կոչված էր վճռական դեր խաղալու 1916 թիվը: Տարվա սկզբին ռուսական բանակն ընդհանուր հարձակման անցավ Կովկասյան ռազմաճակատում: Թվում էր եւս մի «թռիչք», մկանների մի հզոր պրկում եւ Տավրոսի ամպարքեր բարձունքներն ու անդունդները տեղի կտային, եւ ռուսները կխուժեին Տիգրանակերտի հարթավայր, որից մինչեւ Կիլիկիայի ափերն այնքան մոտ էր:

Բնականաբար, ռուսական բանակի առաջնամասում հայ կամավորներն էին: Անդրանիկի գունդը, որ հիմնականում կազմված էր սասունցիներից ու տարոնցիներից, Ախլաթի վրայով շարժվեց դեպի Բաղեշ: Անդրանիկի կողքին էին Սմբատը, Յրոնքցի Մուրադը, Ա. Միրզոյանը, Փիլոսը, Ս. Մուրադը, Սեպուհն իրենց մարտական ջոկատներով:

Նույն ժամանակ Մանազկերտից դեպի Խնուս ու Մուշ էր առաջանում Դրոյի կամավորական գունդը:

Թուրքական բանակը խունապահար, առանց գնդակ իսկ արձակելու, փախչում էր Սղերդի, Բշեթիկի եւ Դիարբեքի (Ճապաղջուր, Խուլք) ուղղություններով: Նահանջի ուղիները ծածկվեցին դիակներով, բայց այս անգամ արդեն դրանց 80 տոկոսը երեկվա դահիճների դիակներն էին: Սակայն կային նաեւ հայերի, մասնավորապես հայ կանանց ու երեխաների դիակներ: Թուրքերն ու քրդերը իրենց հետ տարել էին մեծ թվով հայ կանանց ու երեխաների, որոնցից շատերը զոհվեցին փախուստ-նահանջի ճանապարհին:

Մեկուկես ամսում ռուսական բանակն ազատագրեց Էրզրումը, Տրապիզոնը, Երզնկան, Բիթլիսը, Վանը, այսինքն՝ Արեւմտյան Հայաստանի տարածքի 2/3-ն ու առանց կանգ առնելու սրընթաց շարժվում էր հարավ-արեւմուտք եւ արեւմուտք:

Կամավորական զնդրի հետեւից Խնուս ու Տարոն հասան Ալաշկերտում գտնվող Փեթարա Մանուկը, Վ. Քրմոյանը, Տ. Չորյանը, Բ. Աբոյանն իրենց ջո-

կատմերով: Ազատագրված շրջաններ վերադարձան եղեռնի վերապրածները: Նրանց բիվը շատ մեծ չէր. բայց կարճ ժամանակ անց ավերակների միջից նորից հասնեցին հայ շեները: Այդ վերածնմանը նպաստում էր նաև այն, որ հայ կամավորական զնդեր կային ռազմաճակատի գրեթե բոլոր ուղղություններում: Դրոն գրավեց Մուշն ու անցավ Սասուն, Անդրանիկի և Համազասպի զնդերը Բաղեշի շրջանում էին, Քեռին Վանում էր, կամավորական զնդեր էին գործում նաև Կարինի ուղղությամբ:

Այդ հանգամանքը նույնպես դեր խաղաց, որ գրավված տարածքները շատ արագ բորբափեցին պատերազմական հարկադրանքը և մինչև 1918թ. սկիզբը համեմատաբար խաղաղ վիճակում էին:

Այո, եղեռնից փրկվածները վերադարձել էին և փորձում էին վերսկսել իրենց խաբարված կյանքը: Բայց որովհետև Արեւմտյան Հայաստանում մնացածների բիվը մեծ չէր, հայ գործիչները աշխատում էին նրանց բնակեցնել համախումբ, որպեսզի հնարավոր լիներ պաշտպանել: Մասնավորապես մեծ քվով հայեր հավաքվեցին Խնուսում ու Մուշում:

Կ. Սասունին պատմում է, որ ինքը Փեթարա Մանուկի հետ վերադառնալով Մուշ և իրենց հետ ունենալով «բազմաթիվ գործակիցներ», լծվում են «շրջանը կազմակերպելու, որբերը հավաքելու, քրդական շրջաններեն հայ բեկորները ազատելու և ժողովուրդը զինելու՝ իր գոյութեան պահպանման համար»¹:

Ընդհանրապես հին հայդուկների վարքագիծը՝ անձնվիրություն, համառություն, մշտապես գործի մեջ՝ ժողովրդին փրկելու պայքարում, թե եղեռնի տարիներին և թե դրանից հետո առաջացնում է ակնածանք ու վիրխարի հարգանք:

Երբ Ռուբենի խումբը հեռացավ և տեղի ունեցավ Անդոկի ողբերգությունը, Մուրուբ Կարոն և ջարդից փրկվածների մի խումբ նորից բարձրացան Անդոկ ու քարնվեցին քարայրներում: Քաղցից չմեռնելու համար գիշերները դուրս էին գալիս բույսերով սնվելու համար: Քրդերն աշխատում էին ամենատարբեր միջոցներով ոչնչացնել քարայրներում ապաստանած հայերին, բայց Կարոյին հաջողվում է թեւանցել այդ քրդերին և գերի վերցնել: Քրդերի առաջնորդ Խուլքի հայտնի աշիրեթապետ Հուսեյին աղայի ու նրա մարտիկների կյանքը Կարոն խնայեց: Դրա փոխարեն Հուսեյինը 300 հայերի անվնաս հասցրեց ռուսական բանակ:

1916թ. հունվարին Կարոն Անդոկում թաքնված 400 հոգու ուղեկցեց Մուշ: Այնտեղ մեկ ամիս մնալուց հետո 150 տեղացի մարտիկների հետ մեկնեց Բոնաշեն և ս. Աղբերիկ վանքի շրջանում 1,5 ամիս կռիվներ էր մղում Մուսաբեյի

¹ «Տարոնի արծիվ», 1950թ., N32, էջ 26-27:

դեմ: Նա Մուշ փոխադրեց այդ շրջանում թաքնված 240 հայի: Ապա 60-70 մարտիկների գլուխն անցած ռուսական զորքի հետ շարժվեց դեպի Անդոկ: Բայց ռուսները երկար չեն մնում Սասունում և բանակ են դնում Արածանիի ձախ ափին, իսկ այ ափին թուրքական զորքերն էին: Այդպես թշնամի բանակները «հարեւանություն արեցին» ամբողջ ձմեռը: Այդ ընթացքում Փեթարա Մանուկի ջոկատը «մի հայ մի ոսկի» գործառույթով փրկեց շուրջ 500 հայի: Կազմակերպվեցին սասունցիների և տարոնցիների աշխարհագրային գնդեր, որոնք գործեցին Մշո դաշտում, Խնուսում, Ալաշկերտում, Բուլանըխ-Մանակերտի շրջանում և մեծ գործ կատարեցին հայկական տարածքները թուրքերից մաքրելու ուղղությամբ:

Երբ 1916-ի աշնանը կամավորական զնդերը լուծարվեցին, տարոնցի կամավորները մնացին Տարոնում: Նրանց շուրջը ձեւավորվեց յուրատիպ աշխարհագրային բանակ, որը երկակի խնդիր էր լուծում՝ ռուսական բանակի առաջապահի և բանակի թիկունքը թուրքերից ու քրդերից մաքրողի: Աշխարհագրային ուժերը գործում էին Մշո դաշտից մինչև Արճեշ: Ընդհանուր հրամանատարը Փեթարա Մանուկն էր: Նրա հետ էին հին հայդուկներից Ախտն, Իսրոն, Թաթոն, Սանդրոն, Յրոնքցի Մուրադը, Չոպուր Միսակը, Գոմսեցի Մոսոն և Մեյլիքը, Լույրի Տիգրանը, Պոտիկ Արամը, Արմենակը, Պոլեի Արշակը, Ռուբենը և Լորիսը, Քեռի Հովոն, Մարգիս և Ավետիս Թախանները, սասունցիներ՝ Չոլոն, Մորուք Կարոն, Պետոյան Ղազարը, Ֆահրադյան Ղազարը, Տալվորիկցի Թաթարն ու Ֆարեհը, Սեմալցի Ստեփանը, Գելիցի Պետրոսն ու Ավեն:

Խնուսում էին Սասունցի Մուշեղը, Պուճուր Աբրոն, Փիլոսը, Շապուհը, Խաչոբանցի Սիմոնը, Կորալցի Արամը: Բուլանըխ-Մանակերտում գործում էին Սիիրանը, Արշակը, Կնյազը, Մ. Դարմանյանը:

Թվարկվածները ղեկավարում էին հայդուկային և աշխարհագրային խմբեր, որոնց կենտրոնը Մուշն էր (1917թ. փոխադրվեց Խնուս): Դրանք աստիճանաբար իրենց վրա վերցրեցին նաև հայ կամավորական զնդերի պարտականությունները:

Ի դեպ, գրականության մեջ ոչ քիչ դեպքերում իրավիճակն այնպես է ներկայացվում, թե սկզբնական շրջանում ցարական իշխանություններն անվերապահ վերաբերմունք ունեին հայ կամավորական զնդերին, ինչն իրականությանը չի համապատասխանում: Անգամ այդ զնդերի գաղափարի հղացող և կազմակերպիչ Վորոնցով-Դաշկովը դեռ 1915թ. մայիսի 24-ին գրել էր. «Ինձ հայտնի է հայերի ազգայնական բաղձանքը, 4-5000 կամավորներ Ռուսաստանի համար վտանգ ներկայացնել չեն կարող, երբ կռվում են ճակատային

առաջին գծում: Բայց նրանք վտանգավոր ու անհանգիստ տարր կդառնան, եթե արձակվեն գորրի շարքերից եւ կուտակվեն թիկունքում: Լավ է այդ «ռուծք մետոդներին» պահել կոիվների մեջ եւ հետագայում օգտագործել թուրքական գործերում: Ավելի լավ է Վանն էլ ետ տրվի թուրքերին, քան թե նրանցով հուզենք Անդրկովկասի ներքին կյանքը»²:

Բնականաբար նման մտածողությունը չէր կարող չհանգեցնել կամավորական շարժման առաջ նաեւ արհեստական, միտումնավոր դժվարությունների ստեղծմանը, դրանց դեպի լուծարում տանելը:

Անդրանիկի կարծիքով ցարական իշխանությունները ցրեցին կամավորական գնդերը. «1. որպեսզի հայ կամավորների ծառայութիւնը արձագանք չգտնի հանրութեան եւ Եվրոպայի մեջ, հոգ չէր, թե հայ կամավորներու կատարած գործերին եւ յաղթանակներին դաշնակիցներու կովկասեան ներկայացուցիչներն իրազեկ էին: 2. Թաթար հայտնի անձնավորութիւնները բողոքում էին փոխարքային, ըսելով, թե «հայ կամավորները խաղաղ թուրք ժողովուրդը կկոտորեն»: 3. Հայաստանն առանց հայերի քաղաքականութիւնն էր, որ առաջ կտարուէր: Այս ատեն մեծ դուքս Ն.Ն. (Նիկոլայ Նիկոլաեիչ) Ալաշկերտի հովիտը 50.000 կազակներ բերելու եւ բնակեցնելու համար գիւղեր եւ ճամբաներ շինել տուած էր»³:

Ռուսական իշխանությունների այս քաղաքականությունն իրենից վանեց հայ կամավորների նշանակալից մասին. նրանք չկորցնելով հույսը, որ ռուսական զենքն է փրկելու Արեւմտյան Հայաստանը, միաժամանակ ծավալեցին ինքնավար, ռուսների հետ չհամաձայնեցված գործունեություն: Իհարկե, դա առաջին հերթին վերաբերում էր ցեղասպանության մորիկի կողմից ամայացած Հայաստանի վերակենդանացմանը:

Այդ խնդիրը լուծելիս նրանք չէին կարող աչքաթող անել երկրամասի ոչ հայ բնակչությանը, որը փաստորեն հայտնվել էր Հայաստանի տիրոջ վիճակում: Հասկանալի էր, որ հայության եւ մահմեդական բնակչության փոխհարաբերությունները, չնայած այս անգամ հաղթողի վիճակում հայերն էին, ավելի քան բարդ էին՝ դրանցում միախառնված էին փոխադարձ բնաջնջման կիրքն ու բնականոն համակեցության մղումը:

Սասունում «Քիրտն ու հայը կրցած էին մասամբ իրարու գոյութիւնը տանիլ,- վկայում է Կ. Սասունին,- ու չբնաջնջուիլ... անվնաս հայութիւն մը հարիւրով ու հազարով կարավան կազմած կազատուէր ու կուգար տեղավորուիլ Մուշ քաղաքը ու շրջանները»⁴: Գալիս տեղավորվում էին նաեւ զենքի

ուժով, երբեմն նաեւ տեղի քուրդ եւ թուրք բնակիչներին ոչնչացնելով: Պատճառը ոչ միայն վրեժխնդրությունն էր, Սեմ եղեռնի սահմուկեցուցիչ պատկերները, որոնք դեռ վերապարձների հայացքի առաջ էին, այլեւ գոյատևելու հնարավորություն ստեղծելու առօրեական պահանջը: Վերադառնում էին, Սասնո ծերպերից իջնում հայրենի բնակավայրեր, որոնց մեծ մասն այլևս գոյություն չուներ՝ հիմնահատակ ավերված էր ու, նաեւ, անվտանգ չէր փոքր խմբերով մեկուսացված բնակվելը: Դրա համար էլ տեղի էր ունենում ոչ թե պարզապես վերաբնակեցում, վերադարձ հայրական օջախ, այլ վերադասավորում, նույն տարածքում հնարավորին չափ առավել ստվար խմբեր բնակեցնելու գործընթաց: Օրինակ, առավելապես քրդաբնակ Մոտկանի վերապարձ հայերը հաստատվեցին Մանազկերտում: Ընդ որում՝ վերաբնակեցման գործընթացը բարդ էր, լի դժվարություններով: Այնուամենայնիվ, մի քանի ամսում Սասունից վար բերվեց 2400, Խուր-Բոնաշենից ու Մոտկանից 11.000 մարդ: Այդ գործընթացը երկար շարունակվեց, քրդերի ու թուրքերի գերության մեջ գտնվող հայերը գալիս ու գալիս էին խմբերով թե անհատ:

Հայությունը սկսեց տուն դառնալ նաեւ Կովկասից: «Վանեն Արճեշ, Մանազկերտեն Պիթիս, Մուշեն մինչեւ Խնուս, Երզնկայեն մինչեւ Էրզրում հայրենի երդիքեն սկսած էր ծուխ բարձրանալ»⁵: «Հակառակ մեր բշնամիներու ակնկալութեանց, հայ ցեղը ամբողջովին բնաջնջուած չէր»⁶: Նրա բեկորները համառությամբ կառչում էին հայրենի վայրերին, գերագույն ճիգեր էին լարում հայոց շենքեր վերականգնելու համար: Արեւմտյան Հայաստանը վերակենդանանում էր: Ահա այդ պահին ցրվեցին կամավորական գնդերը եւ դա պատճառաբանվեց նրանով, որ Արեւմտյան Հայաստանն արդեն գրավված էր: Չորացրված կամավորները հրաժարվում էին մտնել ռուսական զորամասեր, նաեւ մեկնել Անդրկովկաս: Նրանք զենքերով ցրվեցին արեւմտահայության մեջ ու նրան վերածեցին զինված ժողովրդի: Խնդիր առաջադրվեց հայաբնակ շրջաններում ստեղծելու մարտական ջոկատներ: Դա դժվար խնդիր չէր: Ժողովուրդն ինքն այլևս մախկինը չէր, դարձել էր մարտունակ, նրա կողքին էին պատերազմական փորձ ունեցող կամավորները:

Մուշում կայագորի պետ էր Սիլիկյանը: Շատ զգույշ զինվորական էր եւ տեղի հայ բնակչությանը զենքով ու զինամթերքով շատ ավելի օգնեց զենքերալ Սավիցիին, քան նա: Ռուսական հրամանատարությունը հայերին հնարավորություն տվեց Տարոնի դաշտավայրը մաքրել մահմեդական հրոսակներից: Սասունից մարտիկների մեծ մասը մնաց Մուշում, իսկ մյուսնե-

² Անանուն Գ., Արեւելահայերի հասարակական զարգացումը, հ. III, Վենետիկ, 1926, էջ 554:

³ Չօր. Անդրանիկի կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը. 1914-1917, Ռոստոն, 1924, էջ 49:

⁴ Սասունի Կ., Պատմութիւն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 1039-1040:

⁵ Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 1041:

⁶ Ն.տ., էջ 1043:

րը Մանուկի ղեկավարությամբ գավառից գավառ էին անցնում ու ազատում ղեռնու անապատության մեջ գտնվող հայերին:

Մանազկերտում գործում էին Մ. Գրիգորյանի եւ Մ. Դարմանյանի ջոկատները: Խնուսում Սասունցի Մուշեղն էր, ինչպես նաեւ Ս. Տեր-Հովհաննիսյանի, Քաղքիկի Արամի, Պուճուր Արթուրի, Շապուհի եւ Մխիթարի խմբերը: Մշո դաշտում էին Ախոն, Իսրոն, Կիրակոսը, Մուրուր Կարոն, Չոլոն, Թորոն, Թաթարը, Հագեն, Դագար Պետոյանը, Փոքր Դագարը, Շենիկցի Պետրոսը, Սեմայի Ստեփանը եւ Գալուստը, Կոփի Հմայակը, Գելիի Պետրոսը, Տեր Քաջի Ադամը, Մարգեն, Աիրոնքի Մանոն, Գըլեգերմավի Նորեն: Այստեղ էին Վարդենիսի Մարտիրոսը, Արասնաց Աբրահամը, Սողոմոնի Սկրոն, Աղջանցի Վահանը, Քրդագոմցի Համբարձումը, Վանքի Ավետիսն ու Սարգիսը, Գոմսի Մոսոն, Յրոնքցի Մուրադը եւ շատ ուրիշներ:

Մուշ քաղաքում էին Տ. Գավառյանը, Ա. Մարդեյանը, Ա. Պոլեյանը, Ա. Սասունին, Ե. Պարսամյանը, Ս. Սպանդարյանը, Հ. Ամատունին, Ա. Պողոսյանը:

Հայկական ջոկատների ճնշող մեծամասնությունը համատեղում էր պաշտպանական խնդիրների լուծումը տնտեսական գործունեության հետ: Սակայն գլխավորն այն էր, որ նրանք իրապես արդեն անմոռուչ սպանդանոց գնացող հայերը չէին, այլ մարտունակ, վրեժխնդիր, փոխվրեժի միտված զինվորներ:

Արեւմտյան Հայաստանի «քրքուրեան մեծամասնութիւնը կամ բնաջնջուած էր, կամ հեռացած էր Թուրքոյ ներքին նահանգները: Քիւրտերն ալ թեւ նոյն վիճակին ենթարկուած էին, բայց բավական թիվով մնացած էին քանի մը լեռնամասերու մեջ»⁷: Սակայն այդպես էր ոչ ամենուրեք, օրինակ, այդպես չէր Երզնկայում, Էրզրումում, Բասենում: Այդ շրջաններում հայերը մուսուլմանների դեմ մղում էին մահուկենաց պայքար, նախ՝ Հայաստանը հայացնելու, երկրորդ՝ ապահովելու հայ կռվող ուժի թիկունքը, եւ երրորդ՝ ապրելու միջոցներ հայրայրելու, որովհետեւ արեւմտահայը մնացել էր առանց ոչնչի: Մինչդեռ տեղի քրդերն ու թուրքերը տիրացել էին հայերի ողջ ունեցվածքին: Հայը ձգտում էր հետ բերել իրենից խլվածը եւ այդ նրան հաջողվում էր: Մշո դաշտում քրդեր ու թուրքեր կային միայն Ջրիկ գյուղում՝ 700 հոգի, որոնք ռուսական բանակի հովանավորության տակ էին: Սակայն հայերը երկար շահնդորժեցին նրանց գոյությունը: «Երկու հազարե ավելի ժողովրդական զանգուած մը, կիներն եւ տղամարդերն բաղկացած, զենքերով, սուրերով, բիրերով եւ քարերով զինուած, կը մտնէ Ջրիկ գիւղը: Այս ժողովրդական ալիքը երկու ժամուան ընթացքին կոչնչացնէ 700-ե ավելի թշնամի...»⁸:

⁷ Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 1048:

⁸ Ա.տ., էջ 1049:

Հայը վճռել էր. «Անօրեններն այս երկրում այլեւ տեղ չունեն»:

Նման գործողություններն առանձին դեպքերում ողբերգական ավարտ էին ունենում նաեւ իրենց՝ հայերի համար: Օրինակ, չխուրցի հայերի արշավանքը Քոստուրի լեռներում: Հայերին հաջողվեց մի քանի քրդական գյուղեր ընկճել, սակայն շուտով նրանք շրջապատվեցին եւ լրիվ ոչնչացվեցին: Հայը շարունակում էր հուսալ, որ «ռուս սաղատը» կլուծի իր լինել, չլինելու հարցը:

1916թ. ամռանը ռուսական բանակը փորձեց Սասունի վրայով հասնել Դիարբեքիր: Դրոյի խումբը Խոզմո գետակի կողմում ուժեղ դիմադրության հանդիպեց: Շուտով այն վերածվեց ամբողջական հակահարձակման եւ կանգնեցրեց ռուսական զորքի առաջխաղացումը: Փեթարա Մանուկը, Մուրուքն ու Չոլոն անցան Անդոք եւ թիկունքից խփելով թուրքերին խուճապի մատնեցին: Թվում էր, թե Սասունի գրավումն այլեւս կասկած չէր հարուցում, սակայն հուլիսի 24-ին թուրքերը ս. Կարապետի եւ Գենջի կողմից գրոհեցին ռուսական բանակի աջ թևի վրա ու հարկադրեցին նահանջել: Ազգաբնակչությունը ռուսական բանակի հետ թողեց Մուշը եւ ընդհանրապես, Տարոնը: Չնայած ռուսները երկու շաբաթ անց վերադարձան, բայց 12.000 հայ Տարոնից արդեն հեռացել էր: Նրանց մեծ մասն անցել էր Արաքսը: Հաջողվեց տեղափոխել նաեւ որբանոցների երեխաներին՝ 12.000 հոգի, ինչպես նաեւ ս. Կարապետի վանքի ունեցվածքը: Փրկվեցին Առաքելոց վանքի դուռն ու «Ճառընտիրը»:

Սասունից ու Մուշից հեռանալուց հետո Տարոնի մարտական ուժերն անբացան Խնուսում, միաժամանակ իրենց ձեռքում պահելով Դաշտը: Խնուսում հավաքվեց 25.000 մարդ, ինչ վերաբերում է Բուլանըխի եւ Մանազկերտի հայությանը, ապա նրանց 90 տոկոսը փրկվեց:

Ռուսաստանում 1917-ի փետրվարին տեղի ունեցած հեղափոխությունն Արաքսից այն կողմ խանդավառությամբ ընդունվեց, չնայած դրա հետեւանքով ռուսական հարձակումը ժամանակավորապես կանգ առավ ու նաեւ ստեղծվեց մի վիճակ, երբ արեւելահայությունը տարվելով այդ հեղափոխության հռչակված կարգախոսներով, ազգային հարցը թողեց երկրորդ պլանին: Նաև նշենք, որ հեղափոխությունից հետո Անդրկովկասում ծայր առան ազգամիջյան առճակատումներ, մասնավորապես հայերի ու մահմեդականների միջև: Ձևավորվեցին հասարակական հոսանքներ, որոնք խնդիր դրեցին «պոկվելու» Ռուսաստանից: Չգալով արեւելահայ գործիչների վարքագծի անկայունությունը, ազգային ու սոցիալ-քաղաքական խնդիրներում շփոթը եղեռնից մազապուրծ արեւմտահայերը նորից կանգնեցին ինքնապաշտպանության:

Նրանց մարտական ուժերը դիրքեր զբաղեցրեցին Մուշ-Խնուս-Բուլանըխ-Մանազկերտ գծով: Խմբապետ Մարտիրոսը հուշագրել է. երբ Ալաշկեր-

տի Ղարաբիլիսայից ռուսական զնդերից մեկի հետ անցնելով Մուրադ գետը հասան Քարնոս, ստացվեց ռուսական բանակի ընդհանուր հարձակման մասին հրամանը:

1916-ի փետրվարի 5-ին ռուսական զորքն ու հայ կամավորները մտան Մուշ: Բայց ձմեռն այնքան ճնշող էր, որ զորքը Սասուն բարձրանալ չկարողացավ, իսկ լեռնաշխարհում մնացած սասունցիները իջան Մուշ, հարձակվեցին բուրբակյան բաղի վրա ու ոչնչացրեցին բնակիչներին: Մի ծեր կին հպարտանում էր, որ հինգ թուրք էր սպանել:

Փետրվարի 15-ին Դալի Ղազարի խումբը բարձրանում է Մառնիկ եւ ոչնչացնում է Ղաարմի ջոկատին: Միաժամանակ որոշ քրդեր, օրինակ, բալլբքի Ջազոն, շուրջ 100 խութեցի հայերի տանում, հանձնում է հայ կամավորներին:

Խութ-Բոնաշենի շրջանում հայերի ու քրդերի հարաբերությունները նույնպես բշտամական չէին եւ դրա շնորհիվ փրկված հայերի թիվը փոքր չէր, ովքեր շուտով իջան լեռներից եւ փովեցին Մուշից մինչեւ Մանազկերտ ու Ալաշկերտ ընկած տարածքները: Սկսվեց նաեւ ներգաղթը: Փախածները վերադառնում էին հայրենի բնակավայրերը՝ Վանից մինչեւ Մանազկերտ, Բիրլիսից, Մուշից մինչեւ Խնուս, Էրզրումից մինչեւ Երզնկա: Նաև ակնհայտ դարձավ, որ արեւմտահայը գերադասում էր «հայրենի քարերը լիզել ու ինքնապահ մնալ, քան երթալ Կովկաս, դռներու առջեւ մուրացիկ գաղթական մը դառնալ»⁹:

«Այն ժամանակ, երբ Ազգային բյուրոն եւ Կովկասի հայ քաղաքական շրջանակները Թիֆլիսի եւ Երեւանի մեջ զբաղված էին կամավորներու հաշուեյարդարի գործով, անկարելի էր ակնկալել, որ անոնք նոր դիմում մը կատարեին կովկասեան ճակատի ռուսական հրամանատարութեան ու կարողանալին արտոնութիւն մը ձեռք ձգել նոր ուժեր կազմակերպելու համար»¹⁰: Ելքը տեղի հայության զինելն էր, որը մեծ եռանդ էր դրսևորում այդ գործում:

Հայկական կազմակերպությունները դիմեցին Խնուսում տեղակայված ռուսական 4-րդ կորպուսի հրամանատարությանը եւ պատրաստակամություն հայտնեցին ապահովել ռուսական զորքի թիկունքի անվտանգությունը քրդական եւ բուրբակյան հարձակումներից, ստեղծել ժողովրդական միլիցիա, հետախուզական խմբեր տրամադրել բանակին, փոխարենը խնդրելով զենք կրելու իրավունք եւ ռազմամթերք:

Ռուսական շտաբը Արմեն Սասունում թույլատրեց ունենալու 60 հոգանոց զինյալ խումբ, որի հիմքի վրա հետագայում ձևավորվեց Սասնո հեծյալ գունդը:

⁹ Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 1043:

¹⁰ Ն.տ., էջ 1044:

Այդ ընթացքում հայերը ռուսներից ստացան բավական քանակությամբ զենք, ռազմամթերք, հագուստ, պարեն: Թիկունքային աշխատանքներում մարտական խմբերին օգնում էին նախկին կամավորները: Ծավալվեցին ոչ միայն պաշտպանական եւ տնտեսական բնույթի, այլեւ առողջապահական եւ կրթական աշխատանքներ, Տարոնում բացվեց 20 դպրոց, գյուղերի միջեւ անգամ հեռախոսային կապ հաստատվեց:

Ուժերի համախմբման անհաջող փորձ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Հայկական հարցով զբաղվելու կենտրոն դարձավ Անդրկովկասը, որովհետեւ հայաթափ Արեւմտյան Հայաստանը եւ Օսմանյան կայսրության հայաշատ շրջանները (Անկարայի վիլայեթ, Կ. Պոլիս, Կիլիկիա, Տրապիզոն եւ այլն) այլեւս անգոր էին այդ անել:

Արեւմտահայերի առաջին համագումարի հրավիրման նախաձեռնողն ու նախապատրաստական աշխատանքների ղեկավարն Անդրանիկն էր, որը Թիֆլիսում ստեղծեց մի ընկերություն արեւմտահայության խնդիրներով զբաղվելու համար: Նույն նպատակով հիմնվեց «Հայաստան» բերքը¹¹:

Արեւմտահայերի առաջին համագումարը բացվեց մայիսի 2-ին Երեւանում: Ներկա էր 59 պատգամավոր եւ 400 հյուր: Հրավիրված էին հոգեւորականության, գաղթականությանն օգնող ռուսական, անգլիական եւ ամերիկյան մարմինների, քաղաքական կուսակցությունների, հիմնականում ՀՀԴ ներկայացուցիչներ¹²:

Համագումարի պատվավոր նախագահ ընտրվեց Անդրանիկը: Անդրանիկի եւ Լ. Շանթի ստորագրությամբ ողջյունի հեռագիր ուղարկվեց Ժամանակավոր կառավարությանը եւ Պետրոգրադի խորհրդին¹³: Հեռագրում ասվում էր, որ արեւմտահայության ներկայացուցիչները սրտանց ողջունում են «ռուսական մեծ ժողովրդավարությանը, որն իր արյունով, ընկածների թանկագին կյանքով ազատություն բերեց ռուս ժողովրդին եւ հռչակեց փոքր ժողովուրդների ինքնորոշման սրբազան իրավունքը»: Համագումարը համոզված էր, որ ռուսական ժողովրդավարությունը «ամեն կերպ կպաշտպանի արեւմտահայ բազմատանջ ժողովրդի ազատությունն ու իրավունքը»¹⁴:

Համագումարում վեճերը հիմնականում ՀՀԴ եւ Անդրանիկի միջեւ էին: Դրանք ավելի սուր բնույթ ստացան Արեւմտահայ խորհրդի ընտրությունների ժամանակ: ՀՀԴ ձգտում էր իր ձեռքը վերցնել նորընտիր խորհրդի ղեկավարությունը, իսկ Անդրանիկը համոզում էր համագումարին. «Անիմաստ կըլլայ

¹¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 60:

¹² «Մշակ», 30.04.1917:

¹³ ГИАР, ф. 1278, он. 5, д. 1303:

¹⁴ ОГА Петербурга. Дело Петроградского Совета:

(նորընտիր մարմնին) Արեւմտահայ անուն տալ, եթե ան իր հրահանգները պիտի ստանայ կուսակցական բիրտեն»¹⁵: Նա լքում է համագումարը, մեկնում էջմիածին ու վերադառնում է միայն այն ժամանակ, երբ հավաստիացում է ստանում, որ խորհրդի անդամների մեծ մասը լինելու են անկուսակցական:

Համագումարում միասնությունն իսպառ բացակայում էր, առաջին հերթին, արեւմտահայերի ու արեւելահայերի միջեւ: Երկու օր քննարկվում էր արեւմտահայ կենտրոնական խորհրդի կազմին ու իրավասություններին առնչվող խնդիրներ: Որոշվեց խորհրդի կազմը ձեւավորել նահանգների ներկայացուցիչներից, ինչին համառոտն դեմ էին արտահայտվում ռամկավարները: «Մշակը» նշեց. «Անդրանիկի անունն էր, որ ամոթալի կերպով շահագործվում էր»¹⁶:

Հավանաբար համագումարում ստեղծված մրնուրտը նույնպես դեր խաղաց Անդրանիկի հետեւյալ հայտարարության համար. «Ես այլեւս չեմ պատկանում ՀՅԴ-ի դուրս եմ գալիս իսպառ այդ կուսակցությունից: Այս տաս օրվա մեջ (նկատի ունի համագումարի աշխատանքի օրերը) տեսնելով, որ թուրքահայերն ընդունակ չեն կազմակերպվել եւ այնպիսի մի լուրջ, պատասխանատու գործ, ինչպիսին է գաղթականական գործը, տանել ազնիվ ճանապարհով, ես խնդրում եմ, որ սրահից հետո էլ ռուսահայ մարմինները, լավ թե վատ, բող բարի լինեն տանելու այդ գործը մինչեւ պատերազմի ավարտը»¹⁷:

ՀՀԴ-ի ներկայացուցիչները չհապաղեցին գորավարի այդ քայլը որակել սնապարծության հետեւանք, ինչին Անդրանիկը պատասխանեց. «Ես դաշնակցութենեն հեռացած եմ 1907թ.: 1917-ին «Հայաստան» թերթին մեջ հրապարակուածն երկրորդ հրաժարականն էր»¹⁸: Միանգամայն ճիշտ է նկատել Վ. Մելիքյանը. «Դաշնակցության մենիշխանության խնդրում երկերեսանի դեր էր բռնել հայ լիբերալ բուրժուազիան՝ հանձին «Մշակի», որ դարձել էր ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթը»¹⁹:

Համագումարի հարուցած ամենամեծ վնասն այն էր, որ հայ քաղաքական կյանքն ու դրա գործիչներին բաժանեց երկու մասի՝ «ազգայիններ» եւ «ապագայիններ», «ազգային» հռչակվեցին արեւմտահայերը, իսկ «ապագային»՝ արեւելահայերը:

Դեռ ավելին, համագումարն օգնեց, որպեսզի Անդրանիկի ու նրա կողմնակիցների ռուսական կողմնորոշման դեմ միավորվեն դաշնակներն ու մշակա-

¹⁵ Մնացականյան Ա., Հակոբյան Հ., Ջորավար Անդրանիկ, հ. Ա., Մոսկվա, 1991, էջ 149:

¹⁶ «Մշակ», 21.06.1917:

¹⁷ Ն.տ., 21.05.1917:

¹⁸ «Հայկական առանձին հարվածային գործամար», Բոստոն, 1921, էջ 123:

¹⁹ Տեղակալ Մ. Ավետեան, Հայ ազատագրական ազգային հիմնամաս. 1870-1920, Փարիզ, 1954, էջ 176:

կանները. չնայած թե մեկը եւ թե մյուսը մինչ այդ ունեցել էին հստակ գծագրված ռուսամետությունը²⁰:

Համագումարում ու դրա շուրջը ծավալված թայֆայական պայքարի արդյունքն այն եղավ, որ ընտրվեց դաշնակցական Ազգային խորհուրդ, որին տրվեց լայն իրավասություններ՝ այն համարվում էր արեւմտահայության միակ ներկայացուցիչը, ուներ վերահսկիչ իրավասություններ արեւմտահայությանն առնչվող կազմակերպությունների ու ձեռնարկումների հանդեպ: Խորհրդի 15 անդամից 8-ը դաշնակցական էր: Կ. Սասունին դա հիմնավորում է՝ ՀՀԴ- «Թուրքահայաստանի մեջ գործող միակ քաղաքական կուսակցությունն էր»²¹:

Համագումարի քաղաքական բանաձեւը փաստորեն կազմված էր ռուսական կառավարությանը ներկայացվող առաջարկներից՝ Արեւմտյան Հայաստանում ձեւավորել իշխանության մարմիններ ելնելով տեղական առանձնահատկություններից եւ «բնիկ տարրերի» մասնակցությամբ՝ «ժողովրդական ընտրությամբ», ստեղծել տեղական դատարաններ, ընձեռել ինքնապաշտպանության հնարավորություններ եւ կազմակերպել միլիցիա»²²:

«Հայաստանի» կարծիքով, «եթե դաշնակցութիւնը թողնէ տանկահայ դատը, որպես ծրագրային պարտավորութիւն եւ ամփոփվի ընկերավարական շրջանակներու մեջ, այն ատեն ան աստիճանաբար կբիրեղանայ եւ կը ազատուի անպետք եւ քայքայիչ տարրերն: Չի կարելի ընկերավարական ու բուրժուական ըլլալ միաժամանակ»²³:

Ի տարբերություն կովկասահայ շատ գործիչների Անդրանիկը ողջունեց բոլշեիկյան հեղափոխությունը եւ գտնում էր, որ հայերը պետք է շահագրգռված լինեին այդ հեղափոխությունով, որովհետեւ մեծամասնականների «հաջողութեան առաջին ակտը պիտի ըլլայ պատերազմին որեւէ ձեւով վերջ տալը»²⁴:

Վ. Թորոպենցն առաջարկեց Հայկական հարցի լուծման երեք տարբերակ՝ «1. Ռուսական կցում եւ ռուսական հովանավորութիւն, 2. Հայաստանի ինքնավարութիւն՝ կառավարող հայերով եւ 3. Հայաստանի ինքնավարութիւն՝ կառավարող դաշնակից պետութիւններից կազմուած խորհրդաժողովով»²⁵:

Արեւմտահայ հոսանքը թերեւս Անդրկովկասում միակ հայ ուժն էր, որը ոչ թե արեւմտահայության շահերն էր ածանցում կուսակցությունների շահերից,

²⁰ Մելիքյան Վ., 1917թ. Փետրվարյան հեղափոխությունը եւ Հայաստանը, Ե., 1997, էջ 137:

²¹ Սասունի Կ., Թուրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին, Բեյրութ, 1966, էջ 148:

²² ՀՀ ՊԿՊԱ, ք. 32, գ. 1, գ. 12:

²³ «Հայաստան», 15.07.1917:

²⁴ Ն.տ.:

²⁵ Ն.տ., 22.07.1917:

այլ՝ ընդհակառակը: Իզուր չէին Անդրանիկի մասին ասում՝ «Անիկայ եղած էր հնչակեան, թե դաշնակցական, առանց տարբերութիւններ դնելու կուսակցութիւններու մեջ, իր ձեռքին մեջ փայփայում էր միայն թուրքահայ ազատագրութիւնը»²⁶: Այնուամենայնիվ, համաժողովներ կազմակերպելու անփորձութեամբ, թե արեւմտահայութեան համախմբումը ձախողելու ինչ-ինչ ուժերի ջանքերի հետեւանքով արեւմտահայ համագումարը ոչ թե միավորող, համախմբող, այլ մասնատող, հայութեան տարբեր խավերի միջեւ հակասությունը սրող նշանակություն ունեցավ:

Դրա պատճառներից էր նաեւ այն, որ հայ որոշակի քաղաքական ուժեր պարզապէս դեմ էին արեւմտահայութեան մասնակցությունը Անդրկովկասի քաղաքական կյանքին:

Յարական կառավարության տապալվելուց հետո ՀՀԴ մեծ ջանքեր լարեց «Թուրքահայաստանի հարցը» սեփականաշնորհելու, կրկնելով, թե ինքը տվյալ պահին Արեւմտյան Հայաստանում «գործող միակ կուսակցությունն է»: Դրա համար էլ նա իրենն էր համարում արեւմտահայ համագումարը:

Հայ կուսակցություններն արեւմտահայ համագումարն անվանելով նաեւ Գաղթականների համագումար, դրանով ձգտում էին նրա իրավասությունները սահմանափակել միայն փախստականական խնդիրների շրջանակում, որոշ կուսակցություններ անգամ չողջունեցին համագումարի բացումը:

«Սինդիկատ արեւմտահայերի համագումարը գաղթականության խիստ ցավոտ ու հրատապ հիմնահարցերի միջոցով ուղիներ էր փնտրում դեպի Հայկական հարցի լուծումը եւ արդարացիորեն հայկական գաղթականության ճակատագրի հարցը դիտում էր որպէս Հայկական հարցի առաջնահերթ բաղկացուցիչ մաս»²⁷:

Վ. Մելիքյանն այս բացարձակ ճշմարիտ միտքը ձեւակերպելուց հետո կատարում է սխալ արձանագրում. «Այս հակամարտության պատճառը պետք է որոնել նաեւ դաշնակցության, ՎՄԿ եւ Անդրանիկի անզիջում փոխհարաբերությունների ու պայքարի փաստի մեջ»²⁸:

Ճիշտ հակառակը, այդ անզիջում պայքարը ոչ թե պատճառ էր, այլ հետեւանք՝ իսկական պատճառը Հայկական հարցում մոտեցումների ու կարծիքների գրեթե իրարամերժությունն էր: Ահա թե ինչ գնահատական է տալիս այդ համագումարին Ա. Չոպանյանը. «Արեւմտահայ համագումարը ազատ եւ ինքնավար Հայաստանի հիմնադրութիւնն է իսկ՝ կատարում իր գավակներու ձեռքով... Ջրաղվել Հայաստանի Հայկական կազ-

²⁶ Սուրենյան Գ., Ինչու գօր. Անդրանիկը հեռացավ ՀՀ Դաշնակցութիւնէն, Կ. Ժողիս, 1920, էջ 12-13:
²⁷ Մելիքյան Վ., նշվ. աշխ., էջ 224:
²⁸ Ն.տ.:

մակերպութեամբ ոչ միայն անոր ինքնավարութեան փափագելն է, այլ դա իրրեւ իրողութիւնն ակատելը»²⁹:

Իսկ, օրինակ, «Մշակին» դուր չէր գալիս այդ արեւմտահայ հոսանքի ձեւավորվելը³⁰: Եթե «Մշակն» ու Հ. Առաքելյանը տարանջատում էին հայութեանը երկու հատվածների («Մենք՝ ռուսահայերս, Ռուսահայաստանի սահմանները կպաշտպանենք, իսկ թրքահայերը թող Թրքահայաստանի սահմանները պաշտպանեն»)՝³¹, ապա Անդրանիկն ու արեւմտահայ հոսանքը դեմ էր նման մասնատմանը: («Պահենք, միասին պահենք Թուրքահայաստանի սահմանները, որով պահած կլինենք Ռուսահայաստանի սահմանները: Պետք է վերացվի ռուսահայ ու թրքահայ հարցը, պետք է փլուխն այդ խրամատները եւ միացած պետք է դիմել թշնամու դեմ եւ այսպէս կռուել»)՝³²:

Արեւմտահայ համագումարը գտավ. «Ներկա քաղաքական ընդհանուր պայմանները ոչ մի կերպ չեն կրնայ փոխել արդեն իսկ միջազգայնորեն եւ պատմականորեն նվիրագործուած Հայկական հարցի էութիւնը»³³: Սա նույնպէս զգուշացում էր արեւելահայ գործիչներին՝ շեշտելով, որ այդ հարցով զբաղվում են Ազգային պատվիրակությունն ու արեւմտահայութեան ներկայացուցիչները:

Բաղեւում ԱՄՆ հյուպատոս Սմիթի հետ մայիսի 29-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ Անդրանիկն ասաց. «Մենք պատրաստ ենք նորից մեկնելու Կովկասյան ռազմաճակատ, որովհետեւ տակավին արյուն ունենք թափելու մեր ազատության համար, մանավանդ, երբ ամերիկյան հանրապետությունը ձեռք երկարի մեր փորրիկ ուժերն ի մի հավաքելու մեր ջանքերում»³⁴: Անդրանիկն առաջարկում է երեք գորսայուներով Բաղեւից առաջանալ Դիարբեքի եւ այն վերցնել օդակի մեջ: Սմիթը համաձայնվում է գորավարի մտահղացումների հետ, եւ Անդրանիկը ձեռնամուխ է լինում ռազմական գործողությունների պլանի մշակմանը: Մի քանի օրից այդ պլանը, ծախսերի նախահաշիվն ու դրանք հիմնավորող տեղեկանքը հանձնում է ամերիկացուն: Նախատեսվում էր հավաքագրել 50 հազար հոգանոց հայկական բանակ, որը պետք է զինվեր, հանդերձավորվեր եւ ռազմամթերքով մատակարարվեր ԱՄՆ-ի կողմից:

Սմիթը մեկնում է Պետրոգրադ Անդրանիկի մշակած ծրագիրը Կերենսկու հետ համաձայնեցնելու համար, սակայն վերջինս մերժում է արշավանքի գաղափարն իսկ:

²⁹ «Վերածնունդ», 14.07.1917:
³⁰ «Մշակ», 05.08.1917:
³¹ Անանուն Դ., նշվ. աշխ., հ. 3, էջ 56:
³² Ն.տ.:
³³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 32, ց. 1, գ. 12:
³⁴ Վ. Թորոնթոնցի գրառումներ, էջ 263:

Պ. Նորարը Ֆրանսիայի ԱԳ նախարարության անունից առաջարկում է Անդրանիկին, որ եթե նա Կովկասից ճակատ բացի Թուրքիայի դեմ, Ֆրանսիան պարտավորվում է ճանաչել Արեւմտյան Հայաստանի անկախությունը: Անդրանիկը չհավատաց Փարիզին:

Արեւմտահայ համագումարի ստեղծած Անվտանգության խորհրդի նախագահն էր Վ. Փափազյանը, անդամները՝ Ա. Դարբինյանը, Կ. Սասունին, Հ. Տեր-Չաքարյանը, Ա. Թերզիբաշյանը, Հ. Գալիբյանը: ՀՀԴ այդ մարմնում ուներ երկու, իսկ ռամկավարները՝ երեք ներկայացուցիչ:

Համագումարից հետո շատ տեղերում ստեղծվեցին արեւմտահայ ազգային խորհուրդներ: Թե այս խորհուրդները եւ թե Անվտանգության մարմինը համակարգեցին արեւմտահայերի շրջանում տարվող, ինչպես նաեւ նրանց օգնություն ցույց տվող կազմակերպությունների աշխատանքը:

Սակայն անհնար է շնչել, որ 1917թ. Արեւմտյան Հայաստանին առնչվող հարցերն առաջ մղելու գլխավոր շարժիչ ուժերը Ռոստոմն ու Չավրիյանն էին: Առաջինը Ռոստոմը մշակեց ռուսական բանակում ծառայող հայերից 150.000-ոց հայկական բանակ կազմելու ծրագիրը, որն իր մեջ էր առնելու նաեւ արեւմտահայ մարտական ջոկատները³⁵:

Ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասը կառավարելու համար 1917թ. մարտի 9 (22)-ին ստեղծեց Անդրկովկասի հատուկ կոմիտե (ՕՅԱԿՕՄ): Այս կառույցի իրավասությունները սկզբում տարածվում էին նաեւ Արեւմտյան Հայաստանի գրավված տարածքների վրա: ՕՅԱԿՕՄ-ում ՀՀԴ ներկայացված չէր, ինչ նրան շատ էր կատաղեցնում եւ առիթը բաց չէր բողոնում դրա հայ անդամ Մ. Բաբաջանյանի հասցեին լուտանքներ թափելու: Այն, որ ՕՅԱԿՕՄ-ում եղանակ ստեղծում էին վրացիներն ու ադրբեջանցիները, նույնպես բացատրվում էր կառավարման այդ մարմնում «հայ առաջատար ուժի» ներկայացուցչի բացակայությամբ ու նաեւ նրանով, որ, ինչպես հայտարարեց Ն. Աղբալյանը, Բաբաջանյանը գործում էր «ոչ ազգի բազմության ձայնը ներկայացնող հոսանքների խորհրդատվությամբ»: Իհարկե, նման մոտեցումը որեւէ հիմնավորում չուներ: Այսպես, Անդրկովկասի սեյմը, որում հայ բնակչությանը ներկայացնող առաջատար ուժը դաշնակցությունն էր, ավելի վատթար էր հայության համար, քան ՕՅԱԿՕՄ-ը: Համեմայն դեպս՝ սեյմի եւ Անդրկովկասի կոմիսարիատի հակահայկական կողմնորոշումն ակնհայտ էր: Դա հասկանալի էր, որովհետեւ ՕՅԱԿՕՄ-ում թելադրողը ռուսներն էին, իսկ սեյմում եւ դրա կառավարությունում՝ վրաց մենչեիկներն ու նաեւ մուսավաթը:

³⁵ «Յուսաբեր», 16.11.1917:

1917թ. օգոստոսի 31-ին օրենք է ընդունվում Թուրքահայաստանի միլիցիա ստեղծելու մասին, որպես միջոց Կովկասյան բանակի թիկունքն ամրապնդելու, սակայն այդ խնդիրն այդպես էլ ըստ ամենայնի չլուծվեց եւ, ընդհանրապես, երկրամասի կառավարումը շարունակում էր մնալ բարձրորդի վիճակում, ինչը շատ ծանր էր անդրադառնում բնակչության սպասարկման ու անվտանգության ապահովման վրա:

Ժամանակավոր կառավարության հայկական քաղաքականության բարձրակետը հանդիսացավ Արեւմտյան Հայաստանի գրավված նահանգները մի վարչական համակարգում միավորելն էր և դրա ուղղակի ենթարկումը Պետրոգրադին:

Քննարկենք նաեւ, թե 1917թ. ինչպիսին էր բուլչեիկների մոտեցումը Արեւմտյան Հայաստանի հարցի լուծմանը:

Լենինը 1917թ. մարտին հայտարարեց, թե Ժամանակավոր կառավարությունը դա դաշինք է Անտանտի հետ Գերմանիայի դեմ, որը պատերազմում է «ուրիշներին պատկանող երկրների՝ Հայաստանի, Գալիցիայի, Կ. Պոլսի եւ այլնի կողոպտման եւ նվաճման համար...»³⁶: Քիչ անց նա Միլյուկովի ծրագիրն անվանեց Լեհաստանի, Հայաստանի եւ ուրիշ տարածքների հափշտակություն³⁷: «Մայիսին գրեց, որ «ռուս ժողովրդի մեծամասնությունը շահագրգռված չէ բռնակցումներով... Հայաստանում եղած եկամտաբեր պաշտոններով»³⁸: Նա գտնում էր, որ ռուսական զորքերը պետք է դուրս բերվեն Հայաստանից եւ հայ ժողովրդին թույլ տրվի ինքնակամ որոշելու իր բախտը³⁹:

1917թ. հունիսին Լենինը հայտարարեց, որ եթե Կովկասյան ռազմաճակատում գտնվող ռուսական բանակը «Հայաստանը դարձնել անկախ հայկական հանրապետություն, ապա դա ավելի լավ կլինի... Ապացույցեք, որ դուք ազատագրում եք հայկական հանրապետությունը, համաձայնության մեջ եք մտնում յուրաքանչյուր երկրի բանվորների եւ գյուղացիների խորհուրդների հետ, որ դուք ազատ հանրապետության կողմնակից եք, այն ժամանակ ռուսական հեղափոխության արտաքին քաղաքականությունը կդառնա իրոք հեղափոխական, իրոք ժողովրդավարական»⁴⁰: Նա նաեւ ասում էր, որ հայ ժողովրդին դուք ավելի մեծ չափով կօգնեք, եթե պատերազմի վրա ծախսվող միջոցները հատկացնեք այդ երկրի վերաշինմանը:

Իշխանության գլուխ կանգնելուց հետո Լենինը սկսեց վերապահումով մոտենալ իր նախկին կարծիքին եւ գերադասեց Կովկասում շարունակել Ժամա-

³⁶ Լենին Վ., ԵԼԺ, հ. 31, էջ 2:
³⁷ Ն.տ., էջ 137:
³⁸ Ն.տ., էջ 384:
³⁹ Ն.տ., էջ 459:
⁴⁰ Ն.տ., հ. 32, էջ 358-359:



նակավոր կառավարության քաղաքականությունը, այսինքն՝ ռազմաճակատի պաշտպանությունը հանձնել անդրկովկասյան ժողովուրդներին եւ նորից, առաջին հերթին, հայերին: Նոր կառավարությունն իր վրա վերցրեց Ռուսաստանում եւ մյուս ռազմաճակատներում գտնվող հայ զինվորականներին Կովկաս տեղափոխելու, ինչպես նաեւ նրանց զենքի եւ հանդերձանքի ծախսերը: Լենինը սկզբում նաեւ համաձայնվեց ժամանակավորապես ռուսական զորքեր բողոքել Կովկասում: Ստ. Շահումյանն այդ գործում առանձնակի շահագրգռվածություն էր հանդես բերում: ՀՀԴ ներկայացուցիչների հետ բանակցություններում նա իր վրա վերցրեց հարցի լուծումը, պայմանով, որ հաջողության դեպքում Հայաստանը խորհրդայնացվելու էր, ինչի հետ ՀՀԴ ներկայացուցիչները համաձայնվեցին: Շահումյանին հաջողվեց հասնել այն բանին, որ Մոսկվայի կառավարությունը որոշում ընդունեց Թուրքահայաստանի մասին: Լենինը, ի տարբերություն Կերենսկու, գնաց հարցի ավելի արմատական լուծման ուղղությամբ՝ համոզված, որ հնարավոր էր Հայաստանը պաշտպանել՝ լինելով դա համատեղ թե միայն հայկական ուժերով:

Երբ ընդունվում էր «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, Կովկասյան ռազմաճակատում կար մոտ 90.000 ռուսական եւ հայկական ուժեր թուրքերի 20-25.000-ի դիմաց, անգամ ռուսների հեռանալու դեպքում հայերը, եթե նրանց ղեկավարները, փոխանակ ողբալու, իրենց դժբախտությունների պատճառն ուրիշների մեջ փնտրելու, իրապես զբաղվեին հայկական զինված ուժերի կազմակերպմամբ, անպայման կկարողանային բարոյալքված թուրքերի դեմ կռվել եւ անգամ հաղթել: Բայց ՀՀԴ ղեկավարները, բացի Ռոստոմից, բանակի կազմավորմամբ ծայրաստիճանի վատ զբաղվեցին:

Ինչ վերաբերում էր վրացիներին ու ադրբեջանցիներին, ապա, օրինակ, Ժորդանիան բացեիքաց հայտարարում էր, թե միտք չունի ջանքեր ու միջոցներ ծախսել Արեւմտյան Հայաստանը պաշտպանելու վրա, որովհետեւ այն անցնելու էր Թուրքիային, իսկ ադրբեջանցիները դրան ձգտում էին:

Ինչպիսի՞ն էին հայ կուսակցությունների, տվյալ դեպքում ՀՀԴ եւ հայ բոլշևիկների դիրքորոշումները Հայկական հարցի լուծման հանդեպ 1917թ. վերջերին:

ՀՀԴ կային մի շարք գործիչներ, ովքեր պահանջում էին Արեւմտյան Հայաստանի անկախությունը, բայց ինքը՝ կուսակցությունն այդ հարցում պաշտոնական դիրքորոշում չունեի, իսկ ունեցածն էլ տարօրինակ բնույթի էր ու անհասկանալի: Դաշնակցական հանրահայտ գործիչ Վ. Նավասարդյանն անդրադառնալով Հայ ազգային ժողովին, որի պատվիրակների մեծամասնությունը դաշնակցականներ էին եւ ՀՀԴ էր դրության տերը եւ նկատի ունենալով, որ «հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը ոչ այլ ինչ է, քան հեղափոխական իշխանութեան հաստատում երկրում եւ պետու-

բեան սահմաններու պաշտպանութիւն», գտնում է, որ «բոլոր հայկական ուժերը պետք է գործադրվեն իշխանութեան հաստատման եւ ճակատի պաշտպանութեան համար՝ հեղափոխական կառավարութեան եւ դեմոկրատիայի միջոցով»⁴¹: «Համաժողովը հաստատեց Հայաստանի կապը միացնելու Ռուսիոյ հետ եւ պահանջեց ձգել թուրքահայատակ Հայաստանի այն հողերը, որոնք համաշխարհային պատերազմի ժամանակ գրավված էին ռուսական զորքերի կողմից»⁴²:

Ինչպիսի պատճառներ էլ որ եղած լինեն, 1917թ. սեպտեմբերին, երբ ռազմաճակատում փաստորեն դադար էր, նման որոշումը մեղմ ասած, կամակորություն էր ու անհասկանալի: Դա առավել եւս վնասակար ու վտանգավոր էր նաեւ այն առումով, որ թուրքական (նաեւ ադրբեջանական շրջաններում) լուրջ տարրերսպություններ էին առաջացել Քառյակ զինակցության ռազմական անհաջողությունների հետեւանքով:

Ենվերը դեմ էր Հայաստանի գոյությանը, իսկ Թալեաթը կողմ էր փոքրիկ ու թույլ Հայաստան ունենալուն (Նոր Բայազետից մինչեւ Էջմիածին):

Վրացիները 1917-ին առաջ քաշեցին երկրամասում դաշնային անկախ պետություն ստեղծելու հարցը, որը պետք է կազմված լիներ էթնիկական-տարածքային սկզբունքով ձեւավորված երեք կանտոններից՝ Արեւմտյան Անդրկովկաս Զուբայիս կենտրոնով, Արեւելյան Անդրկովկաս Երեւան կենտրոնով եւ Հյուսիս-արեւելյան Անդրկովկաս Բաքու կամ Գյանջա կենտրոնով: Այդ կանտոններն ունենալու էին իրենց խորհրդարաններն ու կառավարությունները, բայց մտնելու էին Անդրկովկասյան Դաշնության մեջ, որի մայրաքաղաքը լինելու էր Թիֆլիսը, որտեղ եւ գործելու էր դաշնային խորհրդարանը: Այլ խոսքով ասած, ստեղծվելու էր դաշնային պետություն վրացիների գերիշխանության տակ:

Խորհրդային կառավարությունն առաջ քաշեց երկու Հայաստանների միավորման միջոցով ինքնորոշված անկախ Հայաստանի հանրապետության ստեղծման ծրագիր: Մոսկվան նաեւ համաձայն էր երկու Հայաստանների գոյությանը՝ Արեւմտյան անկախ, իսկ Արեւելյանը՝ Խորհրդային Ռուսաստանի կազմում:

ՀՀ դաշնակցությունը կողմ էր Անդրկովկասը կանտոնների բաժանելուն, բայց ոչ վրացական տարբերակով, որովհետեւ այդ պարագայում երկրամասի բնակչության մեկերրորդը կազմող Հայաստանին բաժին էր հասնելու Անդրկովկասի տարածքի 5 տոկոսը: Ա. Շահխաթունյանի մշակած պլանով նախատեսված էր կանտոնների ստեղծում զեմստվոնների հիմքի վրա, որով Հայաս-

⁴¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17:

⁴² Նավասարդյան Վ., Բոլշևիզմը եւ դաշնակցությունը, Կահիրե, 1949, էջ 134:

տանին բաժին էր հասնելու 20-25 հազար կմ²: Վրաց մենջեիկները հարկադրված եղան մասնակի փոփոխություններով ընդունել հայկական ծրագիրը:

ՌՍԴ(բ)Կ Կովկասյան երկրային առաջին համագումարում (1917թ. սեպտեմբեր) Ս. Շահումյանը առաջ բաշեց Անդրկովկասի վարչատարածքային եւ ազգային նոր կառուցվածք, որով նույնպես ստեղծվում էին երեք միավորներ՝ Արեւմտյան Անդրկովկաս (Վրաստան Թիֆլիս կենտրոնով), Արեւելյան Անդրկովկաս (Հայաստան Երեւան կենտրոնով) եւ Բարվի նահանգ (Ադրբեջան):

Նա Արեւելյան Անդրկովկասի մեջ մտցնում էր Երեւանի նահանգը, Կարսի մարզը, Ելիզավետպոլի նահանգի մեծ մասը՝ Ղարաբաղ, Չանգեզուր, Ղազախ եւ Թիֆլիսի նահանգի մի մասը՝ Լոռին: Ինչը կազմելու էր մոտ 50 հազար կմ²:

Ստ. Շահումյանը նաեւ ասում էր. «Ազգային հարցի լուծման ժամանակ անխուսափելիորեն դրվում է նաեւ Թուրքահայաստանի հարցը: Այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք մարզի բնակչությանը... Ռուսաստանին միանալու որոշման դեպքում, նրանք պետք է միացվեն կովկասահայերին»⁴³:

Ուրեմն 1917թ. ազգասեր ու ազգային ՀՀԴ առաջարկում էր Արեւմտյան Հայաստանից հրաժարվել, այն թողնել թուրքերին, իսկ Արեւելյան Հայաստանը որպէս 20.000 կմ² տարածք ունեցող կանտոն մտցնել Անդրկովկասյան դաշնության մեջ: Իսկ ոչ հայասեր ու ապազգային հայ բոլշեիկները 1917թ. հանձնին Ստ. Շահումյանի գտնում էին, որ Արեւելյան Հայաստանը պետք է մնար Ռուսաստանի Դաշնության կազմում (եթէ վրացիներն ու ադրբեջանցիները չհաճաճայնվեին նույն անել), իսկ Արեւմտյան Հայաստանի հարցը հնարավոր էր լուծել երկակի, նայած թե որը կընտրեին իրենք՝ արեւմտահայերը, անկախություն կամ միավորում Արեւելյան Հայաստանի հետ Ռուսաստանի Դաշնության կազմում:

Հայաստանի անկախությունը բացառող ՀՀԴ հնարավորություն չունեցավ նախապատրաստվելու պարտադրված անկախությանը եւ, երբ 1918թ. մայիսին կանգնեց անկախանալու հարկադրանքի առաջ, շփոթվեց, անգամ փորձեց հրաժարվել դրանից, առաջարկություններ եղան ունենալու երկու կառավարությունները, որոնցից մեկը պետք է գործեր Երեւանում, իսկ մյուսը (գլխավորը)՝ Թիֆլիսում եւ այլն:

Ծրագրերի բախումներ. Այո, փետրվարը Պետրոգրադի մեծապետականությանը հաղթել չկարողացավ: «Յարական վարչակարգն անփոփոխ է մնում Թուրքահայաստանի մեջ,- գրում է «Աշխատանք» թերթը 1917թ. մարտի 18-ին,- նույն պաշտոնյաները, նույն ոստիկանական կազմը, որն իր հայտարարությամբ փայլում է Վասպուրականի մեջ, նույն ստրկացնող վարչակարգը: Ռուսական հեղափոխության ալիքները դեռ չեն թափանցել Թուրքահա-

⁴³ Շահումյան Ստ., ԵԼԺ, Կ. III, էջ 269:

յաստան»: «Վանի, Բայազետի, Դիադինի շրջանային կառավարիչներ նշանակվեցին այնպիսի մարդիկ, որոնք իրենց վարչագութայամբ տեղական ազգաբնակչության մեջ արթնացրեցին զգվանքի զգացմունք»⁴⁴:

1917թ. մարտի 24-ին Հին Բայազետի հայ բնակչության ներկայացուցիչները Պետական դումայի անդամ Մ. Բարաջանյանին գրում են. «Ռուսական ներքին կյանքում եղած հեղաշրջումը ոչ մի փոփոխություն չի մտցրել շրջանի վարչական-իրավական համակարգում: Մեզ մոտ, ի տարբերություն մյուս շրջանների, դեռեւս գործում է հին վարչակարգը, որը ղեկավարվում է հին իրավակարգի ավերիչ հրահանգներով, մեծ վնասներ հասցնում բնակչությանը, ահաբեկում է տեղացիներին եւ ճնշում այն անմեղ անձանց, որոնք իրենց համերաշխությունն են հայտնում նոր կարգերին: Այդ նույն վարչակարգը իր միջավայրից, մի քանի զինվոր-պատգամավորներից շտապ կազմակերպեց գործադիր կոմիտե, միանգամայն անտեսելով տեղի բնակչության շահերը եւ նրա մասնակցությունը կոմիտեում:

Հակաժողովրդական կոմիտեի առաջին «լիբերալ» ակտը նվիրվեց շրջանի հայ բնակչության զինաթափմանը, որն իրականացվում էր ցարական ժանդարմների գործեղանակներով»:

Տեղական «հայկական բնակչությունը զինվել էր կորպուսի հրամանատարի, բանակի շտաբի պետի թույլտվությամբ՝ ավագակային հարձակումներից պաշտպանվելու համար: 1916թ. ընթացքում եղել էր այդպիսի 200 հարձակում: Այսպիսով, հին ոստիկանությունը թաքնվելով «Գործադիր կոմիտեի» քողի տակ կրկնակի եռանդով շարունակում էր բռնի գործողությունները բնակչության նկատմամբ»: Բայազետցիները խնդրում էին իրենց էլ բաժին հանել «Ռուսաստանում հռչակված ազատության բարիքներից», բույլ տալ զենք կրելու եւ վերադարձնել բռնազրաված զենքերը, հեռացնել հին վարչակարգի ներկայացուցիչներին, վերականգնել հողի սեփականության իրավունքը եւ այլն⁴⁵:

Արեւմտյան Հայաստանի կառավարման խնդիրը ցարիզմի տապալումից հետո որքան անորոշ, նույնքան էլ հաճախ արծարծվող խնդիր դարձավ մասնավորապես Ազգային բյուրոյում: Ս. Հարությունյանն առաջարկում էր ստեղծել Արեւմտյան Հայաստանի կառավարման կենտրոնական մարմին, որի կոմիսարը պետք է լիներ ռուս եւ Պետական դումայի անդամ: Հ. Առաքելյանը պահանջում էր այդ մարմնին կից ունենալ հայ, վրացի եւ ադրբեջանցի «խորհրդակիցներ»⁴⁶:

⁴⁴ «Վան-Տոսպ», 18.03.1917:

⁴⁵ ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 860:

⁴⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111:

Խ. Կարճիկյանը դեմ էր Արեւմտյան Հայաստանում քաղաքացիական կառավարում մտցնելուն: Ռոստոմը նույնպես նախապատվությունը տալիս էր զինվորական իշխանությանը, բայց նաեւ ասում էր, որ եթե դա հնարավոր չէ. «որքեր ուժեղ հայ անձնավորություններ կամ բողեք» եղած վիճակը⁴⁷:

Ա. Սահակյանի կարծիքը, թե «իշխանության գլուխ պետք է լինի զինվորական մարդ», բայց ոչ Նազարբեկյանը, թե «արեւմտահայությանը ժողովրդական միլիցիա կազմելու ու իր գոյությունն ինքնուրույն պաշտպանելու հնարավորություն» տրվեք,⁴⁸ կիսում էր նաեւ Անդրահիկը, բայց գտնում էր, որ հայկական միլիցիան պետք է գլխավորի ռուս զինվորական, քանի որ, ասում էր նա, «գերմանական գրոհին մենք չենք դիմանա»⁴⁹: Նա նաեւ առաջարկում էր կազմավորել նոր կամավորական զնդեր:

Սերաստացի Մուրադը կողմնակից էր հին վարչական մեքենայի լրիվ ոչնչացմանը:

Ա. Խատիսյանը քննարկման արդյունքներն ամփոփեց հետեւյալ կերպ. «...Ավելի լավ է, որ այս գործը կապվի Պետրոգրադի հետ եւ այստեղի կոմիսարիատը (ОЗАКОМ-ը) պետք է հրաժարվի այդ գործից կամ կարգադրություններ ստանա Պետրոգրադից», որ Ռոմանովի փոխարեն պետք է նշանակվի մեկ ուրիշը եւ «ստանա հայերի վերաբերմամբ հրահանգներ», որ գործընթացին պետք է մասնակից դարձնել նաեւ վրացիներին ու ադրբեջանցիներին⁵⁰»:

«Ինչպես տեսնում ենք,- գրում է Վ. Մելիքյանը,- Արեւմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության ստեղծումը նախապատրաստվում էր բուն հայկական միջավայրում եւ ոչ թե Ժամանակավոր կառավարության ցանկությունն ու նպատակն էր պարզապես, ինչպես մինչեւ այժմ ընդունված է գիտական շրջանակներում»⁵¹: Ի դեպ, Անդրկովկասի եւ Հայաստանի կարգավիճակի որոշելը մշտական քննարկման հարց էր, այն շարունակվեց նաեւ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո: Եվ դա հասկանալի էր:

Ս. Վրացյանը գրում է. «Ըստ էության Խորհրդային Ռուսաստանի վերաբերմունքը Թուրքահայաստանին ավելի վատ էր, քան ցարական Ռուսաստանինը: Երբ Սազոնովը թուրքահայերին նվիրում էր միայն «եկեղեցական ինքնավարություն», ապա Լենինը եւ Ստալինը անգամ այդ չուղեցան տալ: Միլյուկովը գոնե խոստացավ նվաճել Թուրքիայի հայկական նահանգները եւ Ռուսաստանի հովանու տակ հայերին «ինքնավարություն» տալ, իսկ Լենինը

⁴⁷ Ն.տ.:

⁴⁸ Ն.տ.:

⁴⁹ Ն.տ.:

⁵⁰ Ն.տ.:

⁵¹ Մելիքյան Վ., նշվ. աշխ., էջ 146:

ոչ միայն Թուրքահայաստանը նետեց բախտի քմահաճույքին, այլև բուրբեքին զիջեց Ռուսահայաստանի մի մասը»⁵²:

Նման հանկարկներով լեցուն է դաշնակցական ամբողջ գրականությունը:

Որպեսզի ընթերցողին պարզ լինի, թե որն է ճշմարտությունը, ներկայացնենք հարցի պատմության հիմնական դրվագները:

Առաջին աշխարհամարտի տարիներին Արեւմտյան Հայաստանի հարցը ինչպե՞ս էր ձգտում լուծել ցարական կառավարությունը: Ոչ մի կերպ: Որովհետեւ նա կայսրության սահմաններում ազգային-վարչական միավորներ չէր հանդուրժում: Ցարական Ռուսաստանի կազմում ոչ Հայաստան կար եւ ոչ էլ Վրաստան ու Ադրբեջան, այլ կային Թիֆլիսի, Քութայիսի, Բաքվի, Ելիզավետպոլի, Երեւանի նահանգներ, Կարսի, Արդահանի, Բաթումի մարզեր: Գրավելով Արեւմտյան Հայաստանը ցարը բոլորովին էլ մտադիր չէր այն պահել որպես ամբողջական վարչական-ազգային միավոր, այլ մասնատելու եւ հայկական տարածքների վրա ստեղծելու էր մի քանի նահանգներ: Ցարական մեծապետականները ոչ միայն դեմ էին Արեւմտյան Հայաստան (այն ժամանակ ուղեղակի՝ Հայաստան) անվանը, այլև այդ տարածքները հայերով բնակեցնելուն, այսինքն՝ ծրագրում էին հային գրկել իր բեօրրանում բնակվելու իրավունքից: Այս քաղաքականությանն էր Ս. Վրացյանը առավելություն տալիս:

Հարցին ի՞նչ լուծում էր ծրագրում տալ Ժամանակավոր կառավարությունը: Սկզբում շարունակեց ցարական քաղաքականությունը: Հովի. Թումանյանը գրում է, թե երբ Կերենսկին Թիֆլիսում էր, անգամ «զեւ չէր ուզում անկախ Հայաստանի մասին»: Դրությունն այնքան խախտու է, որ նույնիսկ նման հայտարարությունն էր վտանգավոր: «Որի՞ն է դուր գալու, ռուսի՞ն, տաճիկի՞ն, վրացո՞ւն, նույնիսկ անգլիացո՞ւն: Գուցե հայի հանգստությա՞ն համար»⁵³: Պետրոգրադը դեմ էր ոչ թե այն պատճառով, որ անկախ Հայաստանը նշանակելու էր հայության բնաջնջում, այլ պարզապես շարունակում էր ցարական կառավարության քաղաքականությունը:

Այդ խնդրով մեծ եռանդով էր զբաղվում Հ. Չավրիյանը, որը տեսակցություն ունեցավ Կերենսկու հետ եւ, ըստ ՀՀԴ գործիչների, դրա շնորհիվ Կերենսկին Թուրքահայաստանը հռչակեց ինքնուրույն նահանգ ուղղակի ենթակայությամբ:

Չնսեմացնելով Չավրիյանի ջանքերը, նաեւ նշենք, որ Թուրքահայաստանի ինքնուրույն՝ Կովկասից առանձին, նահանգի ստեղծումը հին, ցարական քաղաքականության տարատեսակն էր: Ստեղծվում էր երկու Հայաստան (ինչպես 1878-ին կազմավորվեց Կարսի մարզը), մի տարբերությամբ, եթե

⁵² Вранян С., Армения между большевистским молотом и турецкой наковальней. Е. 1922, с. 6:

⁵³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111:

1916-ին Յուդենիչն ու մյուսները արգելում էին հայերի բնակությունն Արեւմտյան Հայաստանի գրավված շրջաններում, ապա Կերենսկու կառավարությունը համաձայնվեց թույլ տալ, որ հայերը բնակվեին իրենց հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում: Նա հասկացավ, որ Կովկասյան ռազմաճակատը փրկելու մի ելք կար՝ ռազմաճակատի հոգսերի ծանրությունը փոխադրել տեղաբնակների վրա. քանի որ ռուս զինվորը հոգնել էր եւ այլեւս կռվել չէր ուզում: Որ այդպես էր, պարզ ցույց է տալիս նաեւ այդ որոշման նախապատրաստման եւ ընդունման ընթացքը:

Ազգային բյուրոյի 1917թ. մարտի 26-ի նիստում քննարկվեց ժամանակավոր կառավարության հետ փոխհարաբերությունների եւ, ընդհանրապես, նոր իրավիճակում հայերի կեցվածքի հիմնահարցերը: Բյուրոն որոշեց. «1. Արեւմտյան Հայաստանի նոր վարչակարգի ստեղծման գործը նպատակահարմար է կապել Պետրոգրադի եւ ոչ թե ՕՅԱԿՕՄ-ի հետ, 2. Ընդհանուր նահանգապետ Ռոմանովսկի-Ռոմանկոյի փոխարեն նշանակել հայերին առնչվող հրահանգներ ստացող մի հատուկ մարդ, 3. Աշխատել, որպեսզի գործին չխառնվեն վրացիներն ու թուրքերը, 4. Կերենսկու մոտ գործուղել Հ. Չավրիեիին»⁵⁴:

Ազգային բյուրոյի մարտի 19-ի նիստում Հ. Չավրիյանը հայտարարեց, թե ինքը Պետրոգրադին առաջարկել է ստեղծել ժամանակավոր հայկական կառավարություն ռուսի ղեկավարությամբ:

ՀՀԴ արեւմտահայ շրջանային ժողովը լսելով Ռոստոմի զեկուցումը Արեւմտյան Հայաստանում վարվող քաղաքականության մասին, որոշեց ստեղծել երկիշխանություն՝ զինվորական եւ քաղաքացիական⁵⁵:

Ապրիլի 25-ին ժամանակավոր կառավարությունը որոշում ընդունեց Թուրքահայաստանի կառավարման մասին: Այն ստորագրել էին Լվովն ու Պ. Միլյուկովը:

Հաջորդ օրը Լվովի եւ Միլյուկովի ստորագրությամբ հրապարակվեց համապատասխան հրաման, որով «մինչեւ Թուրքահայաստանի խաղաղ սահմանների վերջնական որոշումը 1. Թուրքահայաստանի եւ պատերազմի իրավունքով գրավված այլ մարզերի տարածքային քաղաքացիական կառավարումը վերցվում էր կովկասյան իշխանություններից, ինչպես նաեւ կովկասյան ռազմական հրամանատարության իրավասությունից եւ անմիջականորեն դրվում ժամանակավոր կառավարության տնօրինության տակ: 2. Երկրամասի քաղաքացիական կառավարումը հանձնվում էր գեներալ-կոմիսարին եւ նրան ենթակա վարչական մարմիններին: 3. Գյուղական եւ քաղաքային բնակչությունն օգտվելու էր ներքին ինքնավարության իրավունքներից: 4. Բնակչու-

⁵⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 151:

⁵⁵ «Հորիզոն», 16.06.1917:

րյան տնտեսական ինքնապաշտպանությունը վերականգնելու նպատակով, գեներալ-կոմիսարը պետք է ներկայանար ժամանակավոր կառավարությանը գանձվող հարկերի, տուրքերի չափերը հաստատելու համար մշակված ծրագրով: Այդ հարկերը պետք է տրամադրվեին երկրամասի բնակչության կարիքների բավարարմանը: 5. Յուրաքանչյուր մարզի կոմիսարին կից հիմնվելու էր մարզային խորհուրդը»⁵⁶:

Հունիսի 16-ին Դոնսկոյը հայտարարեց, թե Թուրքիայից գրավված մարզերը կառավարելու համար գեներալ Ավերյանովի գլխավորությամբ գործում է կազմկոմիտե: Նա որպես Թուրքահայաստանի կոմիսար իր պարտականությունների կատարմանն անցնելու է մայիսի 25-ին⁵⁷:

Հուլիսին հաստատվեց Թուրքիայի հետ Ռուսաստանի պետական սահմանը, որն անցնում էր Սյուրմենե-Բաբերդ-Դերջան-Մամախաթուն-Վերին Արաքս-Խնուս-Մանազկերտ-Արճեշ-Բերկրի-Սարամ գծով⁵⁸:

Սովորաբար գրում են, թե Արեւմտյան Հայաստանի այդ տարածքներում բնակվում էր 367.000 հայ, որից Վանում՝ 52.000, Խնուսում՝ 39.000, Կարինում՝ 106.000, Պոնտոսում՝ 170.000: Վ. Մելիքյանի, եւ ոչ միայն նրա, կարծիքով սանվազեցված թիվ է եւ օրինակ է բերվում Կարինը, որտեղ համաձայն «Հորիզոնի» 1918թ. հունվարի 2-ի համարում բերված տվյալի, բնակվում էր 140.000 հայ: Նվազ էր ցույց տրված նաեւ Խնուսի (նկատի է առնվում նաեւ Տարոնը) բնակչության թիվը: Իրականում այդ թիվը մոտենում էր կես միլիոնի:

Եթե հաշվի առնվի ժամանակավոր կառավարության հանձնարարությունը Ավերյանովին՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները հայերով վերաբնակեցնելու վերաբերյալ, ովքեր «Ռուսաստանի նահանգներ էին գաղթել նախորդ տարիներին», ապա հավանաբար 1917-ի վերջերին Արեւմտյան Հայաստանում բնակվողների թիվը պետք է որ շատ ավելի մեծ եղած լիներ:

Թե ինչպիսին էր ժամանակավոր կառավարության իրական վերաբերմունքը «Թուրքահայաստան» վարչական միավոր ստեղծելուն, դժվար է ճիշտ գնահատական տալ:

Գեներալ-կոմիսար Ավերյանովին իսկապես հանձնարարված էր, որ գրավված տարածքներից Թուրքահայաստանի մեջ մտնող նահանգները (Վան, Բիթլիս, Էրզրում) վերաբնակեցնել հայերով եւ այդ գործում չխոչընդոտել հայկական կազմակերպությունների քայլերը: Նաեւ հանձնարարված էր արգելել կամ խիստ սահմանափակել մահմեդականների վերադարձը հայկական տարածքները: Մինչդեռ իրականում ժամանակավոր կառավարությանն

⁵⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 374, ց. 1, գ. 1:

⁵⁷ ГИАР, ф. 13249, оп. 4, л. 2:

⁵⁸ РГВИА, ф. 2100, оп. 1, л. 657:

ամենից անաչ հետաքրքրում էր երկրամասը բնականոն վիճակի բերելը, այլ ոչ թե այն հայաբնակ դարձնելը: Ուստի պատահական չէր, որ նույն Ավերյանովին գրավոր համձնարարվեց քրդերին ու թուրքերին «օրինական աջակցություն եւ հովանավորություն ցույց տալ, դադարեցնել նրանց վտարումը»⁵⁹:

Ղեռավակին, ժամանակավոր կառավարությունը ժառանգել էր ցարական քաղաքականությունը՝ թույլ չտալ հայ փախստականներին վերադառնալու իրենց բնակավայրերը:

1917թ. մայիսին Ալաշկերտի կոմիսար Սպերանսկին հայտնում է ՕՅԱԿՈՄ-ին, թե հայ փախստականները վերադառնում ու զբաղեցնում էին Ղարաքիլիսայի չբնակեցված տարածքները, մինչդեռ նախապես հրահանգված էր դրանք բնակեցնել Օղնուտից եւ Երզնկայից վտարված քրդերով ու թուրքերով: Թիֆլիսը կարգադրեց թույլ չտալ հայ փախստականներին վերադառնալ⁶⁰:

Սկզբնական շրջանում Կերենսկու կառավարությունը Արեւմտյան Հայաստանը թողեց հին կարգավիճակում, այսինքն՝ զինվորական իշխանությունների տրամադրության տակ: Բայց բանակի հետ միասին քայքայվում էր նաեւ այդ իշխանությունը: 1917-ի աշնանը ռուսական բանակում պակասում էր 100.000 մարդ, այսինքն՝ Կովկասյան բանակը համալրված էր միայն 55 տոկոսով: Յուդենիչի տվյալներով ապրիլ ամսին համաճարակներից մեռել էր 30.000 զինվոր ու սպա, ինչը կազմում էր անձնակազմի 22 տոկոսը:

Այդ դժբախտ իրողությունը Պետրոգրադին հարկադրեց դիմելու վարչատարածքային եւ բանակային արմատական վերակառուցման, ինչը հայերի համար իսկապես ստեղծեց բարենպաստ վիճակ պայծառ հեռանկարի հույսով: Բայց ուրախանալու պատճառը շատ նվազ ու խարխուլ էր: Պետրոգրադը շարունակում էր գաղութատիրական-մեծապետական քաղաքականությունը:

1917թ. սեպտեմբերի 9-ին Արեւմտյան Հայաստանում ստեղծվեցին վարչական երեք շրջաններ. Էրզրումի շրջանի մեջ մտնում էին Էրզրումը, Դերջանը, Մամախաթունը, Աշկալան, Էսադը, Հասան Կալեն: Խնուսի մեջ՝ Ալաշկերտը, Ղարաքիլիսեն, Դիադինը, Խնուսը, Մանազկերտը, Բայազետը: Վանի շրջանի՝ Բերկրին, Արճեշը, Սարայը, Բաշկալան, Խոշաբը, Վանը: Էրզրումի շրջանի, կոմիսար նշանակվեց Յա. Գլուտովը, Վանի՝ Կ. Համբարձումյանը, Խնուսի՝ Ն. Նիկոնենկոն⁶¹:

Ուրեմն երեք վիլայեթներից բացի մյուս հայկական տարածքներն վարչական այս բաժանման մեջ չէին մտնում: Խոսքը գնում է Երզնկայի ու Եփրա-

⁵⁹ ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 222, ց. 1, գ. 111:

⁶⁰ «Մշակ», 20.05.1917:

⁶¹ РГВИА, ф. 13249, он. 1, л. 25:

տամերձ մյուս շրջանների. Տրապիզոնի եւ Մերձսեւծովյան տարածքների մասին: Դրանք մնացին ռուսական բանակի տնօրինության տակ:

Օգոստոսի 6-ին ստեղծվում է գեներալ-կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալի պաշտոն եւ Հ. Չավրիյանը նշանակվում է այդ պաշտոնում⁶²:

Թուրքահայաստանի վարչական բաժանման հիմքում ընկած էր Սայրս Պիկոյի 1916թ. համաձայնագիրը, որով Ռուսաստանին էին անցնում միայն վերը նշված վիլայեթներն, իսկ մյուս երեքը՝ Սեբաստիա, Խարբերդ, Դիարբեքիր, անցնելու էին Ֆրանսիային:

Գլխավոր նահանգապետության մեջ մտնող երկու նահանգներում (շրջաններում) նահանգապետեր նշանակվեցին ոչ հայեր, իսկ տեղակալ՝ հայեր: Բայց բանի որ նահանգապետերն այդպես էլ չտեղափոխվեցին իրենց նահանգներն, այլ մնացին Թիֆլիսում, ապա վարչական տարածքների փաստացի կառավարիչները նրանց հայ տեղակալներն էին: Օրինակ, Տարոնի նահանգապետ նշանակվեց Նիկոլենկոն, իսկ տեղակալ՝ Կ. Մասունին, որը հանդիսանում էր շրջանի իրական ղեկավարը: Որոշ փոփոխություններ կրեցին նաեւ նորաստեղծ նահանգների սահմաններն այն հաշվով, որ դրանք տարածքային ուղղակի կապ ունենային Անդրկովկասի հետ: Օրինակ, Տարոնի նահանգի մեջ մտցվեց Ալաշկերտը եւ նահանգի սահմանը հասցվեց մինչեւ Մասիս:

Գերագույն նահանգապետությունը նշանավորեց Արեւմտյան Հայաստանի զգալի մասի de facto ինքնիշխան, ինքնավար լինելը, երբ հայերի ձեռքին էր ոչ միայն քաղաքացիական, այլ նաեւ ռազմական իշխանությունը: Տեղական ռազմական ուժերի բոլոր հրամանատարները հայեր էին՝ Սեբաստացի Մուրադ, Մասունցի Մուշեղ, Սեպուհ, Գր. Բուլղարացի, Փեքարա Մանուկ, Ա. Մասունի:

Չի կարելի աննկատ թողնել այն իրողությունը, որ, ի հակակշիռ Պետրոգրադի քաղաքականության, Ազգային բյուրոն մշակեց Արեւմտյան Հայաստանի նշված նահանգներում հայերի վերաբնակեցնելու ծրագիր ու ձեռնամուխ եղավ այդ ծրագրի իրականացմանը: Ծավալվեց եռանդուն գործունեություն, հատկացվեցին նշանակալից վարկեր հայ գաղթականությանը վերադարձնելու հայրենի օջախներ:

Արդյունքներն իրենց սպասեցնել չտվեցին:

Հայ գյուղացին, առանց հրացանը վար դնելու, սկսեց գյուղատնտեսական աշխատանքները, ձեռնամուխ եղավ վերականգնելու իր ավերված շե-

⁶² РГВИА, ф. 13249, он. 1, л. 28, л. 127:

ները: Վերաբնակվածներին լուրջ օգնություն էին ցույց տալիս հասարակական կազմակերպությունները՝ Կովկասի հայ բարեգործական ընկերությունը, եղբայրական օգնության կոմիտեն, քաղաքների միությունը, գաղթականության կենտրոնական մարմինը, հայրենակցական միությունները: Արևմտյան Հայաստանում աշխատում էին ՀՀԴ գործիչներ Խ. Կարճիկյանը, Կ. Համբարձումյանը, Վ. Քրճոյանը, Կ. Սասունին, Սասունցի Մուշեղը: Այնտեղ աշխատանքի մեկնեցին բժիշկներ, գյուղատնտեսներ, գրքության քույրեր, որբահավաքներ:

Վանի, Տարոնի, Բասենի շրջանները հիմնականում դարձան հայաբնակ: Բայազետի գավառում վերաբնակվեց 10.000, Դիադինում՝ 5000, Ալաշկերտում՝ 30.000, Բասենում՝ 22.000, Խնուսում՝ 28.000, Կարին քաղաքում եւ հարակից բնակավայրերում՝ 6.000, Դերջանում՝ 4.000, Երզնկայում՝ 3.000, Ճորոխի հովտում՝ 3.000, Բուլանջխում եւ Մանազկերտում՝ 4.500, Տրապիզոնում՝ 1.500, Վան-Վասպուրականում՝ 25.400 հայ: Այս տվյալները, որ հրապարակված են «Հորիզոնի» 1917թ. հունվարի 1-ի համարում խիստ թերի էին:

Ծավալվեց որբահավաքությունը, բացվեցին մի շարք որբանոցներ, հիվանդանոցներ, հասարակական սննդի հիմնարկներ: Վանում գործում էր 10, Տարոնում 21 դպրոց, դպրոցներ բացվեցին երկրի ամենատարբեր բնակավայրերում: Ծնունդ առան մանե գրադարան-ընթերցարաններ, կազմակերպվում էին այլեայլ հանդեսներ, թատերական ներկայացումներ:

Ականատեսը վկայում է, որ, օրինակ, Թիմարում չմշակված հողակտոր չկար: Իշխանություններն ու Հայաստանի գյուղատնտեսական ընկերությունը վիթխարի գործ կատարեցին գյուղացուն սերմացուով եւ քաշող ուժով ապահովելու համար:

Ռուսական հրամանատարությունն ու գործերը մեծ օգնություն էին ցույց տալիս երկրի վերածնմանը, որովհետեւ ռուսներին ստեղծված իրավիճակում ձեռնառու էր այդ տարածքներում հայ բնակչության առկայությունը թե ռազմական եւ թե մատակարարման առումով: Օրինակ, խափանված հաղորդակցության միջոցները խիստ դժվարացրել էին բանակի մատակարարման գործը: Դրությունը փրկում էին հայերը:

Քաղաքական շրջադարձ. Հասկանալի է, որ 1917թ. փետրվարյան հեղափոխությունը հայ քաղաքական ուժերին կանգնեցրել էր կնճռոտ խնդրի առաջ՝ նոր պայմաններում ո՞րն է Հայկական հարցի լուծման ուղին:

Ոչ միայն մոտեցումներն էին հակասական, այլև պահի գնահատականները: Դեռ մինչև փետրվարը, հունվարի 2-ին Մ. Բաբաջանյանը կարծիք հայտ-

նեց, թե Ռուսաստանը կշարունակի, իր հնարավորության սահմաններում, բռնակցած պահել Հայաստանը եւ դա արեւմտահայերին կղներ արեւելահայերի կարգավիճակում⁶³:

Վ. Մելիքյանն իր «1917 փետրվարյան հեղափոխությունը եւ Հայաստանը» ուշագրավ աշխատությունում մանրամասն անդրադառնում է 1917թ. Հայ ազգային բյուրոյում, իսկ ապա նաեւ Ազգային խորհրդի առաջին նիստերում Հայկական հարցի քննարկումներին: Գրքում կարդում ենք, որ Մ. Բաբաջանյանի վերը նշված ելույթի հաջորդ օրը Ռուստոմը հայտարարում է, թե «ռուսաց կառավարությունը վերջերս շարունակ պնդում էր հակառակը՝ «տաճկահայերի ինքնավարություն, որովհետեւ դրա հետ կմիացնենք ռուսահայերի ինքնավարության ձգտումը»: Այսինքն՝ Ռուստոմը դեմ էր հայության երկու հատվածների հարցերի միացմանը, իսկ Հ. Ջավրիյանը միանգամայն սխալ էր համարում կովկասյան գործերը Հայկական հարցից բաժանելը⁶⁴:

Երբ ռուսական հեղափոխությունն արդեն իրողություն էր, Ազգային բյուրոն հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ մարտի 7-ին սկսեց մի քննարկում, որը տեւեց մինչեւ հունիսի 1-ը եւ ստացավ «Հայկական հոսանքների խորհրդակցություն» անունը⁶⁵:

Այս հավաքների առաջին նիստը որոշում կայացրեց. «1. Վաղաժամ եւ նույնիսկ վնասակար է ներկայումս ազգային համագումար հրավիրել, 2. Գաղթականական համաժողով հրավիրելու հարցը պետք է առժամանակ հետաձգել, մինչեւ կպարզվեն հանգամանքները, 3. Անհրաժեշտ է անհպաղ ստեղծել մի ժամանակավոր մարմին, որ ղեկավարի ազգային գործերը եւ անհրաժեշտության դեպքում հանդես գա իրրեւ հայ ժողովրդի ցանկությունների արտահայտիչ»⁶⁶:

Սակայն Ազգային բյուրոյի, որը ՀՀԴ ձեռքում էր, եւ մյուս կազմակերպությունների միջեւ լուրջ հակասություններ կային. վերջիններս քայլեր կատարեցին ՀՀԴ ղեկավար դերը չեզոքացնելու ուղղությամբ: «Մշակը» պահանջեց, որ Ազգային բյուրոն Ազգային ժողովին հաշվետվություն տալուց հետո ինքնալուծարվի⁶⁷: Ա. Մռավյանն Ազգային բյուրոն համարեց «հին վարչակարգի հետամնաց եւ ազգակործան մասնատումը կրող» մարմին, «բյուրոն եղել է հայ ազգի թշվառության պատճառ»⁶⁸:

⁶³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111:

⁶⁴ Ն.տ., գ. 4:

⁶⁵ Ն.տ.:

⁶⁶ Ն.տ.:

⁶⁷ Ն.տ.:

⁶⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 4:

Մարտի 13-ին հինգ քաղաքական հոսանքների 15 ներկայացուցիչներից ստեղծվեց միջկուսակցական խորհուրդ: Ա. Երզնկյանն ու հնչակյան Սյունին առաջնահերթ համարեցին Հայկական հարցին արեւելահայության մոտեցման սկզբունքների մշակումը⁶⁹:

Այլ խառնուրդով Հայկական հարցի լուծման համար անհրաժեշտ էր համարում՝ 1. Ամեն կերպ նպաստել պատերազմում վերջնական հաղթանակին, 2. Քանի որ ռուսական բանակը քայքայվում էր, հույսը դնել սեփական ուժերի, այսինքն՝ ազգային զորամասերի ստեղծման վրա, 3. Արեւմտահայության դատին նվիրված համագումար չիրավիրել, քանի դեռ հայության այդ հատվածին նոր վտանգ է սպառնում, 4. Անդրադառնալ «ռուսահայ դատին», ինչին նպաստում է Սահմանադիր ժողովի իրավիրումը, 6. Որոշել հայ ապագա պետության կառուցվածքը՝ անկախ «հասարակապետություն»-ն, սահմանադիր միապետություն՝, թե հասարակապետության մեջ ազգային դաշնություն», 6. Համերաշխ գործել՝ չքնամանալ հարեւան ազգերի եւ կառավարությունների հետ⁷⁰:

Մարտի 19-ի նիստում Մ. Բաբաջանյանը ռուսամետ հայտարարություն կատարեց. «Մեր եւ վրացիների տարբերությունը մեծ է: Նրանք պահանջում են, իսկ մեզ տալիս են»⁷¹: Ա. Սահակյանը գտնում էր, որ պետք է ստեղծել գրավված տարածքների կառավարություն, որպեսզի «տիրանանք մեր հողերին, ժողովուրդ ունենանք»: Անդրանիկն ասաց, թե «թույլ ուժերով» Ժամանակավոր կառավարությանը պահանջներ ներկայացնելուց օգուտ չկա: «Խոշոր պահանջներ դնող ազգերը մոռանում են, որ պատերազմ է: Հեղափոխության տվածը չկորցնենք: Մի դանակ էլ չունենք ձեռքներս, սպասեք մինչեւ հաղթեն գերմանացուց... Մտածենք ինքնապաշտպանության մասին, ժողովրդի մասին»⁷²:

Հ. Չավրիյանը, թե «պետք է Պետրոգրադում աշխատեմ նաեւ, որպեսզի Հայկական հարցի մասին մի ակտ լինի... Եթե հարցնեն, թե հայերն ինչ են ուզում, կարող եմ ասել անեքսիա՞ թե ոչ: Կարո՞ղ եմ պնդել, որ Կիլիկիան էլ մտնի անեքսիայի մեջ»⁷³:

Ապրիլի 12-ին Ազգային բյուրոն եւ «18-ի խորհուրդը» համատեղ որոշում կայացրեցին Ազգային համագումարը հրավիրել Սահմանադիր ժողովի բացման օրվանից մեկ ամիս շուտ:

Ի դեպ, «18-ի խորհուրդ» անունը կրում էր ՕՅԱԿՈՄ-ին կից գործող ազգամիջյան հարաբերությունների խառը հանձնաժողովը: Հայերից այդ հանձնա-

⁶⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 4:

⁷⁰ Ն.տ., ֆ. 222, ց. 1, գ. 111:

⁷¹ Ն.տ.:

⁷² Ն.տ.:

⁷³ Ն.տ.:

ժողովի մեջ մտան Հ. Առաքելյանը (ՀԺԿ), Ս. Ջամալյանը (ՀՀԴ), Ա. Խատիսյանը (ՀՀԴ- համակրող), Գ. Թալխաշյանը (ՀՀԴ), Ս. Հարությունյանը (ՀԺԿ) եւ Ա. Սահակյանը (ՀՀԴ):

Ռոստոմը դեմ էր, որ «18-ի խորհուրդը» զբաղվեր նաեւ արեւմտահայության խնդրով: Ըստ նրա, վրացիներն ու ադրբեջանցիները թույլ չէին տա, որ ստեղծվի ուժեղ Հայաստան: Նա գտնում էր, որ անհրաժեշտ էր սկսել տարածքային ինքնավարության խնդրից, եւ միայն այն բանից հետո, երբ կպարզվեր, թե Ռուսաստանը ցանկանում էր Հայաստանին ինքնավարություն տալ, նոր միայն դնել Հայկական հարցը, ավելի ճիշտ՝ Արեւմտյան Հայաստանի հետ միավորման հարցը⁷⁴:

Մարտի 30-ին Ն. Աղբալյանը հայտարարեց. «Մեր իսկական ցանկությունը շատ պարզ է՝ Անկախ Հայաստան: Մենք պետք է օգտվենք զորքի հայտարարած ժողովրդավարության սկզբունքից՝ գործն առաջ տանենք առանց աղմուկի եւ առանց բռնակցման: «Թուրքերն, իհարկե, վախենում են, որ Անկախ Հայաստանը սեպի պես կխրվի իսլամական աշխարհի մեջ՝ այսինքն՝ կփակի իրենց իղձերի իրագործման ճանապարհը: Դրա համար է, որ ավելի օգտակար ենք համարում Հայաստանի վիճակը կապել Ռուսաստանի հետ եւ կառավարել մի մարմնի ձեռքով, որի մեջ մենք էլ ձայն ունենանք»⁷⁵:

Ապրիլի 5-ին Ազգային բյուրոն որոշում ընդունեց օգնելու ժամանակավոր կառավարությանը, այսինքն՝ համաձայնվել վերջինիս հետ եւ սոցիալ-քաղաքական կարեւորագույն, այդ թվում նաեւ ազգային, խնդիրների լուծումը թողնել Սահմանադիր ժողովին:

Նման կողմնորոշումը Կոլեբյակինը պատճառաբանում է հետեւյալ կերպ. «Չնայած արեւմտահայության ողբերգությանը, հեղափոխությունը հայերի շրջանում նորից արթնացրեց ռուսների եւ դաշնակիցների օգնությամբ հայրենիքն ազատագրելու հույսեր: Չգուշավորությունն արտահայտվեց այն բանով, որ նրանք իրենց եռանդն ուղղեցին հանգստության պահպանմանը եւ միահամուռ որոշեցին մինչեւ Սահմանադիր ժողովը ոչ մի պահանջ չառաջադրել»⁷⁶:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում հավաքվեցին համաքրքրության մեծ թվով առաջատար գործիչներ: Դա սրեց ազգային հարաբերությունները եւ, որովհետեւ կենտրոնական իշխանության ազդեցությունը թուլացել էր, երկրամասում ազգամիջյան անվստահությունը ծնեց ինքնապաշտպանության, ազգային բանակ ունենալու ձգտում: Դրա համար էլ գրում է Անդրկովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար Շար-

⁷⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111:

⁷⁵ Ն.տ.:

⁷⁶ Ն.տ., ֆ. 121, ց. 1, գ. 26:

դինյեն. «Թարարները, վրացիները, հայերը՝ յուրաքանչյուր ցանկանում է ունենալ իր բանակը, որպեսզի, եթե հարկ չիմի, ապահովեին իրենց երկրի պաշտպանությունը: Ու նաեւ, որպեսզի մեկը մյուսի դեմ ուժ ցույց տա եւ ստիպի իրեն հարգել»⁷⁷: Ֆրանսիացի զինվորական գործչին առանձնապես անհանգստացնում էր մուսուլմանական գնդի ստեղծումը, որովհետեւ այն գործելու էր հօգուտ Թուրքիայի՝ Անտանտի դեմ:

Պետրոգրադի կառավարության ազդեցության թուլանալն անխուսափելիորեն ծնեց նաեւ անջատողական-անկախական ձգտումներ: Անդրկովկասում դրանց կրողները հանդիսացան վրաց եւ ադրբեջանական ազգայնամուլական ուժերը, որոնք դավադրության մեջ մտան ոչ միայն Պետրոգրադի, այլև հայության դեմ: Եվ Շարդինյեն մարզարեանում է՝ եթե ռուսական բանակը հեռանա Կովկասից, «կասկածից վեր է, որ իրողություն կդառնա Երեւանի նահանգի թուրքահայ փախստական եւ Կովկասի ռուսահայ բնակչության կոտորածի ու ոչնչացման նոր փուլը»⁷⁸:

Սահմեղական բնակչությունը սկսել էր տենդագին զինվել, զբաղվել զենքի հափշտակությունով⁷⁹: Հավանաբար ազգային թշնամության ահն այնքան մեծ էր, որ թե՛ ՕՅԱԿՕՄ-ը եւ թե՛ երկրամասի քաղաքական ուժերը սկզբում խուսափում էին դրա մասին խոսել: Սակայն վիճակը սրվելու հարաճուն բնույթը հարկադրեց քայլեր կատարել սպառնացող վտանգի դեմ: Ստեղծվեցին հաշտարար առյուծներ, ՕՅԱԿՕՄ-ին կից հատուկ ստորաբաժանում: Փորձեր էին արվում առաջին պլան մղելու բանվորների եւ զինվորների պատգամավորների խորհուրդներին, որոնք դրական արդյունք տվող որոշ քայլեր կատարեցին⁸⁰:

Երբ 1917թ. սկզբներից ակնհայտ դարձավ, որ ռուսական բանակը զինվորական կարգապահության թուլանալու պատճառով գնում էր դեպի փլուզում, Ժամանակավոր կառավարությունը հարկադրված եղավ փոխել իր մերժողական վերաբերմունքը ազգային գորամասեր ձեւավորելու վերաբերյալ ստացված առաջարկություններին: Ռուսական բանակի անցկատ գորացրվելն իրողություն դարձավ, երբ Ժամանակավոր կառավարության ապրիլի 10-ի որոշումով գորացրվեցին 43-ից բարձր տարիք ունեցողները: Շուտով բանակում վիճակն անհուսալի դարձավ, ինչը ռուսական հրամանատարությանը հարկադրեց մարտական ակտիվ գործողություններից հրաժարվել եւ պաշտպանական դիրքեր գրավել ճակատային գծի ամբողջ երկարությամբ:

⁷⁷ Beylerian A., Les Grandes Puissances, L'empire ottoman et les Arméniens, dans les archives Francaises. 1914-1918. Paris, 1983, p. 382:

⁷⁸ Ն.ս.:

⁷⁹ «Մշակ», 24.05.1917:

⁸⁰ Ն.ս.:

Նույն ժամանակ էլ հայ գործիչները ազգային գորամասեր ստեղծելու գաղափարը գործողության մեջ դրեցին: ՕՅԱԿՕՄ-ի նախագահ Խաղամովը ռազմաճակատ այցելելուց հետո ասաց. «Այդ ճակատում միայն կար հայկական մի գումարտակ... Այն հիանալի դրության մեջ էր: Վերին աստիճանի բարձր կարգապահություն, հիանալի ռազմական ոգի, ոչ մի դասալրում, ոչ մի հուսահատություն»⁸¹: Դա հայկական առաջին գորամասն էր, իսկ օգոստոսին այդ գորամասերի թիվը մի քանիսն էր եւ ռազմական նախարարությանը տեղյակ պահվեց, թե բանակի քայքայումը հայկական գորամասերին չէր վերաբերում, ինչը բացատրվում էր նրանով, որ ռազմաճակատի պահելը հայ զինվորի համար կենսականորեն հարազատ գործ էր⁸²:

Միաժամանակ իրականացվում էր ռուսական բանակում եղած հայկական ուժերի վերախմբավորում, դրանք Պարսկաստանից, ապա նաեւ Ռուսաստանից հետ էին բերվում Արեւմտյան Հայաստան. ռազմաճակատի պաշտպանության գործը դարձավ ամբողջ հայության հարցերի հարցը: Չեւավորվում էին մահապարտների հարվածային գումարտակներ, այդ գործընթացը հռչակելով «հայրենիքի եւ ազատության փրկության գործ»⁸³:

1917թ. օգոստոսի 7-ին հրապարակվեց Ժամանակավոր կառավարության «Բանակի ազգայնացման հիմնական դրույթները» օրենքը, որում ազգային գորամասերի ստեղծումը հիմնավորված էր հետեւյալ կերպ. «Բանակի առողջացման, բանակային գորամասերում միատարրության հաստատման, համախմբվածության, ազգի նկատմամբ (զինվորների) բարոյական պատասխանատվության բարձրացման նպատակով, ռազմական նախարարն անհրաժեշտ է գտնում բանակի վերակազմավորում, դրա հիմքում դնելով ազգային եւ տարածքային միասնությունը»⁸⁴: Ո՞րն էր Կերենսկու կառավարության քաղաքականության մեջ նման շրջադարձի պատճառը: Համենայն դեպս. ոչ Լվովի, որը ստորագրել էր այդ որոշումը, «ժողովրդավար սկզբունքները»: Գեներալ Ա. Բագրատունին, երբ Պետրոգրադում հարց էր բարձրացնում «հայկական ազգային կորպուս» ստեղծելու անհրաժեշտության մասին, դա հիմնավորում էր նրանով, որ «հայերը վախենում էին ռուսական բանակի փլուզման վտանգից»⁸⁵:

Ռուսական բանակի փլուզումը զուգակցվում էր ռուս զինվորի հեռանալու հետ և այն սկսվեց նրանով, որ ռուս սպաները զանգվածաբար արձակուրդ ձեւակերպեցին ու մեկնեցին Ռուսաստան:

⁸¹ «Մշակ», 27.06.1917:

⁸² РГВИА, ф. 2003, оп. 2, д. 338:

⁸³ “Известия Закавказских железных дорог.” Тифлис, 24.08.1917”:

⁸⁴ РГВИА, ф. 2015, оп. 1, д. 3:

⁸⁵ Деникин А., Очерки русской смуты, М., 1991, с. 105:

Կովկասյան ռազմաճակատից առաջինը հեռացան 39-րդ հետեակա-
յին դիվիզիայի զնդերը: Սաղախլու կայարանում թաթարները կրակ բա-
ցեցին զինվորներ տեղափոխող գնացքակազմի վրա: Եղան սպանվածներ
և վիրավորներ:

Ճակատը քեց նաև Կարսի առաջին սահմանապահ դիվիզիան, առաջին
և վեցերորդ կորպուսները, Էրզրումի ամրոցի կայագորը: Պրժեռալսկին դրա
համար հրամայեց զորացրել բանակային տարիքը անցածներին, որովհետև
առաջին հերթին նրանք էին կազմալուծում զորքերին: Ռազմաճակատը հալ-
վում, դատարկվում էր:

Միայն ոչ մեծ թվով ռուս սպաներ, վախենալով Ռուսաստան վերադառնա-
լուց, չհեռացան և մտան հայկական զորամասեր: Դրա փոխարեն շատ հայ
սպաներ մեկնեցին Ռուսաստան պաշտպանելու հեղափոխությունը:

Ռազմաճակատում դադար էր: Տեղում մնացած զինվորները պարապ մնա-
լով «եղբայրանում էին» թուրքերի հետ:

Օլբիի 20-րդ գումարտակի 3-րդ վաշտը կոչ արեց «հեղափոխական զին-
վորներին, բանվորներին ու գյուղացիներին օժանդակություն ցույց տալ Պետ-
րոգրադի բանվորներին, զինվորներին և նավաստիներին նրանց փառա-
պանծ պայքարում հանուն խաղաղության և հողի»⁸⁶:

Կարսի 15-րդ հրետանային վաշտը արձագանքեց. «Կրծքով կպաշտպա-
նենք հեղափոխությունը»⁸⁷:

Թուրքերն անմիջապես օգտվեցին ռուսական բանակի փլուզումից և սկ-
սեցին հավաքել իրենց ջախջախված ու փշուր-փշուր եղած զորամասերի
մնացորդները, դրանք համալրել Ռուսաստանից վերադարձող զերիներով, ո-
րոնք արդեն գիտեին Ռուսաստան տանող ճանապարհներն ու լեռնային անց-
քերը, շատերը սովորել էին հայերեն և ռուսերեն՝ կարող էին հետախուզու-
թյամբ զբաղվել:

Թուրք փաշաները մատնանիչ անելով ռազմաճակատից հեռացող ռուսե-
րին, ոգետրում էին ասկյարներին, հավատացնում, որ դա ալլահի կամքով է
կատարվում իբրև շնորհ թուրքերին, որ Ռուսաստանի մահմեդական եղբայր-
ները սպասում են իրենց, որ հասել է պահը աշխարհի մահմեդականությանը
քրիստոնյաների լծից ազատելու, որ Ռուսաստանում սով է, ռուսներն իրար
անխնա կոտորում են, որ ռազմաճակատում ռուս զինվոր չի մնացել, որ Լենին-
ը ուզում է բարեկամանալ մահմեդականների հետ, որ այլևս փակ աչքերով
էլ կարելի է գրավել Կովկասը և այլն:

⁸⁶ Ալեքսանդրյան Ա., Մղձավանջ, Ե., 2001, էջ 90:

⁸⁷ Ն.տ., էջ 91:

Կարսի մարտկոցի կայագորի մի խումբ զինվորներ իջան քաղաք: Ալեք-
սանդրովսկայա փողոցում նրանց միացան ուրիշ զինվորներ. ընտրեցին զին-
վորների խորհրդի պատգամավորներ, բանտարկեցին քաղաքի պարետին և
շտաբի պետին: Ստեղծվեց նաև բանվորների խորհուրդ:

Կարս քաղաքի ու ձորի զորանոցների մի մասը դատարկ էր, դռներն ու լու-
սամուտները ջարդված: Հարբած բանակայինները կռիվներ էին սարքում:
Քաղաքի թուրք բնակչությունը թաքուն զինվում էր:

Այդպես էր ամենուրեք: Թիֆլիսում կարգը պաշտպանելու գործը դաշնակ-
ները վերցրել էին իրենց վրա: Թանկություն էր, խանութները դատարկ: Անդր-
կովկասը դարձել էր վառողի տակառ: Ռուսաստանի օրինակով բանդում էին
եկեղեցիները: Ռուսաստան մեկնող ապրանքատար վագոնների կտուրներն
անգամ զբաղեցված էին տուն վերադարձող զինվորներով:

Մի փաստ, ինչը միայն առաջին հայացքից է մասնավոր թվում: Ջգալով, որ
բանակի քայքայման առաջն առնելն այլևս անհնար էր, ռազմաճակատի
հրամանատար Յուդենիչը Թիֆլիսում բանակային հրամանատարության
խորհրդակցություն հրավիրեց, և բացեիբաց հայտարարեց, թե այլևս ռազ-
մաճակատը պահելն անհնար է և ինքը ցած է դնում իր լիազորություններն ու
մեկնում է: Պետրոգրադի ծրագրերի մեջ Կովկասից հեռանալը չէր մտնում, և
մինչև այդ Թուրքեստանյան ռազմաճակատը ղեկավարող գեներալ Պրժե-
ռալսկին նշանակվեց Կովկասյան ռազմաճակատի հրամանատար:

Ահա թե այդ մասին ինչ է գրում մի այնպիսի թուրքաֆիլ գերմանացի գոր-
ծիչ, ինչպիսին էր Կ. Մյուլմանը. «Ռուսական հեղափոխության բռնկումը 1917
թվականի մարտին չափազանց թեթևացրեց Թուրքիայի դրությունը Հայաս-
տանում»⁸⁸: Ժամանակավոր կառավարությունը, որպեսզի կարողանար կա-
յունացնել ռուսական բանակի վիճակը, իրականացրեց մի շարք միջոցառում-
ներ, այդ թվում կաղրային փոփոխություններ: Ն. Ռոմանովն ազատվեց ռազ-
մաճակատի հրամանատարի պարտականությունից և այդ պաշտոնում նշա-
նակվեց Յուդենիչը: Սակայն նա էլ երկար չմնաց, հեռացավ և հրամանատար
դարձավ Պրժեռալսկին: Իսկ դրությունը գնալով վատթարանում էր, և չնայած
թուրքական բանակը բացարձակապես ի վիճակի չէր հարձակողական մար-
տերի, ռուսական զորքերը հրաժարվեցին ակտիվ գործողություններից և ան-
ցան պասիվ պաշտպանության:

Իրավիճակի բարդությունը ցուցադրող էս մի փաստ:

Երեսնամյա ստեղծվել էր «դասալիքների իրավունքների պաշտպանու-
թյան կոմիտե» 1500 անդամներով: Դասալիքները որոշել էին հեռագիր ու-
ղարկել Կերեմսկուն ու Չխեիձեին այն մասին, որ զինված դասալիքները

⁸⁸ Muhlmann C., Das Deutsch-Türkische Waffenbuundnis im Weltkriege. Leipzig, 1940, s. 133:

պատրաստ էին մեկնել ռազմաճակատ պայմանով, եթե հաշտությունը կնքվի առանց բռնակցումների եւ պատերազմական տուգանքների՝ ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի հիման վրա»։ Դժվար չէ հասկանալ, որ այս հեռագրի հեղինակները դասալքել էին ոչ նրա համար, որպեսզի հասնեն ազգերի ինքնորոշման իրավունքի հարգմանը, այլ պարզապես այլեւս պատերազմել չէին ցանկանում։ Պատահական չէ, որ նրանց ճնշող մեծամասնությունը հրաժարվեց մտնել հայկական կորպուսի շարքերը։ Նրանց ու նմանների անպատասխանատու վարքագիծը ճակատագրական ազդեցություն ունեցավ հայության համար։

Հայ ազգային ուժերի կազմում ենթադրվում էր հավաքագրել 100-130.000 մարդ, որից 30.000-ը արեւմտահայերից եւ շուրջ 100.000-ը ռուսական բանակում ծառայող հայերից։ Ռուսական իշխանությունների օգնությամբ Անդրկովկաս ուղարկվեց 80.000 հայ զինվորական՝ 40.000 Բարվի, գրեթե նույնքան էլ Վրաստանի վրայով։ Սակայն նրանց մեծ մասը Կովկասյան ռազմաճակատ չհասավ՝ ադրբեջանցիների ու վրացիների ստեղծած խոչընդոտների եւ Հայ ազգային բյուրոյի ու Ազգային խորհրդի թուլակամության, անճարակության պատճառով։

Ահա այսպես Ժամանակավոր կառավարությունը հարկադրված եղավ ռուսական բանակի գրաված տարածքների պաշտպանությունը հանձնարարել կովկասյան ազգերին եւ, առաջին հերթին, հայերին։ Սա էր Ժամանակավոր կառավարության հայկական քաղաքականությունը։ Այն հաջողություն ունեցավ այն պարզ պատճառով, որ չնայած մինչեւ 1918թ. սկիզբը Կովկասյան ռազմաճակատը շարունակեց գոյություն ունենալ, բայց արդեն առանց ռազմական լուրջ գործողությունների՝ գիծը լքված էր, կամ «հաստատվել էր չեզոք հարեւանության» հարաբերություն։

Անդրկովկաս՝ միասին, բայց ինչպե՞ս. Անդրկովկասի հասարակական քաղաքական շրջաններում մեծ աշխուժությամբ էր քննարկվում երկրամասի կարգավիճակի ու վարչական կառուցվածքի հարցերը։ Հայ հասարակությունում տիրապետող կարծիքն էր՝ Անդրկովկասը դաշնակցային իրավունքներով պետք է մնար Ռուսաստանի կազմում, այսինքն՝ դրանով նաեւ խնդիր էր դրվում ֆեդերալացնելու Ռուսաստանը։

Հայկական Հանրապետությունը ներառելու էր Երեւանի նահանգը, Գանձակի նահանգի հայկական մասը, Ախալքալաքի գավառը, Բորչալուի գավառի հայկական մասը, Կարսի մարզը⁸⁹։ Այդ տարածքում բնակվում էր 2147.000 մարդ, որից 1.315.000-ը (այսինքն՝ 61 տոկոսը) հայ, 610.000 մահմեդական (20 տոկոս)⁹⁰։

⁸⁹ «Հորիզոն», 26.10.1917:

⁹⁰ Шахатуниан А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 150-151:

Մինչդեռ վրացիներն իրենցն էին համարում Լոռին, Ախալքալաքը, Բորչալուն, Արդվինը, Օլթին, նաեւ Արդահանն ու Կարսը։ Ադրբեջանցիները վիճելի հողեր էին համարում Երեւանի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի Շամշադին-Քարվանսարա հատվածը, Կարսի ու Կաղվկանի գավառները։ Մահմեդականները ոչ միայն ասում էին, այլեւ պատրաստվում էին «բացահայտ ու հաջող։ Չինվում էին բոլոր գավառներում... Թաթարները որոշել էին հասնել ինքնավար մուսուլմանական մարզի կազմավորմանը, որի մեջ պետք է մտնեին Անդրկովկասը, ինչպես նաեւ Դաղստանը, Պարսկական Ադրբեջանը եւ Անդրկասպյան երկրամասը... Նրանք պահանջում էին մուսուլմանների բնակեցում Արեւմտյան Հայաստանում՝ հայերից դատարկված գավառներում։ Նրանք նաեւ ծրագրել էին՝ Ավերիանովին եւ Չավրիեին հեռացնել Արեւմտյան Հայաստանի կառավարումից, օգնություն ցույց տալ ռուսների գրավված տարածքների մահմեդականներին, տեղերում ստեղծել մահմեդական կազմակերպություններ եւ այլն⁹¹։

Համախալմանական համախմբման կոչ արեց մուսավաթի 1917թ. հոկտեմբերին կայացած համագումարը։ Ռասուլզադեն առաջարկեց միավորել համախալմանական ու համաքրքական ծրագրերը։ Նա ասում էր. «Թուրքերը հանդիսանում են մեկ ընդհանուր ազգ», բայց այդ չի նշանակում իսլամի ժխտում⁹²։

«Մուսավաթի համագումարը որդեգրեց դաշնակցային կառուցվածքի գաղափարը՝ նրա մեջ տեսնելով Գրիմը, Կովկասը, Դաղստանը, Թուրքեստանը, Բաշկիրիան։ Դրվեց Ատրպատականի տարածքային ինքնավարության հարցը։ Ատրպատական ասելով հասկանում էին ոչ թե Արաքսից հարավ գտնվող պարսկական երկրամասը, այլ Բարվի, Գանձակի, Երեւանի նահանգները... Նոր կազմավորվող մուսուլմանական կորպուսում զինվորագրվեցին չեչեններ, չերքեզներ, կաբարդիներ, թաթարներ, դաղստանցիներ, օսեր, ինգուչներ, որոնցից կազմավորվեց ինը ստորաբաժանում»⁹³։

Եթնիկական սկզբունքով երկրամասի բաժանման պարագայում Վրաստանում վրացիները կազմելու էին 54 տոկոս, Հայաստանում հայերը՝ 65 տոկոս, մահմեդականները (այլ ոչ թե միայն թաթարները) Ադրբեջանում՝ 77 տոկոս։ Սակայն, եթե Հայաստանը սահմանափակվեր Երեւանի նահանգով, ապա այն կունենար 10.000 կմ² տարածք 1.230.000 բնակչությամբ։ Եթե, երկրամասի բնակչության 30 տոկոսը կազմող հայերը կստանային դրա տարածքի միայն 5 տոկոսը, ապա վրացիները՝ 42 տոկոսը, այսինքն՝ 8 անգամ ավելի, իսկ թաթարները՝ 53 տոկոսը, այսինքն՝ 12,5 անգամ ավելի⁹⁴։

⁹¹ ЦГАНИ РФ, ф. 1778, оп. 1, д. 254:

⁹² Сеф С., Борьба за Октябрь в Закавказье. Тифлис, 1932, с. 130:

⁹³ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, էջ 23:

⁹⁴ "Армяно-русский вооруженный конфликт." Баку, 1919, с. 3:

1917-ի կեսերին վրաց մենչեիկները սահմանային փոփոխությունների միակ հնարավոր եղանակը համարում էին հանրաքվե: Բայց նրանք հանրաքվե թույլատրելի էին համարում միայն Բորչալուի եւ Չակաբալայի համար, իսկ Ախալքալաքը համարում էին անվիճելի վրացական տարածք: Հանրաքվեի սկզբունքի կողմնակից էր նաեւ ՀՀԴ:

Նույն այդ ժամանակ Պետրոգրադում տեղի ունեցավ Անդրկովկասի ժողովուրդների ներկայացուցիչների խորհրդակցություն նվիրված երկրամասի վարչական վերաբաժանմանը: Եղան երեք առաջարկներ՝ Անդրկովկասը բաժանել ըստ ազգությունների, սահմանային հարցերի լուծումը թողնել ՕՅԱԿՈՄ-ին կամ մշակել այդ բաժանման նախագիծ ու ներկայացնել վերջինիս քննարկմանը⁹⁵: Եվ քանի որ Ա. Շահխաթունին նման մի նախագիծ նախապես պատրաստել էր, այն մասնակի փոփոխություններով ուղարկվեց Թիֆլիս: Համաձայն այդ նախագծի Լոռին հանվում էր Բորչալուի, իսկ Ախալքալաքը՝ Թիֆլիսի նահանգի կազմից ու Կարսի, Կաղզվանի հետ միասին մտցվում էր Ալեքսանդրապոլի նահանգի մեջ:

Այս նախագիծը վրաց մենչեիկները մերժեցին⁹⁶:

Թուրքական վաղեմի ծրագիրը՝ ստեղծելու կովկասյան համադաշնակցություն իր հովանու տակ, դարձավ ուղենիշ աստղ ադրբեջանցիների եւ որոշ առումով նաեւ վրացիների համար: Դեռ 1916թ. վրացական վտարանդիները Յյուրիխում անգլերեն հրատարակեցին «Վրաստանը եւ պատերազմը» («Georgia and War») գիրքը, որում զետեղված է Միացյալ Կովկաս ստեղծելու պլանը: Այդ Կովկասի մեջ պետք է մտնեին հյուսիս-կովկասյան լեռնականները՝ չեչեններ, չերքեզներ, դաղստանցիներ, ինչպես նաեւ թաթարներ: Հայաստանն այդ Կովկասում բացակայում էր, որովհետեւ Երեւանի մի մասը եւ Կարսի նահանգի մեծ մասն անցնելու էր Թուրքիային որպես «թուրքերով բնակված տարածքներ», իսկ Հայաստանի հյուսիսային շրջանները տրվելու էին անկախ Վրաստանին: Հայերին միայն թույլատրվում էր թաթարների նետ համատեղ ստեղծել հայ-թաթարական խառը կանտոններ: Ողջ Կովկասը գտնվելու էր Թուրքիայի հովանու տակ, որը համագործակցված տեղական ժողովուրդների հետ ստեղծելու էր «չեզոք Կովկաս»⁹⁷:

Կովկասի մահմեդականների միավորման ծրագիրը դարձավ մուսավաթի համագումարի որոշում, որպես «արյան կանչ» հասցեագրված «փլյան առաքինի ժողովրդին»: Մուսավաթի համագումարը առաջ քաշելով մահմեդական ժողովուրդների դաշնակցային պետություն ստեղծելու ծրագիրը, այդ դաշ-

⁹⁵ Шахатуни А., 674. աշխ., с. 121:

⁹⁶ Ն.տ. с. 124:

⁹⁷ Georgia and War, Zurich, 1916, p. 33-34:

նակցության կազմում Ադրբեջանի տարածքի մեջ մտցնում էր Բարվի, Ելիզավետպոլի եւ Երեւանի նահանգները, ինչպես նաեւ Կարսն ու Արդահանը⁹⁸:

Նույն ժամանակ Հյուսիսային Կովկասի մահմեդականները Վլադիկավկազում ստեղծեցին Կովկասի միավորված լեռնականների միություն, որի կենտրոնական կոմիտեն 1917թ. դեկտեմբերի 2-ին հռչակեց Լեռնականների հանրապետության ստեղծումը Ռուսաստանի կազմում: Այն, սակայն, 1918թ. մարտին բոլշեիկների կողմից տապալվեց, իսկ այդ կառավարության անդամների մի մասը փախչելով Թիֆլիս, մայիսի 11-ին Հյուսիսային Կովկասը հռչակեց անկախ եւ բանակցություններ սկսեց Վրաստանի կառավարության հետ համադաշնակցային անկախ Կովկաս ստեղծելու շուրջ:

Ի դեպ, 1917թ. ապրիլին դաշնակցությունը գրեթե նույն բովանդակությամբ հուշագիր էր ներկայացրել սոցիալիստական ինտերնացիոնալի համաժողովին, որում կարդում ենք. «Ռուսահայաստանը Վրաստանի եւ Թաթարստանի հետ պետք է լինի ինքնավար՝ դաշնակցային եւ հանրապետական Ռուսաստանի ծոցում», իսկ «Ազատ Հայաստանը բովանդակելու է հայկական վեց վիլայեթները եւ Կիլիկիան, ի բացառեալ 1877-78թթ. պատերազմից հետո հայկական նահանգներին միացված մահմեդական շրջանները»⁹⁹:

ՀՀԴ որոշ սկզբունքներում առավել քան հետեւողական է: Անգամ 1917-ին նա Միացյալ Հայաստանի խնդիր չէր դնում:

Արեւմտահայ համագումարում նույնպես անդրադարձ եղավ վարչատարածքային խնդիրներին, ինչպես նաեւ ռազմաճակատում տիրող վիճակին, նշվեց, որ գորքն անուշադրության էր մատնված, ծանր էր կարգապահության վիճակը, զինվորները կիսամերկ էին, քաղցած, շատերը զենք չունեին: Նշվեց, որ հայերը կենսականորեն են շահագրգռված ռազմաճակատի կացությամբ եւ պարտավոր են ամեն ինչ ենթարկել ռազմաճակատի շահերին:

Լ. Աթաբեկյանն առաջարկեց հույս չդնել Պետրոգրադի վրա եւ միջոցների դիմել հարեւանների եւ, առաջին հերթին, թուրքերի հետ հաշտվելու համար:

Սակայն համագումարի մասնակիցների մեծամասնությունը միանգամայն այլ կողմնորոշում ուներ:

Դաշնակցությունը, մասնավորապես նրա ձախ թելը, պայքարում էր իրականացնելու Արեւմտյան Հայաստանի ներքին անկախությունը «իբրեւ օսմանյան ֆեդերատիվ պետութեան մի մաս», իսկ Արեւելյան Հայաստանի համար՝ «ներքին ինքնավարութիւն Անդրկովկասի ռամկավար հանրապետութեան մեջ, որ դաշնակցային կապով կապուած պիտի մնար Ռուսաստանին»:

⁹⁸ Гуссейнов М., Тюркская демократическая партия "Мусават" в прошлом и настоящем. Вып. 1. Баку, 1927, с. 71-76:

⁹⁹ Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բեյրութ, 1958, էջ 52:

Այլ խոսքով ասած, ՀՀԴ շարունակում էր ղեկավարվել 1907թ. իր Չորրորդ ընդհանուր ժողովում ընդունված ծրագրով, որը վերահաստատվել էր 1914թ. ընդհանուր ժողովի կողմից:

Դաշնակցության գործիչներից Ռոստոմն էր, որ ռուսական փետրվարյան հեղափոխության մեջ վտանգ տեսավ հայ ժողովրդի համար: Նրա կարծիքով պատերազմական պայմաններում ծագած այդ հեղափոխությունը նոր չարիքներ էր բերելու հայ ժողովրդին, չնայած շեշտում էր, որ ազատ Ռուսաստանը չի լինի այն, ինչ էր «Տաճկաստանի ազատությունը» 1908-ին, որ այնքան աղետաբեր եղավ հայության համար¹⁰⁰:

Այդ համոզմունքն էր պատճառը, որ ՀՀԴ-ն էր հայ մյուս քաղաքական ուժերը անվերապահ կողմնորոշվեցին մնալ Ռուսաստանի կազմում՝ Ժամանակավոր կառավարության հետ:

1917թ. ապրիլի 10-ին Թիֆլիսում սկսվեց միջկուսակցական խորհրդակցություն, որին մասնակցում էին Ազգային բյուրոյի ու կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի, Արեւմտահայ խորհրդի անդամները, Թիֆլիսի միջկուսակցական մարմնի կազմը՝ 75 հոգի Թիֆլիսից եւ 20 հոգի գավառներից: Խորհրդակցությունը որոշեց հրավիրել Արեւելահայ համագումար: Նաեւ քննարկեց քաղաքական եւ ռազմական կյանքի հարցեր:

Դեռ 1916թ. էին առաջարկություններ լինում արեւելահայերի համագումար հրավիրելու վերաբերյալ: Այդ ձգտումն ավելի ուժեղացավ Արեւմտահայ համագումարից հետո: Խնդիր էր դրվում այդ համագումարում ձեւավորել վերկուսակցական համազգային մարմին: Ա. Սանուկյանը դեմ էր համագումարի հրավիրմանը: Նրա կարծիքով այն ստեղծելու էր մի ուրիշ կուսակցություն եղած կուսակցությունների կողքին, որն ավելի էր խորացնելու ներազգային պառակտումը: Խատիսյանի կարծիքով դաշնակցությունը նույն Ազգային բյուրոն է եւ Ազգային համագումարն էլ այլ բան չի լինելու, եթե ոչ ՀՀԴ համագումար: Նա այդ համագումարի հրավիրման մեջ տեսավ Հայաստանի Հանրապետության ստեղծմանը միտված քայլ: Ա. Շահխաթունին հայտարարեց. «Ազգային համագումարը պիտի զբաղվի տաճկահայ հարցով, իսկ Ռուսահայաստանում կստեղծվի մի նոր կուսակցություն»¹⁰¹: Հ. Աղոլայանի կարծիքով «համագումարը պիտի լինեւ եղած շերտավորումների եւ հոսանքների բլրկ, այլապես մի կուսակցություն, որքան էլ գորեղ լինի, չի կարող ամբողջ պատասխանատվություն իր վրա վերցնել»¹⁰²:

¹⁰⁰ «Ռոստոմ», Բեյրութ, 1979, էջ 73-76:

¹⁰¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111:

¹⁰² Ն.տ.:

Ընդունվեց որոշում. «Համագումարը հրավիրել Թիֆլիսում, հարցը դնել Ազգային բյուրոյի այն նիստի քննությանը, որտեղ հրավիրված լինեն բոլոր կուսակցությունների ու խավերի ներկայացուցիչները, որոնք պիտի մտնեն բյուրոյի մեջ»¹⁰³:

Չ. Եսայանը հայտարարեց, թե արեւմտահայերը համագումար ուղարկելու էին երեք հոգի, ովքեր խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու են միայն արեւմտահայ հարցի քննարկմանը: Նման կարծիք արտահայտեցին նաեւ Խ. Բոնապարտյանը, Ստ. Մալխասյանը, նկատի ունենալով, որ արեւմտահայերի համագումարն արդեն կայացել էր: Ա. Մռավյանն ասաց, թե Ս.Գ. դեմ է համագումարին ու դրա աշխատանքներին չի մասնակցելու: Ա. Երզնկյանը հակառակ կարծիքի էր:

Ամփոփելով քննարկումը նախագահող Ա. Խատիսյանը Ա. Մռավյանին անվանեց «հիվանդամիտ եւ հայատյաց», իսկ Ա. Երզնկյանի «խոսքերը» համարեց մոտ իր «մտածածին», ինքը նույնպես կարծում է, որ համագումարի հրավիրումը չպետք է արագացնել: «Առայժմ այս սահմանափակ շրջանների մեջ մշակենք մեր միմիմումը,- ասաց նա,- հետո մտնենք հարաբերությունների մեջ որոշ կուսակցությունների հետ եւ ապա միայն առաջ բերենք ազգային մեծ ժողովներ...»¹⁰⁴:

Ժամանակավոր կառավարությունն ամեն ինչ անում է խորհուրդների, այդ թվում նաեւ ազգային խորհուրդների, վրա իր ազդեցությունը մեծացնելու: Այդ խնդրին էր նվիրված ՆԳ նախարարի կողմից սեպտեմբերին տեղերն ուղարկված շրջաբերականը:

Ազգային բյուրոն որոշեց համագումարի պատգամավորների ընտրություններն անցկացնել հուլիսի 23-ին, իսկ համագումարը հրավիրել օգոստոսի 20-ին: Բաբվի հայկական կոմիտեն առաջարկեց ընտրություններ չանցկացնել, դրա փոխարեն ներկայացուցիչներ հրավիրել քաղաքական եւ հասարակական կազմակերպություններից, մշակույթի բնագավառից, Դումալի հայ պատգամավորներից: Դ. Անանունը ծաղրեց. «Անկազմակերպ հայության ուժից վեր են ռամկավար ընտրությունները...»¹⁰⁵: Իսկ հայ եկեղեցական համագումարը զայրացավ. «Նկատի ունենալով, որ մինչեւ այսօր ազգային-քաղաքական գործերում ազգի ներկայացուցիչը եւ տերը համարվել է Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ նա է միայն իրավատեր ռուսահայ ազգային ժողով գումարելու, գտնում ենք, որ ինքնակոչ միջկուսակցական մարմինը ուզուրպացիայի է ենթարկել վեհափառ կաթողիկոսի իրավունքը,

¹⁰³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111:

¹⁰⁴ Ն.տ.:

¹⁰⁵ Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 654:

որի դեմ բողոքելով, առաջարկում ենք, որպեսզի կաթողիկոսը եւ եկեղեցական ներկա ժողովը գումարվելիք համագումարում ունենան այնքան թվով ներկայացուցիչներ, որքան կկամենան»¹⁰⁶:

Համագումարը բացվեց հոկտեմբերի 11-ին, Թիֆլիսի արտիստական քաղաքային շենքում: 203 պատգամավոր, որից 113 դաշմակ, 27 ՀԺԿ, 11 ս-դեմոկրատ, 23 էսէռ, 7 անկուսակցական եւ ուրիշներ: Նախագահության կազմում ընտրվեցին ութ դաշմակ, երեք ՀԺԿ, երկու մենշեիկ, մեկ բուլշեիկ, մեկ սպեցիֆիկ, երկու էսէռ, երկու հնչակ:

Համագումարին մասնակցելու էին հրավիրվել Արեւմտահայ խորհրդի ամբողջ կազմը, հայ կամավորական գնդերի ու զինյալ խմբերի ղեկավարները¹⁰⁷:

Համագումարի օրակարգի հարցերն էին՝ քաղաքական պահը եւ դրա հետ կապված խնդիրներ (զեկ. Վրացյան եւ Բեկզադյան), նահանգների եւ գավառների փոփոխության եւ զեմստվոյի (զեկ. Ա. Շահխաթունյան, Ղ. Տեր-Ղազարյան), պարենավորման (զեկ. Ս. Հարությունյան, Հ. Բեկզադյան), ազգամիջյան հարաբերությունների (զեկ. Հ. Օհանջանյան, Մ. Բաբաջանյան, Ա. Երզնկյան), ՕՅԱԿՈՄ-ի նկատմամբ վերաբերմունքի (զեկ. Հ. Արդուրյան, Ա. Երզնկյան), ռազմաճակատի (զեկ. Ռ. Տեր-Սիմասյան, Ս. Փիրումյան, Ա. Շահմազյան), փախստականների (զեկ. Վ. Փափազյան, Հ. Հարությունյան, Հ. Առաքելյան), դպրոցների ազգայնացման (զեկ. Ս. Տիգրանյան, Ա. Աբելյան, Ս. Հովյան) հարցերը, ազգային բյուրոյի հաշվետվությունը (զեկ. Ա. Խատիսյան եւ Ն. Աղբալյան)¹⁰⁸:

Համագումարի ընդունած որոշումները հանգում էին հետեւյալին՝ աջակցել Ժամանակավոր կառավարությանը, ՕՅԱԿՈՄ-ում հայ ներկայացուցիչների ընտրությունը վերապահել նորընտիր Ազգային խորհրդին, ուժեղացնել վերահսկողությունը բանվորների եւ զինվորների խորհուրդների գործունեության վրա, ընդունել ազգերի ինքնորոշման իրավունքը եւ «հայ ժողովուրդը պետք է ձգտի իրականացնել իր այդ իրավունքը պետական հիմքերով եւ սկզբունքներով անդրկովկասյան ժողովուրդների փոխադարձ համաձայնությամբ»¹⁰⁹: Անդրկովկասը պետք է ղեկավարվեր միանձնյա՝ գեներալ-կոմիսարի եւ Կովկասի գլխավոր ազգությունների կուսակցություններից կազմված խորհրդի կողմից¹¹⁰:

¹⁰⁶ Ռուսահայ հոգևորականության համագումարի բանաձևեր. Էջմիածին, 1917, էջ 22:

¹⁰⁷ «Մշակ», 16.09.1917:

¹⁰⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17:

¹⁰⁹ ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 17:

¹¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17:

Համագումարի բանաձևերում ասվում էր. «Նկատի ունենալով, որ հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործը ոչ այլ ինչ է, քան հեղափոխական իշխանության հաստատում երկրում եւ պետության սահմանների պաշտպանություն, համագումարը գտնում է, որ բոլոր հայկական ուժերը պետք է գործադրվեն իշխանության հաստատման եւ ճակատի պաշտպանության համար՝ հեղափոխական կառավարության եւ ժողովրդավարության միջոցով»¹¹¹:

Համագումարը պատրաստականություն արտահայտեց համագործակցելու Ժամանակավոր կառավարության հետ:

Անդրկովկասի վարչական նոր բաժանումը համարվեց հրատապ խնդիր եւ քննարկման դրվեց հետեւյալ տարբերակը: Արեւելյան Կովկասը բաժանել քաքարական եւ հայկական մասերի: Հայկական մասի մեջ մտցնել Երևանի նահանգը, Ղազախի, Գանձակի, Ջիվանջիի եւ Շուշու գավառների լեռնային մասերը, Չանգեզուրի մեծ մասը, Գանձակ քաղաքի հայկական մասը, ձեռավորել Ալեքսանդրապոլի նահանգ՝ դրանում ներառելով նաեւ Ախալքալաքը, Լոռին եւ Ծաղկայի հայկական մասը:

Սակայն այս հիմնական հարցում համագումարը չկարողացավ ընդհանուր հայտարարի գալ: Մենշեիկներն ու էսէռները գտնում էին, որ մեծ պահանջներն ավելի սրելու էին հայ-վրացական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունները:

Անհամաձայնություն գոյություն ուներ ոչ միայն այդ, այլեւ հիմնարար նշանակության ուրիշ հարցերում եւս: Համագումարին չհաջողվեց դառնալ միավորիչ ուժ: Վ. Փափազյանը գրում է. «Ազգային խորհրդի կազմութիւնից հետո մինչեւ վերջ իրարմե գրեթե կտրուած էինք եւ անտեղեակ»¹¹²:

Ժողովն ընտրեց Մեծ խորհուրդ եւ Գործադիր մարմին: Մեծ խորհրդում ընտրվեց 35, իսկ Գործադիր մարմնում, որը կոչվեց Հայ ազգային խորհուրդ՝ 15 հոգի: Թե մեկը եւ թե մյուսը, չնայած բազմակուսակցական կազմ ունեին, բայց դրանց անդամների մեծամասնությունը դաշնակներ էին: Գործադիր մարմնի անդամներից վեցը, այդ թվում նախագահը (Ա. Ախարոնյան) դաշնակցական էին: Ազգային խորհրդի անդամ ընտրվեցին ՀՀԳ-ից՝ Ա. Մանուկյանը, Ն. Աղբալյանը, Ռուբենը, Խ. Կարճիկյանը, Ա. Բաբալյանը: Չեզոքներից՝ Ա. Մամիկոնյանը, Տ. Բեկզադյանը եւ Պ. Չաքարյանը, ժողովրդական կուսակցությունից՝ Ս. Հարությունյանը եւ Մ. Բաբաջանյանը, ս. դեմոկրատներից՝ Մ. Ղարաբեկյանը, Ա. Երզնկյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, էսէռներից՝ Հ. Տեր-Օհանյանը եւ Ա. Ստամբուլյանը¹¹³: Երեսան տեղափոխվելուց հետո (20.07.1918)

¹¹¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17:

¹¹² Փափազեան Վ., Իմ յուշերը. Բեյրութ, 1952, էջ 445:

¹¹³ «Հորիզոն», 18.10.1917:

ստեղծվեց Հայաստանի ազգային խորհուրդ, որում ՀՀԴ ուներ 18, ս.դ.՝ 6, Է-սևեռները՝ 6, ռամկավարները՝ 6, անկուսակցականները՝ 2 տեղ:

Հայ ազգային խորհուրդն իր վրա վերցրեց Հայաստանի եւ հայության բախտի ու կյանքի տնօրինողի պատասխանատվությունը: Այլ բան է, որ խորհրդին ամեն ինչ չէ, որ հաջողվեց, ամեն ինչ չէ, որ նա ճիշտ ու ազգաշահ արեց, սակայն անհնար է ժխտել նրա դերը հայկական պետականության իրավասություններն իր վրա վերցնելու եւ այդ պետականությունը ձեւավորելու գործում:

Համագումարը որոշեց արեւելահայերի համար ստեղծել Ազգային ժողով՝ 150 հոգուց կազմված օրենսդիր մարմին, որը սակայն այդպես էլ չգումարվեց:

Համագումարը որոշեց բազմակուսակցական սկզբունքով Ազգային խորհուրդ ստեղծել նաեւ Երեւանում, որպես Թիֆլիսի խորհրդի ենթակա օղակ: Հետագայում նման խորհուրդներ ստեղծվեցին գրեթե բոլոր վարչական կենտրոններում: Վերջիններից, մասնավորապես, աչքի ընկավ Բաքվի խորհուրդը: Հայ գինվորական կոմիտեի նախագահն էր Հ. Մելիքյանը:

Արեւելահայ համագումարին հայ բոլշեիկները չէին մասնակցում եւ այն որակավորեցին «խոշոր բուրժուազիայի կառքին լծված եւ ռեակցիոն հոգեւորականությունից դեռեւս չխլված մանր բուրժուազիայի նացիոնալիստական հնարք»¹¹⁴:

Եթե նկատի առնվի համագումարի մասնակիցների դասակարգային կազմը, այս բնութագրությունը գուցե եւ ճշմարտությունից հեռու չէ, բայց եթե մոտենանք ըստ էության, ապա դասակարգային մոտեցումը պարզապես տեղին չէ, որովհետեւ համագումարը ոչ թե դասակարգային, այլ ազգային նպատակներ ուներ:

Իգուր են մեր ժամանակի դաշնակ գործիչներն իրենց այն ժամանակվա քաղաքականությունը արդարացնելու համար պնդում, թե ՀՀԴ «մտահոգությւնը ի սկզբանե պատերազմին վերջ տալն էր», եւ Ռոստոմը «յաջողեց հայկական պահանջները մտցնել ժամանակավոր կառավարության առաջադրելիք հաշտության պայմանների մեջ»¹¹⁵: Ընդհանուր առմամբ ՀՀԴ 1917թ. կողմնորոշումը ճիշտ էր՝ մնալ Ռուսաստանի կազմի մեջ ու նրա ժողովրդավարության կողքին: Այդ կողմնորոշումը միանգամայն հստակ արտահայտված էր Ռոստոմի կողմից սոցիալիստական ինտերնացիոնալի համաժողովին ներկայացնելու համար կազմված առաջարկներում: Հայաստանը «Վրաստանի եւ Թաթարս-

¹¹⁴ «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» Ե., 1960, էջ 73-74:

¹¹⁵ Փիրումեան Բ., Հայաստանը Հ.Յ.Դ. - Բոլշեիկ յարաբերությունների ոլորտում. 1917-1921, Ե., 1997, էջ 16-17:

տանի հետ պետք է լինի ինքնավար՝ դաշնակցային եւ հանրապետական Ռուսաստանի ծոցում», իսկ Արեւմտյան Հայաստանն անկախանալու է: «Ազատ Հայաստանը բովանդակելու է հայկական վեց վիլայեթները եւ Կիլիկիան...»:

Դա նշանակում էր, որ դաշնակցության ձախ բերը Արեւմտյան Հայաստանի մնալը Թուրքիայի կազմում այլեւ անհնար էր համարում եւ պահանջվեց երկու տարի, որ այդ կարծիքը դառնա ՀՀԴ ծրագրային դրույթ:

Չմայած ՀՀԴ գործիչները աջուձախ պնդում էին, թե բոլշեիկները Անդրկովկասում «աննշան ուժ էին», բայց գործնականում երկրամասի քաղաքական կյանքի առանցքը բոլշեիկների դեմ մյուս քաղաքական ուժերի պայքարն էր: Մեր օրերի որոշ պատմաբաններ Անդրկովկասը շփոթում են Հայաստանի հետ: Եթե վերջինում բոլշեիկներն, իսկապես, շատ թույլ էին, ապա երկրամասում նշանակալից ուժ էին, նրանց ազդեցությունը մասնավորապես մեծ էր բանակում: Դաշնակ-բոլշեիկ հարաբերությունների հարցում այդ պատմաբաններն այնքան «հետետողական» են, որ որպես կանոն չեն նկատում, որ իրենք միայն մի դիրքորոշում ունեն՝ մերժել այն ամենն, ինչ առնչվում էր բոլշեիկներին ու նրանց գոյությանը: Օրինակ, Ռ. Փիրումյանը գրում է. «Աննշան էր հայ բոլշեիկների ազդեցութիւնը հայ իրականութեան մեջ», սակայն լինելով «լեւինյան գաղափարաբանութեան հավատարիմ հետետորդներ, միշտ հակադրուած մնացին ազգային կուսակցություններին, մասնավաճ՝ Դաշնակցութեան» եւ «աննշան ազդեցություն» ունեցող հայ բոլշեիկների «կարծր դիրքորոշումը խոչընդոտ դարձավ եւ խափանեց երկարաշունչ համագործակցութիւնները երկու կուսակցութիւնների միջեւ ու դարձավ կարեւոր գործոններից մեկը՝ խանգարելու եւ ձախողութեան մատնելու անկախ Հայաստանի կառավարութեան ջանքերը՝ Հայաստանի համար ապահովելու խորհրդային իշխանութեան օգնութիւնն ու համագործակցութիւնը»¹¹⁶: Ուրեմն, եթե հայ բոլշեիկները չխանգարեին, ՀՀ եւ խորհրդային կառավարությունների հարաբերությունները չէին խաթարվի եւ Հայաստանը չէր գրկվի Ռուսաստանի օգնությունից եւ աջակցությունից: Կեղծիք է, մինչեւ 1920թ. մայիսի վերջը ՀՀ կառավարությունը ուղղակի, բայց շատ ավելի հաճախ քողարկված, ձգտում էր բոլշեիկյան Ռուսաստանից մեկուսացված մնալ, իսկ երբ վերջապես բանակցությունների մեջ մտավ նրա հետ, ապա այդ արեց անթաքույց երկերեսանությամբ, մշտապես հայ-ռուս հարաբերությունների շահերը գոհաբերելով հայ-անգլիական (ֆրանսիական, ամերիկյան), երբեմն նաեւ հայ-թուրքական հարաբերություններին:

1917թ. ո՞վ էր բոլշեիկ-դաշնակ հարաբերությունների թշնամացման նախաձեռնողն ու ջանադիրը: Իհարկե, ՀՀԴ: Նա այն ժամանակ չմայած բղավում էր, թե «հայ բոլշեիկները աննշան, ուշադրության անարժան ուժ են»,

¹¹⁶ Փիրումեան Ռ., նշվ. աշխ., էջ 28:

րայց իրականում սարսափում էր նրանցից, որովհետև Ռուսաստանում գլխավոր ուժը բոլշևիկներն էին: Իսկ հայությունն ու Հայաստանը դաշնակցության կալվածքն էին եւ նա մտքով անգամ անցկացնել չէր կարողանում, որ որևէ ուրիշ կուսակցություն, մանավանդ բոլշևիկները, հնարավորություն էին ունենալու հայ կյանքում գլխավորող դեր ստանձնել: Շատ ավելի այդ, քան գաղափարախոսական հակոտնիությունը հիմք դարձան բոլշևիկ-դաշնակառնակատման համար:

Հայ բոլշևիկներին մեղադրում էին ապագգային լինելու մեջ: Արդյո՞ք դա ճիշտ է: Նախ ասենք, որ այս խնդրում հայ կոմունիստների եւ ՀՀԴ ձախ թեւի մոտեցումները համընկնում էին: Բայց երբ Արեւելահայ համագումարում բարձրացվեց Անդրկովկասում սահմանները վերանայելու խնդիրը, ընդհանուր հայտարարի գալ չհաջողվեց, այդ նույն օրերին Թիֆլիսում ընթանում էր Կովկասյան բոլշևիկների երկրային համագումարը, որտեղ ազգային հարցի մասին գեկուցումով հանդես եկավ Ս. Շահումյանը: Նա կրկնեց, որ Անդրկովկասը պետք է բաժանվեր երեք մարզերի՝ «1) Արեւմտյան Անդրկովկաս՝ Բուրայիսի, Բարումի նահանգները եւ Թիֆլիսի նահանգի մի մասը. 2) Արեւելյան Անդրկովկաս՝ Երեւանի, Կարսի, Ելիզավետպոլի նահանգները եւ Թիֆլիսի նահանգի մի մասը. 3) Բարքի (նահանգը), Ելիզավետպոլի (նահանգի) մի մասը եւ Դաղստանի մարզը»¹⁷: Համագումարը հստակ որոշում չընդունեց, բայց հավանություն տվեց Անդրկովկասի վարչատարածքային վերակառուցմանը, որպեսզի երկրամասային սահմանները հնարավորին չափ համընկնեին ազգային կազմի համասեռ շրջաններին՝ այդ շրջանների բնակչության ցանկության համաձայն: Ընդ որում, սահմանվում էր, որ բոլոր ազգերն ունեն «ինքնորոշման իրավունք ընդհուպ մինչեւ նրանց պետական անջատումը»: Համագումարը պահանջեց Ժամանակավոր կառավարությունից՝ «անհապաղ, բացահայտորեն հռչակել այդ իրավունքը Ռուսաստանում բնակվող բոլոր ազգերի, այդ թվում՝ Կովկասի ժողովուրդների համար»:

Եթե ՀՀԴ եւ հայ բոլշևիկների, տվյալ դեպքում Ստ. Շահումյանի առաջադրած ծրագրերը համադրվեն, ամեն մի բանական էակ անպայման կնկատի, որ Ստ. Շահումյանի առաջարկածը շատ ավելի ազգային է, հոգուտ հայերի, քան մյուսներիցը: Արեւելյան Անդրկովկաս ասելով Շահումյանը հասկանում էր Հայաստան, որի մեջ նա մտցնում էր Ախալքալաքը, Բորչալուն, Լոռին, Ղազախը, Ղարաբաղը, ամբողջ Չանգեզուրը, Դարալագյազը, Նախիջևանը, Կարսը, Արդահանը: Իսկ դաշնակցության պլանով Հայաստանի մեջ մտցվելու էր «Ղազախ, Գանձակ, Ջիվանշիր եւ Շուշի գավառների լեռնային

¹⁷ Շահումյան Ստ., Նրկեր, հ. 3, էջ 270:

մասերը... եւ համարյա ամբողջ Չանգեզուրը», Հայաստանին էին անցնելու նաեւ «Ախալքալաքը, Լոռին եւ Ծալքայի հայկական մասը» եւ Կարսը:

Հայերի համար, իհարկե, ավելի շահեկան էր Շահումյանի ծրագիրը: Երկու ծրագրերում էլ «Հայաստան» բառը չկար: Այդ բառի փոխարեն ՀՀԴ-ն օգտագործել էր «հայկական մաս» բառերը:

ՀՀԴ ծրագիրը անկախ Հայաստանի հարց ընդհանրապես չէր դնում, իսկ Ս. Շահումյանը պարտադիր էր համարում դրա իրավունքը, այսինքն՝ ազգային ինքնորոշման հնարավորությունը: Բայց այդ չէր նշանակում, թե հնարավորությունը պետք է իրականություն դառնար անկախ հայ ազգի շահերը հաշվի առնելու: Շահումյանը գտնում էր, որ այդ շահերը պահանջում էին ոչ թե անջատում, այլ «Կովկասի դեմոկրատիայի ամենասերտ միավորում եւ մերձեցում»:

Ուրեմն ՀՀԴ անկախության մասին բառ իսկ չի ասում, բայց հորջորջվում է ազգային, իսկ բոլշևիկները, որ անկախության իրավունքը համարում էին պարտադիր, սակայն ոչ նպատակահարմար՝ ապագգային:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո ՕՅԱԿՈՄ-ը որոշ ժամանակ շարունակեց գոյություն ունենալ. այն ֆինանսավորվում էր խորհրդային կառավարության կողմից ու ենթարկվում էր նրան: Դրա շնորհիվ հայկական կորպուսը պահպանվեց, ինչից զուրկ կամ գրեթե զուրկ էին Վրաստանն ու Ադրբեջանը:

Սակայն այդ առավելությունը երկար կյանք չունեցավ, որովհետև Հայ ազգային խորհուրդը «Թուրքահայաստանը» դուրս հանեց Պետրոգրադի իրավասության տակից եւ ենթարկեց Անդրկովկասի կոմիսարիատին: Ս. Շահումյանի ջանքերը ստեղծելու հայկական միլիցիա հաջողություն չունեցան եւ դա նաեւ այն պատճառով, որ ամեն ինչ արվում էր թույլ չտալու, որ հայ կոմունիստները մոտենան Հայկական հարցին: Դեռ ավելին, նաեւ Հայ ազգային խորհրդի լուր հավանությամբ Անդրկովկասի կոմիսարիատը հրաման արձակեց ձերբակալելու Ստ. Շահումյանին:

Եթե Արեւմտյան Հայաստանի նոր կարգավիճակի հարցում հայերը մտադրություններ ունեին, ապա Արեւելյան Հայաստանը նրանք համարում էին Ռուսաստանի անբակտելի մաս եւ այդ տարածքը դժվարությամբ էին անվանում Հայաստան, այլ կոչում էին Արարատյան կամ Երեւանյան նահանգ: Ռուրբերը կեղծում է, երբ գրում է, թե «մինչեւ 1917թ. Դաշնակցութիւնն էր ամենաժայրահեղ ազգային պահանջների դնողը, բայց նրա պահանջների սահմանը չէր անցնում Անդրկովկասեան ֆեդերացիայից...»:

Որքան էլ տարօրինակ է, բայց փաստ, Արեւելյան Հայաստանում հայկական պետականության գաղափարի հեղինակը թուրքերն էին: Սուլթան Արդուլ Համիդ 2-րդը հայերին իր ժառայությունն էր առաջարկում Երեւանի նահանգ

գում ստեղծելու «Հայաստան»: Սուլթանի նման ծրագրի իմաստը դժվար չէր հասկանալ: Նա Արեւելյան Հայաստանի տարածքում անկախ Հայաստան կազմավորելու միջոցով աշխատում էր հայերի շրջանում խեղդել Արեւմտյան Հայաստանում հայկական պետություն ստեղծելու ցանկությունը:

Հետեւաբար, Ռուբենը խորապես սխալվում էր, երբ այդ գաղափարի հեղինակ համարում էր երիտթուրքերին, հանձինս Բ. Շաքիրի, Օ. Նաջիի, Հիլմիի եւ այն կապում էր ՀՀԴ 8-րդ համագումարի օրերի հետ: Նա գրում է, որ թուրք այդ գործիչներն առաջարկում էին «ստեղծել Հայաստան՝ կեղորոն ունենալով Էջմիածին, միացնելով դրան Տաճկահայաստանի որոշ մասեր»: Այս «որոշ մասերից» Ռուբենը եզրահանգում է. «Գործնականապես կառաջարկուեր միացնել Հայաստան»: Եվ դա նրան նույնպես հանգեցնում է մտահանգման՝ «Անկախ եւ միացնել Հայաստանի առաջարկը կու գար թուրքերից»¹¹⁸:

Հայաստանի կարգավիճակի հարցում ռուսական քաղաքականությունը ճակատային էր եւ դրա համար էլ հայ քաղաքական ուժերի մոտեցումների հետ բացահայտ հակադրության մեջ մտավ: Դա մի պահի, երբ Արեւմտյան Հայաստանի տարածքի մեծ մասը ռուսական բռնագրավման տակ էր: Ռուբենը ճիշտ է նկատում՝ եթե Գերագույն նահանգապետ Ավերիանովը Արեւմտյան Հայաստանի նահանգները համարում էր «ռուսական երկիր», ապա նրա տեղակալ Չավրիյանը՝ Հայաստան:

Պաշտոնական Պետրոգրադի քաղաքականության անմշակվածությունը նպաստեց Անդրկովկասի հարցում ամենատարբեր ծրագրերի ծննդին: Ռազմաճակատի հրամանատար Դոնսկոյը եւ ՕՅԱԿՈՄ-ի ղեկավար Խառլամովը բացառում էին Անդրկովկասի որեւէ այլ կարգավիճակ, բացի Ռուսաստանի կազմում գտնվելը նահանգի մակարդակով: Դրա դեմ առաջինը գլուխ բարձրացրեցին թաթարները, ովքեր Անդրկովկասը համարում էին Թուրքիայի վիլայեթներից մեկը: Վրաց մենչեիկները հավատարիմ էին Վրաստանի երկդիմի քաղաքականությանը: Նրանք երազում էին ունենալու անկախ, լայնածավալ Վրաստան, բայց նաեւ հնարավոր համարելով «Թուրքիոյ յաղթութիւնը», հենվում էին «թուրք, թաթար խմբակցութիւնների վրայ, միաժամանակ կապ պահելով, իբր «սոցիալիստ», Սոցիալիստական Ռուսաստանի հետ»¹¹⁹:

Ռուբենը այս կապակցությամբ առաջ է մղում մի միտք, որը որքան անհավանական, նույնքան էլ իրական էր թվում: Նա գրում է. «Ազգերի խմորման յեղափոխական այդ վայրկեանին, հայ պատգամավորը չուներ ոչ սոցիալիստական մի որեւէ յենարան, ոչ էլ ուներ յենարան հայ ժողովուրդի մեջ: Այդ մարդը Ջաֆարովի նման կաղետ էր, բայց չուներ նրա ճկունությունը եւ ընդու-

¹¹⁸ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յուշերից, հ. VII, էջ 126-127:

¹¹⁹ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 129:

նակութիւնը հասկանալու վայրկեանի պահանջը. կը շարունակեր միապետական երազներ տեսնել»: Փոխանակ հենվելու սեփական ազգային ուժերի վրա եւ նրանց «կամքը պարտադրելու իր ընկերակիցներին եւ Ռուսաստանին, ընդհակառակն, Չխենկելու եւ Ջաֆարովի կամքը կը բերեր Ազգային բիրոյին... հայերը չունեին ոչ Փետրոսպուրկում եւ ոչ էլ Կովկասում մի պաշտոնական անձ ձեռակերպելու եւ ընթացք տալու իրենց պահանջներին»: Ռուբենն այդ իրողությունով է բացատրում նաեւ այն, որ «Անդրկովկասեան երկրամասի ներկայ սահմանային դրութիւնները հետեւանք են յեղափոխութեան առաջին օրերու մեր ցուցադրած ապիկարութեան (անկարողութեան)»¹²⁰:

Ռուբենը դրական լուրջ քայլ էր համարում Ազգային խորհրդի ստեղծումը Ազգային բյուրոյի փոխարեն: Վերջինին նա բնութագրում է «անհիմն եւ անողնաշար մարմին»: Իսկ Անդրկովկասի սեյմի ստեղծումից հետո «ձեռական էին դառնում կեղորոնական իշխանութեան ներկայացուցիչները եւ պաշտոնեաւները»¹²¹:

Սակայն «շահերի հակամարտութեան՞ն թե՛ կարճատեւութեան շնորհիվ Անդրկովկասի երեք ժողովուրդներից ստեղծուած օրենսդիր եւ վարչական իշխանութիւնը դարձավ մի անդամալույծ մարմին... Հոն կը վիճեին, կը կարգադրեին, բայց իրական գործը եւ կարգադրողը լինում էր իւրաքանչիւր ազգի Ազգային խորհուրդը: Դրանից առաջացած էր երկիշխանութիւն, եւ իբրեւ հետեւանք դրան՝ պայքար Անդրկովկասեան սեյմի ու վարչութեան, մի կողմից, իսկ միւս կողմից, Ազգային խորհրդների միջեւ»¹²²:

Ռուբենը ստեղծված անիշխանությունը համարում է հետեւանք՝ երեք ժողովուրդների տարբեր կողմնորոշումների, նրանց էթնիկական սահմանների անորոշության, տնտեսական կյանքում եղած հակասությունների:

Այս պատճառներից առաջնային նշանակություն ձեռք բերեց երկրամասի ներսում սահմանների հարցի չլուծված լինելը: «Օգտվելով այն հանգամանքից, որ հայ-տաճկական եւ հայ-թաթարական վեճեր կային, - գրում է Ռուբենը, - եւ տաճիկ գործը կառաջանար մի կողմից, վրացիները բնավ չէին ճանաչեր ազգերի ինքնորոշման սկզբունքը, եւ դրժելով Ժողովարանի այն նեղ օրերի յայտարարութիւնը, որ պիտի սահմանագծուի Կովկասը՝ ըստ ազգութեան եւ նոյնիսկ Թիֆլիսը պետք է լինի չեզոք քաղաք, իրենց ձեռքը կը պահեին հայկական Ախալքալաքը, հայ-բուրք Ախալցխան, Լոռին, Բորչալուն, միաժամանակ, ջանալով Ջաքարալան գրավել Ադրբեջանից: Միւս կողմից, վրացիները եւ տաճիկ բանագնացները Ադրբեջանին կը թելադրեին իրենք համարել Գան-

¹²⁰ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 130:

¹²¹ Ն.տ., էջ 132:

¹²² Ն.տ., էջ 133:

ձակի հայկական լեռնային գավառները եւ նոյնիսկ կազմել «Արագոյան» հանրապետութիւն Երեւանեան նահանգի մեջ: Այդ թելադրութիւնները կը համապատասխանեին քարտրների շահերին, քանի որ դրանով Թուրքիոյ մուտքն էլ պիտի արագանար Անդրկովկաս, որից կը սպասեին իսկական իրենց փրկութիւնը»¹²³:

Այդ ժամանակ դեռեւս հստակ չէին ոչ միայն Հայաստանի սահմաններն, այլեւ նրա վարչական կենտրոնը՝ Երեւանը թե Ալեքսանդրապոլը:

Հայ ազգային խորհուրդը գնաց այն բանին, որ առանց «հայաբնակ շրջանների» սահմանները որոշելու, ձեռնամուխ եղավ այդ շրջանների բնակավայրերում Ազգային խորհուրդների ստեղծմանը, որոնք հանդիսացան հայկական պետականության առաջին բջիջները: Այս գոծում առանձնակի եռանդ դրսևորեց Արամը, որը Երեւանի գավառի լիազորն էր: Նա Երեւանի Ազգային խորհրդի իրավասիւթյունները տարածեց տեղերի Ազգային խորհուրդների վրա:

1918թ. սկզբներին կազմակերպվեց Շիրակի նահանգը, որի հետ կապված էին Ախալքալաքի ու Բորչալուի հայաբնակ շրջանները: Ստեղծվեցին Կարսի եւ Երեւանի նահանգները: Ձեւավորվել էր Ղարաբաղի եւ Գանձակի հայաբնակ շրջանների հայկական իշխանություն (որի մեջ մտնում էր նաեւ Գանձակ քաղաքի մի մասը): Կազմվեց նաեւ Լեռնային Ղազախը՝ Իջեւան-Գիլիջան: Այսպիսով, մինչեւ թուրքական ներխուժումը ՀՀ սահմաններն ընդհանուր գծերով որոշված էր, որի դեմ հանդես չէին գալիս ոչ Վրաստանը եւ ոչ էլ Ադրբեջանը:

Ստեղծված հավասարակշռությունն ավերեց թուրքական հարձակումը, երբ հայությունը հարկադրված եղավ կռվելու ոչ միայն թուրքական բանակի, այլեւ Ադրբեջանի ու Վրաստանի դեմ:

Հայաստանի անկախությունը հրապարակ իջավ որպես «Գերագույն իշխանություն հայաբնակ գավառների», դրա իմաստն էր՝ նախ, ակնկալվում էր Հայաստանի մեջ մտցնել նաեւ այն գավառները, որոնք հայաբնակ էին, բայց վրացիներն ու ադրբեջանցիներն իրենցն էին համարում, երկրորդ՝ «Հայաստան» բառի օգտագործումը նշանակում էր համաձայնվել Արեւմտյան Հայաստանի կորստի եւ Հայկական հարցը փակելու թուրքական պնդումների հետ:

Հասկանալի է, որ թուրքական առաջխաղացումը կանգնեցնելու համար հայերը պետք է, առանց ժամանակ կորցնելու, ձեւավորեին հայկական ռազմական ուժ, ինչը Ազգային խորհուրդը կատարեց շատ ապաշնորհ, եւ գտնեին օգնական ուժեր: Խոսքը գնում էր առաջին հերթին ռուսների մասին, այսինքն՝ թուրքական ճակատն ամրացնել ռուսական ուժերի օգնությամբ: Քայքայվող ռուսական բանակի խլայկներից առանձին գորամասեր էին ձեւավորվում, աշ-

¹²³ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 134:

խատանք էր տարվում ռուսական ռազմական մասնագետների, սպայության շրջանում, որպեսզի մնային ռազմաճակատում, չհեռանային: Սակայն այդ աշխատանքների արդյունքը մեծ չէր:

Հնկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասի ներսում հակամարտությունները շատ արագ զարգացան եւ առաջին պլան մղեցին կողմնորոշման հարցը: Ադրբեջանցիներն ու վրացիները գտնում էին, որ պետք էր անհապաղ անկախանալ Ռուսաստանից: Ժողովրդական հայտարարեց. «Նավաբեկվող Հայաստանին եւ բոլշեիկներին չենք կարող կապել վրաց ժողովրդավարութեան ճակատագիրը»¹²⁴:

Հայերը հայտնվեցին մեկուսացման մեջ, որից ելքի երեք ուղի կար՝ համերաշխվել վրացիների ու ադրբեջանցիների հետ եւ մտնել Թուրքիայի ու Գերմանիայի հովանու տակ, դառնալ Անտանտի դաշնակից եւ հույսը դնել նրա հաղթանակի վրա, կամ փարվել բոլշեիկյան Ռուսաստանին: Բայց որքան հստակ էր տարբերակների հասկացողությունը, նույնքան վարանոտ ու անորոշ էր դրանցից որեւէ մեկի ընտրությունը:

Ռուբենը գրում է, որ Ազգային խորհրդի սոցիալ-դեմոկրատ ներկայացուցիչները (Երզնկյան) ունեին վրացականամետ կարծիք՝ մտնել թուրք-գերմանական հովանու տակ: Այս տեսակետին կողմնակից էին նաեւ որոշ թվով դաշնակցականներ Խ. Կարճիկյանի գլխավորությամբ: Ռուբենի կարծիքով այս տեսակետի արտահայտություն էին թուրքերի հետ Երզնկայում Ա. Ջամալյանի, Ա. Ջոհրաբյանի եւ Օդիշելիձեի բանակցությունները, ինչպես նաեւ նրանց մեկնելը Գերմանիա՝ թուրքական առաջխաղացման դեմ վերջինիս օգնությունը հայցելու: «Այս մտայնութեան թոյլ կողմը» այն էր, որ Վրաստանը չէր ուզում իր բախտը կապել «դատապարտված Հայաստանի հետ», իսկ Թուրքիան օրակարգի մեջ էր պահում արեւելահայությանը նույնպես ոչնչացնելու երիտթուրքական ծրագիրը: Դա նկատի ունենալով Ազգային խորհրդի մի ուրիշ խումբ գտնում էր, որ «պետք է պայքարել մինչեւ պատերազմի վախճանը, հենվիլ լոկ հայկական ոյժերու վրայ, օգտագործել այն ռուս ոյժերը, որոնք մնացած էին ճակատներում, ջանալ բոլշեիկեան իշխանութեան գործակցութիւնը ձեռք բերել եւ միաժամանակ բոլշեիկացած գորամասերին պահել կովկասեան սահմաններում՝ ինչ գնով լինի»¹²⁵:

Այս տեսակտն ուղղակիորեն բախվեց մուսավաթականներին, ովքեր խնդիր էին դրել «ջարդել նահանջող ռուս զորքը, Անդրկովկասի սահմաններից հեռացնել ռուս տարրը, որ խոչընդոտ էր իրենց թուրանական ծրագրերին»:

¹²⁴ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 138:

¹²⁵ Ն. տ., էջ 139:

Տվյալ խնդրում մուսավաթականների ու վրաց մենչեիկների կարծիքները հիմնականում համընկնում էին: Վերջիններս ջանում էին «դատարկել Վրաստանը ռուս տարրից՝ հող պատրաստելու համար իրենց անկախութեան»¹²⁶:

Գաշնակցության ռուսամետ կողմնորոշման արտահայտությունն էր քանակցությունը Թիֆլիսում Ստ. Շահումյանի հետ, որը վարում էին Ջավրիեն ու Ռուբենը: Մշակվում են համատեղ գործունեության հետեյալ սկզբունքները՝ Արեմտյան Հայաստանը պետք է լինի անկախ, ինչի համար անհրաժեշտ էր բուրբերին ռազմական դիմադրություն ցույց տալ: Շահումյանը ջանալու էր, որ ռուսական զորքը մնար ռազմաճակատում: Անդրկովկասում ստեղծվելու էր հայկական կանտոն. Թիֆլիսն ու Բաքուն լինելու էին ազատ ու առանձին քաղաքներ: Նախատեսվում էր Կարսի շրջանում պահել ռուսական 39-րդ դիվիզիան, Ջուլֆա-Նախիջևանում՝ Բարաթովի Պարսկաստանից նահանջող զորքերից մի դիվիզիա, Գանձակի հայկական մասը ամրացնել, այդ նպատակով Ալեքսանդրապոլից Գանձակ տեղափոխել զենք ու զինամթերք: Շուշի տեղափոխել Թիֆլիսում կազմավորված դարաբաղյան գունդը, Թիֆլիսից զորքեր ուղարկել նաև Գանձակ: Բաքվի, Գանձակի եւ Շուշիի համատեղ ուժերով բացել Բաքու-Թիֆլիս ու Բաքու-Երեւան ճանապարհները: Բոլշեիկները ժամանակավորապես դադարեցնելու էին Անդրկովկասի խորհրդայնացման ծրագրերի իրականացման ուղղությամբ աշխատանքը: Չեմյակի խումբը, 3-րդ հայկական գունդը, Օսիկ Փիրումյանի հեծելազորը, Մովսիսյանի հրետանին մնալու էին Թիֆլիսում, իսկ երբ բացվեր Շուշի-Բաքու գիծը պետք է միանային բոլշեիկյան ուժերի հետ ու հեղաշրջում իրականացնեին¹²⁷:

Սակայն այս ծրագիրը կատարվեց միայն մասնակիորեն: Շահումյանին չհաջողվեց ռուսական զորքին տեղում պահել, Բաքուն չկարողացավ կապվել Շուշիի եւ Գանձակի հետ: Անհնար է չհամաձայնվել Արամ Մանուկյանի հետեյալ մտքի հետ. «Պետք է մենք ամեն կերպ միանանք Ռուստոմին (Բաքվի կոմունայի ուժերին)... Մեր մեջքը թե ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիվը»: Նա Պ. Մակինցյանին ուղարկում է Մոսկվա նույն առաքելությամբ: Ռուսաստանի կառավարության հետ կապեր հաստատելու համար Մոսկվա մեկնեց նաև Ջավրիյանը:

¹²⁶ Ն.տ., էջ 140:

¹²⁷ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 142-143:

ՓԼՈՒԽ I

ՀՐՈՎԱՐՏԱԿ ԹՈՒՐԲԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Խորհրդային Ռուսաստանի ազգությունների ժողովմատին կից գործող Հայկական գործերի կոմիսարիատը, որը գործում էր Վ.Ավանեսովի և Վ.Տերյանի ղեկավարությամբ, իր գոյության առաջին իսկ օրից ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող մի քանի խնդիրների լուծմանը: Դրանցից առաջինները հայ-ռուսական հարաբերությունների որոշակիացումն ու Հայկական հարցին ինչ-որ լուծում գտնելն էր: Այսինքն՝ կոմիսարիատը որոշեց տեղից շարժել Հայաստանի կարգավիճակի խնդիրը և դիմեց Ռուսաստանի խորհրդային կառավարությանը: Կոմիսարիատը հարցը լայն էր դնում և ձգտում էր ձևավորել խորհրդային կառավարության պաշտոնական մոտեցումների սկզբունքները:

Հարկ է նկատի ունենալ, որ այդ խնդրի արագ հրապարակ գալը երկուստեք շահագրգռվածության արդյունք էր, որի հեղինակը ոչ այնքան Հայկական գործերի կոմիսարիատն էր, որքան խորհրդային կառավարությունն ու անձամբ Լենինը:

Առաջին հայացքից «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ընդունումն ընկալվում է պատահական հանգամանքների, անձնական համակրանքի արդյունք, որովհետև չէր տեղավորվում խորհրդային կառավարության այդ ժամանակի արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքների համակարգում: Բոլշևիկյան Ռուսաստանը հենց սկզբից կողմնորոշվեց դեպի Արևելք և դեպի մահմեդական աշխարհը՝ Արևմուտքի հակախորհրդային նկրտումների հակակշիռ ստեղծելու նպատակով:

Իրականություն է, որ խորհրդային կառավարության առաջին հրովարտակը կրում էր «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին» անունը: 1917թ. դեկտեմբերի 3-ին հրապարակված այդ փաստաթղթում առաջին պլանին էր Թուրքիայի հետ նոր Ռուսաստանի հարաբերությունների հարցը, շարադրված էին Թուրքիայի հանդեպ Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության հիմնական սկզբունքները: Ռուսաստանի նոր կառավարությունը բացեիքաց հայտարարում էր, որ Թուրքիայի հանդեպ տարածքային ակնկալիքներ չունի, հրաժարվում է Թուրքիան մասնատելու և նեղուցներին տիրանալու ռուսական ավանդական քաղաքականությունից¹:

¹ ВПССР 1917-1944, сборник документов, I, м., 1944, с. 20

Կոչ էր արվում Թուրքիային երկու երկրների միջև հաստատել բարիդրացիական-բարեկամական հարաբերություններ: Եվ Կ. Պոլիսը չհապաղեց ընդառաջ գնալու իր դարավոր թշնամու այդ կոչին: Թուրքիայի ԱԳ նախարար Ա. Նասիմին ղեկտեմբերի 6-ին հայտարարեց. «Մենք ցանկանում ենք խաղաղություն Ռուսաստանի հետ հիմնված բարիդրացիական սկզբունքների վրա»²:

Հարաբերությունների այս նոր մեկնարկում, թվում էր, թե «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը տեղի ունենալ չէր կարող: Բայց ոչ:

Ռուսական նոր կառավարությունը իր գոյության առաջին իսկ օրից սկսեց հայկական խնդիրներով զբաղվել մեծ եռանդով: Ինչո՞ւ: Չէ՞ որ Լենինը քաջ գիտեր՝ Ռուսաստանը կարող էր հայտնվել այնպիսի վիճակում, երբ հարկադրված լիներ հեռանալու ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլ Անդրկովկասից և դրանք ամբողջությամբ անցնեին Թուրքիային, որի հետ շարունակում էր մնալ պատերազմի մեջ:

Ռուսական տիրապետության տակ Կովկասյան լեռներից հարավ և հարավ-արևմուտք ընկած էին լայնածավալ տարածքներ՝ Տրապիզոնից մինչև Սասուն, Վան, Ատրպատական և բնականաբար իշխանության եկած բոլշևիկյան կառավարության առաջ խնդիր էր ծառայած լուծել նաև դրանց պատկանելության հարցը և այդ անել հօգուտ նոր Ռուսաստանի՝ թույլ չտալ, որ երկրամասն անջատվեր, առավել ևս, այնտեղ ձևավորվեին հակառուսական կենտրոններ: 1917թ. դեկտեմբերի 16-ին Ս. Շահումյանը նշանակվեց Կովկասի գործերի արտակարգ կոմիսար՝ խնդիր ունենալով կենտրոնացված կիսառազմական իշխանության միջոցով և օգտագործելով ռուսական կովկասյան բանակի ու հիմնարկների հնարավորությունները ձեռքում պահել անդրկովկասյան տարածքները մինչև խնդրի հնարավոր լուծումը կամ լուծումները:

Վ. Լենինը քաջ գիտեր, որ մուսավաթականները թշնամի էին Ռուսաստանին և հեռանալու էին նրանից՝ անկախ վերջինումս տիրող վարչակարգի: Իսկ դա նշանակում էր՝ զրկվել նսվթի հանքահորերից, ինչը թույլ տալ չէր կարելի: Լենինն ասում էր, թե առանց Բաքվի Ռուսաստանը մեծ գյուղ էր: Վրաստանը նույնպես վաղուց երագում էր անկախանալ և դրա առաջն առնելու հնարավորությունները նվազ էին: Սնում էր Հայաստանը, որն անկախ, թե ոչ, մնալու էր Ռուսաստանի կողքին և եթե հնարավոր լիներ այնտեղ ունենալու ռուսամետ կառավարություն:

Եվ Պետրոգրադում որոշեցին՝ Բաքուն անպայման պահել, հռչակել խորհրդային և զենքի ուժով հաստատել Ռուսաստանի իրավունքը կովկասյան նավթի հանդեպ, իսկ Հայաստանում ունենալ Ռուսաստանին բարեկամ կա-

ռավարություն, մի բուֆեր պետական ժամանակավոր կառույց թուրքական և այլ ազգությունների դեմ կովկասյան սահմանի անվտանգությունն ապահովելու համար:

Ի դեպ այդ ծրագիրը գոյություն ուներ դեռ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը: Արևմտյան Հայաստանի անկախության մասին Լենինն առաջին անգամ հայտարարել է խորհուրդների առաջին համագումարում:

1917թ. հոկտեմբերի 9-ին նա «Правда» թերթում գրում է. «Մենք պարտավոր ենք անջատվելու ազատություն կիրառել ամբողջ Հայաստանի նկատմամբ»: Անգամ մահմեդական աշխատավորությանը հղած 1917թ. դեկտեմբերի 3-ի դիմումում նշված էր հայերին ինքնորոշման իրավունք տալու անհրաժեշտությունը³:

Նույն նպատակին էր կոչված ծառայելու 1917թ. ամռանը մի խումբ արևմտահայերի կողմից Հայաստանի Կոմկուսի ստեղծումը: ՀԿԿ զգալի ազդեցություն ուներ հայ փախստականների շրջանում և իր գլխավոր խնդիրը համարում էր Արևմտյան Հայաստանի ազատագրումը: Տարօրինակ է, որ երբ ստեղծվեց ՀՀ, այս կուսակցությունը ամենադաժան հալածանքների ենթարկվեց: Այն հալածվում էր նաև հայ բոլշևիկների կողմից: Բնութագրական են Բ. Բորյանի հետևյալ խոսքերը. «Հայաստանի Կոմկուսը գոյություն ունի միայն մեր մտավորականների գլուխներում. նման կուսակցություն Հայաստանում չկա և լինել չի կարող»: Ճիշտ չէ, այն կար, բայց գոհ դարձավ հայ բոլշևիկների նեղմիտ եսասիրությանը:

Լենինը քաջ գիտակցում էր, որ թուրք-գերմանական հարձակումը Անդրկովկասի վրա օրերի հարց էր՝ նրանք սպասում էին ռուսական բանակի հեռանալուն: Իսկ այդ հարձակումը նշանակում էր ոչ միայն զրկվել Բաքվի նավթից, ոչ միայն Անդրկովկասից, այլև Հյուսիսային Կովկասից, ինչը թուրքերի առաջ քայ էր անում Ռուսաստանը մասնատելու ուղին:

Խորհրդային Ռուսաստանին անհրաժեշտ էր Հարավային Կովկասում ստեղծել բուֆերային պետություն, որն ունենար 50-60 հազարանոց բանակ և շահագրգռվածություն՝ թույլ չտալու, որ թուրքերը մտնեին Անդրկովկաս: Ո՞վ կարող էր լուծել այդ խնդիրը: Աղբբեջանցիները: Ո՛չ: Նրանք չէին բաքցնում, որ երանությանը սպասում էին թուրքերի գալուն: Վրացիները: Նույնպես ոչ: Ճիշտ է՝ վրացիների մեջ թուրքերի գալը երանության զգացմունք չէր առաջացնում, բայց նրանք Վրաստանի համար ավելի վտանգավոր համարում էին Ռուսաստանին, քան Թուրքիային: Նման կողմնորոշման գործում փոքր չէր նաև այն բանի դերը, որ Վրաստանում դրության տերերը ազգությանը վրացի ռուսական մենշևիկները, ավելի ճիշտ այդ կուսակցության պարագլուխներն էին, հա-

² "Der Neys Orient", 1917, N 6-7:

³ Լենին, ԵԼԺ, հ. 32, էջ 358-359:

մատուսական մասշտաբի խոշոր գործիչներ, որոնց համար բոլշևիզմն ամենամեծ վտանգն էր: Նրանց էր պատկանում Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանից անջատելու, այն անկախ հայտարարելու նախաձեռնությունը:

Հայերը ոչ միայն ռուսական կողմնորոշում ունեին, այլև կենսականորեն շահագրգռված էին, որ թուրքերը Անդրկովկաս չմտնեին, որովհետև դրա հետևանքը լինելու էր նաև կովկասահայության բնաջնջումը: Ս.Լուկաշինի և Վ.Տերյանի հետ գրույցի ժամանակ Լենինն առաջ քաշեց Սիպայալ և Անկախ Հայաստանի գաղափարը, այսինքն՝ Արևելյան և Աևմտյան Հայաստանների միավորում մեկ անկախ հայկական պետության մեջ, ինչը նույնպես հասկանալի էր՝ որքան ուժեղ և մեծ ներուժ ունենար Հայաստանը, այնքան լավ Ռուսաստանի համար: Սակայն հայ գործիչները դեմ արտահայտվեցին այդ գաղափարին, պատճառաբանելով, թե արևելահայերը Ռուսաստանից անջատվել չէին ուզում: Նրանք նաև առաջարկեցին, որ առաջին շրջանում պահանջված քանակի ռուսական ուժեր մնալին Հայաստանում, մինչև որ վերջինս կարողանար ձևավորել իր պաշտպանական կառույցները: Լենինը համաձայնվեց: Նրա հանձնարարությամբ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի Վ.Տերյանի կազմած նախագծում այդ կետը կար:

Բանը հետևյալն էր. 1917թ. նոյեմբերի կեսերին Սմոլնիում Լենինն ընդունում է Ս.Լուկաշինի և Վ. Տերյանին ու հանձնարարում է կազմել գեկույցազիբ և Արևմտյան Հայաստանի վերաբերյալ կառավարության հրովարտակի նախագիծ: Ս.Լուկաշինը շուտով թողնում է մայրաքաղաքը և այդ հանձնարարությունը հիմնականում կատարում է Վ.Տերյանը: Հրովարտակի նախագծում, ասվում էր. «Ժողովմխորհուրդը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորների և գյուղացիների կառավարությունը ըստ ամենայնի կպաշտպանի հայերի լիակատար ազգային ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև հայկական անկախ պետության ստեղծումը Թուրքահայաստանի տարածքում: Ընդ որում՝ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը ցույց կտա ամեն տեսակի աջակցություն նախնական այնպիսի երաշխիքների ստեղծմանը, որոնք հնարավոր կդարձնեն հայ ժողովրդի իսկական և ազատ ինքնորոշումը:

Ժողովմխորհուրդը այդպիսի երաշխիքներ է համարում՝ ձեռնամուխ լինել Ռուսաստան փախած թուրքահայերին անհապաղ բնակեցմանն իրենց տեղերում, հաշտության բանակցությունների ժամանակ հետևողականորեն պահանջել, որպեսզի հայրենիք վերադառնալու հնարավորություն տրվի այն բոլոր հայերին, որոնք պատերազմի ժամանակ բռնի արտաքսվել են Հայաստանից, ինչպես և այն հայերին, որոնք հարկադրված են եղել գաղթել Եվրոպայի և Ասիայի երկրները»:

Հրովարտակի իրականացման պատասխանատու Ստեփան Շահումյանին հանձնարարվում էր՝ ապահովել Թուրքահայաստանի սահմանների որոշումը «հայ ժողովրդի ժողովրդավարորեն ընտրված ներկայացուցիչների կողմից, խառը և վիճելի (մուսուլմանական և ուրիշ) օկրուգների ժողովրդավար եղանակով ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ...»

Թուրքահայաստանի գլխավոր կոմիսարին նաև հանձնարարվում էր անհապաղ ձեռնամուխ լինել թուրքահայերի կողմից ընտրված ներկայացուցիչներից խորհուրդ կազմակերպելուն, որը հանդիսանալու էր Թուրքահայաստանի կառավարությունը, և գաղթականներին հայրենի բնակավայրերում բնակեցնելուն, ինչպես նաև Հայաստանի ժամանակավոր և մշտական կազմավորման կանոնակարգի նախագիծ մշակելուն: Պահանջվում էր այդ նախագիծը ամենակարճ ժամանակում ներկայացնել ժողովմխորհի հաստատմանը:

Այդ խնդիրների լուծման համար որոշվեց անհրաժեշտ «վարկեր դուրս գրել ռազմական հատկացումների հաշվին: Վարկերի չափը որոշում է թուրքահայերի խորհուրդը, Թուրքահայաստանի գլխավոր կոմիսարի հետ միասին՝ համաձայնեցնելով գլխավոր հրամանատարի հետ»⁴:

Այս նախագիծը նշանավորեց Հայկական հարցի նոր շրջանի սկիզբ, որը հետագայում կերպարանափոխվեց Սևրի դաշնագրի տեսքով: Այն առաջին անգամ հռչակում էր Արևմտյան Հայաստանի անկախությունը հայ ժողովրդի ինքնորոշման միջոցով և Խորհրդային Ռուսաստանի ռազմական ու տնտեսական օգնությամբ:

Լենինը վատ գիտեր Հայաստանը և խնդրի շուրջը մի քանի գրույցներ ունեցավ Վ.Տերյանի հետ: Նրան ամենից շատ հետաքրքրում էր երկու հարց՝ անկախություն Սիպայալ, թե՞ միայն Արևմտյան Հայաստանին և խորհրդային գործերի դերը այդ անկախության իրականացման գործում: «Այսօր գրույց ունեցա այդ առթիվ և ընկեր Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչու անհրաժեշտ է առայժմ գործերը չհանել Հայաստանից... Նա շատ լավ վերաբերվեց և ուզում էր ասել, թե երբ հայերը պահանջեն այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական կողմնորոշում ընդունել: Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան հարկավոր եղած զորամասեր»⁵:

Թվում է, թե այս հարցում Լենինն անկեղծ չէր: Վ.Տերյանի հետ գրույցից մի քանի ամիս առաջ նա ընդունել էր Գ.Հայկունուն ու հարցրել, թե «հայ ժողովուրդն ի գորու՞ է հետ մղել թուրքական հարձակումը, եթե ռուսական բանա-

⁴ Տերյան Վ., երկեր, հ 4, Ե. 1925, էջ 404-405:

⁵ «Նորք», 1926թ., N 6:

կը հեռանար Հայաստանի գրավված տարածքներից»։ Գ.Հայկունին բացատրական պատասխան էր տվել

Մի ուրիշ գրույցի մասին Վ.Տերյանը գրում է. «Լենինը հարցրեց. «Ի՞նչ են ուզում հայերը: Ուզում են ջոկվել՞ ռուսներից, թե՞ ուզում են միանալ»: Ասի՞ ռուսահայերը չեն ուզում ջոկվել, իսկ տաճկահայերը ուզում են անկախ լինել:

«Ինչպե՞ս, ուրեմն, երկու մաս լինել», - հարցրեց Լենինը: Ասացի՞ ըստ երևույթին առայժմ այդպես կլինի...»⁶:

Սեզ հայտնի չէ հրովարտակի շուրջ Տերյանի հետ Ստեփան Շահումյանի գրույցների բովանդակությունը, բայց միանգամայն որոշակի է, որ նշված խնդիրները մինչ այդ Ստեփան Շահումյանի կողմից առաջ էին քաշվել թե Անդրկովկասի բոլշևիկների առաջին համագումարում և թե նրա հրապարակային ելույթներում:

Հավանաբար զուգահեռ աշխատանք տարել էին նաև ՀՀԴ գործիչները: Ա.Խատիսյանը անդրադառնալով «Թուրքիայաստան մասին» հրովարտակին, գրում է, որ Հ.Չավրիյանը 1917թ, նոյեմբերի 1-ին «բերած էր Շահումյանի մոտ կարդալու համար այն հայտարարությունը, որ իր շրջահղացումով և Շահումյանի միջնորդությամբ պիտի հրատարակեր Լենինը Թուրքահայաստանի ինքնավարության մասին ազգերու ինքնորոշման սկզբունքի հիման վրայ: Չավրիյանն արդեն պատրաստած էր այդ հայտարարության նախագիծը, որուն Շահումյանն հավանութիւն տուավ իմ ներկայությամբ և հանձն առավ անմիջապես ուղարկել Փեթերսպուրկ Լենինին, հրատարակության համար: Եվ իրավ այդ հայտարարությունը տեղի ունեցավ պաշտոնապես և նույնիսկ այդ իմաստով կետ մը մտավ պոլշևիկներու հիմնական սահմանադրության մեջ»⁷:

Մի քանի համագամանքներ այս փաստի իրական լինելը դնում են կասկածի տակ: Նախ՝ եթե նման փաստաթուղթ Պետերբուրգ ուղարկվել էր, ապա այն պետք է հասած լիներ Հայկական գործերի կոմիսարիատ՝ անձամբ Վ. Տերյանին, բայց վերջինս այդ մասին ակնարկ իսկ չունի, երկրորդ՝ պարզապես միամտություն է գրել, թե Չավրիյանի կազմած տեքստը ուղարկվեց Պիտեր և «հայտարարությունը տեղի ունեցավ պաշտոնապես» (անգամ դրանից մի կետ մտավ ռուսական սահմանադրության մեջ): Երրորդ՝ Պ. Մակինցյանը ժխտում է Խատիսյանին, նրա ասածները համարում հեքիաթ⁸: Չորրորդ՝ նոյեմբերի սկզբին Ստեփան Շահումյանը Թիֆլիսում չէր, նա գտնվում էր Բաքվում: Հինգ-զեքորդ՝ հոկտեմբերի սկզբին Ստեփան Շահումյանն արդեն դրել էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը և մտցրել Անդրկովկասի

⁶ Տերյան Վ. նշվ. աշխ., էջ 409-410:

⁷ Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 24:

⁸ Մակինցյան Պ., Լենինը և հայկական հարցը, տե՛ս «Նորք», 1925 N 5, 6:

բոլշևիկների առաջին համագումարի բանաձևի մեջ և Չավրիյանից չէ, որ պետք է լսեր դրա մասին:

ՀՀԴ առանձին գործիչներ իրենց կուսակցության «ծառայությունները» հարստացնելու գործում իսկապես «տաղանդավոր են»: Օրինակ, ինչպե՞ս հասկանալ Ռուբենի հետևյալ խոսքերը. «Գլխավորապես Չավրիևի ջանքերով և Շահումյանի շնորհիվ դուրս եկավ Լենինի հռչակավոր դեկրետը Միացյալ Հայաստանի անկախության մասին»⁹: Նախ՝ դա Միացյալ Հայաստանի անկախության մասին հրովարտակ չէր, այլ միայն Արևմտյան Հայաստանի: Եվ ապա, եթե դրա գաղափարի հեղինակն իրենք՝ ՀՀԴ գործիչներն էին, ապա ինչո՞ւ են մինչև օրս լուտանքերով ողողում այդ փաստաթուղթը, միայն նրա համար, որ խորհրդային կառավարությունը ռուսական զորքերը չէ՞ր համաձայնվում թողնել այդ «Անկախ Հայաստանում»: Բայց չէ որ հրովարտակով Ստ. Շահումյանին տված հանձնարարականներից մեկն այն էր, որ նա պետք է ստեղծեր «խառը հանձնաժողով ռուսական զորքերի դուրս բերելու ժամկետն ու եղանակները որոշելու համար», ինչը պայմանավորվում էր հայկական ժողովրդական միլիցիայի կազմակերպմամբ: Եվ, վերջապես, որևէ մեկը գիտի՞, թե մինչ այդ դեկրետի հրապարակումը Կովկասյան ռազմաճակատում որքա՞ն ռուս զինվոր կար և դրանից հետո որքա՞ն մնաց: Իսկապե՞ս հրովարտակի հրապարակումը արագացրեց ռուսների հեռանալու գործընթացը, թե այդ գործում որևէ դեր չխաղաց: Որևէ մեկը կարո՞ղ է ասել, թե ինչո՞ւ ժամանակավոր կառավարությանը չէր հաջողվում ռուս զինվորին ռազմաճակատում պահել, իսկ խորհրդային կառավարությունն այդ հնարավորությունն ուներ և դա այն պայմաններում, երբ ժամանակավոր կառավարության օրոք ռազմաճակատային գիծն անցնում էր ռուսական սահմաններից շատ հեռու տարածքներով, իսկ բոլշևիկների կառավարման օրոք գերմանական բանակը սլանում էր դեպի ռուսական մայրաքաղաք, երբ ողջ Ռուսաստանին սպառնում էին քաղաքացիական կռիվների հրդեհները, և ռուս զինվորն ու սպան անհանգիստ էին իրենց ընտանիքների համար:

Հրովարտակը հրապարակելուց դեռ շատ առաջ Ս. Շահումյանը բացատրում էր ռուսական բանակի հեռանալու պատճառը. «Կովկասում կանգնած է ռուս զինվորների միլիոնանոց բանակ, զինվորների, որոնք երեք տարի արյուն էին թափել, պաշտպանելով Կովկասի սահմանները: Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ է նա հանգիստ մնալ ռազմաճակատում, երբ դուք դավաճանում եք ռուսական հեղափոխությանը... Ռուս զինվորը ոչինչ չպետք է ունենա Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի ինքնավարության դեմ: Բայց նա իրավունք ունի վճռականապես բողոքելու Ռուսաստանի բանվորագյուղացիական հեղափո-

⁹ Ռուբեն, նշվ. աշխ., հ.5, էջ262::

խորյան նկատմամբ բույլ տված ձեր դավաճանության դեմ: Ռուս զինվորը կարող է իրեն հարց տալ, թե ես ինչո՞ւ պիտի պաշտպանեմ ճակատը բուրքերից, եթե ես Կովկասում «եկվոր» տարր եմ, որի շահերը կովկասցիք չեն կամենում հաշվի առնել:

Ռազմաճակատում ամեն մի զինվոր կարող է մտածել, որ հեղափոխական պարտքը հրամայում է իրեն անմիջապես գնալ Հյուսիսային Կովկաս՝ կռվելու Կալեդինների և Կարաուրովների դեմ... համուն «հողի և ազատության»¹⁰:

«Նացիոնալիզմը Կովկասում և ռազմաճակատի մերկացումը» հոդվածում նա գրում է. «Հարցը խիստ բարդանում և սրվում է նրանով, որ այդ (անդրկովկասյան) նացիոնալիզմը բորբոքվում է հակառուսական, հակախորհրդային միտումով» և շատ պարզ է դառնում նաև Կովկասյան ռազմաճակատի ռուս զինվորների համար: Նրանց «առանձնապես շատ է վրդովեցնում այն հանգամանքը, որ ազգային զորամասերը ռուս զինվորների հաշվին են զինվում ու զգեստավորվում: Հաճախ գնդեր են զինաթափվում տեղն ու տեղը ազգային նոր զորամասերը զինելու համար»¹¹:

Ռուս զինվորն, առանց այդ էլ հոգնած էր, նրա ընտանիքը մատնված էր սովի ու մահվան: Խոսքը գնում է ռուս մարդու, որի համար հայրենիքի խորհրդանշանը նրա պետականությունն էր, սովյալ դեպքում խորհրդային կառավարությունը. այդ կառավարությանը և նորաստեղծ կարգերին անտարբեր, անգամ վերապահ մտեցող ռուսն իսկ բռնում էր նրա կողմը, պայքարում նրա համար: Իսկ անդրկովկասյան իշխանություններն ու քաղաքական առաջատար ուժերը գործում էին այդ Ռուսաստանի դեմ՝ վրաց մենչևիկներն ու մուսավաթականներն՝ ամենայն հետևողականությամբ, իսկ ՀՅԳ՝ որոշակի վերապահումներով ու հանգամանքների բերումով: Եվ ռուսը թողնում էր այդ «օտարացած», ոչ քիչ դեպքերում՝ նաև թշնամացած երկրամասը, գնում էր պաշտպանելու իր հայրենիքը, իր պետությունը: Շահումյանն իզուր չէր ասում, որ դա հանդիսացավ «կովկասյան նացիոնալիզմի ամենացավալի հետևանքը...»: Դեկտեմբերի 17-ին նա նորից հիշեցրեց օրեցօր հզորացող ազգայնամոլական ուժերին. «Դուք գրավել եք այնպիսի դիրք, որ ձեզ կխորտակի, դա անխուսափելիորեն կհանգեցնի ռազմաճակատը բացելուն: Բանակը ձեր նացիոնալիստական քաղաքականությունից դժգոհ՝ տարերայնորեն, անկազմակերպ ձևերով կհորդի ռազմաճակատից և կսրբի ու կհեղեղի ձեզ: Այժմ այդ բոլորը արդարացան: Արդեն մի քանի կորպուս շարժվել են տեղից ու գալիս են»¹²:

Ասածն այն է, մենչևիկներին ու մուսավաթականներին վարքագծի, այլ

¹⁰ Շահումյան Ստ., Երկեր. հ. III, էջ 27:

¹¹ Ն.տ., էջ 33:

¹² Շահումյան Ստ., Երկեր. հ. III, էջ 33-34:

ոչ թե հրովարտակի ու Մոսկվայի չկամության հետևանքով էր ռազմաճակատը մերկանում:

Ցավալիմ այն էր, որ եթե մուսավաթը երազում էր այդ, մենչևիկը բարուն հրճվում, ապա դաշնակը, քաջ գիտենալով, որ ռուս զինվորի հեռանալը որոշակի հանգամանքներում հանգեցնելու է հայության բնաջնջմանը, մնաց անմոռնչ, չիսկվեց այդ գործընկերներից և չկանգնեց ռուսական բանակի կողքին: Այդ չարեց, բայց արդեն 80-85 տարի ինչ մաղձ, ասես, որ չի թափում «բուլչիկյան ապերախտության» հասցեին՝ համոզված, որ եթե անգամ տեղի չունենար Հոկտեմբերյան հեղափոխությունը, Կովկասի դիրքորոշման պայմաններում, ռուսը հեռանալու էր: «Եկավ ռուսական հեղափոխությունը (փետրվար 1917թ.),- գրում է Մ. Վարանդյանը,- դեռ նախքան բուլչիզմի հաղթանակը սկսվեցավ արդեն ռազմաճակատի կազմալուծումը: Ռուս զորքը հոգնած, գազազած երեք տարուս անդուլ կռիվներն սկսել էր ամոթալի փախուստ մը ռազմաճակատներեն դեպի տուն»¹³:

Բուլչիկները, իրոք դեմ էին պատերազմին, ինչը բավականին արագացրեց այդ գործընթացը, բայց նրանք վճռականորեն դեմ էին բանակի կազմալուծմանը, մանավանդ հոկտեմբերից հետո: Լենինի հանրահայտ խոսքերն են. «Մենք պարտվողական էինք ցարի ժամանակ, իսկ Ծերեթելու և Չերնովի օրոք մենք պարտվողականներ չէինք... Մենք բանակը չէինք քանդում, այլ ասում էինք՝ պահպանեցեք ռազմաճակատը»¹⁴:

1917թ. ապրիլին Ստ. Շահումյանն ի լուր ամենքին հայտարարեց. «Քանի դեռ հաշտություն ձեռք չի բերված՝ մենք կոչ ենք անում ոչ թե թուլացնել ու քայքայել բանակը... այլ ամեն կերպ աջակցել նրան»¹⁵:

«Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ընդունման օրը, դեկտեմբերի 29-ին կովկասյան զորքերի երկրային խորհուրդը, որ բուլչիկյան էր, կոչով դիմեց զինվորներին՝ չթողնել դիրքերը, չմերկացնել ռազմաճակատը¹⁶: Հինգ օր անց զորքերին խորհրդային կառավարության Կովկասյան բանակի և Կովկասյան բանակի երկրային խորհրդի անունից դիմում է Շահումյանը. «Ընկեր զինվորներ, դուք չպետք է ինքնակամ թողնեք դիրքերը... դուք չպետք է մերկացնեք ռազմաճակատը և ռուսական հանրապետության ժայռամասերի բնակչությանը հանձնեք քրդերի կողոպտչական հրոսակախմբերի լիակատար կամայականությանը»¹⁷:

¹³ Վարանդյան Մ., Մուրատ, Բոստոն, 1931, էջ 258:

¹⁴ Լենին Վ., Ելժ, հ. 27, էջ 224,226:

¹⁵ Շահումյան Ստ., Երկեր. հ. III, էջ 413-414:

¹⁶ «Ковкаский рабочий», 29.12.1917:

¹⁷ Շահումյան Ստ., Երկեր. հ. III, էջ 57-58:

Սակայն ակնհայտ էր, որ դեպի տուն բանակի շարժման առաջն առնելը այլևս անհնար էր: Շահումյանը ջանքեր թափեց գոնե ինչ-որ թվով զորքեր ժամանակավորապես ռազմաճակատում պահել մինչև հաշտության կնքումը, բայց չհաջողվեց:

Եղորդը գրած նամակում Լենինի հետ իր գրույցի մասին Վ. Տերյանը պատմում է. «...Երբ իմ բոլոր դիտողություններս Հայաստանի մասին հայտնեցի և փորձագույնքանք անհատակ թողի ռուսահայերի խնդիրը, նա ինձ հարց տվեց.

- Մի՞թե տաճկահայերի և ռուսահայերի մեջ կա լեզվական, դավանաբանական կամ այլ որևէ տարբերություն:

Ես պատասխանեցի, որ՝ ոչ:

- Այդ դեպքում ինձ անհասկանալի է, թե ինչո՞ւ դուք խոսում եք միայն տաճկահայերի ինքնորոշման մասին...

Ես հայտնեցի, որ այդ խնդրի մասին ունեմ իմ առանձին կարծիքը, որ ռուսահայերը առաջմ պետք է մնան խորհուրդների հետ, մինչև որ տաճկահայերը հավաքվեն և այն ժամանակ միասին ինքնորոշվեն, իմ կարծիքով՝ ռուսական օրինատացիաով...»¹⁸:

Նախագծի քննարկումների ժամանակ առանձնապես անհանդուրժող էին Ստալինն ու Ռոստոմը: Դա Լենինին անհանգստացրեց. նա նորից Վ. Տերյանին գրույցի կանչեց: Ռուսական զորքերը Հայաստանում պահելու կետը թողնվում է նախագծում ու ներկայացվում է կառավարության քննարկմանը:

Հրովարտակի առաջին քննարկումը կառավարության նիստում տեղի ունեցավ դեկտեմբերի 21-ին: Չեկուցեց Ստալինը, բայց որոշման ընդունումը հետաձգվեց՝ «մի քանի խնդիրներ պարզելու համար»:

Այն երկրորդ անգամ քննարկման դրվեց դեկտեմբերի 23-ի նիստում, բայց կրկին նախագիծը չհաստատվեց «ընկ. ընկ. Ստալինին և Պռոշյանին առանձին խորհրդակցելու հնարավորություն տալու համար»¹⁹:

Հարցը երրորդ անգամ քննարկվեց դեկտեմբերի 29-ի նիստում, որի արձանագրության մեջ կան հետևյալ տողերը. «Լսեցին Հայաստանի մասին (Ստալինի, Պռոշյանի և Ջորյանի մշակած) դեկրետի նախագիծը: Որոշեցին հանձնարարել ընկ. Ստալինին մամուլում մանրամասը հաղորդում գետեղել ընկ. ընկ. Ստալինի և Պռոշյանի և Դաշնակցություն կուսակցության ներկայացուցչի միջև նախնական համաձայնության մասին՝ առաջարկվող դեկրետի նախագծի առթիվ: Դեկրետը հաստատել»²⁰:

¹⁸ Տերյան Վ., Եժ. Ե., 1963, էջ 481-482:

¹⁹ Биохроника Т. V., с 155:

²⁰ АСИР, ф. 19 он. 1, у 36:

Հրովարտակի տեսքով դեկտեմբերի 31-ին հրապարակվեց մամուլում: Դեռ Վ. Տերյանին ու Ս. Լուկաշինին ընդունելու օրերին Լենինի հանձնարարությամբ ստեղծվեց հանձնաժողով՝ Հայաստանի մասին կառավարության որոշման նախագիծ կազմելու համար: Հանձնաժողովը բազմակուսակցական էր՝ բոլշևիկներից՝ Ի. Ստալին, Վ. Ավանեսով, Վ. Տերյան, Ս. Լուկաշին, ձախ է-սեռներից՝ Պ. Պռոշյան, ՀՀ դաշնակցությունից՝ Ռոստոմ:

Նախագիծը, չնայած բուռն քննարկումներին, պատրաստվեց շատ արագ ու կոշվեց «Թորքահայաստանի մասին դեկրետ (հրովարտակ)»: Լենինին ներկայացվեց նաև Հայկական հարցի մասին զեկուցագիր: Սակայն բացարձակապես ակնհայտ է, որ հրովարտակի թե ընդունման, թե դրա բովանդակության ձևավորման գործում գլխավոր դերակատարը ոչ թե այդ հանձնաժողովն էր, այլ Ստ. Շահումյանը: Դա նշում է նաև Բ. Բորյանը. «Ստ. Շահումյանը վճռական դեր է խաղացել»²¹:

Հանձնաժողովի նիստերում առաջին անգամ պետական մակարդակով բխվեցին՝ իր կողքին թույլ Հայաստան ունենալու վրացական ազգայնամոլությունը՝ ի դեմս Ստալինի, և ինքնուրույն Հայաստան ունենալու հայկական տեսակետն՝ ի դեմս Ռոստոմի:

Վ. Տերյանի կազմած նախագծում կար հետևյալ կետը. «Հայաստանի սահմաններում (Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմաններում) մնալու են պահանջված թվով ռուսական զորքեր մինչև այն ժամանակ, երբ թվապես գերակշռություն ունեցող հայ ժողովուրդը կստանա գործնական հնարավորություն համաժողովրդական ազատ քվեարկության միջոցով լուծելու անկախ Հայաստանի ներքին կառուցվածքի հարցերը և քանի դեռ չի կազմակերպվել հայկական ժողովրդական միլիցիան երկրի ներքին կարգուկանոնը և արտաքին անվտանգությունն ապահովելու նպատակով»²²:

Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան Նուլանը 1918թ. հոկտեմբերի 15-ին Փարիզ է ուղարկում Ռուսաստանում ՀՀ ռազմական ներկայացուցիչ Թորգոմի նամակը Վ. Ավանեսովին: Թորգոմը գրում է, որ 1917-ի նոյեմբեր-դեկտեմբերին Հայ ազգային խորհուրդը հրաժարվեց Խորհրդային Ռուսաստանի օգնությունից, որն առաջարկեց Ս. Շահումյանը: Նա նաև նշում է, որ ռուս զինվորը չէր լքի ռազմաճակատը, եթե այդ խորհուրդը համաձայնվեր Շահումյանի առաջարկության հետ:

Հ. Սարգսյանը, նկատի ունենալով Լենինի հետ Վ. Տերյանի գրույցը, գրում է. «Տերյանը կողմնակից էր, որ Հայաստանը միավորվի և մտնի Խորհրդային Ռուսաստանի կազմի մեջ, սակայն մարտավարական նկատա-

²¹ Борьян Б., նշվ. աշխ., հ. II, էջ 260:

²² Ն.տ., էջ 261:

ռումներով ժամանակավորապես անջատում էր Թուրքահայաստանը Ռուսահայաստանից»²³:

Հավանաբար Վ.Տերյանն, իրոք Սիացյալ Հայաստանի կողմնակից էր, բայց այդ գաղափարն առաջ չէր քաշում, որովհետև «քյալազյոզները չեն համաձայնվի խորհրդային հիմքի վրա Հայաստանի երկու մասերի միավորմանը...»²⁴:

Հարցը շատ ավելի ռազմավարական էր, քան մարտավարական: Նախ, դա միայն Վ.Տերյանի կարծիքը չէր, այլ հայ բոլշևիկների և, առաջին հերթին, Ս.Շահումյանի: Նրանք գտնում էին, որ Արևելյան Հայաստանը պետք է մնար Խորհրդային Ռուսաստանի կազմում ցանկացած կարգավիճակով, որովհետև Արևմտյան Հայաստանի հարցը բարդ էր: Նրանք այնքան միամիտ չէին հավատալու, թե բավական էր խորհրդային դեռևս կազմավորման գործընթացում գտնվող կառավարության հրովարտակը, և այդ խնդիրը կարելի լիներ լուծված համարել: Ընդհանրապես Շահումյանը, հայ շատ կոմունիստներ, և ոչ միայն կոմունիստները, բոլոր պարագաներում Արևելյան Հայաստանի անկախությունը հայերի համար վտանգավոր էին համարում, նկատի ունենալով այն հավակնությունները, որ ունեին բառացիորեն նրա բոլոր հարևանները:

Ս. Շահումյանը, Վ. Տերյանը և ուրիշներ գտնում էին, որ ուշադրությունը պետք է բեռել Արևմտյան Հայաստանի խնդրի լուծման վրա: Մեծ հաշվով մեծ հարցադրումը ոչ թե միակուսակցական, այլ համազգային էր և դա ամենևին էլ «քյալազյոզություն» չէր, այլ զգույշ ու խոհեմ քաղաքականություն:

Ռոստոմը Սահմանադիր ժողովին մասնակցելու նպատակով Պետրոգրադում գտնված ժամանակ ժամանակավոր կառավարության հետ բանակցություններ էր վարել նույն ոգով: Իսկ 1917թ. հուլիսին Ստոկհոլմում՝ միջազգային սոցիալիստական համաժողովի կազմկոմիտե (համաժողովը տեղի չունեցավ) մտցրեց առաջարկություն, որով Անդրկովկասում ստեղծվելու էին երեք ինքնավար պետություններ Ռուսաստանի դաշնության կազմում ու նաև առանձին Անկախ Հայաստան վեց վիլայեթներով ու Կիլիկիայով:

Սա հեռատես մտեցում էր, որովհետև Ռուսաստանի խորհրդայնացումից հետո ակնկալել, թե Արևմուտքը կհանդուրժի, որ Թուրքիայից թեկուզ մեկ թիզ տարածք տրվեր նրան, լուրջ չէր: Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին կցելու առաջարկը նշանակում էր խաչ քաշել Հայկական հարցի վրա, այն դուրս մղել միջազգային դիվանագիտական գործառույթից:

Եվ արժանին պետք է հատուցել Ռոստոմին, որ չնայած Ռուսաստանում իշխանության էին եկել կոմունիստները, չխուսափեց նրանց կառավարության

²³ Սարգսյան Հ, Բրեստից մինչև Մոսկոս, Ե., 1989, էջ 50-51:

²⁴ Ն.տ., էջ 51:

հետ հարաբերությունների մեջ մտնել, որպեսզի Արևմտյան Հայաստանի անկախության հարցը մտցվի Բրեստ- Լիտովսկի բանակցություններում խորհրդային կառավարության առաջարկությունների մեջ:

Սակայն, եթե Տերյանը պարտադիր էր համարում սկզբնական շրջանում ռուսական զորքերի առկայությունը Հայաստանում, ապա հրովարտակի հաստատված տեքստը պարտադիր է համարում դրանց (ինչպես նաև թուրքական զորքերի) դուրս բերելը Հայաստանի տարածքից, որով «կբացառվեր հայերի վրա դրսից որևէ ճնշում գործադրելու հնարավորությունը»: Դրա փոխարեն առաջարկվում էր կազմակերպել հայկական ժողովրդական միլիցիա, որը պետք է «ապահովեր քաղաքացիների անձի և գույքի անվտանգությունը և ներքին կարգ ու կանոն երկրում»²⁵:

Այլ խոսքով ասած, հրովարտակը Հայաստանն արտաքին վտանգից ապահովելու արդյունավետ երաշխիք չէր նախատեսում:

Հայ քաղաքական ուժերի միջև ընթացող պայքարը, և մասնավորապես, այդ պայքարը հետին թվով աղճատելը ստեղծել են ծիծաղելի և միաժամանակ ամոթալի պատկեր: Տպավորությունն այնպիսին է, թե հայ կուսակցություններն ու քաղաքական գործիչները հանուն իրենց եսակենտրոն շահերի աջ ու ձախ դավաճանել են սեփական ժողովրդի շահերին: Այո, քաղաքական ուժերի միջև գնացել է պայքար, ոչ քիչ դեպքերում նաև տրամաբանությունից զուրկ պայքար: Բայց նաև ակնհայտ է, որ հայ ժողովրդի կենսական շահերի խնդիրներում հաճախ էր նկատվում քաղաքական բոլոր ուժերի միասնական կամ գրեթե միասնական դիրքորոշումը: ՀՀԴ ձգտում էր, որ ռուսական բանակը չհեռանար Անդրկովկասից: Նույն դիրքորոշումն ունեին նաև կոմունիստները, քաջ գիտակցելով, որ ռուսների հեռանալն աղետալի հետևանքներ էր ունենալու հայության համար:

Բայց եթե ՀՀԴ ռուսական բանակի հեռանալու պատճառը համարում էր բոլշևիկյան քարոզչությունը, ապա Ս.Շահումյանը՝ «կովկասյան նացիոնալիզմը»²⁶:

ՀՀԴ պատմաբանները Ս. Շահումյանի ձգտումը թույլ չտալու, որ ռուսական բանակը հեռանար Կովկասից, համարում են արդյունք ոչ թե հայության անվտանգությանը միտված ձգտման, այլ մտահոգություն, որ «ռազմաճակատը թափուր չթողնվեր»: Իսկ Շահումյանը ամենայն որոշակիությամբ ասում էր, որ ռուսական բանակի հեռանալը ստեղծում էր «ծանր դրություն Թուրքահայաստանում», որ «անիծյալ պատերազմի ժամանակ» հարյուր հազարավոր զոհեր կրած հայերը հայտնվում են մոր աղետի առաջ: Նա երկյուղում էր, որ

²⁵ “Декреты октябрьское революцией”, М., 1933, с. 393-394:

²⁶ Շահումյան Ս.տ., նշվ. աշխ., էջ 34:

այդ տարածքում «անմեղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու»²⁷ :

ՀՀԳ. և Շահումյանի մտահոգությունների միջև սկզբունքային տարբերությունն այն էր, որ եթե դաշնակները սգում էին միայն հայերի կորուստները, ապա Շահումյանն անտարբեր չէր նաև պատերազմի ընթացքում 2.5 միլիոն բուրբերի և քրդերի զոհվելու հանդեպ:

Նույնն էր վիճակը Արևմտյան Հայաստանի անկախության հարցում: ՀՀԳ. գործիչները պնդում էին, որ Ռոստոմի և Ջավրիկի համառ ջանքերի շնորհիվ Ս.Շահումյանը համաձայնվեց Արևմտյան Հայաստանի հարցը բարձրացնել Լենինի առաջ: Որ Ռոստոմը շահագրգիռ մասնակցություն է ունեցել հրովարտակի մշակմանը, քննարկմանն ու ընդունմանը, կասկածից վեր է: Բայց կասկածից վեր է նաև այն, որ Շահումյանն այդ խնդրով սկսել էր զբաղվել ավելի վաղ, քան կհանդիպեր Ռոստոմի հետ: Համենայն դեպս, փաստ է, որ հրովարտակի նախագծի առաջին տարբերակի սկզբունքները հեղինակել էր նա: Նաև կասկածից վեր է, որ Ս. Շահումյանը, Վ. Տերյանը, Ս. Լուկաշինը և Ռոստոմը այս հարցում գործում էին սինխրոն: Մութ է մնում միայն մի խնդիր՝ Ռոստոմն արտահայտում էր ամբողջ դաշնակցությամբ, թե՞ միայն նրա ձախ բեկ կարծիքը: Սա պատահական դիտողություն չէ, որովհետև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Ռոստոմի կապերը Հայ ազգային խորհրդի հետ գրեթե խզված էր: Այդ բոլորով հանդերձ, հարկ է արձանագրել, որ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի նախագիծը կոլեկտիվ մտքի արդյունք էր՝ Ս. Շահումյան, Ռոստոմ, Հ. Ջավրիկյան, Վ. Տերյան, Ս. Լուկաշին, Պ. Պոռոչյան, գուցե նաև Վ. Ավանեսով և Պ. Մակինցյան:

Նրանց բոլորի դիրքորոշումը հստակ էր և այն արտահայտված էր նախագծին կից ներկայացված զեկուցագրում, որում հույս էր հայտնվում, որ Ժողովն խորհրդի անդամները կօգնեն հայ կոմունիստներին, եթե «հնարավոր դատեին հրատարակել այժմ իսկ մի դեկրետ», որով արտահայտվեր կառավարության վճռականությունը՝ «ստեղծելու այն երաշխիքները, որոնք Տաճկահայաստանի հայ ազգաբնակչությանը տալին ինքնորոշվելու իսկական հնարավորություն»²⁸ :

Նաև անժխտելի է հայ գործիչների՝ Վ. Տերյանի, Ռոստոմի, Պ. Պոռոչյանի միասնական դիրքորոշումը հրովարտակի նախագծի քննարկման ժամանակ:

Բացարձակապես լուրջ չէ այս խնդրում խորհրդային կառավարությանը երկերեսայնության մեջ մեղադրելը՝ հիմնվելով մահմեդականներին²⁹ հասցեագրված վերը նշված կոչի վրա²⁹ :

²⁷ Շահումյան Ստ., նշվ. աշխ., էջ 38:

²⁸ «Նորք», 1925թ., N 5-6:

²⁹ Տես Ռ. Հովհաննիսյանի "Republic of Armenia", v 1, II, Berkeley, p. 438:

Կար ժամանակավոր կառավարության փորձը՝ Արևմտյան Հայաստանին ինքնավարություն շնորհելու միջոցով հայերին հնարավորություն ընձայել կազմակերպվելու և սեփական ուժերով պաշտպանելու իրենց երկիրը, ինչը բարենպաստ կացություն կստեղծեր, որպեսզի ռուսական զորքերը աստիճանաբար հետ քաշվեին Անդրկովկասից: Պատահական չէ, որ ռուսական բանակը հեռանում էր տեղում թողնելով վիթխարի քանակությամբ զենք, զինամթերք ու պարեն: Պատահական չէ, որ ռուսական բանակի հրամանատարությունը, սպաների զգալի մասը, չհեռացավ: Հրովարտակով Լենինը հօգուտ Ռուսաստանի շահերի նոր մարտական ուժերի էր գործողության մղում: Ռմանը այդ համարում են անլուրջ, ոչ իրատեսակ մոտեցում, որովհետև հայերը սեփական ուժերով անգոր էին դիմադրել թուրքական հարձակմանը: Բացարձակ սխալ է: Դա գուցե պատմական միակ պահն էր, որ հայությունն ի վիճակի էր կռվել ու նաև հաղթել թուրքերին, որովհետև Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակը փաստորեն դադարել էր գոյություն ունենալուց:

Սկսած 1917թ. կեսերից Արևմտյան Հայաստանի տարածքը հիմնականում պաշտպանում էին հայկական մարտական ջոկատները: Եթե հայ ղեկավարները ժամանակին ու ճիշտ կողմնորոշվեին, հրովարտակի հրապարակումից անմիջապես հետո դուրս գալին Անդրկովկասի հանրապետության կազմից և, ինչպես Ս. Շահումյանն էր առաջարկում՝ քանի դեռ աշխարհամարտը չէր ավարտվել, Հայաստանը հռչակեին Խորհրդային Ռուսաստանի անբաժան մաս, որովհետև որքան էլ Ռուսաստանը թուլացած լիներ, թուրքերը նրանից երկնչում էին, հնարավոր էր, որ հայ ժողովրդի ճակատագիրը դասավորվեր շատ ավելի բարեհաջող: Բացի դա՝ Անդրկովկասի հանրապետությունը ռազմական առումով անորոշ էր. նրա ռազմական ուժը հիմնականում հայկական զորքերն էին և անգամ այդ պայմաններում թե սեյնը և թե կոմիսարիատը գործում էին հայերի դեմ: Եթե չլիներ հայերի ռազմական ուժը, նրանք պահը չէին կորցնի Հայաստանը բաժանելու Վրաստանի, Ադրբեջանի ու Թուրքիայի միջև: Ուրեմն ինչո՞ւ մնալ քննամի կառույցի կազմում, ինչո՞ւ խաղալիք դառնալ նրա ձեռքում ու ձախողել ինքնապաշտպանության գործը: Միայն այն իրողությունը, որ ռազմական ուժը հայերի ձեռքին էր, իսկ իշխանությունը՝ վրացիների և այդ իշխանությունը գործում էր հայերի դեմ, ասում էր այն մասին, որ հայ քաղաքական գործիչները պատրաստ չէին ինքնուրույն քաղաքական գործունեության, չկարողացան և փորձ էլ չարեցին սրբափ վերլուծելու, քննելու քաղաքական-ռազմական իրավիճակը, օգտագործվեցին վրաց մենչիկևների կողմից և ոչ թե պայքարեցին անկախության համար, այլ նրանց այն թելադրվեց:

Արդյո՞ք հրովարտակը քաղաքական այլևայլ մութ նպատակներ հետապնդող շահարկում էր: Ոչ, հազար անգամ ոչ: Հրովարտակի հրապարկ-

ման ժամանակ աշխարհատարածքի միակ իրական ուժը շարունակում էր մնալ Ռուսաստանը, Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում կանոնավոր բանակ ուներ միայն Ռուսաստանը և հայերի ճիշտ կողմնորոշման դեպքում բացառված չէր, որ Ռուսաստանը ձգտեր ապահովելու հրովարտակի պահանջների կատարումը: Հարկ է նաև նկատի ունենալ, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո շուրջ երեք ամիս Ռուսաստանում համեմատաբար դադար էր, քաղաքացիական պատերազմը դեռևս չէր ծավալվել:

Որոշ պատմաբաններ հայտարարում են, թե հրովարտակը մնաց մեռած տառ, որովհետև ինքնավարության «փրավունք ձեռք բերելու համար որևէ միջոց չձեռնարկվեց, այլ հակառակը՝ թուրքական ռազմաճակատից հետ կանչվեց ռուսական զորքը, առանց որի օգնության անկարելի էր պահել Արևմտահայաստանի հողերը»³⁰: Կրկնում են, 1917 թվին և մինչև 1918թ. սկզբները «Արևմտահայկական հողերը» միայն հայերի ուժերով պահել հնարավոր էր, եթե Ազգային խորհուրդը ոչ թե հույսը ուրիշների վրա դներ, այլ գործեր, կազմակերպեր, ղեկավարեր: Եվ հարկ չկա Բ. Բորյանին վկայակոչելով խաբել միամիտներին: Բ. Բորյանը գրում է, որ Լենինի համար կարևորը Հայաստանն ու հայերը չէին, այլ բոլշևիզմի հեղափոխական նպատակները: «Հայկական հարցը միջոց էր և ոչ թե նպատակ»³¹: Իսկ ո՞վ է ասել, որ Հայկական հարցը ռուսական հեղափոխության նպատակն էր: Մի՞թե հրովարտակով Լենինը հայերին չէր ասում, որ առանց Հայկական հարցի էլ այդ հեղափոխությունը մեծ հիմնախնդիրներ ու ղվարություններ ունի, եկեք Ձեր հայրենիքի պաշտպանության գործը վերցրեք ձեռք վրա:

Հայ շատ գործիչների բնավորության ամենատեղ գիծը այն է, որ տերն են միայն հաջողությունների, իսկ անհաջողությունների մեղավորներն ուրիշներն են: Գժբախտաբար այս հոգեբանությունը փոխանցվել է նաև ժողովրդական զանգվածներին: Մենք մեր անհաջողությունների պատճառներն անպայման փնտրում ենք դրսում, ուրիշների, այլ ոչ թե և, առաջին հերթին, մեր մեջ:

Վահան Մինախոբյանի պնդումը, թե Թուրքահայաստանի վերջնական վերացման պատճառը «ռազմաճակատները պարպելու» մասին բոլշևիկների որոշումն էր³², սխալ է նաև այն առումով, որ հայերը մի ամբողջ տարի ժամանակ ունեին սեփական զինված ուժեր ստեղծելու, դրանց մարտունակ դարձնելու, բայց միանգամայն անբավարար աշխատեցին այդ ուղղությամբ:

Հայաստանը հայերի հայրենիքն է եւ նրա պաշտպանությամբ միակ իսկական շահախնդիրը հայը պետք է լինի: Հոկտեմբերյան հեղափոխությունը ռու-

³⁰ Փիրումյան Ռ., նշվ. աշխ., էջ 52:

³¹ Борян Б., նշվ. աշխ. հ. 2, էջ 363.

³² Մինախոբյան Վ., Հայկական հարցը և իր տարրերը: Տե՛ս «Հայրենիք», 1934թ., N12:

սական հեղափոխություն էր եւ կոչված էր լուծելու ռուս ժողովրդի հիմնահարցերը: Բոլշևիկներն այնքան միամիտ չէին հավատալու, թե իրենք ի գորու էին ռուսական հեղափոխությունը համաշխարհային դարձնել: Համաշխարհային հեղափոխության մասին կոչերը մի խնդիր ունեին՝ ռուսական հեղափոխությունն ու Ռուսաստանը դուրս բերել մեկուսացումից եւ գտնել դաշնակիցներ:

Հարկ է նշել, որ ՀՀԴ-ի եւ հայ կոմունիստների շփումները ունեին տեսական բնույթ եւ արտահայտվում էին տարբեր ձեւերով: Առանձին դեպքերում դրանք կրում էին նաեւ պաշտոնական բանակցությունների տեսք: Կոմունիստների կողմից այդ շփումներին մասնակցում էին Շահումյանը, Դանուշը, Կասյանը, Նազարեթյանը, ՀՀԴ-ի կողմից՝ Ռուբենը, Շահխաթունյանը, Ջավրիյանը: Որոշակի հարցերում դրսևորվեց կարծիքների նաեւ ընդհանրություններ: Օրինակ, երկու կողմերն էլ գտնում էին, որ Արևմտյան Հայաստանը պետք է լինի անկախ, որ ռուսական բանակի մնալը գրավված տարածքներում անհրաժեշտություն է, արդեն նշվել է, որ համաձայնության եկան Թիֆլիսում կազմավորված դարաբաղդիների գունդը Շուշի ուղարկվելու վերաբերյալ՝ տեղի հայկական ուժերը զորեղացնելու համար եւ համաձայնություն ձեռք բերվեց Անդրկովկասի հանրապետության կազմում ստեղծել հայկական ինքնավարություն, չէր բացառվում նաեւ այդ հանրապետությունից դուրս ինքնավարության ստեղծումը, որը պետք է դաշնակցային հարաբերությունների մեջ լիներ Ռուսաստանի կենտրոնական կառավարության հետ: ՀՀԴ պատրաստակամություն հայտնեց օգնել Անդրկովկասում բոլշևիկյան զինված ուժեր ձևավորելու գործին եւ այլն:

Դաշնակցություն-բոլշևիկ համագործակցության արտահայտություն էր նաեւ Բաքվի կոմունան, մասնավորապես Շահումյան-Ռոստոմ սերտ համագործակցությունը:

Ընդհանրապես, Հոկտեմբերյան հեղափոխության առաջին ամիսներին Անդրկովկասի սոցիալիստական բնույթ ունեցող կուսակցությունների վերաբերմունքն այդ հեղափոխությանը եւ ռուսական նոր իշխանությունների հետ հարաբերություններ հաստատելու նկատմամբ անվերապահ մերժողական չէր: Նույնիսկ առաջ էին քաշվում հիմնահարցեր, որոնց լուծման գործում Լենինի հետ համագործակցելը համարվում էր շահեկան: Օրինակ, Ն. Ռամիշվիլին 1918թ. փետրվարի 15-ին հանդես գալով սեյմում Բրեստ-Լիտովսկում ընթացող բանակցությունների առնչությամբ հայտարարեց. «Ռուսաստանն անելու է ամենը, ինչն անհրաժեշտ է ապահովելու Անատոլիայի արեւելյան սահմանների անվտանգությունը եւ վերացնելու թուրքական կապիտուլյացիան»: Նա ասում էր, որ Ռուսաստանը որեւէ պարտավորություն չունի Թուրքիայի հանդեպ եւ բանակի գորացումը նրա կովկասյան քաղաքականության հետեւանք չէ:

Արևմտյան Հայաստանը փրկել չհաջողվեց: Վ. Սինախորյանն անդրադառնալով «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի կապակցությամբ Ստալինի հանրահայտ հողվածի այն մտքին, թե գերմանական բլոկը ձգտում է նվաճված տարածքները բռնությամբ իր տիրապետության տակ պահել, շեշտում է, թե բիրտ ուժը չէր, որ դարձավ Թուրքահայաստանի կորստի պատճառը, այլ ռազմաճակատից զորքերը հետ քաշելու խորհրդային կառավարության որոշումը: Եվ նա իրավացի էր: Սակայն Սինախորյանը բացարձակապես սխալ է, երբ գրում է, թե այդ հրովարտակը փոխհատուցում էր Ռուսաստանի կողմից Բրեստում Հայկական հարցի հանդեպ ցուցաբերած անտարբերության, ինչը բացասական տպավորություն էր թողել: Այդ միտքը հանդիպում ենք նաև Հ. Բարբիի մոտ. «Սա Լենինի եւ ազգությունների կոմիսարի պարզամտությունն էր, տգիտությունը թե ցինիզմը»³³: Ավելի պարզունակ ու բանբասանքի նման է այն, թե Լենինի համար գլխավորը «Թուրքահայաստանում բոլշևիկյան քոլեկտիվի ստեղծելն» էր եւ «ՀՀԴ մենաշնորհը» խախտելը. «դա ավելի կարեւոր էր, քան այն հարցը, թե վերջին հաշվով, որոք, թե հայը կլինե՞ր տերն այդ հողերի»³⁴:

Ի դեպ, ազգամիջյան հարաբերություններում կուսակցական պատկանելությունը հաճախ էր երկրորդ պլան մղվում: Դժբախտաբար դա ավելի էր սրում ոչ միայն հայ-ադրբեջանական, այլև հայ-վրացական հարաբերությունները:

Հատկանշական մի իրողություն էս. Ռուսաստանը հրապարակ էր հանում «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը, ԱՄՆ-ը՝ Վ. Վիլսոնի «Համընդհանուր հաշտության մասին» ճառը, որում առանձնահատուկ տեղ էր տրվում Հայկական հարցին, իսկ Լլոյդ Ջորջը Համայնքների պալատում հայտարարում էր. «Պետք է ճանաչել Արաբիայի, Հայաստանի եւ Սիջազետի ազգային անկախությունը»:

«Հորիզոնը» «Թուրքահայաստանի մասին» դեկրետի կապակցությամբ 1918թ. հունվարի 28-ին գրում է. «Կարգալով ազգային գործերի կոմիսարի (Ստալինի) հողվածը մարդ չի կարող չապշել այն միամտության վրա, որ ցույց է տալիս բոլշևիկյան կառավարությունը... ինչո՞վ էք ուզում դուք՝ բոլշևիկները, ապահովել տաճկահայ ժողովրդի ազատությունը: Չէ՞ որ տաճիկ գիշատիչներից հայերին պաշտպանելու համար հարկավոր է, որ զորքը մինչև վերջնական հաշտությունը մնա իր տեղում, իսկ դուք արագ թափով աշխատում եք պարպել դիրքերը...»:

Նման մոտեցում ուներ դեկրետին նաև Ն. Արոնցը: Նա գրում է, որ

³³ Hovhannisian R., Armenia on the Road to Independence. 1918, Los Angeles, 1967, p. 100:

³⁴ Փիրումնան Ռ., նշվ. աշխ. էջ 55:

հրովարտակը «հայերի մեջ միայն թեթևացման հառաչանք առաջ» բերեց, որովհետև այն «բարոյական կարգի ակտ է, գրկված ամեն մի քաղաքական նշանակությունից... հայերն ավելի լավ գիտեին, քան դեկրետների հեղինակները», որ ստեղծված կացությունում «քաղաքական հարցերը լուծվում են ոչ թե բարի, բայց անգոր կամեցողությամբ, այլ միայն մարտադաշտում երկարյա ձեռքի ճնշմամբ: Հրատարակել դեկրետ եւ միեւնույն ժամանակ հետ կանչել զորքերը ռազմաճակատից, նշանակում է մի ձեռքով տալ, մյուսով խլել ետ...»

Եվ ահա միայնակ, առանց որեւէ տեղից օգնության, իր մեծ հովանավորից ստացած թղթի պատահիկը ձեռներին հայերը ծանր մտածմունքի մեջ կանգնած են թշնամու իրենց գլխին անեղաբար բարձրացված սրի տակ»³⁵:

Արդյո՞ք նման մերժող գնահատականը ճշմարիտ էր: Չէ որ այն հանգեցնում էր հրովարտակի ընձեռած թեկուզ ամենափոքր հնարավորություններն օգտագործելու բացառմանը:

Բ. Բորյանը գրում է. «Հայերը գերադասում էին «զավթված» լինել խորհրդային կառավարության կողմից, քան թղթի վրա ունենալ «ինքնորոշում» թուրքահայերի համար ու մնալ բնաջնջման թուրքական վտանգի տակ»:

Իհարկե, ռուսական բանակի հեռանալը ստեղծում էր ծանր կացություն: Բայց դա նշանակո՞ւմ էր, որ, եթե ռուսական բանակը չկար, հայերը դադարելու էին պաշտպանել սեփական հայրենիքը: Այդ ինչ ազգային բանակ ու ազգային քաղաքական ղեկավարություն էր, որոնք միանգամայն բնականոն էին համարում, որ ուրիշները կռվեին իրենց հայրենիքի համար, իսկ իրենք շարունակեին զբաղվել ճամարտակություններով: Ս. Վրացյանն անամոթաբար ստում է. «Բնականաբար հայերը միայնակ չէին կարող պահել նման մեծ տարածք»³⁶: Բայց դա նշանակում էր թշնամուն որեւէ դիմադրություն ցույց չտալ եւ երեք ամսում կորցնել մոտ 100 հազար կմ² տարածք: Արդյո՞ք հայն իրավունք ուներ իրեն պահել երես առած երեխայի կամ կամակոր աղջնակի նման՝ թող ուրիշները տանջվեն, որ ես բնականոն ապրեմ: Անգլիացիները միանգամայն ճիշտ էին, երբ ասում էին, թե հայն իրեն եւ իր հայրենիքը պաշտպանելու փոխարեն, գերադասում էր մուրալ՝ եկեք մեզ պաշտպանեք:

Իսկ հայերը կարո՞ղ էին օգտագործել այդ հրովարտակը եւ ինչո՞ւ չօգտագործեցին: ՀՀԴ կողմնորոշվեց դեպի Անգլիա, ինչը, անկախ նրանից, թե դաշնակներն այդ ուզում էին թե ոչ, նշանակում էր կողմնորոշվել Ռուսաստանի դեմ, որովհետև Բրեստի դաշնագրից հետո Խորհրդային Ռուսաստանի թիվ 1 թշնամին Անգլիան էր:

³⁵ Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 52:

³⁶ Вранян С., նշվ. աշխ., с. 11:

Ռուս Մ. Լազարենը նկատում է. «Թուրքահայաստանի մասին հրովարտակր գուտ դիվանագիտական քայլից բացի քաղաքական ակտ էր, որը կոչված էր կանխելու գերմանո-թուրքական պլանավորված ագրեսիան Փոքր Ասիայի արևելք եւ Անդրկովկաս, դրան հակադրելով Խորհրդային Ռուսաստանի դաշինքը հայերի ազգային-ազատագրական շարժման հետ...»³⁷:

Դաշնակցությունը բույլ տվեց կուպիտ սխալ: Այո, Խորհրդային Ռուսաստանի հետ դաշինքը գերծ չէր վտանգներից, բայց, ի տարբերություն անգլիական շաղակրատանքի, որը հայերին բացի փակուղուց, ուրիշ բան չէր ընձեռում, այն նաեւ ուներ ելքի, փրկության հնարավորություն: Եվ այդ հնարավորությունը ոչ միայն եւ ոչ այնքան ռուսական զինվորի ներկայությունն էր Հայաստանում, որքան այն, որ Հայաստանը ամիսներ չէր կորցնի Անդրկովկասյան կոմիսարիատի անգործության, վրացական խարդավանքների եւ աղբիջանցիների թշնամական դիտավորությունների հետեւանքները հաղթահարելու վրա ու անմիջապես ձեռնամուխ կլինեւ սեփական պետականության ստեղծմանը, սեփական ռազմական ուժի ձեւավորմանը, այդ գործում ունենալով Ռուսաստանի ռազմատնտեսական օգնությունը:

Չենք կարող չնշել խորհրդահայ պատմագրության մի ուրիշ սխալ եւ: Գիշտ չէ, երբ տպավորություն է ստեղծվում, որ բոլոր հարցերում ՀՀԴ գործիչները միահամուտ կարծիք են ունեցել: Մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը ՀՀԴ հայ իրականության ամենառուսամետ քաղաքական ինքնուրույն կուսակցությունն էր: Արդեն ասվեց, որ հեղափոխությունից հետո, ի տարբերություն վրաց մենչեիկների ու մուսավաթի, ՀՀԴ անվերապահ չէր մերժում բուլչեիկյան վարչակարգը եւ նրա հետ հարաբերություններ էր պահպանում: Խզումը սկսվեց Ռուսաստանում ծայր առած քաղաքացիական պատերազմով, երբ ձեւավորվեց կարծիք, թե խորհրդային կառավարությունը Հայաստանին էական օգնություն ցույց տալ չէր կարող, իսկ այդ պայմաններում Ռուսաստանի կողքին մնալը նշանակում էր լրիվ մեկուսացում ու ամբողջությամբ հայտնվել թշնամական միջավայրում: Դա առաջին հերթին խզում էր Անտանտի հետ, ինչը հանգեցնելու էր նաեւ արեւելյահայության բնաջնջմանը: Նույնիսկ այս պայմաններում Ռուստոմը, Դրոն, Արամ Սանուկյանը, Չավրիյանը մնացին Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու կողմնակիցներ, ոչ առանց լուրջ հիմքի գտնելով, որ Ռուսաստանի կազմում մնալը կգափի թե թուրքերին եւ թե աղբիջանցիներին ու վրացիներին:

Իրավական, ազգային-քաղաքական նշանակության առումով էլ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակր շարքային երեւոյթ չէր: Այն Արեւմտյան Հայաստանի հարցի ամենաարդարացի եւ ամենաարժատակաւ լուծում նա-

³⁷ Лазарен М., նշվ. աշխ., с. 26:

խատեսող փաստաթուղթ էր: Այն ճանաչում էր հայերի իրավունքը «Ռուսաստանի կողմից օկուպացված» Թուրքահայաստանի նկատմամբ: Այսինքն, այն ամբողջ Արեւմտյան Հայաստանին չէր վերաբերվում, այլ նրա այն հատվածին, որ գրավված էր ռուսական բանակի կողմից: Դա նշանակում էր, որ խորհրդային կառավարությունը հայերի սուվերենության տակ էր դնում իրեն պատկանող տարածքները: Դեռ ավելին, որպեսզի «Թրքահայաստանի» կարգավիճակը որոշող հանրաքվեն ազատ եւ անկաշկանդ անցկացվեր, պարտադիր էր համարվում ռուսական եւ թուրքական զորքերի դուրս բերումը:

Մ. Լազարենը գրում է. «Թուրքահայաստանի մասին հրովարտակր սկզբունքային նշանակության փաստաթուղթ էր, չնայած չիրականացվեց: Եվ դա Հայաստանի համար ծայրահեղ աննպաստ միջազգային պայմանների, Անդրկովկասում սանձարձակ ռեակցիայի եւ հայ ժողովրդի ազգային արդար իղծերին դաշնակցության օբյեկտիվորեն դավաճան քաղաքականության պատճառով: Դրանք մասնակիորեն արտացոլված են հռչակագրում եւ անմիջապես բավարարում չգտան հետհոկտեմբերյան շրջանում (հատկապես տարածքային խնդրում)»³⁸: Իհարկե, այս տողերի հեղինակը դրանք գրելիս դեկավարվել է ոչ թե ճշմարտությունը արտացոլելու, այլ որոշակի գաղափարախոսությանը «հավատարիմ» լինելու ձգտմամբ:

Պատմագրության մեջ այս հրովարտակի հարցում թյուրըմբռնումները շատ են: Անգամ այն փառաբանողները շատ ավելի մեծ տեղ են հատկացնում հրովարտակի ոչ թե գործնական, այլ բարոյական նշանակությանը: Իբր Խորհրդային Ռուսաստանն այնպիսի վիճակում էր, որ Հայաստանին որեւէ օգնություն հասցնել չէր կարող եւ խոստումներ էր տալիս դրանք չկատարելու համար: Թյուրիմացություն է: Նախ, կրկնում ենք, հրովարտակը հրապարակվեց մի ժամանակ, երբ ռուսական բանակը դեռեւս գերիշխող, թելադրող դեր ուներ աշխարհատարածքում: Գիշտ է, 1917թ. դեկտեմբերին Կովկասյան ռազմաճակատից հեռացան 40.000 զինվոր եւ սպա, այնուամենայնիվ տեղում մնում էր 160.000 մարդ՝ մի վիթխարի ուժ, որը մի բանի անգամ գերազանցում էր աշխարհատարածքի բոլոր պետությունների զորքերի թիվը՝ միասին վերցրած: 1917թ. վերջերին Թուրքիան Կովկասյան ռազմաճակատում կանոնավոր բանակ չուներ կամ գրեթե չուներ, իսկ Պարսկաստանը քայքայված վիճակում էր:

Դեռ ավելին, «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը միանգամայն նոր որակ էր Հայկական հարցի պատմության մեջ: Նա առաջին փաստաթուղթն էր, որ հայ ժողովրդի անվտանգության երաշխիք համարում էր նրա անկախ պետականությունը: Հրովարտակը Վիլսոնի քարտեզից 1,5 տարի շուտ նպատակահարմար համարեց Արեւմտյան Հայաստանի երեք վիլայիթների

³⁸ Лазарен М., նշվ. աշխ., с. 25:

(Վիլսոնը նաև տարածք էր վերցնում Տրապիզոնի վիլայեթից Հայաստանին դեպի ծով ելք ապահովելու համար) հիմքի վրա ստեղծեք Անկախ Հայաստան:

Սեզանում արդեն ավելի քան 80 տարի անթաքույց հիացմունքով ու երախտագիտությամբ խոսվում է Սերի դաշնագրի մասին եւ 85 տարի էլ նույնպես անթաքույց հիշոցներ են շարտվում «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի հասցեին:

Դա որքանով է արդարացված: Բացարձակապես ոչնչով:

Ի՞նչ էր Սերը. նախատեսվում էր Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգների տարածքները և Արևելյան Հայաստանը միավորել Անկախ Հայաստանի մեջ: Ո՞վ էր իրականացնելու այդ Հայաստանի ստեղծումը: Պայմանագիրը պատասխան չունի: Ո՞վ էր պաշտպանելու այդ Հայաստանը: Նույնպես պատասխան չկա: Բացի դա. Սերի պայմանագիրը մի քանի ամսվա կյանք ունեցավ, այն էլ միայն բոթի վրա, եւ այն ստորագրողները հրաժարվեցին ճանաչել պայմանագրի Հայաստանին վերաբերող կետերը:

Ի՞նչ էր «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը. նախատեսվում էր Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգների, այսինքն՝ ռուսական գորքերի գրաված տարածքները հռչակել որպես Անկախ Հայաստան («Թուրքահայաստան»): Ո՞վ էր իրականացնելու այդ Հայաստանի ստեղծումը: Այն արդեն կար, ռուսական գրավման շրջան էր իր քաղաքացիական եւ ռազմական իշխանություններով: Տարածքը Խորհրդային Ռուսաստանն անփոխհատույց զիջում էր հայ ժողովրդին: Ո՞վ էր պաշտպանելու այդ Հայաստանը. մի բանակ, որը ձեռավորվելու էր հայ-ռուսական համագործակցությամբ՝ ռուսական բանակում ծառայության մեջ գտնվող 130.000 հայերից եւ արեւմտահայերի մարտական ջոկատներից, զինվորների փոխադրության ծախսերը, զենքն ու ռազմամթերքը, ինչպես նաև հանդերձանքը հոգում էր խորհրդային կառավարությունը: Նախատեսվում էր ունենալ 80-100.000 բանակ, որի անգամ կեսը բավարար էր թուրքերի հարձակումները հեռ մղելու, Հայաստանը պաշտպանելու համար: Ռուսաստանը երբեք պաշտոնապես այդ հրովարտակից ձևական առումով չի հրաժարվել եւ այն մինչեւ օրս էլ անվավեր հայտարարված չէ:

Ուրեմն այդ երկու փաստաթղթերից ո՞րն էր հայության համար ավելի շահեկան եւ որի՞ն հայը պետք է նախապատվություն տա: Իհարկե. «Թուրքահայաստանի մասին» հրովարտակին, բայց չի տալիս, որովհետեւ դա ձեռնտու չէ հայ որոշակի քաղաքական ուժերի, նաև որոնց մեղքով ձախողվեց հրովարտակի իրականացումը:

Անհետաքրքիր չեն Անդրանիկի մտքերը «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի շուրջ: Նա ասում էր. «Իրենց նշանաբաններն ապահովելու հա-

մար բոլշևիզմը ուժի կարիք ունի: Ինչպես տեսնում ենք այդ ուժերը ծավալվում են Անդրկովկասի սահմաններից դուրս, Ռուսաստանում:

Բոլշևիկներն արդյո՞ք կգրավեն Անդրկովկասը: Չգիտեմ: Բայց ցանկանում եմ հարցնել՝ ինչո՞ւ չեն գրավում: Ես համաձայն եմ նշված հրովարտակի բովանդակության հետ եւ մտադիր չեմ հարցնել, թե բոլշևիկներն ինչո՞ւ նախ մերկացրեցին ռազմաճակատը եւ ապա միայն մտածեցին գորքեր մտցնելու ժամկետների ու ձեւերի մասին»: Անդրանիկն այդ հարցը չի տալիս, որովհետեւ համակարծիք էր Ստ. Շահումյանի հետ. «...Սենք ի գորու ենք պահպանել ռազմաճակատը, եթե համակվենք մեր ազատությանը եւ վերջնական անկախության գիտակցությանը: Ինչո՞ւ հայ ժողովուրդն ընթացիկ երկու ամսում չկարողացավ կանգնել իր ազատությունը պաշտպանելու համար: Հայ ժողովուրդը երես կառնի՞ ոչ համեստ հավակնություններով, կփարվի՞ ռուս զինվորին, թե կմնա Հայաստանի լեռներում եւ կպաշտպանի իր սեփական ազատությունը: Անկասկած է՝ եթե ռուսական բանակը մնար, դա կհանդիսանար գործի մեծագույն երաշխիքը, եւ պետք է ձգտել, որպեսզի ռուսական բանակի ինչ-որ մասը թեկուզ ժամանակավորապես մնա մեր երկրում, մինչեւ մենք կարողանանք իսկապես կազմակերպվել եւ ի վիճակի դառնանք ինքնորոշման համար»³⁹:

Հետաքրքիր է Անդրանիկի նաև հետեւյալ դիտարկումը. «Բոլշևիկները զավթողական դիտավորություններ չունեն: Ռուսաստանից եւ ուրիշ շրջաններից մեզ մոտ եկող կամավորները վկայում են, որ ամենուրեք, որտեղ բոլշևիկները գտնվում էին իշխանության ղեկի մոտ, օգնել են եւ թեթևացրել իրենց տեղափոխությունը»⁴⁰:

Անդրանիկը գտնում էր. «Բոլշևիկների հրովարտակի նշանակությունը մեծ կլինի միայն այն ժամանակ, երբ նրանք փաստացի գերիշխեն նաև Անդրկովկասում, քանի որ մեր հայրենիքը անմիջական (տարածքային) կապ ունի ոչ թե Ռուսաստանի, այլ Անդրկովկասի հետ: Փոքր ժողովուրդների անկախության մասին Ժողկոմխորհի հրապարակած կարգախոսի կարմիր գիծը կտրվում է Անդրկովկասի սահմաններին»:

Բոլոր դեպքերում, բոլշևիկյան հրովարտակը թող այդպես էլ մնա հրովարտակ, եթե ոմանք այն ցանկանում են անվանել այդպես, այն հանդիսանում է արդարության եւ քաղաքական ազնվության մեծագույն արձահայտություն: Նա եվրոպական դիվանագիտության պայմանագրերի նման առաձգական չէ եւ չպետք է մոռանանք, որ հենց Ժողկոմխորհի կառավարությունը մերկացրեց արեւմտյան տերությունների դիվանագիտական մութ խաղերը, որոնցով նրանք ցանկանում էին մոլորեցնել մեր դժբախտ հայրենիքը»⁴¹:

³⁹ «Հայաստան», 01.02.1918:

⁴⁰ Ն.տ.:

⁴¹ Ն.տ.:

Անդրանիկը զարմանում էր, որ անգամ արեւմտահայ բերրեթից մեկը («Ազատամարտ») «ծաղրում է հրովարտակը», միաժամանակ «Վիլսոնի եւ Լլոյդի, ովքեր ստորագրել էին գաղտնի պայմանագրերը, փրված ճառերը համարում Հայաստանի ապագայի երաշխիք»⁴²:

Նա գտնում էր, որ Հայկական հարցը «դուրս չի եկել դիվանագիտության լծի տակից եւ երբեք դուրս չի գա, եթե մենք շարունակենք հիմարաբար ծաղրել բոլշեիկների ազնիվ քաղաքականությունը»: Նա, առաջին հերթին, նկատի ուներ նույն «Ազատամարտին», որովհետեւ նրա գրածները բոլշեիկյան հրովարտակի մասին, վկայում են, որ «այդ բերթի շուրջ համախմբվել են, անգամ, սեփական արժանապատվությունից զուրկ» մարդիկ, ովքեր «դեռ գտնվում են իրենց ավագ ընկերների խանական կամակորոթյան ազդեցության տակ»:

«Բոլշեիկյան հրովարտակը,- ամբողջացնում է Անդրանիկը,- մյուս բոլոր պաշտոնական հայտարարություններից ամենաանկեղծն է...»:

Բայց ահա թե ինչ դիրք գրավեց «Էրթոբա» բերթը, որը հրովարտակն անվանեց «հայ դաշնակցության սիրտը» շահելուն միտված քայլ: Այս բերթը պորտաբուծության, սեփական հայրենիքը պաշտպանելու հանդեպ անպատասխանատու մոտեցողների ձայնափողն էր: Նա գրում է, թե ռուսական զորքերի հեռանալը եւ դրանց փոխարինելը հայ ժողովրդական ոստիկաններով առաջ կբերի հայերի եւ թուրքերի ու քրդերի միջեւ կոտորած: Թերթի ստորությունը սահման չի ճանաչում: «Շահումյանը կամենում է,- գրում է «Էրթոբան»,- հայերին ու թուրքերին միմյանց հետ կռվացնել եւ հետո պտորված ջրում բոլշեիկյան ձկներ որսալ»: Այս հրապարակման դեմ հանդես եկավ նաև «Հորիզոնը», այն անվանելով «անպատվաբեր ու պրովոկացիոն», որովհետեւ բոլշեիկներին մեղադրել, թե «ուզում են հայերին ու թուրքերին կռվացնել, առնվազն չարամտություն է»⁴³:

Սակայն հետագայում հայ շատ գործիչներ չհետեւեցին այս լրջմիտ խորհրդին եւ հրովարտակի առիթով ինչ մեղադրանքներ ասես, որ չշռայլեցին Կարմիր Մոսկվայի հասցեին:

«The Armenian Review»-ն 1970թ. N4-ում աշխատում է համոզել, թե Մոսկվան հրովարտակը հրապարակելու հետ միաժամանակ իր զորքերը հետ կանչեց Արեւմտյան Հայաստանից, որպեսզի թուրքերը հնարավորություն ստանային հետ գրավելու այդ տարածքը եւ դրանով «նվաճեր մուսուլմանական աշխարհի համակրանքը հանուն համաշխարհային հեղափոխության»:

⁴² Ն.տ.:
⁴³ «Հորիզոն», 28.01.1918:

Հրովարտակը վարկաբեկելու համար ջանք չխնայեցին նաև մեր հարևանները: Վրացիներն անմիջապես հասկացան, որ հրովարտակը դա Հայաստանը Ռուսաստանին կապող կամուրջ էր Վրաստանի վրայով եւ կատաղի հարձակման անցան: «Սաքարթվելոն» այն անվանեց «Սագոնովի եւ Միլյուկովի գաղափարներից վերցված»: Նույն բերթը գրում է. «...Սեզ համար միեւնույն չէ, թե մեր հարևաններն ինչ միջոցներով կկամենան իրենց նպատակներն իրագործել»: Թերթի հարվածի սուր ծայրն ուղղված էր Շահումյանին, «որ ավելի դաշնակցական է, քան բոլշեիկ... ծայրահեղ շովինիստները Շահումյանի հետ միասին երեւի երագում են ստեղծել Սեմ Հայաստան»⁴⁴:

Ս. Շահումյանի ոչ այնքան բոլշեիկյան լինելը, որքան Հայաստանը վերածնելու նրա ջանքերը Գեգեչկորուն, Չխենկելուն, Ռամիշվիլուն մղեցին ծայրագույն քայլի՝ հրաման արձակեցին ձեռքակալելու նրան, ինչը, դժբախտաբար, արժանացավ ՀՀԴ գործիչների լուռ համաձայնությանը: Իսկ Անդրանիկն Անդրկովկասի սեյմի այդ որոշումն անվանեց «անդրկովկասյան ժողովրդավարության մահախոսական», որի «հեղինակներն արդարացում չունեն»⁴⁵:

Վրացական նույն այդ շրջանների տրամադրություններն էր արտահայտում «Չվենի Ռեսպուբլիկան», որն իր N45-ում կշտամբեց վրաց մենշեիկների ղեկավարներին, թե նրանք մոռանում են, որ «հայերի Թուրքիայում սկսած անջատողական քաղաքականությունը դեռեւս վերջացած չէ եւ այն վերջանալու է Անդրկովկասում»: ՀՀԴ ձգտումը խոչընդոտելու ռուսական զորքերի հեռանալուն նույն բերթը բնութագրեց հետեւյալ կերպ. «Հայոց դաշնակցական կուսակցությունն ավելի համարձակ դարձավ, տոգորվեց դավաճանական զգացումով եւ իր երեսը շուտ տվեց դեպի Անդրկովկասի ընդհանուր թշնամին»՝ Ռուսաստանը⁴⁶:

Նույն միտքն է քարնված «Սախալիտ Սաքմեն» բերթի արտահայտած հետեւյալ տողերի տակ, թե հայերի երազանքներում բացակայում է «ժողովրդավարությունը», որովհետեւ «ապակենտրոնացման սկզբունքի փոխարեն կենտրոնացում են պահանջում, մի բան, որ Ռուսաստանի հին կարգերի վերականգնման եւ պաշտպանության ձգտում է» նշանակում⁴⁷: Վրացական մի քանի բերթեր դավաճանություն որակավորեցին «Պայքարի» միտքը, թե Անդրկովկասյան կոմիսարիատը պետք է կապ պահպաներ Խորհրդային Ռուսաստանի կառավարության հետ:

Եվս մի ակնհայտ իրողություն. «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի վերաբերյալ թուրքերի ու վրացիների կարծիքները համընկնում էին: Հ.

⁴⁴ «Աշխատանք», 23, 28.01.1918:
⁴⁵ «Հայաստան», 01.02.1918:
⁴⁶ «Աշխատանք», 03.02.1918:
⁴⁷ «Հորիզոն», 09.02.1918:

Բայուրը հրովարտակի նպատակը համարում էր. «Մի կողմից, սիրաշահել հայերին... եւ նրանց վրա հենվելով նորից ազդեցության տեղ դառնալ այդ շրջաններում՝ նորից իշխել Հարավային Կովկասում... Բացահայտ է, որ այս գործում գաղտնի, բայց ամենակարեւոր նպատակն է Կովկասյան Հայաստանին կցել Արեւելյան Անատոլիան եւ հետո բոլորը կլանելով, Տիգրանակերտից էլ հարավ գործադրել դեպի Միջերկրական ծով ծավալվելու քաղաքականությունը»: Ջբաղեցրած դիրքերից թուրքական զորքերի հետաքննման պահանջը համարվում էր «փրեն Հայաստան անվանող երկրում մեծամասնություն կազմող մահմեդական բնակչությանը հայերի կողմից ավելի նպատակասլաց եւ անարգելք բնաջնջելու նպատակ հետապնդող» քայլ⁴⁸:

Ավաճից պարզ երևում է, որ հրովարտակը «ծանոթ-բարեկամների» միջնորդությամբ հրապարակ հանված փաստաթուղթ չէր, այլ հեռահար խնդիրներ հետապնդող քայլ:

Հայկական հարցը փետրվարյան հեղափոխությունից հետո բեակոխեց նոր շրջան: Դա մի ոչ տեսական ժամանակ էր, երբ այն միջազգային կյանքից հետ վերադարձավ ու նորից վերածվեց ներքին հարցի, բայց այս անգամ ոչ թե Օսմանյան կայսրության, այլ առավելապես Ռուսաստանի ներքին հարցի: Եվ քանի որ ուղղակիորեն կախման մեջ էր ռուսական զենքի հաջողությունից, ապա հայությունն իր հույսը կապեց Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հետ: Դրա համար էլ նա մի կողմ դրեց Հայաստանի կարգավիճակի լուծմանը միտված գործունեությունը: Այդ էր պատճառը, որ 1917թ. հայ քաղաքական ուժերի աշխատանքը նպատակաուղղված էր ռազմաճակատին օգնելուն, Արեւմտյան Հայաստանի հայաբնակեցմանը, կառավարման եւ հասարակության ինքնագործունեության կազմակերպմանը: Դա Հայկական հարցի լուծման պայքարի ոսկե դարն էր, որի վերջակետը դժբախտաբար, դարձավ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ստեղծված նոր իրավիճակը, չնայած Կերենսկու կողմից կազմավորված հայկական գլխավոր նահանգապետությունը հիմք հանդիսացավ Լենինի «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ծննդյան համար:

Հրովարտակը 1918թ. հունվարի 28-ին հաստատվեց խորհուրդների համառուսաստանյան 3-րդ համագումարում: Դրանից մի քանի օր առաջ Լենինը հրաման էր ստորագրել Վ. Տերյանին Բրեստի բանակցություններում խորհրդային պատվիրակության խորհրդական նշանակելու մասին⁴⁹:

Սակայն Բրեստում ոչ Իոֆեն եւ ոչ էլ Տրոցկին ու Սոկոլնիկովը նրա ծառայություններից չօգտվեցին այն պարզ պատճառով, որ որոշել էին հրաժարվել

ռուսական բանակի գրաված տարածքներից ու վերադառնալ 1914թ. սահմաններին: Հարցի նման «հեշտ լուծումը» հետեւանք էր առաջին հերթին հայ ժողովրդի անկարողության, նրա գործոն չլինելուն: Արեւմտյան Հայաստանի հայաբնակեցման հետեւանքով չկար կամ ավելի քան թույլ էր այն ուժը, որ պատրաստ էր մաքառելու խնդրի դիվանագիտական (եթե ոչ ռազմական) լուծման համար: Տերությունները զբաղված լինելով աշխարհամարտի վերջին փուլով կորցրել էին Հայկական հարցի հանդեպ հետաքրքրությունը, իսկ Ռուսաստանը խճողված էր ներքին հիմնահարցերում, իր զորքերը դուրս էր հանում Արաքսից այն կողմ ընկած տարածքներից:

Դրա վկայությունն էր Տրոցկու եւ Նեսիմիի ու Թալեաթի միջև տեղի ունեցած զրույցը Բրեստում, երբ հրապարակվեց դեկրետը: Ահա մի քաղվածք այդ երկխոսությունից, որ վերցրել ենք Հ. Ավետիսյանի «Հայկական հարցը 1918 թվականին» ուսումնասիրությունից: Ա. Նեսիմի. «Երբ հայերը զինվեցին, իշխելու են այդ մարզերում եւ կոտորելու են մեծամասնություն կազմող մուսուլմաններին... հարմար չէ, որ Ռուսաստանն իրեն չպատկանող երկրի ժողովրդին զինելով անկախության մղի, նույնիսկ ստիպի... ինչ որ ձգտում եք կատարված տեսնել, կարող է առաջ բերել ցավալի դեպքեր»: Տրոցկի. «Հայերին զինեցինք, որպեսզի կարողանան իրենց պաշտպանել զինված բրդերից...»: Ա. Նեսիմի. «Այդ տարածքներում կացությունը փոխվել է: Քրդերը ոչ միայն վնաս չեն պատճառի հայերին, այլևս կառավարությունն էլ լավ զգացմունքներով տոգորված քաղաքականություն է վարելու նրանց (հայերի) հանդեպ»: Տրոցկի. «...Թուրքիայի բարեկամն եմ, բայց չեմ կարող հրաժարվել որոշ սկզբունքներից... չնայած Կովկասում մի քանի կառավարություններ են հիմնվում, բայց ոչ մեկին չենք ճանաչելու... Կովկասյան բանակը մեր հրամանատարության տակ է»: Թալեաթ. «Ռուսները հայերին զինելուց հետո հետ են քաշվելու եւ հարկ է, որ ըստ այդմ պատրաստվենք»⁵⁰:

Դա ուղղակի ակնարկ էր, որ ռուսական բանակի հեռանալուց հետո թուրքերն անցնելու էին հարձակման եւ Տրոցկին այդ ակնարկը թողեց անպատասխան:

Բուլչեիկյան շրջանակներում գնալով տիրապետող էր դառնում այն կարծիքը, թե «կորցնել Թուրքիան կնշանակի կորցնել ամբողջ Արեւելքը, հեղափոխության ազդեցությունից դուրս թողնել մուսուլմանական բոլոր ժողովուրդներին»⁵¹: Այդ կարծիքի ամենամոլի առաջնորդներից էին Պավլովիչն ու Ռադեկը: Վերջինը փառաբանում էր երիտթուրք պարագլուխներին, մասնավորապես Էն-

⁴⁸ "Belleten" 1965, Temmuz, s. 510-511:

⁴⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 130, գ. 1, գ. 52:

⁵⁰ АВПР, ф. 413, он. I, л. 87:

⁵¹ "Жизнь национальностей", 08.12.1920:

վերին: «Էնվեր փաշան,- գրում է նա,- ոչ միայն նշանավոր զինվոր է, այլև քաղաքագետ»։ Ե անցել է «ժողովրդային երկրի ու Արևելքի Սիոնյան կողմը»⁵²։

«Թուրքահայաստանի մասին» հրովարտակը միջազգային լայն արձագանք ունեցավ եւ որոշակի փոփոխություններ մտցրեց Հայկական հարցի հանդեպ Անտանտի տերությունների քաղաքականության մեջ, համեմայն դեպս՝ այդ խնդրի վերաբերյալ նրանց հայտարարություններում: Ֆրանսիայի ԱԳ նախարար Ս. Պիշոնը հավաստիացրեց Պ. Նուբարին, թե իր երկիրը պատրաստակամ է աջակցելու Թուրքիայի լծից Հայաստանի վերջնական ազատագրմանը⁵³։

Լոնդոնն ու Փարիզը Նուբարին համոզում էին հանդես գալ բոլշևիկյան փաստաթղթի դեմ: Նուբարը գրեց կաթողիկոսին, թե այդ հրովարտակը ժամանակին չէ եւ «կարող է վարկաբեկել անկախության գաղափարը»⁵⁴: Հենվելով նաև Բալֆորի եւ Լ. Ջորջի հայտնած կարծիքների վրա, նա գտնում էր, որ հարկ չկա գրգռել թուրքերին ու վրացիներին, այլ սպասել մինչև այն պահը, երբ հայկական զինված ուժերը կհաստատեն իրենց լիակատար վերահսկողությունը հայկական վիլայեթների վրա:

Նույն կարծիքն արտահայտեց Կլեմանտոն Պետրոգրադում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար Նիսելին 1918թ. հունվարի 18-ին հասցեագրված հրահանգում: Հենվելով գնդ. Շարդինյեի կարծիքի վրա, նա գրում է, որ ներկա պայմաններում Հայաստանի ինքնավարության հռչակումը քաղաքականապես սխալ է, այն սրելու է հարաբերությունները վրացիների հետ եւ առաջացնելու է մահմեդականների հակազդեցությունը⁵⁵։

Շուտով Պ. Նուբարը փոխեց իր կարծիքը հրովարտակի մասին: Նա հունվարի 30-ին գրում է ԱՄՆ հայկական կոմիտեի նախագահ Մ. Սըվազլին, թե եթե այդ հրովարտակը տարածվի հայկական բոլոր վիլայեթների ու Կիլիկիայի վրա, այն լրիվ կհամապատասխանի հայ ժողովրդի իղձերին⁵⁶: Պ. Նուբարի այս նոր կարծիքի մասին տեղեկանալով Պլզոնն այդ մասին տեղյակ պահեց Կլեմանտոյին⁵⁷։

Ի դեպ, հրովարտակը գրեթե համընկնում էր Հայ ազգային խորհրդի կարծիքի հետ, որը 1917թ. դեկտեմբերի 27-ին գրեց Նուբարին. թե ցանկալի էր, որ Անտանտը ճանաչեր Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը, որ «բարոյական մեծ աջակցություն կլիներ, եթե չեղյալ հայտարարվեր» Սայքս-Պիկոյի համաձայնագիրը⁵⁸։ Բայց Անտանտի ոչ մի պետության ղեկավար հայե-

⁵² "Красный Восток", 19.09.1920:

⁵³ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N479:

⁵⁴ Ն.տ., փաստ. N474:

⁵⁵ Ն.տ., NN470, 473:

⁵⁶ Ն.տ., փաստ. N507:

⁵⁷ Ն.տ., փաստ. N508:

⁵⁸ Ն.տ., փաստ. N467:

րի այդ ցանկությանն ընդառաջ չգնաց: Պիշոնը Թիֆլիսի իր ներկայացուցչին միայն անորոշ ցուցում տվեց, թե Փարիզը չի ճանաչում Բրեստի դաշնագիրը եւ պատրաստակամ է Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների իրավունքները պաշտպանել խաղաղության խորհրդաժողովում⁵⁹։

Միանգամայն այլ ծրագիր ուներ Գ. Նորատունկյանը: Նա գտնում է, որ Արևելյան Հայաստանն ու հայկական ազատագրված վիլայեթները պետք է միավորվեն (3-4 միլիոն բնակչությամբ) եւ մտցվեն ռուսական ապագա դաշնության մեջ: Նա չէր բացառում նաև հայկական վեց վիլայեթների միավորումը եվրոպացի նահանգապետի իշխանության տակ Անտանտի վերահսկողության ներքո, չնայած այդ տարբերակի իրականացումը համարում էր դժվար⁶⁰։

Թուրքահայաստանի մասին հրովարտակի հրապարակման օրը Բրեստում խորհրդային պատվիրակությունը հանդես եկավ հայտարարությունով: Այն կրկնությունն էր հրովարտակի դրույթների, որոնք համարվում էին անհրաժեշտ երաշխիք Արևմտյան Հայաստանի ազատ ինքնորոշման համար⁶¹։

Բրեստում թուրքերը բողոքեցին գրավված շրջաններից ռուսական զորքերը դուրս հանելու եւ ազգային ուժեր տեղակայելու դեմ: Տրոցկին պատասխանեց, թե դրանք ոչ թե ռուսական, այլ հայկական տարածքներ են, եւ մենք դրանք փոխանցել ենք հայերին, ճիշտ այնպես, ինչպես մեր զորքերը հանեցինք գրավված մյուս տարածքներից: Նա նորից բերեց պարսկական տարածքների օրինակը:

Ստացվեց այնպես, որ Ռուսաստանի դեմ առաջին ինտերվենցիան սկսեց Թուրքիան եւ այդ ինտերվենցիայից առաջինը տուժեցին հայերը: «1918թ. փետրվարին թուրքերը, որպես առիթ օգտագործելով իրենց իսկ հրահրած կոնֆլիկտը հայկական ջոկատների եւ մուսուլմանական բնակչության միջեւ, զորքեր մտցրին «Թուրքահայաստանի» տարածքը եւ հայ բնակչությանը գրկեցին հնարավորությունից իրականացնելու ժողովրդային հրովարտակով նախատեսված ազատ ինքնորոշման իր իրավունքը»⁶²։

«Թուրքահայաստանի մասին» հրովարտակը կյանք չմտավ, որովհետև Բրեստ- Լիտովսկը անհաղթահարելի խոչընդոտ դարձավ նրա ճանապարհին: Խորհրդային Ռուսաստանի օրհասական օրերին պարտադրված այդ պայմանագիրը թաղեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:

Հայկական գործերի կոմիսարիատը գործել է 1917թ. նոյեմբերից մինչև 1920թ.: Կոմիսարիատի կազմում տարբեր ժամանակներում եղել էին հայ

⁵⁹ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N577:

⁶⁰ Ն.տ., փաստ. N513:

⁶¹ "ДВН СССР" т. 1, М., 1959, с. 78:

⁶² Ն.տ., с. 712:

մտավորականության ու կուսակցական ճանաչված գործիչներ: Բացի Վ. Ավանեսովից, Վ. Տերյանից, Ս. Լուկաշինից, Պ. Մակինցյանից դրա աշխատանքներին մասնակցել են Ա. Կարինյանը, Հ. Ջառայանը, Ա. Նազարբեկյանը, Ն. Ավարյանը, Ա. Շահինջանյանը, Աշ. Հովհաննիսյանը, Հ. Հովսեփյանը եւ այլոք:

Կոմիսարիատը հետագայում եւս շարունակեց մեծ աշխատանք կատարել: Պետրոգրադից եւ Մոսկվայից 30 ներկայացուցիչներ ուղարկվեցին այն նահանգները, որտեղ հայ գաղթականների կուտակումներ կային: Ռուսաստանի կառավարությունը 1918թ. հունվարին քննարկեց «Հայկական գործերի կոմիսարիատի հայտարարությունը հայ գաղթականներին անհապաղ օգնություն ցույց տալու մասին» եւ որոշեց այդ նպատակի համար հատկացնել 6,2 մլն ռուբլի կարիքավորներին օգնելու համար: Ժողկոմիտորը հրահանգ ուղարկեց տեղական իշխանություններին՝ աջակցելու հայկական կազմակերպություններին կամավորների հավաքագրման, զինման եւ Հաստան ուղարկելու գործում:

Կոմիսարիատը գործում էր Ռուսաստանի կառավարության անունից: Մասնավորապես մեծ է նրա օգնությունը հայ գաղթականներին: Դա արվում էր թե անմիջականորեն եւ թե ռուսական գերատեսչությունների միջոցով:

ՌԽՂԱՀ առողջապահության ժողկոմատը միայն 1918թ. երկրորդ կեսին Անդրկովկասի հայ գաղթականությանը բժշկական եւ նյութական օգնություն ցույց տալու համար հատկացրել էր մոտ 10 մլն. ռուբլի:

Անդրկովկաս թուրքական ներխուժման, Բաքվի կոմունայի պարտության հետեւանքով հայ գաղթականության նոր խոշոր զանգվածներ անցան Ռուսաստան: Նրանք հիմնականում կանգ առան Հյուսիսային Կովկասում, Աստրախանում, Պովոլժիեում:

Կոմիսարիատը Պովոլժիեում եղած գաղթականներին օգնելու համար Հ. Ջառայանի ղեկավարությամբ մի ջոկատ ուղարկեց, որն իր հետ տարավ երկու վագոն կտորեղեն, հագուստ, կոշիկ եւ այլն: Հայ գաղթականների համար բացվեցին թեյարաններ, ճաշարաններ, բուժարաններ, կարի, ասեղնագործական, կոշիկի, փականագործական արհեստանոցներ, դարբնոցներ եւ այլն: Ստեղծվեցին որբանոցներ, մանկապարտեզներ եւ տարրական դպրոցներ:

Գաղթականների կարիքները հոգալու համար կոմիսարիատին տրամադրվեց մոտ 300.000 արշին կտոր: Մոսկվայում ստեղծվեց կարի արհեստանոց, որ հագուստ էր կարում եւ ուղարկում գաղթականներին: Աստրախանում հավաքված 15-17 հազար գաղթականներին տեղավորելու համար հայկական սեմինարիայի շենքում կազմակերպվում է հանրակացարան 1000 մարդու հա-

մար: Ընտանիքավոր գաղթականներին տեղավորելու նպատակով իշխանությունների բույլավորությամբ բռնագրավում էին հայ հարուստների տները:

Տեղերը կոմիսարիատի ուղարկած ջոկատների անդամներն օգտվում էին արտակարգ լիազորություններով՝ Յա. Սվերդլովի եւ Վ. Ավանեսովի ստորագրությամբ վկայականներով:

Քանի որ Անդրկովկասից սկսել էր հայ գաղթականների նոր արտահոսք, կոմիսարիատի Սարատովի բաժանմունքն ու գաղթականական ջոկատը համատեղ նիստ են անցկացնում եւ որոշում միջոցներ ձեռնարկել եկող գաղթականներին անմիջապես տեղավորելու՝ ստեղծել հանրակացարաններ, բացել ընդհանուր ճաշարան, մանկատուն, տեղերում կազմակերպել գաղթականական կոմիտեներ, ինչպես նաեւ բուժօգնություն⁶³:

1918-1919թթ. տաս ամիսներին խորհրդային կառավարությունը հայ գաղթականների կարիքները հոգալու համար լրացուցիչ ծախսեց 10 միլիոն ռուբլի, տրամադրեց 200.000 արշին գործվածք, 30.000 կտոր հագուստ եւ այլն:

1918թ. մեծ օգնություն ցույց տրվեց Հյուսիսային Կովկասում հավաքված 60.000 հայ փախստականներին: Գաղթականությունը հողատարածք ստացավ Ստավրոպոլի, Կրասնոդարի, Ղրիմի, Ռոստովի, Արմավիրի շրջաններում:

Հայկական գործերի կոմիսարիատը մեծ ջանքեր էր լարում Ռուսաստանում գտնվող հայ փախստականների տունդարձի կազմակերպման ուղղությամբ: Կոմիսարիատի Աստրախանի բաժանմունքը հաղորդում էր. «Ամենալուրջ միջոցներ են ձեռնարկված բոլոր հայ փախստականներին Վոլգայի ափերից Աստրախանի վրայով... հայրենիք փոխադրելու համար»⁶⁴:

Հայրենադարձության հարցը քննարկվեց 1919թ. ապրիլին Մոսկվայում անցկացված հայ գաղթականների ներկայացուցիչների խորհրդակցությունում: Նշվեց, որ խորհրդային կառավարությունն իր վրա է վերցրել հայերի տունդարձի բոլոր ծախսերը եւ դիմել է Անդրկովկասի կառավարություններին եւ Անգլիային չխոչընդոտել հայերի հայրենադարձությունը: Անգլիան խոստացավ հնարավորություն ստեղծել, որպեսզի տուն դառնան նաեւ Արփաչայից արեւմուտք ընկած հայկական տարածքների հայերը: Հավատարմով դրան ՀՀ կառավարությունը սկսած 1918թ. վերջերից արեւմտահայ փախստականներին կենտրոնացրեց հայ-թուրքական սահմանի վրա, բայց թույլտվություն այդպես էլ չստացվեց:

«Հառաջը» 1919թ. փետրվարի 1-ին գրում է. «Կարսի գաղթականությունը, բլով մոտ 120.000 հոգի, վերադարձի նպատակով եկել կուտակվել է Ալեքսանդրապոլի շրջանում, Արփաչայի ափին, սակայն հնարավորություն չունե-

⁶³ ЦГАРФ, ф. Саратовского отд. N3:
⁶⁴ Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը, Ե., 1958, էջ 123-124:

նախով անցնելու իրենց բնակավայրերը, սովից, ցրտից ու հիվանդություններից կոտորվում էր:

Նույն կերպ, հավատալով Անգլիայի խոսքին մեծ թվով հայեր էին հավաքվել Օդեսայում եւ Նովորոսիյսկում՝ սպասելով անգլիական նավերին, որոնք այդպես էլ չեբեացին:

Հայկական գործերի կոմիսարիատը եռանդուն աշխատանք կատարեց թուրքերի դեմ կռվելու համար արեւմտահայ փախստականներից կամավորներ հավաքագրելու ուղղությամբ: «Կարմիր օրեր» թերթը 1918թ. մարտի 21-ին հայտնում է. «...Օդեսայից տեղ են ժամանել 800 թրքահայ կամավորներ, բոլորն էլ լավ հագնված. պարենավորված ու զինված հրացաններով, զնդացիքներով՝ Օդեսայի բոլշեիկյան կուսակցության կողմից... Դրանց հետ եկել են նաեւ մի քանի ռուս բոլշեիկ ընկերներ, որոնք նույնպես մեկնելու են ռազմաճակատ...»

Տեղական բոլշեիկները հայտարարել են, որ թրքահայերը փոխանակ Ռուսաստանում ընդհանուր գորահավաքի ենթարկվելու, անհրաժեշտ է, որ մեկնեն թուրքական ճակատ, պաշտպանելու իրենց ազատությունը:

Նույնպիսի վերաբերմունք ցույց տվեցին նաեւ Գրիմի բոլշեիկները, որոնց ձեռքին է այսօր իշխանությունը, որն օգնություն է կազմակերպում Կովկասի ճակատ մեկնել ցանկացող հայ կամավորներին: Սրանից առաջ էլ նույնպիսի սիրայիր վերաբերմունք էին ցույց տվել հայ կամավորներին Մայկուպի եւ Տուապսեի բոլշեիկները»:

«Հայ կամավորները զինված գալիս են Ռուսաստանից ճակատ գնալու համար,- գրում է նույն թերթը մարտի 24-ին,- հետեւյալ ճանապարհով՝ Արմավիրի վրայով դեպի Տուապսե եւ այնտեղից ծովով Բաթում-Թիֆլիս: Կան խմբեր էլ, որոնք Ռոստովի վրայով գալիս են Բաթու:

Խարկովից գալիս են դեպի ճակատ նորից 400 կամավորներ...»:

Հայկական գործերի կոմիսարիատը ծառայություն ուներ նաեւ այն բանում, որ 1918թ. վերջերին հայկական ջոկատները Պլատիգորսկում միավորվեցին եւ ստեղծեցին հայկական հատուկ գունդ:

Կոմիսարիատներ, քացի կենտրոնից, ստեղծվեցին նաեւ ռուսական կայսրության ամենատարբեր մասերում: Դրանց ձեւավորման հիմքում ընկած էր ազգային սկզբունքը: Օրինակ, Ուկրաինայում, Գրիմում եւ Մոլդավիայում ստեղծված էր մեկ ընդհանուր հայկական կոմիսարիատ, որը հիմնականում կամավորներ էր հավաքագրում եւ ուղարկում հայկական գորքերում ծառայելու համար: Մի տեղեկագրում, օրինակ, կարդում ենք. «Փետրվարի 17-ին երկրորդ գնացրակազմով Կիեւից ուղարկվել է ռուսանդական առաջին հարյուրյակը՝ 130 ռուսանդներով: Խարկովից արդեն ուղարկվել է մի քանի խումբ: Օ-

դեսայում պատրաստվում են ուղարկել 300 մարդ, իսկ Սիմֆերոպոլում՝ 700»⁶⁵: Կոմիսարիատի ղեկավար Տոնիերը հավաստիացնում էր, որ Ուկրաինայում, Մոլդավիայում եւ Գրիմում «չի մնա ոչ մի հայ, որը որեւէ բանով օգտակար չլինի հայրենիքին»⁶⁶: Նույն խնդրի լուծմամբ Մոսկվայում գրադվում էր Հայաստանի պաշտպանության Մոսկվայի խորհուրդը: Վորոնեժի հայկական ռազմական կոմիսարիատը 1918թ. ապրիլին հայտարարեց 18-32 տարեկան բոլոր հայերի հավաքագրում: Երեք տարվա ընթացքում կոմիսարիատ չներկայացող հայերը համարվում էին դասալիքներ եւ նրանց հանդեպ ձեռնարկվում էին միջոցառումներ: Նման կոմիսարիատներ էին գործում անգամ Հեռավոր Արեւելքում, որոնք զգալի թվով հայերի հավաքագրեցին եւ ուղարկեցին Հայաստան: Միայն Ուկրաինայի հայկական կոմիսարիատը չորս ամսվա ընթացքում Անդրկովկաս ուղարկեց 5000 հայ զինվոր եւ գորակոչի ենթակա 4000 քաղաքացիներ⁶⁷: Այդ կոմիսարիատի պարտականությունները չէին սահմանափակվում հայ զինվորներին եւ զինակոչիկներին Հայաստան ուղարկելով, այն նաեւ իրեն համարում էր հայերի ներկայացուցիչը Ուկրաինայում, այնտեղ բնակվող հայ քաղաքացիների իրավունքների, Հայաստանում ծառայող զինվորականների ընտանիքների շահերի պաշտպանը:

Նաեւ Մոսկվայի հայկական ռազմական մարմինն էր ղեկավարում տեղական կոմիսարիատների աշխատանքը: Վերջինները ֆինանսավորվում էին Մոսկվայից, կատարում Մոսկվայի հանձնարարությունները:

Հյուսիսային Կովկասի եւ Դոնբասի հայկական ռազմական կոմիսարիատների վրա պարտականություն էր դրված օգնել Բաքվի կոմունային մթերքով, զենքով, մարդկային ուժով, սակայն սկսված քաղաքացիական կռիվները խանգարեցին այդ պարտականությունը լրիվ կատարելուն:

Յարիցինում գործում էր Հայաստանի եւ հայերի պաշտպանության խորհուրդ, որը 1918թ. հունիսի 24-ին գրեց Ստալինին. «Յարիցինում միակ իսկական հեղափոխական մարմինը հանդիսանում է Հայաստանի եւ հայերի պաշտպանության խորհուրդը...»⁶⁸: Այդ խորհուրդը «առանց ընդմիջման» կամավորներ է ուղարկում Բաքվի կոմունայի բանակում ծառայելու, կոմունային նաեւ օգնել է 100.000 ռուբլով:

Հայկական ռազմական խորհուրդը 1918թ. սկզբին տարածեց «Կովկասյան բանակի հայ զինվորներին» հասցեագրված կոչը. «Ընկեր զինվորներ, դուք որպես հայեր, Կովկասի զավակներ, պետք է գիտակցեք, որ եթե ռազմաճակատը մատչելի լինի... բշմամին օգտվելով որեւէ առիթից, ներխուժելու է

⁶⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 7:

⁶⁶ Ն.տ.:

⁶⁷ Ն.տ., գ. 1:

⁶⁸ ПЦАКА, ф. 40435, он. 1, д. 23:

մեր սահմանները եւ այն ժամանակ գեղեցիկ Կովկասը կդառնա դժոխք, ինչպէս այդ կատարվեց Տաճկահայաստանում...»⁶⁹։

Միայն այնպիսի գրչակներ, ինչպիսին էր Ս. Վրացյանը, կարող էր գրել. «Փոխանակ բանակի մեջ վայելած համակրանքից օգտվելով թուրքերի դեմ պատվար կանգնեցնելու, Շահումյանն ու իր ընկերները... աստիճանաբար ճակատից հետ էին քաշում զորամասերը...»⁷⁰։

Իսկ կա՞ր հասարակական մի շերտ, գոնե հայ հասարակությունում, որի վրա վրացյաններն ազդեցություն ունենային եւ նրան ազգափրկիչ գործունեության մղեին։ Ոչ, չկար։ Ի դեպ, դաշնակցության գործիչները բացի Ռոստոմից, 1917թ. եւ մինչեւ Հայաստանի անկախանալը դրանով դեպքից դեպք էին զբաղվում։

Իսկ Շահումյանն ու նրա ընկերները զբաղվում էին։ Այդ նրանց ջանքերով էր, որ ծնվեց Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմատի N325 դեկրետը. «Մույնով հայտնվում է ի գիտություն հեղկոմներին, շտաբներին ու խորհուրդներին եւ խորհրդային մյուս հիմնարկներին, որ հայկական հեղափոխական կազմակերպություններն իրավունք ունեն ազատ կերպով կազմավորել հայկական ջոկատներ եւ դրանց ֆինանսավորման համար հարկ գանձել հայկական բուրժուազիայից։

Խորհրդային նշված հիմնարկները պարտավոր են արգելք չհարուցել դեպի Հայաստան այդ ջոկատների առաջխաղացմանը, որոնք կոչված են պաշտպանելու իրենց հայրենիքը գերմանա-թուրքական բռնակալներից»⁷¹։

«Կարմիր օրեր» թերթը 1918թ. մարտի 29-ին գրում է. «Օդեսայից Թիֆլիս եկավ Հայաստանի կարմիր գումարտակը, որը շուտով կմեկնի ճակատ։ Կամավորների շրջանում տիրում է մեծ ոգետրություն՝ պաշտպանելու Հայաստանը Թուրքիայի բռնապետական ոտնձգություններից եւ միացնելու ազատ Հայաստանը դաշնակցային կապերով ազատ Ռուսաստանի հետ»։ Նույն թերթը մարտի 24-ին գրում է. «Խարկովից գալիս են դեպի ճակատ նորից 400 հայ կամավորներ, որոնցից 200-ին զինել եւ հագցրել են միայն քաղաքի բոլշեւիկները... Հայերի հետ գալիս են նաեւ շատ ռուս կամավորներ»։

Կամավորական ջոկատների անվան տակ գալիս էին նաեւ առանձին զորամասեր. «Թիֆլիս եկած ջոկատը,- գրում է Բաքվի խորհրդի «Известия»-ն 1918թ. իր N112-ում,- որը կռվել է գերմանացիների դեմ Օդեսայում, եկել է այստեղ հայրենիքը պաշտպանելու ընդդեմ թուրքերի։ Այն հանդիսացել է խորհրդային զորամաս, բայց, որպեսզի չցրեին, պարտադրված էր քողարկվել ուրիշ

կարգախոսներով։ Ռամիշվիլու նախարարությունը այդ մասին իմանալուց հետո (ՀՀԴ պարագլուխների քթի տակ), միջոցներ է ձեռնարկում զորամասը գիւնաթափելու համար։ Ջինաթափվելուց հետո զորամասը շարժվում է Ղարաքիլիսայի ուղղությամբ եւ... այնտեղ նրանք նորից զինվել են, իրենց շուրջը համախմբելով հայերին»։

Կամավորներին Հայաստան ուղարկելու հրահանգը տվել էր Լենինը։ «Հազարավոր հայ կամավորների շարքերը մտան նաեւ բազմաթիվ ռուս, բուլղար, հույն եւ այլ ազգությունների հեղափոխական զինվորներ եւ նավաստիներ. 1918թ. մարտ եւ ապրիլ ամիսներին Խորհրդային Ռուսաստանից Թիֆլիս ժամանեց մոտ 5000 զինված կամավոր»⁷²։

Ծովակալ Հ. Իսակովը պատմում է, որ Պետրոգրադի հայկական լիազորներկայացուցչությունում գեներալ Բագրատունին նրան առաջարկել էր մեկնել Հայաստան, որին դաշնակիցները երաշխավորել էին ելք դեպի ծով, այսինքն՝ հնարավորություն ունենալու նավատորմիդ։ Եթե երիտասարդ Իսակովը մեկներ Հայաստան, համոզել էր Բագրատունին, կդառնար հայկական առաջին նավատորմիդի պետ, չնայած ժամանակավորապես պետք է բավարարվեր Վանա լճի ռազմական նավակների հրամանատարությամբ։ «Հավատացնում եմ Ձեզ,- համոզում էր Բագրատունին,- որ երկար չեք մնա լեռներում եւ շատ շուտով պետք է մտածեք Տրապիզոնի մասին»⁷³։

Վ. Ավանեսովը 1919թ. ամփոփելով կատարված աշխատանքները, գրում է. «Մոտիկ անցյալում թուրքական ֆեոդալիզմի արշավի ժամանակ, ինչպես գիտեն ամենքը, Խորհրդային Ռուսաստանը տասնյակ, նույնիսկ հարյուր միլիոնների արժողությամբ զենք եւ զինամթերք է տվել հայերին եւ ուղարկել Հայաստան կռվելու բռնակալության եւ հակահեղափոխության դեմ, հաստատելու Հայաստանի ճշմարիտ ինքնորոշումը եւ վերականգնելու ավերակ հայրենիքը աշխատավորական թշվառ զանգվածների համար»⁷⁴։

Մոսկվայում գործում էր նաեւ Հայկական կոմիտե Ջիվելեզովի նախագահությամբ, որը նույնպես զբաղվում էր հայ զինվորներին Կովկաս ուղարկելու գործով։ «Խորհրդային իշխանությունները,- գրում է Ս. Վրացյանը,- դրան վերաբերվում էին լավ եւ Հայկական կոմիտեի տրամադրության տակ դրեցին Լազարյան ճեմարանի վիթխարի շենքը, որը որոշ առումով վերածվեց հայկական ներկայացուցչության։ Ի դեպ, այդ շենքում էր պահեստավորվում Կովկաս ուղարկվող հայ զինվորների զենքերը։ Մոսկվայի ռազմական օկրուգի

⁶⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 23։

⁷⁰ Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 54։

⁷¹ Բաղայան Խ., Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918թ., Ե., 1962, էջ 48։

⁷² Հայկունի Գ., Երբ մարտնամ, Ե., 1965, էջ 699։

⁷³ Исаков О., Дашнаки теряют своего флагамена. о»и "Литературная Армения", 1957, N4։

⁷⁴ «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», Ե., 1932, էջ 265-266։

պետ Սուրբաթովը հատուկ հանձնարարություն տվեց, որով երաշխավորվում էր այդ շենքի պատկանելությունը Հայկական կոմիտեին...»⁷⁵:

Ռուսական բանակը Հայաստանում թողեց 3000 թնդանոթ, 8000 գնդացիք, մեկ միլիոն ռուս, մեկ միլիարդ փամփուշտ, 100.000 հրացան, 100.000 զինվորական համազգեստ, նույնքան հոգու համար պարեն, 17.000 ձի, մեծ քանակությամբ կառք, ավտոմեքենա, բենզին, կոշիկի կաշի և այլն⁷⁶:

Դժբախտաբար հայոց ռազմական ու քաղաքական իշխանությունները քաղաքնակ անպատասխանատու և ապաշնորհ մոտեցում հանդես բերեցին այս ամենի պահպանության և օգտագործման խնդրում:

Հայաստանում մնացին մեծ թվով ռուս զինվորականներ, մասնավորապես կադրային բարձրորակ սպաներ, ովքեր «հայ վարիչներուն տեղյակ կը պահեին ռազմաճակատի կացութեան մասին և կը թելադրեին անոնց, որ ամեն ճիգ թափեին այդ գիծը հայերով լեցնելու համար»⁷⁷:

Գրեթե ամբողջությամբ ռուսական բանակի մասնագետների ձեռքին էր հայկական ուժերի ռազմավարության ու մարտավարության մշակումը, նրանք էին ղեկավարում ստորաբաժանումների շտաբները, տեխնիկական ծառայությունները:

1918թ. հուլիսի 12-ին Վ. Լենինի, Ֆ. Ռոզինի և Վ. Ավանեսյանի ստորագրությամբ որոշում է հրապարակվում Ռուսաստանի տարածքում հայ ազգային խորհուրդները, անվտանգության խորհուրդները, ռազմահեղափոխական կոմիտեները և հայկական մյուս կազմակերպությունները ցրելու վերաբերյալ, պատճառաբանությամբ, թե դրանք «փաստորեն հանդիսացել և հանդիսանում են Թիֆլիսի Հայ ազգային խորհրդի մասնաճյուղերը... և քողարկվելով Հայաստանի պաշտպանության կեղծ խոսքերի տակ... դառնում են քարոզչություն ուղղված խորհրդային իշխանության դեմ»⁷⁸: Սա սաղորիչ ու դավաճան որոշում էր՝ թելադրված կուսակցության ղեկավար կազմում եղած հայատյաց գործիչների կողմից, օգտագործելով Վ. Լենինի դյուրահավատությունը, թե թուրքամետ կողմնորոշումը հրապարակ հանեցին այդ խայտառակ փաստաթուղթը:

1918թ. հունվարի 15-ին ժողկոմխորհը Մոսկվայի գերմանական դեսպան Միրբախին վերջնագիր է ներկայացնում, պահանջելով ազդել Թուրքիայի վրա՝ վերջ դնելու Հայաստանի հանդեպ վարվող քաղաքականությանը: Ապրիլի 13-ին նոր վերջնագիր ներկայացվեց Գերմանիային՝ դադարեցնել հայ ժողովրդի արյան հեղումը և կանգնեցնել թուրքական արշավանքը Անդրկով-

⁷⁵ Вранян С., նշվ. աշխ., с. 73:

⁷⁶ Միրբախյան Ա., Ինչպես պետք է գրավել Թուրքաստանը, Կ. Պոլիս, 1927, էջ 7-9:

⁷⁷ Անդրեասեան Ա., Ուրուագծեր հայոց սրտմտքեան և հայկական մշակոյթի, Բեյրութ, 1968, էջ 213:

⁷⁸ Декреты Советской власти. т. III, М., 1964, док. N9:

կաս: «Թուրքական զորքերը շարժվում են Բաբումի, Կարսի և Արդահանի վրա,- ասված է վերջնագրում,- ավերելով երկիրն ու ոչնչացնելով գյուղացի ազգաբնակչությանը: Հայերի ապագայի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա...»⁷⁹:

Ապրիլի 13-ին Գ.Չիչերինն ու Լ.Կարախանը Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցչից պահանջեցին, որ Բեռլինը Թուրքիային հետ պահի վայրագություններից, որ «իր կամքից անկախ պատերազմի մեջ քաշված հայ ժողովրդի համար Բրեստի պայմանագիրը դառնա անհամար թշվառությունների աղբյուր»⁸⁰:

⁷⁹ «Կարմիր դրոշակ», 17.04.1918:

⁸⁰ «Известия», 21.09.1918:

ԵՐԶՆԿԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՏՐԱՊԻԶՈՆ

1. ԹՈՒՐԲԵՐԸ ՍԿՍՈՒՄ ԵՆ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ

1917թ. դեկտեմբերի 15-ին Բրեստ-Լիտովսկում Քառյակ զինակցության հետ Խորհրդային Ռուսաստանի կնքած 28 օրվա զինադադարը տարածվում էր նաև Կովկասյան ռազմաճակատի վրա: «Ասիայում՝ թուրքական ռազմական գործողությունների թատերաբեմում, զինադադարը ուժի մեջ է մտնում միաժամանակ»¹: Նաև որոշվեց, որ Կովկասյան ռազմաճակատում երկու կողմերի հրամանատարություններն էին որոշելու դեմարկացիոն գիծն ու միջանց հետ հաղորդակցվելու պայմանները:

Սակայն Կ. Պոլիսը որոշեց անտեսել Բրեստի զինադադարը եւ ինքնուրույն բանակցություններ վարել Անդրկովկասի հետ, ինչը նրա համար շահեկան էր բոլոր առումներով:

Կ. Պոլիսը եւ Թիֆլիսը ջանքեր էին թափում Երզնկան ներկայացնել որպես երկու պետությունների «անկախ» պայմանավորվածության արդյունք: Այդ մասին շատ որոշակի ասված էր Ռ-ՍԴ-Բ(ը)Կ Կովկասյան երկրային կոմիտեի նոյեմբերի 24-ի կոչում՝ Անդրկովկասյան կոմիսարիատի գործիչները «այստեղ հայտարարում են զինադադար եւ ձեզանից (զինվորներից) թաքցնում, որ դա Արեւմտյան ռազմաճակատում կնքված զինադադարի արդյունք է»²:

Իրադարձությունները զարգացան հետեւյալ սցենարով: 1917թ. նոյեմբերի 17-ին Թուրքիայի Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Մ. Վեհիբն առաջարկեց ռուսական հրամանատարությանը կնքել զինադադարի պայմանագիր³: Պրծնալսկին դեկտեմբերի 4-ին Վեհիբի նամակի մասին հաղորդումով հանդես եկավ Անդրկովկասի կոմիսարիատում, որը համաձայնվեց թուրքական առաջարկի հետ եւ թույլատրեց բանակի հրամանատարությանը սկսելու զինադադարի բանակցություններ: Պատվիրակության ղեկավար նշանակվեց ռազմաճակատի շտաբի պետ գեներալ Վիշինսկին: Պատվիրակության կազմում էին Սմիռնովը, Թեիզիան, Ա. Ջամալյանը: Վերջինս

¹ ДВП СССР, т. I, с. 47:

² «Кавказский рабочий», 24.11.1917:

³ «Документы и материалы...», с. 10:

գրեց, թե թուրքերի «առաջարկը քաղաքական լուրջ մտավախություն էր պատճառում հայ ժողովրդին, որը զգում էր թշնամու հետ առանձին հարաբերությունների մեջ մտնելու վտանգը»⁴:

Հայ զինվորների համառուսական առաջին համագումարը գտավ, որ «մինչեւ հաշտության կնքումը Հայաստանը չպետք է դատարկվի զորքերից, որովհետեւ գրավված գավառների պարպումն այն հետեւանքը կունենա, որ մեր ժողովրդի մնացորդները կբնաջնջվեն եւ նրա ազատության հարցը վերջնականապես կթաղվի»⁵: Խոսքն, իհարկե, Արեւմտյան Հայաստանի մասին էր: Հետաքրքիր են այդ նամակի հետեւյալ տողերը հասցեագրված Անդրկովկասյան կոմիսարիատին: «Թուրքիայի դարավոր ստրկության տակ գտնվող հայ ժողովուրդը... այսօր կարող է ազատություն ձեռք բերել ռուսական հեղափոխության շնորհիվ»⁶: Բանակցությունները սկսվեցին դեկտեմբերի 2 (15)-ին եւ տեւեցին երեք օր: Դեկտեմբերի 5-ին ստորագրվեց «Պայմանագիր պատերազմի կովկասյան-թուրքական բանակների միջեւ զինադադարի մասին» փաստաթուղթը:

Պայմանագրի 11-րդ կետում ասվում էր. «Թուրքական հրամանատարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը ստիպելու քրդերին կատարելու զինադադարի պայմանները: Թշնամական գործողությունների դեպքում ռուսական զորքերը սահմանագծում քրդերի հանդեպ կվարվեն որպես իշխանություն չճանաչող ավազակների»: Նաև նշվում էր, որ Մոսկվայի եւ Բեռլինի միջեւ զինադադարի պայմանագրի կնքման դեպքում «դրա բոլոր կետերը կլինեն պարտադիր Կովկասյան ճակատի համար»⁷:

Արգելվեց երկու բանակների միջեւ բաժանարար գիծը խախտել զինադադարի համար սահմանված ամբողջ ժամանակաշրջանում, այսինքն՝ մինչեւ հաշտության պայմանագրի կնքումը:

Վիշինսկին 1917թ. դեկտեմբերի 7-ին գրեց, որ ռազմական գործողությունները դադարեցվել են դեկտեմբերի 5-ին եւ տեւելու են մինչեւ հաշտության կնքումը: «Երկու կողմերը պայմանավորվել են չկատարել ոչ մի այնպիսի օպերատիվ-ռազմավարական տեղաշարժ, զորքերի խմբավորում կամ տեղափոխություն, որ չի մտնում ռազմաճակատային գծի գորամասերը պահեստային զորքերով փոխարինելու շրջանակի մեջ»:

Դեմարկացիոն (բաժանիչ) գիծը ձգվում էր Սեւ ծովից մինչեւ Դերսիմ, ապա «մինչեւ Վանա լիճը՝ լճի հարավային ափի առաջնային խրամատների

⁴ «Հայրենիք», 1923, N3:

⁵ «Հորիզոն», 25.11.1917:

⁶ Ն.տ., 21.11.1917:

⁷ «Документы и материалы...», с. 18-52:

երկարությամբ, Ախրամարի ծոցից ուր վերստ դեպի հարավ»⁸:

1918թ. հունվարի 1-ին Վեհիբը գրում է Օդիշեի ձեռնարկում, որ Էնվերի անունից խնդրում է տեղեկացնել, թե ինչպես է հնարավոր թուրքիայի հարաբերությունները կարգավորել Անդրկովկասի անկախ կառավարության հետ «երկու կողմերի միջև խաղաղ հարաբերություններ հաստատելու նպատակով»⁹:

Հայերը Ռուսաստանից «անկախ» բանակցություններին դեմ էին: «Հորիզոնը» գրեց, որ Անդրկովկասի ժողովուրդները «կողմնակից են պետական միասնության եւ չեն ցանկանում այն անջատել Ռուսաստանից»¹⁰: Հայերը քաջ գիտակցում էին, որ պայմանագրի ստորագրելը կնշանակեր, որ թուրքիան փաստում է Անդրկովկասի անկախությունը:

Երզնկայի զինադադարը թմրեցնող ազդեցություն գործեց թե բանակի եւ թե քաղաքական ուժերի վրա: Տպավորություն այնպիսին էր, որ զենքերը լռել են ընդմիջտ, եւ խոսքը պատկանում էր դիվանագետներին: Դրա դեմ հանդես եկավ Շահումյանը: «Չէ՞ որ մենք դեռ հաշտություն չունենք,- գրեց նա դեկտեմբերի 20-ին.- այլ ունենք միայն զինադադար»¹¹: Եվ ապա. «Եթե թուրքական բանակը չի ուզում եւ չի կարող պատերազմել, ապա քաջ տեղում (այսինքն՝ դիմացը հակառակորդ չունենալու դեպքում) առաջ շարժվել նա ազատ կարող է: Իսկ մենք այնտեղ ունենք շատ գույք, ամրություններ ու հանդերձանք, որոնք պաշտպանության կարիք են զուգում»: Բանակի համընդհանուր հետքաշումը վտանգավոր էր նաեւ նրա համար, որ կատեղծվեր տրանսպորտի, պարենի «ամերեականացի դժվարություններ»: Բայց գլխավորն այն է, որ «ռուսական զորքի անակնկալ հետ քաշվելը չափազանց ծանր դրություն է ստեղծում թուրքահայաստանում: Մենք արդեն գիտենք այն անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հազարավոր զոհերի մասին:

... Ռուսական զորքերի հետ քաշվելու լուրը առաջ կբերի հարազատ վայրերից փախած, մի կողմից՝ թուրքերի ու քրդերի, մյուս կողմից՝ հայերի շարժում: Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու»¹²:

Ի դեպ, սադրանք է կամ չիմանալու հետեւանք, թե բոլշեիկների «եղբայրացման» կարգախոսը Կովկասյան ռազմաճակատում էական ազդեցություն ունեցավ: Թուրքի մեջ նստած էր դարերով ձեւավորված այն գիտակ-

⁸ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 1876, ց. 1, գ. 1:

⁹ "Кавказ", 16.02.1918:

¹⁰ «Հորիզոն», 04.04.1918:

¹¹ Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 3, էջ 37:

¹² Ն.տ., էջ 38:

ցությունը, թե իր ամենավտանգավոր եւ ամենադժվարին թշնամին ռուսն էր եւ նա մեծ զուշություն էր մոտենում կամ ընդհանրապես չէր հավատում նման կարգախոսներին:

Ռուսների հետ «եղբայրացման» մեկ-երկու դեպքեր հայտնի են, բայց դրանք շատ ավելի «եղբայրացման» բեմականացված նմանակումներ էին եւ որեւէ ազդեցություն ունենալ ի գորտ չէին:

Ալեհայտ էր, որ երկու կողմերն էլ պատրաստ չէին մարտական գործողությունների եւ վարում էին ժամանակ շահելու քաղաքականություն: Եթե Բրեստ-Լիտովսկի զինադադարը խախտելու իրենց դիտավորության մասին կողմերը պարտավոր էին միմյանց տեղյակ պահել յոթ օր առաջ, ապա Երզնկայի պայմանագրով՝ 14 օր առաջ: Բայց թուրքը մնում էր թուրք: Չեղավ մի օր, որ օսմանյան բանակը զինադադարը չխախտեր:

Իսկ ռուսական զորքերի հեռանալը ռազմաճակատից գնալով ծավալվում էր: Մի տարօրինակ իրողություն: Ռուսական բանակը հիմնականում տեղակայված էր ու կռվում էր Հայաստանի տարածքում, բայց նրանց թողած ունեցվածքն ու զենքը հիմնականում անցնում էր վրացիներին ու թաթարներին: Կ. Սասունին խոստովանում է, որ միայն Կարսում, Ալեքսանդրապոլում եւ Երեւանում մնացած փշրանքներն էին մնում հայերին¹³:

Ստեղծվեցին հինգը խառը խմբեր հսկելու զինադադարի պայմանների կատարման վրա: Սակայն թուրքերը խաբում էին: Թուրքական զորքերն անընդհատ տեղափոխությունների մեջ էին, դրանք համալրվում էին, արեւմտյան ռազմաճակատից զինվորական ուժեր էին բերվում, զգացվում էր, որ թշնամին լուրջ նախապատրաստություններ էր տեսնում: Համաթրքության ծրագիրը գործողության մեջ էր՝ Ռուսաստանը հեռանում էր Կովկասից, իսկ տեղի մահմեդականությունն էլ պատրաստ էր գրկաբաց ընդունելու թուրքերին:

«Հորիզոնը» միայն 1918թ. մայիսի 10-ին հասկացավ՝ «Ինչ-որ մի մուրձեռք պատերազմի ու խաղաղության սերմեր է փորձում ցանել հայ եւ թուրք ժողովուրդների մեջ...»: Ալեհայտ էր մահմեդական բնակչության անթաքույց թշնամությունը հայերի հանդեպ: Մահմեդական քարոզչությունը հայերի եւ մուսուլման բնակչության առճակատման մեղքը բարդում էր հայերի վրա: Բարձրի «Ենի իկբալ» բերքը գրեց. «Սադրանքի հեղինակը կովկասյան ազգերից մեկն է... այդ ազգը մեր մոտիկ հարեւան ազգայնամուլ հայերն են»:

Կեղծիք էր: Սադրանքների հեղինակները «թրքական մուրձեռներն էին»: Մահմեդական բնակչությունը հայերի հանդեպ ոտնձգություններ էր կատարում Կարսի, Երեւանի, Գանձակի, Էրզրումի գավառների բնակավայրերում¹⁴:

¹³ Սասունի Կ., Տանկահայաստանը ռուսական..., էջ 145

¹⁴ "Документы и материалы...", с. 10

Թուրքերը համառորեն լուրեր էին տարածում, թե պետք է վերականգնվեին 1878թ. սահմանները, այսինքն՝ Թուրքիային էին վերադարձվելու ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Բեռլինի դաշնագրով Ռուսաստանին անցած տարածքները: Գետրոգրադում Ֆրանսիայի դեսպանը հայ պատվիրակներին ասաց, թե Ռուսաստանը այնպիսի վիճակում է, որ հայերին օգնել չի կարող, և հայերը պետք է հույսը դնեն իրենց վրա, այլապես նրանց սպառնում է վերջնական կործանում: Ֆրանսիան համաձայն է օգնելու հայերին, բայց դրամ տալ չի կարող առանց Անգլիայի հետ պայմանավորվելու: Անորոշ էր նաև ԱՄՆ ներկայացուցչի պատասխանը:

Վրացյանը գրում է. «Ոչ առանց հիմքի կը մտածեն, որ Ռուսաստանը անուժ կը լինի դիմադրելու և ստիպուած կը հանձնէ թուրքերուն ոչ միայն Երեւանի, Կարսի և Բաթումի նահանգների մի մասը, այլ դեռ անդին»: Դրան հակառակ Ս. Շահումյանը Կովկասի բանակային համագումարում դեկտեմբերի 23-ին հայտարարեց, որ Ռուսաստանի կառավարությունը ոչ մի դեպքում չի դավաճանի արեւմտահայ ժողովրդի շահերին, նա բանակային խորհրդին կոչ արեց ձեռնարկելու բոլոր միջոցները արեւմտահայերի անվտանգությունն ապահովելու համար:

Հենց սկզբից որոշակի էր, որ թուրքերի համար Երզնկայի զինադադարը ծխածածկույթ էր, ժամանակ շահելու միջոց «Անդրկովկասի պաշտպանության ռազմական ուժերը թուլացնելու և ջլատելու համար»:

Չինադադարի ամբողջ ընթացքում (3-4 ամիս), մինչև Տրապիզոնի բանակցությունները թուրքերի առաջխաղացումը չդադարեց: Այդ պայմաններում առնվազն տարօրինակ էր Թիֆլիսի պատրաստակամությունը Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի բանակցություններ սկսելու: Անդրկովկասի կառավարողները, գրում է Գ. Ղարաջյանը, պետք է նկատի ունենային, որ «զինադադարի պայմանները խախտողի հետ հաշտության բանակցությունների մեջ մտնելը մի շատ համարձակ վճիռ էր»: Եթե այդ գործիչների «խաղաղասիրական տրամադրությունը տարության այն աստիճանի վրա էր կանգնած, որ թելադրում էր՝ ինչ էլ լինե՛ր՝ հաշտություն կնքել կործանարար պատերազմին վերջ տալու համար, այդ դեպքում նրանք պետք է կաշվից դուրս գային գործադրելու բոլոր միջոցները երկրի ինքնապաշտպանությունն ապահովելու...»: Սակայն նրանք ոչ մեկն արեցին և ոչ էլ մյուսը: Դրա փոխարեն ամեն ինչ գործադրվեց երկրամասի իշխանություններին վարկաբեկելու համար, մանավանդ, որ նույն բանը մեծ հաջողությամբ անում էր նաև ինքը՝ կոմիսարիատը:

Լուրջ վտանգի պահին «նրա ներկայացուցիչներն այցելում էին Բաթում, Օզուրգեր, Փոքի դիրքերն ամրացնելու նպատակով, մինչդեռ նրանցից մեկը

չգտնվեց, որ գնար Սարիղամիշ, Կարս կամ Ալեքսանդրապոլ տեղում ծանոթանալու դրությամբ ու դիրքերն ամրացնելու համար միջոցներ ձեռնարկե՛ր»¹⁵:

Ինքնապաշտպանության կազմակերպման հարցում կար երկու մոտեցում՝ Ազգային բյուրոն գտնում էր, որ ռուսական բանակի առկայության պայմաններում դրա անհրաժեշտությունը չկար, իսկ Անդրանիկը հակառակ կարծիքին էր: Նա 1918թ. հունվարին մի առիթով ասել է. «Ասկե առաջ կար Ազգային բյուրոն, որի նիստերին շատ անգամներ ներկայ գտնուած եմ եւ 15 ամիս առաջ գրուցած եմ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութեան մասին, բայց մտիկ ընող եղած չէ, «մարգարետիփին» կոչած են, եւ անցած է այսպես...»:

Ասվածից հետեւում է, որ դեռ 1916թ. կեսերին Անդրանիկը դրել էր արեւելահայության ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրը՝ ենթադրելով, որ տեղի էին ունենալու իրադարձություններ, որոնք թույլ չին տալու Ռուսաստանին մնալու Փոքր Ասիայում: Հայ կյանքի դեկավարներն արհամարհեցին նրա «մարգարետությունը», և դա հանդիսացավ Անդրանիկի ու դաշնակցության պառակտման պատճառներից մեկը: Վ. Թոթովենցը գրում է «դաշնակ ջոջերի բռնած անխոհեմ, անհեռատես դիրքի և Անդրանիկի ունեցած խիստ բացասական վերաբերմունքի մասին դեպի դաշնակցությունը»¹⁶:

Ռուսական բանակի հանդեպ Անդրկովկասի ազգայնականների մերժողական վերաբերմունքի պատճառներից մեկն այն էր, որ նրանց կարծիքով «գորքը բուլշեիկյան վտանգ է» և «պետք է ազատվել գորքից»¹⁷:

1918թ. հունվարի 10-ին Խորհրդային Ռուսաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Ա. Մյասնիկյանը հեռագիր ուղարկեց Անդրկովկաս, որով պահանջում էր հարգել զինվորների իրավունքները, կանխել դասալքությունը, հաշվառել և պահպանել զենքերը, կանխել ինքնակամ զորացումը, պատժել զինվորական հանդերձանքը կողոպտողներին: Խոսքը գնում էր այն մասին, որ Անդրկովկասում պահպանվե՛ր ռուսական բանակը թուրքական առաջխաղացման դեմ: Հեռագրի վրա հայ ազգային բյուրոն մակագրեցին. «Իր հասցեով չի ուղարկված»¹⁸:

Մոսկվան, սակայն հասկանում էր, որ «տունդարծի» ձգտումն այնքան է տիրապետող դարձել բանակում, որ այն հաղթահարելը գործնականում հնարավոր չէր: Եվ ինչպես արդեն ասվել է, որոշեց հեռացող ռուսական զորամասերը փոխարինել ազգային զորամասերով, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունում քննարկվում էր Ռուսաստանում ցրված արեւմտահայերին

¹⁵ Ղարաջեան Գ., նշվ. աշխ., էջ 25:

¹⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 210, ց. 1, գ. 320:

¹⁷ «Կոմունիստ», 22.06.1918:

¹⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 1:

զինելու, նրանցից զինվորական մասեր ձեռավորելու հարցը: 1918թ. մարտի 3-ին շրջաբերական ուղարկվեց հեղկոմներին պահանջով, որ դյուրություններ ստեղծվեին այդ միջոցառման համար, քանի որ այդ գործառնաբերը «վոչված էին պաշտպանելու իրենց (հայերի) հայրենիքը գերմանա-թուրքական բռնադատողներից»: Ռուսաստանի տարբեր մասերում ձեռավորվում էին հայկական մարտական ջոկատներ ու մեկնում Կովկասյան ճակատ: «Հազարավոր թուրքահայեր արձանագրվեցին իբրև զինվոր: Բոլշևիկներն առատորեն զենք, ռազմանյութ, հագուստ, ուտելիք, նույնիսկ թնդանոթներ տրամադրեցին եւ ուղարկեցին Կովկաս ռազմագիծը պաշտպանելու համար: Անոնք իրենց ծախսով նավեր կը տրամադրեին հայ զինուորներուն»¹⁹:

Իսկ թուրքական հրամանատարությունն անում էր հնարավորը իրադարձությունների ընթացքն արագացնելու, մասնավորապես հայերի հանդեպ մահմեդական ազգաբնակչության շրջանում անհանդուրժողականության նոր ալիք առաջացնելու:

Վ. Մինախորյանն իր «1915 թվականը. արհավիրքի օրեր» հուշագրությունում պատմում է, որ երբ Բրեստի դաշնագրի լուրը ստացվեց, մահմեդականների «տարակուսանքներին հաջորդեց զարմանք, զարմանքին՝ խեղճութեան հասնող ուրախութիւն... Ամենալավատես թուրքի մտքով անգամ չէր կարող անցնել բախտի այդպիսի մի շրջադարձ»: Բայց նաև «նորից ծայր տուեց ատելավառ մի հոսանք հայերի դեմ, որ հետեւանք էր ներքին գավառներից հասնող տարօրինակ լուրերի: Իբր թե հայերը սկսել են համատարած ջարդեր կազմակերպել ռուսների կողմից նուսճուած թրքական հողերում:

Հունվարի վերջերին լուր տարածուեց, թե «հայ ավազակախմբերը» Երզնկայի շրջանում հրդեհել են Չեզիդ գիւղը եւ ազգաբնակչութիւնը կոտորել: Նույն բախտին է արժանացել... Կոսկա գիւղը: Եվ այսպես, բոլոր այն վայրերից, որտեղից հեռանում էին ռուս զորքերը, վրա էին հասնում հայ ավազակախմբերն ու բոլորին կոտորում: Նրանք յաճախ խախտում էին զինադաշարը, անցնելով սահմանը՝ ասպատակութիւններ էին կատարում: Թուրք կանանց, աղջիկներին առեւանգում էին, արու բնակչութեան թեւերը կապում ճամբում էին անյայտ ուղղութեամբ ու քնաջնջում...

Փետրվարի սկզբներին պատմում էին, որ, իբր թե, հայերը համախմբել են Երզնկայի շրջանի թուրքերին զինուորական հանրակացարաններում եւ բոլորին կոտորել: Քաղաքի բնակչութիւնը կանչել են «Քիլիսա Մեկտունը» ու նավթ քափելով նրանց վրա այրել են: Մեկ-երկու օրից լուր տարածուեց, որ թուրքական ջարդերը նոր քափ են ստացել... Քենախի խճուղու ուղղութեամբ: Իբր թե

¹⁹ «Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը», էջ 96:

այդ ջարդերը ղեկավարում էր «հին ավազակապետ» Սրվազցի Մուրատը: Ապա այդ կարգի լուրեր հասան Բաբերդի, ԿիւմիսՅիսանի, Վակիի, Կերեքի եւ մինչեւ անգամ ծովեզերքի թուրքերի մասին»²⁰:

Թուրքերն իրենք էին վերապահությամբ վերաբերում այս լուրերին եւ ասում էին, որ դրանք պատրվակներ էին հարձակման անցնելու համար: Եվ իսկապես. «երեք-չորս օր յետոյ լուր հասավ, որ թուրքերը վերագրավել են Երզնկան»: Թուրքական հեռագրական գործակալությունը սկսեց լուրեր հաղորդել. «Առանց դժվարութեան Երզնկայի շրջանից դուրս վանեցինք հայկական զինուած ավազակախմբերին»: «Ավազակները քաշուեցին Մամախարունի ուղղութեամբ: Չորսի եւ Բեջանի մեջ, տաք կռուից յետոյ, նրանք թողեցին 335 սպանուած, վիրավոր եւ ցրտահար դիակներ, 38 ձի, չորս թնդանոթ եւ մեծաքանակ ռազմամթերք»²¹:

Նորից գլուխ բարձրացրեց համաթուրքիզմը: Փառաբանող խոսքեր էին հնչում Վեհիբի եւ Իզեթի հասցեին, թե իբր նրանք էին, որ «ծունկի բերին ռուսներին եւ նրանք են, որ պետք է նորից զգացնեն աշխարհին Օսմանի, Ֆատիհի, սուլթան Սելիմի յաղթական եաթաղանի ոյժը»²²:

Ապա հաղորդեցին, թե հայերը նոր ջարդեր էին կազմակերպել Պլատանայում: Դրան հաջորդեց լուր. «Թուրք եւ ռուս զորքերը Տրապիզոնում հանդիպել էին իրար գրկախառնութեամբ: Բայց այդ պահին պայթել էր քաղաքի գլխավոր զինամթերանոցի պահեստը: Բացեիքաց խոսում էին, թե ռուսներն այնքան մթերք, ռազմամթերք, զենք եւ այլն են թողել Տրապիզոնում, որ պատերազմն այդ ճակատում կարելի էր շարունակել դեռ երկու տարի»: Եվս մի քանի օր եւ նոր տեղեկատվություն. «Առանց դժվարութեան Էրզրումից դուրս մղեցինք հայ ավազակային խումբը: Իլիջայի տակ ավազակները հազարավոր դիակներ թողեցին»²³:

Սրանց հաջորդեց հայ վերապրածների նոր հետապնդումներ: Մամսունում կենդանի մնացած երկու տասնյակ հայերին հրամայեցին ներկայանալ ոստիկանատուն եւ արձանագրվել. խոստանալով «ներում շնորհել», իսկ ով չներկայանար՝ ենթակա էր գնդակահարության: Հունական թաղում թարքված հայերը գնացին գրանցվելու: Գրեթե ոչ ոք չվերադարձավ:

Նույն օրերին լուր ստացվեց, որ Մալաթիայում կախաղան էին հանվել ՀՀԴ Մամսունի կենտկոմի անդամներ Գ. Թերզյանը, Մ. Փիրանյանը, Հ. Պողոսյանը: Նրանց կրծքներին փակցրել էին «Հայրենիքի դավաճաններ» մա-

²⁰ Մինախորեան Վ., նշվ. աշխ., էջ 433-434:

²¹ Ն.տ., էջ 434:

²² Ն.տ., էջ 435:

²³ Ն.տ.:

կազմությունը: Բոլորն էլ մեռել էին քաջաբար: Իսկ Սամսունում իշխանությունները խուզարկություններ էին անցկացնում հույների տներում ու ձերբակալություններ կատարում: Ապա շուկայում կախաղաններ սարքեցին ու հայերին կախաղան հանեցին:

Թուրքերը հայերի ջարդերը գործնականում այդպես էլ չդադարեցրեցին: Գերմանական դիվանագետները, հոգեւորականները եւ այլոք բազմաթիվ անգամներ Բեռլինի ուշադրություն են հրավիրել հայերի աղետալի վիճակի վրա: Հայ կին սոցիալիստները սոցիալիստների բյուրոյից նամակով խնդրեցին միջամտել, քանի որ ռուսական զորքերի հեռանալու հետ զուգընթաց Հայաստանում տեղի էին ունենում նոր ջարդեր²⁴: Նույն ահագնազը հնչեցրեցին Վ. Նաումանը,²⁵ Կ. Աքսենֆելդը²⁶: Բնաջնջման ախտանշանները նույնն էին՝ անբերական երկրամասեր՝ երեխաներին լցնում էին պարկերը ու նետում ծով, ծերերին տանջելով մեռցնում էին, առեւանգում կանանց ու աղջիկներին²⁷:

1918թ. մայիսի 15-ին Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռեուլերը գրում է ռախականցիքը Հերտլինգին. «...Մարտի կեսերին 4-րդ բանակի հրամանատար Ա. Իսան փաշայի հրամանով վերսկսվել են հայերի մնացորդների դեմ միջոցներ ձեռնարկել... հատկապես Մամուրեթ ուլ-Ալիզի վիլայեթում: Բերդաղ եւ Փերի բնակավայրերից Մամուրեթ ուլ-Ալիզի հասցվել են շուրջ 3000 կին եւ երեխա: Դեռահասները շրջալված էին եւ բերվել էին առանձին» ու բանտ նետվել²⁸:

1917թ. վերջերին ռուսական բանակը զբաղեցնում էր Սեւ ծովից՝ Տրապիզոնից արեւմուտք, Գյումուշխանե, Մամախաթուն, Քեմախ, ապա Ալաշկերտի հովտով, Մուշով, Բիթլիսով, Վանա լճի հարավ-արեւմտյան ափով, Ուրմիա լճի հարավային ափերով մինչեւ Սուլթանաբադ ընկած տարածքները:

Ռազմաճակատի երկարությունը՝ 1200 կմ, 1914թ. սահմանից խորությունը՝ 250 կմ, տեղ-տեղ՝ մինչեւ 600 կմ: Դա ավելի մեծ տարածք էր, քան ամբողջ Անդրկովկասը:

Չնայած Կովկասյան բանակի հրամանատարությունն իր բոլոր հիմնարկների հետ շարունակում էր գոյություն ունենալ, բայց այն շուտով վերածվեց մի շտաբի առանց զորքի: Հետեւաբար ոչ հեղինակություն ուներ եւ ոչ էլ ազդեցության ուժ: Ռազմաճակատը պահելու համար մնացել էին միայն հայկական մի

²⁴ R 14099, Ab. 12002/18:

²⁵ Ն.տ., 10314:

²⁶ Ն.տ., 9988:

²⁷ R 14099, Ab. 12601:

²⁸ Deutschland und Armenia, s. 333:

քանի գնդեր: Հետ քաշվելու, ռազմաճակատի գծի երկարությունը փոքրացնելու պլանը մերժվեց: Որոշվեց մնալ գրավված դիրքերում եւ ընդհանուր զորահավաք հայտարարել, պաշտպանել Տրապիզոն-Երզնկա-Մուշ-Վանա ծով գիծը: Հույն այն էր, որ քայքայված էր նաեւ օսմանյան բանակը: Ա. Ջամալյանը, որ Ներսիսյան դպրոցի իր մի խումբ աշակերտների հետ մասնակցել էր մի քանի մարտերի, նման կողմնորոշման համար մեծ դեր խաղաց: Նա վկայում էր, թե ռազմաճակատում յոթ վերստ տարածության վրա ինքը չի հանդիպել ոչ մի թուրք ասկյարի, նրանք բոլորը սովի եւ հիվանդությունների պատճառով դասալքել էին: Դրա փոխարեն այնտեղ էր եւ քաջաբար կռվում էր Սերաստացի Մուրադն իր 400 մարտիկներով: Եթե Մուրադին օգնություն հասցվեր «մի քիզ հող չէր տա բշմամուն»:

Սկսվեց պատերազմը մինչեւ հաղթական ավարտը հասցնելու մի հզոր բարոզություն: Հայտարարվեց ընդհանուր գորակոչ:

Այո, Էնվերին Երզնկայի զինադադարը պետք էր՝ առաջ մղելու Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու գործընթացը: Նրա այդ մղումը հենվում էր կովկասյան հրամանատարության կողմից ստեղծված հանձնաժողովի նախագահ Վիլհիմսկու հավաստիացման վրա, թե կովկասյան հրամանատարությունը բանակցությունների մեջ է մտնում «Կովկասյան անկախ կառավարության» անունից: Տվյալ պահին Էնվերին ուրիշ բան պետք չէր, որովհետեւ Անդրկովկասի անկախանալը նրա առաջ բացում էր Արեւելյի հորիզոնները: Դրանով է բացատրվում Երզնկայում թուրքական կողմի համեստ կեցվածքը: Նա հեշտությամբ համաձայնվեց, որ Արեւմտյան Հայաստանը մնար կովկասյան բանակի կողմից օկուպացված:

Դժվար է ասել ռուսական բանակի հեռանալու հարցում թուրքերի ու սեյմի կառավարության միջեւ որեւէ պայմանավորվածություն եղե՞լ էր թե ոչ, բայց որ այդ խնդրում նրանք համահունչ էին, կասկած չկա: Ինքն անդրկովկասյան հրամանատարությունն էր ռազմաճակատային գծից հետ կանչում ոչ կովկասյան ժողովուրդների ներկայացուցիչներին, եւ ով չէր ենթարկվում այդ հրամանին, զինաթափվում էր: «Սշակը» 1917թ. դեկտեմբերի 17-ին գրում է. «Ճակատի մերկացման մեջ ոչ փոքր չափով պատասխանատու է նաեւ Անդրկովկասի կոմիսարիատը»:

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ Լա Փանուսը հայտնեց Կլեմանտյին, որ եթե Անդրկովկասի սեյմը համաձայնվի անջատ բանակցությունների (Բրեստի) եւ սեպտեմբերի դաշինքի, անգլիացիները կիրառվեն սեյմին տրամադրել խոստացված օգնությունը: Անգլիացիների նպատակն էր կազմակերպել ռուսական նոր կամավորական բանակ եւ ազգային զորքեր ռազմաճակատային գիծը եւ կոմունիկացիաները պաշտպանելու թուրքերից:

Նկատի էր առնվում նաև այն, որ բուրբական էմիսարները, հիմնականում սպաներ, գաղտնի գործունեություն էին ծավալել Բարվում, Ստավրոպոլում, Պետրովսկում եւ այլն²⁹: Նույն ներկայացուցիչը նաև նշում է՝ անգլիացիները լավատես են, որ հայերը սեփական ուժերով կարողանալու են ապահովել Կովկասյան ռազմաճակատի պաշտպանությունը, նկատի ունենալով, որ Սեւ ծովից մինչև Վանա ծով բուրբերն ունեին ոչ ավել, քան ութ դիվիզիա³⁰: Նա նաև պաշտպանում է Պոնտոսի հունական ինքնավարության ստեղծումը, ինչը կհեշտացներ Հայաստանի ելքը Սեւ ծով³¹:

Ֆրանսիայի ԱԳ նախարար Ս. Պիշոնը հավաստիացրեց Պ. Նուբարին, որ Ֆրանսիան պատրաստ է լրացուցիչ օգնություն ցույց տալ հայ բնակչությանը, որպեսզի վերջինս կարողանա կանխել նոր ջարդերն ու հնարավորություն ունենա վերջնականապես բոթափելու օսմանյան լուծը³²:

Հայ գործիչները շարունակում էին պարզ քաղաքական ռոմանտիզմի պարասրահում:

Պ. Նուբարը կաթողիկոսին խորհուրդ էր տալիս այնպիսի քայլեր չկատարել, որոնք կարող էին գրգռել մահմեդականներին ու վրացիներին մինչև այն պահը, երբ հայկական զինված ուժերը վերահսկողության տակ առնեին Արևմտյան Հայաստանի վիլայեթները³³: Այդ կարծիքի հետ համաձայն էր նաև Կլեմանտոն³⁴:

Պիշոնը սիրում էր հավաստիացնել. «Ֆրանսիան հայերին համարում է իր դաշնակիցը, որը պայքարում է գերմանո-բուրբական լծից ազատվելու համար»³⁵:

Ա. Չոպանյանը 1917թ. հոկտեմբերի վերջերին ֆրանսիացիներին զուշացնում էր «համախաղամականության վտանգից», որի կենտրոնը համարում էր Կովկասը, որտեղ այդ չարագույժ տեսության կողմնակիցները խառնվում էին բոլոր հարցերին իրենց նեղ ազգայնամոլական-քննամական դիրքերից:

«Մահմեդականները Կովկասում կազմակերպվում են,- գրում է Ա. Չոպանյանը,- եւ առաջին իսկ հարմար պահին հարձակվելու են հայերի եւ ռուսների վրա, ձեռք են մեկնելու բուրբերին եւ կփորձեն իրենց հետեւից տանել նաև պարսիկներին: Իրավիճակը հայերի համար բավականին բարդ է. նրանք գործում են զուսպ եւ ձգտում են պահպանել համերաշխություն եւ բարի հարաբերություններ բոլոր ժողովուրդների հետ»³⁶:

²⁹ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N497:

³⁰ Ն.տ., փաստ. N502:

³¹ Ն.տ., փաստ. N477:

³² Ն.տ., փաստ. N 479:

³³ Ն.տ., փաստ. N474:

³⁴ Ն.տ., փաստ. N470, 473:

³⁵ Ն.տ.:

³⁶ Ն.տ., փաստ. N396:

Անհանգստացած էր նաև վրաց հասարակության մի մասը: Վրաստանի պատրիարքը 1918թ. հունվարի 22-ին դիմեց Էջմիածնի կաթողիկոսին հավաստիացնելով, թե ինքը հավատարիմ է հայ-վրացական դարավոր բարեկամությանը³⁷:

Թիֆլիսում քաջ գիտակցում էին, որ բուրբական հարձակումն անխուսափելի էր եւ ինչ որ քայլեր կատարում էին ճակատն ամրացնելու համար: Երզնկայի ուղղությամբ զնդապետ Մորելի հրամանատարությամբ ստեղծվեց ժամանակավոր շտաբ, որին հանձնարարված էր պաշտպանելու ռազմաճակատի այդ հատվածը «մինչև հայկական դիվիզիայի շտաբի ժամանումը»³⁸: Թիֆլիսում շատ աղոտ պատկերացում ունեին ռազմաճակատի առաջին գծի վիճակի մասին, այլապես հապճեպություն հանդես չէին բերի ռուսական զորամասերն ազգայններով փոխարինելու գործում: Ընդ որում՝ ստեղծվում էին ոչ միայն անդրկովկասյան երեք ժողովուրդների, այլև ուկրաինական, ասորական, հունական, լեհական, ռուսական ազգային զորամասեր, սկզբունքով. «Յուրաքանչյուրը կարող է ծառայել այն ազգային զորամասում, որտեղ ցանկանում է եւ որտեղ նրան կընդունեն»³⁹:

Տրապիզոնի Տրիպոլի տեղամասի հրամանատար Հաջի Համզին 1918թ. հունվարին հեռագրեց. «Ռուսական կայազորներն արդեն հետ են քաշվել, զորամասերը Տրապիզոնից տեղափոխվում են Օդեսա: Ռուսներից հետո երևում են հայկական ավազակախմբերը, որոնք Հայաստանի անկախությունից հուսախաբ, թշնամական կեցվածք են որդեգրել ռուսների հանդեպ եւ պատրաստվում են դիմադրել բուրբական աշխուժացմանը: Եթե այս տեղեկատվությունը հաստատվի... անհրաժեշտ է զգուշանալ Թուրքիայում մնացած հայերի հանդեպ վրեժի գործողություններից»⁴⁰:

Նույն իրողությունը փետրվարի 3-ին հաստատեց Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին. «...Այստեղի կառավարական շրջաններում չափազանց անհանգստացած են Կովկասյան ճակատից ստացված հաղորդագրություններից: Ռուսական զինվորական ստորաբաժանումները, որոնց հետ կնքվել է զինադադար, հեռացել են եւ նրանց փոխարեն եկել են հայերից ու վրացիներից կազմված ավազակախմբեր: Թուրքերին թվում է, որ այդ ավազակախմբերը կհարձակվեն տեղական մահմեդական բնակչության վրա»⁴¹:

Հաջորդ օրը նա գրում է, թե Խալիլը պատմեց «հայկական զավառներում

³⁷ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N499:

³⁸ АВПР. ф. 2100, оп. 1, д. 11:

³⁹ Ն.տ., Պ. 736:

⁴⁰ ОЗФТ-В-1110, Քաղաքական արխիվ, 939, 32:

⁴¹ Ն.տ., W-946, 26:

հրոսակախմբերի ավագակուրյան մասին, որոնք Երզնկայի եւ Էրզրումի միջեւ ընկած տարածքում թուրք բնակչության հանդեպ թույլ են տալիս կատաղի քարքարոսություն»⁴²:

Փետրվարի 9-ին նա տեղեկագրեց. «Հավաստի աղբյուրներից տեղեկացել եմ, որ Էնվեր փաշան հրամայել է Վեհիբ փաշային մտնել ռուսների կողմից գրավված մարզերը»⁴³: Դիվանագիտական գրագրություններում երեւացին լուրեր Կովկասը ազատագրելու համար «մուսուլմանների ապստամբական շարժման նախապատրաստման մասին»: Պատերազմի նախապատրաստությունն իրականացվում էր մի քանի ուղղություններով: Նախ, վերախմբավորվում էին եղած ռազմական ուժերը, երկրորդ՝ մյուս ռազմաճակատներից զորքեր էին տեղափոխվում արեւելք, երրորդ՝ ուժեղացվում էր Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը: 1917թ. վերջերին գլխավոր հրամանատար նշանակվեց ռազմական բարձրագույն կրթությամբ ունակ զորահրամանատար, ազգությամբ ալբանացի Վեհիբը: Նա թուրքական բանակի մարտական գործողությունների համար պատրվակ դարձրեց մահմեդական բնակչության վրա հայկական մարտական ուժերի հարձակումները: Վեհիբը առանձնակի էր անդրադառնում «հայերի թուրքաջինջ գործունեությանը» Երզնկայի շրջանում եւ թուրքական հարձակումը կոչում էր «մարդասիրությանն անհրաժեշտ պարտք»:

Եվ այսպես. Երզնկայի ռազմաճակատը ձգվում էր 70 կմ: Դեկտեմբերի 17-ի զինադադարով ռուսական զորքերը հետ քաշվեցին, եւ մնացին հիմնականում հայերը: Հայկական ուժերի թվի մասին տվյալները խիստ խայտաբղետ են՝ սկսած 2000-ից մինչեւ 40.000 մարդ⁴⁴: Հայտնի է, որ ռազմաճակատի այդ հատվածում կային հայկական չորս վաշտեր (400 հոգի), արեւմտահայ կամավորների եւս չորս վաշտ (500 հոգի), հեծելազորային հարյուրյակ, վեց հրանոթ, Փամբի գումարտակը (350 հոգի) եւ մի քանի ուրիշ մարտական ջոկատներ⁴⁵:

Չնայած Ա. Օհանջանյանի գիրքը երկրորդ անունն ունի՝ «Անհերքելի վկայություններ», բայց նրա նշած 40.000 թիվն ավելի քան հերքելի է: Ճշմարտության մոտ է 2000-ը: Հայկական ուժերի փոքրաթվության հետեւանքով էր, որ քրդերը աշխուժացան ու մեկը մյուսի հետեւից հարձակումներ էին գործում: Գնդապետ Մորելը հարկադրված էր իսկական պատերազմ մղել քրդերի դեմ,

⁴² Beylerian A., նշվ. աշխ., N2724, 71, 72:

⁴³ Ն.տ.:

⁴⁴ Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 129:

⁴⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 5 (Նազարբեկյանի հուշեր), էջ 72:

այդ պատճառով նաեւ խախտել զինադադարի գիծը: Դա պատրվակ էր եւ Վեհիբը 1918թ. փետրվարի 1-ին գրեց ռուսական հրամանատարությանը, թե ռուսների հեռանալուց հետո հայ հայդուկները կոտորում են թուրք ազգաբնակչությանը: Վեհիբին պատասխանեցին, թե քրդական հրոսակների հարձակումների հետեւանքով հարկադրված են եղել նրանց հետապնդել ինչը երբեմն հանգեցրել էր մահմեդականների հանդեպ անթույլատրելի արարքների»⁴⁶: Սակայն գործը սրանով չվերջացավ, թուրքերը դրա շուրջ «համաեվրոպական աղմուկ» բարձրացրեցին: Վեհիբի հեռագրից չորս օր անց Խալիլը Պալավիչինին նույնպես տեղյակ պահեց, թե հայկական մահաճգներում «հայ պարտիզանները» իրականացրել են թուրք բնակչության «ջարդեր»⁴⁷:

Փետրվարի 14-ին Վեհիբը վերջնագիր ներկայացրեց կովկասյան բանակի հրամանատարությանը, թե Մորելն այլևս չի կարողանում վերահսկել ռազմաճակատը, քանի որ Սեբաստացի Մուրադն իր հայդուկներով դաժանաբար հալածում է թուրք բնակչությանը: Եվ ինքն այլևս ի վիճակի չէ սանձելու իր գործառններին եւ հարկադրված է «մարդասիրական պատճառներով որոշ տեղերում խախտելու սահմանագիծը»⁴⁸:

Թուրքասեր Օդիշեյիձեն պատասխանեց, թե «հայերի գազանությունների» մասին լուրերը «շատ եւ շատ չափազանցված են», բայցեւայնպես, կձեռնարկի բոլոր միջոցները «թուրք բնակչության շահերն ու անվտանգությունն ապահովելու» եւ «մեղավորներին խստորեն պատժելու համար»⁴⁹:

Քիչ անց Վեհիբը հրապարակ նետեց մի սաղրանք եւս՝ Երզնկայում հայերը հրդեհել էին «1500 մուսուլմաններով լի մի տուն եւ երեք ուրիշ տներ, որոնք լցված էին կանանցով ու երեխաներով»:

Պալավիչինին երկար տարիներ էր պաշտոնավարել Կ. Պոլսում եւ քաջատեղյակ էր «թուրքական բնակչությանը»: Փետրվարի 9-ին նա հեռագրեց Վիեննա, թե հայկական գազանությունների մասին խոսակցությունն ամբողջությամբ համապատասխանում է «ավանդական մեկնակերպին, ինչը Բ. Դուռը շատ հնուց տարածել է քրիստոնյաների յուրաքանչյուր կոտորածի ժամանակ: Ոչ մի նորություն չկա, երբ ռայաների անհույս վիճակը նրանց մղել է բռնության, որն անչափ ուռճացնում են եւ շարժմանը վտանգավոր բնույթ հաղորդում, մինչեւ որ թուրքերը հարկադրված են լինում դրան վերջ տալ...» այլևայլ միջոցներով⁵⁰: Տվյալ դեպքում Էնվերը Վեհիբին հրամայել էր «մտնել

⁴⁶ Wien HHSTA PA 1833, Hang, 20 Mai 1917, N20028:

⁴⁷ Ն.տ., Stockholm, 22 Mai 1917, N159:

⁴⁸ “Документы и материалы...”, с. 41:

⁴⁹ Ն.տ., с. 46-47:

⁵⁰ Wien HHSTA PA 1833, 22 Mai 1917, N159:

ոռաների գրաված տարածքները», այսինքն՝ զավթել Արեւմտյան Հայաստանը: Ու միաժամանակ աշխարհին ներկայացնել՝ թե այդ «գործողությունը ձեռնարկվում էր սոսկ անհրաժեշտության մղումով եւ հումանիզմի ու քաղաքակրթության պարտքով»⁵¹:

Քեփրիքոյի հայկական զինվորական կոմիտեի նախագահ Պետրոսյանը գրեց Թիֆլիս. «Դրությունն անելանելի է: Բանակի ամբողջ ունեցվածքը մատնված է անտերության: Պարետներ նշանակելու եւ անբարեխիղճներին փոխելու համար չկան սպաներ... Գրասենյակները, հեռագրասարքերը քառուսյին վիճակում են եւ չեն գործում: Պատճառը մասնագետներ չլինելն է: Բազմիցս արված դիմումները ոչ մի արդյունք չեն տվել: Սա մեր վերջին դիմումն է»⁵²:

Իսկ Մորելը տեղյակ պահեց. «Մեր թիկունքը փախած մահմեդական բնակչության շրջանում քարոզչություն է տարվում կովկասյան ուժերին վճռելու Երզնկայի կողմերից...»

Ինձ վստահված գորքը ձեռնարկված է Երզնկայում կազմավորված Թուրքեստանյան վաշտի 3-րդ եւ 4-րդ գումարտակներից. այն ներառում է նաեւ հայկական առաջին գնդի երկրորդ կամավորական վաշտը, հեծյալ հարյուրյակը, չորրորդ հրանոթային դաշտային թնդանոթների ձիա-լեռնային դասակը, Քեմախի, Սըվասի, Տրապիզոնի խճուղու եւ Տալիսա ու Պիզվան գյուղերի պահպանաջոկատները: Չեխիկում առաջին կամավորական վաշտն է, երրորդ կամավորական վաշտի մի մասը, Խանում եւ Չորսում մեկական դասակ 3-րդ կամավորական վաշտից. Ֆամում առանձին կամավորական ջոկատ... Երբ համալրում ստացվի, կայազորներ կդնեն Կարջիլում եւ Մամախաթում... Թուրքեստանյան դիվիզիան, բացի 15-րդ եւ 19-րդ գնդերից, խոստանում է մնալ մինչեւ հունվարի վերջը՝ պայմանով, որ ծառայությունը տանեն Երզնկայում եւ մերձակայքում:

15-րդ վաշտը, որ գեներալ Լյախովի թույլտվությամբ մեկնելու էր վերջին է-շելոնի հետ, Չեխիկից դուրս եկավ հունվարի 5-ին, 19-րդ գունդը համաձայն հայկական զինվորական կազմակերպության ներկայացուցիչների խոստման թիկունք կուղարկվի հունվարի 10-ից հետո... Մյուս հրաձգային վաշտերի տրամադրությունը... բավարար է, իսկ կամավորներինը՝ գերազանց»⁵³:

Հունվարի 27-ին քրդերը հարձակվեցին Սուր Փիրան գյուղի վրա, բայց 60 զոհ տալով նահանջեցին, մույն օրը բախում տեղի ունեցավ Երզնկա-Էրզրում խճուղու վրա գտնվող Խան գյուղի մոտ:

⁵¹ “Документы и материалы...”, с. 49:
⁵² Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 117:
⁵³ Ն.ս.:

Չյունառատ ձմեռ էր եւ անհավանական էր թվում, թե նման պայմաններում թուրքերը ռազմական ուժեր կկուտակեն ճակատի այդ հատվածում: Էրզրումում գտնվող բանակային շտաբի հետ կապ չկար՝ կապավորները դասալքել էին: Բայց Մորելը կարողանում է գլխավոր հրամանատարությանը տեղյակ պահել վիճակի մասին: «Վեհիբ փաշան զգուշացնում է ինձ՝ նկատի ունենալով ստեղծված վիճակը, ինքը ստիպված է, չխախտելով գինադադարը, մի քանի զորամասեր մտցնել մեր զբաղեցրած շրջանները»: Դրան Թիֆլիսից պատասխանում են. «Հրամայում են, թուրքական զորքերի կողմից Երզնկայի վրա հարձակման դեպքում, որի մասին, հավանաբար, դուք կզգուշացվեք թուրքերի կողմից, առանց կռվի առիթ տալու, հավաքեք ջոկատը եւ սկսեք նահանջել դեպի Կարճըլա: Չշտապեք, եթե հնարավոր է, թուրքերին կանգնեցրեք Չեխիկից արեւմուտք՝ դեպի Եփրատի կիրճը տանող ճանապարհի սկզբին, որպեսզի հնարավորություն տաք Չեխիկից եւ Փամբից դուրս բերել պաշարները: Երզնկայում եւ մյուս կետերում եղած պաշարները ոչնչացնել»⁵⁴: Հրամանատարության նման պարտվողական-նահանջելու տրամադրությունն ու համառորեն պտտվող լուրերը, թե թուրքերը ընդհանուր հարձակում են սկսելու, իհարկե, ազդեցություն գործում էր հայ մարտիկների վրա:

Փետրվարի 9-ին Վեհիբը հեռագրում է Անդրկովկասի սեյմի զորքերի գլխավոր հրամանատար Օդիշելիձեին, թե «հայկական բռնությունները թուրքական զորքերին ստիպեցին անցնել դեմարկացիոն գիծը՝ դրա այն կողմի օսմանցի մահմեդականներին փրկելու եւ պաշտպանելու, կարգուկանոնը եւ հանդարտությունը վերականգնելու համար: Այդ քայլն ընդհանուր ոչինչ չունի ռուսական զորքերի դեմ թշնամական գործողությունների հետ»⁵⁵: Նույն օրերին նա հեռագրեց նաեւ Լեբեդիսկուն. «Բարեկամաբար եւ ամբողջ արտով հավատացնում են, որ Երզնկայի ժամանակավոր պայմանագիրը պահպանում է իր ուժը՝ բացի դեմարկացիոն գծին վերաբերող հոդվածից, ինչը ռուսական զորքերի հեռանալուց հետո ինքնաբերաբար կորցնում է իր նշանակությունը»⁵⁶: Լեբեդիսկին հերքեց Վեհիբի փաստարկները «հայկական վայրագությունների» վերաբերյալ, միաժամանակ շեշտելով, թե կովկասյան բանակի ըստ ազգության վերակազմությունից հետո էլ դրա զորամասերին, որ ազգության էլ պատկանեն, պետք է դիտել որպես ռուսական բանակի լիիրավ ստորաբաժանումներ⁵⁷:

⁵⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 374, ց. 1, գ. 30:
⁵⁵ Ն.ս., ֆ. 200, գ. 19:
⁵⁶ “Документы и материалы...”, N49:
⁵⁷ Ն.ս., ՊՏՍ, N33:

Բայց դա թուրքերին չկանգնեցրեց եւ նրանք անցան հարձակման ամբողջ ռազմաճակատով՝ սկսած Դիարբեքիից մինչեւ Տրապիզոն: Օպերատիվ տվյալներով նրանք ունեին միայն հինգ դիվիզիա եւ քրդական համադիր զինոց:

Կոմիսարիատի տրամադրության տակ կար 35.000 զինվոր, հայ կամավորներ եւ ռուս սպաների 300 հոգանոց գումարտակը. Դրան գումարած վրացական կորպուսում եղած 10.000 զինվորը:

Փետրվարի 10-ին սեյմը քննարկեց Վեհիբի հեռագիրը Անդրկովկասի «անկախ կառավարության» հետ հաշտության պայմանագրի բանակցություններ սկսելու վերաբերյալ եւ համաձայնվեց հետեւյալ պայմանով՝ կնքել տեսական ու կայուն հաշտություն, պահպանել 1914-ի սահմանները, Անդրկովկասում ապաստանած ավելի քան 200.000 արեւմտահայերին վերադաճնել իրենց բնակավայրերը եւ պայմաններ ստեղծել նրանց գոյատեւելու համար⁵⁸:

Նույն օրը թուրքական մի զորամաս հարձակման անցավ ու գրավեց Չարդախլու գյուղը, իսկ երեք օր անց թուրքերը սկսեցին ընդհանուր հարձակումը՝ Քեմախ-Սերաստիա խճուղով առաջացան դեպի Երզնկա եւ փորձեցին շրջապատել քաղաքը: Մորելն անհրաժեշտ ուժեր չունեի հակահարված տալու թուրքերին եւ քրդերին: Հայկական ջոկատը կենտրոնացավ Չեյխի մոտ, այսինքն՝ Երզնկան բողեց: Նահանջողներն իրենց հետ տանում էին նաեւ փախստական հայերին եւ այդ օրը կտրեցին անցան 40 կմ: Առատ ձյուն, մառախուղ, դարանակալ հրոսակների հարձակումներ, սառնամանիք եւ կիսամերկ կանայք, երեխաներ, ճիշ, աղճուկ... Ջոկատը հետ շարտելով քրդերի հարձակումները հասավ Չորս, որը կիրճի մեջ էր: Փետրվարի 14-ին քրդերը բարձունքից խաչածե կրակի տակ առան հայերին: Լուր ստացվեց, որ մոտենում են նաեւ թուրքական զորքերը: Մուրադի խումբը հինգ ժամ տեսած մարտերից հետո կարողացավ քրդերին ցաքուցրիվ անել ու ճանապարհի բանալ նահանջի համար: Հայերը տվեցին 25 սպանված եւ 120 վիրավոր: Քրդերն այդ ընթացքում այրեցին Եփրատի կամուրջը: Այլեւս հեռանալն անհնար էր, եւ սկսվեց կատաղի ճակատամարտ: Մեծ զոհերի գնով, վիրավորներին ու հիվանդներին ձեռքերի վրա անցկացրեցին Եփրատն ու շարժվեցին դեպի Էրզրում: Միայն մեկ օրում՝ փետրվարի 16-ին, նահանջողները տվեցին 23 սպանված, 61 վիրավոր եւ 90 հոգի ցրտահարվեց: «Փետրվարի 17-ին ժամը 1-ին ջոկատը հավաքվեց Մամախաթուն, պահապաններ դնելով Եփրատի հունի մոտ: Քարճիլի եւ Մամախաթունի արանքում ջոկատին միացան եւս շուրջ 2000 փախստական հայեր: Անհրաժեշտ էր հոգալ այդ մարդիկը կռնակ ուղարկելու մասին, վասնզի առանց այն ալ սակավաթիվ ջոկատը հարկադրուած էր, իբրեւ պահապան, ուղեկցել ծերունիներու, կիներու եւ երեխաներու

⁵⁸ Wien HHSTA PA 1835, Stockholm, 8 November 1918, N11349

խելակորույս բազմութեան, պարագայ մը, որմն մեծապես կը տուժեր ռազմական գործունեութիւնը»⁵⁹:

Բայթուրդում միանալով տեղի կայագորին Մորելը իր ջոկատը շարժեց դեպի Խան, որտեղ ռազմական պահեստներն էին: Լուսաբացին նրանք նորից ընկան քրդերի խաչածե կրակի տակ: Փետրվարի 19-ին հասան Ենիքոյ, իսկ հինգ օր անց Էրզրումում էին: Այս ջոկատի հիմքի վրա ստեղծվեց Երզնկայի գունդը: Ջոկատը նահանջի ճամփին կորցրել էր իր կազմի գրեթե կեսը:

Մորելի անհաջողությունում փոքր չէր Օղիշելիճեի՝ դավաճան ձեռնարկումների դերը: Նա թուրք հետախույզի միջոցով Վեհիբին նամակ ուղարկեց եւ հասկացրեց, թե ռուսական զորքերը լքում են ռազմաճակատը⁶⁰: Նույն ժամանակ նա ցրեց Ժամկոչյանի մարտկոցը, որը կազմ ու պատրաստ էր մարտի մեջ մտնելու, իսկ մյուս մարտկոցին հետ քաշեց դեպի Սարիղամիշ: Նա նաեւ հրամայեց «չոչնչացնել պարենամթերքի պաշարները, չպայթեցնել պահեստները, այլ այդ ամենը պահպանել ու հանձնել թուրքերին...»⁶¹:

Նույն ժամանակ թուրքական 2-րդ կորպուսը հարձակման անցավ Տրապիզոնի ուղղությամբ եւ փետրվարի 17-ին գրավեց այն, իսկ 4-րդ կորպուսը առաջանում էր դեպի Բայազետ-Վան գծով:

Երզնկայի անկումը (հունվարի 31-ին) ցնցեց հայությանը: Եղեռնից վերապրած ու հայրենի օջախ վերադարձած հայը խուճապահար փախավ:

Տագնապի մեջ էր ամբողջ հայ ժողովուրդը, որովհետեւ, եթե ընկներ նաեւ Էրզրումը, բնաջնջման բոթը կհասներ Երեւան: Բայց նաեւ սկսվեց ժողովրդական պատերազմ, որն իր մեջ առավ Երզնկա-Կարինից մինչեւ Վասպուրական: Կռիվների բոցերի մեջ էր Խնուսը, Սուլուխից Ախլաթ ընկած բարձունքները:

Թուրքերը գալիս էին դեպի Անդրկովկաս: Գերմանական «հմպերիալիզմի ուժեղ թեւերի տակ պատասպարված տաճկական նիհար ինպերիալիզմը առաջնորդվում էր նույն նպատակով: Բռնության եւ ստրկության, քաղցի ու մերկության այդ երկիրը պատրաստ հող է անզուսպ ընթրստության սերմերի համար: Եվ դա գիտեն տաճիկ տգրուկները:

...Այն միտքը, որ հեղափոխությունը կարող է Կովկասից անցնել այդ սովալյուկ երկիրը, սուկացնում է նրանց: Սոսկացնում է նրանց նաեւ այն, որ խորհուրդների իշխանությունը Կովկասում կարող է տարածքային վնաս հասցնել նրանց գիշատիչ իշխանությանը... պնդելով եւ պաշտպանելով ժողկոմխորհի դեկրետը Տաճկական Հայաստանի ինքնորոշման վերաբերյալ»⁶²:

⁵⁹ Ղորղանեան Պ., Հայերի մասնակցությունը Համաշխարհային պատերազմին, Փարիզ, 1924:

⁶⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 29:

⁶¹ Ն.տ.:

⁶² Կասյան Ս., ԸԵ, էջ 100-101:

Ռուսական բանակի հեռանալը նշանակում էր Ռուսաստանի ազդեցությունը հետագա բուլացում էր նրա բշնամիների՝ Անտանտի պետությունների և Թուրքիայի, ազդեցության ուժեղացում:

Բայց երևի ռուսական բանակի հեռանալը Վրաստանի համար շատ ավելի կողմնորոշման փոփոխություն էր, իսկ Ադրբեջանի համար վարդապետ Երզնկանի իրականացում, ապա Հայաստանի ու հայերի համար՝ կործանման ու բնաջնջման վտանգ, որովհետև թուրքերը ռազմաճակատի մերկանալն անմիջապես օգտագործեցին Արեւմտյան Հայաստանին նորից տիրանալու և շարժվելու դեպի Կովկաս:

Դե յուրե ոչ անկախ Անդրկովկասը դը ֆակտո անկախանալուց մի ամիս անց սկսում են տեղավ հեռագրեր. Երզնկայում գտնվող կորպուսը «ինքնագլուխ բողոնում է դիրքերը, և այս նահանջը սպառնում է ճակատն իսպառ մերկացնել: Այս հանգամանքներում հայկական զորամասերի ճակատ ուղարկելու հապաղումը և, իբրև դրա հետեւանք, Երզնկայի գրավումը ոչ միայն թուրքերի, այլև քրդերի կողմից» հրամանատարությանը հարկադրում էր «պարպել ամբողջ շրջանը», ինչը հանգեցնելու էր Արեւմտյան Հայաստանի կորստին⁶³: Տաս օր անց, 1918թ. հունվարի 8-ին Կովկասյան բանակի շտաբը հարկադրված եղավ արձանագրել, որ Երզնկայից ռուսական զորամասերի հեռանալը «ճակատագրականորեն առաջացրել է զինադադարի խախտում թուրքերի կողմից», ինչն իր հերթին կհանգեցնի Կովկասյան ռազմաճակատը ռուսների կողմից ամբողջությամբ լքելուն և Արեւմտյան Հայաստանից հեռանալուն:

Գնալով լքելու, հեռանալու գործընթացը թափ էր առնում: Եթե հունվարին խոսքը գնում էր Երզնկայում գտնվող զորքերի դասալքության, ապա հունիսին՝ Ալաշկերտում եղողների մասին: Ռուսական բանակի 4-րդ կորպուսի հրամանատարը հայտնում էր. «Կորպուսի փոխադրական մասերը, կայանների գորքերը, զինվորները, հիմնարկությունները հեռանում են անկարգ: Անկարգությունները սաստկանում են օրեցօր»:

2. ՄԻՆՉԵՎ ՏՐԱՊԻՉՈՆԻ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿՍՎԵԼԸ

1918թ. հունվարի 1(14)-ին, այսինքն՝ Երզնկայի զինադադարից 26 օր անց Վեհիքը Էնվերի հանձնարարությամբ հեռագրեց Թիֆլիս առաջարկությամբ բանակցություններ սկսել հաշտության պայմանագիր կնքելու համար: Նա գրում էր, որ պատրաստ է Կովկասի անկախ կառավարության հետ բանակցությունների համար պատվիրակություն ուղարկել Թիֆլիս:

⁶³Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 54:

Այդպես էր: Վեհիքն ամբողջ ռազմաճակատով հարձակում ծավալելուն գուզընթաց Անդրկովկասի կոմիսարիատին հորդորում էր երկրամասը անկախ հռչակել: Նրա փետրվարի 1-ի հեռագիրը կոմիսարիատի ընդլայնված նիստում քննարկելու ժամանակ հանդես եկավ Լեբեդինսկին (Պրժեւալսկին հունվարի 5-ին հրաժարական էր տվել), որ հերքեց թուրքական պնդումը, թե ընդհանուր հարձակման պատճառը թուրք բնակչության հանդեպ գործադրված գազանություններն էին: «Հայերի ելույթները,- ասաց նա,- որոնք չափազանցեցված են թուրքերի կողմից, պատասխան են քրիստոնյա բնակչության նկատմամբ քրդերի մշտական ահաբեկչության և թալանի: Ռիզե քաղաքը, որի մասին գրել էր Վեհիքը, այրվել ու թալանվել էր ոչ թե հայերի, այլ քաղաքը լքած ռուսական զորամասերի կողմից»⁶⁴:

“Кавказское слово”-ն հունվարի 5-ին գրում է, որ Թուրքիան առաջարկել է անջատ հաշտություն «Անդրկովկասի անկախ և ինքնուրույն կառավարությանը» և դա մի ժամանակ, երբ պատերազմող կողմերի «բանակները առանց հաշտության պայմանագիր կնքելու արագ հետ են քաշվում իրարից, ոչ միայն հետ են քաշվում, այլև քայքայվում են» և հնարավորություն կա կնքելու շահեկան պայմանագիր: «Սակայն ցավն այն է, որ այդ առաջարկության մեջ կա անավոր վտանգ: Թուրքիան դիմում է Անդրկովկասի անկախ պետությանը: Այդպիսի պետություն չկա: Երկրամասում ոչ մի ժողովուրդ, ոչ մի կուսակցություն Անդրկովկասը չի համարում ինքնուրույն և անկախ պետություն: Անդրկովկասի բոլոր քաղաքացիների համար մեր երկրամասը հանդիսանում է ամբողջական Ռուսաստանի անբաժան մասը: Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը ստիպողական և ժամանակավոր քայլ է... Ինքնուրույն խաղաղություն կնքելը կտանի դեպի (Ռուսաստանի դաշնակցային պետության) քայքայում...»

Կովկասի անկախ կառավարության անունով Էնվերից ստացված հեռագիրը Գեգեչկորին հրապարակեց նաև բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդների երկրային կենտրոնի 1918թ. հունվարի 4-ի նիստում: «Ս.-դեմոկրատներ Սմիռնովը, Ջուդեիլին, ս.-հեղափոխականներ Թումանյանը, Չեմոգրանովը, Թարխանյանը, դաշնակներ Արզումանյանը, Ջամալյանը և ուրիշներ արտահայտեցին տեսակետ, թե Անդրկովկասը անկախ պետություն չէ և որպես Ռուսաստանի անբաժան մաս, չի կարող անջատ հաշտություն կնքել:

Ռամիշվիլին այդ տեսակետն ընդունելով հանդերձ, պնդում էր, որ պայմանները կարող են ստիպել թուրքական առաջարկությանն ընդառաջ գնալ:

Երկրային կենտրոնն ընդունեց Ն. Ժորդանիայի առաջարկված բանաձեռը: Թուրքական հրամանատարությանն ուղղված նամակում ասված է. «Կամե-

⁶⁴ “Документы и материалы...”, с. 45-50:

նալով կնքել հաշտություն այնպիսի հիմքերով, որ ընդունելի լինի ռուսական ժողովրդավարության համար, հարկ ենք համարում հայտնել Ձեզ, որ մենք լինելով ռուսական հանրապետության բաղկացուցիչ մասը, կարող ենք հաշտության բանակցություններ սկսել միայն նորերս հավաքված Սահմանադիր ժողովից համապատասխան լիազորություններ ստանալուց հետո»⁶⁵:

Անդրկովկասի անկախության հռչակման արագացնելը Թուրքիային անհրաժեշտ էր բացեփակ գործողության մեջ դնելու Անդրկովկասին տիրանալու իր դիտավորությունը, ինչին խանգարում էր Բրեստի դաշնագիրը: Էնվերը չէր ուզում կանգ առնել նախապատերազմական սահմանին, քիչ էր թվում նաև 1877թ. սահմանը, նա ձգտում էր Բաքու:

Անդրկովկասի կոմիսարիատի նիստերում բազմիցս քննարկվեց Էնվերի, վերջնագրի նշանակություն ունեցող, «խնդրանքը», որովհետև երկրամասի հասարակական կարծիքը հիմնականում ուղղված էր դրա դեմ: Հնարվում էին այլեւայլ պատրվակներ Էնվերի առաջարկն ընդունելու կործանարար քայլը հիմնավորելու համար, օրինակ էին բերվում Խորհրդային Ռուսաստանից անկախացած Ուկրաինային, Հյուսիսային Կովկասին եւ այլ երկրամասերին:

Հասարակական կարծիքի ճնշման տակ սեյմի կառավարությունը հունվարի 28-ին խուսափողական պատասխան ուղարկեց՝ թե կողմ է սկսելու հաշտության բանակցությունները, սակայն պարտադրված է այդ քայլը համաձայնեցնել Ռուսաստանի տարածքում եղած անկախ կառավարությունների հետ⁶⁶:

Նախատեսվում էր փետրվարի 14-ին Թիֆլիսում այդ կառավարությունների հետ քննարկել հաշտության բանակցությունների հարցը, սակայն Գեգեչկորու նամակին Ուկրաինան չպատասխանեց, իսկ Հարավ-արեւելյան միությունից միայն Կուրանի կառավարությունն արձագանքեց, հայտնելով, թե առաջարկված տարեթիվն իր համար հարմար չէ⁶⁷:

Չախտողունը կոմիսարիատին հետ չկանգնեցրեց Օսմանյան կայսրության կառավարության հետ սեպարատ բանակցություններ սկսելու դիտավորությունից:

Անդրկովկասի սեյմի առաջին նիստում, երբ քննարկվում էր Վեհիբի առաջարկը բանակցությունների վայրն ընտրելու, ինչպես նաև «Անդրկովկասյան կառավարության ճանաչման» եւ «հաշտության պայմանագիր ստորագրելու համար բուրքական կառավարական պատվիրակություն Թիֆլիս ուղարկելու մասին», այդ պայմանագրի սկզբունքները մշակող հանձնաժողովի նախագահ

Ե. Գեգեչկորին հայտարարեց, թե բանակցությունները պետք է սկսել, իսկ Ժողովանիան այն շահեկան համարեց ոչ միայն Անդրկովկասի, այլ նաև Ռուսաստանի համար՝ վերջինիս «ազատում էր Կովկասի ռազմաճակատը պաշտպանելու անհրաժեշտությունից»: Նիստում Հ. Քաջագունին հանդես եկավ Արեւմտյան Հայաստանի ինքնավարության եւ, ինչպես արդեն ասվեց, Աղանի, Ժողովանիայի հետ միասին՝ նաև Անդրկովկասի անկախության օգտին⁶⁸:

Թուրքիայի հետ հաշտության բանակցությունների հարցը Անդրկովկասի ժողովուրդների ներկայացուցիչներին մղեց վերանայելու իրենց տեսակետների ամբողջ համակարգը, գտնել նոր մոտեցումներ:

Թուրքերի առաջարկությունը քննարկվեց ազգային խորհուրդների, երկրային կենտրոնի, ռազմական խորհրդի, բանակի գլխավոր հրամանատարության ներկայացուցիչների մասնակցությամբ կոմիսարիատի հունվարի 5-ի, 14-ի, 15-ի նիստերում: Բայց ընդհանուր եզրակացության չհանգեցին եւ բուրքերից երեք շաբաթ ժամանակ խնդրեցին վերջնական պատասխանի համար: Թուրքերը պատասխանեցին՝ կնքելով Երզնկայի համաձայնագիրն Անդրկովկասն արդեն հանդես է եկել որպես անկախ սուբյեկտ եւ պայմանագրի բանակցությունները սկսելը ձգձգելն այլևս անիմաստ է: Թիֆլիսը նորից ընկրկեց:

Հաշտության հանձնաժողովի փետրվարի 13-15-ի նիստերում նոր մոտեցումներ դրսևորվեցին ամբողջությամբ: Ա. Չուրաբյանը, Ա. Խատիսյանը, Հ. Քաջագունին, Ս. Տիգրանյանը առաջ քաշեցին Արեւմտյան Հայաստանի ինքնավարության եւ ինքնորոշման հարցը: Խան Խոյսկին դրան հակադրեց Ռուսաստանի տարածքի բոլոր ազգությունների ինքնորոշման հարցը: Գանիեի կարծիքով ինքնորոշում կպահանջի նաև Թուրքիան, ինչը կնշանակի, որ նա կանցնի Կազբեկն ու Էլբրուսը: Հաջինսկին վաղաժամ էր համարում Արեւմտյան Հայաստանի ժողովուրդների ինքնորոշումը: Ն. Ռամիշվիլին հայտարարեց. «Թուրքիան ինքը շահագրգռված է Թուրքահայաստանում բարվոք վիճակ ստեղծելու մեջ... որպեսզի հպատակ ժողովուրդները չձգտեն նրանից անջատվել»: Ասորիների ներկայացուցիչ կարծիքով հաշտությունը կլինի վերջնական, եթե բավարարվեն հայերի ու ասորիների պահանջները: Հաջինսկին նոր հայտարարություն արեց. «Մուսուլմանները որոշել են շառարկել Թուրքիայում Հայկական հարցի լուծմանը՝ համաձայն հայերի ցանկության», ինչը, ըստ նրա, առաջին հերթին, կարելու է Թուրքիայի ու, նաև, Կովկասի համար: Գանիեը նկատեց՝ Թուրքիան այնքան ինքնուրույն չէ, որպեսզի կարողանա բավարարել հայերի պահանջները: Ուսուրեկովը հարցրեց, թե բուրքերի հետ խոսելու ենք որպես հաղթողների՞ թե պարտվողների հետ:

⁶⁵ «Документы и материалы...» с. 26:

⁶⁶ Ն.տ. ՊՏՄ, NN23, 24, 25:

⁶⁷ Ն.տ. ՊՏՄ, N37:

⁶⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 9:

Նրան անհասկանալի էր, որ եթե հայերը վերադառնան իրենց բնակավայրերը, ինչպիսի՞ն է լինելու վերաբերմունքը բուրքերի եւ քրդերի հանդեպ, Հաջինսկուն հետաքրքրում էր, թե ինչ հիմունքներով են գծվելու Հայաստանի սահմանները:

Ի վերջո հանձնաժողովը որոշեց, թե սեյմն իրավասու է կնքել վերջնական պայմանագիր Թուրքիայի հետ, որի հիմքում պետք է ընկած լինեն 1914թ. ռուս-բուրքական սահմանները եւ Թուրքահայաստանին ինքնավարություն տրվի Թուրքիայի կազմում: Փետրվարի 15-ին սեյմը հաստատեց հաշտության հիմնադրույթները, ինչպես նաեւ Տրապիզոնի բանակցություններում Անդրկովկասի պատվիրակության կազմը:

Կոմիսարիատն առաջարկեց բանակցությունները վարել Տրապիզոնում եւ սկսել մարտի 2-ին: Սակայն Բրեստում բանակցությունների ընդհատման հետեւանքով գերմանական առաջխաղացումը դեպի Պետրոգրադ եւ բանակցությունները վերսկսելու վերաբերյալ ռուսական կողմի փետրվարի 19-ի առաջարկությունը հետաձգեցին Տրապիզոնի հանդիպումը: Բանն այն էր, որ ռուսները պարտավորվեցին անել ամեն ինչ ապահովելու «արեւելյան ամատույիական գավառները Թուրքիային վերադարձնելը... Անհապաղ իրականացվելու էր ռուսական բանակի լիակատար գորացրում...»⁶⁹:

Փետրվարի 10-ին Կ. Պոլիսը հայտնեց, թե համաձայն է, որ բանակցությունները տարվեն Տրապիզոնում: Չավեշտ: Երբ Անդրկովկասի պատվիրակությունը հասավ Տրապիզոն, իմացավ, որ այն արդեն անցել էր բուրքերին:

Դեռ հունվարի 26-ին էր Մ. Վեհիբը հաղորդել էրզրում. «N4 խառը հանձնաժողովի անդամները տեսնելով բուրքեստանյան 2-րդ կորպուսի եւ բուրքեստանյան 5-րդ դիվիզիայի շտաբների տեղաշարժը եւ զգալով վտանգ հայկական ավազակախմբերի կողմից, միաձայն որոշել են ուղարկել անհրաժեշտ բովով գորք՝ պաշտպանելու տեղական բնակչության անվտանգությունը, ինչպես նաեւ տեղերում եղած զենքի, պարենի, հանդերձանքի պահեստները»⁷⁰: Վեհիբը բուրքական գորամասերին հրամայեց գրավելու ռուսների լքած բնակավայրերն ու դիրքերը առանց հաշվի առնելու, որ թվական առումով Կովկասը բավարար ուժեր ուներ հակահարված տալու համար: Դավաճանությունն ակնհայտ էր. Օդիշե-լիձեի մեղրով, թե թելադրանքով ձախողվել էր կորպուսի նահանջող զորքերի փոխարեն հավաքական վաշտերի ստեղծումը: Նա շնորհակալություն հայտնեց Վեհիբին եւ խնդրեց բուրքական գորքերը հետ քաշել Կալկիտայից, եթե ինքը «ինարավորություն ունենա կազմել ջոկատ եւ ուղարկել այնտեղ»⁷¹: Նա

⁶⁹ Wien HHSTA PA, 1053, Wien, 22 Februar 1918, Z. 23:

⁷⁰ Ն.տ.:

⁷¹ Ն.տ.:

իրականում դեմ էր Կալկիտա հայկական գորամաս ուղարկելուն պատճառաբանելով, թե դա զինված ընդհարում կառաջացնի հայերի ու բուրքերի միջև:

Թուրքական հրետանային դիվիզիայի հրամանատար Քյազըմը ռուսական գորքի Տրապիզոնի կայազորի պետին առաջարկեց երեք օրվա ընթացքում քաղաքը հանձնել՝ անկարգություններից ու ավազակաբարո գործողություններից խույս տալու համար: Նկատի ունենալով ռուսական բանակում եղած հայերին, նա գրում է, որ նրանք «ազգային բշնամության մեջ են բուրքերի հետ եւ ամեն պահի կարող են անմարդկային արարքներ բույլ տալ, այլ բվում նաեւ արյունահեղություններ»⁷²: Քյազըմը Տրապիզոնում ռուսական զորքերի հրամանատարին խորհուրդ էր տալիս, թե այն ամբողջ ունեցվածքը, զենքերն ու պարենը, որոնք հեռացող ռուսական զորքերը տանել չէին կարող, թողնել տեղում ռուս պահակների հսկողության տակ, եւ բուրքական կողմը երաշխիք է տալիս դրանք վերադարձնել ռուսներին: Ընդ որում՝ պատասխանի համար ժամկետ էր տրվում՝ «ոչ ուշ, քան 1918թ. փետրվարի 7-ի մայրամուտը»: Թուրքերը ռուսներին երեք օր ժամանակ էին տալիս, մինչդեռ պահանջվում էր «երեք շաբաթ ժամանակ... ռազմական գույքը եւ ունեցվածքը քաղաքից դուրս բերելու համար»: Իսկ Էնվերը սպասել չէր ուզում, նրան Տրապիզոնը պետք էր Կ. Պոլիսը ռազմաճակատի հետ կապելու համար եւ առանց հպաղելու առաջանալու դեպի Բաքու: Դրա արտահայտությունն էր Քյազըմի նշված վերջնագիրը. «Մենք հարկադրված ենք շտապել մտնելու Տրապիզոն, համաձայն մեր կորպուսի արաջ դրված խնդրի»: Ակնարկելով «ռուսների քիչ լինելը», նա խորհուրդ էր տալիս չսպասել նավերի գալուն եւ հեռանալ հետիոտն: Եթե ռուսները երեք օրում չթողնեն Տրապիզոնը, «պատասխանատվությունն ընկնում է նրանց վրա»: Այսպես էր խոսում պարտված բանակը հաղթանակած բանակի հետ: Ռուսական հրամանատարությունը նորից մերժեց բուրքական պահանջը եւ խնդրեց, «հյուր մնալ եւս երեք շաբաթ», բայց երբ բուրքական զորքերն առաջ շարժվեցին, ռուսները թողեցին Տրապիզոնն առանց գնդակ իսկ արձակելու:

Այդպես էր ոչ միայն Տրապիզոնում:

Թուրքական առաջխաղացմանը գնալով թափ էր հաղորդում հայ-մահմդական հակամարտությունը, ինչն իր ազդեցությունն ունեցավ ոչ միայն Տրապիզոնի բանակցությունների, այլեւ բուրքերի հետ հարաբերությունների ամբողջ համակարգի վրա:

Ալեքսանդրապոլում գողացան ռուս պահակախմբի զենքերը, որին հետեւեց խուզարկությունները բուրքական բաղում, Կարսի Օդի Օդլու գյուղում

⁷² Wien HHSTA PA, 1053, Wien, 22 Februar 1918, Z. 23:

բռնվում է ռուսներից գողացած յոթ արկղ հրացան, հարձակումներ տեղի ունեցան Բասենի հայ գյուղերի վրա: Շատացան հարձակումները նաև ռուսական զորակազմների, ինչպես նաև հայ գաղթականների վրա:

«Հորիզոնը» հունիսի 8-ին գրում է. «Պրովոկացիոն մութ ուժերի դրդումից Սուրմալուից Հայոց ձոր ու Հայոց ձորից մինչև Մամախաթուն քրդական ավազակաբարո, մինչև ատամները զինված հրոսակախմբերը հարձակվում են խաղաղ բնակչության վրա, կողոպտում են, վիրավորում ու սպանում...»:

Ի տարբերություն նախորդ շրջանի, քրդական հարձակումների հիմնական քիրախները ռազմական նշանակություն ունեցող օբյեկտներն էին, ինչպես նաև հայ գաղթականների վերադարձի ճանապարհները եւ ռուսական բանակի թիկունքը: Դժվար չէր նկատել, որ այդ շարժումներն ունեին ներքին ծրագիր եւ ուղղուած էին, ամենից առաջ, պատերազմին աջակցող ուժերի եւ կազմակերպությունների դեմ:

Թուրք-թաթարներն անթաքույց զինվում էին: Դրա հետ միասին ռազմաճակատում թուրքական բանակը նորից հզոր ուժ էր դառնում: Գնալով փոխվում էր թուրքերի խոսակցության տոնը: Վեհիբը գրեց, թե Էնվերը նկատել է, որ ռուսական բանակի գրավված տարածքներում բռնություններ են գործադրվում մահմեդականների նկատմամբ եւ պահանջում է վերջ դնել դրանց: Նման հեռագրերը դարձան սովորական: Կովկասյան բանակի հրամանատարությունը հերքում էր թուրքական մեղադրանքները, բայց թուրքերը շարունակում էին լարել հարաբերությունները, հիմքեր ստեղծել թուրքական բանակի ընդհանուր հարձակման համար: Նրանք գնում էին վճռական քայլերի քաջ գիտեճալով, որ ա) ռուսական բանակը քայքայվում էր եւ դադարել էր մարտունակ լինելուց, բ) Անդրկովկասյան կոմիսարիատը գնալով իշխանագրկվում էր, պարտադրվում իր իրավասությունները հանձնելու ազգային խորհուրդներին եւ գ) Անդրկովկասյան բոլոր կառույցներն էին քայքայվում, ինչը հետեւանք էր այն կազմող ժողովուրդների հակոտնյա ձգտումների: Մեյմի 1918թ. փետրվարի 13-ի նիստում Գեգեչկորին ասաց. «Մեր ընդարձակ եւ բազմացել երկրի բոլոր կետերում, բոլոր շրջաններում առաջ են գալիս թիրիմացութիւններ ու բռնութիւններ թե ազգային հողի վրա եւ թե հեռացող զորքերի ու տեղական բնակչութեան միջեւ պատահող ընդհարումների պատճառով: Այստեղ ու այնտեղ բռնկվում են հրդեհներ... Անդրկովկասյան կոմիսարիատը հնարավորութիւն եւ միջոց չունի անյապաղ եւ անշեղ գործադրել տալու իր պահանջները, որովհետեւ թերեւս գոյութիւն ունեին ազգային զորամասեր, բայց նրանք ոչ մի ուժ չեն ներկայացնում»⁷³:

⁷³ Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 71:

Փետրվարի 24-ին, երբ թուրքերը գրավեցին Տրապիզոնը, «քաղաքի հույն եւ հայ բնակչության այն մասը, որ փախչել չէր կարողացել, խիստ տուժեց... Թուրքերը գնդակահարեցին, ջրասույզ արեցին կամ ողջակիզեցին ոչ միայն հետ մնացած ռուս զինորդներին... այլեւ խոշտանգում էին իրենց ձեռքն ընկած հայերին»:

Տրապիզոնում հայ երեխաներին լցրեցին պարկերը, բերանները կապեցին ու նետեցին ծովը»⁷⁴:

Գերմանիայի ԱԳ նախարարի օգնականը 1918թ. մարտի 22-ին գրում է. «...Թուրքերի վերադարձը Տրապիզոն ուղեկցվում է նոր դաժան գործողություններով: Տեղում մնացած հազարավոր ռուսներ գնդակահարվել կամ ողջակիզվել են: Հայերն անասելի տանջանքների են ենթարկվում: Երեխաներին լցնում են պարկերի մեջ ու նետում ծովը: Ծերուհիներին ու պառավներին խաչում են ու խեղում»⁷⁵:

Լեոն նկարագրում է Տրապիզոնի նավահանգիստը. «Ծովափը ահագին տարածության վրա ներկայացնում էր մի մեծ բանակի հապճեպ, խուճապային փախուստի հետքերը: Հարյուրավոր, հազարավոր սայլեր, սայլակներ, բեռնակիր ավտոմոբիլներ եւ ուրիշ տեսակ-տեսակ իրեր թափված էին սուկալի անկարգության մեջ... դարաված էին ռելսերի ամբողջ լեռներ (Բաթում-Տրապիզոն երկաթուղու շինարարության համար): Իսկ թե որքան պաշարներ, ռազմամթերքներ եւ հարյուր ու մի տեսակ հանդերձանքներ կային մթերված քաղաքի մեջ, երեակայել անգամ չէր կարելի: Երբ ռուսական բանակը թողնելով ամեն ինչ հեռանում է հապճեպով եւ քաղաքում մնում է մի վրացական գունդ, որին հանձնվում է այդ անհուն հարստությունների պաշտպանությունը: Սակայն գունդը հայտնում է, թե գնում է Վրաստանի սահմանները պաշտպանելու եւ հեռանում է Տրապիզոնից... իսկ ռուսական պատերազմական գույքի պահպանության համար մնում է գեներալ Կոլոտվսկին մի քանի սպաների եւ այլ ծառայողների հետ»: Կովկասյան բանակի հրամանատարությունը նրան հանձնարարում է այդ ամբողջ ունեցվածքը ցուցակագրված հանձնել թուրքերին: Գեներալը զարմացած ու զայրացած ասում է, թե մի երկիր, որ երկն ջախջախվում էր, այսօր «հրաշքով, առանց մի կաթիլ արյուն թափելու, դարձել է հաղթող, տիրացել է անհաշիվ հարստությունների»⁷⁶:

Եթե հայերն ու վրացիները ձգտում էին «արժանապատիվ» հաշտության, ապա աղբրեջանցիները պահանջում էին պատերազմն ավարտել անհապաղ, առանց որևէ պայմանի: Մեյմի փետրվարի 16-ի նիստում նորից քննարկվեցին Տրապիզոնում բարձրացվելիք հարցերը՝ հաշտությունը պետք է լինի վերջնական, պետք է ճանաչել 1914-ի սահմանները, Արեւելյան Անատոլիայի ժո-

⁷⁴ "L'Asie francaies", 1918, N172:
⁷⁵ "Deutschland und Armenien...", s. 377:
⁷⁶ Լեո, նշվ. աշխ., էջ 380:

դուրսդնեղին՝ հայերին, ասորիներին, լազերին պետք է տրվի ինքնավարություն: Ռամիշվիլին ասաց, որ Թուրքահայաստանի հարցը բանակցությունների մեկն է լինելու, որովհետև դա «ամբողջացված է հայ ժողովրդի դարավոր պայքարով այն ճնշումների դեմ, որոնց այդ ժողովուրդը ենթարկված էր քրքական կայսրության սահմաններում, եւ մենք պետք է հայտարարենք, որ քրքահայության հարցը մի հարց է, որի լուծումով շահագրգռված է ոչ միայն քրքական կայսրությունը, այլև անպայման, ոչ պակաս չափով, նաև անդրկովկասյան ժողովուրդները... հայ ժողովրդի ամեն մի շարժում Թիւրքիայում լիովին արձագանք էր գտնում... այստեղ եւ դա բնական է: Այստեղի արիմակից եղբայրները չէին կարող այս կամ այն ձևով շարտահայտվել Թիւրքիայի սահմաններում ապրող իրենց ցեղակիցների վիճակի մասին... Թիւրքիայում այդ հարցի ամեն մի խճողում միշտ առաջ է բերել միջցեղային յարաբերությունների բարդացում այստեղ՝ Անդկովկասում»:

Սեյմը որոշեց, որ ստեղծված իրավիճակում ինքն «իբրև համարում է իրավատեր՝ կնքելու հաշտութիւն Թիւրքիայի հետ, եւ այն պետք է լինի հիմնական հաշտութիւն», որի համար հիմք պիտի հանդիսանան 1914-ի սահմանները: «Պատվիրակութիւնը ջանալու է ձեռք բերել Արեւելյան Անատոլիայի ժողովուրդների համար ինքնորոշման իրավունք եւ, ի մասնավորի, Թիւրքահայաստանի համար ինքնավարութիւնը թիւրք պետական շրջանակներում»⁷⁷: Արեւմտյան Հայաստանին անկախության տալու պահանջ մտցնելու վերաբերյալ հայ պատգամավորների ջանքերը սեյմում հաջողություն չունեցան, մեծ դժվարությամբ անցավ անգամ ինքնավարության տարբերակը:

Հետաքրքիր էր սեյմի նաև հետեւյալ որոշումը. «Պատվիրակութիւնը մանրամասն հաղորդում է սեյմին բանակցությունների ընթացքի մասին՝ նախապես առնելով սեյմի ցուցմունքները բոլոր կարեւոր հարցերի վերաբերյալ»:

Լսենք Լեոին. Անդրկովկասյան կոմիսարիատն այնքան անտեղյակ էր ռազմաճակատից, որ կարծում էր, թե ռուսական զորքը դեռ Տրապիզոնում էր եւ դրա համար էլ այդ քաղաքը հարմար էր բանակցություններ վարելու համար:

Նշանակված լինելով պատվիրակության խորհրդական եւ մանակցելով սեյմի այդ նիստին, Լեոն պատմում է. «Կուսակցությունները սկսեցին իրար հետ ընդհարվել. առաջացավ շփոթ, աղմուկ, իրար վրա բղավում էին. Նախագահը ստիպված եղավ նիստը փակել... Նիստի վերջին լուր բերին, որ Բաթումից ստացվել է մի աղավաղված ռադիո Կարախանի ստորագրությամբ, որ հայտնում էր, թե Բրեստ-Լիտովսկում ստորագրվել է հաշտության դաշնագիր... Հաշտության պայմաններից մեկն էլ այն էր, որ Թուրքիան ետ է ստա-

⁷⁷ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 79:

նում 1878թ. իր կորցրած Բաթումի, Արդահանի եւ Կարսի սանջակները: Բանակցություններն այլևս ավելորդ էին: Վեհիք փաշան հեռագրով պահանջեց մաքրել Բաթումը, Արդահանը, Կարսը: Բայց մի երկու օրից հետո դրությունը պարզվեց: Անդրկովկասյան կոմիսարիատը ոչ միայն չէր ընդունում Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, այլև բողոքում էր դրա այն հողվածների դեմ, որ վերաբերում էր երեք սանջակներին, իբրև մի բռնի օտարացման դեմ, որ կատարվել է առանց կովկասյան ազգերի համաձայնության: Ուստի եւ որոշում էր անմիջական բանակցությունների մեջ մտնել Թուրքիայի հետ՝ հաշտության պայմաններ մշակելու համար: Թուրքիան համաձայն էր, բայց ոչ թե Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը վերաքննելու եւ փոխելու համար, այլ պարզապես բարեկամության եւ դրացիության պայմաններ մշակելու համար»⁷⁸:

Կովկասում նաև մակերես դուրս եկան Գերմանիայի եւ Թուրքիայի միջեւ եղած հակասությունները: Բռնիքը փորձում էր այդ հակասությունները լուծել Թուրքիային նպատակաուղղելով դեպի Անդրկասպիա: «Թուրքիայի տարածքային նվաճումների հիմնական նպատակը պետք է փնտրել Արեւելքում, թուրքական բանակի զլխավոր շտաբին խորհուրդ էր տալիս Լյուդենդորֆը, այնտեղ տարածքային նվաճումներից բացի, թուրքական ճկուն դիվանագիտության համար կա նաև մինչև Կենտրոնական Ասիայի խորքերն իր ազդեցության ոլորտի մեջ առնելու հնարավորություն»⁷⁹:

Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի ռազմական ներկայացուցիչ Պոմյակովսկին դեմ էր այս ծրագրին: Նա 1918թ. ապրիլի 22-ին իր ԱԳ նախարար Հ. Բուրիանին գրում է. «Ամենախելացին եւ միաժամանակ միակ հնարավորը թուրքական ակնկալություններին չհակադրվելն է եւ ժամանակավորապես ոչ պաշտոնական եւ առանց որեւէ պայմանի հօգուտ նրանց այդ սահմանների ճանաչելն է: Թուրքիան մեզ համար եղել էւ մնում է հավատարիմ ու արժեքավոր դաշնակից եւ հենց այդ պատճառով արժանի է, որ նրա ազգային ակնալիքները բարյացակամության արժանանան: Թուրքիան... ներկայումս էլ Կենտրոնական Եվրոպայի տերությունների համար շատ ավելի կարեւոր է, քան Հայաստանն ու Վրաստանը»⁸⁰:

Նույն խնդրին անդրադառնում է Շվեյցարիայում Ֆրանսիայի դեսպանը ԱԳ նախարար Ս. Պիշոնին 1918թ. ապրիլի 18-ին գրած նամակում. «...Հայերի եւ, մասնավորապես, վրացիների անջատողականությունն առաջացնում է օսմանյան կառավարողների լուրջ անհանգստությունը: Երբ փետրվարին կովկասյան պատվիրակությունն այցելեց Տրապիզոն օսմանյան կառավարության հետ խաղաղության դաշնագիր կնքելու, որոշ

⁷⁸ Լեո, նշվ. աշխ., էջ 373-374:

⁷⁹ Baumgart W., Deutsche Ostpolitik 1918, Munchen, 1966, s. 177:

⁸⁰ Wien KA AOK NA 1918 Fasz 5798 Konstantinopel, 20 August 1918, N21084:

պատգամավորներ, այդ թվում նաև համաքրքրության պարագլուխ Ահմեդ Աղա-Օղլուն, անմիջապես առարկեց, թե դա հիմնականում բխում է վրացիներից եւ չի արտահայտում երկրամասի բնակչության իսկական ցանկությունը: Կ. Պոլսի թերթերում սկսվեց աշխույժ քննարկում, որի նպատակն էր ապացուցել, որ վրացիները Կովկասում փոքրամասնություն էին: Մինչդեռ երկրամասի 11 միլիոն ազգաբնակչությունից թուրքեր ու մահմեդական էին յոթը միլիոնը»⁸¹: Խան Խոյսկին հայտարարեց, որ եթե Տրապիզոնում պայմանագիր չկնքվի, «մենք պետք է համառենք», որովհետեւ դա «որոշ չափով կլինի միջազգային անշնորհքություն»: Այսինքն՝ նա պահանջում էր դաշնագիր կնքել ցանկացած գնով:

Պատվիրակությունը պետք է մեկներ փետրվարի 17-ին, բայց այդ նույն օրը ստացվեց Լ. Կարախանի վերը նշված հեռագիրը: Այն անսպասելի էր եւ բորբոքեց կրքեր: Նույն օրը հրավիրվեց խմբակցությունների եւ կոմիսարիատի անդամների ժողով, որը հաստատեց պատասխան հեռագրի տեքստը («Բրեստի դաշնագիրը չճանաչելու մասին», նաև հայտնվում էր, որ սեյմի պատվիրակությունը մեկնում է Տրապիզոն թուրքերի հետ բանակցություններ վարելու):

Փետրվարի 20-ին տեղի ունեցավ սեյմի արտակարգ նիստ, որտեղ Գեզեչկորին առաջին անգամ պաշտոնապես հայտարարեց, որ «Անդրկովկասը կը գործե որպես կատարելապես անկախ քաղաքական միավոր»: Նա նաև զարմանք հայտնեց, թե թուրքերը, չնայած խոստացել էին Բրեստում պաշտպանելու Անդրկովկասի անկախությունը, «չսպասեցին Տրապիզոնի խորհրդաժողովին, այլ անգուր իստություն մը կնքեցին Ռուսիոյ հետ ի հաշիվ Անդրկովկասեան հողամասերու»⁸²:

Ն. Ռամիշվիլին, թե Բաթումը թուրքերին տալը կնշանակի Անդրկովկասը վերածել Մերքիայի, Խատիսյանը համաձայնվելով նրա հետ, միաժամանակ ասաց, «թե հայերն ամեն կերպ կպաշտպանեն Կարսը»: Նա նաև անդրադարձավ մահմեդական գործիչների հարցադրմանը, թե չեն կարող իրենց վրա պատասխանատվություն վերցնել մահմեդական զանգվածների վարքի համար, ու ասաց. «Ովքեր են այն ներկայացուցիչները, որոնք են հանդիսանում մահմեդական զանգվածների իսկական ղեկավարները, թող այդ ներկայացուցիչները մտնեն իշխանության մարմինները, եւ մենք կունենանք խոսակցություն նրանց հետ, այլ ոչ թե նրանց, ովքեր ասում են, իշխանություն չունենք զանգվածների վրա»: Նա հարցը դրեց որոշակի՝ ում հետ են Կովկասի մահմեդականները՝ թուրքերի՞ թե Անդրկովկասի հանրապետության⁸³:

⁸¹ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N591:

⁸² Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 26:

⁸³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

Բացարձակապես ակնհայտ էր, որ թուրքերն ու ադրբեջանցիները գործում էին նույն ուղղությամբ՝ թե պաշտոնական ձեռնարկումներում եւ թե լայն զանգվածների քաղաքական վարքագծի դրսեւորումներում:

Հ. Ավետիսյանի «Հայկական հարցը 1918թ.» աշխատությունում բերված է գերմանացի ռազմագերի Դ. Բրանդների վկայությունը. «Թուրքական սպաները մուսուլմանական Ազգային կոմիտեի հետ աշխատում են Արեւելյան Կովկասում մահմեդական պետություն ստեղծելու ուղղությամբ... Մուսուլմանական կոմիտեն ստանում է թուրքերի եւ կենտրոնական տերությունների աջակցությունը՝ զենքով եւ դրամով»⁸⁴:

Պալավիչինին փետրվարի 8-ին տեղեկագրեց. «Էնվեր փաշան երեկ ասաց..., որ «թուրքերի կողմից սպասվում է ապստամբություն Ռուսաստանի կովկասյան մարզերում»⁸⁵:

Թուրքերը լսել անգամ չէին ուզում Հայկական հարցի մասին:

* * *

Սեյմը Տրապիզոն ուղարկեց 70 հոգի՝ պատվիրակներ, խորհրդականներ, քարտուղարներ, հատուկ հանձնարարությունների սպաներ, 30 հոգանոց պահակախումբ:

Թուրքական թերթերը սրախոսեցին. «Եթե ռազմական արշավախումբ է, փոքր է, իսկ եթե հաշտության պատվիրակություն է, չափից ավելի մեծ է»:

Նման մեծաթվությունն արտահայտությունն էր այն բանի, որ երկրամասում տիրապետող փոխադարձ անվստահությունն էր:

Պատվիրակության ղեկավարն էր Անդրկովկասյան կոմիսարիատի ԱԳ նախարար Ա. Չխենկելին:

Պատվիրակությունը «Կարոլ Կարլ» գրահանավով Տրապիզոն հասավ մարտի 8-ին, սակայն նրանք քաղաք մտնելու հնարավորություն ստացան միայն մարտի 11-ին, երբ տեղ հասավ թուրքական պատվիրակությունը մեծ վեզիր Ռեուֆի ղեկավարությամբ:

Դա Էզրումի անկման օրն էր, անկում, որը մեծ ազդեցություն ունեցավ Տրապիզոնի բանակցությունների ընթացքի վրա:

Ա. Խատիսյանը գրում է, որ Տրապիզոնում ոչ մի հայ չկար: «Ճանութները փակ էին ու դատարկ, քանի մը հույներ միայն միս ու կանաչեղեն կը ծախեին: Գացինք դեպի հայ եկեղեցին, որ ախոռի էր վերածուած»: Թուրքերն իրենց պահում էին տանտիրոջ նման, այսինքն՝ «անուղղակի կերպով Տրապիզոնը կը ճանչվեր արդեն թուրքական քաղաք»:

⁸⁴ Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 95:

⁸⁵ OZFT-W-1110, p. 302, 13612:

Մի «մանրուք»՝ գրահանավին մոտեցած մոտորանավակից դուրս եկավ բուրբ պաշտոնյա եւ հայտարարեց, թե նավահանգիստը բաց է: Թուրքական երկու ռազմանավ, թնդանոթներն ուղղած «Կարոլ Կարլ»-ին, պատվիրակությամբ ափ հասցրեցին: Տրապիզոնի պարետը հրամայեց զինաթափել պատվիրակությանն ուղեկցող զիվորներին: Վերցրեցին անգամ սառը զենքերը: Այդպես պատվիրակությունը բուրբ զինվորներով շրջապատված հասավ հյուրանոց:

«Գնում ենք, իբրեւ գերի,- ասաց Խատիսյանը Չխենկելուն:- Պատմական այս ամոթանքը չի մոռացվի»⁸⁶:

Հյուրանոցը նման էր բանտի. պատվիրակները դուրս գալու իրավունք չունեին: Նրանց հեռագրերը տեղ չէին հասնում:

Պարտված ու ծնկի իջած, բայց ռուսական հեղափոխության հանգամանքով վերակենդանացած գազանը այլևս իրեն զգում էր հաղթող ու դարձել էր ամբարտավան:

Պատվիրակությունում վրացիները չորս հոգի էին, որից երկու սոցիալ-դեմոկրատ, մեկ սոցիալիստ-ֆեդերալիստ եւ մեկ նացիոնալ-ժողովրդավար: Աղբբեջանցիները ներկայացված էին 5 հոգով՝ երկու մուսավաթական եւ երեք սոցիալիստ: Պատվիրակության մեջ էր մուսավաթի հիմնադիր, երզնյալ համաթուրքիստ Ռասուլզադեն: Հայ պատվիրակները երկուսն էին՝ Հ. Քաջագունունին եւ Ա. Խատիսյանը: Պատվիրակության քարտողարը Մ. Թումանյանն էր: Տրապիզոն էր մեկնել նաեւ Կովկասյան բանակի շտաբի պետ Լեւանդովսկին մի խումբ սպաների հետ:

Լեոն նկատում է, որ Ա. Խատիսյանը «համաձայն իր համակերպվող բնավորությանը, արդեն ավանաներ էր տալիս, թե դաշնակցությունը պետք է փոխի իր կողմնորոշումը: Այլևս ոչ արեւմտյան, ոչ էլ հյուսիսային պիտի լինի հայերի կողմնորոշումը: Թուրք պատվիրակները բացեիբաց հայտարարում էին, որ «Անդրկովկասի կենսական շահը պահանջում է, որ ռուս տիրապետողներ այլևս չլինեն այնտեղ: Բոլոր ազգերը միանան կանգնեցնելու համար հյուսիսից եկող ամեն մի արշավանք»⁸⁷:

Նույն օրերին Շվեյցարիայում թուրքական դեսպան Ֆուադ Սելիմը հայտարարեց, թե Թուրքիան ցանկանում է, որ Կովկասը դառնա բուֆեր իր եւ Ռուսաստանի միջեւ, միաժամանակ դառնա Թուրքիան Ղրիմի հետ կապող օղակ: Նա նույնպես գտնում էր, որ բոլոր ջանքերը պետք է ներդրվեն ստեղծելու վարչական լայն ինքնավարությամբ դաշնակցություն Ղրիմի եւ Օսմանյան կայսրության հետ, ինչը կապահովեր գերիշխանություն Սեւ ծո-

⁸⁶ Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 121:

⁸⁷ Լեո, նշվ. աշխ., էջ 375:

վում, այն Թուրքական լիճ դարձնելու համար: Թուրքերն աշխատում էին հօգուտ իրենց լուծել նաեւ Նեղուցների հարցը, դրանք դարձնելով բուրբական տան մուտքի դռներ⁸⁸:

3. ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անդրկովկասի պատվիրակությունը Տրապիզոն գնաց ունենալով սեյմի հանձնարարականը՝ պահանջել, որ վերահաստատվեն 1914թ. սահմանները: Դժբախտաբար հայ գործիչները Թիֆլիսում արդեն դրա հետ համաձայնվել էին, վախենալով, որ հակառակ դիրքորոշումը «կվտանգեր հայ ժողովրդին»: Այսինքն՝ հօգուտ Թուրքիայի Արեւմտյան Հայաստանի հարցը լուծվել էր Թիֆլիսում:

Սեյմը բուրբական կողմնորոշում ունեցող Չխենկելուն նշանակելով պատվիրակության ղեկավար ցուցադրեց իր դիտավորությունը՝ Թուրքիայի հետ անպայման լեզու գտնել: Հետեւաբար այդ հարցում խզումը ՀՀԴ եւ վրաց մենչելիկների միջեւ իրողություն էր դեռեւս մինչեւ պատվիրակության մեկնելը: Բայց երբ պազվեց, որ Բրեստի պայմանագրով Թուրքիային էին անցնում նաեւ Կարսը, Արդահանն ու Բաթումը, այսինքն՝ հայ-վրացական տարածքները, հայ եւ վրաց առաջատար կուսակցությունները ինչ-որ ժամանակահատվածում համախմբվեցին:

Տրապիզոն պատվիրակություն ուղարկելը, իհարկե, բացասաբար անդրադարձավ Անդրկովկասյան հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի հարաբերությունների վրա, որովհետեւ այդ քայլն ինքնին նշանակում էր, որ Անդրկովկասն իրեն դուրս էր հանել Ռուսաստանի կազմից: Ռուսական ծառայությունները նույնիսկ փորձ արեցին խափանելու պատվիրակության մեկնումը Տրապիզոն:

Իրավիճակի ամբողջ անմտությունն այն էր, որ այդ բանակցություններին դեմ էր ոչ միայն Մոսկվան, այլև Կ. Պոլիսը: Բրեստի պայմանագրից եւ պատերազմական գործողությունները Արեւմտյան Հայաստանում վերսկսելուց հետո բանակցությունները Թուրքիայի համար դառնում էին ավելորդ:

Պատահական չէր, որ բուրբական պատվիրակությունը պաշտոնական բանակցությունները սկսեց միայն մարտի 27-ին, երբ արդեն Էրզրումն ընկել էր, եւ թուրքական բանակը դուրս էր եկել 1914թ. սահմանը:

Բանակցությունները սկսվեցին ծովափին գտնվող առեւտրական գործարքների երկհարկանի շենքի դահլիճում:

⁸⁸ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N591:

Սինչե Ռեուֆը Տրապիզոն կհասներ. Անդրկովկասյան սեյմի պատվիակուբյունը նիստ գումարեց քննարկելու բանակցություններում հնարավոր փոխադարձ զիջումների հարցը:

Լեոն առաջարկեց անդրադառնալ Կարսի, Արդահանի եւ Բաթումի հարցին, նկատի ունենալով Բրեստում այդ խնդրի լուծման հնարավոր հետեւանքները: Պ. Ինգոբովկան առաջարկեց թուրքերին զիջել միայն Կարսն ու Արդահանը: Հայ պատվիրակները դրան դեմ էին, ասելով՝ թե «մենք ամենից առաջ պետք է փրկենք Կարսի եւ Կաղզվանի գավառները, որոնց բնակչության 3/4 հայեր, հույներ եւ ռուսներ էին» եւ զիջել միայն թուրքական հոծ բնակչություն ունեցող տարածքներից:

Դրան Հաջինսկին պատասխանեց. «Աչք մի փակեք այն բանի առաջ, որ մեր կողմնորոշումները կարող են լինել տարբեր, օրինակ, դուք մտահոգված եք հարավային սահմանի բերդերի ճակատագրով եւ ոչ մի անգամ չխոսեցիք... հյուսիսային սահմանների մասին: Սինչեդե ես կարծում եմ, որ մեզ մեծ վտանգ է սպառնում այնտեղից, որովհետեւ Ռուսաստանի իմպերիալիստներն անկասկած ցանկանում են իրենց վերադարձնել Անդրկովկասը»: Նա առաջարկեց «սկսել կառուցել Կովկասյան Շվեյցարիա, որի ամբողջականությունը պետք է երաշխավորվեր միայն միջազգային տրակտատով»: Նա քննադատեց սեյմին, որ ձգձգում էր Անդրկովկասի անկախության հռչակումը⁸⁹:

Հ. Քաջագունին հայտարարեց, թե «համամիտ է ռազմավարության վերաբերյալ Մ. Հաջինսկու տեսակետին»: Նա հնարավոր համարեց զիջել նաեւ Կարսը, բայց առանց հայաբնակ տարածքների: Հայ պատվիրակն ասաց, որ «երե բանակցություններում մենք առավելագույնի հասցնենք հնարավոր զիջումը, եւ այնուամենայնիվ, համաձայնության չգանք ուրիշների հետ, ապա մեր պահանջների նվազագույնը կպաշտպանենք զինված ուժով, այսինքն՝ պատերազմ կհայտարարենք Թուրքիային»: Հաջինսկին պատասխանեց՝ իսկ «մենք կովել չենք կարող»⁹⁰:

Լասխիշվիլին ասաց, որ Բրեստն անընդունելի է եւ հարկ է կայուն խաղաղություն հաստատել թուրքերի հետ, բայց ոչ այնպիսին, ինչպիսին առաջարկում է Հաջինսկին: Եթե Թուրքիան, ասաց նա, ցանկանում է Անդրկովկասը տեսնել բուֆեր պետություն, ապա շահագրգռված չպետք է լինի, որ նա թուլանա:

Հայ եւ վրաց պատվիրակները համոզում էին ադրբեջանցիներին միասնական ճակատով հանդես գալ բանակցություններում: Բայց ադրբեջանցիները պատասխանեցին, թե անգամ հանուն անկախության իրենք Թուրքիայի դեմ

⁸⁹ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 1875, ց. 1, գ. 3:

⁹⁰ Ն.տ.:

հանդես չեն գա: Խատիսյանի կարծիքով երեք ժողովուրդները նպատակին չէին հասնում «ոչ թե որովհետեւ թուրքերն ուժեղ էին, այլ այն պատճառով, որ սեփական միջավայրում չեն գտել ակնկալվող օժանդակությունը»:

Մ. Բունիաթյանի կարծիքով Անդրկովկասը Թուրքիայի համար որեւէ վտանգ չէր ներկայացնում, մինչդեռ Թուրքիան, որպես սպառնալիք, մշտապես կախված է եղել երկրամասի վրա, որ Թուրքիան «առավելապես ռազմական պետություն է, եւ Անդրկովկասը չի կարող մշակութային եւ տնտեսական զարգացում ապրել Արեւմուտքից եկող մշտական սպառնալիքների պայմաններում»⁹¹:

Ա. Չխենկելին ամփոփելով քննարկման արդյունքները՝ այն անվանեց պատմական: «Այստեղ՝ Տրապիզոնում, այս դահլիճում, - ասաց նա, - վճռվում է Անդրկովկասի ճակատագիրը»: Նա նույնպես Թուրքիային անվանեց սվինի ուժով գործող պետություն, բայց նաեւ գտնում էր, որ նրա հետ համաձայնության գալը միանգամայն հնարավոր էր: «Թուրքերը շատ են շահագրգռված անկախ Անդրկովկաս ստեղծելու հարցում»: Տրապիզոնում գլխավորը ոչ թե Անդրկովկաս-Թուրքիա, այլ ներանդրկովկասյան բանակցություններն էին: Թուրքական սպառնալիքը հարկադրում էր հստակեցնել երկրամասի ժողովուրդների հարաբերությունները:

Ահա թե ինչու, Անդրկովկասի պատվիրակությունը բանակցությունների ընթացքում ունեցավ առանց թուրքերի 46, իսկ թուրքերի հետ համատեղ միայն 6 նիստ: Պաշտոնական բանակցությունների հենց առաջին նիստում ակնհայտ դարձավ, որ կողմերի մոտեցումները հակոտնյա էին:

Բացելով առաջին նիստը Ռեուֆն ասաց. «Արեւելքում բարձրանում է նոր աստղ եւ դա Անդրկովկասի հանրապետությունն է», որը «ցարիզմի տապալումից հետո շարժվում է անկախության ճանապարհով», ինչը «իմ կեանքի ամենահաճելի ուրախություններից մեկն է... կարծում եմ, որ մեր ճակատագրերը ավելի ու ավելի են կապվում միմյանց: Ռուսաստանի դեմ պայքարի փառավոր պատմութեան ընթացքին... մեզ կապող կապերը հանդիսանում են ոչ միայն սոսկ պատմական ու աշխարհագրական յարաբերություններ, այլ, ավելի շուտ, մեր ընդհանուր անցեալից բխող ազգակցական կապեր: Եվ հենց այդ պատճառով կովկասեան թուրքական ժողովուրդներն այժմ կազմված են միեւնոյն կրոններից եւ միեւնոյն ազգերից եւ ունեն գրեթե միեւնոյն պատմությունը»⁹²:

Թուրքիան Անդրկովկասում առանձնահատուկ խնդիրներ ունի: «Ռուսական զնդանում» 200 տարի մնալուց հետո Անդրկովկասը վերջապես վերադարձել է «մայրական գիրկը»⁹³: Ռեուֆն իր բացման խոսքում «հայ» բառը

⁹¹ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 1875, ց. 1, գ. 3:

⁹² Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 81:

⁹³ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

չարտասանեց: Նա կտրականապես մերժեց խորհրդաժողովը հերթականությամբ ղեկավարելու առաջարկը, դրանով իսկ Տրապիզոնը համարելով թուրքական տարածք: Բացի դա, թուրքական պատվիրակությունը կետ առ կետ քննարկեց Անդրկովկասի մասին ներկայացված տեղեկատվությունը հենց սկզբից ցուցադրելու, որ Թուրքիան թույլտվություն չի խնդրում Անդրկովկասի գործերին միջամտելու համար: Եվ դա պատճառաբանվում էր երկրամասին ավելի խորը ծանոթանալու ձգտմամբ: «Չնայած խոսքը գնում է ծանոթության մասին,- ասաց Ռեուֆը,- սակայն մենք պատրաստ ենք գնալ առաջ եւ ճանաչել ձեր անկախությունը»⁹⁴: Նա չէր զլանում խոստումներ եւ շողորթություններ շռայլել: Ներողություն խնդրելու նման ասում էր, թե անցած հարյուրամյակների ընթացքում «Թուրքիան, դժբախտաբար, չէր կարող կատարել իր պատմական պարտքը Անդրկովկասին օգնություն ցույց տալու գործում, այնուամենայնիվ, մեր կողմից ապրած դարաշրջանն ապացուցեց... մեր ճակատագրերի միավորման անհրաժեշտությունը...»⁹⁵:

Մերընդմերթ այդ շաղակրատանքների շղարշից դուրս էին պրծնում թուրք զավթիչի ժանիքները՝ «Ռուսաստանի քաղաքական սահմանները պետք է հետ տարվեն Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ եւ Ռուսաստանն այլևս չի կարող որեւէ պահանջ ներկայացնել Անդրկովկասի նկատմամբ... Ներկայումս հնարավոր է հարցի լուծման երկու եղանակ, կամ Թուրքիան կգրավի Անդրկովկասը ընդհուպ մինչեւ Սեւ եւ Կասպից ծովերի ափերը, կամ Թուրքիայի խնամակալության ներքո կկազմավորվեն բուֆերային բնույթի անդրկովկասյան զանազան պետություններ»⁹⁶: Այս չկարողանալով զսպել սեփական երեսակայությունը բացականչեց. «Մենք ցանկանում ենք, որ Թուրքիան դառնա Արեւելքի գլուխը»⁹⁷:

Պատասխանելով Ռեուֆի առաջադրած հարցերին, Չխենկելին ասաց, թե Անդրկովկասի գերագույն իշխանությունը սեյմն է, որը «ստեղծված է ժողովուրդների կամքի ազատ արտայայտությամբ եւ ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքով: Բոլշեւիկեան յեղաշրջումից սկսած Անդրկովկասի հողի վրա դադարեց կենտրոնական ռուսական իշխանության գործունեությունը...»: Նա Անդրկովկասի անկախությունը ցուցադրող քայլ համարեց նրա կողմից Բրեստի դաշնագրի Անդրկովկասին վերաբերող կետերի չճանաչելը. «Այսպիսով, Անդրկովկասը de facto իրապես արդեն պետություն է», - ճառն ավարտեց Չխենկելին⁹⁸: Ռեուֆն ավելի հստակ պատասխան էր պահանջում Անդրկով-

⁹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

⁹⁵ ЦГАОР, ф. 1318, оп. 1, л. 318:

⁹⁶ Ն.տ., Պ. 23:

⁹⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 7:

⁹⁸ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 82:

կասի անկախության վերաբերյալ ու նաեւ հրապարակել նրա «հողի սահմանները, պետական լեզուները եւ կրոնը, ճշտել յիշեալ կառավարութեան վիճակն ու դիրքը Օսմանյան կայսրութեան նկատմամբ»: Չխենկելին պատասխանեց, որ Անդրկովկասը «ռամկավար դաշնակցային հանրապետութիւն է»: Նրա մեջ մտնում են Բաքվի, Գանձակի, Երեւանի, Թիֆլիսի, Քութայիսիի, Բարումի ու Կարսի նահանգները եւ Սուխումի ու Չարաթալայի շրջանները: Պետական լեզուն առայժմ ռուսերենն է, բայց դառնալու է վրացերենը, հայերենը եւ թուրքերենը: Խղճի ազատություն է:

Խորհրդաժողովի նախօրեին ռազմաճակատն անցնում էր Բաթումով ու ճորոխի հովիտով, Երզնկայով, որտեղ կանգնած էր հայկական (Երզնկայի) զունդը, Էրզրումում էին առաջին եւ երրորդ զնդերը: Կարսում կար երեք զունդ, Խնուսից մինչեւ Տավրոս դիրքեր բռնել էին Հայկական 2-րդ եւ Խնուսի ու Վանի զնդերը: Հայկական 5-րդ զունդն ու Վանի երեք զումարտակները կանգնած էին Վանից հարավ, իսկ դրանից արեւելք Մակուի զունդն էր: Տարոն-Վասպուրականի շրջանում գործում էին Անդրանիկի հատուկ զորամասը եւ Սեպուհի, Սուրադի, Տեր-Ղեւոնդյանի, Թորգոմի, Պանդուխտի եւ մի քանի ուրիշ մարտական խմբեր: Երեւանում տեղակայված էր գեներալ Սիլիկյանի, Ալեքսանդրապոլում՝ Արեշյանի դիվիզիաները, Կորկոտյանի հեծելազորային զորամասը: Գլխավոր շտաբն ու Նազարբեկյանը Թիֆլիսում էին: Բաքվում կար 10.000 հայ զինվոր ու սպա, Պարսկաստանում ասորիների զորամասն էր Աղա Պետրոսի եւ հայկական մի զումարտակ Ստեփանյանի հրամանատարությամբ: Թուրքերն ունեին 30.000 մարդ, որից 8000-ը՝ Բաքվի ուղղությամբ էր: Գերմանացիները 15.000-ոց բանակ էին հասցնում Օդեսա Կովկաս ուղարկելու համար:

Այս իրողություններն, անկասկած, ազդեցություն գործում էին բանակցությունների ընթացքի ու պատվիրակների կեցվածքի վրա: Անդրկովկասի պատվիրակության նիստում Ռեուֆի հարցադրումների քննարկման ժամանակ Հայդարովը պահանջեց թուրքերի հետ անկեղծ լինել, Մեհտիեր առաջարկեց գրել սեյմին, թե քանի դեռ Անդրկովկասն անկախ չի հայտարարվել, բանակցությունները հաջողություն չեն ունենա: Խատիսյանը գտավ, որ պետք է վերջ դնել թուրքերի կողմից քննություններ անցկացնելուն եւ սկսել իրական բանակցությունները, որոնք թուրքերը միտումնաբար ձգձգում էին: Նպատակն ակնհայտ էր, թուրքական բանակը հարձակվում էր եւ որքան նա առաջանար, այնքան կմեծանար Անդրկովկասի հետ ուժի դիրքերից խոսելու հնարավորությունը:

Ռեուֆը չէր քաշվում կրկնել, թե իրենք եկել են Տրապիզոն ոչ թե հաշտություն կնքելու, որովհետեւ դա անհնար էր, քանի դեռ Անդրկովկասն իրեն ան-

կախ չէր հայտարարել, այլ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու, տնտեսական եւ հյուպատոսական պայմանագրեր կնքելու:

Անդրկովկասի պատվիրակությունը նման հարցադրումը համարում էր կամայական նաեւ այն պատճառով, որ հաշտության պայմանագիր կնքելու նախաձեռնության հեղինակը Կ. Պոլիսն էր, հետեւաբար նա «Անդրկովկասի կառավարությանը ճանաչել էր որպէս անկախ եւ միակ լիազորված կառավարություն հաշտություն կնքելու համար»: Այն իրողությունը, որ Տրապիզոնում Թուրքիայի եւ Անդրկովկասի պատվիրակությունները հաշտության բանակցություններ էին վարում, նշանակում էր, որ երկու կողմերն էլ չէին ընդունում Բրեստի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող կետերը: «Անդրկովկասը ներկայումս գտնվում է Թուրքիայի հետ պատերազմի հետեւանքների վերացման եւ ամուր խաղաղության հաստատման համար բանակցություններում»⁹⁹: Թուրքերը պատասխանեցին, որ պետությունների շարքը չմտած միավորման բողոքը միջազգային դիվանագիտական ակտ հանդիսացող Բրեստի պայմանագրի դեմ իրավական որեւէ հիմքից զուրկ է եւ Անդրկովկասի հետ հարաբերությունների մեջ մտնելը Թուրքիայի համար չունի այլ նպատակ, բացի «Բրեստ-Լիտովսկի պարտավորություններից դուրս մնացած տնտեսական ու առեւտրական հարաբերությունների եւ դրանց տեխնիկական եւ գործնական մանրուքների համար հիմքերի նախապատրաստումը, ինչն ամենեւին չի նշանակում այդ պայմանագրի նշանակության ժխտում»: Բրեստի պայմանագրի դրույթները պարտադիր են:

Թուրքերն Անդրկովկասի կառավարությանն ու նրա պատվիրակությանը լուրջ չէին ընդունում եւ դա չէին թաքցնում: Վերջիններն այդ հասկանում էին ու զայրանում: «...Ինչպէ՞ս կարող եմ որեւէ բանակցություն վարել,- ասում էր Ա. Խատիսյանը,- եթե այստեղ նստած եմ որպէս մի տիկնիկ, որին սուրճ են խմացնում եւ... որը լրիվ կտրված է աշխարհից... նման իրավիճակում այլեւս անհնար է շարունակել բանակցությունները եւ անհրաժեշտ է դուրս գալ այդ դժոխսային պայմաններից»¹⁰⁰:

Չխենկելին նույնպէս գտնում էր, որ իրենց համար Տրապիզոնում ստեղծված էին բանտային պայմաններ: «Թուրքերը մեզ խաղացնում են», - ասում էր նա:

Ռեուֆը մեկ հայտարարեց, որ Թուրքիան բանակցություններ կարող է վարել միայն անկախ Անդրկովկասի հետ, իսկ երբ Չխենկելին ասաց, թե իրենք չեն ընդունում Բրեստի պայմանագիրը, պնդեց հակառակը, թե ուժի մեջ է համարում Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմաններն այն մասում, որը վերաբերում է Կովկասին եւ «ներկա բանակցություններն այլ նպատակ չեն հե-

⁹⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

¹⁰⁰ Ն.տ.:

տապնդում, քան տնտեսական եւ առեւտրական հիմքի նախապատրաստում եւ դրանց գործնական ու տեխնիկական մանրամասների մշակում, որոնք դուրս են մնացել Բրեստի դաշնագրից»¹⁰¹:

Նույն թեթեւությամբ թուրքական պատվիրակությունը արհամարհեց սեյմի առաջարկությունները. Արեւմտյան Հայաստանին ինքնավարություն տալու պահանջը որակավորեց որպէս միջամտություն Թուրքիայի ներքին գործերին: «Հայաստանի ինքնորոշման հարցը,- հայտարարեց Ռեուֆը,- պետք է հանվի, որովհետեւ Թուրքիան չի կարող հանդուրժել դրա քննարկումը Անդրկովկասի պատվիրակության հետ տարվող բանակցություններում»: Այս առաջարկություն-հրամանն ընդունվեց առանց առարկության:

Մի բնորոշ դիպված եւս: Երբ դրվեց Արեւմտյան Հայաստանի հարցը, թուրքական պատվիրակությունը ցինիկաբար վրա տվեց. «Այնտեղ հայեր չկան եւ չեն լինի, որովհետեւ թուրք զինվորի անցած տեղերում հայ չի մնա»¹⁰²:

Բանակցությունների 3-րդ օրը Անդրկովկասի պատվիրակության գրավոր հարցմանը, թե Կարսի, Արդահանի եւ Բաթումի էվակուացիայի մասին Վեհիքի պահանջը նշանակո՞ւմ էր հրաժարում բանակցությունները շարունակելուց, թուրքերը բացասական պատասխան տվեցին, թե իրենց ոչինչ հայտնի չէ Վեհիքի պահանջի մասին եւ թուրքական պատվիրակությունը ձգտում է «Անդրկովկասի հետ կնքել եղբայրական եւ տեսական հաշտություն»¹⁰³:

Վրաստանում Խորհրդային Ռուսաստանի ռազմական ներկայացուցիչ Պ. Սիտինը գրում է. «Հենց առաջին միստին...Ռեուֆ բեյը հարց առաջադրեց, թե անհրաժեշտ է, որ Անդրկովկասն իրեն ճանաչի անկախ, որի հետ, որպէս անկախ պետության, Թուրքիան կարող է բանակցություններ վարել: Տվյալ դեպքում Ռեուֆ բեյը գործում էր գերմանացիների թելադրանքով, որոնց ներկայացուցիչը մշտապէս Տրապիզոնում էր:

Անկախության խնդիրը մինչեւ վերջն էլ դուրս չմնաց խորհրդաժողովի միստերի օրակարգից: Սկզբնական շրջանում Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու միտքը... այնքան անհեթեթ թվաց, որ այն մերժվեց գրեթե բոլոր քաղաքական խմբավորումների կողմից»¹⁰⁴:

Խատիսյանը գրում է, որ բանակցությունների վերջին Տրապիզոն այցելեցին գերմանացի երեք սպաներ եւ հանդիպում ունեցան Չխենկելու հետ:

Թերեւս այդ կողմնորոշումը հիմք հանդիսացավ, որ հայերը հայտարարեցին, թե հրաժարվում են ընդունել Բրեստի պայմանագիրը եւ հակառակ ադրբեջանցիների դիմադրության, հայերի օրինակին հետեւեցին վրացիները:

¹⁰¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

¹⁰² Ն.տ., գ. 53:

¹⁰³ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 1875, ց. 1, գ. 3:

¹⁰⁴ Ն.տ., ֆ. 1874, ց. 1, գ. 4:

Դրան Ռեուֆը պատասխանեց. «Օսմանյան պատվիրակությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Կովկասին վերաբերող մասի անվավերության մասին Անդրկովկասի պատվիրակության հայտարարությունը համարում է անընդունելի»:

Ռեուֆը բանակցությունները սկսելու պայման էր համարում ոչ միայն Անդրկովկասը պաշտոնապես անկախ հռչակելը, այլ նաև պետք է հրաժարվեր Կարսի, Արդահանի եւ Բաթումի մարզերից: Նա հայտարարեց, թե արեւմտահայերը պայքարելով ինքնավարության համար դավաճանեցին Թուրքիային եւ նրանց ոչ միայն ինքնավարություն չի տա, այլև թույլ չի տա, որ Անդրկովկասում գտնվող արեւմտահայ գաղթականները վերադառնան իրենց բնակավայրերը¹⁰⁵:

Ռեուֆը շարունակում էր խաղալ, միմյանց բացառող պահանջներով ու խոստումներով ողողել բանակցությունները: Նա հայկական պատվիրակությանը խոստացավ գաղթականներին վերադարձնել Թուրքիա՝ 300.000 հոգի Կովկասից, 30.000՝ Միջագետքից ու միաժամանակ սպառնաց. «Դուք միշտ հակված եք դեպի ռուսները եւ դրա համար պիտի ջնջենք հայերին. եթե դուք՝ հայերը, կրկին դիմեք Ռուսաստանի կամ Անգլիայի օգնությանը, մենք չենք երաշխավորելու նաև մյուս հայերի անվտանգությունը»¹⁰⁶: Եվ ապա. «Եթե չեք ուզում ընդունել մեր պայմանները, կզանք ու կթելադրենք դրանք եւ նույնիսկ ռազմատուգանք կդնենք մեր ծախսերը փակելու համար»¹⁰⁷: Ու նորից հեզնանք. «Մենք ինչպես չվախենանք ձեզից՝ հայերից: Թուրքիայում այլևս ոչ մի հայ չկա, իսկ դուք դեռ պլաններ եք քաշում Թուրքահայաստանի մասին»¹⁰⁸:

Ա. Խատիսյանը գրում է, որ Ռեուֆի եւ թուրքական պատվիրակության անդամների հետ հանդիպումներից ինքն այն տպավորությունն է ստացել, որ այն ժամանակ թուրքերը մտորում էին Հայկական հարցի լուծման երկու տարբերակ՝ բնակչության փոխանակություն Թուրքիայի եւ Անդրկովկասի միջև կամ տեղական ինքնավարության ապահովում Ալաշկերտի, Վանի եւ Խնուսի շրջաններում: Ռեուֆը նաև առաջարկում էր Անդրկովկասում տեղավորել 300.000 հայ, դրա փոխարեն Թուրքիա տեղափոխել 300.000 թաթար: Պատվիրակության հայ անդամները մերժեցին, քանի որ դա կնշանակեր հրաժարում Արեւմտյան Հայաստանի պահանջից: Երկրորդ տարբերակը թուրքերը ներկայացնում էին լոկ հարցադրման եւ ընդհանուր դատողությունների տեսքով:

Լեոն սահմանագիծը ճշգրտելու հանձնաժողովի անդամ էր եւ պատմում է, թե պատվիրակությունը հակված էր թուրքերին զիջել միայն թուրքաբնակ

¹⁰⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8:

¹⁰⁶ Ն.տ. ֆ. 4047, ց. 1, գ. 315:

¹⁰⁷ Հայոց Ազգային ժողովի արձանագրություն, ք. 178:

¹⁰⁸ Мелик-Каракозов Г., 674, աշխ., с. 25:

տարածքները: Սակայն վրացիներն այդ սկզբունքին դավաճանեցին, նրանք ձգտում էին՝ «որքան կարելի էր շատ բան տալ Կարսի շրջանից՝ Արդահանի եւ Բաթումի շրջաններում զիջողություններ քիչ անելու համար»:

Անդրկովկասի պատվիրակության ժողովում Խատիսյանը « մի առ մի պատմելով (եղեռնի) դեպքերը, մատով ցույց էր տալիս այն սարը, որի ետեւը թշվեցին հազարավոր տղամարդիկ ու կանայք եւ կոտորվեցին: Ցույց էր տալիս եւ նավահանգստի այն տեղը, ուր տարան երեխաներով լիքը մակույկները եւ ամենքին ածեցին ծովը»: Նա ամփոփեց. «Հայերի ցանկությունն է ստանալ իրենց հայրենիքում մի անկյուն, որտեղ կարող կլինեն ապրել ինքնավար կյանքով թուրքաց կառավարության հովանու տակ»: Խոսքը գնում էր Վանա լճին հարող տարածքների մասին¹⁰⁹: Վրացի պատվիրակներից մեկը հայտարարեց. «...Մենք ի՞նչ գործ ունենք այդ բոլորի հետ: Մեզ համար մեծ բան կլինի Բաթումն ազատելը... իսկ եթե Հայոց հարց քարձրացնենք, տանուլ կտանք եւ Բաթումը»:

Ռեուֆը, եւ ամբողջությամբ վերցրած թուրքական պատվիրակությունը, ոչ թե բանակցություն էին վարում, այլ կարծես գտնվում էին դիսկուսիոն ակումբում՝ այլեայլ, հաճախ բանակցությունների նյութի հետ առնչություն չունեցող մտքեր էին հրապարակ նետում, չարախնդում, սպառնում, սիրաշահում: Բազմաթիվ օրինակներից ներկայացնենք եւս մեկը: Նիստերից մեկում նրանք, թե «Սեբաստացի Մուրադն իր խմբով Երզնկայում մի քանի տասնյակ թուրք եւ քուրդ էր կոտորել եւ փոխարենը չարաչար տուժել էր՝ իր նահանջի ժամանակ կորցնելով այն ամբողջ ժողովուրդը, որ նրա հետ հեռացել էր»¹¹⁰:

* * *

Սեյմը մարտի 13-ին որոշեց. «... Տալ հաշտարար պատվիրակութեան նախագահ եւ Անդրկովկասի ԱԳ նախարար Ա. Չխենկելիին արտակարգ լիազորություններ...»¹¹¹: Մարտի 23-ին նորից հայտարարեց, թե թուրքերին է զիջում Օլթիի շրջանը, Արդահանի հարավային, Կարսի հարավ-արեւմտյան, Կաղզվանի արեւմտյան մասերը ու նաև պատրաստակամություն հայտնեց թուրքերի հետ քննարկել նրանց համար հարմար տարբերակ Արեւմտյան Հայաստանի հարացում, որպեսզի արեւմտահայերն ու մյուս ժողովուրդները հնարավորություն ստանան վերադառնալու եւ ունենալու անվտանգության երաշխիք:

¹⁰⁹ Լեո, 674, աշխ., էջ 387:

¹¹⁰ Ն.տ. էջ 388:

¹¹¹ Վրացեան Ս., 674, աշխ., էջ 84:

Այդ նշանակեց, որ սեյմի կառավարությունը համաձայնվեց այլևս չդնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը:

Ռեուֆը դրա հետ էլ համաձայն չէր: Հաջող օրը, երբ Սարիղամիշն արդեն բուրբերի ձեռքին էր, պատվիրակությունը ստացավ թուրքական վերջնագիրը՝ ընդունել Բրեստի դաշնագիրը եւ Անդրկովկասն անկախ հայտարարել:

Թուրքերի հաջողությունները ռազմաճակատում սեյմի պատվիրակությանը հարկադրեց հաշտվել տարածքային գիշումներ կատարելու մտքի հետ, ինչն, իր հերթին, խորացրեց հակասությունները պատվիրակության ներսում: Հայերը չէին ուզում զիջել Կարսը, իսկ վրացիները՝ Բաթումը:

Խառիսյանն առաջինն առաջարկեց Ռեուֆին. «Նման պայմանագիր մենք չենք կարող ստորագրել»: «Ոչ մի դեպքում», - ավելացրեց Չխենկելին: Ռեուֆ. «Տվեք Արդահանը եւ Բաթումը, կամ փոխարենը՝ Կարսը եւ Ալեքսանդրապոլը»: Չխենկելի. «Կարսին եւ Ալեքսանդրապոլին համաձայն եմ, իսկ Բաթումին՝ ոչ»: Խառիսյան. «Բաթումը տալ կարելի է, իսկ Կարսն ու Ալեքսանդրապոլը՝ ոչ մի դեպքում»:

Հակասություններն այնքան սրվեցին, որ Չխենկելին Թիֆլիսից խնդրեց իրեն իրավունք վերապահել «ինքնուրույն քայլեր» կատարելու: Այդ «ինքնուրույն քայլը» մի իմաստ ունենալով իրավունք ունենալ որոշելու, թե որ տարածքը զիջի թուրքերին: Իհարկե, զիջեց Կարսը, որը, սակայն, թուրքերին չբավարարեց: Նրանք մարտի 24-ի վերջնագիր հանձնեցին սեյմի պատվիրակությանը: 48 ժամ ժամանակ էր տրվում լուծելու մարտի 21-ի թուրքական հուշագրում ներկայացված պահանջները, չբավարարելու դեպքում սպառնում էին վերասկսելու պատերազմական գործողությունները: Չխենկելին Կարսի մարզի պահպանումը դիվանագիտական միջոցներով անհնար էր համարում եւ առաջարկում էր այն զիջել թուրքերին: «Ես գիտեմ, - հեռագրեց նա սեյմին, - որ հարցին այս կերպ զրվիլը կը սպառնայ Անդրկովկասի եւ սեյմի միութեանը, բայց, դժբախտաբար, ուրիշ ելք չկայ: Թուրքերը շատ լուրջ կերպով սկսած են պատերազմ մղել»: Իսկապես թուրքական բանակը շարունակում էր առաջանալ, գրավեց ոչ միայն Սարիղամիշը, այլև Բաթումի նահանգի մի մասը: Սեյմի կառավարությունը մարտի 26-ին փորձեց բանակցությունները տապալելու սպառնալիքով հարկադրել թուրքերին դադարեցնելու հարձակումը: Սակայն նույն այդ կառավարությունը գնաց նաև ստոր քայլի, հայտնելով թուրքերին, թե համաձայն է Կարսն ու Արդահանը զիջել, բայց հայերը դեմ են:

Թուրքերը սպառնացին անվերապահ կատարել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը եւ սեյմի պատվիրակությունը մարտի 28-ին համաձայնվեց: Սակայն դա բավարար չհամարվեց: Ռեուֆը նորից պահանջեց, թե «որպեսզի կարելի ըլլայ բանակցություններին մասնակից դարձնել նաև գինակիցները

(Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա), անհրաժեշտ է, առաջին հերթին, Անդրկովկասը անկախ հայտարարել:

Մարտի 31-ին տեղի է ունենում սեյմի անդամների, կառավարության, կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցություն: Գեգեչկորին հայտարարեց, թե Բաթումի պաշտպանությունը լավագույն վիճակում է, իսկ Ծերեթելին ասաց, որ «ավելի լավ է մեռնել կովի մեջ, քան մահացու ինքնահարված հասցնել»՝ հանձնելով Բաթումը:

Նորից առաջ քաշվեց պատվիրակության ղեկավարին արտակարգ լիազորություններ տալու հարցը եւ դա պատճառաբանվեց նրանով, որ երբ պատվիրակության փակ նիստերում հարցեր էին քննարկվում, դրանց մասին տեղեկատվությունն աղբրեջանցիներն անմիջապես հասցնում էին թուրքերին: Բանակցություններն ընդհատվեցին: Սեյմին զեկուցելու համար Թիֆլիս ուղարկվեցին Գ. Լասիխշվիլին, Հ. Քաջազնունին եւ Ի. Հայդարովը:

Ապրիլի 3-ին Չխենկելին պատվիրակության նիստում առաջարկեց թուրքերին բավարարելու համար նրանց հանձնել Օլթիի օկրուգը, Արդահանի մարզի մեծ մասը, Կարսի մարզը՝ Բեզլի Ահմեդի գծից վար, Կաղզվանի օկրուգը առանց Կաղզվան քաղաքի: Նա նաև գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի հարցում պետք է ընդունել թուրքերի դիտողությունն իրենց ներքին գործերին շխառնվելու վերաբերյալ:

Այդ առաջարկության դեմ հանդես եկավ Քաջազնունին: Նա հայտարարեց, որ Կարսի եւ Կաղզվանի բնակչության ոչ մահմեդական մեծամասնությունը չի ուզում միանալ Թուրքիային եւ նկատեց, որ Չխենկելին Արդվինը պահում է, իսկ նշված օկրուգները հանձնում է թուրքերին: Դիմելով Չխենկելուն նա ասաց, որ դուր Կրաստանի համար «ցանկանում եք պահպանել պաշտպանության մի գոտի եւս. ցանկանում եք Բաթումի օկրուգին հարակից ունենալ նաև Արդվինի, Ախալցխայի եւ Ախալքալաքի գավառները, թիկունքում՝ Արդահանը: Մինչդեռ, հանձնելով Կարսի եւ Կաղզվանի օկրուգների մի մասը, ոչ միայն առաջ եք շարժում թուրքական սահմանները դեպի հայկական մարզերի դռները, այլև կտրում եք այդ մարզերից աշխարհագրական, տնտեսական, ազգագրական անբաժանելի մասերը»¹¹²:

Երկու օր անց Չխենկելին քննարկման դրեց Անդրկովկասի անկախության հարցը: Նրան պաշտպանեց Շեյխ ուլ Իսլամովը՝ «Ռուսաստանի հետ կապը այսուհետև պետք է լինի գուտ երեւութական»: Պատվիրակությունն ընդհանուր եզրակացության չեկավ եւ հարցի լուծումը թողեց սեյմին:

¹¹² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

Ռեուլիը նորից պահանջեց, որ եթե Անդրկովկասն իրեն անկախ է համարում, ապա «պաշտոնապես» որոշի իր կառավարման ձևը, սահմանները, պետական լեզուն և կրոնը, ինչպես նաև Օսմանյան կայսրության հանդեպ դիրքորոշումը:

Չխենկելին խուսանավեց, թե իր կառավարությունը «տեղեկացրել է, որ պատրաստ է պատվիրակներ ուղարկել հաշտության վերջնական բանակցությունների և պայմանագիր կնքելու համար»:

Միաժամանակ ասաց, թե խորհրդաժողովում երկու պատվիրակությունների ներկայության փաստն ապացույց է, որ «երկու կողմերն անտեսում են Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և որ բանակցությունների ծանրության կենտրոնը պետք է լինի ոչ թե ձեռական իրավաբանական վեճը, այլ գործի էությունը, առավել ևս, որ Անդրկովկասի անկախ կառավարության կողմից հաշտության պայմանագիրը վավերացնելու ժամանակ, իհարկե, կկատարվեն բոլոր ձեռակառուցումները»¹¹³:

Դա եւս թուրքական պատվիրակությանը չբավարարեց: Նա պահանջում էր, որ «Անդրկովկասը վճռի անկախության ու ստեղծվելիք վարչակարգի խնդիրն ու այդ մասին հայտարարի մինչև բանակցությունների ավարտը»:

Սեյմի ոչ թե ձեռական, այլ իրական կարծիքը ակնհայտ էր: Դեռ առաջին աստաշրջանի երկրորդ նիստում Գեգեչկորին հայտարարեց, թե Բրեստի «հաշտությունը... գերմանական իմպերիալիզմի հաղթանակն է: Դուք զգո՞ւմ եք, որ այդ հաշտությունով, այդ անամոթ հաշտությունով պատրաստվում է դագաղ, որի մեջ ձգտում են դնել մեր հեղափոխությունը»¹¹⁴:

Մարտի 25-ին սեյմը Չխենկելու պատվիրակությանը տալիս է արտակարգ իրավասություններ: Մարտի 27-ին թուրքերը վերջնագիր են ներկայացնում Բրեստը ճանաչելու վերաբերյալ: Ապրիլի 8-ին սեյմի կառավարությունը համաձայնվեց «առավելագույն զիջումների»: Ռամիշվիլին հեռագրեց Չխենկելուն. «Հավանություն ենք տալիս քո որոշմանը Կարսը, Արդահանը զիջելու մասին: Բաթումը պետք է մնա մեր սահմաններում» ու նաև «թուրքերի հրաժարվելը Բաթումից կհանգեցնի հաշտության և Կովկասի հանրապետության ստեղծման: Այդպիսի ուղղումով Բրեստի պայմանագիրը կընդունվի մեր կողմից»¹¹⁵: Սակայն թուրքերը Բաթումը չզիջեցին:

Ստանալով պատվիրակության համաձայնությունը Չխենկելին պատասխանեց Ռեուլիին, թե «ինքը ընդունում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը», իսկ Ա. Խատիսյանն ու Հ. Քաջագունին հեռագրեցին սեյմի ՀՀԴ խմ-

¹¹³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 1874, ց. 1, գ. 4:

¹¹⁴ "Кавказ", 16.02.1918:

¹¹⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 1875, ց. 1, գ. 4:

բակցությունը, թե ստեղծված իրավիճակում Բրեստի «դաշնագրի ընդունումը պետք է համարել փոքրագույն չարիք»:¹¹⁶ Դա նույնպես Ռեուլիին չբավարարեց: Նա կրկին բանակցությունները շարունակելու պարտադիր պայման հռչակեց Անդրկովկասի անկախացումը: Ապրիլի 14-ին Գեգեչկորին պատվիրակությանը հետ է կանչում: Չխենկելին թուրքերին հավաստիացրեց, որ դա նշանակում էր ոչ թե բանակցությունների խզում, այլ ժամանակավոր ընդհատում:

Տրապիզոնում իրականում ոչ թե բանակցություններ էին գնում, այլ մի կողմը վերջնագրեր էր ներկայացնում և հարկադրում մյուս կողմին դրանք ընդունել: Ոչ ոք համոզված չէր, որ անկախություն հռչակելուց հետո նոր պահանջներ չէին առաջադրվի: Թիֆլիսում զգուշացան մանսօրինակ գործընթացից, որը կարող էր լրիվ ազատություն ընձեռել թուրքերին: Այսպես, օրինակ, Բաթումի ճակատում ապրիլի 10-ին կնքվեց զինադադար, բայց երկու օր անց գալիս է մի թուրք սպա և պահանջում մեկ օրում քաղաքը հանձնել, այլապես կգրավվի գեներալի ուժով: Եվ իսկապես, առանց պատասխանի սպասելու, ապրիլի 12-ին թուրքերը սկսեցին մարտական գործողությունները:

Նույն ապրիլի 12-ին Գեգեչկորին սեյմում հայտարարեց. «Թեև մենք թույլ ենք, բայց ոչ այնքան, որ դառնանք ստրուկ: Կարծում ենք, որ Բրեստի դաշնագրի ընդունելը նշանակելու է, որ Անդրկովկասը, որպես անկախ հանրապետություն, դադարելու է գոյություն ունենալուց և դառնալու է թուրքական կայսրության նահանգներից մեկը»:

Թուրքական բանակն ու դիվանագիտությունը գործում էին համաչափ: Ապրիլի 10-ին ստորագրվեց զինադադար, 12-ին Վեհիբը պահանջեց հանձնել Բաթումը և առանց պատասխանի սպասելու թուրքական 37-րդ դիվիզիան ապրիլի 14-ին այն գրավեց, չնայած սեյմը քաղաքում ուներ 10.000 զորք և 100 թնդանոթ, ինչպես նաև սեծովյան նավատորմի պաշտպանությունը: Ընդ որում՝ Բաթումը գրավելով թուրքերը կանգ չառան և շարունակեցին առաջանալ դեպի Թիֆլիս ու Քութայիս:

Հաջինսկին սեյմում հայտարարեց, որ եթե Չխենկելու «առաջարկած մարսիմումը, որը քիչ է, քան իմ ասածը, թուրքերին չբավարարի, իսկ մյուս կողմից, Անդրկովկասը չի պատրաստվում կռվել, ապա գերադասելի է կանգնել Բրեստ-Լիտովսկի տեսակետի վրա և որքան շուտ, այնքան լավ, քանի որ միանգամայն ծանր վիճակ կստեղծվի, եթե թուրքերը գեներալի ուժով գրավեն այդ մարզերը»:

Խսամամեղովը Կարսը, Բաթումն ու Արդահանը թուրքերին տալն անվանեց «թուրքական իրավունքների վերականգնում»:

Նույն օրերին Թալեթը Տրապիզոնի բանակցությունները համարեց «տե-

դեկատվական բնույթի բանակցություններ»։ Նա Պալավիչինին ասաց. «Նախ պետք է ճշտել, թե ինչպիսի դրական գործոն է ներկայացնում Անդրկովկասի հանրապետությունը»¹¹⁶։

Անդրկովկասյան սեյմի ապրիլի 13-ի՝ երկրամասը թուրքական ներխուժումից պաշտպանելու անհրաժեշտության վերաբերյալ հայտարարության դեմ հանդես եկավ Ռուստամբեկովը՝ այն անվանելով պատրանք։ Ջուղեյին մուսավաթի դիրքորոշման մասին ասաց, որ այդ կուսակցությունը հայտարարելով չեզոքություն՝ իր ձեռքերը լվանում է մեր արյունով, նա օգնում է թուրքական ներխուժմանը, հարված հասցնում «մեր թիկունքին»։

ՀՀԴ ներկայացուցիչ Մ. Հարությունյանը հայտարարեց. «Բրեստ Լիտովսկի պայմանագիրը Թուրքիայի համար չի նշանակում երեք սանջակներ, նրանք կզնան ավելի հեռու, կզնան Կ. Պոլիսը Բաքվի հետ միավորվելու իրենց փայփայած ծրագրով։ Եվ հոգ չէ, որ ճանապարհին կան ուրիշ ժողովուրդներ, նրանց կարելի է ջնջել, իսկ որ թուրքերը ջնջելու եւ ոչնչացնելու վարպետներ են, բոլորին վաղուց հայտնի է»։

Ծերեթեյին ասաց, որ Թուրքիայի հետ կռվում մենք կհաղթենք, եթե «թիկունքից չլինեն դավադիր հարվածներ»։ Մուսավաթի նեկայացուցիչը պատասխանելով նրա ակնարկին ասաց. «Մենք կասկածում ենք, որ նման միասնությունը հնարավոր լինի, եթե սկսվեն պատերազմական գործողությունները»։ Այլ կերպ ասած, Ադրբեջանը դեմ էր պատերազմը շարունակելուն եւ, եթե այն շարունակվեր, որեւէ աջակցություն հայերին ու վրացիներին ցույց չէր տալու։ Երկար վիճաբանություններից հետո էր, որ սեյմը որոշեց պատվիրակությանը հետ կանչել Տրապիզոնից։ Ժորդանիան, թե նման որոշումով Անդրկովկասը պատերազմական դրության մեջ է մտնում Թուրքիայի հետ։ Այդ պատճառով սեյմը պետք է երկրում պատերազմական դրություն հայտարարի եւ ստեղծի երեք հոգանոց արտակարգ լիազորություններով մարմին պատերազմական գործերով զբաղվելու համար։ Սեյմը այդ մարմնի մեջ մտցրեց Ե. Գեզեչկոբիին, Խ. Կարճիկյանին եւ Ն. Ռամիշվիլիին։ Նաեւ հաստատվեց երկրամասի ժողովրդին ուղղված կոչի տեքստը. «Ի զեն ամենքդ։ Դեպի ռազմաճակատ ամենքդ։ Ամենքդ ի պաշտպանություն ազատության եւ հայրենիքի»։

Նաեւ ակնհայտ էր Չխենկելիի գործարքը թուրքերի հետ ի վնաս հայերի, հոգուտ վրացիների։ Չնայած դրան սեյմում կառավարության հարցն ու ծրագիրը քննարկելու ժամանակ հանդես գալով ՀՀԴ խմբակցության անունից Խ. Կարճիկյանն անվերապահ պաշտպանեց դրանք, քանի որ «կառավարութունը արտաքին կարգի դժվարութիւններ ներկայացնող խնդիրներու առջեւ է կանգնած»։ Արտաքին ուժերի «ճնշումը կու գայ բոլշեիկեան Ռուսիայեն» եւ կառավարության պարտքն է ապացուցել, որ «անկախութիւնը պիտի փրկէ Անդրկովկասը»։

¹¹⁶ OZFT-W-1110:

Բայց չփրկեց։

Սինչդեռ 1918-ի գարնանը Անդրկովկասում գերիշխողը թուրքերի հետ առճակատվելու եւ երկրամասն անկախ հայտարարելու տրամադրությունն էր։ Շատերն էին առաջարկում սեյմը ցրել եւ «հարել բոլշեիկյան իշխանության...»¹¹⁷։ Նույնիսկ բանաձեւ շրջանառության մեջ դրվեց, որը դատապարտում էր սեյմին եւ պահանջում Անդրկովկասի անկախության հարցը դնել հանրաքվեի¹¹⁸։

Վրացական «Էրթորա» թերթը գրեց. «Թուրքերը իրենց բոլոր կրոնակիցներին սրբազան պատերազմի են կոչում Կովկասի քրիստոնյաների դեմ... Սի կողմից Ռեուֆ բեյը գրուցում է մեր պատվիրակների հետ, մյուս կողմից, Վեհիբ փաշան մեր դեմ է ուղարկում իր զորքերը... Մենք իբրեւ հարեան ձեռք մեկնեցինք Թուրքիային, իսկ նա մեր դեմ հանեց մեզանում բնակվող իր կրոնակիցներին, կիրառելով անմեղ մարդկանց արյան ծովում լողացնելու իր քաղաքականությունը»¹¹⁹։

Սեյմի որոշումը Հաջինսկին բնութագրեց. «Արտառոցություն, որի հավասարը չկա միջազգային հարաբերությունների պատմության մեջ»։ Նա պահանջեց ոչ միայն պատվիրակության, այլև կոմիսարիատի ու սեյմի անդամների հրաժարականը։ Բայց պատվիրակությունն արդեն վերադառնում էր Թիֆլիս, իսկ թուրքական բանակը առաջանում էր դեպի Անդրկովկաս։

«Թուրքական զորքերի առաջխաղացումը,- հայտարարեց Խաս Մամեդովը,- եւ նրանց կողմից վիճելի մարզերի գրավումը պետք է դիտել ոչ թե որպես դրանց նվաճում, այլ կարգուկանոնի վերականգնում... Հեռացած ռուսական զորքերին փոխարինող կովկասյան ազգային զորամասերը թուրքերի կողմից դիտվում են որպես չեթեներ, քանի որ Անդրկովկասը տակավին կազմում է Ռուսաստանի մի մասը»¹²⁰։

Ռասուլզադեն հետագայում իր «Ադրբեջանական հանրապետություն» գրքում խոստովանեց, որ Տրապիզոնի բանակցությունների մասնակից մուսավաթ պատվիրակներին խորհուրդ էր տրված թուրքական պատվիրակությանը րացատրել, որ Ադրբեջանը ծանր վիճակում էր եւ Թուրքիայի օգնության կարիքն ուներ։ «Բոլորի հույսը Թուրքիայի վրա էր։ Միակ ուժը, որ ի գորու էր փրկել ազգը, Թուրքիան է»։ Եվ թուրք եղբայրներն օգնության հասան, շարունակում է նա. «Կարճ ժամանակում ամբողջ Ադրբեջանում, բացի Բաքվի նահանգից, կարգ ու կանոնը լրիվ վերականգնվեց»¹²¹։ Ա. Չխենկելին խոստովանեց, որ

¹¹⁷ Հայ ազգային խորհրդի նիստերի արձանագրություն, ք. 181:

¹¹⁸ Ն.տ., ք. 183:

¹¹⁹ "Кавказское слово", 03.04.1918:

¹²⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 7:

¹²¹ Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 33-34:

իր գլխավորած պատվիրակության առաջարկած պայմանները ձախողվում էին, որովհետև «գոյություն չունի միասնություն ոչ Անդրկովկասում, ոչ էլ սեյմում... մեր պատվիրակությունը կոլեկտիվ կարծիք չունեցավ»¹²²: «Սեզ կործանում է ոչ թե թուրքերի ուժը,- համաձայնվում է Խատիսյանը,- այլ ներքին համերաշխության ու համախմբվածության բացակայությունը»¹²³: Աղբբեջանցի պատվիրակները սպասում էին բանակցությունների խափանմանը: Դրանց ընդհատվելուց հետո մուսավաթական պատվիրակության մի մասը Գյանջինսկու գլխավորությամբ մնաց Տրապիզոնում ու անջատ բանակցություններ էր վարում թուրքերի եւ անձամբ Էմվերի հետ: Աղբբեջանցիները Խալիլի միջոցով առաջարկեցին, որ Թուրքիային միացվեն Անդրկովկասի մահմեդականաբնակ գավառները: Երիտթուրքերը չհամաձայնվեցին, ասելով, թե «Թուրքիայի մեծ քաղաքականությունը կարիք ունի ուժեղ եւ անկախ Աղբբեջանի»¹²⁴:

Հասկանալի է, որ թուրքերի համար սեյմի պատասխանը լոկ պատրվակ էր եւ նրանք սլանում էին արեւելք:

Տրապիզոնի բանակցությունները ավելի խորացրեց հակասությունները սեյմում եւ դրանք վերածեցին բախումների, որոնք երկակի բնույթ ունեին՝ ազգային՝ վրաց մենչելիկների, ՀՀԴ եւ մուսավաթի միջեւ եւ քաղաքական՝ ֆեդերալիստներ, հումեթ եւ այլն:

Չխենկելին խոստովանեց. «Սկզբում ես տրամադրված էի լավատես, բայց այժմ գալիս եմ եզրակացության, որ այս փակուղուց միակ ելքը Անդրկովկասի յուրաքանչյուր ազգության հնարավորություն տալն է որոշելու իր դիրքորոշումը մեր առջեւ կանգնած խնդիրների հանդեպ»¹²⁵:

Սեյմի ապրիլի 13-ի նիստում ՀՀԴ ներկայացուցիչ Ս. Հարությունյանն ասաց, որ եթե արեւմտահայերին ինքնավարություն չտրվի, պետք է զենք վերցնել ու զնալ ռազմաճակատ:

Ռուստամբեկովը հայտարարեց, թե մահմեդականները թուրքերի հետ հավատակից լինելու պատճառով չեն կարող «եռանդուն մասնակցություն ունենալ Թուրքիայի դեմ ռազմական գործողություններին»¹²⁶, իսկ Հաջինսկին ավելացրեց. «Առայժմ մահմեդականները իրենց պատասխանատու կուսակցությունների կողմից կարող են ձեռք ցույց տալ միայն բարոյական աջակցություն...»¹²⁷:

¹²² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 7:

¹²³ Ն.տ.:

¹²⁴ Каднишев А., Интервенция и гражданская война в Закавказье. М., 1960, с. 63:

¹²⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 9:

¹²⁶ Закавказский Сейм: Стенографический отчет, заседание N21:

¹²⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 9:

Նույն նիստում հայ պատվիրակները նորից դրեցին Արեւմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցը, որին վրաց մենչելիկները պատասխանեցին, թե «Թուրքաահայաստանի ինքնավարությունը պետք է իրականացվի միայն բուրբակյան պետականության շրջանակում»¹²⁸:

Արկոմեդը անդրադառնալով Տրապիզոնի բանակցություններին գրում է. «Պատմությունը ցույց կտա ապագայում, թե ինչպես մեր պատվիրակությունը Տրապիզոնում եւ Բաթումում իր հանցավոր մարտավարությամբ, իր հակապետական գործողություններով ավելի եւս խստացրեց այն վիճակը, որի մեջ քավալը էր լինում մեր երկիրը...»: Այդ գործունեությունն արտահայտվում էր. ա) նա հենց սկզբից հանդես եկավ որպես անկախ պետության ներկայացուցիչ եւ բանակցությունները վարում էր որպես այդպիսին, չնայած դրա իրավունքը չուներ, ոչ որքից «այդ մտքով լիագործուն չէր ստացել», բ) «նա իր մտավախության, քաղաքական ապիկարության եւ հանցավոր հակումների ու տրամադրությունների հետեւանքով զիջումների ճամփան բռնելով, թույլ տվեց ի վերջո ընդունելու Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որը բոլորովին դուրս էր նրա իրավասությունից», գ) այդ մասին Չխենկելին պատվիրակության համաձայնությամբ հայտնում է թուրքերին, առանց հանձնարարական ունենալու, դ) Չխենկելու քայլերը դավաճանական էին, նա Տրապիզոնից հրահանգեց Բաթումը թուրքերին հանձնել առանց կռվի, եւ թուրքերը 200 ասկյարներով գրավեցին քաղաքը: Նույնը կատարվեց նաեւ Կարսի եւ Ալեքսանդրապոլի հետ:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, շարունակում է Արկոմեդը, Չխենկելին հաճախակի մտերմական հանդիպումներ էր ունենում «Մաղալով, Կերեսելիձե, Սուրդուլաձե քաղաքական շանտաժիստներից եւ սրիկաներից բաղկացած հանրահայտ խմբակի այս կամ այն ներկայացուցչի հետ...»¹²⁹:

Իսկ վիճակը զնալով վատթարանում էր, «վերին աստիճանի ծանր եւ անտանելի դառնում, քաղաքական գործիչների հոգեբանական դրությունը եւ տրամադրությունը ուղղակի արգահատելի էր, նրանք փոխվում էին քամելիոնի պես:

Անդրադառնալով Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու սեյմի որոշմանը Ս. Շահումյանը գրում է. «Կոմիսարիատի հեղինակագրկվածությունը, ժողովրդի լայն խավերի տաժած ատելությունը նրա հանդեպ ներկայումս արդեն կասկած չեն հարուցում: Ահա խորամանկ պա. Ժորդանիան եւ Ի-ն դիմեցին պաշտպանվողների համար սովորական միջոցի՝ ժողովրդական զանգվածներին նորից հիմարացնելուն՝ իրենց ողորմելի գոյությունը երկարաձգելու համար: Այդ պարոնները զիտեն, որ մանր բուրժուական զանգված-

¹²⁸ Закавказский Сейм: Стенографический отчет, заседание N21:

¹²⁹ Ղարաջեան Գ., նշվ. աշխ., էջ 36-37:

ները տակավին որոշ պատրանքներ տաժում են Սահմանադիր ժողովի ու նրա անդամների նկատմամբ: Հենց այդ էլ այն հողն է, որի վրա այժմ ցանկանում են հենվել պարոնայք պահպանողականները՝ դաշնակցած բեկերի եւ աղայարների հետ»¹³⁰:

Տրապիզոնի բանակցություններում ամբողջ հասակով հանդես եկան թուրքերի եւ ադրբեջանցիների համաթրքական նկրտումները: Ռեուֆը անդրկովկասյան պատվիրակությանը համոզում էր, որ Անդրկովկասի անկախանալն արդար էր, որովհետեւ հնարավորություն էր ստեղծվում «ցեղակիցների միավորման համար»¹³¹: Դա կնշանակեր «Թուրքիայի իրավունքների, նրա հյուսիսային սահմանների պաշտպանություն»:

Տրապիզոնի բանակցություններում Անդրկովկասի պատվիրակության խորհրդական թաթար Պեպինովը պատվիրակության նիստում հայտարարեց, թե Անդրկովկասի կազմից դուրս մնացած Բաթումի եւ Կարսի մարզերի մահմեդականները «մտածում են Անդրկովկասում ստեղծել շորրորդ առանձին միավորը»: Նա նաեւ նպատակահարմար գտավ, որ ամբողջ Անդրկովկասը, որպես ինքնավար միավոր, մտնի Թուրքիայի կազմի մեջ¹³²:

Նա Բաթումի ու Կարսի միավորումը Օսմանյան կայսրության կազմում հիմնավորում էր նրանով, որ դրանց միջեւ «տնտեսական, կրոնական, կենցաղային եւ ռասայական կապերը շատ ուժեղ էին եւ մեկն առանց մյուսի շատ դժվարությամբ կարող է գոյություն ունենալ»¹³³:

Կովկասի միավորված լեռնականների միության ներկայացուցիչը Տրապիզոնում հայտարարեց, որ Անկախ Անդրկովկասի պետությունը չի կարող գոյություն ունենալ առանց Դադստանի եւ հյուսիսկովկասյան մյուս տարածքների¹³⁴: Սուլթանը հավանություն տվեց «լեռնականների նախաձեռնությանը» եւ նրանց ներկայացուցիչները 1918թ. մայիսի 11-ին Հյուսիսային Կովկասը հայտարարեցին անկախ եւ հռչակեցին անկախ պետություն, որը ձգվում էր Կասպից ծովից Սեւ ծով, ներառելով նաեւ Կուրանը, Ստավրոպոլը, Թերեքը¹³⁵:

Իբր խանգարելու, որ Ռուսաստանը «թռչի չգործի դեպի Միջագետք եւ Ալեքսանդրետ, լեռնական գործիչները դիմեցին Վիեննային՝ թույլ չտալ, որ Վրաստանը մտնի Ռուսաստանի կազմը, չեզոքացնել նրա ակտիվությունը Փոքր Ասիայում, Ռուսաստանից կտրել Վրաստանին ու Հայաստանին, վերացնել կոզակներին: Այս «նախաձեռնություններն» արժանացան Թուրքիա-

¹³⁰ Шаумян С., Избр. Произведения, т. 2, с. 172:

¹³¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

¹³² Ն.տ.:

¹³³ Ն.տ.:

¹³⁴ OLFT-W-1110, N60/p, doc. 7369:

¹³⁵ Ն.տ. N84-B/p:

յում բնակվող լեռնականների՝ չերքեզների աջակցությանը, ովքեր 1918թ. սեպտեմբերի 8-ին Թուրքիայի լեռնականների կոմիտեի եւ 1,5 միլիոն լեռնականների ամունից դիմեցին Քառյակ զինակցությանը խանգարել Ռուսաստանի ծավալմանը, թույլ չտալ, որ ստեղծվի սլավոնների համադաշնակցություն եւ օգնել սլավոնական ժողովուրդներին անկախանալու: «Եթե հնարավոր լիներ հենց սկզբից,- գրում է կոմիտեն,- Կովկասի ժողովուրդներին միավորել մի ընդհանուր դաշնակցության մեջ, դա փայլուն արդյունքներ կունենար: Այն կդառնար պատմեջ ռուսական առաջխաղացման դեմ, թույլ չէր տա, որ Անդրկովկասի փոքր պետություններն ընկնեին կախման մեջ Ռուսաստանից»: Նաեւ նշվում էր Հյուսիսային Կովկասի դերը դեպի Պարսից ծոց ռուսական առաջխաղացման ճանապարհը փակելու գործում:

Թուրքիան համամիտ էր լեռնականների հետ, մանավանդ, Անդրկովկասի անկախացման հարցում եւ որպեսզի պաշտպաներ այդ անկախությունը, պահանջում էր Կարսը, Արդահանը եւ Բաթումը, որպես փոխհատուցում:

Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Տրապիզոնի բանակցությունների անդրկովկասյան դերակատարների եւ սեյմի գործիչների մի քանի մտքեր ոչ միայն այդ բանակցությունների, այլեւ Կ. Պոլսի կովկասյան քաղաքականության վերաբերյալ: Նույն խնդիրների մասին քաղվածքներ ենք բերում նաեւ ժամանակի մամուլից ու քաղաքական գործիչներից:

«Թուրքերին չեն բավարարում Թուրքիայում հայերի կոտորածը, նրանց ինքնավարության մերժումը: Նրանք Անդրկովկասի հայերից պահանջում են վերածվել թուրքական քաղաքականության գործիքի, ցանկանում են օգտագործել նրանց ազդեցությունը Կարսի, Բաթումի եւ Արդահանի սանջակները առանց դիմադրության թուրքերին զիջելու եւ թուրքերի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու համար...»

Հայերին ինքնավարություն Թուրքիայում չի թույլատրվի, քանի որ նա ռազմական պետություն է: Թուրքերը կուլտուրական չեն, պատերազմի դեպքում նրանք սպառնում են ոչնչացնել Անդրկովկասի հայերին: Իրադրությունը Երեսանի նահանգում, ասում են նրանք, թուրքերի համար միեւնույն չէ եւ կարող է առիթ տալ շարժվելու դեպի Անդրկովկասի խորքերը: Իսկ այնտեղով, որտեղով կանցնի թուրքական զինվորը, չի կարող մնալ ոչ մի հայ»,- գրում է Միք. Բաբաջանյանը 1918թ. մարտի 17-ին:

«Թուրքիայում թույլ չի տրվում հայերի ուժեղացում,- շարունակում է նա,- ոչ մի արտոնությունից օգտվել նրանք չեն կարող: Կոտորած հնարավոր է ցեղասպանությունից մազապուրծ 200 հազար հայերի նկատմամբ... Սրանից հետո մենք կարող ենք դատել, թե ում հետ ենք կնքում պայմանա-

գիր եւ ինչ կարող ենք մենք սպասել Թուրքիայից, եթե մեզանում չլինի ազգությունների ու կուսակցությունների միասնություն, խիստ կարգապահություն եւ հստակ բաղաբաղանություն... Թաթարների տրամադրություններին թուրքերը հիանալի ծանոթ են...»:

1918թ. փետրվարին հանդես գալով սեյմի նիստում Խան Խոյսկին ասաց. «Ինչ վերաբերում է թուրքական կառավարության վարքագծին, ապա նրանում մենք տեսնում ենք տրամաբանական հետեւողականություն: Թուրքական կառավարությունը բազմիցս դիմել է մեզ որպես ինքնուրույն միավորի եւ պնդել, որ այդ գաղափարը(միավորման) ընդունվի մեր կողմից... Մենք որոշակի պատասխան չենք տվել... Այդ պատճառով, երբ այսօր թուրքական կառավարությունը դիմելով մեզ որպես ռուսական հպատակության մաս, առաջարկում է կատարել հաշտության պայմանները, որոնք կնքել է ռուսական հանրապետության հետ (Բրեստի պայմանագիրը), ապա դրանում չի կարելի չտեսնել տրամաբանական հետեւողականություն»¹³⁶:

Հայդարովը հայտարարեց. «Անդրկովկասյան պետության անկախության փաստը շահեկան է Թուրքիային եւ մեր բանակցությունները պետք է կառուցել այդ ոգով»:

Մ. Սեխտիե. «Եթե Անդրկովկասի անկախությունը չհաստատվի, իմ խմբակցությունը կիրաժարվի բանակցությունները պաշտպանելուց»: Ա. Ծերեթելի. «Թուրքերին մենք զիջեցինք ամեն ինչ, բացի Բաթումից, բայց Թուրքիան խաղաղություն չի ցանկանում»¹³⁷:

Ռուսաստանի մուսուլմանների ամունից ներկայացված բանաձեւում ասված էր. «Մուսավաթ կուսակցությունը կանի ամեն ինչ պատերազմը բարեհաջող (հոգուտ Թուրքիայի) ավարտելու համար»:

«Էրթոբա» թերթը գրում է. «Մինչ թուրքական պատվիրակները Տրապիզոնում արտասանում էին գեղեցիկ խոսքեր, նրանց գորքերը ոտնակոխ էին անում մեր սահմանները, հույսը գլխավորապես դնելով անդրկովկասյան թաթարների վրա: Այդ նպատակով արդյունավետ աշխատում են թուրքական էմիսարները: Նրանք հայկական զորամասերին չեն թողնում մեկնել ճակատ, իսկ Աջարիայում, Ախալցխայում եւ Արդահանում կազմակերպում են բացահայտ ապստամբություն»: Հիշելով «Վերածնունդ» թերթի տարածած լուրը. «Տվեր Կարսը թուրքերին, եւ նրանք վրացիներին չեն կաշի», «Էրթոբան» գրում է. «Ճարպիկ, խորամանկ դիվանագետները ցանկանում են սառեցնել վրացի-

¹³⁶ "Кавказский Сейм: Стенографический отчет, заседание N21:

¹³⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 50:

նրի մոտ ինքնապաշտպանության զգացմունքը, որպեսզի հայերի հետ հաշիվ մարքելուց հետո վերջ տան եւ վրացիներին»¹³⁸:

Մեկ այլ համարում «Էրթոբան» գրում է. «Թուրքերն իրենց բոլոր կողմնակիցներին պատերազմի են կոչում կովկասյան քրիստոնյաների դեմ, մուսուլմանների շրջանում տարվում է մարդատյաց քարոզ՝ գեներով համախմբվել բոլոր ոչ մուսուլմանների, բոլոր «գյավուրների» դեմ»¹³⁹:

Եվ ապա:

Երիտթուրքերը, թուրքական էմիսարները ու շեյխերը, Էնվերի հատուկ գործակալները «իսլամի հետեւողներին» կոչ էին անում մտնել թուրքական բանակ, վրացական ռազմագերի սպաներին՝ գերմանական սպայի հրամանատարությամբ Սասունի տակ ձեւավորվող վրացական լեզեոն: Էնվերը մեծ խոստումներ էր տալիս՝ պահպանել սպայական կոչումները եւ կավվածքներ տալ Կովկասում¹⁴⁰:

«Գերմանիայից, Թուրքիայից եւ այլ աղբյուրներից հոսում էր հսկայական գումար մուսուլմաններին զինելու համար: Ջենքի ձեռքբերումը դարձել էր ազգային մոլուցք: Կանգ չէին առնում ոչ մի գնի առաջ...»

Թուրքիայի հարձակման անցնելը ամենամոտ օրերի հարց էր եւ անդրկովկասյան թաթարները, հրահրված իրենց ղեկավարների կողմից, որոշեցին ամենաարդյունավետ կերպով օգտագործել ժամանակը եւ ձեռք բերել ավելի մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք»¹⁴¹:

Ոչնչացնելով ու զինաթափելով ռուս զինվորներին թաթարները զինեցին վայրենի դիվիզիայի մնացորդներին ու ստեղծեցին մուսուլմանական զորամասեր: «Իրադարձությունները Բաքվում» վավերագիրը նկատում է. «Թաթարները որոշակիորեն աշխատանք էին տանում թուրքական ներխուժման օգտին, որը նրանց անմիջապես գերակշռություն տվեց իրենց քրիստոնյա հարեւանների՝ հատկապես հայերի նկատմամբ: Թաթարները... խորապես գիտակցում էին, որ լինելով մուսուլման, իրենք չեն կռվի մուսուլմանների դեմ...»¹⁴²:

Գրում է Թ. Նազարբեկյանը. «Տեղական մուսուլման բնակչության թշնամական վերաբերմունքը եւ թուրք էմիսարների քարոզչությունը հատկապես ուժեղ էր ազդում զորամասերի կազմավորման վրա, հայ գյուղերի բնակչության կապը միմյանց եւ Երեսանի հետ մեծ մասամբ խափանվում էր հայերի վրա թաթարների ու քրդերի հարձակումներով եւ ապստամբություններով:

¹³⁸ "Кавказское слово", 14.03.1918;

¹³⁹ Ն.տ., 03.04.1918:

¹⁴⁰ Հունգարիայի պետական արխիվ, W469, 470:

¹⁴¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 29:

¹⁴² Ն.տ.:

Հեռախոսային եւ հեռագրական գծերը մեծ մասամբ ոչնչացվում էին մուսուլմանների կողմից: Սուրմալուի գավառի հայկական գյուղերի բնակչությունը մեծ դժվարությամբ էվակուացվեց՝ հատուկ նշանակված ջոկատի օգնությամբ: Ուլուխանլու կայարանի շրջանում երկաթուղին գտնվում էր մուսուլմանների ձեռքում եւ ոչ մի հայ չէր կարող թաթարների կողմից խստորեն հսկվող գնացքով երթել: Գնացքում բռնված հայը տեղնուտեղը գնդակահարվում էր կամ անհետ կորչում: Պատժիչ նպատակով ձեռք առնված միջոցառումները այդ շարիքը վերացնում էին ժամանակավորապես... յուրաքանչյուր ողջամիտ մարդ կարող է հասկանալ, որ այստեղ գործում է նախօրոք նախապատրաստված ինչ-որ ուժ»¹⁴³:

Վերադառնանք «Իրադատությունները Բաքվում» վավերագրին. «Անդրկովկասյան թաթարները քիֆլիսյան կառավարությունում ունեն իրենց ժրջան եւ հաստատուն ներկայացուցիչներն ի դեմս մուսավաթի: Այդ կուսակցությունը հետապնդում է խիստ եւ հետեւողական ազգային նպատակ, պլանաչափորեն եւ անշեղ ձգտում քրիստոնյաներից մուսուլմանների անջատմանը եւ որոշակիորեն դրսեւորում է, այսպես կոչված, թուրքական կողմնորոշում: Շամխորի դեպքերից եւ այն բանից հետո, երբ թուրքերը 1918թ. հունվարի 30-ին խախտեցին զինադադարը եւ առաջ շարժվեցին դեպի Բաքում եւ Էրզրում, թաթարները դադարեցին թաքցնել իրենց մարտավարությունը եւ լարեցին բոլոր ուժերը մի նպատակի հասնելու՝ Անդրկովկասում բոլոր մուսուլմաններին զինելու համար»¹⁴⁴:

«Ժոսրը գնում էր ոչ միայն այսպես կոչված երեք սանջակների (Բաքում, Արդահան, Կարս), առավել եւս Թուրքիայի կողմից դրանց գրավման մասին, որովհետեւ այդպիսով Ռուսաստանի մուսուլմանների հետ անմիջական շփում» չէր կարող լինել, այլ թուրքերը «անմիջական շփում» կհաստատեին միայն վրացական եւ հայկական «տարրերի» հետ»¹⁴⁵:

«Էնվեր փաշան,- գրում է Ե. Լուշուվեյտը,- փայփայում էր արկածախնդրական պլան, այն է՝ իմպերիալիստական Գերմանիայի հետ դաշինքով հասնել հսկայական նվաճումների: Նրանում մարմնավորվում էր եւ Արդուլ Համիդ 2-րդի համախառնվածը եւ երիտթուրքերի համաթուրքիզմը: Նա ոչ միայն երազում էր նվաճումներ Ռուսաստանի հաշվին Կովկասում, Մերձվոլգյան շրջանում եւ Սիջին Ասիայում, այլեւ հույսեր էր տաժում վերականգնել Օսմանյան կայսրության թուրքերի գերիշխանությունը աֆրիկական նախկին տիրապե-

¹⁴³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 20:

¹⁴⁴ Ն.տ., ֆ. 121, ց. 1, գ. 29:

¹⁴⁵ Лудшевйт Е., 6շվ. աշխ., с. 33:

տությունում, գուցե եւ նույնիսկ ընդարձակել այն քրիստոնական եւ ֆրանսիական գաղութների հաշվին: Նա երազում էր «Մեծ Թուրքիա» Աֆրիկայի եւ Ասիայի հսկայական տարածքներով»¹⁴⁶:

“Знамя труда” թերթը 1918թ. մայիսի 23-ին գրում է. «Թուրքիայում հայերին կոտորելուց հետո կայսրությունում վերացավ թուրք-հայկական հարցը: Բայց դա ավարտ չէր: Երիտթուրքերի եւ անդրկովկասյան մուսավաթականների համախառնական երազանքները գնում էին ավելի հեռու:

«Հայկական առանձին պետական միավորման գոյությունը կարող է ի չիք դարձնել Ռուսուլզադեի երազանքը,- գրում է նույն թերթը,- Թուրքիան հաշվի առավ պահը եւ սկսեց վճռական գործողություններ Անդրկովկասում հայերի, Հայկական հարցի վերացման համար»¹⁴⁷:

Մուսավաթականների միավորիչ համագումարում Ռուսուլզադեն ասաց. «Մի քանի հարյուրամյակներ թուրք ժողովուրդը գտնվելով խավարի մեջ եւ առանց ուղղեգիծ ունենալու ենթարկվել է ցնցման եւ այդ ցնցումը նրան արքնացրել է: Թուրք ժողովրդի նպատակը առաջադիմությունն է ու ձգտումը, որ պետքի մարդկության ծաղկուն այգում ծաղկի թուրքական բուրավետ ծաղիկը: Եվ այդ ծաղիկը մուսուլմանական ինտերնացիոնալի մեջ մտնող մյուս խմբերի հետ կազմի մի ընդհանուր փունջ»: Այս կապակցությամբ Ս. Սեֆը գրում է, որ Ռուսուլզադեն ակնարկում է միացյալ թուրքական պետության ստեղծումը եւ նրա ու մահմեդական աշխարհի հետ դաշինքի գաղափարը:

«Այստեղ մենք կարող ենք տեսնել ձգտում ազգայնական համաթուրքական գաղափարները համախառնիզմի գաղափարների հետ համաձայնեցնելու»: Ռուսուլզադեն գտնում է, որ «թուրքերը կազմում են մեկ ընդհանուր ազգ», իրենց ընդհանուր լեզվով, սովորություններով, գրականությունով:

Նախիջեւանի գրավումով (հունիսի 4) թուրքերը ուզում էին լուծել մի քանի հարցեր.

- հայ բնակչության բնաջնջում
- հայ զինված ուժերի ջախջախում
- կարճ ճանապարհով (Չանգեզուր, Ղարաբաղ) դուրս գալ Ելիզավետպոլ, Բաքու, որտեղ Խալիլ փաշայի պնդումով հարյուր հազարավոր թուրքեր ու մահմեդականներ տանջվում էին «ամենաիզճ ավազակների արյունոտ լծի տակ», իսկ նրանք ունեն «ամենասերտ կրոնական ռասայական կապ Օսմանյան կայսրության բնակչության հետ»¹⁴⁸:

¹⁴⁶ Лудшевйт Е., 6շվ. աշխ., с. 25:

¹⁴⁷ “Знамя труда”, 23.05.1918:

¹⁴⁸ “Кавказское слово”, 31.05.1918:

Նորի փաշան (կովկասյան մուսուլմանական բանակի հրամանատար) Գանձակում հավանություն տվեց Ադրբեջանի անկախացմանը:

1918թ. հունիսի 2-ին Նորիին հղած հեռագրում Վեիբը գրում է. «Ադրբեջանի իսլամական անկախ հանրապետության պահանջով Ղազախի վրայով Գյանջա է ուղարկվում ուժեղացված հավաքական զինախումբ մահմեդականներին փրկելու բոլշևիկյան ներխուժումից»: Սեկ այլ հեռագրում նա գրում է. «Ես անմիջապես համաձայնվեցի բավարարելու Ադրբեջանի կառավարության խնդրանքը՝ նրան զերծ պահել բոլշևիկյան ագրեսիայից, ապահովել խաղաղություն և անվտանգություն, Բաքուն և նրա շրջապատը մաքրել բոլշևիկներից և երաշխավորել երկաթուղային հաղորդակցությունը...»¹⁴⁹:

Ֆոն Ֆրանկենշտայնը 1918թ. օգոստոսի 7-ին գրում է Բուրիանին. «Ադրբեջանական կուսակցությունը գործիք է թուրքերի ձեռքին, որը պատերազմական իրավիճակը պարտադրել է ողջ երկրին»:

1918թ. հունիսի 1-ին «Знамя труда»-ն ահազանգում է. «Ադրբեջանական ինպերիալիզմի կրող մուսավաթը, օգտվելով հայերի ծանր վիճակից, ճնշում է գործադրում նրանց վրա, պահանջում սահմանների անհապաղ վերագծում, որպեսզի տիրանա ամբողջ Ղարաբաղին, որտեղ հայերը կազմում են բնակչության 2/3-ը»:

1918թ. հունիսի 15-ին Խարիչին հաղորդում է Բեռլին. «Թուրքերը բացահայտորեն ցանկանում են Հյուսիսային Կովկասը, ներառյալ Գաղստանը, միացնել Արեւելա-Կովկասյան մուսուլմանական հանրապետությանը, որին այստեղ կոչում են Ադրբեջան»:

Բարվի «Наше время» թերթն իր 1919թ. փետրվարի 9-ի և 22-ի համարներում գրում է. «թուրք-թաթարների քաջությունը չափվում էր սպանված անմեղ երեխաների, բռնաբարված կանանց, զնդակահարված պատանիների, խոշտանգված ծերունիների, խեղանդամ դարձած հոգեւորականների, պղծված եկեղեցիներից թալանած հարստության քանակով»:

Ըստ Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացված տվյալների՝ Անդրկովկասի միայն տնտեսական վնասը կազմել էր 19 միլիարդ 33 միլիոն ֆրանսիական ֆրանկ: Օսմանյան զորքերի կողմից գրավված Անդրկովկասի տարածքներից տեղահան արվեց 0,5 միլիոն հայ՝ նրանք փախան հյուսիս, որոնց վերադարձը թե թուրքերի և թե ադրբեջանցիների կողմից արգելվում էր:

Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆը 1919թ. հունվարի 23-ին Ա. Ահարոնյանին ասաց, թե գերմանացիները դեմ են հայերի նկատմամբ բռնություններին. «Բայց նա չի հավատում տաճկաց կառավարության խոստումներին, որովհետեւ Թալեաթ փաշան քսան անգամ իրեն խոստացել է ներում

¹⁴⁹ Հարությունյան Աշ., նշվ. աշխ.:

հրապարակել Թուրքիայի հայերի համար, բայց մինչեւ այժմ ոչինչ չի արել: Մինչեւ անգամ, եթե նրա պաշտոնական խոսքերի հիման վրա, ինքը հեռագրել է Բեռլին և ռայխստագում խոսք է եղել Թուրքիայի խոստումների վերաբերմամբ՝ այդ մասին արգելեցին Պոլսի լրագրում որեւէ բան տպել... Սեր գլխավոր զինվորական մարմինը այժմ պահանջում է անմիջապես տեղափոխել զորքերը դեպի Միջագետք, բայց նրանք դեռ ձգձգում են: Պատճառը՝ Բարվի հարցն է: Քանի որ Թուրքիան ուզում է այն ձեռք գցել Ադրբեջանի, այսինքն, իրականում իր համար»¹⁵⁰:

«Թուրքիան ուզում է Բաքուն իր համար,- ասաց Ի. Պոմյանկովսկին,- և այդ ժամանակ Թուրքիան կտարածվի դեպի Վլադիկավկազ»¹⁵¹:

¹⁵⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 41

¹⁵¹ Ն.տ.

ԲՐԵՍԼ-ԼԻՏՈՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Դվինսկում 1917թ. նոյեմբերին խորհրդային եւ գերմանական հրամանատարության հանդիպման ժամանակ որոշվեց սկսել հաշտության բանակցություններ: Դեկտեմբերի 9-ին Բրեստ-Լիտովսկի սպայական ակումբի շենքում, որտեղ տեղավորված էր գերմանական շտաբը, սկսվեցին Խորհրդային Ռուսաստան-Քառյակ զինակցություն բանակցությունները: Արեւելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, արքայազն Լեոպոլդ Բավարացին մի քանի չոր նախադատություններով բացեց հաշտության խորհրդաժողովն ու հեռացավ եւ նախագահողի բազմոցին տեղավորվեց գերմանական պատվիրակության ղեկավար, ԱԳ պետական քարտուղար ֆոն Զյուլմանը:

Բանակցությունների առաջին փուլում ռուսական պատվիրակության ղեկավարն Իոֆեն էր: Պատվիրակության կազմում էր նաեւ մի ուրիշ հրեա Մ. Պավլովիչը (Վելտման), որը պաշտոնապես պատվիրակության փորձագետն էր, բայց առանձնակի մեծ դեր էր խաղում բանակցություններում: Նա մինչեւ Ռուսաստան տեղափոխվելը բնակվել էր Փարիզում եւ, ինչպես ինքն էր պատմել, «գրեթե ամեն օր հանդիպում էր թուրք հեղափոխականների», այսինքն՝ երիտթուրքերի հետ, ովքեր «մշտապես հավաքվում էին նրա բնակարանում»¹:

Թուրքական պատվիրակությունը որոշ ժամանակ ղեկավարում էր Թալեաթն իր հետ ունենալով ԱԳ նախարար Ա. Նեսիմիին եւ Գերմանիայում Թուրքիայի դեսպան Հաբին:

Նախ ստորագրվեց պատերազմական գործողությունները 28 օրով դադարեցնելու պայմանագիր: Չինադադարի պայմանագրում անդրադարձ կար նաեւ Կովկասյան ռազմաճակատին, թե «ռուս-թուրքական ռազմաճակատում զինադադարը սկսվում է միաժամանակ», այսինքն՝ 1917թ. դեկտեմբերի 4-ին ժամը 14-ին²: Մի հետաքրքիր փաստ: Պայմանագրի 10-րդ հոդվածով Թուրքիան եւ Ռուսաստանը «պատրաստակամություն են հայտնում իրենց զորքերը հանել Պարսկաստանից»³: Իսկ Արեւմտյան Հայաստանից ռուսական զորքերը հանելու մասին խոսք չկար: Այն ծնվեց բանակցությունների ընթացքում:

¹ АПЛНВР, ф. 5402, оп. 1, д. 8:

² “Советско-германские отношения от переговоров в Брест-Литовске до подписания Раманьского договора”, Сборник документов, Т. 1, 1917-1918гг., М., 1968, с. 76:

³ Ն.ս., с. 79:

Թուրքական պատվիրակությունը օգտագործում էր բոլոր միջոցները Օսմանյան կայսրությանը դուրս բերելու ծանր կացությունից՝ որքան հնարավոր էր փոքր կորուստներով: Ականատեսներից մեկը հիշում է, թե զինադադարի կնքման ժամանակ «ֆրակ հագած», բայց ուտերից նեղ եւ անբնական հաստ մարմնով «թուրք դիվանագետը» այնքան «խոնարհաբար գլուխ տվեց» գերմանական դուրս Լեոպոլդին, որ «անհնար էր գապել փոթկոցը»⁴:

Այդ օրերին հրապարակ հանվեց այսպես կոչված «Բալֆորյան հռչակագիրը», որը փաստորեն Պաղեստինը հրեական ինքնիշխան պետություն դարձնելու կոչ էր: Նաեւ հայտնի էր, որ երիտթուրքական Թուրքիայի եւ սիոնիստների միջեւ դեռ դարասկզբին ձեւավորվել էր մի թաքուն համաձայնություն: 1909թ. սիոնիստական պարագլուխներից Վոլֆսոնը հայտարարեց. «Մենք ոչ մի հակասության չենք տեսնում օսմանյան շահերի եւ մեր սիոնիստական ձգտումների միջեւ»⁵:

Այն կարծիքն է ստեղծված, թե Բրեստի բանակցություններում, այսինքն՝ Արեւելյան ռազմաճակատում աշխարհամարտն ավարտելու խնդրում ամենից ավելի շահագրգռված էր Խորհրդային Ռուսաստանը: Բայց ահա թե ինչ է գրում Իոֆեն. «Գերմանիան ծարավ էր Ռուսաստանի հետ սեպարատ հաշտության: Նա այդ ուղղությամբ մի քանի քայլեր կատարեց դեռեւս ցարիզմի օրոք: Այժմ նա ստեղծում էր բանակցությունների զուտ գործարար բնույթի պատրանք»⁶:

Բանակցությունների առաջին միստում (15-ը դեկտեմբերի) թուրքական պատվիրակությունը Իոֆենն ու Պոկրովսկուն հանձնեց հետեւյալ պայմանները, որ Ռուսաստանը Թուրքիային վերադարձնի նրանից գրավված բոլոր տարածքները եւ պայմանագիրը ստորագրելու պահից 6-8 շաբաթվա ընթացքում այդ տարածքներից հանի իր զորքերը ու ծառայությունները, սահմանը (150 կմ) պաշտպանելու համար թողնի մեկ դիվիզիա, մյուս զորքերը զորացրի, ինչպես նաեւ ցրի հայկական զինված ջոկատները⁷:

«Русские ведомости»-ն այդ պայմանները Ռուսաստանի համար «ստորացուցիչ» անվանեց: «Պատերազմում պարտված Թուրքիան պահպանում է իր բանակը մարտունակ վիճակում եւ հնարավորություն է ստանում Ռուսաստանից նվաճել այն ամենը, ինչ ցանկալի է Էնվերին եւ նրա համախոհներին»: «...Ռուսները պետք է հանեն իրենց բոլոր ռազմական ուժերը Հայաստանից եւ Պարսկաստանից, իսկ ազատ ինքնորոշված հայկական ջոկատներն էլ պետք

⁴ Мстиславский С., Брестские переговоры, Петроград, 1918, с. 38:

⁵ «Գրական թերթ», 22.06.190:

⁶ «Брест-Литовские мирные переговоры. Полный стенографический текст», М., 1920, с. 341:

⁷ “Русские ведомости”, 24.12.1917:

է անհապաղ գորացրվեն, որպեսզի Թուրքահայաստանի սպանդից մազապուրծ անրոջ հայ բնակչությունը առանց դիմադրության հանձնվի պատվագրված եւ բնաջնջման... Դա խելագարի գառանցանք չէ: Դա պաշտոնական փաստաթուղթ է...»⁸:

Իոֆեն լռեց եւ մի քանի օր անց արժանացավ թուրքական պատվիրակության անդամ Հարի շնորհակալությանը: «Այսօր,- ասել է նա,- տեղի ունեցավ ռուսական եւ թուրքական պատվիրակությունների համատեղ նիստը եւ ես այն տպավորությունը ստացա, թե Ռուսաստանին եւ Թուրքիային վերաբերող հարցերը բարեհաջող լուծում կգտնեն: Դա լավ արդյունք է: Այս վեց օրերի ընթացքում կատարված աշխատանքը իմ կարծիքով արժանի է գովեստի: Մենք այն շատ արագ կատարեցինք: Նման բարեհաջող արդյունքների համար մենք պետք է երախտապարտ լինենք ռուսական պատվիրակությանը, որն այս դժվարին բանակցությունների ընթացքում հանդես բերեց անկեղծություն, արդարամտություն եւ սրափութություն: Ռուսական պատվիրակության պարոնայք ներկայացուցիչները ցույց տվեցին, որ իրենք ժողովրդավարության իսկական ներկայացուցիչներ են եւ, միաժամանակ, հիանալի դիվանագետներ են ու պետական գործիչներ»⁹:

Այդ վարքագիծն ավելի քան տարօրինակ էր, քանի որ խորհրդային պատվիրակության ստացած հրահանգում պարզ նշված էր՝ ապահովել Արեւմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը բնակչության հանրաքվեի միջոցով, որի անցկացման համար պարտադիր էր համարվում թուրքական զորքերի դուրս բերումը տվյալ տարածքից եւ ապահովելու «գաղթականների, ինչպես նաեւ պատերազմի սկզբից իշխանությունների կողմից նշված մարզերից վտարված բնակիչների վերադարձը»¹⁰: Այդ միտքը կրկնված էր խորհրդային պատվիրակության առաջին հայտարարությունում. «Հանրաքվեն պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի տվյալ տարածքի ամբողջ բնակչության, չբացառելով տարագիրների ու փախստականների, քվեարկության լիակատար ազատություն»¹¹:

Իսկ Իոֆեն գերադասեց գերմանական՝ տրամագծորեն հակառակ, պահանջով հայտարարությունը լռության մատնել: Ի տարբերություն նրա Միլլակովը ոչ լռում էր եւ ոչ էլ գտնում, որ Ռուսաստանը Թուրքիային որեւէ զիջում պիտի կատարի: Դա զայրացրեց Թալեաթին: Նա «Թանին» բերքի թղթակցի հարցին պատասխանելով ասաց. «Միլլակովը... առաջ է քաշում թուր-

⁸ «Русские ведомости», 24.12.1917:

⁹ «Брест-Литовские мирные переговоры», с. 341:

¹⁰ Լեւին Վ., ԵԼԺ, հ. 26, էջ 427:

¹¹ ДВП СССР, т. 1, с. 7-8:

քահայ հարցի լուծում հօգուտ Ռուսաստանի... եթե ռուս ժողովուրդը պետք է ղեկավարվի ցարական իշխանության այդ (զավթողական) տրամաբանությամբ, անտեղի կլինի խոսել հաշտության մասին... բուրք ժողովուրդը 2,5 տարվա ընթացքում անխնա թափել է իր արյունը, ուստի հարցը պետք է լուծվի հօգուտ թուրքերի»¹²:

Թուրքերն ամբարտավան էին դարձել, որովհետեւ օգտվում էին Գերմանիայի աջակցությունից:

Օսմանյան ԱԳ նախարար Ա. Նեսիմին Քյուլմանի հետ Բեռլինում վարած բանակցություններից հետո, դեկտեմբերի 20-ին գրեց Բ. Դռանը. «Գերմանիան ընդունում է մեր հողերը պարպելու, կապիտուլյացիայի, համաձայնությունների, հանձնառությունների եւ բացարձակ իշխանության վերաբերյալ մեր բարձրացրած հարցերը»: Նա եւ Քյուլմանը պայմանավորվել էին ռուսներից «կորզել» նաեւ Բեռլինի դաշնագրով Ռուսաստանին անցած տարածքները: Էնվերի հանձնարարությամբ թուրքական բանակի շտաբի պետ, գերմանացի գեներալ Սեկտը Բեռլին ներկայացրեց Թուրքիայի պահանջները: Դրանք են. «Ռուսե ռազմական ծախսերի փոխհատուցում՝ 1. Ժամանակին Ռուսաստանին տրված Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերի վերադարձ: 2. Կովկասի անկախ պետության ճանաչում: 3. Ներքին (Թուրքիայի) գործերին միջամտելուց հրաժարվել»: Ռուսաստանը պետք է ճանաչի ինքնավարության իրավունքը նաեւ ռուսական կայսրության մուսուլմանական ժողովուրդների համար: «Նկատի է առնվում Կազանը, Օրենբուրգը, Թուրքեստանը, Բուխարան»: Գեներալը միջնորդում է, որ Բեռլինը «պաշտպանի թուրքերի այդ ցանկությունները»¹³: Նույն պահանջն էր առաջադրում Լյուդենդորֆը. «Թուրքիան պահանջում էր Բաթումը եւ Կարսը, քանի որ երկու քաղաքն էլ երկար ժամանակ եղել են թուրքական կայսրության կազմում: Մեզ համար այդ ցանկությունն ուներ երկրորդական նշանակություն, սակայն թուրքերին սատարելը համապատասխանում էր դաշինքի պայմաններին»¹⁴: Վիլիելմ 2-րդը նույնպես գտնում էր, որ պետք էր թուրքերին օգնել Հայաստանում:

Ռուսական առաջարկ-պայմաններում ասվում էր. «Ռուսաստանը հանում է իր զորքերը Ավստրո-Հունգարիայի եւ Պարսկաստանի գրաված մարզերից, իսկ Քառչյակ զինակցության երկրները՝ Լեհաստանից, Լիտվայից, Կուրլանդիայից»¹⁵:

¹² «Մշակ», 25.03.1917:

¹³ Muhlmann C., նշվ. աշխ., с. 190-191:

¹⁴ Людендорф Э., Мои воспоминания о войне 1914-1918, т. 2, М., 1924, с. 126:

¹⁵ «Брест-Литовские мирные переговоры», с. 7-8:

Բանակցությունների առաջին փուլում Գերմանիան չէր դնում Թուրքիայից եւ, ընդհանրապես, Սերձավոր Արեւելքից ռուսական զորքերի հետքաշման պահանջ եւ թվում էր, թե դա շահավետ էր Խորհրդային Ռուսաստանին: Բայց Իոֆեն դրանով բավարարվելու փոխարեն ընդհատեց բանակցությունները¹⁶:

Բանակցությունների երկրորդ փուլը սկսվեց 1917թ. դեկտեմբերի 27-ին (հ.տ.), ռուսական պատվիրակության ղեկավարը Տրոցկին էր: Վահան Տերյանը բանակցություններին մասնակցում էր որպես խորհրդական: Բրեստ մեկնելուց առաջ Տրոցկին հրաման արձակեց զորացրելու Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակը:

Երկրորդ փուլի առաջին նիստը բացեց Թալեաթը: Զյուլմանն առաջարկեց քննարկումը սկսել Հայկական հարցից, միաժամանակ նշելով. «Մենք Հայկական հարցը կարող ենք հարց համարել միայն այն ժամանակ, երբ կիմանանք, թե ինչպես է այն ձեւակերպում ռուսական պատվիրակությունը... (Եթե) հաջողվի հասնել համաձայնության մնացած հարցերում, ըստ իս, Հայկական հարցի պատճառով բանակցությունների խզումը քիչ հավանական է»¹⁷:

Փետրվարի 7-ին Զյուլմանը ռախսկանցլերին գրում է. «Տրոցկին ներկայացրեց... մի փաստաթուղթ, որն իր լկտիությանը ու ամբոխավարությանը իսպառ մթագնեց այն ամենն, ինչ ռուսները մինչ այդ արել էին»: Տրոցկու այդ կոշտ, հաշտության պայմանագիրը ձախողելուն միտված կեցվածքը Գերմանիային մղեց առաջ քաշելու Թուրքական հարցը՝ որպես ռուսների վրա ճնշում գործադրելու միջոց:

Ահա թե ինչու երկու օր անց Զյուլմանն առաջին անգամ որոշակիացրեց Կովկասյան շրջանում ռուսներին ներկայացվող պահանջը: Նա հայտարարեց, թե գերմանացիների համար «անընդունելի կլինեն այնպիսի հաշտության պայմանագիրը, որում դիվանագիտական երաշխիքներ չեն լինի, որ Պետրոգրադյան կառավարության կողմից մեր դաշնակիցներից գրավված շրջանները» կվերադարձվեն: Այս ձեւակերպումով եւս Բեռլինը դուռ էր բաց թողնում համաձայնության գալու համար: Պահանջվում էր միայն դիվանագիտական երաշխիքներ, այլ ոչ թե դրանց անհապաղ կատարում:

Տրոցկին պատասխանեց. «Ինչ վերաբերում է թուրքական շրջաններից զորքերը հանելուն, ապա մենք ունենք բավականին ծանրակշիռ սկզբունքային նկատառումներ, որ մեզ թույլ չի տալիս հայկական տարածքներից զորքերի դուրս բերումը դիտել իբրեւ փոխանակում ռուսական կայսրության այս կամ այն տարածքից զորքերը հանելու դիմաց: Երկու այնպես, ինչպես մենք

¹⁶ «Брест-Литовские мирные переговоры», с. 126:
¹⁷ АВПР, ф. 413, оп. 1, д.46:

մեր զորքերը դուրս ենք բերում Պարսկաստանից, այդպես էլ դրանք դուրս ենք բերում, եւ արդեն ձեռնամուխ ենք եղել դրան, Հայաստանից»¹⁸:

Տրոցկին նաեւ ասաց, որ «այդ հարցը նոր չէ... բանի որ մինչեւ Ծննդյան տոների կապակցությամբ ընդմիջումը, բանակցություններ տարվում էին նաեւ Թուրքիայի պատվիրակության հետ, այդ բանակցություններում Հայկական հարցը խաղացել է խոշորագույն դեր»¹⁹:

Փետրվարի 8(21)-ին գերմանական կողմը ներկայացրեց 10 կետից կազմված նոր վերջնագիր, որի 5-րդ կետը պաշտպանում էր Թուրքիայի պահանջները: «Ռուսաստանը իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով պետք է նպաստի, որպեսզի Թուրքիայի անատոլիական նահանգները ավելի արագ ու պլանաչափ վերադարձվեն եւ ճանաչվի կապիտուլյացիաների վերացումը: Ռուսական բանակների, ներառյալ ներկա կառավարության կողմից ստեղծված զորամասերի, ցրումը պետք է իրականացվի անհապաղ»:

Հինդենբուրգի խոսքերով, այդ կատարվեց մի պահի, երբ Հայաստանում «ռուսական ուժն արդեն նվազել էր, զորքերի մի մասը բացարձակապես հավելել եւ թուրքերին դիմադրողները» միայն հայկական մարտական ջոկատներն էին:

Սակայն թուրքերը քիչ էին համարում Ռուսաստանին ներկայացրած պահանջները: Փետրվարի 25-ին Հալիլ Սենթեշը Հաքին գրեց. «1. Հինգերորդ հողվածը թույլ է, պետք է ավելի վճռական լինել: 2. Պետք է պարպել... այն երեք սանջակները (Կարս, Արդահան, Բաթում), որոնց Ռուսաստանը տիրել է 1877-1878թթ. պատերազմի ռազմատուգանքի մի մասի փոխարեն...»²⁰:

Հավանաբար Գերմանիան ձանձրացել էր Թուրքիային ամեն ինչում խնամակալելուց եւ նրան մղում էր սեփական ցանկությունների կատարմանը մասնակցություն ունենալու գործողությունների:

1918թ. փետրվարի 21-ին Զյուլմանը գրեց Հաքին. «Ռուս պատվիրակների Բրեստ-Լիտովսկից հեռանալը եւ Ռուսաստանի ներքին խառնաշփոթություններն անհնար են դարձրել, որ Թուրքիան դիվանագիտական բանակցություններով վերստանա ասիական նահանգները... Այն պարագան, որ ռուսները դրանք լքել են եւ թողել են հայ ասպատակների կամքին՝ անհրաժեշտ են դարձնում թուրքերի ռազմական միջամտությունը»²¹:

Հավանաբար Բեռլինի խորհրդով, Թուրքիան Կովկասյան ռազմաճակատում ընդհանուր հարձակում սկսեց ռուսներին ավելի զիջող դարձնելու համար: Լ. Մարիտոլը նկատում է, որ Բրեստում թուրքական պատվիրակությունը ձգտում

¹⁸ Брест-Литовские мирные переговоры., с. 185-186:

¹⁹ АВПР, ф. 413, оп. 1, д.46:

²⁰ "Belleten", 1965, Temmuz, s. 513-514:

²¹ "Belleten", նշվ. համարը, s. 514-515:

էր ավելին ստանալ, քան 1878թ. հաստատված սահմաններն էին: Թուրքական բանակի ընդհանուր հարձակումը կոչված էր լուծելու նաև այդ խնդիրը²²:

Տրոցկին Թուրքիայի հետ դաշնագիր կնքելը նույնպես ենթարկում էր «Պատերազմ թե խաղաղություն» խնդրի իր մոտեցմանը: Ավստրո-Հունգարիայի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ, որին ներկա էր նաև Կարախանը, Տրոցկին ասաց, որ ինքը «գերմանացիների հետ համաձայնությամբ չի գա, անգամ եթե դա հանգեցնի ռուսական նոր վարչակարգի տապալմանը»: Դրան հետևեց նրա հայտարարությունը փետրվարի 10-ի նիստում, թե Ռուսաստանը «հրաժարվելով բռնանվաճողական պայմանագիրը ստորագրելուց», միաժամանակ «պատերազմը համարում է դադարեցված» եւ ռուսական զորքին «վիակատար զորացրման հրաման է տրվում ամբողջ ռազմաճակատով մեկ»:

Դա լոկ հայտարարություն չէր: Գերմանացիները պատրաստ էին Թուրքիայի հաշվին ռուսներին զիջումներ կատարելու միջոցով արագացնել դաշնագրի կնքումը: Բայց Տրոցկին առանձին հանդիպումներ ունեցավ Թալեաթի հետ, միասին մշակեցին ռուս-թուրքական հարաբերությունների հարցերը, որ նշանակեց զորքերի դուրս բերում գրավված տարածքներից եւ հրաժարում Կարսից, Արդահանից եւ Բաթումից²³:

Թուրքերը Հայաստանի հարցում ռուսական պատվիրակության անորոշ կեցվածքը նկատի ունենալով սկսեցին հող պատրաստել իրենց ապագա հարձակումը արդարացնելու համար:

Իզեթը բողոք ներկայացրեց, թե ռուսական զորքերի գրաված տարածքներում հայերը գործադրում են ամենադաժան բռնություններ մուսուլմանների հանդեպ, թե հայկական եւ վրացական զինված ուժերի կազմավորվելը օսմանյան բանակին թույլ չի տալիս պաշտպանելու մահմեդական բնակչությանը: Նա իր կառավարության անունից հույս էր հայտնում, որ ռուսական իշխանությունները անհապաղ միջոցներ կձեռնարկեն, ինչպես հայերի եւ վրացիների հարձակումներից մուսուլման բնակչության պաշտպանության, այնպես էլ նրանց կողմից զինված հրոսակախմբերի հետագա կազմավորման դեմ, նաև գոյություն ունեցող հրոսակախմբերը զինաթափելու եւ ցրելու համար²⁴:

Իոֆեն պատասխանեց, որ Իզեթը «հրոսակախումբ» է անվանում «Կովկասյան բանակից առանձնացվող հայկական զորամասերը», որոնք ազգայնացվում էին: Թալեաթը բողոքեց, որ հեռացող ռուսական բանակի տեղը գրավում էին «զինված հայերից ու վրացիներից կազմված ելուզակները», որոնք գործադրում էին «ամենանահավոր շարաշահումներ եւ սարսափներ»:

²² Mariote L., The Eastern Question. Oxford, 1951, p. 495:

²³ Muhlmann C., նշվ. աշխ., s. 190-191:

²⁴ АВІР, ф. 413, он. 1, д. 87:

Թուրքական պատվիրակությունը համոզված էր, որ գրավված տարածքները վերադարձվելու էին Թուրքիային, խնդիրն այն էր, որ դրանք վերադարձվեին «այն վիճակում, որում գտնվել են մինչև գրավումը» ու խայտառակություն էին համարում, որ ռուսներն այդ տարածքները հանձնում էին հայերին:

Հաքը հարցը դրեց ուղղակի՝ ո՞ւմ է պատկանում Կովկասը: Եվ պատասխանեց. «Կովկասը պատկանում է Ռուսաստանին...», չնայած Թուրքիան կզերադասեր գործ ունենալ Կովկասի անկախ կառավարության հետ:

Տրոցկին պատասխանեց. «Կովկասն առաջին հերթին պատկանում է կովկասյան ժողովուրդներին, բայց իր անցյալով կապված է Ռուսաստանի հետ եւ քանի դեռ Կովկասի ժողովուրդները չեն արտահայտել ցանկություն Ռուսաստանից անջատվելու, նա մնում է Ռուսաստանի դաշնակցային հանրապետության մաս»²⁵: Անդրադառնալով «հայերի գազանությունների» վերաբերյալ թուրքական մեղադրանքներին, նա ասաց. «Մեզանից յուրաքանչյուրը բավականին լավ գիտի Թուրքիայի պատմությունը, որպեսզի իրավունք ունենա հաստատելու, որ քրդերը զինված են, որ օսմանյան կառավարությունը երբեփեց պարտավորություն չի վերցրել նրանց զինաթափելու եւ ունեցած զենքի օգնությամբ քրդերը միշտ չէ, որ արել են բարություն»²⁶:

Հաքը հարկադրված եղավ նորից դիմել թուրքական մաշված զենքին, թե մինչև Հայկական հարցի առաջանալը թուրքն ու հայը ապրում էին եղբայրաբար: «Եթե չլիներ հայկական քաղաքական հարցը, հայերը Թուրքիայում կլինեին երջանիկ եւ կուներնային բարեկեցիկ կյանք»: Բայց նաև հայտնի է, որ «քրդերի մեղքն ավելի քիչ է, քան մյուս կողմի»: Դեսպանին օգնության հասավ Թալեաթը. «Օսմանյան կառավարությունը քրդերին չի զինել եւ, եթե ռուսների կողմից գրավված տարածքում կան զինված քրդեր, ապա ռուսները թող բարի լինեն զինաթափելու թե հայերին եւ թե քրդերին...»²⁷: Տրոցկին դրան պատասխանեց, որ Սեւ ծովի ափերին վիստում են բազմաթիվ թուրք ելուզակներ, որոնք, իրոք, սարսափելի բաներ են կատարում: Հաքը մեղքը բարդեց ռուսների վրա, թե «գրավված մարզերում ռուսական կառավարության բռնած դիրքը, հավանաբար, վատ օրինակ է այդ մարզերի ամբողջ բնակչության համար»²⁸: Տրոցկին ծաղրեց. «Մինչև հիմա չգիտեինք, որ թուրքական ելուզակները աչքի են ընկնում այդքան բարձր բարոյականությամբ եւ ավագակային հարձակումների համար հիմար օրինակների կարիք ունեն»²⁹:

²⁵ АВІР, ф. 413, он. 1, д. 70:

²⁶ Ն.տ.

²⁷ Ն.տ.

²⁸ Ն.տ.:

²⁹ Ն.տ.:

Թալեարքը հեռագրեց Կ. Պոլիս. «Արեւելյան Անատոլիան (Հայաստանը) էլ պետք է պարավի, լիագործություններս վերջացան. մեկնում եմ»³⁰: Եվ մեկնեց:

Նույն օրը Քյուլմանը գրեց կանցլերին. «Ելնելով Թուրքահայաստանի վիճակից, ես հաճախ եւ շատ հանգամանալից գրույցներ եմ ունեցել Թալեարք փաշայի եւ մյուս թուրքերի հետ: Դրությունն այնպիսին է, որ Տրոցկին... պատրաստ է, կարծես թե հետ քաշելու ռուսական զորքերը գրավված Հայաստանից: Փաստորեն զորքերի մեծ մասն արդեն հանված է: Սակայն Տրոցկին, որ շատ է ենթարկվում հայերի ազդեցությանը (նաեւ այստեղի ռուսական պատվիրակության կազմում հայ կա Կարախան անունով), երազում է ինքնուրույն հայկական պետության ստեղծման մասին, եւ, ինչպես ինքն է խոստովանում, կարգադրել է նշանակալիորեն զինել հայ բնակչությանը, իր խոսքով՝ մուսուլմանական բնակչությունից պաշտպանվելու համար:

Ես այլեւս ելնելով մեր շահերից եւ Թուրքիայի շահերից, ազդելու եմ Թալեարք փաշայի վրա այն ուղղությամբ, որ իրականացվի մեծահոգի եւ հաշտարար քաղաքականություն, սակայն հաշվի առնելով այդ ռասաների հավիտենական դաժան պայքարը, մեծ հույսեր չունեմ»³¹:

Երբ Տրոցկու համառության հետեւանքով Բրեստի խորհրդաժողովի երկրորդ փուլը խափանվեց (1918թ. փետրվար) «Русские ведомости»-ն փետրվարի 13-ին գրեց. «...Մենք ունենք նաեւ Կովկասյան ճակատը, որտեղ նույնպես դադարեցրել ենք պատերազմը: Իսկ Կովկասում կան մարզեր, որոնց նկատմամբ Թուրքիան վաղուց հայտնել է իր հավակնությունները, այնտեղ է նաեւ Բարվի նավթային շրջանը, որի նկատմամբ Թուրքիան նախկինում չէր համարձակվում ոտնձգություններ անել: Բայց դա առաջ էր, իսկ ներկայումս ո՞վ կխանգարի Թուրքիային զավթելու նաեւ նավթի փակ աղբյուրը... չէ որ մենք պատերազմը դադարեցրել ենք նաեւ Թուրքիայի դեմ»:

«Кавказ» թերթը 1918թ. հունվարի 21-ին գրում է. «Բրեստ-Լիտովսկի հաշտության խորհրդաժողովում կենտրոնական տերությունների պատվիրակները ժողովխորհրդի ներկայացուցիչներից կտրականապես պահանջել են, որ ճանաչեն Անդրկովկասի կառավարության անկախությունը եւ Անդրկովկասի կոմիսարիատի պատվիրակների իրավունքը՝ ինքնուրույն մասնակցելու կենտրոնական տերությունների հետ հաշտության բանակցություններին...»:

Բանակցությունների ձախողվելուց հետո գերմանացիները հարձակման անցնելով հասան Պիտերի պատերի տակ: Դա հետեւանք էր Տրոցկու «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» կարգախոսի: Խորհրդային պատվիրակու-

³⁰ «Belleten» նշվ. համարը, s.513:

³¹ «Армянский вопрос и геноцид армян в Турции», с. 469-470:

թյան նոր ղեկավար նշանակվեց Գ. Սոկոլնիկովը: Պատվիրակությանը հանձնարարված էր ընդունել Գերմանիայի բոլոր պահանջները:

Մարտի 1-ին, երբ Ռոզենբերգն ընթերցում էր գերմանական վերջնագրի 5-րդ կետը, ռուսական զորքերի կողմից Արեւմտյան Հայաստանը մարքելու վերաբերյալ, նա դրան ավելացրեց նաեւ Արդահանը, Կարսը եւ Բաթումը, թայց նաեւ ասաց. «Մենք դրա վրա չենք պնդում»³²:

Հանդես եկավ Հաքը եւ խոսելով ռուս-թուրքական «առանձին բանակցությունների» մասին, նշեց, թե համաձայնեցված էր «ռուս-թուրքական համաձայնագրի առաջին նախագիծը»: Այն ժամանակ բանակցությունը վարում էր Իոֆեն, իսկ Տրոցկու գալուց հետո, նա Տրոցկուն օսմանյան կառավարության անունից ներկայացրել է «ավելի լրիվ տեքստ», դրա համար էլ ռուսական պատվիրակությունն ուներ «պայմանագրի երկու նախագիծ»: Հավանաբար այս երկրորդ նախագիծում էր դրված Կարսի, Արդահանի եւ Բաթումի հարցը, որը փետրվարի 21-ին մտցվեց նաեւ գերմանական վերջնագրի մեջ:

Սոկոլնիկովը շառարկեց նախագծի այդ «ավելի լրիվ» տեքստին, միայն թե բանակցությունները հասնեին իրենց հաջող ավարտին: Նա, առանց պայմանագրի կետերն առանձին-առանձին քննարկելու, այն ստորագրեց:

Հայաստանին վերաբերում էր Բրեստում 1918թ. մարտի 3-ին կնքված պայմանագրի 4-րդ հոդվածը, որում ասվում է. «Ռուսաստանն ամեն ինչ կանի իր զորքերն Արեւելյան Անատոլիայի նահանգներից դուրս բերելու եւ դրանք կանոնավորապես Թուրքիային վերադարձնելու համար:

Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաեւ Արդահանի, Կարսի եւ Բաթումի մարզերից: Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական-իրավական եւ միջազգային-իրավական նոր հարաբերությունների կազմակերպման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մանավանդ Թուրքիայի, համաձայնությամբ հաստատել նոր կարգ:

Ռուսաստանն անհապաղորեն կանցկացնի իր բանակի, ներառյալ ներկա կառավարության կողմից վերստին կազմակերպված զորամասերի, լիակատար զորացրում»³³:

Նույն օրը ստորագրված ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի մի կետը սահմանում է, որ Ռուսաստանը պարտավոր էր 6-8 շաբաթվա ընթացքում իր զորքերը զինվորական եւ քաղաքացիական պաշտոնատարներով դուրս հանել «պատերազմից առաջ գոյություն ունեցող սահմանագծից» արեւմուտք ընկած տարածքներից: Ռուսաստանը պարտավորվում էր «ձեռք առնել անհ-

³² «Брест-Литовские мирные переговоры.», с. 219:

³³ ДВП СССР, т. 1, с. 119-124:

րաժեշտ միջոցներ, որպեսզի չկատարվեն վրիժառության ակտեր, կողոպուտներ, ոճրագործություններ կամ այլ իրավախախտումներ, որպեսզի նշված տարածքներում շենքերն ու կառույցները, այդ բվում եւ ռազմական շինությունները, ինչպես նաեւ կահույքն ու գույքը մնան անվթար եւ չավերվեն...

Այդ տարածքներում եղած մարդատար եւ մյուս երկաթուղիները, նրանց շարժական կազմը, ինչպես նաեւ կամուրջները կմնան նախկին վիճակում, որպեսզի դյուրացվի բնակչության մատակարարումը: Նույնը վերաբերում է նաեւ զինվորական հիմնարկություններին:

Ռուսական Հանրապետությունը մոտավորապես 150 կամ ավելի կիլոմետր սահմանները պահպանելու համար կօգտագործի մեկ դիվիզիա, մնացած բանակը կգորացրվի եւ կհեռացվի Կովկասից:

Ռուսական Հանրապետությունը պարտավորվում է ցրել բուրքահպատակներից եւ ռուսահպատակներից կազմված հայկական չեթեները ինչպես Ռուսաստանում, այնպես էլ բռնակցված թուրքական նահանգներում:

Ռուսաստանն իրավունք չունի սահմանին մեկ դիվիզիայից ավել զորք կենտրոնացնել անգամ զինավարժական նպատակներով, իսկ Թուրքիան իր մյուս հակառակորդների դեմ պատերազմը շարունակելու համար հարկադրված է սեփական բանակը պահել պատերազմական դրության մեջ»³⁴:

Տրոցկին հաղթեց: Ըստ նրա Բրեստը խնդիր ուներ բոլշևիկներին մոտեցնել «գերմանական եւ համաեվրոպական հեղափոխությանը»: «Մենք վատ դեբում չէինք լինի,- գրում է նա,- եթե նույնիսկ ստիպված լինեինք հանձնելու Պիտերն ու Մոսկվան»:

Ռոզենբերգը Արեւմտյան Հայաստանի եւ Կարսի, Արդահանի եւ Բաթումի տալը Թուրքիային բացատրեց թուրք բնակչության «դիմանկարով», նրանց «ճնշված վիճակով»: «Տեղական մահմեդական բնակչությունը,- ասաց նա,- դիմել էր մեզ օգնելու խնդրանքով՝ ռուսական զինվորական, ռուսական կամ իրենց այդպիսին ներկայացնող զորամասերի բռնության դեմ» եւ խնդրել, որ հնարավորություն տրվի «նորից Թուրքիային միանալու համար»³⁵:

Եվ ապա՝ «Արդահանի, Կարսի, Բաթումի օկրուգներից ռուսական զորքերի անհապաղ դուրս բերումը, դրանց ներքին կյանքին եւ միջազգային դրությանը Ռուսաստանի չխառնվելը...», Քառյակ դաշինքի պետությունների «նվազագույն պահանջն» է:

Սկզբում գերմանացիները պահանջում էին, որ Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանին տալ «ինչ-որ անկախություն»: Մ. Պավլովիչը նշում է, որ այդ շրջանի բնակչությունը պետք է ստանար իր ճակատագիրը որոշելու ազատու-

թյուն: «Սակայն այդ պահանջի մեջ ոչ մի խոսք չկար բվարկված մարզերը թուրքական զորքերի կողմից գրավելու մասին»³⁶: Չիչերինը նույնպես անդրադառնալով այդ խնդրին, նշում է, որ «պարզ կերպով չի նշվում, թե այդ մարզերն անջատվում են Ռուսաստանից»: Անգամ 1918թ. մարտի 1-ին, երբ գերմանացիները պահանջեցին, որ ռուսական զորքերը դուրս բերվեին գրավված տարածքներից ու նշված մարզերից, ավելացրին, թե դրա վրա «չեն պնդում»: Բայց այդ վերապահումը որեւէ դեր չխաղաց, որովհետեւ Գ. Սոկոլնիկովը գերմանական վերջնագիրն ընդունեց անմիջապես³⁷:

Ռուսական պատվիրակության դիրքն անսպասելի էր անգամ թուրքերի համար: Հաքը ոգեւորված հայտարարեց. «Այստեղ չկան ոչ հաղթողներ, ոչ պարտվողներ: Մենք բոլորս հաղթողներ ենք»:

Դա ոչ թե գերմանական կողմի դիվանագիտական հաղթանակն էր, այլ ռուսական կողմի դավաճանությունը, որը պայմանագիր ստորագրեց առանց անգամ դրա կետերը քննարկելու՝ պատրվակ բռնելով, թե կար քաղցրյուրոյի որոշումը պայմանագիր անպայման կնքելու վերաբերյալ:

Բացի դա, նույն նիստում Հաքը, բազմանշանակ ասաց. «Եթե Ռուսաստանն անցյալում մեզ որեւէ վիրավորանք է հասցրել, ապա մենք գիտենք, որ այդ եղել է ոչ այն Ռուսաստանը, որի ներկայացուցիչների հետ մենք հիմա բանակցություններ ենք վարում»:

Հաքի այս ելույթից նույնպես հետեւում է, որ թուրք-ռուսական բանակցությունները սկսվել էին դեռ մինչեւ Տրոցկին՝ Իոֆեի օրոք, որը հետագայում արդարացավ. «...Պարզվեց, որ գերմանական վերջնագրի պայմաններն ավելի էին վատթարացել, որովհետեւ չափն անցած թուրքական իմպերիալիստները հավակնություն ներկայացրին Արդահանի, Կարսի եւ Բաթումի մարզերի նկատմամբ: Չնայած դրան ռուսական պատվիրակությունը որոշեց չքննարկել հաշտության պայմանները, այլ պայմանագիրը ստորագրել առանց քննարկման, որպեսզի որեւէ կերպ տպավորություն չստեղծվի, թե Ռուսաստանի հեղափոխության եւ Քառյակ դաշինքի իմպերիալիստների միջեւ որեւէ համաձայնություն գոյություն ուներ»³⁸:

Երկկողմանի այդ խաղի հետեւանքները ծանր էին: Ռուսական կողմի առաջարկին՝ պայմանագիրը լինի առանց անեքսիաների, Քյուլմանը պատասխանեց, թե համաձայն է, եթե «Անտանտի պետությունները եւս պատրաստ են նույն պայմաններով բանակցություններ սկսելու»: Իսկ Հոֆմանն այս պա-

³⁴ ДВП СССР, т. 1, с. 199-201
³⁵ Брест-Литовские мирные переговоры, с. 211-226)

³⁶ Павлович-Вельтман М., Вопросы колониальной и национальной политики и III Интернационал, М., 1920, с. 63:
³⁷ «Брест-Литовские мирные переговоры», с. 221:
³⁸ «Брестский мирный договор», с. 268:

տասխասնն անվանեց «ներքին կեղծիք» պարունակող, որովհետեւ Ռուսաստանն ի վիճակի չէր Անտանտի անունից խոստում տալ³⁹։

Նույնպիսի «ներքին կեղծիք» էր պարունակում գերմանական առաջարկը, քե ճնշված ազգերի հարցը չի կարելի լուծել միջազգային փաստաթղթերով եւ այն պետք է վերապահվի նման ժողովուրդներ ունեցող պետություններին։

Բրեստում գերմանական պատվիրակությունը առիթը բաց չէր թողնում ռուսներին ասելու. «Ռուսաստանն իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով պետք է նպաստի ամենակարճ ժամանակամիջոցում Թուրքիային վերադարձնելու նրա անատոլիական մարզերը...»⁴⁰։ Սակայն սա բոլորը չէր։ «Այն բանից հետո,- գրում է Չիչերինը,- երբ մենք ժամանեցինք Բրեստ-Լիտովկե, մեզ ներկայացվեց էլի մի նոր պայման, որը վատացնում էր նախկին վերջնագիրը, այն է՝ Ռուսաստանից Կարսը, Բաթումը եւ Արդահանը անջատելու պահանջը⁴¹»։

Թուրքիան բանակցություններում առաջին պլան չէր մղվում եւ շատ ավելի գործում էր գերմանական պատվիրակության միջոցով, իսկ Թալեաթը անգամ «փորձում էր նվաճել մեր համակրանքը,- գրում է Ա. Իռֆեն,- հաճախակի հիշեցնելով, թե ինքը նույնպես հեղափոխական է»։ Քյուլմանը Հաքը փաշային խորհրդային պատվիրակությանը ներկայացրեց՝ բոլոր ժամանակների «Եվրոպայի լավագույն դիվանագետ»։ Իռֆեն զարմացած էր, որ Հաքը կինոդերասանի նման ուզած պահին իսկական արցունքներով կարող էր լաց լինել⁴²։

Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջաններում նախատեսվում էր ստեղծել նոր վարչակարգ հարեւան պետությունների, «հատկապես Թուրքիայի համաձայնությամբ»։ Դա «անասելի ծանր» էր Հայաստանի համար՝ նա գրկվում էր ոչ միայն Արեւմտյան Հայաստանից, այլև Կարսի եւ Արդահանի մարզերից։ Կ. Պոլիսը համառորեն գնում էր դեպի Անդրկովկասի անկախացում եւ այդ դաշնակցային հանրապետության մեջ մտցնելու Բաքվի, Ելիզավետպոլի, Երեւանի, Թիֆլիսի, Քութայիսի նահանգները, նաեւ Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերը, Մուխոմի եւ Չակաբալայի օկրուգները, իսկ Դաղստանի եւ Սեւծովյան նահանգներն այդ համադաշնակցության մեջ առնելու հարցը հույս ուներ լուծելու Անդրկովկասյան սեյմի ընտրություններից հետո։

Հավանաբար բուրքական այս ծրագրերն էին կատաղեցնում Բեռլինին ու նաեւ այն, որ նրա դաշնակիցները ռազմաճակատում Գերմանիային էական օգնություն չէին ցույց տալիս, բայց գնալով վերածվում էին ծանր բեռի իրենց հարաճուն պահանջներով։

³⁹ Гофман М., Записки и дневники 1914-1918. Ленинград, 1929, с. 120:

⁴⁰ ДВП СССР, с. 113:

⁴¹ Чичерин Г., Статьи и речи, М., 1961, с. 20:

⁴² Иoffee А., Брест-Литовск. См. "Новый мир", кн. 6, М., 1927, с. 146:

Այդ իրողությունը Լյուդենդորֆը բնութագրում է հետեւյալ կերպ. «Ռուսական առումով Ավստրո-Հունգարիայի կարիքը չունենք։ Բուլղարիայի օգնությունն անցւան է։ Թուրքիան բեռ է, չնայած նախկինում մեծ ծառայություններ է մատուցել»⁴³։

Գիտնականների կարծիքով Թուրքիայի հանդեպ Բեռլինի վերաբերմունքը սառեց այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ Թալեաթը Տրոցկու հետ բնարկել է ոչ միայն թուրք-խորհրդային հարաբերություններին վերաբերող, այլև բանակցությունների ընթացքում շոշափված բոլոր հարցերը⁴⁴։ Թալեաթը խաբում էր ոչ միայն Տրոցկուն, այլև բոլորին։ «1918թ. հունվարին մեծ վեճիկ Թալեաթը... անորոշ... խոստում տվեց ընդունել օրենք, որով Պաղեստինում հրեաների բոլոր արդար ցանկություններն իրականանան»⁴⁵։

Մինչեւ Տրոցկու գալը, գրում է Իռֆեն, «Բուլղարիան եւ Թուրքիան Բրեստ-Լիտովկայում գրեթե որեւէ դեր չէին խաղացել»⁴⁶։ Տրոցկու գալուց հետո դրությունը հիմնովին փոխվեց։ Արդեն խոսք էր գնում թուրքերին տալու ոչ միայն ռուսական զորքի կողմից գրավված Արեւմտյան Հայաստանը, այլև Արեւելյան Հայաստանը։ Նա հրապարակեց պայմանագրի ռուսական տարբերակի էությունը կազմող կետն այն մասին, որ «Ռուսաստանը Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի եւ Բուլղարիայի դեմ պատերազմը հայտարարում է վերջացած։ Միաժամանակ ռուսական զորքին հրաման է տրվում լրիվ զորացրում ռազմաճակատի ամբողջ երկայնքով»։ Այն ստորագրել էին պատվիրակության բոլոր անդամները բացի Լ. Կարախանից⁴⁷։

Ավստրո-Հունգարիայի ԱԳ նախարար Չերնին գրեց. «Թալեաթը հանդիսանում է թուրքական գործիչներից ամենաշնորհալին եւ թերեւս ամենաեռանդունը»⁴⁸։

Խորհրդաժողովի վերջին նիստին, մարտի 3-ին Սոկոլնինկովն արեց ինքնապահովագրական նշանակության հայտարարություն. «Գերմանիան ակնհայտորեն խախտելով հենց իր կառավարության կողմից 1918թ. փետրվարի 28-ին ձեւակերպած վերջնագրի պայմանները եւ հաշվի չնստելով Արդահանի, Կարսի, Բաթումի մարզերի բնակչության իսկական կամքի հետ, դրանք խլում է հօգուտ Թուրքիայի։

⁴³ "Советско-германские отношения...", с. 177:

⁴⁴ Саркисян А., Сионизм от Т. Герция до лорда Ротшильда и Армянский вопрос. См. "Армянский вестник", 2000, п.1-2, с. 162-163:

⁴⁵ Ллойд Джордж, Правда о мирных договорах, М., 1957, с. 303:

⁴⁶ "Новый мир" 1927г. п. 6, с. 143:

⁴⁷ Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, потах и декларациях. ч. 2, М., 1936, с. 113-114:

⁴⁸ Чернин О., В дни мировой войны. М.-Л., 1923, с. 251:

Պատերազմի ընթացքում երբեմնից երբեմնից թուրքական զորքերի կողմից չնվաճված այդ մարզերի... այդպիսի բացահայտ եւ բռնի գրավումը կարող է ունենալ միայն մեկ նպատակ՝ Ռուսաստանի վրա նոր հարձակման նախապատրաստում»⁴⁹:

Հարը պատասխանեց, որ վերջնագիրը չի ասում «գրավված մարզերի ազատման մասին, այլ ասվում է դրանք Թուրքիային վերադարձնելու մասին»: Թուրքիան այդ մարզերին «տիրել է շուրջ չորս դար... (դրանք) գտնվում են Ռուսաստանից 2000 կմ հեռավորության վրա... Ամբողջ տարածքում չի եղել ոչ մի ռուս: Կարսի սարալանջը երբեք չի սպառնացել Ռուսաստանին... Ռուսաստանը լոկ ուժով է բռնագրավել այն»⁵⁰:

Չ. Ավալովը նկատում է, որ «Կարսի եւ Բաթումի վերաբերյալ որոշումները պայմանագրի ամենակարեւոր կետերը» չէին, սակայն «դժվար է կասկածել, որ իրենց հետեւանքով դրանք Բրեստի տրակտատում ամենանշանակալիցն էին»⁵¹:

Որոշ գիտնականներ այդ պայմանագիրն անվանեցին Ռուսաստանի կապիտուլյացիա ոչ միայն Գերմանիայի, այլեւ Թուրքիայի առաջ. մյուսներն այն կոչեցին «Բրեստյան աղետ», «ստորագուցիչ, թեթևալիկ մտտեցում»:

Հանդես գալով խորհուրդների Համառուսական 4-րդ համագումարում (մարտի 14-ին) Գ. Չիչերինը պայմանագիրն առանց քննարկման ստորագրելը բացատրեց հետեւյալ կերպ. «Ինչ քննարկում կարող էր լինել մի ժամանակ, երբ գերմանական զորքերի հարձակումը շարունակվում էր դեպի անպաշտպան երկրի խորքերը»:

Ինքը՝ Տրոցկին Լ. Նազարեթյանին ասել է. «Բրեստի դաշնագիրը աղետ է Չեր ժողովրդի համար...»⁵²: Յու. Մարտովն այն անվանեց «գործարք», որով Ռուսաստանին չպատկանող մարզերը հանձնվեցին Թուրքիային:

Անդրկովկասի սեյմն ու կոմիսարիատը բողոք ուղարկեցին Բրեստի խորհրդաժողովին եւ մեծ ու փոքր մի շարք պետությունների. «Անդրկովկասի եւ նրա սահմանների վերաբերյալ յուրաքանչյուր պայմանագիր՝ կնքված առանց Անդրկովկասի գիտության եւ համաձայնության: Անդրկովկասյան կառավարությունը, սեյմի որոշման համապատասխան, համարում է միջազգա-

⁴⁹ "Мирные переговоры...", с. 229-230:

⁵⁰ Ն.տ.

⁵¹ Авалов З., Батум и Карс. См. "Международная политика и мировое хозяйство" 1918г. N2:

⁵² «Դրոշակ», 1928, N78:

յին նշանակությունից զուրկ եւ իր համար պարտադիր ուժ չունեցող»⁵³:

Սակայն պայմանագրի ստորագրման օրը Թիֆլիսում ստացվեց Անիի ինտագիրը՝ «Ռուսական Հանրապետությունը համաձայնվելով Բարումի, Կարսի եւ Արդահանի մարզերը դատարկելու հետ, հենց հիմա ստորագրեց հաշտության պայմանագիր: Այդ պատճառով... հենց հիմա ստացա իմ գեներալպիսիմուսի հրամանը՝ կարճ ժամանակում դատարկել նշված մարզերը»⁵⁴:

«Кавказское слово» թերթը փետրվարի 20-ին գրեց, որ Բրեստի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող կետերը հիմքից զուրկ են ու անօրինական, որովհետեւ երկրամասում բոլշևիկյան իշխանություն չի հաստատված: Բրեստը խթանեց Անդրկովկասի անկախանալուն: «Բողոքին ներկայումս զբաղեցնում է Անդրկովկասի անկախության եւ Ռուսաստանից նրա անջատման հարցը», - գրեց «Պայքար» թերթը⁵⁵: «Հորիզոնը» այդ պայմանագիրը համարեց Թուրքահայաստանի մասին հրովարտակից հրաժարում եւ կոչ արեց սեյմին չընդունել այն: «Առանց Կարսի եւ Բաթումի չի կարելի պատկերացնել ազատ Անդրկովկաս, առանց Թուրքահայաստանի անկախության չի կարելի ապահովել թուրքահայերի ֆիզիկական գոյությունը եւ հանգիստը Անդրկովկասում»⁵⁶:

Ղաշնագրի դեմ Պետրոգրադի հայերի բողոքագրում ասվում էր. «Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը մահապատժի վճիռ է հայերի համար... երկու կողմերը հնարավոր համարեցին Հայաստանին նորից վերադարձնել Թուրքիայի տիրապետության տակ՝ մի բառ իսկ չասելով նրա անվտանգությունն ապահովելու մասին... Բրեստի դաշնագրի Հայաստանին վերաբերող մասը հանդիսանում է արդարության եւ Հայաստանի իրավունքի դեմ ուղղված կոպիտ բռնության ակտ: Պետրոգրադի հայերը բողոքում են... հայկական զորքերը Հայաստանից հանելու եւ այն թուրքական զորքերով զբաղեցնելու դեմ: Բողոքում են թուրքական կառավարության ջանքերի դեմ Հայաստանը բնակեցնելու Ռուսաստանից տարվող մահմեդականներով: Բողոքում են Բաթումը, Կարսն ու Արդահանը օտարելու դեմ: Բողոքում են Հայաստանին ինքնորոշման իրավունքից զրկելու դեմ...»⁵⁷:

Ղ-ոնի հայերը «բողոքում են Բրեստ-Լիտովսկի դաշնագրի դեմ, որը բացասարար կանխորոշեց ինքնորոշման հարցը, որով թույլատրվեց հայկական

⁵³ "Документы и материалы...", с. 86:

⁵⁴ Ն.տ., с. 87:

⁵⁵ «Պայքար», 15.03.1918:

⁵⁶ «Հորիզոն», 13.02.1918:

⁵⁷ Чалхушьян Г., նշվ. աշխ., с. 138-139:

մարզերի բռնակցում եւ հայերին հանձնեց թուրքերին հռչակելու... Արդեն Հայաստանից ստացվում են չարագույժ լուրեր՝ հայերը մորթվում, բշտում եւ փախչում են այն տեղերից, որտեղ խաղաղ աշխատել են հարյուրավոր տարիներ... Թող ամբողջ Եվրոպան իմանա, թե ինչքան խայտառակ դաշնագիր է այն՝ հավասարագոր հայերի սպանության»⁵⁸:

Բրեստի խորհրդածոյունը դեռ ընթանում էր, երբ դարձավ Հայկական ազգային խորհրդի բուռն քննարկումների թեմա: 1917թ. դեկտեմբերի 19-ի նիստում ոմանք առաջարկեցին Բրեստ ուղարկել պատվիրակություն, մյուսները՝ դիտորդներ ուղարկել, ուրիշները գտնում էին, որ անհրաժեշտ էր արեւմտահայերից կազմված պատվիրակություն ստեղծել եւ «կապ հաստատել Լեմինի հետ»⁵⁹: Ազգային խորհուրդը որոշում է մշտական ներկայացուցչություն ունենալ Պետրոգրադում, որպեսզի մշտական կապ ստեղծվեր բանակցություններին առնչվող անձանց հետ: Խորհրդի անդամները դեմ էին Թուրքիայի հետ անջատ պայմանագրին եւ Բրեստի խորհրդածոյունին հայերի մասնակցությունը տեսնում էին միայն դիտորդի դերում⁶⁰:

Անդրկովկասի պաշտոնական շրջաններում մեկ անգամ չէ, որ քննարկվել էր Բրեստի խորհրդածոյունին մասնակցելու հարցը, ինչպես այդ արեց Ուկրաինան եւ ինչպես այդ առաջարկում էր Թուրքիան, հանձնին Վեհիբի, խոստանալով Անդրկովկասի կառավարությանը ճանաչել տալ նաեւ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի եւ Բուլղարիայի կողմից: Ի վերջո այդ առաջարկը մերժվեց:

Թիֆլիսում գնալով տիրապետող էր դառնում այն մտայնությունը, թե թուրքերի նպատակը նաեւ արեւելահայության ոչնչացումն էր: Ավելի ուշ, 1919թ. նոյեմբերի 9-ին «Հայրենիք» թերթը այդ մտայնությունն արտահայտեց հետևյալ կերպ. «Ոչ ոք կրնայ ուրանալ, թե թուրքը կովկասահայը եւս ջարդել կուզեր: Ոչ ոք կրնայ ուրանալ, թե թուրքը իր այդ մտադրութիւնը իրագործում էր Կովկասի սահմաններեն ներս արշավելով»:

Ամերիկյան սենատոր Ռոբինսոնի հետ զրույցի ժամանակ Տրոցկին ասաց, որ Վաշինգտոնը կարող է խափանել Բրեստի դաշնագիրը, որովհետեւ «Լեմինը հասկանում է, որ գերմանական հարձակման սպառնալիքն այնքան մեծ է, որ եթե նա կարողանա տնտեսական համագործակցության հասնել դաշնակիցների հետ եւ ռազմական օգնություն ստանա նրանցից, ապա կի-

⁵⁸ Чалхушян Г., с. 140-141:

⁵⁹ Հայ Ազգային խորհրդի 1917-1918թթ. արձանագրություններ, ՀՀ ԿՀԿՊԿԱ:

⁶⁰ Ն.տ.:

րաժարվի Բրեստի հաշտության պայմանագրից, անհրաժեշտության դեպքում կհանձնի Մոսկվան ու Պետրոգրադը, կնահանջի դեպի Եկատերինբուրգ, ռազմաճակատ կստեղծի Ուրալում եւ դաշնակիցների օգնությամբ կկռվի Գերմանիայի դեմ»⁶¹:

Նա նույն բանն ասաց Լոկարտին՝ Ռուսաստանը «պարտիզանական պատերազմ կմղի»⁶²:

Չերչիլը գրեց, թե Բրեստի պայմանագիրը «դարձավ սկիզբ դեպի Արեւելք Թուրքիայի ընդհանուր հարձակման համար»⁶³:

Սուրբանն ասաց, որ Բրեստի պայմանագրով Թուրքիային էին անցնում Կովկասի երեք սանջակները, ինչի համար մենք ամենաշատը պարտական ենք Գերմանիային⁶⁴:

Լյուդենդորֆի կարծիքով Բեռլինի համար ցանկալի էր «Կովկասյան ճակատում հզոր Թուրքիայի հարձակումը»⁶⁵:

Ալեքսանդրապոլում 1918թ. ապրիլն կայացած հայտնի ժողովում, որին մասնակցում էր հայ քաղաքական էլիտան, Ազգային խորհուրդը հայտարարեց, որ պաշտպանում է սեյմի որոշումը Բրեստի պայմանագիրը չընդունելու մասին:

Բրեստի բանակցությունները նոր էին սկսվել, երբ Ռոստոմը մարգարեացավ. «Գերմանիան կը պահանջե՞ր արդյոք, որ գրավված վայրերը վերադարձվին Թուրքիային»⁶⁶: Նա քաջ գիտեր, որ տվյալ պահին վճռականը ոչ Թուրքիայի եւ ոչ էլ Ռուսաստանի, այլ Գերմանիայի կամքն էր եւ այդ կամքը խնդիրը լուծեց հօգուտ Թուրքիայի:

Հայ բոլշեիկները հասկանում էին, որ Բրեստը հարկադրական քայլ էր, եւ ինչպես գրում է Ս. Շահումյանը, Ռուսաստանի կենտրոնական կառավարությունը ուրախ կլիներ, եթե Անդրկովկասը կարողանար «իրեն պաշտպանել եւ չտալ այն, ինչ որ զիջված էր Բրեստի պայմանագրով»: Ի հակադրություն ուռա հայրենասերների, նա գտնում էր. «Մենք այս պայմանագիրը դիտել ենք որպես բռնի կերպով պարտադրված պայմանագիր, որը պետք է հաշվի առնենք, քանի որ դիմադրություն ցույց տալու համար պահանջված չափով ուժ չունենք»⁶⁷:

1918թ. հունիսի 7-ին նա Բաքվի խորհրդում հայտարարեց. Անդրկովկասի վրա թափված բոլոր ճախրողությունների պատճառը Բրեստի պայմանագիրն

⁶¹ Չուրպյան Ա., Բրեստի հաշտությունը, էջ 201:

⁶² Ն.տ. էջ 178-179:

⁶³ Черчилль У., Мировой кризис. М.-Л., 1932, с. 278:

⁶⁴ Wien HHSTA I 1053, Wien, 23.02.1918, N23:

⁶⁵ «Ռոստոմ», էջ 190:

⁶⁶ Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 139:

⁶⁷ Շահումյան Ստ., Հոլովածներ և ճառեր. Ե., 1953, էջ 375:

է, եւ որ հետագայի գործողությունները զուտ վիրաբույժի փորձեր են, որպեսզի բուժեն հիվանդ մարմինը...»⁶⁸:

«...Սեր կուսակցությունը միաձայն որոշեց Կարսը, Բաթումը եւ Արդահանը հանձնելու մասին ոչ մի հայտարարություն չանել,- մի ուրիշ անգամ ասաց Ստ. Շահումյանը,- ենթադրելով, որ Կարսն ու Բաթումը պաշտպանելու համար Անդրկովկասը բավականաչափ ուժ ունի:

Սենը մատնանշում ենք, որ Անդրկովկասն այնպիսի պայմանների մեջ է գտնվում, որ ամբողջ բնակչությունը, առանց ազգության խտրության, կկռվի, որպեսզի պաշտպանի իրեն թուրքերից, որովհետեւ նրանք Անդրկովկասում ամբողջ ազգությունների կոչնչացնեն: Այդ հանգամանքը կհարկադրի բնակչությանը պատրաստ լինել դիմադրելու եւ իր տարածքը պաշտպանելու համար:

Նկատի ունենալով նաեւ, որ մեր դեմ էին շարժվում ոչ թե գերմանական ուժեղ զորքերը, այլ հոգնած ու կազմալուծված թուրքերը, մենք կարծում էինք, որ Անդրկովկասը կարող է իրեն պաշտպանել եւ չտալ այն, ինչ որ զիջված է Բրեստի պայմանագրով»: Ինչ վերաբերում է Մոսկվայի կառավարության վերաբերմունքին նման մոտեցմանը, ապա պարզվեց, որ նա «կարող է միայն ողջունել կովկասյան հերոսներին»⁶⁹:

Պետք է միայն հիանալ Ստ. Շահումյանի խելքով ու խիզախությամբ: Ի տարբերություն Անդրկովկասի կառավարության, որը ոչ ճանաչեց Բրեստը եւ ոչ էլ որեւէ քայլ կատարեց այն չեզոքացնելու համար, Շահումյանը կոչ էր անում բարձրանալ այդ «պարտադրված պայմանագրի դեմ» եւ խափանել դրա գործադրումը: Ոչ միայն կոչ էր անում, այլեւ ունեցած բոլոր հնարավոր միջոցներով աշխատում էր խափանել այն, պայքարում թուրքերի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու համար: Նաեւ այդ նպատակն էր հետապնդում մուսավաթականների Բաքվի 1918թ. մարտի խռովության ջախջախումը, որովհետեւ դա մի կուսակցություն էր, որը «ցանկացել է եւ ցանկանում է Կովկասը, ամբողջ գյուղացիական Կովկասը հանձնել կալվածատիրական, ավատատիրական Թուրքիայի խժռելուն»⁷⁰:

Ստ. Շահումյանն իր հրապարակախոսական տաղանդի ամբողջ ուժով հարձակվեց «մահմեդական բեկերի եւ նրանց արժանի եղբայրակից Չխենկելու» համատեղ դավաճանության վրա, որը «հանգեցրեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն եւ թուրքական նվաճողների ձեռքը հանձնելուն: Մենչեիկները, որոնք իրենց համարում են սոցիալիստներ... գործարքի մեջ մտան» նրանց հետ, «զինեցին եւ ուժեղացրեցին նրանց եւ նրանց հետ միասին

⁶⁸ Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 5, էջ 83:

⁶⁹ Ն.տ.

⁷⁰ «Бюллетень революционной обороны г. Баку и его районов», 06.04.1918:

Անդրկովկասը հանձնեցին ու ծախեցին թուրքական փաշաներին: Այո, մենչեիկները վախենում էին մուսավաթականներից, իսկ մուսավաթականները՝ դաշնակցականներից»⁷¹:

Դեռ մինչեւ Բրեստն էր «Օնիաշվիլին հայտարարում, որ ռուսական կողմնորոշումը հետադիմական է...», իսկ Չխեիձեն պաշտպանում էր այդ հայտարարությունը, թե լավ է ընկնել Թուրքիայի, բան բուլչեիկների գիրկը: Երբ մարդն անարտահայտություններ էր թույլ տալիս, ապա այստեղ ի՞նչ գործ ունի Բրեստի պայմանագիրը»⁷²:

Թուրքական բանակի գնդապետ Ի. Բերկուլը «Սեր գործողությունները Հյուսիսային Կովկասում համաշխարհային պատերազմի ժամանակ (1918) եւ 15-րդ դիվիզիայի մարտական գործողությունները» գրքում գրում է, որ արդեն 1918թ. գարնանը Թուրքիայի համար Բրեստի պայմանագիրն այլեւս նշանակություն չուներ, այն չէր բավարարում «մեր կառավարությանը, որը պահանջում էր, որպեսզի մեր զորքերը գրավեն ռազմավարական կարեւոր կետեր Կովկասում, հատկապես երկաթուղիները, թույլ չտալով Վրաստանի եւ Հայաստանի կողմից մեր գործողությունների ազատության որեւէ սահմանափակում: Սեր կառավարությունն այդ պահանջները ներկայացրել էր վերջնագրի ձեւով»⁷³:

Ելիզավետպոլում, գրում է Շահումյանը, սպասում են Նուրի փաշայի գալուն, կայարանը զարդարված է մահմեդական պաստառներով, սպասում են թուրքական զորքերի գալուն: Սեյմի տրամադրության տակ եղած Մազալովի գորախմբի շտաբը տեղավորվեց Ուջանում, իսկ գորամասերը ելման դիրքեր գրավեցին եւ խրամատավորվեցին Եվլախի շրջանում:

Ռազմական գործողությունները սկսելու համար պատրվակ ծառայեց «քրիստոնյաների կողմից կոտորվող» մահմեդականներին օգնելու անհրաժեշտությունը: Վեհիբը այդ պատրվակով պահանջել էր թույլ տալ թուրքական զորքերին Թիֆլիսի վրայով անցնել Ելիզավետպոլ: Իհարկե, բանը մահմեդականներին «փրկելը» չէր, այլ գերմանացիների ու թուրքերի միջեւ սկսված զգվոտոցը Բաքվին տիրանալու համար: Դեռ մայիս ամսից թուրքական զորքերը Թավրիզի վրայով անցնում էին Ղազախ եւ Ելիզավետպոլ: Մայիսի 27-ին տեղ հասավ նաեւ Նուրին: Բայց քանի որ այդ պահին թուրքերը հնարավորություն չուներին մեծ ուժեր տեղափոխել Կովկաս, նրանք ձեռնամուխ եղան տեղի մահմեդականների հավաքագրման միջոցով իրենց ծրագրերին ծառա-

⁷¹ «Борьба за победу Советской власти в Грузии», с. 269:

⁷² Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 3, էջ 275-276:

⁷³ ՀՀ ՊԿՊԱ, «Թուրքական աղբյուրները 1914-1920թթ. Կովկասում տեղի ունեցած իրադարձությունների մասին» հավաքածու:

յոդ ռազմական ուժի ստեղծմանը: Այդ նպատակով կազմավորվեց «Կովկասյան իսլամական բանակը»: Դրա համար հիմք հանդիսացավ մուսավաթի կողմից ստեղծված «վայրենի դիվիզիան», որը ձեռավորվել էր դեռ ցարական կարգերի ժամանակ եւ կազմված էր հիմնականում մահմեդականներից, կային նաեւ վրացիներ, հրամանատարն էր ցարական բանակի գեղապետ Մահալովը (Մահալաշվիլի): Դիվիզիայում ծառայում էին նաեւ ռուսական բանակի կողմից գերի վերցված շատ թուրքեր: Բացի այդ դիվիզիայից աղբրեջանցիներն ունեին մեկական հետեւակային եւ հեծյալ գնդեր:

Սինչեւ Նուրիի գալը մահմեդական կորպուսի հրամանատարն էր Ֆ. Շիխլիսկին: Կորպուսի զորամասեր էին ստեղծվել նախ Ջաբաթալայում եւ Կարալագում: Նուրիի գալուց հետո այդ բոլոր ուժերը մտան իսլամական բանակի մեջ:

1918թ. հունիսի 5-ին Բաթում ժամանեց Էնվերը: Նա ստեղծել էր բանակային երեք կորպուս, որի յուրաքանչյուր դիվիզիայում կար 9000-10.000 զինվոր: Կովկասի թուրքական ռազմական ուժերը հիմնականում տեղափոխված էին Արեւմտյան ռազմաճակատից: Դրանց հիմքի վրա ստեղծվեց 9-րդ բանակը Յ. Շեքիի հրամանատարությամբ: Հունիսի 9-ին 3-րդ, 6-րդ եւ 9-րդ բանակները միավորվեցին Արեւելյան զորքերի խմբավորման մեջ, որի հրամանատար նշանակվեց Մ. Վեհիբը: Եվ քանի որ Բաթում-Թիֆլիս երկաթուղին գերմանացիների ձեռքին էր, թուրքերը որոշեցին իրենց ռազմական ուժերի տեղափոխման համար օգտագործել Ալեքսանդրապոլ-Բաքու երկաթուղին:

Էնվերը ծրագրում էր գրավել նաեւ Սուխումին, Աբխազիան, շարժվել Հյուսիսային Կովկաս, ինչը հնարավորություն կստեղծեր Բաքվի վրա շարժվել նաեւ հյուսիսից: Եթե Լյուդենդորֆն ասում էր. «Այդ բոլորի մեջ հիմնական հարցը եղել է, թե ինչպես ընկնել Բաքու»⁷⁴, ապա Էնվերը հայտարարեց. «Ես չեմ կարող հետ կանգնել իմ նախաձեռնությունից եւ հետաձգել սկսած գործողությունը, որը նպատակ ունի օգնության հասնելու մահմեդական ժողովրդին Հյուսիսային եւ Արեւելյան Կովկասում»⁷⁵:

Թուրքերը Կովկաս էին եկել ոչ թե ժամանակավորապես, այլ ընդմիշտ: Նուրի փաշան կազմել էր Հայաստանի եւ Աղբրեջանի վարչական նոր բաժանման սխեման: Ստեղծվելու էին ռազմական պարետություններ՝ Ղարաբաղում՝ կենտրոնը Աղղամ (Շուշի, Գորիս, Ղարաբաղ սանջակներով), Գյանջայում՝ կենտրոնը Գյանջան (Ղազախ, Գյանջա, Թարթառ սանջակներով), Ջաբաթալայում՝ կենտրոնը Նուխի (Ջաբաթալա եւ Նուխի սանջակներով):

⁷⁴ Людендорф Э., 674. աշխ., с. 219-220:

⁷⁵ Луденвейт В., 674. աշխ., с. 218:

Էնվերը ձգտում էր ամբողջ Կովկասը գրավելուց հետո արշավել «դեպի Վոլգա, Թուրքեստան եւ Հնդկաստան»⁷⁶, Անդրկովկաս ներխուժելուց հետո թուրք-գերմանական հակասությունները իսկույն մակերես ելան: Վրաստանում այդ հակասությունները հանգեցրեցին նրան, որ Գերմանիան րոյլ չտվեց, որ թուրքական բանակը մտներ Վրաստան, ինքն էլ օկուպացրեց այն:

Երիտթուրքերը չէին թաքցնում իրենց պանթուրքիստական դիտավորությունները: Թուրքական «Սաաթ» թերթը գրում էր, որ Սեւ ծովը պետք է դառնա թուրքական ներքին ծով, իսկ «առափնյա պետությունները՝ թուրքական վասալներ»: Մինչդեռ գերմանացիները տրտնջում էին: Լյուդենդորֆը հետագայում գայրույթով էր գրում, որ թուրքերը գրավելով Բաթումի նավթի պահեստները իրենց բաժին չհանեցին: Նա ավելացնում է. «... Էնվերը եւ թուրքական կառավարությունը ավելի շատ մտածում էին Կովկասում իրենց պանիսլամական նպատակների, քան Անգլիայի դեմ մղվող պատերազմի մասին: Դրա հետեւանքով մենք ակամա հակասության մեջ մտանք այն նպատակներին հետ, որ հետապնդում էին թուրքերը»:

Հարցին անդրադարձել է նաեւ Հինդեբրորգը, որը պատերազմն անվանեց «խոց»⁷⁷, որովհետեւ թուրքերը հավատակիցներին «փրկելու» անվան տակ ձեռնամուխ էին եղել աշխարհակալ ծրագրերի իրականացման Ռուսաստանի մահմեդական բնակչության ամենախանդավառ աջակցությամբ: Էնվեր փաշան, ի լուր այդ բնակչության, հայտարարեց, թե Թուրքիան չի կարող անտարբեր մնալ, երբ տարածվում է «բոլշեիզմի վարակը», երբ «հայկական գազանություններից ազատում չունեն Անդրկովկասի մուսուլմանները»: Մուսավաթականներն ամբողջությամբ լծվեցին թուրք պանթուրքիստների կառքին: Իսկ երիտթուրքերն Թուրքիայի տարածքում կուտակված ջարդարարության փորձը ներդրեցին Կովկասում: Հարվածի գլխավոր օբյեկտն այստեղ եւս հայերն էին: Թուրք սպաները աղբրեջանական հրոսակախմբեր էին կազմակերպում եւ ղեկավարում չրանց հայասպան գործողությունները:

Ստ. Շահումյանը գրում է, որ եթե Բաքվում մահմեդականները հաղթանակեին, բոլոր ոչ մուսուլմանները զինաթափվելու եւ կոտորվելու էին: Մահմեդականները կտիրանային ամբողջ Կովկասին, այն անջատելու էին Ռուսաստանից եւ մտցնելու էին Թուրքիայի հովանավորության տակ: Դրա արտահայտություններից էր նաեւ հարձակումները սեյմի վրա, պահանջներն այն ցրելու եւ Կովկասի մահմեդաբնակ մասերը Թուրքիայի կազմի մեջ մտցնելու:

Թուրքական բանակը առաջ շարժվելու պահին մուսավաթի ներկայացու-

⁷⁶ Миллер А., Краткая история Турции, М., 1948, с. 163:

⁷⁷ Ն.տ., с. 164:

ցիչ Ռուստամբեկովը հայտարարեց, որ մահմեդական ազգաբնակչությունը կրոնական նկատառումներով չի կարող «ակտիվ մասնակցություն ունենալ մարտական գործողություններին ընդդեմ Թուրքիան...»⁷⁸:

Նույն բանը ասաց սոցիալ-դեմոկրատ Շեյխուլիսամը՝ «Թուրքիայի դեմ պատերազմի դեպքում մահմեդականները իսկապես ֆիզիկապես չեզոք են մնալու»⁷⁹:

Ուսուրբեկովը հայտարարեց. «Անդրկովկասի ամբողջ տարածքում վիթխարի անիշխանությունը սեփական ուժերով հաղթահարել չենք կարող: Դրությունն ավելի է բարդանում նրանով, որ արևելքից (այսինքն Բաքվից) հարձակվում են բոլշևիկները մեր դարավոր թշնամիների (հայերի) հետ դաշնակցած, իրենց հետ բերելով քայքայում եւ թուրք ժողովրդի վերջնական կործանում: Նման իրավիճակում մեր այս անպաշտպան կացության մեջ այլ ելք չունենք, եթե ոչ դիմելու արտասահմանյան միջամտությանը՝ «մեզ բարեկամ եւ եղբայրական ուժ՝ Թուրքիային: Ժամանակն է, որ մեր պատվիրակությունը մեկնի Բաթում եւ արևելյան Անդրկովկասի թուրքերի անունից օգնություն խնդրի Օսմանյան կայսրությունից»⁸⁰:

Մահմեդականների չեզոքության մասին Ջուղեյլին ասաց. «Երբ այստեղ հայտարարում են իրենց չեզոքության մասին, իրենց չմիջամտելու մասին, բոլորին հասկանալի է, որ չեզոքությունն ունի Թուրքիային ակտիվորեն օգնելու բնույթ: Կալվածատերերի դասակարգը ներկայացնող մուսավաթ կուսակցության քաղաքականությունը դա թուրքական իմպերիալիստների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու եւ մեր սահմանները նրա ներխուժելու քաղաքականություն է»⁸¹:

Դաշնակցական գործիչ Հարությունյանը հայտարարեց. «Մենք համոզված ենք, որ Թուրքիան կանգ չի առնի այն պայմանների շրջանակներում, որ նա պահանջում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Նա հեռու կգնա: Նա համոզված է ներքին «հայտնի տարրերի» կողմից ցուցաբերվելիք աջակցության մեջ, տարրեր, որոնք բնակվում են Կովկասում: Նրանք մտադիր են հասնել Բաթու: Ընդունել կամ չընդունել Թուրքիայի պահանջները, միեւնույն է, դա մեր ժողովրդի համար կունենա նույն նշանակությունը: Հայաստանը դատապարտված է մահվան»⁸²:

«Մուսավաթականները համառորեն ձգտում էին թուրքերի կողմից Անդրկովկասի գրավմանը: Նրանք սպասում ու ձգտում էին «թուրքական օգնության

նր» պայքարելու «Բաքվում նստած բոլշևիկների դեմ եւ հակազդելու անիշխանությանը»⁸³:

Թուրքիան Բրեստ-Լիտովսկը «իր համար պարտադիր չէր համարում»⁸⁴ Նրա պատվիրակը բանակցությունների ժամանակ հայտարարեց. «Անդրկովկասյան կառավարությունը որպես հիշյալ պայմանագրի ստորագրման կողմ չեղող եւ նրա ստորագրման ժամանակ նույնիսկ չլինելով միջազգային իրավական դեմք, իրավունք չունի դիտողություններ կատարելու այդ պայմանագրի հողվածների ու դրանք կիրառելու կարգի մասին»⁸⁵:

Ժողովուրդների ինքնորոշման մասին Խատիսովի հարցին օսմանյան պատվիրակության քարտուղարը պատասխանեց, որ «ինքնորոշում ասելով իրենք հասկանում են ազգաբնակչության իրավունքը տարածքները բաժանելու վիլայեթների ու սանջակների միջեւ»: Թուրքական պատվիրակությունը ուղղակի հայտարարեց, որ «Հայաստանի ինքնորոշման հարցը պետք է հանվի, որովհետեւ Թուրքիան չի թույլ տա դրա բննարկում», քանի որ դա «Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու բնույթ ունի»⁸⁶:

Աղբրեջանցիները հայտարարեցին, թե անդրկովկասյան պատվիրակությունն ու սեյմը իրենց շահերը չեն ներկայացնում եւ պահանջեցին «Անդրկովկասի մահմեդական մարզերի միացումը Թուրքիային: Այս բովանդակությամբ հանրագրեր էին ներկայացնում թուրքական պատվիրակությանը: Ինչ վերաբերում է վրացիներին, ապա Ծեբեթեյին ասաց. «Արտաքին ուժը՝ բոլշևիկները, կործանեց ամեն ինչ: Մեյմում ու վարագույրների հետեւում ձայներ են հնչում: Պետք է հրավիրել թուրքական զորքերին եւ թուրքական սվիններով պաշտպանել Անդրկովկասի անկախությունը հյուսիսից եկող բոլշևիկներից»⁸⁷:

Մայիսի 6-ի Անդրկովկասյան սեյմի մուսուլման պատգամավորները արդեն պաշտոնապես հայտարարեցին, թե ստիպված են դիմելու Թուրքիային Բաքվի եւ Շամախի մուսուլմաններին փրկելու համար⁸⁸: Անդրկովկասի անկախ հռչակվելուց հետո թուրքերն անմիջապես հայտարարեցին, թե Բրեստի պայմանագիրն այլևս ուժ չունի, որովհետեւ «Անդրկովկասն անկախ է», այսինքն՝ մտադիր չէ Արաքսի ափին մնալ: Իսկ Թուրքիայի դիմաց կանգնած էր «անդրկովկասյան կառավարության անգործությունը»⁸⁹:

⁷⁸ Авалов З., 624. աշխ., с. 40-41:

⁷⁹ Троцкий Л., Между империализмом и революцией, с. 31-32:

⁸⁰ Старовский А., 624. աշխ., с. 101:

⁸¹ Аркомед С., Материалы по истории отпоядания Закавказья от России, Тифлис, 1923, с. 37:

⁸² Ն.տ., с. 74, 80:

⁸³ Շահումյան Ս., ԵԼԺ, հ. 4, էջ 214:

⁸⁴ Борьян Б., 624. աշխ., փ. 2, п. 47-48:

⁷⁸ Ставропольский В., 624. աշխ., с. 40:

⁷⁹ Ն.տ., с. 45:

⁸⁰ Старовский А., Закавказье после Октября. М.-Л., 1925, с. 28:

⁸¹ Ն.տ.:

⁸² Ն.տ., с. 25-26:

Հայ ժողովուրդը մեկուսացվեց եւ մեծ-մեծ մնաց թուրքերի եւ ադրբեյջանցիների դեմ: Թուրքական բանակի կողմից Հայաստանի գրավված տարածքներում շարունակվում էին զանգվածային սպանություններն ու թալանը: Հազարավոր հայ երիտասարդների տաժանակիր աշխատանքի բռնեցին Թուրքիայի խորքերը: Թուրքերից խույս տալու համար հարյուր հազարավոր հայ հեռացավ Կովկասից:

Երբ հայկական պատվիրակությունը 1918թ. հունիս-սեպտեմբերին չորս ամիս անցկացնում է Կ. Պոլսում, գերմանացիները եւ անձամբ դեսպան Բերնսդորֆը նրա հանդեպ արտակարգ ուշադրություն էին դրսևորում եւ պատրաստակամություն հայտնում նրա առաջադրած հարցերը լուծելու, բայց թուրքերը գերմանացիների միջամտություններն այլեւս հաշվի չէին առնում, որովհետեւ արդեն աշխատում էին ազատվել Գերմանիայի խնամակալությունից:

Նույն ժամանակ Վրաստանում, որտեղ գերմանացիները տեղ ու տիրական էին, հայերի վիճակը գնալով անտանելի էր դառնում: Ամենաձանրը Ախալքալաքի 80.000 հայության դրությունն էր, որը հարկադրված տեղահանվեց ու տեղափոխվեց Բակուրյանի եւ առանց ապրելու պայմանների գոյություն էր քարշ տալիս բարձր լեռնային այդ տարածքում անձրեփի ու ձյունի մեջ: Մարդիկ զանգվածաբար մեռնում էին տիֆից, խոլերայից, քաղցից: Երեք ամսում մեռավ մոտ 25.000 մարդ:

Թուրքերը տիրացել էին Ախալքալաքին եւ թույլ չէին տալիս, որ հայերը վերադառնային իրենց բնակավայրերը: Խնդրի լուծմամբ զբաղվում էին Կ. Պոլսի եւ Թիֆլիսի գերմանական դեսպաններ՝ Բերնսդորֆն ու Գրեսը, Հ. Օհանջանյանը Բեռլինում անընդհատ դիմումներ էր անում ռայխի ամենաբարձր պաշտոնատարներին: Նույն խնդրով գերմանական կառավարությանը դիմեցին նաեւ Մյունխենում եւ Կ. Պոլսում պապի նվիրակները:

Ի դեպ, Թուրքիայում տասնամյակներ տեւած հայասպանությունը բնավորություն էր դարձել թուրքի եւ մահմեդականի համար, նրանք այլեւս սպանում էին նաեւ առանց իշխանությունների հրահրման: Բնորոշ մի օրինակ: Գանձակ-Երեսան երկաթուղու աշխատանքը վերականգնելու նպատակով Վեհիբը հրաման է արձակում գործողության մեջ դնել հատուկ գնացքներ, որոնց ուղեկցելու էին թուրք սպաներ, ովքեր իրենց մոտ ունենալու էին Վեհիբի հրամանը, որ պետք է կայարաններում կարդային մահմեդական բնակչությանը, թե խաղաղություն է եւ արգելված է այլեւս հայերին սպանել:

Մայիսի 28-ին Քյոլմանը գրում է Բրիանին. «Կայգերական կառավարությունը պարտադրող խորհուրդ է տվել թուրքական կառավարությանը... Բաբում քաղաքը չպահել, այլ թողնել վրացիներին: Կայգերական կառավարու-

թյունն աչքի առաջ ունի փոխանակել Բաբումի շրջանը Ճորոխ գետից արեւելք ընկած թաթարներով բնակեցված այլ մարզերի հետ... Կայգերական կառավարության այս խորհրդին հետեւելու փոխարեն թուրքերը չափն անցկացրել են: Նրանք թուրքական դրոշ են բարձրացրել Ելիզավետպոլում ու քաքական մյուս շրջաններում եւ պլանավորել են ամբողջ Ելիզավետպոլի նահանգի ու Բաքվի բռնակցում եւ առաջանում են դեպի Բաբու... Թուրքական զորքերը Ախալքալաքից հարավ գտնվող ռազմաճակատում նույնպես առաջանում են՝ դեպի Թիֆլիս եւ Երեսան: Նրանց ուղեկցում են թուրք եւ քաքար կամավորները, որոնք կողոպտում են հայկական բնակավայրերը, կոտորում դուսնց բնակիչներին, գերեվարում են բոլոր տղամարդկանց: Հայ բնակչությունը փախչում է Արեւելք, որտեղ շատ շուտով բախվելու է թաթարների հետ: Իրավիճակը չափազանց ճգնաժամային է: Թուրքական զորամասերի հետագա առաջխաղացումը համընդհանուր պայքար կսանձագերծի Կովկասում եւ թերեւս վտանգի Բրեստի դաշնագիրը... Դաշնակից տերությունները չեն կարող թույլ տալ, որ իրենց օգնությամբ կնքված Բրեստի պայմանագիրը օգտագործվի որպես Կովկասում քրիստոնյաներին հալածելու իրավունք»⁹⁰:

Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանը Բ. Դռանը տեղյակ պահեց, որ գերմանական կառավարությունն իրեն իրավունք է վերապահում, մասնավորապես, Արդահանի, Կարսի եւ Բաթումի շրջաններում ու դրանցից դուրս թուրքական գործողությունների կապակցությամբ ձեռնարկելու համապատասխան միջոցներ: Դեսպանը նաեւ ասում է, որ ինքը ոչ հավանություն է տալիս եւ ոչ էլ աջակցում է Կովկասում թուրքական գործողություններին եւ քարոզչությանը, այլ հրավիրում է օսմանյան կառավարությանը ճանաչելու Վրաստանի անկախությունը եւ հարգելու նրա սահմանները, «խնդրվում է գրավված տարածքներում ապահովել հայերի հանդեպ պատշաճ վերաբերմունք»⁹¹:

Կատարվում է արտաքուստ անհասկանալի մի բան: Գերմանական դեսպանը խոստովանում է Պալավիչինին, որ ինքը մինչ այդ Բեռլինից ստացել էր բացարձակապես հակառակ բնույթի ցուցումներ: Այդ հաստատել էին նաեւ Թալեաթն ու իր ԱԳ նախարարը: Բերնսդորֆը Մեծ վեզիրին ասել էր, որ «համաձայն է անդրկովկասյան կառավարությանը ներկայացրած վերջնագրի հետ, եւ որ գերմանական բանակի գլխավոր հրամանատարությունը հայտարարել է, թե չի առարկում, որ սահմանը վերանայվի, ինչը ճիշտ է, քանի որ երկրամասի մի հատվածը մինչեւ Ջուլֆա տրվում է Թուրքիային... թուրքական բանակի առաջխաղացումը եւս տեղի է ունեցել (գերմանական) գլխավոր հրամանատարության համաձայնությամբ եւ նույնիսկ նրա հրահանգով»⁹²:

⁹⁰ Wien HHSTA PAX 157 Baden, 09.08.1918, N31831:

⁹¹ Ն.ս.:

⁹² Ն.ս., 947 Wien, 24.01.1918, N501:

Երև թուղևարը չի ստել, ինչին նա հաճախ էր դիմում, ապա Գերմանիայի ԱԳ նախարարության եւ հրամանատարության միջեւ այդ հարցում լուրջ հասարկություններ գոյություն ունեին:

Պալավիչինին համաձայնվում է Գերմանիայի ԱԳ նախարարության հետ, բայց միանգամայն այլ հիմնավորմամբ: «Բրեստ-Լիտովսկում թույլ տրված քաղաքակրթական խոշոր սխալներից մեկն այն է,- գրում է նա,- որ Բաթումի, Կարսի եւ Արդահանի շրջանները թուրքերին զիջելը... չի կարող անբնական չքվալ, երբ շրջաններ, որոնք տարիներ շարունակ կառավարվել են մի քրիստոնյա տերության կողմից, անգամ երե դա Ռուսաստանն էր, այժմ նորից վստահում են ավելի սարսափելի քաղաքակրթություն կրող երկրին»⁹³:

Թուրքերը պատրվակ էին փնտրում, որ իրենց բանակը գործեր ոչ թե հարավում, այլ Անդրկովկասում: Խալիլը գերմանացիներից երաշխիք պահանջեց՝ երբ թուրքական բանակը տեղափոխվի Միջագետք, հայերը չեն հարձակվի տեղում մնացած փոքրաթիվ զորամասերի վրա: Գեներալ Կրեսը պատասխանեց, թե հայերին տեղյակ է պահել, որ երե նրանք նախահարձակ լինեն, գերմանացիներն անհապաղ անցնելու են հարձակման: Բայց անհնար եղավ թուրքերին Բաքվի վրա հարձակվելու գայթակղությունից հետ պահել: Օգոստոսի սկզբին Նուրի փաշան, հակառակ գերմանացիներին տված խոստմանը, սկսեց առաջանալ դեպի Բաքու: Նա այդ հիմնավորեց՝ «Ելիզավետպոլի շատ վատ կլիմայի պատճառով անհրաժեշտ էր գործերին տեղափոխել Արեւելք»⁹⁴: Դա հարկադրեց, որ գերմանացիները ավելի մեծ ջանքեր լարեն համոզելու ռուսներին, թե իրենց հարձակումը Բաքվի վրա խիստ անհրաժեշտ էր:

Ինչպես վերելում նշեցինք, խորհրդային պատվիրակության հետ Մոսկվան Բրեստ ուղարկեց նաեւ Վ. Տերյանին: Վերջինիս համար նյութեր էին պատրաստել նաեւ Ռոստոմը, Լ. Նազարյանը, Լ. Տիգրանյանը, Մ. Աճեմյանը եւ Ն. Աղոնցը: Կազմվեց հետաքրքիր փաստաթուղթ Հայկական հարցի բոլոր ասպեկտների ընդգրկմամբ:

Վ. Տերյանին տրված վկայականում, որ ստորագրել էր Լենինը, ասված էր. «...Մույնը ներկայացնող, հայկական գործերի կոմիսարիատի կոլեգիայի անդամ Տերյանը ժողովոմխորհի կողմից լիազորված է լինելու խորհրդային պատվիրակության կազմում, որը Բրեստ-Լիտովսկում բանակցություններ է վարում, մի կողմից, Ռուսաստանի, իսկ մյուս կողմից, Քառյակ զինակցության միջեւ հաշտության պայմանագիր կնքելու համար»⁹⁵:

⁹³ Ն.ս., 157, Tiflis, 09.08.1918, N16:

⁹⁴ Ն.ս., 946, August 1918, k. u. k. LOK N143990/3:

⁹⁵ Գ.ԱԹ, Վ. Տերյանի ֆոնդ, գ. 272:

Բրեստից Վ. Տերյանը կապ էր պահպանում տեղեկագիրը կազմող խմբի հետ, նոր նյութեր խնդրում. «Պետրոգրադ. Սպասակայա 15, Հայկական խմբակ, Ջորյանին, Գարազաշյանին: Անհապաղ ուղարկեցեք կովկասյան հայերի մասին վիճակագրական մանրամասը տվյալներ, Բաքվի մշակութային խորհրդի քարտեզը, Իշխանյանի գիրքը, «Գործ» ամսագրի վերջին համարը, վիճակագրական տվյալներ Ամերիկայի, Եգիպտոսի եւ մյուս երկրների հայկական գաղութների մասին: Կազմեցեք Հայաստանի մասին բոլոր լեզուներով հրատարակված գրքերի ցուցակը, հանձնեք Ջալիկոնդին եւ պատվիրակության անունից խնդրեցեք նրան, որ վերցնի հանրային կամ արտասահմանյան կոմիսարիատի գրադարանից ու անհապաղ ուղարկի Բրեստ Կարախանին»⁹⁶: Բանակցություններում, սակայն, Վ. Տերյանին ելույթ ունենալու հնարավորություն չտրվեց: Մեր ձեռքի տակ չկա նաեւ տեղեկագիրը: Բայց այդ քայլը լրացնում են Աղոնցի չորս հոդվածները նվիրված տեղեկագրում արձարձված խնդիրներին:

Ն. Աղոնցի կարծիքով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով «Հայկական հարցը կարծես դուրս է սպրդում Ռուսաստանի ձեռքից», բայց օրակարգում մնում է եւ թեւակոխում է նոր փուլ: Այո, ժամանակավորապես «պատմության ամենատուր եւ ամենապատասխանատու պահին» մեր հարցը իջավ «համաշխարհային քաղաքականության թատերաբեմից», հեռացավ «Առաջավոր Ասիայի հարցերով տերությունների կոնցերտից»⁹⁷:

Բրեստն ակնհայտ ցուցադրեց Վիլիելմ 2-րդի հանձնարարության կատարումը՝ «թուրքերին օգնել Հայաստանում»⁹⁸: Ռոզենբերգն ինքն էր գտնում, որ Կարսի, Արդահանի եւ Բաթումի մարզերում «թուրքերն ամենեւին էլ չեն կազմում թվապես այնպիսի ուժեղ տարր», որպեսզի հոգուտ Թուրքիայի կանխորոշեր հարցի լուծումը:

Ն. Աղոնցը միակ հավատարժան վիճակագրությունը համարում է 1897թ. մարդահամարը, համաձայն որի Կարսի գավառում բնակվում էր 134147 մարդ, որից ռուս՝ 20376, հույն՝ 14805, հայ՝ 46715, մահմեդական՝ 46870 (հիմնականում քրդեր): Նույն մարդահամարով Կարսի մարզի բնակչության թիվը 290654 էր, բնակչության ազգային համամասնությունը գրեթե նույնն էր ինչ գավառում: Այսինքն՝ մահմեդական էր բնակչության միայն 1/3-ը:

Բրեստը եկավ մեկ անգամ եւս հաստատելու Հայկական հարցի ողբերգականության ճակատագրական համառությունը: Պատերազմի ավարտին, երբ «համաշխարհային գոտեմարտի հողմի մեջ ծնունդ են առել ճնշված ժողո-

⁹⁶ Ալիխանյան Ս., Իլիչի ստորագրությամբ, Ե., 1969, էջ 23-24:

⁹⁷ Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 50:

⁹⁸ «Сб. Документов МИД СССР и МИД ГДР», т. 1. М., 1968, с.326-327:

վորդների ճակատագրի կառուցման նոր սկզբունքներ, ինքնորոշման սկզբունքը, որը հնարավորություն կընձեռներ հայերին դուրս գալու իրենց գոյության լաբիրինթոսից, ազատորեն տնօրինելու սեփական ճակատագիրը, այդ պահին լաբիրինթոսի մուտքի մոտ տեսնում ենք Գերմանիային»⁹⁹: Հայերն մույն տեղում կարող էին հանդիպել նաև Անգլիային, Ֆրանսիային, Ռուսաստանին... Բայց նրանց հայացքը շարունակում էր մեխված մնալ Ռուսաստանին եւ դա ոչ թե հանդեպ հյուսիսի իրենց ճակատագրական հակման կամ հոգիների միստիկական ազգակցության պատճառով, այլ որովհետեւ «ռուսական լույսը եղել է մնում է միակ կանթեղը, որը միայնակ կայծկլտում է հայերին շրջապատող մահմեդական գիշերվա մեջ»: Սակայն պայմանակաճորեն «դասավորված եւ դրա համար էլ շատ ճիշտ ռուսական կողմնորոշումը չհանգեցրեց Հայկական հարցի լուծմանը: Գերմանական հաղթանակները ստիպեցին Ռուսաստանին հրաժարվելու Հայաստանից»: Հայաստանի առօրյա տագնապն է. «Ի՞նչ է խոստանում իր վրա շողացող նոր թուրը»¹⁰⁰:

1916թ. Յուրիխում լույս տեսած «Georgia and War» գրքում կանխանշվում էր Կարսի բռնի անջատումը Ռուսաստանից: Նրանում նաև կոչ կար ուղղված Կովկասի ժողովուրդներին՝ միավորվել «ռուսներին վտարելու համար»: Գրքույկը այդ միավորման առանցքը համարում է Թուրքիան, որն օգնելու էր Անդրկովկասն ազատագրելու ռուսական լծից եւ որպես փոխհատուցում «բռնակցելու էր երկրամասի հարակից հողերը»: Ստեղծվելու էր կովկասյան դաշնություն Թուրքիայի հետ համատեղ: Նաև նշվում է, որ թուրքերը հեշտությամբ են գրավելու Անդրկովկասը, քանի որ երկրամասի «գլխավոր ժողովուրդները՝ վրացիներն ու թաթարները, կանցնեն թուրքերի կողմը»: Ըստ գրքույկի՝ պատերազմի արդյունքներով Կարսի մարզն ու Երեւանի նահանգի մի մասն անցնելու էին Թուրքիային, ստեղծվելու էր անդրկովկասյան դաշնություն տերությունների հովանու տակ, Վրաստանը ձգվելու էր Չաքաթալայից Տրապիզոն: «Թաթարներին ու հայերին իրավունք էր տրվելու կազմակերպելու խառը կանտոններ» եւ այլն: Այս նախագծի տատմերը Գերմանիան էր: Եվ պատահական չէ, որ Ն. Ադոնցի եւ Հ. Չավրիեի հեռագիրը, հասցեագրված Գերմանիայի կառավարությանը, որն, ինչպես նկատել է Պ. Հովհաննիսյանը, Գ. Չիչերինի 1918թ. ապրիլի 13-ի Բեռլին ուղարկված նոտայի արձագանքն էր¹⁰¹:

Ն. Ադոնցն ամբողջ հոգով ընդվզում էր Բրեստի պայմանագրի դեմ: «Յուցադրական եւ, ինչպես կարծում են,- գրում է նա,- «զեղեցիկ» ժեստով ստորագրելով Բրեստի հաշտությունը, սցիպիստական իշխանությունը հայ ժո-

⁹⁹ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 55:

¹⁰⁰ Ն.տ., էջ 57:

¹⁰¹ Ն.տ., էջ 214-215:

ղովրդի համար ստեղծել է մղձավանջային դրամա, որն այժմ խաղացվում է թուրքական եւ ռուսական Հայաստանի լայն բեմահարթակին գործողություն գործողության հետեւից, դրամա, որի գլխավոր դերակատարներն են թուրքական գորբերը, թուրքական դիվանագետներն ու ազիտատորները եւ տեղական քարաքական հրոսակները»¹⁰²:

Ն. Ադոնցը դառնությամբ է գրում. «Ճիշտ է, հիմա դժվար է սահման անցկացնել թուրքական եւ ռուսական Հայաստանների միջեւ, մեզանից շրջված ճակատագրի չար խաղով ռուսական Հայաստանը չէ, որ ընդարձակվում է թուրքականի հաշվին, այն չէ, որ դեպի իրեն, իր խաղաղ աշխատանքն է ձգում թուրքական մասը, որը ծարավ է անդորրի, այլ ընդհակառակը, նրանից են մաս առ մաս բռնությամբ խլում, որպեսզի կցեն թուրքական Հայաստանի ավերակներին»¹⁰³:

Նա նաև նկատում է, որ թուրքական պատվիրակությունը Բրեստի լրացուցիչ պայմանագրի մեջ մտցրեց 11-րդ հոդվածը. «Մահմեդական դավանանքի ռուսական քաղաքացիները իրավունք են ստանում տարագրվել Թուրքիա լուծարելով իրենց գույքը եւ հետները տանելով իրենց սեփականությունը»¹⁰⁴: Դա իր «սուր ծայրով ուղղված է Հայաստանի դեմ.. Թուրքիան ձգտում է հայկական մարզերը, որոնք թափուր են բնակչությունից, բնակեցնել մահմեդականներով եւ դրանով պատերազմից հետո Եվրոպային դնի քրիստոնեական Հայաստանը մահմեդական երկրի փոխակերպման կատարված փաստի առաջ»¹⁰⁵:

Բրեստը մի աննախադեպ դիվանագիտական կառույց էր, որով «կենտրոնի կայսրությունների իմպերիալիստ պետություններին իրենց գաճան քաղաքական դաշնակիցների՝ Թուրքիայի եւ Բուլղարիայի հետ, հնարավորություն էր տրվում բռնազավթել լայնատարած երկրամասեր, ոտնատակ անել «Ռուսաստանի եւ նրա քաղկացուցիչ տարածքների տնտեսական եւ քաղաքական ինքնուրույնությունը եւ ազատորեն ամեն կողմից ներխուժել երկրի խորքերը»¹⁰⁶:

Ս. Կասյանը հակառակ կարծիքին էր: Ըստ նրա, եթե Անդրկովկասը ճանաչեր Բրեստի դաշնագիրը, «հայի մի կաթիլ արին անգամ չէր թափվի, հայ ժողովուրդը ավերածութեան եւ ջարդի, թալանի ու գաղթի չէր ենթարկվի»¹⁰⁷:

Այս կարծիքը ճշմարտությանն ավելի մոտ էր այն առումով, որ տվյալ տարբերակը հնարավորություն էր պարունակում թուրքական առաջխաղացման դեմ օգտագործելու Գերմանիայի ազդեցության ուժը:

¹⁰² Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 64:

¹⁰³ «Новая жизнь», 24.05.1918:

¹⁰⁴ ДВП СССР, т. 1, с. 203:

¹⁰⁵ «Новая жизнь», նշվ. համարը:

¹⁰⁶ Կարաբեան Գ., նշվ. աշխ., էջ 21:

¹⁰⁷ Կասյան Ս., նշվ. աշխ., էջ 47:

Մարտի 21-ին հրապարակվեց Գ. Չիչերինի և Լ. Կարախանի ստորագրությամբ հետեյալ հեռագիրը հասցեագրված գերմանացիներին. «Թուրքական բանակն առաջ է շարժվում Բաթումի, Կարսի և Արդահանի ուղղությամբ՝ ավերելով երկիրը և ոչնչացնելով գյուղական բնակչությանը: Հայերի բախտի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա, որովհետև նրա պատճառով ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական նահանգներից և այժմ Գերմանիայից է կախված թուրքական զորքերին զսպելը՝ թույլ չտալու, որ նրանք գործադրեն իրենց հատուկ բռնությունները վրեժի ու թշնամության հիմքի վրա: Դժվար է հաշտվել մտքի հետ, որ Գերմանիայի նման մի կուլտուրական պետություն, որ հնարավորություն ունի ազդելու իր դաշնակցի՝ Թուրքիայի վրա, թույլ է տալու, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը դառնա իր կամքից անկախ պատերազմի մեջ մտած հայ ժողովրդի համար անասելի դժբախտությունների աղբյուր: Ուստի Խորհրդային Ռուսաստանը համոզված է, որ դուք կձեռնարկեք անհրաժեշտ միջոցներ, ազդելու թուրքական իշխանությունների վրա կանխելու հայ բնակչության ոչնչացումը, որ չկրկնվի այն, ինչ տեղի ունեցավ Արդահանում»¹⁰⁸:

Բոլշևիկները Բրեստում ստորագրեցին պայմանագիր ուղղված նաև հայերի դեմ, իսկ հետին թվով հանդես էին գալիս իրենց ստորագրած պայմանագրից հայերի պաշտպանի դերում:

Նաև նշենք, որ Բրեստի պայմանագիրը խափանելու համար ի սկզբանե ջանքեր էր լարում նաև Անգլիան: Լոնդոնում Ֆրանսիայի ներկայացուցիչը տեղեկագրեց Կլեմանսոյին, որ եթե Անգլիոյկասը հավանություն տա Բրեստի դաշնագրին, Անգլիան կհրաժարվի տրամադրելուց խուստացված ֆինանսական օգնությունը, որով նախատեսված էր ձեռավորել կամավորական բանակ թուրքական ներխուժման դեմ: Տեղեկագրի հեղինակը նաև նշում է, թե Լոնդոնը լավատես էր և համոզված, որ հայերը ի գորու էին սեփական ուժերով հետ մղելու թուրքական հարձակումը¹⁰⁹:

Երբ ռայխստագում 1918թ. մարտին քննարկվում էր Բրեստի դաշնագրի վավերացման հարցը, Գ. Լեդեբարն ասաց, թե այդ «պայմանագրի «ամոթը» ոչ մի այլ բանում այնքան ակնհայտ չէ, որքան Անգլիոյկասին վերաբերող հարցերում»: Նա դեմ էր Կարսը, Արդահանն ու Բաթումը թուրքերին վերադարձնելուն, որովհետև դա կհանգեցներ հայ և վրաց ազգաբնակչության ոչնչացման: Դրան պաշտոնական Բեռլինը պատասխանեց հուշագիր հրապարակելով, թե աշխարհատարածքում նոր միջադեպերից խուսափելու հա-

¹⁰⁸ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 49-50:

¹⁰⁹ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N502:

մար պետք է, որ «գերմանացի հայասերները օգտագործեն իրենց ազդեցությունը հայերին հասկացնելու, թե դիմադրությունը զուր է, ինքնասպանություն է, և դրա փոխարեն հորդորեն» լեզու գտնելու թուրքերի հետ, այսինքն՝ հպատակվելու նրանց¹¹⁰:

Գերմանացի պատմաբան Լ. Ռաթմանը Բրեստի դաշնագիրն անվանեց «ժաշտության դիկտատ»¹¹¹:

Ֆ. Ֆիշերը գտնում էր, որ Բրեստը Գերմանիայի համար միջոց էր հասնելու Դրիմ, Դոն, Կուբան, Վոլգա, Աստրախան, Անդրկովկաս ու Միջին Ասիա եւ իր դիկտատի տակ դրանք միավորելը «Հարավարեւելյան միության մեջ»¹¹²:

¹¹⁰ ԲՀԱ, 1970, N3:

¹¹¹ Rathman L., Stossrichtung Nahost 1914-1918, Berlin, 1963, s. 105:

¹¹² Ն.տ.:

ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՍԱԼՔՈՒԹՅԱՆ ԱՄԻՍՆԵՐ 1. ԷՐԶՐՈՒՄԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Արեւմտահայերի համահավաք դիվիզիայի վերջնական ձեւավորումը սկսվեց Լեբեդինսկու հունվարի 18-ի հրամանով: Այն նաեւ նախատեսում էր դիվիզիայում ունենալ հրետանային եւ գնդացրային պարկ, դրա մեջ մտցնել հայկական հատուկ հրաձգային, պահեստային հրաձգային եւ հեծյալ գնդերը: Դիվիզիան մտցվեց հայկական կորպուսի մեջ՝ որպէս նրա երեք դիվիզիաներից մեկը:

Դիվիզիայի ձեւավորման գործն ավելի թափ առավ, երբ Երզնկայի անկումից հետո թուրքերն, առանց կանգ առնելու, շարժվեցին դեպի Կարին եւ որոշվեց այդ բաղաքի պաշտպանության կազմակերպման գործը հանձնարարել Անդրանիկին:

Քանի որ դիվիզիայի մարտական ուժերը ցրված էին Սասունից, Վանից մինչեւ Ալեքսանդրապոլ, ինչը երկաթուղու բացակայության պայմաններում ղեկավարման, մասնավորապէս, մատակարարման գործում մեծ դժվարություններ էր առաջացնում, նպատակահարմար համարվեց դիվիզիայի կազմում ստեղծելու երկու հեծյալ գունդ եւ հետախուզական ծառայություն իր մարտական ջոկատներով: Նաեւ ձեւավորվեցին 13 լեռնային մարտկոցներ եւ այլն¹:

Անդրանիկի զինվորական կոչում չունենալն անսովոր ու լրացուցիչ դժվարություններ առաջացնող հանգամանք համարվեց:

Լեբեդինսկին ռազմաճակատի հրամանատարին գրեց. «Թուրքահպատակ հայ Օզանյան Անդրանիկը, որ զինվորականի աստիճան չունի եւ զինվորական ծառայության մեջ չէ, որպէս թուրքահայերի եւ ռուսահայերի շրջանում մեծ հեղինակություն եւ ազդեցություն ունեցողի, նախատեսված է Կովկասյան ռազմաճակատի նոր ձեւավորվող Հայկական հատուկ դիվիզիայի հրամանատարի պաշտոնի համար»² եւ խնդրում է նրան շնորհել ռուսական բանակի գեներալի զինվորական կոչում:

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41:
² Ն.տ., ֆ. 1082, ց. 5, գ. 183:

Վ. Թորովենցը գրում է, որ Անդրանիկն այդ կոչումն «առանձին սիրով ու խանդավառությամբ չընդունեց եւ գեներալական մունդիրը կրում էր միայն որպէս կարգապահությունն ուժեղացնելու միջոց»:

Ահա թե Ս. Վրացյանն ինչ է գրում Անդրանիկին Էրզրումի պաշտպանական շրջանի հրամանատար նշանակելու մասին. «Անդրանիկը գորավարի ուսադիրներ դնելուց յետոյ մեծ չափով կորցրեց իր հմայքը: Ուսադիրները չէին արգելում, որ ռուսական բանակի սպաները անվանեին նրան խմբապետ՝ անձեռնահաս վարելու խոշոր զորամասեր եւ բերդի պաշտպանութեան բարդ գործը... Անդրանիկը խմբապետությունից հրաժարվել, գորավար չէր դարձել: Այդ պատճառով մինչեւ վերջ էլ չկարողացավ կենտրոնացնել իր ձեռքը բերդի եւ զորամասերի ղեկավարութեան գործը: Այս պարագան քիչ չնպաստեց Էրզրումի արագ խորտակումին»³:

Իրադարձություններին անտեղյակ ընթերցողին պարոն Վրացյանի ասածը միանգամայն տրամաբանական կթվաւ: Իսկ իրականում անճոռնի ճիգ է (ի դեպ, ոչ միայն Վրացյանի կողմից) Ազգային խորհրդի եւ հայկական կորպուսի հրամանատարության անպատասխանատվությունն ու անբանությունը քողարկել Անդրանիկի ոչարհեստավարժ լինելով: Նախ, այդ նույն Ազգային խորհուրդը ինչու թույլ տվեց, որ «հայդուկին» նշանակեն ման պատասխանատու, բախտորոշ նշանակության պաշտոնի: Հրապարակ նետվեց մի տգեղ վարկած, թե իբր Անվտանգության խորհուրդը հակառակ Ազգային խորհրդի կամքի է Անդրանիկին դիվիզիայի հրամանատար նշանակել: Վկայակոչվում է կորպուսի հրամանատար Նազարբեկյանին, թե նա ընդհանրապէս տեղյակ չի եղել այդ նշանակման մասին: Ի դեպ, ՀՀԳ գործիչների, մասնավորապէս Չավրիյանի միջնորդությամբ Անդրանիկին Էրզրում ճանապարհելը կազմակերպվեց մեծ շուքով դաշնակ ջոջերի մասնակցությամբ: Եվ դա միանգամայն ճիշտ էր:

Վրացյանն ու մյուսները հետին թվով կեղծում են: Անդրանիկը այդ պահին նրանց համար հայրենիքի նշանաբան, լայն զանգվածների հայրենասիրական զգացմունքները խթանող փրկության օղակ էր: Ս. Վրացյանը գրում է, թե Անդրանիկը «մինչեւ վերջն էլ չկարողացավ» կարգ ու կանոն հաստատել: Բայց լսենք Անդրանիկին. «...Կարին մտնելիս մինչեւ ելնելս տեսած է միայն վեց օր: Այս ճակատին առջեւ, Վասպուրականն մինչեւ Երզնկա ու Բաբերդ, կատարուած չարքին պատճառները պետք է փնտրել Թիֆլիսի աղջկանց գիմնազիտին մեջ կազմուած քորբիսի եւ Ազգային խորհուրդի մոտ»⁴:

³ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 92:
⁴ «Ազգային հեերոս Անդրանիկ կը խոսես», Փարիզ, 1921, էջ 25-27:

Եվ իսկապես, ինչ անուճ տալ այն իրողությանը, որ 1918թ. հունվար-փետրվար ամիսներին Ազգային խորհուրդը մի կողմից գործեր էր հավաքում Արեւմտյան Հայաստանը պաշտպանելու համար, իսկ մյուս կողմից, անընդհատ քննարկում՝ Արեւմտյան Հայաստանից հետ քաշվե՞լ, թե՞ ոչ: Նման կամուկացով, անորոշ դիրքորոշմամբ հնարավոր էր կռվողներին կամային գործողությունների մղել: Իհարկե, ո՛չ:

Ս. Վրացյանն անդրադառնալով Ալեքսանդրապոլի խորհրդակցությանն ու հաստատելով այն իրողությունը, թե սուր վեճեր գնացին ճակատի գիծը փորպացնելու շուրջ, գրում է, որ Անդրանիկը, Ռուբենը, Խ. Կարճիկյանը, Ս. Մամիկոնյանը եւ այլոք ելույթ ունենալով, առաջարկեցին անցկացնել նոր զինակոչ:

Դրո՞ն գտնում էր, որ դա խնդիրը չէր լուծի: Քանի որ ռուսների հեռանալուց հետո ռազմաճակատային ամբողջ գիծը պահելն անհնար էր դառնալու: «Որոշ ժամանակ էլ եթե այդպես շարունակուի, ռազմաճակատը պիտի մերկանայ, եւ թշնամին առանց դիմադրութեան առաջ պիտի շարժուի... Ի՞նչ անել: Պետք է կարճացնել ռազմաճակատը... եթե չենք կարող ամբողջը պահել, պահենք գոնե մեկ մասը... Պետք է քաշենք մեր ուժերը Բայազետ-Բասեն գծի վրայ... Պետք է Վանի, Մուշի, Երզրումի, Երզնկայի շրջանների բոլոր պահեստները ոչնչացնենք... Այլապես, Թուրքահայաստանը կորցնելուց յետոյ, Ռուսահայաստանն էլ կը կորցնենք»⁵:

Այս առաջարկությունը չանցավ: Որոշվեց պաշտպանել ամբողջ ռազմաճակատը եւ հայկական կորպուսի 3-րդ դիվիզիայի հրամանատար Անդրանիկին, որն ամբողջ ռազմաճակատային գիծը պաշտպանելու ամենաջերմեռանդ պաշտպանն էր, նշանակել Երզրումի ռազմաճակատի հրամանատար: Այդ նշանակումը ելնում էր այն իրողությունից, որ Անդրանիկի համաժողովրդական հեղինակությունը պետք է, որ օգներ բանակում տիրող հուսալքված տրամադրությունները հաղթահարելուն:

«Մոտ 2.000.000 հայութիւնը, 300.000 հայերու բեկորները, որոնք իրենց յոյսը դրած էին ռուս յեղափոխական ժամանակավոր կառավարութեան վրայ, այսօր վտանգի սպառնալիքի ներքեւ կը գտնուին»:

Կովկասեան ռազմաճակատի անխնամ վիճակը՝ թիւքերու հակայարձակման հավանականութիւնը, քիւրաբերու մշտական բալանն ու սպանութիւններն, տեղական բաբարներու հապճեպ զինուելն ու վրացիների երկդիմի քաղաքականութիւնը վտանգի նոր դուռ բաց կանեն հայութեան համար: Սենակ ենք մեր անգորութեան մեջ եւ մեր թշուառութեան հետ. շրջապատուած ենք մեզ չսիրող եւ մեզ հետ մրցակցող տարրերով, որոնք առիթ չեն փախցնի հարուածելու մեզ»⁶:

⁵ Վրացեան Ս., Կեանքի ուրիշներով, հ. Գ., էջ 179-180:

⁶ «Ապարեզ» 1918, N488

Ժամանակակիցը պատմում է, որ Էրզրում մեկնելուց առաջ Անդրանիկը մասնակցել է Ազգային խորհրդի մի քանի նիստերում այդ հարցի քննարկմանն ու նկատում էր, թե դաշնակցության շատ ղեկավարներ ավելորդ էին համարում Էրզրումի պաշտպանությունը: Նրանք պահանջում էին հետ քաշվել «պարպելով Կարինն ու ամբողջ Տաճկահայաստանը»: Անդրանիկը տեղից քղավեց. «Ուրեմն Տաճկահայաստանն ամբողջությամբ թուրքին հանձնե՞նք... ինչո՞ւ շինած եք ուրեմն Թուրքահայաստանն ազատագրելու ձեր ծրագիրը, ո՞ր ատենվան կապասեք զայն օգտագործելու համար»:

Անդրանիկի համար ինքնապաշտպանությունը գլխավոր խնդիր էր: Նա գտնում էր, որ «ժողովրդի գիտակցությանը պետք է հասցնել այն ահավոր վտանգը, որ կախված է մեր գլխում վրայ: Կրկնեցեք, անդադար եւ համբերութեամբ կրկնեցեք, որ ազատութիւն կարող ենք ձեռք բերել, եթե ուզենք: Եթե հայը չունենայ գիտակցութիւնը՝ փոխանակ ապրելու, պիտի մեռնի: Վարկեանի գիտակցութիւնը պիտի փրկե հայ ժողովուրդը»:

Նա 1918թ. փետրվարի 6-ին «Հայաստան» թերթում գրում է. «Դասավորված պայմանների բերմամբ մեր հայրենիքն իր պատմութեան մեջ երբեք չի ունեցել այնպիսի ճգնաժամային կարիք իր զավակների ընտրված ուժերին եւ երբեք փոքրիկ թերացումներն այնպես ճակատագրական նշանակություն չեն ունեցել, որքան ներկա պատմական օրերին... Հայրենիքը վտանգի մեջ է, ամեն հայ պարտավոր է գնալ դիմավորելու այդ վտանգին»: Նա կոչով դիմեց հայ երիտասարդությանը՝ սեփական ձեռքում «պահել մեր հայրենի հողը» եւ սպառնալով «մեր տանջված ժողովրդի ֆիզիկական գոյությունը», «լցվեցեք կազմակերպվող հայ զորքերի փառապանմ շարքերը եւ օգնեցեք, որ ուժեղ բանակ ստեղծենք», ռազմաճակատը «դատարկված է, ռուս զորքը հեռացել է», Հայաստանը ենթակա է «բարբարոսական ոհմակների ասպատակությանը եւ միայն ուժեղ, կազմակերպված բանակը կարող է ապահովել մեր ժողովրդի կյանքն ու գոյությունը»:

Անդրանիկի հարցապնդման հետ համաձայն էր Անդրկովկասում գործող ռուսական բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Գ. Լեբեդինսկին: Նա նույնպես գտնում էր, որ քայքայվող բանակի հետեւանքով երկրամասին սպառնացող վտանգի առաջն առնելու միակ ուժը կարող էին լինել հայկական չորս գնդերը եւ կազմավորման ընթացքի մեջ գտնվող մեկական հետեւակ եւ հեծյալ գնդերը: Ալեքսանդրապոլում՝ հայկական 7-րդ եւ 8-րդ հրաձգային գնդերը, բերդային գորամասերը: Բացի թվարկվածներից այլևայլ գնդերում կային կամավորական, հայդուկային եւ մարտական ջոկատներ, աշխարհագորային խմբեր:

Ուազմաճակատը զրեթե ամբողջությամբ անցել էր հայերի ձեռքը, որովհե-

տեւ վրացական կորպուսի կազմակերպման աշխատանքները նախնական փուլում էին, իսկ ադրբեջանականինը դեռ չէին էլ սկսել:

Ֆրանսիական գնդակետ Մ. Լարշէի «La guerre turgue dans la guerre mondiale» (Փարիզ, 1926թ.) գրքում մանրամասը ներկայացված են այդ ռազմաճակատում տեղակայված բուրքական ռազմական ուժերը, որոնք միավորված էին 3-րդ բանակի հրամանատար Մ. Վեհիբի հրամանատարության տակ: Տարեակգրին այդ բանակում կար 10.000, իսկ մարտին՝ 25.000 մարդ: Կարս-Սարիղամիշ ճակատում կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանի հրամանատարության տակ կար 17.000 զինվոր:

Բայց բուրքերն ունեին մի քանի առավելություններ՝ նրանք քաջատեղյակ էին թե ճակատում եւ թե թիկունքում հակառակորդի վիճակին, վայելում էին Կովկասի ողջ մահմեդական բնակչության աջակցությունը: Թուրքերն ունեին կենտրոնացված ուժեղ հրամանատարություն ի տարբերություն Անդրկովկասի բանակի, որը մասնատված էր:

Նաեւ նշենք, որ անցած մի քանի ամսվա ընթացքում ռազմաճակատային գիծը փոքրացել էր ավելի քան երկու անգամ եւ դարձել էր 570 կմ:

Երզնկան թողնելուց հետո ռազմաճակատում կովող կողմերի ուժերը դասավորված էին հետեւյալ կերպ: Նախ նշենք, որ գնալով հայերի վիճակը ծանրանում էր թիկունքում, ոչ միայն Արաքսից արեւմուտք ընկած, այլեւ Երեւանի նահանգում: Ակնհայտ էր, որ նահանգում առաջացած խառնաշփոթի հետեւում կանգնած էր բուրքական հրամանատարությունը, որի նպատակն էր կազմալուծել հակառակորդի ռազմական ուժերն ու թիկունքը եւ հեշտացնել բանակի առաջխաղացումը: Ռազմաճակատը ներկայացնում էր հետեւյալ պատկերը. Վանում կանգնած էին հայկական 9-րդ հրաձգային գունդը եւ Վանի երկու գնդերը, Խնուսում՝ հայկական 2-րդ հրաձգային գունդը եւ Խնուսի ու Ղարաքիլիսեի գնդերը, Էրզրումում՝ հետեւակ գունդը, հայկական առաջին հրաձգային գունդը, 4-րդ հրացանաձիգ գնդի մեկ գումարտակը, բերդային գորամասերը, Երզնկայից արեւելք գտնվում էին տեղի հետեւակ գունդը եւ Մուրադի մարտական ջոկատը, Ջյալքիթում՝ Սեպուհի մարտական ջոկատը, Երեւանում՝ հայկական 3-րդ եւ 4-րդ հրաձգային գնդերը եւ 4-րդ գնդի մի մասը, Կարսում՝ բերդային գորամասերը:

Անդրանիկի գունդը 1918թ. փետրվարին արդեն պատրաստ էր մեկնելու ռազմաճակատ: Մինչեւ մեկնելը նա ելույթ ունեցավ Թիֆլիսի հայոց եկեղեցու բակում եւ ասաց, թե Երզնկայից ստացվել են լուրեր, որ թուրքը «քաջալերված ռուս զորքերու հեռանալեն, նորեն կաշխատի իր անարգ ոտքերով կոխտտել մեր սրբազան հողը եւ մեր ազատուած բուռ մը ժողովուրդն ալ սուրե անցուցնել... Վաղն իսկ պատրաստ եմ մեկնելու, որոնք որ կփափագին ընկերանալ եւ ինձի հետ մեռնիլ իրենց հայրենիքի սուրբ հողի վրա, թող ձեռքերնին բարձրացնեն...»:

Վ. Թոթովենցը հիշում է. «1918թ. փետրվարի 8-ի առավոտյան մեկը եկավ «Հայաստանի» խմբագրություն եւ հայտնեց, որ Անդրանիկ ինձ կուզե: Թողուցի լրագրական աշխատանքս եւ փութացի իր մոտ:

– Վահան, սկսավ անիկայ, իրիկունը կը մեկնիմ Կարին, մինչեւ իրիկունը բերրի գործերը պիտի կարգադրես, պիտի հայտարարես, որ «Հայաստանը» կփոխադրուի Կարին եւ դուն ալ պիտի գաս ինձ հետ»: «Հայաստանի» այստեղ լույս տեսնելը, շարունակեց Անդրանիկ, բոլորովին անիմաստ է, պիտի հրատարակուի մայր երկրին մեջ»⁷:

Երկաթուղային կայարանում հնչում էր «Ձայնը մը հնչեց Էրզրումի լեռներեն» երգի մեղեդին: «Երբ մենք հասանք Թիֆլիսի կայարան, պատմում է Վ. Թոթովենցը, շարք էր կանգնած արեւմտահայ գորակոչիկներից կազմված մի գունդ... Հնչում է փողը. Անդրանիկի ժամանումի փողն է... Երիտասարդի մը պես աշխույժ եւ կայտառ, Անդրանիկը գլուխը բարձր, զինվորական բարեմերով եւ քայքով անցավ գնդի շարքերի մեկ ծայրեն մյուսը... տեսարանը հուզիչ էր...»:

Կայարանում, բացի մեկնող շուրջ 1000 զինվորներից, հավաքված էր ուղեկցողների շատ ավելի մեծ զանգված: Կայացավ հանրահավաք: Անդրանիկը դիմելով իր ռազմիկներին ասաց. «Մեզի ձուլած է մեր բախաը, աշխարհի մեջ մեն մենակ ենք... Ռուսը գնաց եւ մեր հայրենիքը մեզ թողուց: Թուրքերը կը սպառնան գան ու մեր ձեռքեն խլեն մեր հողը, դիմադրենք եւ չթողնենք, որ թուրքը մտնի մեր արիւնով ռոտգուած դաշտերը... Մենք տեղ չունենք, տուն չունենք, բոլորս որք ենք. ստեղծենք մեր հայրենիքը եւ տեր ըլլանք մեր ընտանիքներում, մեր հողին, ջրին, տունին ու տեղին»⁸:

Կարսում նա հայտարարեց. «Կը պահանջեմ հայերեն, որ ոչ ոք համարձակուի ձեռք տալ որեւէ մուսուլմանի, նոյնը կը պահանջեմ նաեւ մուսուլմաններում՝ հայերու նկատմամբ»⁹:

Անդրանիկն այդ օրը հեռագրեց Պ. Նուբարին. «Ես կը մեկնիմ Կարին: Թե՛րեւս մի քանի օրեն լսեք տխուր լուրեր»: Նրան հարցրին թե ինչու անկումային տրամադրությամբ է: «Հուսալի ոչինչ չկա»:

Ալեքսանդրապոլի կայարանի հանրահավաքում Անդրանիկը նաեւ ասաց. «Ավարայրի մեծ ճակատամարտեն մինչեւ հիմա մեր պատմութեան մեջ չէ եղած ավելի մեծ վայրկեան, քան այն, որ մենք կերթանք դիմագրավելու: Մեր հայրենիքի «այո»-ն կամ «ոչ»-ը պիտի որոշուի Վանի, Մուշի, Կարնոյ մեջ եւ պիտի որոշուի մեր արիւնով»¹⁰:

⁷ Մարմարեան Ա., Ջոր. Անդրանիկ և յուր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 297:

⁸ Ն.տ., էջ 299:

⁹ «Աշխատանք», 1918, N92:

¹⁰ Մարմարեան Ա., նշվ. աշխ., էջ 299:

Կարսի հանրահավաքում նա ասաց. «Ես ձեր քաղաքը եղած եմ տարիներ առաջ, երբ դուք սարուկ էիք. այսօր քաղաքը ձեր ձեռքին է, ձեր իշխանության տակ, բայց երկար չի մնար, եթե հարզը չգիտնար եւ ձեր ազատությունը պաշտպանելու գիտակցությունը չունենար... Ես գնում եմ կռվելու, ով համաձայն է, թող միանա»: Որպես համաձայնության նշան ձեռք բարձրացրեց շուրջ 2000 մարդ, բայց երբ Անդրանիկն ասաց՝ պատրաստվել մեկնելու, մնաց 25 հոգի:

Սարիղամիշում նրան դիմավորեց Պանդուխտը, որը տեղում մարտական ջոկատներ էր կազմավորում, զինում եւ ուղարկում էր գրում: Նույն ժամանակ արեւելք էր մեկնում 800 ռուս զինվորի տուն տանող գնացքակազմը¹¹:

Բնութագրական պատկեր էր՝ ոգեւորություն եւ հուսալքություն, շարժում դեպի արեւմուտք՝ միաժամանակ հակադարձ ընթացք, հաղթելու կամք եւ «փ-գուր ենք Կարսից այն կողմ գնում» մոլորվածություն ու կասկած՝ դրանք բոլորը միախառնվել էին մարդկային զանգվածների անորոշ շարժումներում ու հայացքներում:

Անդրանիկը մի քանի հոգու հետ Սարիղամիշից էր գրում է մեկնում ավտոմեքենայով: Ճանապարհին մեծ թվով տուն փախչող դասալիքներ կային: Հաջողվում է նրանց մի մասին հետ դարձնել:

1918թ. փետրվարի 18-ին Անդրանիկը մտնում է Էրզրում: Նրան դիմավորում են մեծ թվով մարդիկ: Իրեն ողջույնի խոսքերով ու կեցցեներով դիմավորողներին նա պատասխանեց. «Մի ծափահարեք ինձ, այլ մտիկ ըրեք իմ խոսքին. ամեն մարդ թող անմիջապես մտնե գորանոց եւ գիշերը մեկնի ճակատ...»:

Էրզրումում էին գտնվում Թորգոմի գունդը, Ա. Միրզոյանի միլիցիայի ջոկատը, Մուրադի գորամասի շտաբը, հայկական կորպուսի 1-ին եւ 4-րդ գնդերը, Անդրանիկի հետ եկած 1000 հոգանոց գորամասը, բերդերի կայազորները, որոնք ունեին 700 քնդանոթ եւ բավարար քանակությամբ ռազմամթերք:

Էրզրումում մեծ թվով փախստականներ էին կուտակված: Լսելով Անդրանիկի գալու մասին, նրանք առանձնակի ոգեւորություն ապրեցին: Թոթովեցը գրում է, որ այդ ժամանակ Անդրանիկը դեռեւս լավ չգիտեր, թե Բրեստում Հայաստանի հարցն ինչպես է լուծվել, բայց զգում էր, որ բոլշեիկներն այդ տարածքներն այլեւս իրենցը չէին համարում: «Ռուսական բանակն արդեն քաշուած էր», Արեւմտյան Հայաստանը լքված էր: Ռ^oվ էր տիրանալու նրան՝ հայն^oրը թե թուրքերը, հարցին Անդրանիկը պատասխանում էր. «...որ մեկը որ գորավոր եղավ եւ առավ՝ պիտի պատկաներ անոր»:

Թե ճանապարհին տեսածները եւ թե Էրզրումում իշխող մթնոլորտը ծանր տպավորություն գործեցին: Ռազմաճակատի վիճակն ավելի քան աղետալի էր: Այն փլուզվում էր բոլոր առումներով:

¹¹ Մնացականյան Ա., Հակոբյան Հ., նշվ. աշխ. էջ 170-172:

Հունվարի 8-ին Կարս-Մերդենեկ ուղեմասի պետը հեռագրեց. «Նկատի ունենալով, որ Կարս-Մերդենեկ երկաթգիծը սպասարկող բրիգադի զինվորները հեռանում են, անտեր թողնելով երկաթուղային ամբողջ ունեցվածքը եւ դադարեցնելով գնացքների երթեւեկությունը, խնդրում եմ թույլատրել կազմելու հայկական երկաթուղային գումարտակ եւ նրա տնօրինությանը հանձնելու երկաթգծի ունեցվածքը»¹²:

Հունվարի 12-ին գնդապետ Վիշինսկին հեռագրեց. «Անհրաժեշտ է շտապ միջոցների դիմել Էրզրումի երկաթգծի պաշտպանության համար... Եթե այդ կենսական հարցը մինչեւ փետրվարի 1-ը չլուծվի, հայկական գորամասերը ստիպված են լինելու լքել այն եւ ամբողջ գործը կկործանվի»¹³:

Մի ուրիշ հեռագիր. «Ճակատը լրողներն իրենց հետ տանում են ինչ հնարավոր է, այդ թվում նաեւ ավտոմեքենաներ»:¹⁴ Իսկ Կարսից հայտնում էին. «Ավիացիոն գորամասի զինվորները ամեն ինչ թողել փախել են»¹⁴: Շարաֆխանայում լքել էին հինգ օդանավ՝ դրանց սպասարկող ամբողջ տեխնիկայի հետ միասին:

Հասկանալի է, որ հայերն աշխատում էին հնարավորության սահմաններում հասնել այն բանին, որ ռուսական հեռացող զորքերն իրենց գեներալի եւ զինամթերքի մի մասը թողնեին հայոց բանակին: Արդուրինսկին գրում է Հայոց ազգային խորհրդին. «Ալեքսանդրապոլի վրայով պիտի անցնի 24-րդ կովկասյան հրաձգային գնդի գնացքակազմերից մեկը 1200 մարդով եւ հսկայական ռազմական գույքով՝ այդ թվում հրանոթներ, գնդացիներ, հանդերձանք, որոնք բոլորը տրամադրվելու են հայկական 8-րդ մորաստեղծ գնդին...»¹⁵:

Բայց որոշիչն այդ չէր, այլ այն, որ հայերը հենց սկզբից հայտնվեցին խուճապային կացության մեջ՝ գրեթե միայնակ թուրքական ռազմական ուժի առաջ:

Բացի այդ, թուրքական հրամանատարությունն ամեն ինչ արեց ռազմաճակատի հայկական կողմում շփոթն ու տարընթացությունն ուժեղացնելու, տրանսպորտը կազմալուծելու, խանգարելու, որ նորաստեղծ ազգային գորամասերը փոխադրվեն առաջին գիծ: Հայերն ու ռուսական բանակը ներկայացվում էին որպես հակամուսուլման բարբարոս ջարդարարներ, նրանց այդ գործողություններն էին հարկադրում թուրքերին առաջանալու:

Էրզրումի ճակատի գլխավոր դիրքերն անցնում էին Իլիջա գյուղից մինչեւ նույնանուն բարձունքները: Անդրանիկը Մուրադին հանձնարարում է աջ թեւի, իսկ Թորգոմին՝ ձախ թեւի պաշտպանությունը, կենտրոնում տեղակայում է 1-ին եւ 4-րդ գնդերը Բեժանբեկովի հրամանատարությամբ:

¹² «Աշխատանք», 1918, N92:

¹³ Ն.տ.:

¹⁴ Ն.տ.:

¹⁵ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 1818, ց. 2, գ. 45:

Նա ստեղծում է հետախուզական երկու խումբ՝ մեկը թշնամու թիկունքի, իսկ մյուսը բաղաճի ներսի՝ դիվերսիոն եւ այլ բայքայիչ դիտավորություններ չեզոքացնելու համար: Նա կապ է հաստատում Մուշի՝ Սմբատի հետ, փորձում է համագործակցություն հաստատել նաեւ Վանի հետ: Նա հեռագրով դիմում է Խնուսում գտնվող 2-րդ գնդի զինվորներին. «Ամուր կանգնել դիրքերում մինչեւ քարմ ուժերի ժամանումը... Ամնիջապես ուղարկում եմ 500 սպառազեն մարտիկ, 1000 ձեռք հագուստ, շուտով կմեկնեմ եւ ինքս»¹⁶:

Նա պլանավորում էր նախահարձակ լինել, ընդ որում՝ իրականացնել ընդհանուր հարձակում Տարոնից մինչեւ Արդահան՝ ժամանակ շահելու, որպեսզի հայկական կորպուսը հնարավորություն ունենար իր ուժերը համալրելու եւ օգնության հասնելու: Էրզրում են գալիս Սիջազետքում անգլիական զորքերի հրամանատար գեներալ Շորի ներկայացուցիչները եւ ասում են՝ եթե Անդրանիկը սկսի հարձակումը անգլիացիները կօգնեն նրա ձախ թելին, ինչպես նաեւ հայոց զորքերին կտրամադրեն ավտոմեքենաներ, ինքնաթիռներ, զենք, հանդերձանք եւ այլն:

Անդրանիկին հարձակման էր մղում նաեւ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը:

Եվ հարձակումը սկսվում է. Թորգոմը թշնամու աջ թեւին հարկադրում է նահանջել, թուրքերին հետ է շարտում նաեւ Մուրադը, Վանի ուղղությամբ հաջողությամբ առաջանում էր Սմբատը: Բայց 1-ին եւ 4-րդ գնդերը չկատարեցին հարձակման հրամանը: Անդրանիկին մեծ դժվարությամբ է հաջողվում այս գնդերում կարգը վերականգնել եւ հարձակման ուղարկել:

Կռիվները շարունակվեցին մինչեւ մարտի 15-ը: Կարծես իրականանալու էր Անդրանիկի երազանքը՝ մայիսի 3-ին Կարինում գումարելու հայ ժողովրդի ներկայացուցիչների համաժողով եւ հռչակելու Հայաստանի անկախությունը:

Բայց այս ամենը կատարվում էր մի ժամանակ, երբ ստորագրվում էր Բրեստի պայմանագիրը, որով Արեւմտյան Հայաստանն, այդ թվում նաեւ Էրզրումն անցնում էր թուրքերին: Եվ զարմանալու ոչինչ չկար, որ առանց այդ էլ բարոյական բարվոք վիճակ չունեցող, պատերազմից հոգնած հայկական զորքերի կռվելու կամքն անմիջապես խորտակվեց: Մանավանդ, որ սեյմի կառավարությունը, չնայած չճանաչեց այդ դաշնագիրը, բայց գործարքի մեջ էր թուրքերի հետ (իհարկե, ի վնաս հայերի) եւ համաձայնություն էր տվել հաշտության բանակցություններ սկսելու:

Եռանդուն գործունեություն ծավալեցին մուսավաթի գործակալները: Փետրվարին Էրզրումում հայտնվում է Բաբվի մահմեդական բարեգործական ընկերության ներկայացուցիչ Սեյիդովը՝ իբր պատերազմից տուժած

¹⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 120, ց. 1, գ. 41:

մահմեդականներին օգնություն ցույց տալու համար: Բայց երբ նրա կացարանը խուզարկեցին, պարզվեց, որ այդ սեյմականը միանգամայն «այլ գործերով» էր զբաղված:

Սեյիդովի մոտ հայտնաբերվեց լրտեսական մեծ թվով գրագրություն: Փետրվարի 17-ին նա գրել էր Վեհիբին. «Անդրանիկը եկավ: Դուրսումը շատ վատ է: Ամնիջապես հայտնեք մեր բանակին՝ նոր ուժեր տրամադրելու՝ եր: Ինչո՞ւ տեղեկություն չեք ուղարկում՝ պատրաստ եք, թե ոչ: Կովկասից լուր կա, որ հնարավոր չէ հայ կամավորների ժամանումը կանխել: Տեղ-տեղ գծերը կտրվում են, բայց դա բավական չէ...»: Հինգ օր անց նա գրեց. «Փաշա, թեև գրել էի, որ կանցնեմ ձեր կողմերը, բայց հայերը չընդունեցին իմ առաջարկը եւ հսկում են ինձ: Այստեղ եղած զինվորները շատ չնչին են՝ շտապեք արշավել: Կովկասից լուր եմ ստացել, որ հայերի ճանապարհները հնարավորին չափ կտրված են, դրանից ավելի չեն կարողացել անել...»¹⁷: Խոսքն այն մասին էր, որ քանդված կամ բռնագրավված էին երկաթուղագծերը, փակված ճանապարհները եւ հայերը գրկվել էին ռազմաճակատ համալրում, հանդերձանք, տար հագուստ եւ այլն ուղարկելու հնարավորությունից:

Սեյիդովը համագործակցած թուրքական հրամանատարության հետ ազգամիջյան նոր ջարդեր էր պլանավորում Էրզրումի գյուղերում: Նա նաեւ նախապատրաստում էր հայաստանաբնակ ադրբեջանցիների ապստամբություն թուրքական բանակի հաջողությունները հեշտացնելու համար: Թուրքական գյուղերից մեկից Սեյիդովին գրում էին, թե իրենք պատրաստ են ապստամբելու եւ սպասում էին Էնվերի զորքերի գալուն, թե այդ գյուղում «ամեն մարդ դողի մեջ է Անդրանիկ փաշայի գալու առթիվ: Շատերը բողոքովին մերժում են ապստամբելը, առարկում են, որ Անդրանիկ փաշան բողոքին կկոտորի, բայց մեր հույսը ձեր վրա է»¹⁸:

Սակայն Չավրիյանը թույլ չտվեց, որ Սեյիդովին դատեին՝ նրան բանտից հանեց եւ ուղարկեց Թիֆլիս սեյմի աշխատանքներին մասնակցելու:

Իսկ թուրքերին հաջողվեց Էրզրումի վրա հարձակվող 3-րդ բանակի կազմը, փետրվարի սկզբի համեմատությամբ մարտի սկզբին ավելացնել 2,5 անգամ: Մինչեւ փետրվարի 25-ը հայերը վտանգված չէին, իսկ հաջորդ օրը առավոտ վաղ, երբ Անդրանիկը մեկնում է Իլիջայի ճակատ հարձակումը սկսելու համար, պարզվում է, որ թուրքական մի զորամաս խրվել է պաշտպանության ձախ թելի եւ կենտրոնի միջև: Դա նշանակում էր, որ Բեժանբեկովը նախորդ օրը սուտ տեղեկատվություն էր հաղորդել, թե իբր 1-ին եւ 4-րդ գնդերը պատրաստակամ էին կռվելու: Գնդերը դասալքում էին, որովհետեւ նրանց

¹⁷ Մնացականյան Ա., Հակոբյան Հ., Նշվ. աշխ., էջ 180:

¹⁸ «Չոր. Անդրանիկի...», էջ 64, «Հայաստան», (թ.) 25.05.1917:

հայտնել էին սեյմի ու բուրքերի գաղտնի գործարքի մասին:

Անդրանիկը վերադառնում է Էրզրում, իրեն հավատարիմ տարոնցիներից մի ջոկատ է կազմում և ուղարկում ռազմաճակատի կենտրոնը պահելու: Այդ ընթացքում բուրքերի կողմից կաշառված Էրզրում-Կարս երկաթուղու որոշ աշխատողներ փչացնում են շոգեքարշերը, տեղ-տեղ քանդում երկաթուղագծերը, այսինքն՝ ձգտում էին կտրել Էրզրումի կապը Կարսի հետ:

Նույն ժամանակ Տ. Աղամալյանն ու զինվորական միության մի քանի որիշ անդամներ ոսկիները փոխարինել էին դրամով ու անհետացել, իսկ նրանց գործընկերները թալանում էին ռազմական, մասնավորապես մթերային, պահեստները: Դավաճանությունների այս շարքն այլևս անհնար դարձրեց քաղաքի պաշտպանությունը: Անդրանիկը հրամայեց պայթեցնել զինապահեստները, սակայն դրա համար պատասխանատու սպան հրամանը չի կատարում և անցնում է բուրքերի կողմը: Անդրանիկը հրամայել էր, որ բերդերի թնդանոթների կրակով կասեցնել բշմամու առաջանալը: Բայց միայն ս. Նշան բերդն է մի քանի արկ արձակում: Պարզվում է, որ Ջանփոլաղյանը, Տվերդոլսկերովը և մյուս բերդապահները նույնպես անհետացել էին:

Անդրանիկին դիվիզիայի հրամանատար ճշմանակելու դեմ հանդես եկողներից Մոսկվայի հայկական խորհրդի նախագահ, հայտնի իրավաբան Մամիկոնյանը Էրզրում Անդրանիկի գնալու մասին ասել է. «Ես գիտեմ, որ Անդրանիկը Էրզրում երթալով վտանգի կը դնե ոչ միայն իր անձը, այլև իր մինչև հիմա վաստակած համբավն ու փառքը: Անդրանիկի քայլը կը բխե անոր գոհողութեան ոգիեն, որ սովորական անհատներուն բով չի գտնուիր: Միւս կողմեն, սակայն, Անդրանիկ չունի տիրող քառասային դրութիւնը և զինք շրջապատող քառսին ծանոթութիւնը, որ կրնար զինք հեռու պահել այդ վերահաս վտանգեն»¹⁹: Միանգամայն ճիշտ դիտարկում:

«Էրզրումում,- գրում է Ա. Թերզիպաշյանը,- զինուորական ոյժին կորիզը կը կազմէին հայկական զորամասերը, որոնց թիվը Երզնկայի ճակատեն նահանջող ռուսահայ և Թիֆլիսեն դրկուած բրքահայ զինուորներով օրեցօր կը ստուարանար, բայց որո՞ն կիյնար անոնց իսկական հրամանատարութիւնը, ապահովաբար առտուն կանուխ վեր ելնողին, Ապաս օղլիի շալվար հագնողին»²⁰: Նման օրերից մեկում Թորգոմն իրեն համարեց գլխավոր հրամանատար, քաղաքի կենտրոնական հրապարակում գորահանդես կազմակերպեց և Արեւմտյան Հայաստանը հռչակեց անկախ: Ապա տեղի ունեցավ շքերթ և տոնական ճաշկերույթ: Դա առաջացրեց ռուսական հրամանատարության վրդովմունքը: Անվտանգության խորհուրդը որոշում է նրան հետ կանչել, սա-

¹⁹ Թերզիպաշյան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 325:
²⁰ Ն.տ., էջ 332:

կայն Անդրանիկը թույլ չտվեց, որ նա մեկնի: Թորգոմը մնաց և այն փոքրաթիվ զինվորականներից էր, որ քաջաբար կռվեց և ինչ-որ չափով «փրկեց հայ զինուորին պատվով»:

Հենց առաջին օրը Անդրանիկը հասկացավ, որ իրեն ուղարկել են Էրզրում «հնձելու ուրիշներու այնքան առատորեն ցանած փոթորիկը»:²¹ Սա ձախողումներ արդարացնող եզրահանգում չէր, այլ դառը ճշմարտություն: Մարդիկ, որոնց վստահված էր հայրենիքի ճակատագիրը, այն վաճառեցին անձնական շահ ստանալու համար:

Էրզրումի ողբերգությունը շարունակում է մնալ վատ ուսումնասիրված ու առանց օբյեկտիվ գնահատականների: Դժբախտաբար դա ոչ խմբակային և ոչ էլ կուսակցական շահերի խնդիր չէր, այլ ազգային պարտվողական հոգեբանության արտահայտություն:

Անդրանիկը Էրզրումում տիրող մթնոլորտի մասին հետագայում գրեց. «Ես գտա քաղաքի ժողովուրդը լքուած և հուսահատուած. իմ ներկայութիւնը թեթեւ ոգետրեց զանոնք, բայց ես չեմ տեսեր այն ոգին, որ պետք է ունենար ժողովուրդ մը իր ազատութեան նախօրեակին»: Նա դիմելով իրեն ծափահարողներին, կրկնեց, թե «ինձ մի ծափահարեք... Անդրանիկը ձեզանով է Անդրանիկ, ձեր ուժերով է, որ մենք պիտի հաղթենք բշմամի... Ուստի երթանք ճակատ...»²¹:

«Կարնոյ մեզ գտնուած մարդկանց հարիւրին 90-ը խոստովանեցան,- գրում է Վ. Թորգոմեցը,- որ թե Անդրանիկը երկու օր ուշանար, տեղական բուրքերը պիտի ապստամբէին և կարող պիտի ըլլային կոտորել մեզ բոլորիս»²²:

Չավե՞շտ էր թե ողբերգություն: Քաղաքում իշխանությունը հայերի ձեռքում էր, ռազմական ուժն ու ամբողջությունները՝ նույնպես: Բայց հարձակվողը բուրք բնակչությունն էր, իսկ վտանգվածը հայ ռազմաքաղաքական ավելի քան գերակշիռ ուժը: Էրզրումը հայության համար անպատվաբեր իրողություն էր և բանալի հասկանալու 1918 և 1920թթ. աներեսկայելի պարտությունների պատճառը: Հայերը պարզապես չկռվեցին իրենց հայրենիքի համար: Ինչո՞ւ: Դժվար է դրա պատասխանը տալ: Թերեւս գլխավոր պատճառն այն էր, որ հայը հազար տարի հայրենիք չէր պաշտպանել և, ինչպես ասում են՝ «հետ էր սովորել»: Նա վերածվել էր ոչ թե հայրենիքի տիրոջ ու նրա համար պատասխանատու հավաքականության, այլ ինչ-որ տարածքի ժամանակավոր բնակչի, որն հեշտությամբ է այն փոխում մի ուրիշ տարածքի հետ:

²¹ «Ձոր, Անդրանիկ...», էջ 79-80:
²² Մարտարեան Ա., նշվ. աշխ., էջ 326:

Որքան էլ բարձրաշռինդ հռչակվի «հայրենասեր» հայությունը, մի շարք օրյեկտիվ ու սուրյեկտիվ պատճառներով, եթե ոչ ամբողջությամբ, ապա ծանր պահերին կորցրել էր պատասխանատվության գիտակցությունը, որ ինքը ոչ միայն Հայաստանի կրողն է, այլև նրա համար միակ իրական պատասխանատուն: Դա բարոյական և քաղաքական-ազգային քառու էր:

Անդրանիկը գրեց Վ. Փափազյանին. «Քառու, բառիս իմաստային բոլոր երևակայութեամբ, բոլոր լայնութեամբ, Օդիշելիձեն կը հրամայե, Ազգային խորհուրդը կը հրամայե, քաղաքներու միութեան լիագոր Աղանալեանը կը հրամայե, դաշնակցութեան ներկայացուցիչը կը հրամայե: Մեկ մը չկայ, որ ես ալ հրամայեմ»²³:

Փետրվարի 25-ին Վեհիքը հոխորտաց. «Օսմանյան հաղթական զորքերը շարժման մեջ են՝ գրավելու համար հայրենի հողերը: Համաձայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ռուսները մեզ թողել են Բաթումը, Կարսը, Արդահանը, Օլթին և Արդվինը: Ուրեմն կառաջարկեմ, որ այս պայմաններն ընդունեք: Այլապես խստորեն կ'պատժվեք օրենքի համաձայն»: Անդրանիկը պատասխանեց. «Եթե Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ձեզ Կարսն ու Բաթումը հանձնեց, մեզ էլ տվեց ամեն տեսակ ռազմամթերք՝ պաշտպանելու համար Կարսը, Էրզրումը, Վանը, Բիթլիսը և մնացած շորս վիլայեթները... Ես քեզ պես փաշաներ տեսել եմ, քեզ էլ կը տեսնեմ»²⁴:

Դժբախտաբար Հայաստանի համար հայերի պայքարը կանոնակարգված չէր ոչ բարոյական և ոչ էլ քաղաքական առումով:

Նազարբեկյանն Ազգային խորհրդի կողմից մահապատիժն արգելելու մասին ընդունած որոշումը համարեց «Էրզրումի անփառունակ անկումին» պատճառներից մեկը: Երկրորդ պատճառը նա համարեց հետեւյալը. «Թշնամի բանակը մեկ գլուխ ունի, ուրմե կը ստանայ մեկ հրաման, մինչ մերինն ունի Սեյմը, նախարարաց խորհուրդը, կուսակցական պիւրո, սեյմի հայկական ֆրաքսիոնը, Ազգային խորհուրդը»²⁵: Երրորդ պատճառը նա համարում էր «բերդապահ գորավարներեն որուն որ առաջարկեցի քաղաքի պաշտպանության հրամանատար, ան կամ մերժեց և կամ որպես պայման առաջարկեց բնդանթաձիգ սպաներու և մասնագետներու այնպիսի թիվ մը, զոր մեր պայմաններուն մեջ ճարելը նոր Էրզրում մը շինելու չափ դժուարին բան մըն էր մեզ համար»²⁶:

Էրզրումն անառիկ ամրոցի համարում ուներ. նրա ամրություններն ու պաշտպանական գծերը ավելի կատարելագործվեցին առաջին աշխարհա-

²³ Թերզիպաշեան Ա., Նուպար, Փարիզ, 1939, էջ 203:

²⁴ Չեկոսյան Ա., Չորավար Անդրանիկը և հայ հեղափոխական շարժումը. Լոս Անջելես, 1984, էջ 547:

²⁵ Թերզիպաշեան Ա., Անդրանիկ, էջ 339:

²⁶ Ն.տ., էջ 340:

մարտի տարիներին գերմանացիների կողմից: Բերդում կար 11 ամրոց (ֆորտեր), մի քանի պաշտպանական գոտիներ՝ թե բնական և թե կառուցված: 1916-ին ամրոցում կար 405 հրանոթ: Քաղաքն արեւելյան կողմից պաշտպանվում է Դե-Բոյնի լեռնաշղթայով: Էրզրումը ռազմավարական նշանակության մայրուղիների հանգույց է և որպես այդպիսին հավասարը չունի Մերձավոր Արեւելքում, այստեղ են խաչվում հյուսիս, հարավ, արեւելք և արեւմուտք տանող գլխավոր մայրուղիները:

Սակայն Էրզրումի ամրոցները միմյանցից հեռու էին և ձմռանը դժվարանում էր կապը նրանց միջև, մանավանդ, որ հեռախոսագծերը ավերված էին, բնդանոթներն անսարք վիճակում:

Քաղաքում եղած զորքերը հիմնականում հայեր էին, հայկական զորամասերն անընդհատ համալրվում էին, բայց ձեւավորված չէր բանակային հստակ կառույց:

Քաղաքում նշանակալից ուժեր կուտակվեցին: Էրզրումի գունդը՝ 600 սվին, Երզնկայի գունդը՝ 1400 սվին, լեռնային երկու մարտկոց ութը բնդանոթով, առաջին հրաձիգ գունդը՝ 500 սվին, 400 կամավոր: Միայն բերդում կար 400 քնդանոթ, որոնցից մարտական վիճակում էր լոկ 16-ը: Քաղաքում մնացել էին ռուս 40 սպա և 400 զինվոր: Փետրվարի 12-ին Կովկասյան ռազմաճակատի շտաբը Էրզրումից տեղափոխվեց Սարիղամիշ և մարտական գործողությունների և քաղաքի պաշտպանությունն արողությամբ անցավ հայերի ձեռքը:

Հեռանալով Էրզրումից, սեյմի զորքերի հրամանատար Օդիշելիձեն փետրվարի 16-ին հեռագրում է Թիֆլիս և բացառիկ սե գույներով նկարագրում կացությունը: Նա գրում էր, որ ռազմաճակատի քայքայման պատճառով բացառիկ ծանր վիճակ էր ստեղծվել Էրզրումի և Սարիղամիշի շրջաններում: Հայկական զորամասերը բացարձակապես անընդունակ էին դիմադրելու, իսկ ռուսական զորքը մեծ քանակությամբ զենք ու զինամթերք լքած հեռացել էր: Բնակչությանը սպառնում էր սով : Թուրքերը և քրդական ավազակախմբերը ամենավայրագ հալածանքների ենթարկելով հայ բնակչությանն առաջանում էին²⁷: Օդիշելիձեն նաեւ անգիտանում էր, թե այլեւս ինքն ինչ իրավասություններ էր ունենալու. Նազարբեկյանի հրամանատարության տա՞լ էր լինելու, թե՞ ընդհակառակը:

Վ. Ավանեսովին գրած նամակում (5-ը հուլիսի 1918թ.) Թորգոմը հայտնում է, որ Էրզրումում Վեհիքի գործակալները, աղբրեջանական գործիչները մահմեդական բնակչությանը բացեիբաց կոչ էին անում զինվել և ապստամբել հայկական իշխանությունների դեմ: Թորգոմը տալիս է Օդիշելիձեի քայքայիչ գործունեության բնութագրությունը, որը կազմալուծեց ռուսական բա-

²⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 1149:

նակն ու հրետանային ուժերը, հայտարարելով, թե թուրքերի դեմ չպետք է կռվել: Նա դառը խոսքեր է օգտագործում վրացի դավաճանների, Էրզրումի պահեստները բալանող հայ գործիչների եւ այլեւայլ ավազակաբարո անձանց հասցեին²⁸:

Իհարկե, առանց ռուսների Էրզրումը պաշտպանելը դժվար էր, որովհետեւ հայ զինվորը դրա համար բացարձակապես պատրաստ չէր եւ այդ ոչ միայն ռուսների հեռանալու, այլեւ ներքին խճճվածության, քաոսի պատճառով: Թիֆլիսում նստած ռազմական գործի մասնագետներն ու քաղաքական գործիչները արտաքուստ դրական, բայց ըստ էության բացասաբար էին վերաբերում քաղաքի պաշտպանությանը: Այդ էր պատճառը, որ Երզնկայի անկումից հետո, ինչը շատ լուրջ ահազանգ էր, ոչինչ չարվեց իրավիճակն արմատապես փոխելու ուղղությամբ: Թիֆլիսը որոշել էր Էրզրումը հանձնել, առանց դրա համար պատասխանատվություն կրելու:

Քաղաքում գործում էին բազմաթիվ կազմակերպություններ՝ Կովկասյան բանակի երկրային խորհուրդ, գյուղացիական խորհուրդների կենտրոն, գնդային կոմիտեներ, կոմիսարություններ, ազգային խորհուրդներ, քաղաքական կուսակցություններ, որոնցից յուրաքանչյուրն իրեն տեր էր կարծում եւ միջամտում էր հրամանատարության իրավասություններին, նաեւ խաղում տեւական պատերազմից զինվորների ու սպաների հոգնածության վրա:

Ա. Մամուրյանը գրում է. «Կարնոյ մեջ գոյութիւն ունեին զանազան եւ զարմանազան իշխանութիւններ, գունդեր, աշիրեթներ, միահեծանութիւններ:

Առաջինը՝ Հայ զինուորական միութիւնը, որուն զլխավոր անդամն էր Տ. Ա. դամալյանը, մի վարժապետ, որ անխղճութիւն ունեցած էր խառնուելու զինուորական գործի մեջ: Այդ մարդը ուներ զանազան պաշտոններ.

1. Հայ զինուորական միութեան նախագահ,
2. Կարնոյ շրջանի կառավարիչ,
3. Կարնոյ կոմիսար,
4. Մի շարք մթերանոցներու ընդհանուր կառավարիչ,
5. Ազգային խորհրդի Կարնոյ մասնաճիւղի նախագահ:

Կար Մոսկվայի հայկական քոմիթեն իր լիազորով: Ասիկա կէս քաղաքական մարմին էր, որովհետեւ մեկ քանի տարի է ի վեր գործում էր Կարնոյ մեջ եւ վարկ ձեռք բերած էր: Քոմիթեն իր ձեռքին տակ ուներ մթերանոցներ եւ գորք: Կար այստեղ Ազգային խորհուրդը, կար այստեղ Հայաստանի ապահովութեան խորհուրդը, Թորգոմը իր գունդով եւ երկեակ պաշտոնով:

Օղիշելիձեն իր վերջին հեղինակութեամբ (Օղիշելիձեն մեկնած էր, բայց իր շտաբը կը մնար տակավին):

²⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 1149:

Մուրադի սպայակազմը, Քոլիի գունդը իր մեծով, Երզնկայի գունդն իր մեծով, Բաբերդի գունդն իր մեծով:

Այս բոլորը իրարու հետ վեճի եւ պայքարի մեջ, ամեն մեկը միսի համար անսիրելի»²⁹:

Արդյունքում՝ հրանոթները ծածկված էին ձյան շերտով, մեխանիզմները սառած էին կամ ժանգոտած, խրամատներն ու ճանապարհները ավերված, զենքերը չէին հաշվառվում: Օղիշելիձենի հաջողվեց իր հրամանատարության օրոք հիմնովին կազմալուծել քաղաքի պաշտպանական-ռազմական համակարգը: Արսեն Մամուրյանը պատմում է քաղաքում Անդրանիկի առաջին շրջագայության մասին: Նա հանդիպում է 8-10 տղայի, որոնք ստացել էին հաց, շաքար, թեյ ու նստած էին խրամատում: Անդրանիկի հարցին, թե ի՞նչ են անում, նրանք պատասխանում են՝ ոչինչ: Այդ նույն ժամանակ «ռումբերը դուրս են գցված, ձյուններու տակ թրջուած, անհոգ, անխնամ, որբացած վիճակի մեջ»: Նույն ողբալի պատկերն էր ամենուրեք: «Բերդերու վրայ կային մոտ 700 քնդանոթներ» անխնամ ընկած³⁰:

Միաժամանակ իշխում էր սաղրանքների մթնոլորտ: Գեներալ Կուլեբյակինը վկայում է. «Ոմանք հաճախակի հանդես գալով զինվորական ժողովներում զինվորներին ներշնչում էին, թե Կովկասը անջատվել է Ռուսաստանից եւ այն պաշտպանելու հարկը չկա»³¹:

Ամեն ինչում խաբեությունն ու աչքակապությունն էին իշխում: Էրզրումի ողբերգության զլխավոր պատճառներից մեկն էլ դա էր: Էրզրումը համալրում չստացավ եւ բացի հայկական կորպուսից, մնացած ազգային միավորումներն ու նաեւ Դրացենկոյի ռուսական կորպուսը թղթի վրա գոյություն ունեին:

Ոմն Ջանփոլադյանը, որի պաշտոնն էր հսկելու բերդի կարգ ու կանոնին, օրերով աշխատավայրում չէր լինում, բերդի խնդիրներով չէր զբաղվում: Մի ուրիշ տեղ զինամթերքի պահեստի պահպանությունը հանձնարարել էին թուրքի: Անդրանիկին զեկուցեցին, թե քաղաքում սննդամթերքի միայն ութ օրվա պաշար կար, մինչդեռ իրականում այն կբավարարեր ութ ամիս:

Քաղաքի հայությունը պառակտված էր, ներհամայնքային պայքարը ծայրաստիճանի կատաղի էր: Անդրանիկը դառնացած ասում էր, որ մեր ժողովրդի պատմության մեջ դա մի նախադեպ էր՝ հայերը միմյանց կոկորդ էին կրծում, կրք թշնամին քաղաք էր մտնում:

Քայքայված էր Բերդի պաշտպանական համակարգը: Անդրանիկը աշխատանքից հեռացրեց բերդապահ զորամասի հրամանատար Ջանփոլադյան-

²⁹ Մարմարեան Ա., 6շվ. աշխ., էջ 329-330:

³⁰ Ն.տ., էջ 333-334:

³¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26:

նին, վերահսկողություն սահմանեց ռազմամթերքի, զենքի եւ պարենի պահեստների վրա: Նա մեծ ջանքեր ներդրեց հայ զինվորների հուսալքությունը հաղթահարելու, նրանց կարգապահությունը բարձրացնելու համար: Մասնավորապես վիճակը ծանր էր Բերդի առաջին եւ չորրորդ գնդերում, որոնցում մի քանի հազար մարդ կար: Անդրանիկը դառնացած ասաց. «Մշեցի 1000 տղայով ավելի գործ կարելի է տեսնել, քան այդ գնդերով»:

Որքան էլ տարօրինակ է, այդ բարոյալքումը հետեւանք էր հայ մի շարք գործիչների քայքայիչ աշխատանքի: Այդ էր պատճառը, որ Էրզրումի հայ գործիչների մի մասի ու Անդրանիկի միջեւ առաջին իսկ օրից ստեղծվեցին լարված հարաբերություններ: Անդրանիկի դեմ նույնիսկ մահափորձ կազմակերպվեց: Չորավարին վարկաբեկելու գործում մեծ եռանդ էր ծախսում նաեւ Ա.Ահարոնյանը³²:

Բերդի հրետանու պետ Տվերդոխլեբովը հրետանին վաճառում էր թուրքերին, դարձավ նրանց ծախու գրչակը եւ զրպարտություններ տարածեց ռուսական բանակի, հայկական զորամասերի եւ, մասնավորապես, Անդրանիկի մասին, որոնք մինչեւ օրս էլ օգտագործվում են պատմության թուրք կեղծարարների կողմից: Դրանք տեղ են գտել նաեւ Թալեաթի հուշերում:

Թուրքական լրտեսության գործունեությունը ձախողելու համար Անդրանիկը հանձնարարեց Մ. Միրզախանյանին ձերբակալելու Էրզրումում գործող թուրքական գաղտնի կազմակերպության ղեկավարներին, գյուղերը մաքրել թուրքական ավազակախմբերից:

Կարգապահությունը վերականգնելու համար Անդրանիկը մարտի 7-ին հրամանով արգելում է քաղաքում սպիրտային խմիչքների վաճառքը, ինչպես նաեւ ժողովներն ու հավաքները:

Կուլեբյակիցն ուշադրություն է հրավիրում նաեւ այն իրողության վրա, որ ողջ Անատոլիայում սփռված պանիսլամական, թուրքիստական գաղտնի կազմակերպությունները ազատ գործում էին նաեւ Էրզրումում: «Թուրքական մեծաքիվ լրտեսները, - գրում է նա, - ցվրված մահմեդական գյուղերում տեղադրված տանում էին պանիսլամական քարոզչություն, որով հող էին պատրաստում թուրքական հարձակման համար դեպի Կովկաս»³³:

Ի դեպ, հայ զինվորների շրջանում անտարբերությունը, նրանց ու տեղի վերնախավի միջեւ առաջացած անջրպետը նաեւ հետեւանք էր վերջինիս վարքագծով, որի համար նշանաբանը նույնն էր՝ «Չորքը բոլշեիկյան վտանգ է... պետք է ազատվել գորբից»³⁴:

³² Կասյան Ս., ԸԵ, էջ 102:

³³ Ն.տ.:

³⁴ «Կոմունիստ», 26.06.1918

Խորհրդային կառավարությունը նույնպես անդրադարձավ հայոց զինված ուժերի խնդրին եւ մարտի 3-ին շրջաբերական ուղարկեց տեղական ռեկոմենդերին՝ օգնել հայ փախստականներից մարտական ջոկատներ կազմակերպելու գործին, քանի որ դրանք «կոչված են պաշտպանելու իրենց հայրենիքը գերմանա-թուրքական բռնադատողներից»:

«Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը» գրքում կարդում ենք, որ հայ կառավարների համար «բոլշեիկներն առատորեն զենք, ռազմանյութ, հագուստ, ուտելիք, նույնիսկ թնդանոթներ տրամադրեցին եւ ուղարկեցին Կովկաս ռազմագիծը պաշտպանելու համար: Նրանք իրենց ծախսով նավեր կտրամադրեին հայ զինվորներին»³⁵:

Թուրքական արշավանքի նախօրյակին Էրզրումում կար 28...000 հայ, իսկ թուրքերի միայն տղամարդկանց թիվը հասնում էր 25.000-ի, որոնք զինված էին ու պատրաստ գործելու:

Հայկական ռդբերգության պատճառներից մեկն էլ այն էր, որ Վեհիբը հայերի, հայկական բանակի, Էրզրումի մասին ամեն ինչ գիտեր, իսկ հայերը թուրքական բանակի եւ Թուրքիայում հայերի եւ Հայաստանի դեմ ծրագրվածների մասին ոչինչ չգիտեին: Այդ իրողության պատճառներն էին՝ ա) Հայաստանում մեծ թվով թուրքեր էին բնակվում, իսկ Փոքր Ասիայում (բացի արեւմտյան ծովափից) հայերը մոռոթված էին, 2) Անդրկովկասը ծածկված էր թուրքական լրտեսական ցանցով, իսկ Անատոլիայում հայերը դրա հնարավորությունը չուներին, 3) Հայկական հրամանատարությանն այդպես էլ չհաջողվեց ծավալել ռազմական հետախուզության ցանցը, 4) Հայկական որոշ շրջաններում դավաճանական տրամադրությունների իշխող լինելը:

Վեհիբի վերջնագրերի անպատկառ բովանդակության պատճառն այն էր, որ նա քաջ գիտեր, թե ինչ էր կատարվում ռազմաճակատի մյուս կողմում, լավ հասկանում էր, որ հակառակորդի պարտությունն անխուսափելի էր եւ այդ ոչ թե այն պատճառով, որ հայերը պահանջված թվով մարդկային եւ նյութական ռեսուրսներ չուներին, այլ խճճված էին անկազմակերպվածության, ներքին սուր հակասությունների, անպատասխանատվության եւ դավաճանության ցանցի մեջ:

Ոչ քիչ դեպքերում իրականությունը դառնում էր զավեշտ:

Նազարբեկյանն իր շտաբի հետ փետրվարի 20-ին գնում է Թիֆլիսի երկաթուղային կայարան Ալեքսանդրապոլ տեղափոխվելու համար: Նրան ոչ միայն ոչ ոք չի ճանապարհում, այլեւ երեք օր վազոն չեն տրամադրում եւ հարկադրում իր շտաբով, հեծյալ հարյուրյակով սպասել կայարանում: Նա Թիֆլիսից հեռագրեց Արեշյանին, որ Ալեքսանդրապոլի իշխանությունների հետ հոգ տանի շտաբին շենք տրամադրելու համար, բայց վերջինս ոչինչ չարեց,

³⁵ Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920, էջ 96:

նույնիսկ կայարան չգնաց դիմավորելու կորպուսի հրամանատարին եւ շտաբին: Հայկական առաջին դիվիզիայի այդ հրամանատարը ամբողջ ժամանակը ծախսում էր ռուսական 66-րդ դիվիզիայի հետ առեւտրի՝ ձիեր գնելու վրա: Նազարբեկյանին շնորհակալություն նաեւ քաղաքագլուխն ու Ալեքսանդրապոլի մյուս ղեկավար պաշտոնատարները, որպեսզի քիչ անց խոնարհաբար ընդառաջ գնային եւ հյու-հնազանդ գլուխ խոնարհեր քաղաք մտած թուրքական բանակի հրամանատարին:

Անդրանիկին դիվիզիայի հրամանատար նշանակելու մասին նա գրում է. «Եւ նրա ռազմաճակատ մեկնելու մասին իմացել եմ պատահաբար: Երեւի իր երկրպագուների շնորհիվ էր Անդրանիկը նշանակվել Էրզրումի ջոկատի պետ եւ Էրզրումի պարետ, գնդապետ Մորեյի փոխարեն»³⁶:

Էրզրում էին գնում մեծ թվով կամավորական խմբեր, խմբապետներ, ուժքեր չէին ենթարկվում քանակային կարգապահությանը, մասնավորապես, հաշվառման չէին կանգնում շտաբում:

Քաղաքի պաշտպանության հետագա ընթացքը հետեւյալն էր: Փետրվարի 13-ին հարձակման ենթարկվեց Ստոյանկինի ջոկատը Եմիքոյի լեռնանցքում եւ Աշկալայի մոտ: Սակայն թուրքերն ու բրդերը հետ շարտվեցին: Օգտվելով մառախլապատ եղանակից, թուրքերին հաջողվեց Աշկալայի մոտ զգալի ուժեր կենտրոնացնել: Հայերը քաշվեցին Ալաջա, որտեղ գնաց նաեւ Անդրանիկը եւ թշնամին հետ շարտվեց: Հաջորդ օրը թուրքական հեծելազորը փորձեց շրջանցել Ալաջան, բայց էական հաջողություն չունեցավ:

Փետրվարի 22-ին Մելիք Միրզախանյանն իր փոքրիկ ջոկատով գրավեց Արչիկ-Իսավանի գիծը եւ ապահովեց Ստոյանկինի ձախ թեփ պաշտպանությունը:

Փետրվարի 20-ին թուրքերը սկսեցին ուժեղ ոմբակոծել հայկական դիրքերը: Էրզրումում շուրջ 7000 մահմեդական զինված էր եւ պատրաստ մասնակցելու հայ բնակչության ջարդին:

Առաջին հրաձգային գունդը տատանվեց: Գնդապետ Բեժանբեկովը գունդը հետ է քաշում դեպի քաղաքի պարիսպները: Անդրանիկը հարկադրված մարտի մեջ մտցրեց իր միակ ռեզերվային գունդը: Բեժանբեկովի գունդը շարունակեց նահանջել դեպի փշալարերը: Սակայն հայկական մյուս ուժերը չվհաստվեցին եւ հետ շարտեցին թշնամու գրոհները: Նույն ժամանակ թուրքերը օգնություն ստացան երեք գունդ եւ հրետանի:

«Փետրվարի 20-ի գործողությունները ցույց տվեցին, որ Էրզրումի պաշտպանները կազմակերպվածության, կամքի եւ համարձակության դեպքում կարող էին ոչ միայն կանգնեցնել այլեւ պարտության մատնել թուրքերին»³⁷: Սա-

³⁶ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N705:

³⁷ Հարությունյան Աշ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կոիվները, Ե., 1984, էջ 132:

կայն, գրում է Կուլեբյակինը, «...խանգարում էին զինվորների բարոյական բույությունը եւ քիկունքի կենտրոնից եկող կանխամտածված նահանջելու անկումային տրամադրությունները: Առաջավոր դիրքերի յուրաքանչյուր զինվոր գիտներ, որ Թիֆլիսում վաղուց որոշել էին, որ թուրքերի դեմ պայքարն անհուսալի է, հետեւաբար դիրքերում մնալը ժամանակավոր է... Հայերի հոգեկանը կտրված էր անհուսալիորեն եւ շատ դեպքերում ոչ նրանց մեղրով»³⁸:

Հերոսություն դրսևորեց Թորգոմի ջոկատը եւ փրկեց Ալաջայում վտանգված ջոկատին: Թորգոմն անձամբ էր գրոհի տանում իր ջոկատին, նրա ձին վիրավորվեց երկու, իսկ ինքը՝ երեք անգամ, բայց կարողացավ ջոկատին դուրս բերել շրջապատումից: Բեժանբեկովի դավաճանական անպատասխանատվության պատճառով, սակայն, ջոկատի 170 հոգուց փրկվեց միայն 31-ը:

Թուրքերը Էրզրումի դեմ կենտրոնացրեցին մեկ դիվիզիա՝ 3000 սվին, 12 հրանոթ, 12 գնդացի, մոտ 2500 ոչ կանոնավոր զորք եւ բրդեր: Անդրանիկն ուներ 2000 սվին, 300 հեծյալ, 24 գնդացի, 28 հրանոթ: Իհարկե, այս ուժերով Էրզրումի պայմաններում պարտվելն անթույլատրելի էր:

Բացի դա, օգնության հասան 600 մշեցիներ: Բայց ապարդյուն: Քաղաքում վիճակը ողբալի էր: «Էրզրումեն, Բաբերդեն, Քոլին եւ ամբողջ Կարնոյ դաշտեն,- գրում է ակամատեսը,- երկու տարի է ի վեր քշուած հայ ժողովուրդը քաղաք թափուած է սայլերով, չգիտե, թե ո՞ր պիտի մնայ, ի՞նչ պիտի ըլլայ իր բախտը: Հիվանդանոցները լեցուն էին հին ու նոր վիրավորներով, ոտքեն, ձեռքեն սառած զինուորներով: Ամեն կողմ հայեր են, լացող մայրեր, գունաթափ քոյրեր ու անտեր որբեր: Դրուբինը լուրջ է, զինուորներեն ոմանք գիշերանց իրանց դիրքերեն հեռացած են»³⁹:

Նույն օրը թուրքերն ընդհանուր հարձակման անցան: Բեժանբեկովը պատվիրեց. «Հայտնեցեք զենեռալին՝ թուրք զորքը շարժվում է առաջ: Մեր զորքը թողնում փախչում է: Հարկադրված եմ քաշվել դեպի գյուղ»: Իսկ Անդրանիկը բազմիցս կրկնել է. «Այս քառսը ստեղծողը Թիֆլիզե եղավ... Կարինը թշնամիին յանձնելու միտքը կփոթորկե»:

«Տենդագին, աններդաշնակ ու տարերային շարժում կայ քաղաքին մեջ. ձիեր, սայլեր, կիներ, զինուորներ, քոյրեր, ռազմամթերքով բեռնուած կառքեր, քնդանոթներու փոխադրութիւն, ամեն ինչ խառնիխառն: Աջ ու ձախ կվազեն քոյրը, ոչ մեկը չգիտեր, թե ի՞նչ կընեն, ինչո՞ւ եւ ուր կը վազեն. կը փախչի՞, թե կղիմադրեն... Ազգովին կործանուած անդունդին եզրը կանգնած՝ մխիթարութեան կայան մը կը փնտրենք... Պատկերը զարհուրելի է»⁴⁰: Նույն օրվա գիշե-

³⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 1:

³⁹ Թեղուկ, Ամենուր տարեցոյցը, Ժ-Ժ տարի, 1916-1920թ.թ., էջ 141:

⁴⁰ Ն.տ., էջ 148-149:

րը զինվորները սկսեցին լքել դիրքերն ու հեռանալ: Անդրանիկի փորձերը խուճապի առաջն առնելու, հաջողություն չունեցան: Փետրվարի 26-ի առավոտյան մի խումբ զինվորները բռնեցին Կարսի դարպասների ժամապահներին, կուտակված ամբոխին ու գնացին Հասանկալ: Թուրքերը մի քանի ուղղություններով գրոհեցին: Տեղի մահմեդականները սկսեցին տներից կրակել հայ զինվորների ու հեռացող բնակչության վրա, Անդրանիկը նոր փորձ կատարեց կանգնեցնելու նահանջը, բայց նորից անհաջող:

Թուրքերը լցվեցին քաղաք ու սկսեցին թալանը, ինչը հայկական զորքերին ու փախստականներին հնարավորություն տվեց հեռանալ դեպի Սարիղամիշ, Կարս:

Քաղաքից բնակչությունը հեռանում էր, չնայած Էրզրումն ուներ վեց ամսվա պաշար՝ զինամթերք ու պարեն, եւ Անդրանիկը ծրագրել էր մղելու պաշտպանական տեսական մարտեր. «Այս պատերազմն այլեւս վեց ամսեն ավելի չի տևեր, - ասում էր նա, - բան մը կըլլայ, եւ ընդհանուր զինադադարի ատեն եվրոպացիք կը տեսնեն մեզ Կարմոյ մեջ մեր դրոշակները պատնեշին վրայ»⁴¹: Անդրանիկը բացարձակապես իրավացի էր՝ ցանկացած բանակցության հաջողության հիմքում առաջին հերթին ռազմական հաղթանակն է:

Բայց նրա ցանկությանը վիճակված չէր իրականություն դառնալու: Անդրանիկը միայն կարողացավ մի բուռ զինյալներով «մինչեւ վերջը դիմադրել եւ չթողուլ, որ թուրք զորքը մտնե քաղաք, մինչեւ որ փախստականները բոլորն ալ քաղաքից դուրս գան»⁴²:

Անդրանիկը Էրզրումում կատարվածը դավաճանություն էր համարում, որովհետեւ, ասում էր նա, «Երզնկայե Էրզրում, մինչեւ Վան 12-15 հազար թուրքահայ զինուած ժողովուրդ շատ դիրքերեմք կրցան այդ ճակատները պաշտպանել 3,5 ամիս եւ խոշոր վտանգի ժամանակ դեպի Կովկաս փոխադրել 100.000 գաղթական»⁴³: Իսկ Էրզրումում ռազմական առումով բարվոք վիճակում գտնվող հայերը թշնամուն որեւէ դիմադրություն ցույց չտվեցին:

Անդրանիկը բացառիկ եռանդ ու կազմակերպական ունակություն հանդես բերեց հայոց զորքերում ու քաղաքում կարգուկանոն հաստատելու համար: «Բանվորի կռիվ» թերթը գրում է. «Չորավար Անդրանիկն իր օգնականին հետ գիշեր ու ցերեկ գործին լծուած ճակատը կգորացներ եւ քաղաքին ներքին կեանքը կապահովեր»: Նա հասկանում էր, որ իր տրամադրության տակ եղած քայքայված գորամասերով թշնամու հարձակման առաջն առնելը գրեթե անհնար էր, իսկ Ազգային ժողովն ու Անվտանգության խորհրդի

⁴¹ «Ազգ. հերոս գոր. Անդրանիկը...», էջ 117:

⁴² «Հարազատ պատմություն Տարմոյ», էջ 523:

⁴³ «Ազգ. հերոս գոր. Անդրանիկը...», էջ 187-188:

մախազահ Վ. Փափազյանը չէին կատարում իրենց խոստումը համալրում ուղարկելու վերաբերյալ:

Վեհիքը Անդրանիկին սպառնաց. «Ես ձեզի կառաջարկեմ անմիջապես հեռանալ մեր սահմաններեն, եթե ոչ, օրենքի համաձայն պիտի պատժուիք խստիվ: Արդեն ափ հանուած է մեր բանակի մեծ մասը Բաթումի մեջ, որոնք կը րալեն Կարսի վրայ»⁴⁴:

Անդրանիկը պատասխանեց. ռուսական կառավարությունը Հայաստանին ինքնորոշման իրավունք է տվել եւ երաշխավորել պաշտպանելու հայերի անժխտելի հայրենիքը հանդիսացող Կարսը, Կարինը, Վանը, Բիթլիսը եւ «մնացեալ այն չորս նահանգները, որոնք տակավին կհեծեն ձեր բռնակալութեան տակ... Մենք այստեղ եկած ենք զենքերը ձեռքներիս ինքնորոշելու, թե որո՞ւն է այս հողը՝ ձե՞րը, թե՞ մերը»⁴⁵:

Ժամանակակիցը գրում է. «Չորավար Անդրանիկը յոթ օրուս մեջ անկարելին կարելի ըրած էր, բայց հայ դավադրությունը ամեն բան ձախողանքի կը մատնե, հուսահատեցնելով ամենահզոր էակն իսկ»: Խաբեությունը, անպատասխանատվությունն իրենց սեւ գործն արեցին: Փետրվարի 25-ին ճակատի հրամանատար Բեժանբեկովը հեռագրեց, թե հայկական զորքերը պատրաստ էին հարձակման, իսկ հաջորդ օրը, երբ թուրքերը սկսեցին հարձակուճը, հայերն անմիջապես փախուստի դիմեցին: Ակամատեսը պատմում է. «26-ի առավոտյան ուշ ատեն Անդրանիկ խելահեղ վիճակի մեջ վազեց ճակատ: Մինչ Անդրանիկ այդ վիճակով ճակատ կը պահեր, ներսը, քաղաքին մեջ մեր զինուորական միութեան անդամները, յատկապես Տիգրան Աղամալեանը, դրամի փոխանակութեամբ կգբաղեր... Անդրանիկ միմակ էր, բացարձակապես միմակ ռազմական տեսակետեն»⁴⁶:

Սակայն, հարկավ, «միամտություն էր կարծել, որ Անդրանիկի ներկայությունը բավական էր ամեն ինչ ընել, եթե կռվող տարրը հրաժարվեր կռվելէ»⁴⁷:

Պարտվողական տրամադրությունները բարձրակետի հասան, երբ ստացվեց Տրապիզոնի բանակցությունների մասին լուրը: Անդրանիկը նույնպես հուսահատվեց: «Իմ միակ հույսս երեկվա 41 մշեցի տղաքն են, ուրիշ հույս չունիմ, հուսահատական է մեր վիճակը»:

Այնուամենայնիվ, նա կարողացավ հայրենամկեր ոգի ներշնչել N1 եւ N4 զնդերի զինվորներին, որոնք պաշտպանական դիրքեր զբաղեցրեցին, սակայն պարզվեց, որ հայկական բանակում ոչ մի սարքին թնդանոթ չկար: Նա լու-

⁴⁴ «Ազգ. հերոս գոր. Անդրանիկը...», էջ 107:

⁴⁵ Ն.տ.:

⁴⁶ Ն.տ., էջ 110:

⁴⁷ Ն.տ., էջ 111:

տանքներ թափեց Բեժանքեկովի գլխին, նրան անվանեց դավաճան ու երբ վերջինս արդարացավ, թե «գորքերը սրիկաներ են եւ չեն ուզեր կռվել», նրա երեսին շարտեց. «Սրիկային մեկ դուն ես»⁴⁸:

Թուրքերն Էրզրումի վրա հարձակման տարան երեք անգամ ավել ուժեր. դրան գումարած մահմեդական զինված բնակչությունը⁴⁹: Թորգոմի տվյալներով Էրզրումի վրա հարձակմանը մասնակցում էին թուրքական երկու հետեւակային դիվիզիա եւ քրդական 1500 հոգանոց ջոկատ: Անդրանիկը մինչեւ Էրզրում գնալը մտավախ էր: Նա Ազգային խորհրդում 1918թ. դեկտեմբերի 19-ին հայտարարեց. «Հաշտություն կմքեք, չկնքեք պիտի կոտորեն... Եթե թուրքերը Էրզրումը վերցնեն, 600 թնդանոթը նրանց է մնալու: Սիրտս կայրունի, երբ մտածում եմ»⁵⁰:

1918թ. փետրվարին Նազարբեկյանը գանգատվում էր, որ Կարինում գտնվող առաջին գնդում միայն 500, իսկ չորրորդ գնդում՝ 300 մարդ կար: Ընկած էր կարգապահությունը ոչ միայն զինվորների, այլեւ հրամանատարների շրջանում: Խնուսի 2-րդ գունդը վերջնագիր ներկայացրեց, թե մինչեւ փետրվարի 15-ը անցնելու է Կովկաս, որովհետեւ ուղարկված համալրումներից «ոչ մի մարդ տեղ չի հասել»⁵¹:

Բնականաբար մեծ իրավիճակում թուրքերի անգամ փոքրաթիվ ուժերը հաջողության էին հասնում, ինչը եւ առաջացրեց համընդհանուր խուճապ: Այդ իրողությունը նշվեց նաեւ Ազգային խորհրդի նիստում՝ թուրքական բանակն առաջ է շարժվում «միմիայն նրա համար, որ... մենք զորք չունենք ճակատում: Եթե մենք դիմադրեինք խուճապ չէր լինի»⁵²: Փետրվարի 12-ի նիստում Ռուբենը հայտարարեց. «Այս րոպեին մեր ուժերով թուրքերին հավասար ենք: Հարց է նույնիսկ, թե ով շատ ուժ ունի, մե՞նք, թե՞ նրանք»⁵³:

Իհարկե, խուճապային տրամադրության գլխավոր պատճառը ռուսական բանակի հեռանալն էր: Կովկասյան պարագլուխներն առաջին անգամ կանգնած էին առանց ռուսական ռազմական հզորության թուրքերի հետ չափվելու հրամայականի առաջ եւ ահաբեկվեցին ու շփոթվեցին: Հայերն առավել եւս, որովհետեւ, ինչպես արդեն նշվեց, Անդրկովկասը համախուժ չէր թուրքերի դեմ՝ «Անդրկովկասի թաթարներն առանց երկընտրանքի ծարավ էին թուրքերի գալուն, վրացիները տատանվում էին՝ ընտրություն կատարելով դիվանագիտության եւ պատերազմի միջեւ»: Այս պայմաններում հայերն, իսկպապես, աղետա-

⁴⁸ «Ազգ. հերոս գոր. Անդրանիկը...», էջ 117:

⁴⁹ Баграмян И., նշվ. աշխ., с. 59:

⁵⁰ ՀՀ ԿՀԿՊԿԱ, Հայ Ազգային խորհրդի արձանագրություններ, Թիֆլիս, 1917-1918:

⁵¹ Ն.տ., ք. 147:

⁵² Ն.տ., ք. 149:

⁵³ Ն.տ.:

լի վիճակում հայտնվեցին: Նրանք քաջ գիտեին, որ «հաշտեցում եւ խաղաղություն չի կարող լինել իրենց եւ թուրքերի միջեւ այն ամենից հետո, ինչ տեղի էր ունեցել» իրենց հետ Թուրքիայում, նրանք «գտնվում էին տենդագին գրգռման մեջ իրենց լրիվ միայնակության ու մահացու վտանգի գիտակցումից»⁵⁴:

Որոշ ժամանակ անց, ապրիլի 20-ին Հայ ազգային պատվիրակությունը դիմեց քաղաքակիրթ աշխարհին, որում ասվում էր, թե վերջին երեք տարիներին հայերի բռնագաղթի ու զանգվածային ոչնչացումից հետո եւ օգտվելով Ռուսաստանի կործանումից «թուրքերն ուզում են ոչ միայն նվաճեն օսմանյան Հայաստանը եւ նորից գավթեն Կովկասը, այլեւ ձգտում են նաեւ այն բանին, որպեսզի իրականացնեն իրենց սատանայական պլանը՝ ոչնչացնել հայ ժողովրդին ինչպես Թուրքիայում, այնպես էլ Կովկասում: Որտեղ գնում են թուրքերը հետեւողականորեն մորթում են հայերին», նրանք խաբում են համաշխարհային հասարակայնությանը, թե հայերը ռուսական գրավման շրջանում ոչնչացրել են, խոշտանգել մահմեդականներին»⁵⁵:

Անդրադառնալով թուրքերի մղած գավթողական, հայաջինջ արշավանքին Ֆ. Նանսենը գրում է. «Ուր որ նրանք գալիս են, կազմակերպում են հայերի նոր ցարդեր... թուրքերը հապշտապ առաջ էին շարժվում, թալանում էին ու կոտորում, գնալով ավելի բիրտ ձեւեր էին ընդունում վայրագությունները՝ հայերին ենթարկելով սոսկալի տանջանքների ու սովի: Երկիրը հեղեղված էր հարյուր հազարավոր գաղթականներով: Հացահատիկի ամբողջ բերքը կողոպտված էր կամ ոչնչացված, անշարժ գույքն ավերված, շարժականը՝ խլված: Այնհայտ էր, որ թուրք առաջնորդները մտադրված էին հայ ժողովրդի ցեղասպանությունը շարունակել նաեւ Ռուսահայաստանում»⁵⁶:

«Հայերու ամբողջ ստացուածքը կամ կիրացուեր կառավարութեան եւ կամ կը թալանուեր խուժանին, թե ավազակներու կողմէ: Մշակութային թե նյութեղեն հարստութեան անհաշիվ գանձեր կործանումի դատապարտուեցան եւ ամբողջ ժողովուրդ մը, իր հնավանդ քաղաքակրթութեամբ, ամենէն վայրագ կերպով խաչուեցավ ու նահատակուեցավ»⁵⁷:

Ի դեպ, Էրզրումի ունեցվածքի, մասնավորապես, օսմանյան բանկում եղած գումարների յուրացման մասին նյութեր հրապարակվեցին նաեւ թուրքական մամուլում: «Ջուռհուրիեթի» 1924թ. դեկտեմբերի 19-ի համարում նախկին վալի Թահսինը գրեց, թե ինքը գողություն է կատարել մեղադրանքից խուսափելու համար: «Մինչեւ արքայի հրամանի ստացվելը Էրզրումի հայերն իրենց

⁵⁴ Мелик Каракозов Г., Вступление Германии в Турцию после великих армянских погромов 1895-1897 гг., Т., 1915, с. 7:

⁵⁵ R 14100, Ab. 1200218:

⁵⁶ Նանսեն Ֆ., Խաբված ժողովուրդ, Ե., 2000, էջ 262:

⁵⁷ Թորիկան Ը., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, Բեյրութ, 1976, էջ 29:

բանկարժեք քարերը եւ ոսկին ավանդ էին դրել օսմանյան բանկում: Աքսորից հետո ֆինանսների նախարարությունը բանկից հետ պահանջեց այդ ունեցվածքը՝ վկայակոչելով «Լքված գույքերի մասին» օրենքը: Բանկը հրաժարվեց, սկսվեց տեսական գրագրություն եւ, ի վերջո, ֆինանսների նախարարության տված նյութական երաշխիքների հիման վրա որոշվեց Օտոմանյան բանկին հայերի պահ տրված ողջ ունեցվածքը փոխանցել ֆինանսների նախարարությանը: Իրավասու գեներալ Ջեմալ բեյը կնքված հատուկ փաթեթներում եղած այդ հարստությունը բերեց Պոլիս ու հանձնեց ֆինանսների նախարարությանը՝ վերցնելով մի ստացական, որը դեռ գտնվում է ինձ մոտ, ինչպես նաեւ մի լուսանկար, որ ես պատրաստ եմ հրապարակել»:

Հանրահայտ է նաեւ այն, որ Բ. Դուռը հայերից գավթած ունեցվածքի մի մասը վերածեց դրամի եւ 5.000.000 թուրքական ֆունտ զինադադարից հետո տեղափոխեց Անգլիա: 1923թ. նոյեմբերի 23-ին Փարիզում ստորագրված մի համաձայնագրով նախատեսվում էր այն օգտագործել դաշնակիցների քաղաքացիների Թուրքիայում կորցրած գումարները հատուցելու⁵⁸: Այդ վճարումներն իրականացնելու համար անգամ հանձնաժողով կազմվեց, որին հայ փախստականների կոմիտեն 1925-ին դիմեց խնդրանքով՝ նշված գումարի մի մասը տրամադրել արսորից վերադարձած հայերին ու 100.000 հայ որբերին:

Նշված խնդրի առթիվ Լեւիսիուսը գրեց. «Այդ 5.000.000 թուրքական ֆունտի ճակատագիրն ունի կարեւոր փաստագրական արժեք, որովհետեւ Թահսին բեյի նամակով հաստատվում է թուրքերի կողմից հայերի ունեցվածքի կորուստը ու նաեւ կա խոստովանություն Թուրքիայի հայերի զանգվածային արսորի մասին, ինչն առանց այդ էլ ապացույցի կարիք չունի»⁵⁹:

Վերադառնալով 1918թ.: Ի՞նչ անել. ռազմական խորհրդում կարծիքները բաժանվեցին: Անդրանիկը դեմ էր քաղաքը թողնելուն: Եվ այդ գիշեր հայկական մի ջոկատ շարունակեց համառ դիմադրություն ցույց տալ: Օգնության են հասնում մշեցիները: Անդրանիկը մտածում էր նրանց հետ ամրանալ բերդում եւ մինչեւ վերջին շունչը մարտնչել: Բայց ռազմական խորհրդում նրան համոզում են, որ դա ոչինչ չի տա եւ կխլի մարդկային կյանքեր:

Գիշերը թուրքերը լցվեցին քաղաք: Անդրանիկը քաղաքը թողնելիս ասում է իր նշանավոր մեմախոսությունը. «Ով հայոց լեռնաշխարհի Կարին բերդաքաղաք, մենք այսօր թողնում ենք քեզ... բայց քո ծոցում թողնում ենք բյուրավոր հայ նահատակների շիրիմները... մենք հեռանում ենք: Ես այլեւս չեմ տեսնելու հայոց լեռնաշխարհը: Նրա մի բոտ հողը ես լցնում եմ այս նվիրական մատուկի՝ Խրիմյան Հայրիկի նվիրած թաշկինակի մեջ եւ տանում ինձ հետ: Գիտեմ,

որ մեռնելու եմ պանդխտության մեջ, հայրենակարոտ: Ինձ թաղողները թող այս հողը շաղ տան վրաս, որ հանգիստ հանգչեմ հայրենի հողի մեջ»⁶⁰:

Էրզրումի խայտառակ անկման մեղքը ոչ պետք է բարդել Անդրանիկի վրա եւ ոչ էլ գրել հետեւյալ տողերը. «Ունենալով միայն 3000 հետեակային, 400 հեծյալ եւ ութ թնդանոթ, Անդրանիկը կարողացավ կազմակերպել Էրզրումի պաշտպանությունը՝ դիմակայելով Կարաբեքիրի եռապատիկ զերակշռություն ունեցող զորքերին: Եվ միայն շրջապատման վտանգը ստիպեց քաջ գուրավարին նահանջել գաղթականների երթը դեպի Անդրկովկաս ապահովելուց հետո միայն»⁶¹, քանի որ այս պարբերության ոչ մի միտք ճշմարտությանը չի համապատասխանում:

Ս. Վրացյանն Էրզրումի պարտության համար բոլորին մեղադրում է, բացի իսկական մեղավորից՝ Թիֆլիսից, Անդրկովկասի կառավարողներից: Նա «ամաչում է» ասել, որ հայերը հրաժարվում էին կռվելուց, չէին կռվում, Էրզրումում հայկական սպայական կազմի ու զինվորների մի մասի դավաճանությունը, գլխասպատառ փախուստը նա ներկայացնում է հետույալ կերպ. «Փետրվարի 14-ից Էրզրումը դարձավ թիրքերի զինուորական գործողությունների ամմիջական բիրախ, եւ հայկական առաջապահ մասերը նրանց ճնշման տակ, քայլ առ քայլ կռվով քաշվեցին մինչեւ Իլիջա... Սկսվեցին կատաղի կռիվներ, որոնք հետզհետե տարածվեցին եւ որիչ շրջաններ»⁶²: Սա զորքերը, իսկ պարտության պատճառները շարադրելիս ակնարկում են, առաջին հերթին, Անդրանիկին:

Այդ մեղադրանքներն, անկասկած, բխում էին ոչ թե իրական կյանքի թելադրանքից, այլ Անդրանիկ-ՀՀԴ բարդ փոխհարաբերություններից: Դրանք, իրոք, բարդ, ոչ միանշանակ փոխհարաբերություններ էին: Տպավորությունն այնպիսին է, որ կարծես ՀՀԴ խանդում էր Անդրանիկին, նախկին դաշնակի հանդեպ համագգային սերը դաշնակցությանը հանգիստ չէր տալիս: ՀՀԴ մերթ Անդրանիկին մերժում էր փառաբանելով, մերթ լուրջան մատնելով եւ մերթ էլ վարկաբեկելով:

Բանը հասնում էր ծիծաղաշարժության: Հանդես գալով Անդրանիկին Էրզրում ուղարկելու դեմ, Ա. Ահարոնյանն ասաց, թե Անդրանիկի «կարելիութիւնները փորձում են չեն»:

Պատմագիտական աշխատություններում շատ են անդրադարձները Անդրանիկ-ՀՀԴ հարաբերություններին, դրանց հակոտնյա, թշնամական բնույթին: Հատկապես դաշնակի հեղինակներն այն բացատրում են անձնական, առավելապես Անդրանիկի բնավորության գծերով, նրա ինքնահավանությամբ,

⁵⁸ «Der Orient», 1925, s. 68-69:

⁵⁹ Ն.տ., 1925, s. 70:

⁶⁰ Մնացականյան Ա., Հակոբյան Հ., 674. աշխ., էջ 184:

⁶¹ Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Ե., 1990, էջ 194:

⁶² Վրացյան Ս., 674. աշխ., էջ 92:

հայ կյանքում առաջին դեմք լինելու ձգտմամբ: Եթե նույնիսկ այդպիսի համ-
գամանքներ եղել են, ապա աննշան դեր են խաղացել: Գլխավորը Ռուսաս-
տանի հանդեպ վերաբերմունքի, ավելի ճիշտ, հայերի քաղաքական կողմնո-
րոշման հարցն էր: Ճիշտ է, ՀՀԴ-ի ամբողջությամբ վերցրած ռուսամետ էր,
բայց, օրինակ, ցարական տիրապետության շրջանում ՀՀԴ-ի վերաբերմունքը
Ռուսաստանին կայուն չէր՝ մերթ կողմ էր, մերթ էլ դեմ: Կերենսկու Ռուսաս-
տանի հետ ՀՀԴ-ի հարաբերությունները բարձր մակարդակի վրա էին, իսկ բոլ-
շեիկյան Ռուսաստանի հետ՝ ոչ բարվոք: Անդրանիկի համար Ռուսաստան-
ներ գոյություն չունեին, այլ կար մեկ Ռուսաստան, որին նա անվերապահ հա-
մարում էր հայ ժողովրդի փրկության խարխախ: «Ես ամբողջ հոգով կբացա-
կանչեմ. «Կեցցե ռուս զորքը, կեցցե ռուսական քաղաքականությունը...»:

Եթե ՀՀԴ-ի վեպապահովում էր վերաբերվում Կարմիր բանակի օգնությանը,
ապա Անդրանիկն ամբողջ էությանը ցանկանում էր, որ ռուսական բանակը՝
ցարական, Կերենսկու, թե բոլշեիկյան, լիներ Հայաստանում: Հենց այս մո-
տեցումն էլ նրան հոգեհարազատ էր դարձնում Ս. Շահումյանին:

Նման դիրքորոշում ունեցող գործիչները բնականաբար հակադրվում էին
դաշնակցականներին, որոնց Ս. Կասյանի խոսքերով «սոսկալի անցքերն ան-
գամ եւ դժոխային հետեւանքներն իսկ չկարողացան սթափեցնել... Անգլիա-
կան զինվորական տարազը շնչեցնում է նրանց, դաշնակիցների զենքի հաղ-
թանակը հիվանդոտ գառանցանքի ենթարկում: Նրանք ոչ միայն խելքը կորց-
րած նետվում են անգլիական նվաճողական զորամասերի ոտքերի տակ, այ-
լե իրենց դարձնում են նրա (Անգլիայի) կույր գործիքը»⁶³:

Փետրվարի 26-ին Կարինի կայազորը մարտերով նահանջեց դեպի Հասան
Կալե, ապա Մարիդամիչ, որի ընթացքում հայերը մեծ կորուստներ ունեցան:

Անտեր մնաց Հասան Դալեն,

Անտեր թողեց հայի բալեն...

Շատիլովը գրում է, որ մինչև Կարինը թողնելը հրամայված էր պայթեցնել
բոլոր թնդանոթները, հանել հրանոթների փականները: Հրդեհվեցին ռազմա-
կան բոլոր պահեստները, բացառությամբ սննդամթերքով լեփ- լեցուն մեծ պա-
հեստից, որ գտնվում էր Տրապիզոնի դարպասի մոտ: Չհասցրեցին:

Պատմում են ականատեսները.

Լորդանյան. «Հայկական հավաքական ջոկատի հրամանատար նշա-
նակված Անդրանիկը, մարտի 3-ին եկավ Կարին եւ ընդունեց շրջանի վարչու-
թյան հրամանատարությունը: Բանակի շտաբը դեռ փետրվարի 25-ին Կարի-
նից տեղափոխվել էր Մարիդամիչ: Արտակարգ ոչինչ չկար, որ կամավորա-
կան գնդի ղեկավարը նշանակվել էր նման պաշտոնի: Այդ հեղափոխական

⁶³ Կասյան Ս., ԸԵ, էջ 149-150:

րոտն ժամանակաշրջանում, երբ խանգարված էր բանակային կարգապահու-
թյունը, մարտիկները հյուծվել ու զորացրվել էին, անհրաժեշտ էր օգտագործել
ժողովրդական հերոսին, որն ի գորու էր գորբերին ոգետրել եւ իր հետեւից տա-
նել՝ պայքարը շարունակելու»⁶⁴:

Անդրանիկը գլխավորը համարում էր գորբի մարտական բարձր տրա-
մադրությունն ու զինվորական կարգապահությունը: 1918թ. փետրվարի 12-
ին նա Ալեքսանդրապոլից գրեց գնացքակազմի հրամանատար Միրիմանո-
վին Էջմիածնի կայարանում կարգուկանոն հաստատելու եւ զինվորների շր-
ջանում կարգապահությունը բարձրացնելու անհրաժեշտության մասին:
«Նկատի ունեցեք,- գրում է նա,- հայ զինվորների վատ վարքը ստորացնում
է հենց իրենց եւ սպաների արժանապատվությունը, քանի որ ռազմական ու-
ժը ստեղծվում է թույլերին պաշտպանելու եւ ընդհանուր կարգուկանոն պահ-
պանելու համար»⁶⁵:

Դրա հետ միասին նա հնարավորն անում է գորբի մատակարարման, հան-
դերձավորման եւ զենքով ու զինամթերքով ապահովելու ուղղությամբ:

Կարսում գտնվելիս, փետրվարի 12-ին, Ջինկելիչը հեռագրում է Պ. Բեժան-
րեկովին. «Անմիջապես մեկնել Կարս ընդունելու իր գունդը՝ մարդկանց, ինչ-
պես նաեւ ձիերը, գումակը լավ վիճակում»: Նա մասնավորապես նշում է թամ-
բեի հայթայթման անհրաժեշտությունը, նաեւ հայտնում է. «Գնում ենք հա-
ջող: Կարսից դուրս կգանք 2000 հոգանոց կազմով: Տրամադրությունն ու կար-
գապահությունը գերազանց վիճակում են: Բաղդասարովը դեռ Երեւանում է եւ
հավաքագրել է 1000 մարդ, Մուրադն Իզդիրում է 500 հոգով...

Ալեքսանդրապոլում, Կարսում ժողովուրդն ինքն է պահանջում մտցնելու
մահապատիժ, ինչը ազգային ինքնագիտակցության անվիճելի աճի նշան է:
Շատ ցավալի կլինի, եթե այն չօգտագործվի»⁶⁶:

Անդրանիկն Էրզրում հասավ փետրվարի 18-ին եւ անմիջապես գործի ան-
ցավ: Նա հրամայեց Էրզրումի պարետ Մորեյին անմիջապես հանձնարարու-
թյուն տալ, որպեսզի «չթալեն փամփուշտները եւ արկերը, ինչն արդեն տեղի
էր ունեցել, ընդ որում՝ դեռեւս ոչ մի թշնամի չէր սպանվել, բայց արդեն ծախս-
վել էր 15 արկ եւ 300.000 փամփուշտ: Նույն օրը Մուրադի եւ Մեպուիի հեծյալ-
ները մտցվեցին Մորեյի բրիգադի կազմը»⁶⁷: Նա նաեւ Մարիդամիչից մասնա-
գետներ հրավիրեց ռազմական նշանակության ճանապարհները եւ երկաթգ-
ծերը ձնից մաքրելու համար:

⁶⁴ «Հայրենիք», 1927 դեկտեմբեր, էջ 154:

⁶⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41:

⁶⁶ Ն.տ.:

⁶⁷ Ն.տ.:

Անդրանիկն առաջնային նշանակություն էր տալիս այն բանին, որ հայոց ուժերը մարտեին յուրաքանչյուր թիզ հայկական հողի համար: Նա Խնուսի մարտական ջոկատների հրամանատարին հրամայեց. «իրականացնել հարձակում Քյուլ-Քյուլի շրջանում, այնտեղ հավաքված քրդերին վնդդելու համար... Դա Ձեզ կազատի մշտական վտանգից: Կապ հաստատեք «թռչող փոստով» ռազմաճակատի ուղղությամբ Քոչից մինչև Ախլաթ, դրա համար դուր քավարար թվով հեծելագոր ունեք»⁶⁸:

Առաջին հերթին զինվորական կարգապահության խնդրում հակադրություններ ձևավորվեցին Անդրանիկի եւ սպաների միջև: Նա գրեց. «Ինձ հասած լուրերով դու եւ Էրզրում քաղաքի ուրիշ կազմակերպություններ զինվորներին տալիս եք արձակուրդ եւ համապատասխան տեղեկանք»: Դա անբույլատրելի է, որովհետեւ «հենց որ զինվորը զորամաս մտավ, ամբողջությամբ մտնում է հրամանատարների տրամադրության տակ, այլևս վերջ դրեք զինվորին արձակուրդ տալուն»⁶⁹:

Նույն օրերին նա հրամայում է գնդապետ Բաղդասարյանին՝ Իգդիր-Օրգով-Չինիցկի գծով առաջանալ եւ գրավել Բայազետը, «օգտագործելով Չեր հրամանատարության տակ եղած 1500 եւ Մուրադի 500 զինվորներին: 500 շինել տվեք Մուրադին: Իսկ Չեր գլխավոր խնդիրը Վանի բրիգադի կազմակերպումն է»⁷⁰:

Փետրվարի կեսերին նա հրամանով արգելեց քաղաքից անասնակեր դուրս տանելն ու վաճառելը, պահանջեց եղած անասնակերը պետական գնելով հանձնել բանակային պահեստներին: 2-րդ գնդի հրամանատար Սամարյանին գրեց. «Ազատագրված հայ ժողովրդի անումից թախանձում եմ ամուր կանգնել դիրքերում մինչև թարմ ուժերի գալը եւ կրծքով պաշտպանել մեր ռազմաչարչար հայրենիքը»⁷¹:

Փետրվարի 20-ին Անդրանիկը հայկական զորքերին ուրախ լուր հայտնեց, թե Մեպուհի «կամավորական վաշտն ու հեծյալները անցել են հարձակման ու գրավել Ահադիր գյուղը»: Սակայն շուտով այդ վայրերում նորից քրդեր կուտակվեցին:

Նույն օրը Ջինկեիչը տեղյակ պահեց, որ Բրեստում պայմանագիր է կնքվել եւ Բաթումը, Կարսն ու Արդահանն անցել են թուրքերին: «Անդրկովկասյան սեյմը չի ճանաչում այդ պայմանագիրը...»⁷²:

1918թ. փետրվարի 26-ին Ռազմական խորհուրդը քննարկեց Էրզրումի բուր-

⁶⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41:

⁶⁹ Ն.տ.:

⁷⁰ Ն.տ., գ. 40

⁷¹ ԲՀԱ, 1965, N1:

⁷² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41:

բերին հանձնելու հարցը: Ջինկեիչը գտնում էր, որ զորքերի վիճակը վատառություն չի ներշնչում, թե քաղաքի անվտանգությունն ապահովված չէ: «Վերջին օրերին եղան մի քանի դեպքեր, երբ զորամասերը հրաժարվեցին կատարել առաջադրված խնդիրները: Երկարուդին ոչնչով պաշտպանված չէ, եւ մենք այն չենք կարող պաշտպանել նաեւ Էրզրումում: Սննդամթերքը կքավարարի 10 օր: Դրա համար էլ կարծում եմ, որ բերդը պետք է հանձնել»: «Ես կարծում եմ,- ասաց Մորելը,- մենք պարտավոր ենք մինչև վերջ պայքարել բերդը պաշտպանելու համար: Դրան խանգարում է զինվորների եւ սպաների պարտքի զգացումի բացակայությունը... նախ պետք է թիկունք ուղարկվեն վիրավորները, հիվանդները, գումակը» եւ էվակուացիան սկսել արեւմտյան կողմից:

Գնդապետ Դոլուխանյանը, թե Էրզրումի բերդում չկան «պաշտպանական գծեր, բերդային հրանոթներն պահանջված բարձրության վրա չեն եւ դրանցից ոչ մի օգուտ ակնկալել չի կարելի... Սպաներն, ինչպես հարկն է, չեն աշխատում: Բերդի բոլոր 49 թնդանոթներն անսարք են»:

«Գնդապետ Մորելի հրամանները չեն կատարվում ուրիշների,- ասաց Անդրանիկը,- իսկ իմ հրամանները՝ նրա կողմից: Հրամաններն, ընդհանրապես, չեն կատարվում: Ես չեմ ուզում փախչել քաղաքից: Նախ անհրաժեշտ է Էրզրումը կրակի տալ: Բաղաքում գոնե 2000 զինվոր կա⁷³, ովքեր կարող են մեռնել այնտեղ:

Մի քանի օր առաջ չորս դաշտային թնդանոթ յուրաքանչյուրը 300 ականով ուղարկվել են Կարսի դարբասներ: Յոթ օր առաջ հարցրեցի, թե որ ֆորտում ինչքան ական, թնդանոթ, պարեն, մարդիկ կան, բայց մինչև օրս պատասխան չեմ ստացել: Հայաստանն արդեն կորցրել է մեկ միլիոն մարդ, մեր կանանցից 70.000 նրանց մոտ են ապրում, 60.000 որք ներկայումս թուրքերի մոտ են:

Վաղը եւ մյուս օրը մենք պետք է այստեղ լինենք: Թիկունքում պետք է լինի 300 արկղ փամփուշտ: Ինձ թվում է երեք օրից իրավիճակը փոխվելու է: Դարբասների հետեւը պետք է դրվի շղթա: Բոլոր թնդանոթները պետք է կրակ բացեն: Գումակը նույնպես պիտի մնա... թե չէ բոլորն այստեղից փախչելու են»⁷⁴:

Հաջորդ օրը Անդրանիկը հայտնեց, որ Էրզրումը թողնում են: «Ներկա պահին ես Հասան Կալեում եմ... նահանջել առանց խուճապի. կարգով, հետներդ վերցրեք ռազմամթերք: Տեղյակ պահեք Ախլաթի ջոկատին: Ոչնչացրեք պահեստները»⁷⁴:

Եվ, իսկապես, փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը քաղաքից սկսեցին հեռանալ նախ բնակիչները, ապա՝ զորքը: Նահանջը պաշտպանում էին Մուրադի եւ Ս. Ճեպեճյանի գնդերը:

⁷³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41:

⁷⁴ Ն.տ.:

Երբ թուրքական զորքն ու խուժանն իմացան հայերի նահանջի մասին, հարձակման անցան Խարբերդի եւ Տրապիզոնի դարպասների վրա: Թշնամին մեծաթիվ էր, լավ զինված, սակայն հայ զինվորները կարողացան ապահովել նահանջողների անվտանգությունը: Թուրք հարձակվողներին միացավ քաղաքի մահմեդական բնակչությունը, որը սկսեց խուժել հայկական զորամասերի քիկույնն ու հարվածել նրանց: Մի քանի ժամ շարունակ գնացին արյունահեղ մարտեր: Վիճակը դառնում էր անհուսալի, երբ հետեւից լավեց Անդրանիկի հորդորը՝ կրակ տեղալու հարձակվողների վրա: Թշնամին ընկրկեց, ինչը Անդրանիկին հնարավորություն տվեց ժողովրդին քաղաքից դուրս հանել⁷⁵:

Մի ուրիշ ակնառտես՝ Ա. Մարմարյանը պատմում է. «Անդրանիկը մի քանի րոպեում հասավ Իլիջայի եւ Կարինի պատերի արանքում գտնվող Հես գյուղը: Մեր բանակի կենտրոնը, որին համարում էինք ամենաուժեղը, նահանջեց առանց մի գնդակ արձակելու: Բանակի ձախ թելը՝ Թորգոմը, չկար, իսկ աջ թելը՝ Սեպուհը, նահանջում էր մարտերով: Նա չէր կարող շնահանջել, որովհետեւ դեպի կենտրոն շարժվող թուրքերը կարող էին Սեպուհին լրիվ կտրել: Թորգոմն արդեն կտրված էր: Ամբողջական ռազմաճակատ այլևս գոյություն չունեք»:

Հարցին, թե այս հայ զինվորների վրա կարելի^o է հույս դնել, Անդրանիկը պատասխանեց. «Իմ հույսը մշեցի այն 41 տղաներն են, ուրիշ հույս չկա: Երևես ընկնեմ Կարինի պատերի տակ, բոլորին պատմեք, որ ես զոհվեցի միայնակության մեջ, առանց որեւէ օգնություն ստանալու»:

Անդրանիկը համձնարարեց ս. Նշան բերդի կայազորին անընդմեջ ուժեղացնել թշնամուն: Նա փախչող զինվորների մի մասին հետ դարձրեց ու դնելով դիրքերի մեջ հարկադրեց կրակ բանալ թուրքերի վրա: Թշնամին շփոթվեց: Անդրանիկը փորձեց ձախ թելում Մուրադի ուժերով հակահարձակում կազմակերպել, բայց միայն մի քանի մարդ մնաց, մյուսները փախան: Նա փորձեց անձամբ հակազորի տանել եւ նրա հետեւից գնացին: Անդրանիկն ընդհուպ մոտեցավ թուրքական դիրքերին ու ընկավ խաչածեւ կրակի տակ: Նա հարկադրված հետ վերադարձավ եւ սկսեց նորից ու նորից հորդորել զինվորներին՝ կռվել թշնամու դեմ: Բայց ապարդյուն⁷⁶:

Բոնապարտյանը 1918թ. մայիսի 17-ին գրում է Անդրանիկին. «Այսօր գնացի ծանոթանալու գնդին: Բոլորը ուզում են միայն քեզ... զորքերը կարիքների չունեն... Ոչ ոք Ձեր հեռանալը չի ընդունում... Այսօր Սիբիրից եկան արեւմտահայ 150 ռազմագերիներ եւ երեք ռուս զերազանց սպաներ... Երեկոյան Ռուստովից եկավ մոտ 600 կամավոր, այստեղ արդեն կա 2000 մարդ»: Թիֆլիսում

«թագավորում է խառնաշփոթ, ոչ ոք չի զբաղվում եկող զորքերով... Հրացաններ ճարեք, որովհետեւ դրանց կարիքը մեծ է»⁷⁷:

Հետագայում անդրադառնալով Երզրումին Անդրանիկը գրում է. «Մարտի 2-ին մեկնեցի Երզրում, բայց դժբախտաբար, զորամասերում արդեն թագավորում էր հուսալքության ոգին: Դրան գումարած այն, որ գեներալ Օղիչելիձեն վերցրել էր Երզրումի բերդի բոլոր ծանր թնդանոթների բանալիները»⁷⁸: Նա բողոքում էր, որ Երզրումում իր գտնված ութ օրերին որեւէ «հնարավորություն չի ունեցել ձեռնարկելու որեւէ աշխատանք ռազմական կամ վարչական բնույթի»: Դա էլ հանդիսացավ Երզրումի ողբերգության պատճառը⁷⁹:

Սարիղամիշի եւ Կարսի անկումից հետո Հայկական ազգային խորհուրդն առաջարկում է Անդրանիկին ձեւավորելու առանձին գունդ: Նա այդ հանձնարարությունը հաջողությամբ կատարում է. ապրիլի 10-ին արեւմտահայ առանձին հարվածային գունդը պատրաստ էր եւ հաջող մարտեր մղեց Շիշ-Թափայում, Գյուլիբուլաղում, Խոզքուշում, Ծիզիվարում, գրավեց Կարահիսարը:

Ապրիլի 4-ի նամակով Անդրանիկը Թիֆլիսի հայ գործիչներին խնդրում է հարվածային ջոկատի համար ուղարկել 60 ենթասպա, 26 գնդացորդ, 8 հեռախոսավար: Նա նաեւ դժգոհում էր, որ արդեն մի քանի օր Ալեքսպոլում էր, բայց իր ոչ մի խնդրանք չի բավարարվել: «Անգամ հացը ձեռք բերեցինք մեր հաշվին: Այստեղ քառս է»⁸⁰:

2. ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ ՀԵՏՈ

Փետրվարի 25-ին Մ. Վեհիբը հեռագրով Լեւոնիսկուց պահանջում է «սննդամթերք ժամանակում դատարկել» Բաթումի, Կարսի եւ Արդահանի շրջանները: Դրան հետեւում է մի ուրիշ հեռագիր, թե «Երզրումում եւ քաղաքի շրջակայքում տեղի են ունեցել անհաշիվ զազանություններ հայերի կողմից...»:

Մեյմի փետրվարի 26-ի նիստում Անդրկովկասի բանակի ընդհանուր հրամանատար Օղիչելիձեն հայտարարեց, որ «վերջին երկու-երեք օրուայ ընթացքին Տրապիզոնի շրջանում քիւրքերի վերաբերմունքը դեպի մեզ փոխված է: Մեր զորքերը բողբել էին ռազմամթերքի եւ պարենի ահազին պաշար», հակառակ նախապես կայացած համաձայնության, թուրքերը տիրանում են այդ ամենին:

Վրաց գեներալը պարզապես «մոռանում էր» ասել, որ «մեր զորքերը» այդ ամենը բողբել էին իր հրամանով, թե իբր հաշտության պայմանագիր կնքելուց

⁷⁵ Քեչեան Ա., Կարմիր դրոպաներ հերոսներու կեանքեն, հ. Բ, 1918-1921, Բոլխարեստ, 1940, էջ 24-27

⁷⁶ Մարմարեան Ա., նշվ. աշխ., էջ 366-369:

⁷⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 36:

⁷⁸ Ն.տ., ց. 2, գ. 11:

⁷⁹ Ն.տ.:

⁸⁰ Ն.տ., ց. 1, գ. 36:

հետո հետ ստանալու պայմանով: Նա այդպես վարվեց նաև Երզնկայում, Էրզրումում:

Իսկ թուրքերը շտապում էին, նրանք Միջագետքում մեծ տարածքներ էին կորցրել եւ ձգտում էին օգտագործել Ռուսաստանի խառնակ վիճակը գրավելու նրա կովկասյան նահանգները: Ընդամենը երկու ամիս պահանջվեց, որ նրանք տիրանային Արեւմտյան Հայաստանին եւ դուրս գային 1914թ. սահմանը:

Նրանք հարձակումը ծավալեցին ռազմաճակատի ամբողջ երկայնքով եւ միայն տեղ-տեղ էին դիմադրության հանդիպում: Վանում հայերը թուրքերին հերոսական դիմադրություն ցույց տվեցին մինչև ամառ եւ ապա անցան Պարսկաստան:

Էրզրումի անկումը ողբերգություն էր, բայց նաև դաս: Կորպուսի հրամանատարությունը սկսեց վերախմբավորել ուժերը, դրանք կենտրոնացնել կարևորագույն հանգույցներում: Մասնավորապես մեծ ուժեր կենտրոնացվեցին Երեւանի ուղղությամբ: Մարտ ամսին Սիլիկյանի հրամանատարության ներքո ստեղծվեց երեւանյան խմբավորումը: Խմբավորման մեջ մտնում էին 6-րդ հրաձգային գունդը (Վաղարշապատ), պարտիզանական երկու գնդերը, 2-րդ հեծյալ գունդը (Քանաքեռ), 5-րդ գունդը (Ղուրդուղուլի), Չեյքունի հեծյալ գունդը, Վանի առաջին եւ երկրորդ գնդերը: Նաև դաշտային երեք ռադիոկայան, երեք օդանավ, 24 հրանոթ եւ այլն: Այսինքն՝ Երեւանը պաշտպանված էր հուսալի:

Ինչ վերաբերում է Սարիղամիշին, ընդհակառակը, այն սկզբում շատ վատ էր պաշտպանված: Նազարբեկյանը գրում է, թե թուրքերը կամ այդ մասին չգիտեին եւ կամ այնքան թույլ էին, որ անգոր էին հարձակումը շարունակել: Հավանականը երկրորդն էր: Մարտի սկզբին վիճակն արմատապես փոխվեց: Սարիղամիշ-Կարս ուղղությամբ կենտրոնացվեց ութ գունդ, 28 հրանոթ, երեք կամավորական ջոկատ, սպայական ջոկատ եւ այլն: Միայն վեցը հետեւակային գնդերում կար 18.300 սվին: Թուրքերն անգամ դրա կեսը չունեին: Բավարար ուժեր էին կենտրոնացված նաև Կարսում եւ Ալեքսանդրապոլում: Առաջինում շուրջ չորս գունդ, բերդային եւ դաշտային հրանոթներ, օդանավեր: Ալեքսանդրապոլում՝ երկու գունդ, հեծյալ էսկադրիոն, թնդանոթներ:

Այսինքն՝ այդ պահին հայերն ունեին բավարար ռազմական ուժեր թշնամու դեմ կռվելու համար:

Վկայում է ինքը՝ Նազարբեկյանը. «Ձորամասեր կազմավորվել էին զգալի քանակությամբ եւ, չնայած դասալքության փաստերին, մեր ուժերը քանակով, անշուշտ, գերազանցում էին թուրքերին՝ նրանց հարձակման ժամանակ: Եվ այդ ուժերը միանգամայն բավական էին, որպեսզի ոչ միայն ետ մղվեք թուրքերի սկզբնական հարձակումը, այլև անգամ հաջողություն ունենայինք»⁸¹:

⁸¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45:

Մարտի 15-ին Թիֆլիսը պաշտոնապես հրահանգեց, որ Մակուից մինչև Օլբի սահմանը պաշտպանելու էր հայկական, իսկ Օլբիից Բարումի՝ վրացական կորպուսները: Էրզրումի անփառունակ անկումից հետո երկար ժամանակ հայերը փոքր ու մեծ խմբերով այնտեղից հեռանում էին եւ նրանց զգալի մասը գնում էր Սարիղամիշ: Մարտի 14-ին արեւելք շարժվող գործն ու փախստականները հասան 1914թ. սահմանին:

Սարիղամիշ-Խնուս-Ղարաքիլիսա-Ալաշկերտ գիծը հանդիսանում էր պաշտպանության առաջին, իսկ Երեւանը, Կարսը եւ Ալեքսանդրապոլը՝ երկրորդ գիծը:

Չնայած կրած ահավոր հարվածներին հայ ժողովուրդը «հայկական կորպուս կազմավորելու գործում դրսևորեց գարնանալի կենսունակություն ու եռանդ, կազմակերպչական տաղանդ ու հնարամտություն»⁸²: Սակայն այդ ջանքերը ի չիք դարձան, որովհետեւ կորպուսի հրամանատարությունը ի գորու չեղավ ճիշտ կողմնորոշվել, ռազմավարական ճկունություն հանդես բերել, թշնամու հարվածի գլխավոր ուղղությունները ճշտել, մարտական ուժի խմբավորումներ ձեւավորել, բացակայում էր հայ-վրացական գործերի համագործակցությունը:

Ժամանակ կար ռազմաճակատային շրջանները բեռնաբափելու գաղթականներից եւ նախապատրաստված դիմավորելու թշնամուն, չնայած թուրքական եւ քրդական հրոսակախմբերը օր չէր անցնում, որ որեւէ դիվերսիոն գործողություն չկատարեին:

Կարսի մարզի կոմիսարը մարտի 9-ին տեղեկագրեց. «Թուրքերի եւ քրդերի շարժումը Կարսի մարզում ընդունել է ռազմական խոշոր գործողությունների բնույթ: Մահմեդական ջոկատները շրջապատել են Մերդենեկն ու Արդահանը եւ այնտեղ մարտեր են գնում: Հեռագրային կապը Կարսի, Օլբիի եւ Արդահանի միջև կտրված է... Կարսի մարզում պետք է հայտարարել ռազմական դրություն եւ ամբողջ իշխանությունը կենտրոնացնել ռազմական իշխանությունների ձեռքում»⁸³:

Էրզրումը թողնելուց հետո Հասանփաշյանի, Չինկելիչի, Շնեուրի, Թորգոմի հրամանատարության տակ եղած գորամասերից կազմավորվեց Սարիղամիշի ջոկատը Մորելի հրամանատարությամբ: Թորգոմի եւ Ս. Մուրադի կամավորները Կարակուրգանի եւ Բաշգյուղի տակ թուրքերին համառ դիմադրություն ցույց տվեցին:

Սարիղամիշում կենտրոնացվեցին հայկական չորս գունդ, ինչպես նաև Դալի Ղազարի, Մեպուհի եւ Մուրադի ջոկատները: Սարիղամիշի պաշտպանու-

⁸² Հովհաննիսյան Ա., 6շվ. աշխ., էջ 141:

⁸³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 1:

բյուրնը հանձնարարված էր գեներալ Արեշյանին: Այստեղ էին նաև հատուկ նշանակության երկրորդ բրիգադը. Երզնկայի ու Էրզրումի գնդերը, հրետանային երեք մարտկոցներ, հեծելազորային երկու գունդ, մի գրահագնացք, ռուս սպանների չոկատը գնդապետ Եփրեմովի հրամանատարությամբ:

Սակայն նույն վիճակն էր, ինչ Էրզրումում: Մարտական ուժեր, զենք, ռազմամթերք բավարար քանակությամբ կային, բայց չկար հայրենասեր, պատասխանատվություն ու նվիրում ունեցող հրամանատարություն:

Պատմում է Ս. Վրացյանը, որը 1918թ. գարնանը որպես Ազգային խորհրդի ներկայացուցիչ գտնվում էր Սարիղամիշում. «Մի օր էլ ըմբոստացավ եւ մերժեց ճակատ երթալ Սարիղամիշում գտնուող 101-րդ ձիավոր հարիւրեակը: Արեշեանի բոլոր ջանքերը կարգի բերելու՝ անցան անօգուտ... Եթե այս դրութիւնը շարունակուեր, կարճ ժամանակամիջոցում ռազմաճակատը փուլ կը գար... Երեսաց Դրոն, թե եկել է Երեսանից զենք եւ ռազմամթերք հայթայթելու Արարատեան դաշտի զորամասերի համար: Կարսից ստացել եւ ուղարկել է որոշ քանակութեան փամփուշտ եւ հրացաններ ու գնդացիքներ: Հիմա ուզում է Սարիղամիշի պահեստներից զենք ու փամփուշտ ուղարկել»: Դրոյին խնդրեցին որոշ ժամանակ մնալ Սարիղամիշի ճակատում: Նա համաձայնվեց եւ կարողացավ հաղթահարել 101-րդ հարյուրյակի համառությունը, ինչը «ցնցող տպավորություն գործեց» ռազմաճակատի զորամասերի վրա⁸⁴:

«Նկատելի էր յուսալքում զինուորներու շարքերուն մեջ,- պատմում է Վ. Փափազյանը,- Ոգիի ու կորովի անկում նահանջող զորամասերու մեջ: Արեշեանը անճրկած էր եւ յուսահատած: Ոչ մեկ հավատք ուներ մեր զինուորներուն վրայ. կրավորական դիրք բռնած էր եւ Սարիղամիշեն նահանջի կողմնակից էր: Դասալքութեան դեպքեր նկատուեցան: Նոյնիսկ ճակատ դրկուելիք վաշտերեն մեկը մերժեց տեղեն շարժուիլ՝ ապստամբած էր»⁸⁵:

Ս. Վրացյանը Սարիղամիշում տիրող վիճակը ներկայացնում է հետևյալ կերպ. «Սարիղամիշը գտանք քառասյին վիճակի մեջ: Զաղաքը դատարկվել էր: Բնակիչները թողած տուն ու տեղ հեռացել էին: Մնացել էին կասկածելի մարդիկ, որոնք գիշեր ու ցերեկ թալանով էին զբաղված: Զինվորական պահեստները մնացել էին անպաշտպան, անհաշիվ հարստութիւն էր ամբարված՝ զենք ու ռազմամթերք, զինվորական եւ քաղաքացիական հագուստ, երկրագործական գործիքներ եւ մեքենաներ, խճուղիների եւ կամուրջների շինութեան մեքենաներ, անսպառ դեղորայք, ալիւր, շաքար՝ տասնեակ միլիոնների արժեքով հարստութիւն: Ռուս բանակը քել ու հեռացել էր խուճանացած: Տեր չէր մնացել...»:

⁸⁴ «Ասպարեզ», 03.04.1956:

⁸⁵ Փափազեան Վ., նշվ. աշխ., էջ 468:

Վրացյանը անդրադառնում է նաև Արեշյանի ողորմելի կերպարին: «Սրտի հիվանդութիւն էլ ուներ, ոճանք ասում էին՝ հիվանդութիւն էր ձեւացնում, եւ ծանր վայրկեաններին կորցնում էր գլուխը: Նրան օգնելու կոչված ճակատի հրամանատարը՝ գնդապետ Բեյ-Մամիկոնեանը նույնպես ցավագար ու վախկոտ մեկն էր... շրջում խուճապ էր եւ ոչ մեկ վատախօսիւն չէր ներշնչում իրեն ներակայ զինվորներին ու սպաներին... Որտեղի՞ց էին հավարված այս միջակութիւնները... Ամեն օր Սարիղամիշ էին թափվում փախստականներ պատերազմի վայրերից, որոնց անհրաժեշտ էր տեղավորել, կերակրել եւ երկարուղիով ուղարկել դեպի հիւսիս»⁸⁶:

Մարտի 5-ին սեյմը, բացառությամբ ադրբեջանցի ներկայացուցիչների, որոշեց վճռական միջոցների դիմել անիշխանության դեմ պայքարելու համար, սակայն դա հնարավոր չեղավ, որովհետև բացի հայերից, դրանում ոչ ոք չահագրգռված չէր:

Մարտի 23-ից ապրիլի 4-ը թուրքերը մի շարք հարձակումներ գործեցին մերձակա բնակավայրերի վրա ձգտելով շրջապատել Սարիղամիշը: «Գեներալ Արեշովը որեւէ կտրուկ միջոցի չդիմեց թուրքերի հարձակումները հետ մղելու համար, նա հենց սկզբից տրամադրված էր նահանջելու ու Նազարբեկյանին ու մյուսներին ապացուցում էր, որ ուրիշ ելք չկա»⁸⁷: Սակայն վերջինս Արեշովի տրամադրությունից որեւէ կազմակերպչական եզրակացության չհանգեց եւ թույլ տվեց, որ այդ ողորմելի վախկոտը պարտավորական տրամադրությունով շարունակի «ղեկավարել» Սարիղամիշի պաշտպանությունը: Զաղաքը փրկելու Մորելի ջանքերը որեւէ արդյունք տալ չէին կարող: Իսկ Արեշյանը հիվանդ ձեւացավ եւ հրամանատարությունը հանձնեց Բեյ-Մամիկոնյանին, որը նույնպես ահաբեկված էր: Նազարբեկյանը շարունակում էր զարմանալ իր ստորադասների վարքագծի վրա: «...Ամենից առաջ,- գրում է նա,- Արեշովի հիվանդության մասին ինձ ոչինչ հայտնի չէր, եւ վերջապես, նա գիտակցությունն այնքան չէր կորցրել, որ չկարողանար տալ հետագա կարգադրությունները... Սարիղամիշից նահանջելու ոչ մի հարգելի պատճառ չկար եւ այդքան արագ այն դատարկելու հիմքեր չկային: Թուրքական փոքրաթիվ ուժերը, որոնք իբր պիտի շրջանցեին Սարիղամիշը, լուրջ սպառնալիք չէին կարող ստեղծել»⁸⁸: Դավաճանությամբ, վախկոտությամբ, շահամոլությամբ Էրզրումը կործանած ռեցիդիվները ոչ միայն ոչնչացված չէին, այլև եղած բարենպաստ պայմաններում արագ զարգանում եւ տարածվում էին: Պարզվեց, որ Արեշյանը մինչև մեկնելը Թիֆլիս, արդեն հրամայել էր Սարիղամիշից նահանջել, ընդ որում՝ այդ դասալիքը Թիֆլիս էր մեկնում Նազարբեկյանի անձ-

⁸⁶ «Դրո» Ե., 1991, էջ 308-309:

⁸⁷ Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 143:

⁸⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45:

նական վագոնով, որով տեղափոխեց նաև իր ավարը: Ոչ որ այդպես էլ նրանից հաշիվ չպահանջեց:

Բեյ-Մամիկոնյանը չկարողացավ կամ չուզեց գնալ հակահարձակողական գործողությունների եւ հրամայեց նահանջել առաջացնելով թուրքերի զարմանքը: Միայն այդ ժամանակ նա պաշտոնանկ արվեց եւ փոխարենը նշանակվեց գեներալ Տեր-Հակոբյանը: Մարտերը գնում էին փոփոխական հաջողություններով: Տեր-Հակոբյանը նույնպես ձեռքից բաց թողեց հակահարձակման հնարավորությունը:

Ռազմաճակատի մերկացումն ու հայոց դասալքությունը ժամանակակիցներից մեկը նկարագրում է հետեւյալ կերպ. «1918թ. մարտին Կարինեն նահանջելով հասած էինք Սարիղամիշ: Ճակատի ընդհանուր հրամանատարն էր գորավար Արեշեան, թույլ ու անջիղ մեկը: Դասալիքները օրեօր կը շատանային: Հակառակ Մուրատի եւ Սեպուհի կողմի միջամտութեան անկարելի էր գործասերու ռազմական ոգին բարձրացնել եւ կարգուկանոն մտցնել: Կանոնավոր բանակը կը դառնար անկանոն, անկանոնը կը դառնար կանոնավոր: Օր մը շուրջ 10-15 հոգի բերին մեր գորանոցը: Յանկարծ Մուրատ եւ Սեպուհ ատրճանակները քաշած դուրս խոյացան... Չըլլայ, քե սպանեն: Դասալիքներ էին: Սեպուհ սկսավ կրակել ճիշդ իրենց երկու ոտքերուն մեջտեղը, գետնին... Շարք-շարք կազնեցուցին եւ հրամայեցին անմիջապես միանալ իրենց գործասերուն: Ռուս գործասերու «Դեպի տուն» նշանաբանը պարարտ գետին էր գտած: Գերբնական ճիգեր էին պետք կասեցնելու համար դեպի տուն նահանջը»:

Բացարձակապես ակնհայտ էր, որ հայությունը, մասնավորապես արեւմտահայությունն, ահաբեկված էր: Տիրում էր ընդհանուր վախ, խուճապ: Չավրիւնը գրում է. «Որտեղ որ թուրքերը երեսում էին, հայերը ամեն ինչ քում ու փախչում էին իրենց կյանքը փրկելու համար... Այժմ ավելի քան 600.000 հայ փախստական անպատասպար թաքնված են լեռներում եւ անտառներում... Հայերի սպանությունն ու թալանը սարսափելի ծավալներ ստացան եւ Կովկասյան Հայաստանի մեր ազգակիցներին սպառնում է լրիվ բնաջնջման նույն բախտը, ինչը տեղի ունեցավ Թուրքիայում»:

«Ռազմաճակատի այս կենտրոնական մասում գորքերի շարքերում որոշ աշխուժություն կար, - գրում է Հ. Բաղրամյանը: - Շատերը հավատացած էին, որ պաշտպանական մարտերով հնարավոր էր անբացնել Սողանլուի լեռնանցքը եւ թույլ չտալ թուրքերին անցնելու Կարս»⁸⁹:

Սարիղամիշի համար մարտերը տեւեցին երկու շաբաթ, թուրքերին հաջողվեց ապրիլի 5-ին գրավել քաղաքը:

⁸⁹ Баграмян И., նշվ. աշխ., ս. 61:

Հայկական զորքերը համառ մարտերով նահանջում էին դեպի Կարս: Անդրկովկասի պարագլուխները միայն այդ ժամանակ հասկացան, թե թուրքերի հետագա առաջխաղացումն ինչպիսի ծանր հետեւանքներ է ունենալու եւ դիմեցին Ռուսաստանի բանվորներին, գյուղացիներին եւ զինվորներին, հացով, զենքով եւ մարդկանցով օգնելու խնդրանքով⁹⁰:

Ապրիլի 7-ին հանդես գալով Ալեքսանդր խորհրդակցությունում Հայոց ազգային խորհրդի անդամ Ս. Մամիկոնյանն ասաց. «Էրզրումի եւ Սարիղամիշի անկումը գորքի մեղքը չէ, մենք չնպաստեցինք դրանց պաշտպանության գործին: Սարիղամիշի նահանջն էլ հրամանատարության կարգադրության հետեւանք էր»⁹¹:

Անդրանիկը Սարիղամիշից Անվտանգության խորհրդին, Հայոց ազգային խորհրդին եւ դաշնակիցների ներկայացուցիչներին հեռագրեց. «Շրջապատված լինելով դավաճաններով հրաժարվում են Հայաստանի երկրապահ գործասերի հրամանատարությունից»⁹²:

Նա նամակ է գրում նաև Նազարբեկյանին, որ հրաժարվում է այլևս ռազմական գործողություններին մասնակցելուց եւ ստացած վերքը բուժելու համար մեկնում է Ալեքսանդրապոլ, ապա Թիֆլիս: Անվտանգության խորհուրդը քննարկում է նրա խնդրանքը եւ մարտի 20-ին որոշում է Անդրանիկին առաջարկել ստանձնելու մի ուրիշ գործասի հրամանատարություն, բայց Ազգային խորհուրդը մերժում է այդ որոշումը: Նազարբեկյանը գրում է. «Անոնք կընեն այն, ինչ որ կը մտադրեն: Հայրենիքի մասին մտահոգուող չկայ: Գիտեմ, թե ինչ ահավոր խաղեր խաղացան եւ կը խաղան մեր ամենն սիրելի ազգային հերոս գորավար Անդրանիկի գլխուն: Միակ անձն է, որ պիտի կարողանայ փրկել հայ ժողովուրդն իր ներկայ ահավոր վիճակեն, եթե խճբով մը իր հակառակուսիները դադարեցնեն անոր դեմ... Հպարտ եմ Անդրանիկով»⁹³:

Ռուսաստանում հայ գերի զինվորներից կազմակերպված հայկական կամավորական վաշտի հետ Հայաստան եկած պորուչիկ Կալմակովը գրում է, որ Թիֆլիսում իրենք հանդիպեցին Անդրանիկին՝ «հիվանդ այն բոլոր խարդախություններից, որով նրան՝ ազնվաբարո, դյուրահավատ, մեծ մարդուն, խճնել էին մանր, ժողովրդի տառապանքներին խորթ տարրերը... Նրա անունը փառաբանում էին նույնիսկ մեր անդրբայկալյան կոզակները, այնտեղ, Կովկասից հեռու, Հեռավոր Սիբիրում: Դեպի նա էինք մենք ձգտում: Նրան, տառապած դեմքով սպիտակահեր գեներալին, որ պառկած էր անկողնում»⁹⁴:

⁹⁰ “Материалы стратегической разведки РСФСР” М., 1921, с. 187:

⁹¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21:

⁹² Մնացականյան Ա., Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 184:

⁹³ «Ազգային հերոս գոր. Անդրանիկ...», էջ 182-183:

⁹⁴ “Наше время”, (Баку) 1919, N34:

Անդրանիկի հրաժարականից հետո արեւմտահայերի դիվիզիան Նազար-բեկյանի հրամանով ցրվեց մյուս զորամասերի մեջ:

Անդրանիկը հայտնեց իր մտադրությունը. «Ես տասը հոգի հետս առած Գարսապաղի եւ Չանգեզուրի լեռները պիտի քաշուիմ»: Լսելով զորավարի այդ մտադրության մասին արեւմտահայերը 3000 մարդ դիմեց նրան նոր գործնասում ծառայելու խնդրանքով: Անդրանիկը նրանցից ընտրեց 1000 հոգու եւ պատրաստակամություն հայտնեց կատարելու Նազարբեկյանի բոլոր հրամանները:

Անդրանիկը Ալեքսանդրապոլ է ուղարկում Ա. Թերզիբաշյանին եւ Ժ. Սիր-գախանյանին Նազարբեկյանի հետ «նոր խումբ» կազմակերպելու հարցով բանակցելու: Նազարբեկյանը «խումբ» կազմելը մերժում է, թե խումբը կարող է կռվել խմբի դեմ, իսկ մեր դեմ կանգնած է «պետություն եւ բանակ»: Ինչ վերաբերում է Անդրանիկին, ապա նա խմբապետ չէ: «Անդրանիկն ունի ձիորբեր, որոնց շարքում քաջությունը վերջինը չէ, կռվում նա ունի հազվագյուտ հնարամտություն եւ պատրաստակամություն, որ շատ զորավարներ չունեն...»:

Այդ ընթացքում դրությունը ռազմաճակատում ավելի ու ավելի էր ծանրանում: Սարիղամիշի ճակատում թուրքական զորքերի առաջխաղացման ընթացքում Արդահանի եւ Օլթիի մահմեդականները թուրք սպաների հրամանատարությանը կտրեցին հայ բնակչության նահանջի ճանապարհը եւ ... գլխովին կոտորեցին, բացառությամբ 1000 երեխաների ու կանանց, որոնց ջարդելով, բռնաբարելով, պղծելով, Արդահանի մերձակայքում բաց թողեցին գնալու հարեւան Ախալքալաքի գավառ...:

Իսկ Կարսի ու Կաղզվանի գավառների հայերը մեծ մասամբ հասցրեցին փախչել, տեղում թողնելով իրենց ողջ ունեցվածքը⁹⁵:

Արդահանի կոմիտեի նախագահ Սալարիժեն եւ կոմիսար Շազյանովը հեռագրեցին Թիֆլիս. «Սարգի բազմահազար քրիստոնյա ազգաբնակչության ներկայացուցիչները լիազորել են մեզ խնդրելու, որպեսզի մամուլի միջոցով լայնորեն ներկայացվի իրենց ծայրահեղ վտանգավոր վիճակը: Նրանք դիմում են ազգային մամուլին, որովհետեւ երկու անգամ վճռել էին մարզի ամբողջ բնակչությանը տեղափոխել եւ այդ մասին մի քանի անգամ տեղեկացրել են երկրամասի բարձրագույն իշխանություններին, խնդրելով որեւէ պաշտպանություն, բայց ապարդյուն: Բնակչությունն ահաբեկված է: Հաղորդակցության միջոցները կտրված են: Երեք շաբաթ է, որ փոստը չի գործում, ինչն ավելի է ուժեղացնում խուճապը: Բնակավայրերը մշտապես ենթարկվում են թուրքերի հարձակումներին... Գյուղերն ավերվում են: Մերդեմեկն էլ է ավերված: Արդահանում, չնայած համառ դիմադրության, զինաթափ է արված ու

⁹⁵ ՀՀ ՊԿՊԱ, Ռ. Հովհաննիսյանի հավաքածու:

զերի վերցված մի ամբողջ զորամաս, որը Կարսից Արդահան 500 հրացան եւ գնդացի էր տեղափոխում...»⁹⁶:

Մերդեմեկն ու Արդահանը պաշարվել էին տեղի մահմեդական բնակչության կողմից, նրանք կտրել էին Կարս-Արդահան-Օլթիի հաղորդակցությունը, նման վտանգ էր սպառնում Կարս-Ալեքսանդրապոլ խճուղուն: «Դրոսիներ չափից ավելի տագնապալից է,- գրում էին Արդահանից:- Կազմակերպված եւ համախումբ գործող հազարավոր հրոսակների կողմից իրար հետեւից կողպտվում եւ զինաթափվում է քրիստոնյա բնակչությունը... թալանվեց ու հրացանի բռնվեց Մերդեմեկը, որտեղ հավաքվել էր մերձակա վեց գիւղերի ողջ քրիստոնյա բնակչությունը»: Արդահանի քրիստոնյա գյուղացիները լրել են իրենց գյուղերն ու որոշել են արտագաղթել: «Քրիստոնյա բնակչությունը կատարյալ խուճապի մեջ է»:

Հունական ազգային խորհրդի նախագահը հեռագրեց. «Արդահանի բոլոր քրիստոնյա գյուղերն ավերված ու թալանված են քրդերի ու թուրքերի ձեռքով, տավարը շչել տարել են, բնակչությանը լրիվ մերկացրել են, արտագաղթին արգելք են լինում քուրդ հրոսակախմբերը»: Քիչ անց Արդահանը գրավվեց թուրք խուճանի կողմից, հայերի զգալի մասը ջարդվեց: Սեյմում, մի կողմից, հայերի ու վրացիների, մյուս կողմից աղբբեջանցիների միջեւ սուր բախումներ էին տեղի ունենում: Մարտի 16-ին Արդահանը հանձնվեց, որում մնացած հայերը իսկապես կոտորվեցին⁹⁷: Թուրքերը շարժվեցին Բաթումի վրա: Վրացիները դիմեցին Ռեուֆին հարձակումը կանգնեցնել եւ բանակցություններին մասնակից դարձնել Քառյակ զինակցության, մասնավորապես Գերմանիայի ներկայացուցիչներին: Ռեուֆը մերժեց եւ նորից պահանջեց Անդրկովկասն անկախ հռչակել: Կոմիսարիատը հրաժարվեց: Թուրքերն, առանց դիմադրության հանդիպելու, գրավեցին Բաթումը եւ գերի վերցրեցին 3600 վրացի զինվոր եւ սպա⁹⁸:

Գրավված տարածքներում թուրքական գազանություններին վերջ տալու Պալավիչինիի առաջարկին Թալեսթը պատասխանեց, թե այլեւ «հայերի նկատմամբ բռնարարքներ չեն կիրառվում: Ի դեպ, Կարսի, Արդահանի շրջաններում... այլեւս հայեր չկան»: Թուրքերին ձեռնտու չէ բռնություններ գործադրելը, որովհետեւ դա վատ տպավորություն է ստեղծում Եվրոպայում: Այդ ցինիկը խնդրում էր առանցքի պետություններին «թուրքական զորքերի մտածված, պլանավորված առաջխաղացումը դեպի Թիֆլիս համարել դաշնակիցների ընդհանուր շահերից բխող գործողություն: Այդ դեպքում

⁹⁶ Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 120:

⁹⁷ Wien HHSTA PAX 156 Beilage, zu Konstantinopel, 29 juni 1918, N57/P.C.:

⁹⁸ Ն.տ. 155, Bera, 8 April 1918, N235:

Ռուսաստանը չի համարձակվի պատերազմ հայտարարել Թուրքիային»։ Երբ ավստրիական դիվանագետը առարկեց, թե առանց Բրեստի պայմանագիրը ստորագրած կառավարությունների համաձայնության այդ պայմանագիրը խախտելը վտանգավոր է, Թալեաթը պատասխանեց, թե «Թուրքիան ստիպված է այդ անել, որովհետև Անդրկովկասի մահմեդական բնակչությունը խնդրել էր Թուրքիայի օգնությունը հայկական պարտիզանական խմբերի դեմ»⁹⁹։

Պալավիչինին անմիջապես նկատում է, որ Թալեաթը ստում էր, նա պարզապես օգտվում էր Թուրքիայի համար ստեղծված բարենպաստ պահից Կովկասում օսմանյան ծրագրերն իրականացնելու համար։ Եվ որովհետև այս խնդրում Գերմանիայի եւ Թուրքիայի շահերը չէին համընկնում, Գերմանիայի ԱԳ նախարարությունը հրապարակեց հայտարարություն. «Սեր շահերին դեմ կլինեք, եթե Կենտրոնական Ասիայի եւ Պարսկաստանի մատույցներն անցնեն բացառապես թուրքերին, եւ այնտեղ մենք կախված լինեինք օսմանցիների քմահաճույքներից։ Մենք պատերազմի ընթացքում միլիոններ ենք ծախսել մեզ բարեկամ կովկասյան պետություն ստեղծելու եւ դրանով դեպի Կենտրոնական Ասիա կամուրջ կառուցելու համար։ Այդ ամենը հողս կցնդեն, եթե թուրքերը գրավեն Բաթումն ու Անդրկովկասը»¹⁰⁰։

Մարտի 24-ին Կաղզվանի ջոկատը Շենուրի հրամանատարությամբ շարժվեց դեպի Բերն։ Աղաղաչի շրջանում կռիվ տեղի ունեցավ, բընամին նահանջեց։ Թուրքերը հետ շարժվեցին նաև Կազիկալայի շրջանում եւ ամբողջ ճակատում բընամու հարձակումը կանգնեցվեց։ Այդ ժամանակ Կարսի ամրոցում էին գտնվում հայկական 3-րդ գունդը, պահեստային գունդը, սակրավորների գումարտակը, հետեւակային եւ հեծյալ զորաջոկատները, ռուսական կամավորական գունդը եւ հունական գնդի մի մասը, հեծելազորային գունդը, դաշտային երկու մարտկոց եւ մեծ թվով հրետանի։

Կարս քաղաքը պաշտպանում էին հետեւակային 18 վաշտ, 11 մարտկոց, գնդացրային, հետախուզական խմբեր, սակրավորներ։

Ամրոցի պարետ գեներալ Դիեյի ապրիլի 1-ի հրամանով ստեղծվում է պաշտպանական չորս գոտի Փիրումյանցի, Միցկեիչի, Կարամիչեյի, Քալանթարովի հրամանատարությամբ, պահեստային ուժերի հրամանատարն էր Դ. Փիրումյանը, Երեւանից եկել էր հայկական 2-րդ գունդը եւ մի գումարտակ։

Կարսի պաշտպանության գիծը ձգվում էր Եգիջա-Բեզիգջյան-Կեչիտ-Նովո-Սելիմ-Կարաղաղ-Թեհնիս-Պապի¹⁰¹։

⁹⁹ Wien HHSTA PAX 155, Bera, 8 April 1918, N255:

¹⁰⁰ Baumgart W., Deutsche Ostpolitik 1918, Vicnna, 1966, s. 177:

¹⁰¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 20:

Չինկեիչը ապրիլի 3-ին առաջարկեց Վեհիբին ռազմական գործողությունները դադարեցնել։ «Թուրքիայի հետ պատերազմել է Ռուսաստանը եւ ոչ թե Անդրկովկասը, որը շուտով կհայտարարի իր անկախությունը եւ կրողնի Կարսը»,- գրեց Չինկեիչին։ Դա Բրեստի պայմանագրի փաստացի ընդունում էր նշանակում։ Վեհիբը պահանջեց անմիջապես էվակուացնել Կարսը եւ հանձնել մինչև Արփաշայ ընկած տարածքը¹⁰²։

Չնայած թուրքական բանակն օր օրի մոտենում էր, «Կարսի հայ բնակչության զգալի մասը մնում էր տեղում ...Բնակչության մի մասը չէր կարողանում կտրվել տուն ու տեղից, վախենում էր գաղթականի թշվառ կյանքից ու ձգձգում էր մեկնումը, իսկ մյուս մասը չէր հավատում, որ թուրքերը կկարողանան գրավել Կարսն իր զորեղ ամրոցներով։ Նրանք տեսնում էին լեռներին բազմած Միջնաբերդը, Ղարաղաղը, Բուչկիերը, Ֆաղեերը, Ալեքսանդր 2-րդի, Ռադզեուկու, Կոխանովի, Բլազողարնիի, Ժելեզնոդարոսնիի, Լազարեյի ամրոցները։ Ո՞վ կարող էր չսարսափել այդ անառիկ ամրոցներից՝ պաշտպանված ժայռերով, բերդախրամներով»¹⁰³։

Հայկական հրամանատարությունը որոշեց բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանել Կարսը։ Հայ հրամանատարներից մեկն ասաց. «Կարսը Էրզրում չէ. ամբողջ տարի մը նետելիք ռումբ ունի ան իր պահեստներուն մեջ... Ռուսահայ զինուորը գիտե, որ Կարսն իր օջախին դուռն է»։ Իսկ Անդրանիկն ասաց. «Ասոնք պիտի թողուն Կարսը... Չորքին զլուխը դողացնող հրամանատար մը պետք է, մինչդեռ Նազարբեկյանը ինքն է, որ կը դողայ»¹⁰⁴։

Կարսի մարզի կոմիսար Չամոյանը գրում է սեյմին. «Թուրքերի ու քրդերի շարժումը Կարսի մարզում կրում է խոշոր ռազմական գործողության բնույթ։ Մուսուլմանների ջոկատը շրջապատել է Մեյդենեկը եւ Արդահանը... Կարս, Արդահան, Օլթի հեռախոսագծերը կտրված են։ Նախապատրաստվում է հարձակում Կարսի վրա»։ Աղբյուրներից ու թուրք սպաների ու գործակալների ղեկավարությամբ տեղաբնակ մահմեդականները հարձակվեցին Չոլախուր, Բաշգյուղ, Արթնլա եւ մի քանի ուրիշ հայկական գյուղերի վրա։ Մահմեդական հրոսակները հարձակվում էին քրիստոնյաների բնակավայրերի վրա, բռնարարքներ գործում ու թալանում։ Այդ գործողությունները փաստորեն խնդիր ունեին նախապատրաստելու թուրքական բանակի հարձակումը։ Մյուս կողմից «ամբողջ Սարիղամիշը եւ երկաթգծի շուրջը լեցուն էր կիսամերկ, ցրտաշունչ ձմռանը կծկված գաղթականներով՝ գլխավորապես կանայք, երեխաներ, ծերեր»¹⁰⁵։

Նազարբեկյանն ապրիլի 1-ին հրաման արձակեց Կարսի մարզի պաշտ-

¹⁰² ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 1819, ց. 1, գ. 46:

¹⁰³ Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 133:

¹⁰⁴ Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 342:

¹⁰⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 20:

պանություն վերաբերյալ, որում ներկայացնելով ռազմական իրավիճակը, տրվում էր Կարսի պաշտպանության պլանը, որն ակնհայտորեն միտում ուներ թուրքերին ոչ միայն հակահարված տալու, այլև նրանց առաջխաղացումն ընդհանրապես կանգնեցնելու, քանի որ Կարսի հրամանատարության տրամադրության տակ կար 27 վաշտ, հսկայական քանակությամբ դաշտային եւ բերդային հրանոթներ, սակրավորների գումարտակ, հեծյալ գունդ եւ այլն: Հնարավորություն կար Կարս ուղարկել լրացուցիչ ուժեր, բայց ոչ Դիելը եւ ոչ էլ որեւէ ուրիշ հրամանատար նման պահանջ աղյպես էլ չներկայացրեցին:

Նազարբեկյանի կարծիքով, եթե թուրքերը շատ մեծ գործունեով հարձակվեին, գուցե եւ հայկական ուժերը քիչ լինեին, սակայն «հաշվի առնելով թուրքական զորքերի քչությունը եւ մեր դաշտային զորքերի ամբողջականությունը, թուրքերի առաջ այնքան էլ հեշտ խնդիր չէր դրված: Եղած ուժերը բավարար էին ոչ միայն դիմադրության, այլև հաղթանակի համար»:

Կարսի բախտը չբերեց ոչ թե ռազմաճակատում, այլ Թիֆլիսում, վրաց գործիչները թուրքերի հետ «լեզու գտնելու» համար Արդահանի եւ Սարիղամիշի հետ պատրաստ էին գոհաբերել նաեւ Կարսը: Կարսը դարձավ Չխենկելիի ու Օղիշելիձեի դավաճանության եւ հայ գործիչների անպատասխանատվության, կիսատ-պռատ հայրենասիրության, եւ ինչու ոչ, ստորաբարշտության գոհ: Չխենկելիին հայերը թույլ տվեցին գործել ազատ, գործել ի վնաս Հայաստանի: Կրկնում ենք, եթե Վրաստանը ռազմական ինչ-որ ուժ ներկայացներ, ապա, գուցե հայ գործիչների նման վարքագիծը հնարավոր լիներ բացատրել, բայց ռազմաճակատում կոմուն էր հայը, իսկ հրամանները արձակում, Հաստանի բախտը որոշում էր վրացին:

Կարսի մերձակայքում ընթացող թեժ կռիվների պահին Նազարբեկյանը ստանում է հեռագիր, թե Անդրկովկասը անկախ է հռչակվել եւ Օղիշելիձեն հրաման էր ուղարկել ապրիլի 23-ին դադարեցնել պատերազմական գործողությունները: Դրան հետեւեց ռազմաճակատի հրամանատար Լեբեդինսկու նույն բովանդակությամբ հրամանը: Հայերի ձեռքն ընկավ Չխենկելիի գաղտնի հեռագիրը Վեհիբին: «Կարսի հանձնման մասին բանակցելու համար պատվիրակներ ուղարկելու հրամանն իմ կողմից կտրվի այսօր եւ ոչ ուշ, քան վաղը նրանք կհասնեն թուրքական զորքերի զբաղեցրած վայրը»: Նա Վեհիբին խնդրում էր դադարեցնել ռազմական գործողությունները եւ մեկ ամիս ժամանակ տալ Կարսը դատարկելու համար:

«Ապրիլի 12-ին... Կարսի ամրոցների շտաբում հավաքվեցին զորամասերի հրամանատարները եւ կառավարության անդամները: Բերդի պարետը ներկայացրեց ստեղծված իրավիճակն ու կարգադրություններ արեց բերդի դատարկման վերաբերյալ:

Նա ասաց. «1. Բերդի գույքի տեղափոխման համար Կարսում մնում է ինքը ամրոցի շտաբի պարետի հետ եւ ամրոցային վարչության պաշտոնատարները: 2. Ջորամասերն ամրոցները թողնելուց հետո անցնում են զեներալ Արեշյանի տրամադրության տակ: 3. Կարսաչայի ձախ կողմի ամրոցների... գորամասերը պետք է պատրաստ լինեն էվակուացվելու ապրիլի 12-ի ժամը 12-ին, իսկ մյուս գորամասերը՝ նույն օրվա երեկոյան: 4. Ամրոցների դատարկումը սկսել հատուկ հրամանով: 5. Վաշտերն ու առաջին զծի ջոկատները անմիջապես հետ կանչել... 6. Ամրոցի գույքի պահպանման համար թողնել երկրորդ հելմական գնդի մի մասը (մի վաշտ եւ հարյուրյակ)»¹⁰⁶:

Այդ նպատակով նախատեսված էր Կարս բերել փոխգնդապետ Եֆրեմովի ռուսական կամավորական ջոկատը, բայց չհաջողվեց, որովհետեւ այն Մազրայում կռվի մեջ էր մտել եւ ժամանակին տեղ հասնել չկարողացավ:

Հայտնի է գնդապետ Շատիլովի հետ Դիելի, Նազարբեկյանի եւ Վիշինսկու հեռախոսային զրույցի բովանդակությունը: Դիելը, թե Մորելը թուրքերի հրամանատարության հետ հանդիպումից հետո, ասել է, որ թուրքերը պահանջում են ամրոցն ազատել նույն օրը: Նրանք երաշխավորում էին քաղաքի բնակչության կյանքի եւ ունեցվածքի անվտանգությունը: Թույլ էր տրվում ամրոցում թողնել ռուսական ջոկատ:

Նազարբեկյան. «...Հնարավոր է մերժել թուրքերի պայմանները, հնարավոր է կայազորի դիմադրությունը, թե վիճակը համարում եք անհուսալի եւ հարկադրված ենք ընդունել թուրքերի պայմանները, ինչպիսին էլ, որ դրանք լինեն»: Դիել. «Ընդհանրապես իրադրությունը համարում եմ անհուսալի: Ամրոցը կարող էր միառժամանակ դիմադրել, բայց խաղաղության բանակցությունների մասին լայնորեն տարածված լուրերը, ամրոցի հանձնման որոշումը, իհարկե, այլ ուղղությամբ տարան ամրոցի պաշտպաններին»: Նազարբեկյան. «Մորելի գալու ժամանակ եւ մինչեւ թուրքերի մոտ նրա գնալն ինձ չհայտնելով դուք սխալ եք թույլ տվել: Չէ՞ որ գլխավոր հրամանատարի հեռագրում պարզ ասված է, որ թուրքերի հետ մեր բանագնացների բանակցությունների արդյունքները, մինչեւ դրանց հաստատումը, պետք է ներկայացվեն կառավարությանը»: Դիել. «Խնդրում եմ ղեկավարվել N829 հրամանով, որն ասում է, թե գորքերը հետ քաշելու խնդիրն ամբողջովին թողնված է իմ հայեցողությանը»: Նազարբեկյան. «Մոտքս ամրոցի էվակուացման եւ կայազորը դուրս հանելու մասին չէ, այլ թուրքերի այն պահանջի մասին, թե մեր գորքերն Արփաչայի մյուս ափը պետք է տեղափոխվեն երեք օրվա ընթացքում»: Դիել. «...Այդ պայմանը ես չեմ ընդունել... Ինձ համար պարզ չէ՝ ինչպե՞ս վարվել, եթե թուրքերը պնդեն քաղաքը մեկ օրում էվակուացնելու վրա»: Նազարբեկյան.

¹⁰⁶ Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 139:

«Կարծում եմ, որ մենք ունենք լուրջ զենք՝ բուրբերին սպառնալ, որ եթե չհամաձայնվեն, կփչացնենք բոլոր ամրոցները: Համոզված եմ, որ այդպիսի սպառնալիքը ազդելու է»:

Սակայն այն դիրքերում, որոնք պետք է զբաղեցնեին Կարսից հեռացող զորքերը (Վեզիրբեյից մինչև Մազրա), արդեն կռիվներ էին գնում: Թուրքերը որոշել էին արհամարհել զինադադարն ու կտրել երկաթգիծը: Ակնհայտ էր, որ հայկական հրամանատարությունը չէր տիրապետում իրավիճակին, ռազմաճակատից հավաստի ու օպերատիվ տեղեկատվություն չուներ:

Թուրքերը ձգտում էին գրավել Մազրա կայարանը եւ կտրել կապը Կարսի հետ: «Кавказское слово» թերթը գրում է. «Մեր բարձր հրամանատարությունը, համաձայն Անդրկովկասի կառավարության գրավոր կարգադրության, բանակցությունների մեջ մտավ թուրքերի հետ ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Այդ նպատակով կազմվել էր պատվիրակություն գնդապետ Մորելի նախագահությամբ: Պատվիրակության անդամ Ի-ի ասելով Մորելը թուրքերի կողմից առաջարկված պայմաններին համաձայնվեց այնպիսի հապճեպությամբ, որն ամենեւին չէր բխում գոյություն ունեցող ռազմական դրությունից: Համաձայն ապրիլի 12-ին կնքված համաձայնագրի, մերոնք պարտավորվում էին մինչև նույն օրվա երեկոյան ժամը 5.00 հետ քաշել զորքերը եւ ամրոցը հանձնել թուրքերին»:

Բերդի կայազորի տրամադրությունն այնքան մարտական էր, եւ ամրոցն առանց դիմադրության թշնամուն հանձնելն այնքան հրեշավոր ու անսպասելի, որ անհնար էր հավատալ: Որոշ տեղերում մեր զորքերը հրաժարվեցին կատարել հրամանը՝ թողնել դիրքերը: Երբ 3-րդ հրաձգային գունդը հրաժարվեց կատարել հրամանը եւ չթողեց ամրոցները, ստիպված եղան պատվիրակություն ուղարկել այդ գունդը, որի կազմում էր նաեւ Կարսի հայկական Ազգային խորհրդի նախագահը, բացատրելու զինվորներին գործերի դրությունը: Միայն դրանից հետո գունդը համաձայնեց թողնել դիրքերը, սպառնալիքներ ու անձեռքներ տեղալով նրանց հասցեին, ովքեր ստիպեցին շուտ տալու սվինները:

Ամրոցը հանձնելու հրամանը անսպասելի էր, դրա հետ առնչվող իրադարձություններն այնքան խճճված, որ ոչ միայն հասարակ զինվորը, այլև հրամանատարը չէր կարողանում ըմբռնել կատարվածը: Ձինվորների գայրույթը հանդեպ ղեկավարները, նրանց հասցեին կշտամբանքները, թե «Գուր մեզ ծախեցիք ու դավաճանեցիք», խոսում էին այն մասին, որ մեղմ սասած, համաձայնագիրն ընդհանուր ոչինչ չուներ ուժերի իրական փոխհարաբերության հետ»¹⁰⁷:

Նազարբեկյանը գրեց Անդրկովկասի զորքերի գլխավոր հրամանատարին. «Այն, որ կառավարությունը համաձայնվել է կատարել թուրքերի բոլոր

¹⁰⁷ Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 142-144:

պահանջները, հուսալքել է զինվորներին: Եթե սովորական պայմաններում Կարսի ամրոցը կաշառուկանվեր առնվազը մեկ ամիս, գուցե եւ ավելի, այժմ դա անհնարին է դարձել: Լուրերը, թե պատերազմին վերջ է տրված լրիվ կազմալուծեցին զորամասերը: Քայքայվել է Բեգլի Ահմեդի ջոկատը, որ գրադեցնում էր Աղբարա-Հարամ Վարդան գիծը: Այդ ջոկատի զինվորները սկսել են փոքր խմբերով ինքնագլուխ քաշվել թիկունք: Թուրքերի հարձակումից հետո դասալիքներն ավելի շատացան: Ես առաջարկել եմ ամրոցի պարետին, որ եթե շարունակվի թուրքերի հարձակումը, կրակով կանգնեցնի նրանց: Արեւտյան եւ հարավային ամրոցները համատեղ ուժերով ստիպեցին թուրքերին դադարեցնել հարձակումը: Նրանք կանգ առան Լարաղալա-Լամշլի-Խամզա-Սեղլար-Ալաուզը-Աղազ գծի երկայնքով: Քրդերի ավազակային հարձակումներ են տեղի ունեցել Մերդենեկ-Չլաուս-Գրենադերսկոյե շրջանում: Կան տեղեկություններ, որ Արդահանը գրավված է թշնամու կողմից: Հայկական կորպուսի զորքերը զբաղեցնում են Ենգիջա-Բեզյազան-Քեչիթ-Նովոսելիմ-Կարանգազ-Թխնիս-Փասալի գիծը»¹⁰⁸:

Բեգլի Ահմեդի զորամասերը հակառակորդի ճնշման տակ անկանոն նահանջում էին Աղբարա: Հարամ Վարդան գյուղի մոտ երեսուց թուրքական հեծելազորը: Սարիղամիշի եւ Կաղզվանի կողմից գալիս էր 10.000 փախստականների զանգվածը, ովքեր լրվեցին Կարս ու խցանեցին կայարանամերձ տարածքը: Կարսի ամրոցից դուրս բերված ջոկատը Պրոխլադնոյե գյուղի մոտ կռվի բռնվեց քրդերի հետ, իսկ Նովո Պետրովկա-Աղջաղալա գծի վրա մարտնչում էին Կարսից հանված հեծելազորային հարյուրյակը եւ հրետանավորները:

Քրդերը հարձակում գործեցին Ալեքսանդրապոլի խճուղով հեռացող փախստականների ու գումակի վրա: Երբ թշնամին սկսեց ռմբակոծել բերդը, անպատասխան չմնաց: Մինչև երեկո գնում էր թնդանոթների ճակատամարտ: 2-րդ հայկական գունդը Չալազարի բարձունքներին ամբողջ օրը կռվեց թշնամու դեմ եւ նրան մեծ կորուստներ պատճառելով հեռացավ:

Քաղաք գնացող եւ դեպի ամրոցներ տանող բոլոր ճանապարհները խցանված էին զորքերով ու փախստականներով, որոնք գլխավորապես Սարիղամիշից եւ Կաղզվանից էին ու կուտակվելով Բեգլի Ահմեդում, Վլադիկարսում, Նովո-Միխայլովկայում, Նովո-Ալեքսանդրովկայում եւ այլ վայրերում, շարժվեցին դեպի Կարս, խցանեցին նաեւ կայարանի հատվածը՝ առաջացնելով անկարգություն ու խուճապ: Գումակի եւ զորքի հետ խառնված գալիս էին նաեւ դասալիքները: Թշնամին ռմբակոծում էր Բլազողարնոյե գյուղը: Պրոխլադնոյե գյուղի մոտ տեղի ունեցավ ուժեղ փոխհրաձգություն: Կարսի հեծելազորի կրկու հարյուրյակ ինքնագլուխ թողեցին դիրքերն ու հեռացան:

¹⁰⁸ Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 145:

Ապրիլի 12-ին (հ.տ.) թուրքերը Մազրայի մոտ դուրս եկան Ալեքսանդրապոլի խճուղի: Նույն օրը արեւմտյան ամրոցներից հանվեցին հայկական գործերը, նրանք հեռացան Ալեքսպոլ: Կարսի հետ կտրվեց հեռախոսային կապը: Դադարեց գործել ռադիոկայանը, կտրվեց նաև երկաթուղային կապը:

Հայ զինվորն այդպես էլ չէր հաշտվում այն մտքի հետ, որ 40 կմ շրջանագիծ ունեցող Կարսի ամրոցային համալիրը, որը հարյուրավոր ծանր թնդանոթներով կարող էր կործանիչ կրակի տակ առնել մինչև 80 կմ երկարություն ունեցող տրամագծով տարածքները, որի միջնաբերդը օդակված էր բերդախրամատներով եւ անհրաժեշտության դեպքում հատուկ հարմարանքների օգնությամբ, անմիջապես ջրով էին լցվում, ուներ բարձր, ամուր պարիսպներ, որոնց երկաթյա մուտքերին գնդափրներն էին, հանձնվում էր առանց կռվի: Դեռ ավելին, բերդի հյուսիսային կողմում Լեռնաձորն էր, քաղաքը կիսող լայն, ջրառատ եւ տեղ-տեղ շատ խորը Կարս գետով, հյուսիս-արեւելյան շրջայի վրա Ղարադաղն էր, որի ներսի բարձր ու հաստ պարիսպների վրա տեղադրված էին ամրոցային հզոր թնդանոթներ՝ փողերն ուղղված չորս բոլոր, դրանց կողքին, պարսպի որմնախորշերում ճյուղավորված հին ճանապարհն էր: Ամրոցի հետ կապն իրականացվում էր երկու կամուրջներով, որից սկսվող քարե աստիճանները տանում էին Ալեքսանդր 2-րդի ամրոցը՝ կառուցված անգլիացի ճարտարապետ Վիլյամսի նախագծով «Կտանգավոր դարպաս» կոչված տեղում:

Ամրոցում տեղակայված էին՝ Կարսի ամրոցային գունդը՝ 1600 սվին: Այդ գնդի երկու վաշտը Մազրայի ջոկատի հետ էր, երկու վաշտը՝ կայազորի պահակակետում, երեք վաշտեր էլ դիրքեր էին զբաղեցրել Կարս գետո՝ աջ ափի ամրոցներում եւ ամրություններում: Հայկական 3-րդ հրաձգային գունդը՝ 1200 սվին, որի երկու գումարտակը Կարս գետո՝ ձախ ափի ամրություններում էին, մեկուկես վաշտի չափ զինվորներ՝ Պրոխլադնոյե գյուղում, մի այլ վաշտ կայազորի պահակակետում եւ 2,5 վաշտ՝ ընդհանուր ամրոցային պահեստներում էին: Այստեղ էր նաև ռուս սպաների գումարտակը չորս գնդացիով, կար նաև ռուս սպաների հրետանային դիվիզիոնը, որն ուներ երեք մարտկոց: Հունական 2-րդ հրաձգային գնդում հաշվվում էր 320 սվին:

Ամրոց ամրոցում կար 3000 սվին հետեսակ, 100 դաշտային թնդանոթ սպասարկող հրետանավորներ: Կար 12 ամրոցային թնդանոթ, 70 գնդացի, 50 հրանոթ: Ամրոցների պահեստներում առկա էր 700 թնդանոթ: Հեծելազորում կամավորական ջոկատների հետ կար 4000-5000 մարդ, ինչպես նաև երեք ինքնաթիռ, բայց չկար բենզին: Բերդն ուներ պարենի այնքան պաշար, որ գործին ու ժողովրդին կբավարարեր երեք ամիս:

Նման ամրության հանձնումը դավաճանություն էր կամ չար բախտ: Քաղաքական անորոշ խաղերը, այլ ոչ թե հայկական բանակի բուլոբյունն էր Կարսի ողբերգության պատճառը:

Մի փոքր այլ կարծիքի էր շտաբի պետ Լեւանդովսկին ըստ նրա. «Կարսի դրությունը ապրիլի 11-ին անհուսալի էր եւ անոր ժամերը հաշուած էին: Բանակի ոգին ընկավ այն ատեն, երբ թուրքերը մոտեցան Կարսի ամրութեանց երկու կիլոմետր հեռավորութեան վրայ»: Մի բան ակնհայտ է՝ Կարսը հնարավորություն ուներ պաշտպանվելու, բայց, ոչ իր մեղքով, այդ չարեց: Սկսած Բրեստ Լիտովսկի դաշնագրից, որ փաստորեն Կարսը հանձնում էր Թուրքիային, մինչև Չխենկելի-Վեհիբ գործարքն ու հայ գործիչների երկչոտությունն ու պատասխանատվությունից փախչելը Կարսը նվիրաբերեցին թուրքերին:

Նազարբեկյանը, նրա հետ միասին հայկական բանակն ու հայ ժողովուրդը հայտնվում են կատարված փաստի առաջ: Եվ այդ արվեց Հայոց ազգային խորհրդի աչքի առաջ դաշնակ եւ ոչ դաշնակ գործիչների մտավորական ու խոհեմ լռության ուղեկցությամբ: *

Իհարկե, եթե Նազարբեկյանն ունենար Անդրանիկի կամ Դրոյի կամքի ուժն ու պատասխանատվությունը վերցնելու պատրաստակամությունը, աղետը տեղի չէր ունենա: Տվյալ դեպքում Նազարբեկյանի հնազանդությունը ոչ թե զինվորական կարգապահություն էր, այլ հայրենիքի (ոչ թե ռուսական, այլևի հայ) շահերի չգիտակցում, անգորություն այդ շահերին զոհելու պաշտոնական «բնավորությունը», սուբորդինացիան: Ինչ էլ լիներ, գեներալի վարքագիծը պատմական արդարացում չունի:

Նրա հրամանով Կարսը դադարեցրեց թշնամու ուղղությամբ կրակ արձակել, կռվելու փոխարեն բանագնացներ մեկնեցին թուրքերի մոտ: Եվ մի ասպտակ ես՝ թուրք հրամանատարը՝ թե ինքը հրաման չունի կրակը դադարեցնելու եւ շարունակեց հարձակումը, պահանջելով, որ Կարսը հանձնվի անմիջապես: Այսինքն՝ Վեհիբը համաձայնվելով Չխենկելիի առաջարկի հետ, միաժամանակ իր գործերին հրաման էր տվել շարունակել հարձակումը, որպեսզի, նախ, հնարավորին չափ ավելի շատ հայ ոչնչացվեր, եւ, երկրորդ, հայերը չկարողանային իրենց հետ տանել զենքի, զինամթերքի, պարենի պաշարները, անձնական ունեցվածքից թեկուզ ինչ-որ բան:

Ապրիլի 24-ին թուրքական զորամասի հրամանատար Քյազըմը Մորեյին ասում է՝ քանի որ Բրեստի պայմանագրով Կարսի մարզը հանձնվում է թուրքերին, որեւէ բանակցության կարիք չկա: Թուրքերը կմոտենան Կարսին եւ կանգ կառնեն բերդից երկու կիլոմետր հեռավորության վրա, իսկ հայերն առանց հապաղելու պետք է հեռանան քաղաքից:

Չխենկելին նոր հեռագիր է ուղարկում Վեհիբին ու հավաստիացնում, թե

թուրքերի բոլոր պահանջները կատարված են, այսինքն՝ նրանց է տրվելու նաև Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղու Կարսի հատվածը, ինչը անհնար էր դարձնում հայ բնակչության տեղափոխությունը Կարսից:

Դրան հետևում է Վեհիբի ապրիլի 24-ի վերջնագիրը՝ բերդային ամրությունները հանձնել ոչ ուշ, քան ապրիլի 25-ի կեսօրը, նույն օրը հայկական զորքերը պետք է հեռանային եւ երեք օրից անցած լինեին Արփաշայի:

Եղավ այնպես, ինչպես թուրքերն էին պահանջում՝ ապրիլի 25-ի առավոտյան քաղաքը համարյա դատարկված էր, իսկ երեկոյան թուրքական զորքերի առաջին ջոկատները երեւացին Կարսի ծայրամասերում:

Չխենկելին եւ Օղիշելիձեն գնալով ավելի ընկղմվեցին ստորոքյան ճահիճը: Նրանք Նազարբեկյանից պահանջեցին դատարկել ոչ միայն Կարսի մարզը, այլև Արփաշայի աջ ափը, այսինքն՝ Ալեքսանդրապոլի ուղղության ամրությունները:

Դիւերը մանրամասը տեղեկագիր ներկայացրեց Լեբեղիճակուն, որում նկարագրում է Կարսի վիճակը եւ եզրակացնում. «Բերդի ինժեներական պատրաստությունը պետք է համարել միանգամայն բավարար, հանդերձանքի եւ մթերային պաշարները բավարար էին մի քանի ամսվա համար: Բերդն ապահովված էր նաև սանիտարական միջոցներով»¹⁰⁹:

Իհարկե, Նազարբեկյանը եւ մյուս հայ գործիչները հասկանում էին կատարվածի աղետալի բնույթը: Նրանք ներքնապես ընդդիմանում էին Կարսը հանձնելու վերաբերյալ Չխենկելիի, Օղիշելիձեի, Գեորգաձեի հրամաններին, ձգձգում դրանց կատարումը, բայց ոչ մի կերպ չկարողացան դեն նետել պաշտոնական կապանքները, զինվորական արհեստավարժության կանոնները եւ բարձրանալ համազգային շահերի գիտակցման մակարդակին:

Վերը նշված վրաց գործիչների քաղաքականությունը բնութագրական վրացական էր՝ կողքին ունենալ թույլ Հայաստան: Դա վրացական ազգային քաղաքականություն էր եւ պատահական չէ, որ այդ հարցում վրաց մենչեփկները՝ Չխենկելիի եւ բոլշեփկները՝ Ստալինի, նույն կերպ էին մտածում ու գործում: 1918թ. Կարսը թուրքերին տվեցին վրաց մենչեփկները, իսկ 1920թ.՝ վրաց բոլշեփկները:

Ազգային շահերի գոհաբերելը զինվորական կարգապահությանը, այսինքն՝ պատերազմելու փիլիսոփայության բացակայությունը Նազարբեկյանի եւ շատ հայ սպաների համար պատերազմելը լոկ պաշտոնական պարտականություն էր եւ ոչ ավելին: Նրանց գործունեության մեջ քաղաքականը, ազգայինը շարտրված էր հետին պլան: Գործողությունից ու վարքագծից դատելով անհնար էր տարբերել, թե ով էր հայր Նազարբեկովը, Արեշովը, թե Դիւեր կամ Մորելը:

¹⁰⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 42:

Ավելի քան տարօրինակ էր նաև Թիֆլիսի հայ առաջնորդների կեցվածքը, ովքեր իրենց վրա էին վերցրել Հայաստանի եւ հայ ժողովրդի այնօրվա եւ ապագայի պատասխանատվությունը: Երբ ընթերցում ես նրանց հուշերը եւ, ընդհանրապես, գրածները, տպավորությունն այնպիսին է, որ սեյմում նրանք ազդեցիկ ուժ էին: Եթե այդպես էր, ինչո՞ւ չօգտագործեցին այդ ազդեցությունը, ինչո՞ւ իրենց եսապաշտ «քաղաքակիրթ» մտածողությամբ ու վերաբերմունքով օգնեցին վրաց շովինիստների եւ թուրքերի գործարքին:

Հետագայում նրանք իմաստուն հայասերներ դարձան: Վ. Փափազյանը ձախողեց Էրզրումին համալրում ուղարկելու գործը, բայց դրա մասին լռեց, իսկ Կարսի մասին գրեց, թե իրենք գիտակցում էին, որ «Կարսը տալով թուրք բանակի առջեւի բոլոր լուրջ խոչընդոտները կը վերանային եւ Կովկասի տիրապետութեան ճամփան կը բացուեր, այսինքն՝ ակներեւ կը դառնար հայերու բնաջնջումը»¹¹⁰:

Ոչ թե փափազյանները, այլ հայ հասարակության լայն շրջաններն անհանգստացան ու ճնշում գործադրեցին կորպուսի հրամանատարի ու մյուսների վրա: Առաջարկվում էր հրաժարվել ենթարկվելուց Չխենկելու հրամաններին, պաշտպանել Կարսը: Ապրիլի 24-ին Վիշինսկին պատասխանեց. «Արդեն ուշ է եւ ոչ մի կարգադրություն չի օգնի, զորքերի բարոյական ոգին ընկած է... հազիվ թե մեզ հաջողվի այն պաշտպանել եւ հավանական է, որ այսօր գիշեր թուրքերը Կարսը շրջանցեն նաև արեւելյան կողմից»¹¹¹:

Որ Նազարբեկյանի հասկացությունների ու նրա պաշտոնական բյուրոկրատական «բնավորության միջեւ խզում կար, վկայում են նրա հետեւյալ առաջարկությունները. «... Առաջին. մեկ շաբաթ ժամանակը բավական է Կարսի շրջանից զորքերը դուրս բերելու համար, բայց այդ ժամկետը քիչ է քրիստոնյա բնակչության էվակուացիայի համար, բոլորն, առանց բացառության, գաղթում են: Անշուշտ, էվակուացիան պետք է տեղի ունենա գորքի պաշտպանության ներքո: Նվազագույնը կպահանջվի երկու շաբաթ ժամանակ: Երկրորդ՝ Ալեքսանդրապոլի Արփաշայի առափնյա դիրքերը պետք է պահել մինչեւ թուրքերի հետ չկնքվի իսկական հաշտություն: Երրորդ, Վեհիբ փաշայից այսօր ստացված հեռագրում նշված չէ, թե մինչեւ էվակուացիան ով է հսկելու Կարս-Ալեքսանդրապոլ երկաթգիծը: Անհրաժեշտ են համարում այդ ճանապարհի պահպանումը մեր զորքերի կողմից, այսինքն՝ միայն այդ պայմանով հնարավոր կլինի բերդի էվակուացիան»¹¹²:

Բայց Չխենկելին հայության արյունը վաճառքի էր հանել: Նա Վեհիբին գրեց, թե իր կառավարությունը պահանջել է, որպեսզի Կարսի մարզը լրիվ

¹¹⁰ Փափազեան Վ., նշվ. աշխ. էջ 475:

¹¹¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 31:

¹¹² Ն.տ.:

դատարկվի քրիստոնյա բնակչությունից, հայկական զորքերից, որի փոխարեն բուրբերը պետք է մաքրեն Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգների զավթված շրջանները:

Չխենկելին, իրոք, դիվային շահագրգռվածություն էր դրսևորում Կարսի բուրբերին հանձնելու խնդրում: Նա Թիֆլիսից ուղղակի կապվեց Դիեւի հետ եւ հրամայեց քաշվել Ալեքսանդրապոլ եւ «քաղաքը առանց պայմանի յանձնել բուրբերուն»: «Նազարբեկովին Չխենկելու հեռագիրը ուշ հասավ,- գրում է Ա. Թերզիպաշեանը,- Կարս հասած հրամանը բարոյալքած է թե զինուորախումբը եւ թե մանավանդ սպայությունը, որ իր զուխը կորսնցուցած է: Մեզի հասած տեղեկությունները այն աստիճան շփոթ են եւ հակասական, որ Նազարբեկով այս րոպեին չգիտե, թե բուրբերը քաղաքը մտա՞ծ են թե ոչ. այնպես որ, եթե ան փորձելու ալ ըլլայ, այլեւս չի կրնար դիմադրութիւն կազմակերպել այս քառասային դրութեան մեջ»¹¹³:

Դիեւը հրամայեց, որ բերդի ունեցւածքը տեղափոխելու համար պետք է տեղում մնային պարետն ու նրա շտաբը, մյուս զորքերը բերդը դատարկելուց հետո անցնելու էին Արեշյանի հրամանատարության տակ, իսկ ամրոցների մաքրման կապակցությամբ լինելու էր հատուկ հրաման, ունեցվածքը պաշտպանելու համար ամրոցում թողնվելու էր մեկ վաշտ ու մեկ հարյուրյակ:

Ապրիլի 26-ի առավոտյան երկաթուղային կայարանին մոտեցած բուրբերը կրակ բացեցին քաղաքի վրա: Նույն օրը ամրոցն անցավ բուրբերի ձեռքը: Թուրքական 36-րդ դիվիզիայի հրամանատար Քյազըմը նշանակվեց Կարսի պարետ: Նա Դիեւին, Մորեյին եւ մյուսներին ծանոթացրեց Վեհիքի նոր հրամանին՝ քաղաքից դուրս չբերել ռազմական ունեցվածքն ու տրանսպորտային միջոցները, կայազորի սպաներից ցանկացողները կարող են մնալ Թուրքիայում, Անդրկովկաս մեկնել ցանկացողներին կթույլատրվի անցնել Ալեքսանդրապոլ:

Կարսում մնացած սպաների եւ զինվորների բնակության համար առանձնացվելու էր առանձին շենք, որը վերահսկվելու էր, բոլոր զենքերը պետք է հանձնվեին, սպաները կարող էին կրել թուր եւ ատրճանակ:

Ապրիլի 30-ին Կարսը թողեց Դիեւը 1100 հոգու հետ՝ զինվորներ, սպաներ եւ նրանց ընտանիքներ: Մեկնողներից հայ էր միայն հիսուն հոգին:

Կարսում մնացած հայերը ոչնչացվեցին:
Նազարբեկյանն ապրիլի 26-ին նորից անդրադարձավ Կարսի անկմանը. «Եթե պատերազմը շարունակվելու դեպքում Կարսը կարող էր պաշտպանվել մեկ ամիս եւ ավելի, ապա ստեղծված պայմաններում դա դարձավ անհնար:

Արդեն բանագնացներ ուղարկելու եւ պատերազմը դադարեցնելու մասին

¹¹³ Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 354-355:

առաջին տեղեկությունները կազմալուծում մտցրեցին Բեգլի-Ահմեդի ջոկատում... Ապրիլի 24-ի գիշերն առանձին զինվորներ, նույնիսկ ոչ մեծ խմբեր, սկսեցին ինքնակամ հեռանալ թիկունք»¹¹⁴:

Ապրիլի 25-ին Կարսի նահանգի կոմիսար Ծամոյանը Թիֆլիսում հայտարարեց. «Կարսի անակնկալ եւ հապշտապ հանձնման հետեւանքով, որ կատարվեց Թիֆլիսից եկած հրամանով, Անդրկովկասի այս մեծագույն ամրությունը պաշտպանելու պատրաստված բնակչությունը հարկադրված եղավ լքելու ամեն ինչ... Բնակչության նահանջի պատկերն անկարագրելի է»¹¹⁵:

Այս կապակցությամբ Ավ. Իսահակյանը գրեց. «Հայության վիճակը ամենահուսահատականն է. վտանգված է հայի գոյությունը. Կարսի եւ Բաթումի գրավումից հետո ամբողջ Կովկասը բուրբերի ոտքի տակ է. կջարդեն հայերին...»¹¹⁶:

Անդրադառնալով հայ ժողովրդի այդ նոր ամոթալի պարտությանը, Վահան Տերյանը գրեց. «Դաշնակցությունը փոխանակ հեղափոխական Ռուսաստանի հետ դաշն կապելու, զայն կապեց հակահեղափոխական եւ արյունարբու բեկերի ու դավաճան մեղքերի հետ»: Թուրքիան հենց այդ էր ուզում: «Երբ նա տեսավ, որ պաշտոնապես Կովկասը կտրվեց Ռուսաստանից, իսկույն գորքը շարժեց առաջ եւ գրավեց Կովկասի հայաբնակ երկրները: ...Ահա թե ինչպես հայ աշխատավոր ժողովրդի տունը քանդեցին ժողովրդին բարեկամ ձեռացող դաշնակցականները...»¹¹⁷:

Կարսի անկումը առաջացրեց համազգային խուճապ, փախչում էին բոլորը, քաղաքացիական բնակչություն եւ զինվորներ, մեծ թե փոքր, տղամարդ թե կին: Արեւմտահայերի ողբերգությունն ուղղակի ազդեցություն ունեցավ բուրբերի հանդեպ հայերի վարքագծի վրա, նրանք ահաբեկվածությունից հիպնոզացել էին: Դա մղձավանջ էր, փախեփախ: Երկու օր անընդհատ տեղացող անձրեւն ու փոթորիկը համապարփակ դարձրեցին զենքերը: Դասալքություն, ճանապարհներին ընկած մեծ քանակությամբ զենքեր ու զինամթերք:

Ապրիլի 24-ին ժամը 11-ին, պատմում է ժամանակակիցը, ամրոցներից կրակը դադարեցվեց, Միջնաբերդից դուրս եկավ Մորեյի գլխավորած պատվիրակությունը եւ մեկնեց Վլադիկարս Քյազըմի հետ բանակցելու: Վերջինս ասաց, թե հրաման ունի մոտենալու բերդին մինչեւ երկու կմ հեռավորության վրա, բայց բերդից կրակ բացեցին եւ ինքը դադարեցրեց առաջանալը: Ինչ վերաբերում էր դեմոնրկացիոն գծին, ասաց Քյազըմը, կորոշվի այն բանից հետո,

¹¹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 31:
¹¹⁵ Խախիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Արեւք, 1930, էջ 58:
¹¹⁶ Իսահակյան Ավ., Հիշատակարան, Ե., 1977, էջ 330-331:
¹¹⁷ «Կոմունիստ», 22.06.1918:

կրք պարզ կլինի, թե ինչ ձեռով է տեղի ունենալու էվակուացիան: Պատվիրակությունն, առանց որեւէ պայմանավորվածության գալու վերադարձավ, բայց նույն օրը նորից գնաց թուրքերի մոտ համաձայնեցնելու, որ նրանք ժամը 19.00 կարող էին մոտենալ բերդային ամրություններին, պայմանով, որ բաց մնար ամրոցի հյուսիս-արեւելյան կողմը, այսինքն՝ Ալեքսանդրապոլ տանող խճուղին եւ երկաթգիծը: Նույն ժամանակ քաղաքի տարբեր մասերում բռնկվեցին հրդեհներ, վառվում էին գորանոցները, ռադիոկայանը, ջրաղացը, աղջիկների գիմնազիան, մի քանի խանութներ: Սկսվեց կողոպուտը:

Հիվանդանոցների հիվանդներին սկսեցին ուղարկել Երեւան:

Հաջորդ օրը հայկական զորքերը քաղաքն ու բերդը թողեցին, բայց թուրքական բանակը չէր շտապում նրանց տեղը գրավել: Դրա փոխարեն անմիջապես քաղաք լցվեցին քրդերն ու խուժանը եւ սկսեցին ջարդն ու կողոպուտը: Չորս ժամ անց քաղաք մտավ թուրքական մի զորամաս ու տեղավորվեց ձորի հյուսիսային մասի գորանոցում, ապա գրավեցին ձախ ափի ամրոցները: Չորքը միացավ ջարդարարներին: «Հայերի շրջանում սարսափ տարածելու համար նրանց խոշտանգում էին եւ այլանդակված դիակները թողնում քափված տներում, փողոցներում, բակերում, գյուղերի ջրհորներում»¹¹⁸:

Թուրքերը կրակ բացեցին քաղաքից հեռացող զինվորներին ու բնակիչներին տեղափոխող գնացքի վրա, որ Մազրա հասավ տասնյակ սպանվածներով ու վիրավորներով:

Կարսի կայարանում վագոններից իջեցրեցին քառասունից ցածր տարիքի տղամարդկանց:

Գիշերը թուրքերը պայթեցրեցին ռուս զինվորների հիշատակի հուշարձանը:

Նրանք նորից արյան խրախճանքի մեջ էին եւ մոլեռանդաբար ոչնչացնում էին բոլոր հայերին՝ ծեր թե երեխա, տղամարդ թե կին: Ով փրկվում էր, փախչում էր Կովկաս: 1918թ. գարնանը Էրզրումի, Մամախաթումի եւ Երզնկայի շրջաններից փախած հայերի թիվը հասավ 50.000-ի: «Երկարատեւ պատերազմի հետեւանքով բազմիցս քայքայված բնակչությունն այժմ դիմել է խուճապային փախուստի եւ հիմնովին կորցնում է վերջին ունեցվածքը, որը հաջողվել էր վերականգնել մինչեւ բանակի կողմից ռազմաճակատը թողնելը: Սոված, բոլորովին մերկ ու անօգնական բնակչությունը, որը ճանապարհներին ծվատվում էր քրդական հարձակումներից, լցվում է Անդրկովկաս եւ սովի ու ամեն կարգի զրկանքների հիման վրա իր հետ բերում վարակիչ հիվանդությունների տարածման սպառնալիք»¹¹⁹:

¹¹⁸ Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 152:

¹¹⁹ ԱԳՅԱ, փ. 13227, օտ. 2, ձ. 60:

Անդրկովկասյան կոմիսարիատը շնկատելու տվեց այդ զանգվածին: Իսկ կրք նրանց օգնելու համար խնդրեցին միջոցներ հատկացնել, խոստացավ տրամադրել 3.000.000ռ., բայց երկար քաշքշելուց հետո տվեց միայն 300.000ռ.¹²⁰:

«Թուրքական զավթիչների ձեռքն ընկավ միլիոնավոր փութ ցորեն, - գրում է ականատեսը, - գարի, հազարավոր գլուխ խոշոր ու մանր եղջերավոր անասուն, գոմեշ, ձի, խանութների ու պահեստների ապրանքներ, փերակներ, հավեր, ձիասայլեր, յուղ, պանիր, դավուրմա, մեղր, մուրաբա, գույք, կահկարասի, զարդեր, զենք. ռազմամթերք, հանդերձանք, թնդանոթ, գնդացիք, արկ, խոտ, դրամ, ոսկի, հագուստեղեն, կարտոֆիլ: Թուրքերը քանդում էին դպրոցները, եկեղեցիները: Նրանք տիրացան մեծ քանակությամբ կաշվի, շաքարի, թեյի... Հավաքում էին երեխաներին, ձեռքերն ընկած երիտասարդներին, գեղեցիկ կանանց ու աղջիկներին: Թալանին մասնակցում էին նաեւ գերմանացի զինվորները: Սպանությունները դարձան սովորական: Ոչ քիչ դեպքերում թուրք խուժանն էր մտնում քաղաք կամ գյուղ թալանելու եւ գյավուր հայերին ոչնչացնելու համար»¹²¹:

1918թ. մարտի 19-ին հանդես գալով ռայխստագում սոցիալիստ Հ. Լեբեդարը, նկատի ունենալով Կարսը, Արդահանը եւ Բաթումը թուրքերին հանձնելը, ասաց. «Ազգաբնակչությունը... այժմ էլ թուրքերի կողմից ոչնչացման վտանգի տակ է. թուրքերն արդեն գնդակահարել են ավելի քան մեկ միլիոն հայ Թուրքահայաստանում: Գերմանիայի կառավարության համար նոր կոտորածների կանխումը պատվի հարց է»¹²²:

Ստոկհոլմում տեղի ունեցավ մի հանրահավաք, որը միաձայն բողոքի բանաձեւ ընդունեց, որում զայրույթ էր արտահայտված հայերի հալածանքների դեմ եւ երկրի կառավարությանը կոչ էր արվում պայքարել, որպեսզի հայերն ունենան կյանքի եւ ինչքի անվտանգություն¹²³:

Հայ ժողովրդին օգնության ամերիկյան հանձնաժողովը դիմում հրապարակեց, որը դատապարտում էր թուրքական զազանությունները հայերի հանդեպ¹²⁴:

«Arbeiter Zeitung»-ը 1918-ի ապրիլի 29-ին գրում է. «Կարսի համար մղած մարտերի ընթացքում բերդն անձնատուր եղավ: Մեր ձեռքն անցան տարբեր տրամաչափի 860 թնդանոթ»: Նույն թերթը նաեւ գրեց, որ բացի այդ թնդանոթներից թուրքերը տիրացան «շատ զինամթերքի, ռազմական գույքի եւ այլ պաշարների»:

¹²⁰ ԱԳՅԱ, փ. 13227, օտ. 2, ձ. 60:

¹²¹ Ալեքսանդրյան Ա., նշվ. աշխ., էջ 130:

¹²² Beyleirian A., նշվ. աշխ., փաստ. N589:

¹²³ Ն.տ., փաստ. N345:

¹²⁴ Ն.տ., փաստ. N126:

Նույն ժամանակ ոտքի ելան Սաղախլուի մահմեդականները, որոնք կտրեցին երկարուղային հաղորդակցությունը Երեւանի ու Թիֆլիսի միջեւ, նրանք բախանում ու կոտորում էին փախստական հայերին: Հարավից հայերին ջարդում էին բուրք ասկյարները, իսկ հյուսիսից մահմեդական խուժանը: Խուժնապ սկսվեց նաեւ Թիֆլիսում: Քաղաքում հայտարարվեց պաշարողական դրուրյուն: Թիֆլիսի շրջակա բարձունքներին դիրքեր փորվեցին, նշանակվեցին պահակագործեր: Հայերը, մասնավորապես արեւմտահայերը, զանգվածաբար փախչում էին Հյուսիսային Կովկաս, նրանք հասան մինչեւ Արձավիր: Հեռանում էին սայլերով, կառքերով, ավտոմեքենաներով, ֆուրգոններով, ձիերով, ավանակներով: Նրանց ունեցվածքը չնչին գներով անցնում էր այլազգիներին:

Հյուսիսային Կովկաս անցավ նաեւ Անվտանգության խորհրդի ամբողջ կազմը: Մայիսի 24-ին Թերեքի կառավարությունը փակեց գաղթականների ճամփան եւ նրանք մնացին Վրաստանի ճանապարհներին: Մայիսի 25-ին Դուշեթից հեռագրում են. «Հարյուր հազար քաղցած ու մերկ գաղթականներ հավաքվել են Մցխեթի, Դուշեթի միջեւ եւ ավելի հեռուները: Ոչ մի օգնություն եւ ոչ մի տեղից: Գաղթականների մեջ սկսվել են հիվանդութիւններ: Կան մահվան դեպքեր: Գիշերելու տեղ չկայ եւ ամենքը ցրտին գիշերում են բաց երկնքի տակ: Չկայ ոչ հաց, ոչ եռացրած ջուր... ամենքը թողնվում են ճակատագրի կամքին: Բժշկական օգնություն էլ չկայ: Մարդիկ հազարներով գնում են ոտքով, առանց օգնութեան որեւէ յոյսի... կացութիւնը յուսահատական է»¹²⁵:

Գեներալ Ղորղանյանն այն կարծիքին էր, որ այդ խայտառակ պարտության մեղավորը Անդրկովկասյան կոմիսարիատն էր: Նա գտնում էր, որ գեներալ Գարսեւի հրամանատարության տակ եղած 7000 վրացի եւ Նազարբեկյանի հրամանատարության տակ եղած 12.000 հայ զինվորներից կազմված բանակի անհաջողության պատճառը անկարգապահությունն էր, նաեւ այն, որ այդ բանակի թիկունքում գործում էին «Արեւելյան Կովկասի թաթարների ավագակախմբերը», ինչը հարկադրում էր հայ եւ վրաց զինվորներին լքել բանակն իրենց գյուղերը պաշտպանելու համար»¹²⁶:

Թուրքերը գոհունակություն արտահայտեցին Կարսի, Արդահանի եւ Բաթումի հարցի լուծման առթիվ, բայց ամենեւին էլ մտադիր չէին կատարել Բրեստի դաշնագրի 4-րդ հոդվածը: Այդ հոդվածով նրանք հանրաքվե անցկացնելու իրավունք չունեին: Հանրաքվեն պետք է անցկացնեին նշված մարզերը եւ արդյունքների հիման վրա կայացրած որոշումը համաձայնեց-

¹²⁵ Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 118:

¹²⁶ Wien KA AOK NA 18 Fabr. 5397, Konst-pcl, 28.06.1918, N16166:

նեին հարեւան պետությունների եւ, մասնավորապես, Թուրքիայի հետ: Մինչդեռ մտնելով այդ վարչական տարածքները, թուրքերը հանդես եկան հանրաքվեի նախապատրաստողի եւ անցկացնողի դերում ու այդ արեցին թուրքավարի՝ Կարսի անկումից չորս ամիս անց:

Մինչեւ հանրաքվեի անցկացումը տեղաբնակ ոչ մահմեդականները պարզապես ահաբեկչության ենթարկվեցին: Բոլոր ազդեցիկ անձինք ձերբակալվեցին ու գնդակահարվեցին: Դրա համար էլ ոչ մուսուլմանները բոյկոտեցին հանրաքվեն, իսկ մահմեդականները երբեք չէին թաքցրել, որ ձգտում էին լինել Թուրքիայի կազմում:

Հանրաքվեն հիմք ընդունելով Սուլթանը հրովարտակով Կարսը, Արդահանը, Բաթումը «հռչակեց հետգրավված»:

Օգոստոսի 12-ին Կարսի Հայ ազգային խորհուրդը գերմանացիներին ներկայացրեց հուշագիր այդ հանրաքվեի վերաբերյալ: Հուշագրում ասվում էր, որ հայ բնակչությանը փոքրամասնություն դարձնելու համար մեծ թվով հայերի հարկադրել էին արտագաղթել եւ այլ վայրերից ներմուծել մահմեդականներին¹²⁷:

Որ հանրաքվեն որեւէ քննադատության չէր դիմանում, համոզված էին նաեւ Բեռլինում, ոչ միայն համոզված էին, այլեւ այն միջոց դարձրեցին Թալեաթի վրա ճնշում գործադրելու: Գերմանական կառավարությունը գրեց. «Այս ընթացքում Թուրքիան իր մեջ է առել Կարսի, Արդահանի, Բաթումի շրջանները, այն էլ հանրաքվեով, որի լրջությունը կասկածելի է: Դաշնակիցները, որպես Բրեստի պայմանագիրը ստորագրած կողմեր, իրավունք ունեն ստուգելու ու գուցե եւ վիճարկելու հանրաքվեի վավերականությունը: Սակայն, ընդառաջելով մեր թուրք դաշնակցին, գուցե նպատակահարմար է հրաժարվել դրանից»¹²⁸:

Եվ ապա. «Լավ կլինի, որ մենք խուսափենք Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ միջնորդի դերից, թե չէ հնարավոր է ստիպված լինենք հավանություն տալու Թուրքիայի հողային ձեռքբերումներին հայերի, այսինքն՝ ռուսների հաշվին կամ Հայաստանը ճանաչենք որպես անկախ եւ բանակցելու ընդունակ երկիր»¹²⁹:

«Известия» թերթը հուլիսի 26-ին գրում է. «Քվեարկությունն այն երկրի սվինների ներկայությամբ ու դրանց սպառնալիքի տակ, որն ուզում է զավթել տվյալ մարզը, չի կարող կոչվել ո՛չ «ազատ», ո՛չ քվեարկող բնակչության «իսկական կամքի արտահայտություն»: Հանրաքվեն կատարվել է թուրքական ռազմական իշխանությունների կողմից, թուրքական սպաների հսկողության տակ... Քվեարկությունը եղել է բաց»: Քվեարկությանը, ըստ թուրքական քա-

¹²⁷ Wien HHSTA PAX 157, Tiflis, 12.08.1918, N10/P.C.:

¹²⁸ Ն.տ. Berlin, 02.09.1918, N101/P.A.B.:

¹²⁹ Ն.տ.:

րողությունը հրապարակված տվյալների, «մասնակցել են՝ 87530 հոգի, որից Թուրքիային միանալու օգտին՝ 84124 հոգի: Մինչդեռ 1917-ին Կարսի եւ Արդահանի մարզերում բնակվում էր 400.000 մարդ՝ հիմնականում հայեր: Իրականում քվեարկությանը մասնակցել էր 11.000 մարդ, որից բեր՝ 8500 հոգի¹³⁰: Թուրք լրագրողների խորհրդաժողովում Թուրքիայի վարչապետ Սարաջօղլուի 1946թ. հունվարի 6-ի ելույթի կապակցությամբ Վ. Խվոստովը գրեց. «Պարոն Սարաջօղլուի ճառը մեր ուշադրությունը գրավեց որպես հետաքրքիր ֆեյնոմեն: Դեռ երբեք միջազգային իրավունքի տարեգրություններում բնիկ բնակչության գլխավին ոչնչացումը չի բերվել իբրեւ պատճառաբանություն՝ հիմնավորելու այդ ոճրագործության հանցավորի իրավունքը ոչնչացվածների տարածքների նկատմամբ»¹³¹:

«Известия» բերրը վերը նշված հոդվածում, որն անվանված էր «Թուրքական դիվանագիտության խորամանկությունն Անդրկովկասում. հանրաքվեի նենգափոխումը», ծաղրելով այն, ինչ հանրաքվեի անվան տակ կատարվեց այդ մարզերում, գրում է. «Միայն մնում է զարմանալ, թե որտեղից հանդես եկան 2000 խիզախներ, որոնք թուրքական բռնազավթիչների ներկայությամբ քվեարկել են Թուրքիայի դեմ»:

Յոն Կրեւը նույնպես այն համոզմանն էր, որ անցկացված հանրաքվեն «չի համապատասխանում Բրեստ Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածին»¹³²:

Այդ հանրաքվեի դեմ 1921թ. հունվարի 8-ին բողոքեց նաեւ Խորհրդային Հայաստանի կառավարությունը. «Ձեր կառավարության վկայակոչումը, թե թուրքական զորքերի բռնակցված շրջաններում վաղօրոք անցկացված հանրաքվեի հետեւանքով այդ շրջանների բնակչությունն արտահայտվել է Թուրքիային միանալու օգտին, քիչ համոզեցուցիչ է, որովհետեւ մեզ հանրաքվե կարող էր անցկացվել միայն ռազմական բռնակցման իրավիճակում՝ միակողմանի ակտի միջոցով... Հայաստանի ԽՍՀ կառավարությունն անհրաժեշտ է համարում նշել, որ հանրաքվեն, հանդիսանալով տնտեսական ու տարածքային բնույթի այլի-այլ պայմաններով վեճերի լուծման սոսկ եղանակներից մեկը, միշտ չէ, որ կարող է դիտվել տարածքային վեճի լուծման միակ եղանակ: Այսպես, այն պայմանները, որ ստեղծվել են Հայաստանի եւ Թուրքիայի սահմանակից շրջաններում, աշխարհամարտի եւ հայ բնակչության նկատմամբ վերջին տարիներին սուրբանական կառավարության ձեռնարկած հրեշավոր հալածանքների հետեւանքով, հանրաքվեն շատ բաներում զրկված է իր բնականոն-քաղաքական, ինչպես նաեւ կիրառման գործնական նշանակությունից»¹³³:

¹³⁰ «Սովետական Հայաստան», 03.02.1946:

¹³¹ "Новое время", 01.02.1946:

¹³² ДВП СССР, с. 378:

¹³³ «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ...», էջ 459:

Մեջբերումն ակնհայտորեն ցուցադրում է Երեսանի ոչ թե անկարողությունը, այլ չթույլատրվածությունը տալու Կարսի հանրաքվեի սկզբունքային գնահատականը, գոնե այն մակարդակով, ինչ մակարդակով այդ արեցին Մոսկվան կամ Գերմանիայի ներկայացուցիչները:

Խորհրդային կառավարությունը թուրքական «հանրաքվեն» ապօրինի համարեց, դատապարտեց Կ. Պոլսի կամայականությունները, հայտարարեց, թե Կարսի, Արդահանի եւ Բաթումի պատկանելության եւ կարգավիճակի խնդիրը մնում է չլուծված, բայց թուրքերն ուշադրություն չդարձրեցին: Եվ ոչ միայն: Որոշվեց Բրեստի գծած սահմաններով չբավարարվել եւ. առանց ժամանակ կորցնելու, շարժվել դեպի Անդրկովկասի խորքերը:

3. ՍԱՄՆՈ ԼԵՈՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳԱՇՏ

Թուրքերը տեսնելով, որ ռուսական բանակը քայքայվում է, սկսեցին եռանդուն գործողությունների անցնել ռազմաճակատի բոլոր մասերում, այդ թվում, նաեւ Տարոնում: Նրանք մի քանի անգամ հարձակվեցին Մուլուխի վրա, բայց հետ չարտվեցին: Թուրքերը ձախողվեցին նաեւ Ախլաթից Վան ուղղությամբ:

Փետրվարի 26-ին Անդրամիկը Տարոնի զորքերին հրամայում է նահանջել Բասեն, սակայն Խնուսի հրամանատարությունը ժողովրդի հետ մեկնում է Ալաշկերտ: Նույն օրը Մուլուխի դիրքերը թողնում է նաեւ սասունցիների գունդը եւ շարժվում դեպի Խնուս: Նախ այրում են զինապահեստները, ավերում քաղաքն ու բնակչության հետ անցնում են Ալաշկերտի Ղարաքիլիսա, որտեղ հավարվել էր 60-70.000 փախստական:

1918թ. մարտին Բագրեվանդի դաշտում նրանք բախվում են թուրքական թանակի հետ եւ թշնամուն մեխում տեղում: Սարիղամիշի անկումից հետո հրաման ստացվեց գնալ Կարս կամ Արարատյան դաշտ: Հայերը շարժվեցին դեպի արեւելք: Շուտով ստացվեց Կարսի անկման լուրը եւ նրանք հարկադրված եղան Բարդուսյան լեռնաշղթան կտրելով անցնել Արարատյան դաշտ:

Կ. Սասունին իր «Տանկահայաստանը ռուսական տիրապետության տակ» գրքում այդ իրադարձությունները ներկայացնում է հետեւյալ կերպ. «Կարսի անկումն է եղավ ժողովուրդն ու զինեալ ուժերն ամփոփուեցան Տիատինի եւ Մուսունին շրջանին, ուրկե եկան ու անցան Վասպուրականն հասնողները: Տակավին Արարատեան լեռնաշղթան չանցած Տարոնի եւ Ալաշկերտի ժողովրդական ղեկավարները... վերջին խորհրդակցութիւն մը ունեցան... որոշուեցավ ժողովրդի հետ մնալ եւ ղեկավարել գաղթաշարժը, դառնալ տեսակ մը շարժական կառավարութիւն... եւ ընթացք տալ 50.000 ավելի ժողովրդական

զանգուածի մը շարժումներուն: Հիմնական որոշում մը՝ զենքի ուժով եւ սեփական կազմակերպութեամբ ապրուստ ճարելու եւ ֆիզիկական գոյութիւնը պահպանելու մտայնութիւնը, ընդհանուր սեփականութիւն դարձավ...

Պարզ տրամաբանութիւն մը ունէր դեպի Արարատեան Հայաստան դիմող տանկահայ զինուած զանգուածը... եթէ թուրքը զենքի բռնի, ուժով դուրս կը բշե հիմնավորը հայրենիքեն ու ինքը Արարատը անցնելէն ետք, անհող ու անձածր բազմութիւն մը պիտի դառնայ, իր մարդկային սրբազան իրավունքն է գրավել զենքի ուժով թաթարական հողերը եւ բնակիլ հոն, որպէս իր նոր հայրենիքը»: Եվ նրանք ապրիլի վերջերին «Արարատեան բարձունքներէն ձիւնէ հիւսի մը պէս վար կ'իջնէին դեպի Սուրմալու: Այս հսկայ բազմութեան հետ... հարիւր հազարի հասնող մեծ ու փոքր անասուններու հոտեր, բռնած ամբողջ դաշտի լայնութիւնը, ամեն ինչ ավերող մարախի պէս, ալիք առ ալիք կառաջանար»: Այս զանգվածը Արեւելյան Հայաստանը չափեց լայնքով ու երկայնքով. «զալարվեցավ վտանգներու ցանցին մեջ, արիւնոտեցավ ու արիւնեց, բայց գորացավ ու արմատ ձգեց նորակազմ հայրենիքի հողին խորքը եւ հայկական դիմագիծ տուավ անոր»: Դա գաղթ էր զինված ժողովրդի:

Նրանց մի մասը զնայ Էջմիածին եւ սնունդ էր ստանում: Համաճարակ էր եւ «գաղթական ժողովրդի մեկ մասը կը հալէր նոյնիսկ հայրենի հողին վրայ», իսկ ուրքեր «փրենց զենքով ու կորովով ապրեցան, գաղթական ըլլալէ դադարեցան. Չանոնը կարելի էր անուանել ցեղապետութիւն մը, երկիր փնտռող զինեալ ժողովուրդ մը, պատերազմիկներու արտակարգ բանակ մը... այս հեղեղը անցավ Սուրմալուի թաթարական գիւղերէն եւ ուղղակի սրբեց զանոնք փոթորկալի հովի մը պէս»: Հայաստանում աղմուկ բարձրացավ՝ «Տարոնցիները գիւղերը ավերեցին... թաթարական գիւղերը կը կոտորեն... ամեն ինչ կողոպտեցին»¹³⁴:

1918թ. մայիսին 70.000 տարոնցիներ եւ սասունցիներ կուտակվել էին Սարդարապատի շրջանում: Նրանց բնակվելու տեղ էր հարկավոր: Ներկայիս Թալինի շրջանի գյուղերի ճնշող մեծամասնությունում, մասնավորապէս Արագածի փեշերին գտնվող գյուղերում, հիմնականում թուրքեր էին բնակվում: Այդ հատվածը կազմում էր թաթարաբնակ այն տարածքային երկար շերտի, որն սկսվելով Վայոց ձորից ձգվում էր մինչեւ Լոռի եւ մեծ վտանգ էր ներկայացնում Հայաստանի համար:

Սասունցիների մարտական ջոկատները մասնակցեցին նաեւ հայաստանաբնակ թուրք-թաթարական ապստամբությունների ճնշմանը եւ մեծ դեր խաղացին հայության անվտանգության ապահովման եւ գաղթականության վերաբնակեցման կազմակերպման գործում: Նրանք մասնակցեցին Չանգեզուրի կռիվներին, հնագանդեցրեցին մի քանի թաթարական շրջանների, կովեցիմ

¹³⁴ Սասունի Կ., Տարոնի պատմութիւն, էջ 1071:

Դարալագյազում, ազատագրեցին Ջղնի ձորն ու Սիլիտերեն: Նրանք մեծ ներդրում ունեցան ՀՀ հայացման գործում¹³⁵:

Ղազար Քոչարյանի ջոկատը Գողթն գավառում կազմակերպեց ադրբեջանցիների ջարդ ի պատասխան վերջիններիս կողմից Ագուլխի հայության կոտորածի¹³⁶:

Թալինի թաթարաբնակ գյուղերը պարպելու մասին է պատմում Արմեն Սասունին:

Տարբեր կարծիքներ կային. բայց սասունցիների ղեկավարների ժողովը որոշեց, որ «Սասնոյ հեծելազունդի առաջնորդութեամբ Տարոնի ժողովուրդը տեղավորուի Արագածի թաթարական, պարսկական եւ քրդական գիւղերը, որոնք պիտի գրավուեն Սասնոյ հեծելազունդի զինագորութեամբ, իսկ Բուլանլիսի, Մանազկերտի ժողովուրդը, որոնց մեծ մասը սայլեր ու շատ անասուններ ունենին, պետք է շարժվի դեպի Ապարան»:

Սասնո գունդը, որն ըստ Կ. Սասունու կազմված էր 1002, իսկ Սասունցի Մուշեղի վկայությամբ՝ 500 հոգուց, մայիսի 5-ին բռնեց Արագածի ճամփան: Մնբատը խորհուրդ է տալիս հետ կանգնել, քանի որ երկու անգամ հայ բանակը թնդանոթների հետ փորձել է գրավել Թալինի բերդը, բայց անհաջողության է մատնվել: Հետ կանգնել, բայց որտե՞ղ տեղավորել 70.000 տարոնցիներին: Սասունցիները որոշում են շարժվել Թալինի վրա: Նրանց գունդը գիշերով առաջանում է եւ առավոտյան հասնում է բերդից 1500մ հեռավորություն ունեցող մի վայր, ապա բաժանվում խմբերի եւ երեք ուղղություններով գրոհում է եւ բերդի դռները ջարդելով ներս լցվում, բերդը մաքրում թաթարներից ու թուրքերից: Հաջորդ օրը դատարկվեցին Արագածի լանջերի բոլոր թաթարաբնակ գյուղերը: Դրանցում հաստատվեցին սասունցիները: Այս գործողությունը վիրխարի նշանակություն ունեցավ նաեւ ռազմա-պաշտպանական առումով, որովհետեւ ամրացրեց հայկական բանակի թիկունքը¹³⁷:

Մի քանի օր անց սասունցիներն ընկնեցին նաեւ Աշտարակի թաթարական գյուղերի դիմադրությունը եւ Արագածի այդ լանջը եւս ազատեցին մահմեդական տարրերից:

Բաթումի պայմանագրի կնքման հաջորդ օրը սասունցիներն ու տարոնցիները բռնում են Նոր Բայազետի ճամփան: Տասնյակ հազարավոր մարդ Երեւանից, Քանաքեռից եւ Եղվարդից Սեւանի լեռներով շարժվում է Նոր Բայազետ-Դարալագյազ-Նախիջեւան: Նրանց մի մասը միանում է Անդրանիկի խմբին եւ շարժվում դեպի Սիսիան, Գորիս, դառնում տեղի Ազգային խորհրդի կռվող ուժը:

¹³⁵ Սասունի Կ., Թրքահայաստանը..., էջ 213-221:

¹³⁶ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 337-340:

¹³⁷ Սասունի Կ., Տարոնի պատմութիւն, էջ 1070-1071:

Սասունցիների այդ քայլարշավը, որի վերջնագիծը հանդիսանալու էին Վանն ու Տարսնը հետեւանք էր մի շարք գործոնների: Նախ, Երեւանի նահանգում կյանքի տարրական պայմանների, այդ թվում նաեւ սննդամթերքի, չգոյություն ունեւորելու, Անդրանիկի անձի հետ նրանց կապվածությամբ, երրորդ տարոնցին համոզված էր, որ ինքն ի գորու էր հարատեւել միայն Երկրում:

Հունիսի 10-ին Ալաշկերտի կոմիսար Գվոգոյը տեղեկացրեց. «Կարաքիլիսան բողոնում է թշնամու հարձակումից առաջ դատարկված քաղաքի տպավորություն: Ծակատից հեռացող վերջին գունդն իր հետ տանում է շրջանի բոլոր հիմնարկությունները, անգամ փոստն ու հեռագիրը: Հրամանատարական կազմ չկա, կան միայն 150 անկանոն հեծյալներ, տեղական բնակչությունն է պահպանում պարենի պահեստները, բանակային ունեցվածքը, հրետանու, ինժեներական եւ ռազմամթերքի պահեստներն ու վառոդարանները: Ծանապարհներին եղած պահեստները վերացված են: Տեղական ուժերով մի կերպ պահվում է հեռագրական կապը... Մենք անգոր ենք տեղավորել բողոնված հարստությունները... Քրդերը սկսել են հարձակումները եւ թալանը... Հեռագրական կապը Երեւանի հետ կտրված է»¹³⁸:

Բարվի «Знамя труда»-ն գրեց. «Ուլուխանլուից մինչեւ Ալեքսանդրապոլ եւ Աղստաֆայից մինչեւ Քյուրդասիր կանգնած են գնացքակազմեր բեռնված թալանված բարիքով: Հեռանալով զավթած վայրերից, թուրքերն իրենց հետ տանում են պատուհանի շրջանակներ, դռներ, առաստաղ, իսկ վառարանները ջարդում են, գիտե՞նալով, որ այդպիսով իրենց բնակավայրերը վերադարձողներին մատնում են մահվան ցրտահարությունից»¹³⁹:

Վ. Լանկլուա ազգանունով մի եվրոպացի պատմում է, որ 1919թ. Մանազկերտում հաստատվել էր քուրդ սպայի գերիշխանության թագավորական իրավունքի եւ շքի ասիական բոլոր կանոններով: Ուրիշ ցեղերի հարձակման վտանգի պատճառով սպան որոշեց հեռանալ Մանազկերտից, բայց «մեծ դժվարութիւն ունեցավ (բերդի) դռնն դուրս ելլալու հայերու մեծ ամբոխին պատճառով, որոնք ներս կը լեցունէին ապահովութեան համար: Այնքան մեծ էր դուրսը քիւրտերու վախը, որ իբր թե պաշարուած բերդ մը կերեւար, հազարին հարիւր կենդանիներ, մարդ եւ անասուն, խռնուած էին փոքր դրան մեջ, այնպիսի աղմուկով ու հրմշտուքով, որ տեսարանը չէր կարելի նկարագրել: Մարդիկ, կիներ, երեխաներ, զոմեշներ, էշեր, բոլորն ալ խառնուած այլացեղ զանգուածի մը մեջ, մագլցող եւ ծեծկրտվող, վիճելով եւ ճգնելով, մինչեւ այն աստիճան, որ կարծես նույնիսկ բերդին կողերը տեղի կուտային անոնց»¹⁴⁰:

¹³⁸ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 55:

¹³⁹ "Знамя труда", 12.12.1918:

¹⁴⁰ «Տարոնի արժիվ», 1950թ. N31, էջ 109-110:

Մի հայ կին զգալով, որ ինքը ներս մտնել չի կարողանում, իր փոքր երեխային դրեց ուրիշի ուսերի վրա: Այդ մորը երեկոյան «օթոցի վրայ ներս բերեցին, ըստ երեսոյթի, խաղաղութեան մեջ մեռնելու համար»:

Ներս մտած հայերը երեկոյան իրենց ղեկավար ընտրեցին: Կար ընդամենը յոթ հրացան, որ վստահվեց ամենաքաջերին: Մյուսները «զինուած կին մանգաղներով եւ բիրերով»:

Քրդերն «այնքան վայրագ էին, որ հայ ընտանիք մը... անոնց կողմն յարձակման ենթարկուեցավ, մարդ մը հրացանազարկ ըրին, որ անկեց ի վեր մեռավ, եւ ուրիշի մը ականջները կտրեցին, որովհետեւ քիչ ավար գտան»¹⁴¹:

Հայերն «իրենց փոքր, գետնափոր խրճիթներուն մեջ մեծ թշուառութեան մեջ կերեւան»: Այնուհետեւ հուշագիրը նշում է. «Ես գտայ բաղնիքները, զնտանները, պահեստները եւ այլն, եւ իսկապես, ավերակներն ոմանք այնքան պատկառալից էին, որ ցոյց կուտային առաջնակարգ ճարտարապետական ճաշակ: Ես ասիկա վերագրեցի Հայոց ժամանակին նախքան այս երկրին քիրքմեններու նուաճուիլը, քանի որ գտայ բազմաթիվ քարե տապաններ, խաչագարդ, եւ ուրիշ քրիստոնեական հավատքի նշաններով, դեռ շատ որոշ անոնց վրայ»¹⁴²: Այդ հայերը միայն մանագլկերոցիներ չէին, այլեւ զանազան վայրերից եկած գաղթականներ՝ մոտ 3000 հոգի:

«Տարբեր գիւղերէ մարդիկ սկսան վիճել,- պատմում է նույն ականատեսը,- արջառի ուտելիքի նման ոչինչ բանի մը համար, եւ շուտով բիրերը գործի անցան, ամենազուարճալի տարբերակներով... Կիները սկսան պոռալ, արջառը բառաչել... ստիպուեցանք անոնց վրայ կրակել, եւ ատիկա ցանկացուած արդիւնքը ունեցավ. ամբոխը ցրուեցավ»¹⁴³: Լանկլուան 60 հայի ճաշի է կանչում, եւ հայերը «շատ քաղաքավարի կերպով բերանեցին, եւ ինչ որ ինձի համար ամենն հաճելին եղավ իրենց երգն էր, որ ճաշն վերջ իրենց թոքերուն բոլոր ուժով երգեցին»¹⁴⁴:

Նման տեսարանների հնարավոր էր հանդիպել Արեւմտյան Հայաստանի շատ վայրերում: Այդ եղեռնից վերապրածներն էին, որ ռուսների կողմից Արեւմտյան Հայաստանի գրավումից հետո վերադարձել էին այնտեղ, իսկ ապա ընկել թափառական կյանքի հորձանքի մեջ:

Այս օրինակը նույնպես վկայում է, որ հայերի հեռանալը Արեւմտյան Հայաստանից 1918թ. չավարտվեց: Այդ թվականից հետո էլ հայկական վիլայերների տարբեր շրջաններում առաջացան հայերի կուտակումներ, տեղաշարժեր, կռիվներ ու ջարդեր: Դրանից օգտվեցին քրդերը եւ դարձան դրոյթյան

¹⁴¹ «Տարոնի արժիվ», 1950թ. N31, էջ 109-110:

¹⁴² «Տարոնի արժիվ», 1950թ. N31, էջ 111:

¹⁴³ Ն.տ., էջ 112-113:

¹⁴⁴ Ն.տ.:

տները: Դ-ա, իհարկե, երկրամասին խաղաղություն չբերեց, որովհետև ռուսական զորքերի կողմից լքված գեներոլ զինված քրդերի հարձակումները անմախաղեպ ծավալներ ստացան:

Պատերազմից Ռուսաստանի դուրս գալը եւ ռուսական բանակի հեռանալը Իրանից գրգռեց թե Անգլիայի եւ թե Թուրքիայի ախորժակը, չնայած այդ երկրները միմյանց թշնամի էին, բայց երկուսն էլ շտապում էին հասնել Քարու, ինչի համար Հյուսիսային Իրանը լավ ելման դիրք էր:

Ապրիլին թուրքական զորքերը մտան Հյուսիսային Պարսկաստան եւ շարժվեցին դեպի Անդրկովկաս: «Թուրք զավթիչներին դիմադրություն ցույց տալիս էին միայն հայերի եւ ասորացիների զինված ջոկատները, ինչն, իհարկե, բավարար չէր թուրքական հարձակումը խափանելու համար»¹⁴⁵: 1918թ. կեսերին Հյուսիս-արեւմտյան Իրանը բաժանվեց երկու մասի. արեւմտյան մասը բռնազավթեց թուրքական բանակը, մասամբ նաեւ պարսկական մարտական ջոկատների օգնությամբ եւ արեւելյան մասը, որ բռնազավթվեց Անգլիայի կողմից: Չնայած թուրքերի դեմ կռվող կանոնավոր բանակ չկար՝ ռուսները հեռացել էին, իսկ պարսիկները չունեին, այնուամենայնիվ թուրքերը հեշտությամբ չէին առաջանում, նրանց համառ դիմադրություն էին ցույց տալիս նորից հայերն ու ասորիները:

Հաջողվեց քրդերին ու ասորիներին իրար դեմ հանել: Շեքակի քրդերի առաջնորդ Սըմկոն սպանեց ասորական առաջնորդ Մար-Շիմոնին, ինչը տեւական փոխվրեժխնդրության մղեց այդ ժողովուրդներին¹⁴⁶: Թուրքերին հաջողվեց իրենց կողմը գրավել մի քանի քուրդ ազդեցիկ առաջնորդների: Թերեւս դա էլ պատճառ դարձավ, որ 1918-ի ամռան վերջերին թուրքերը կարողացան գրավել ամբողջ Իրանական Ադրբեջանն ու Իրանական Քրդստանը: Քուրդ ցեղապետներին սիրաշահում էին նաեւ անգլիացիները: Նրանք ձեւավորեցին քրդական մարտական ջոկատներ: Անգլիացիները քրդերին համոզում էին համերաշխվել հայերի հետ, հավաստիացնելով, որ պատերազմից հետո ազատագրվելու էին թրքական լծից¹⁴⁷:

1918թ. հուլիսին Իրանական Քրդստանն անկախ հայտարարվեց Անգլիայի հովանու տակ եւ սկսվեց բանակցություններ անգլիական ներկայացուցիչների հետ «պատրաստակամություն հայտնելով աջակցելու հայկական ծանր հարցի լուծմանը»¹⁴⁸: Եվրոպայում բանակցություններ էին գնում նաեւ Հարավային Քրդստանն անկախ հռչակելու խնդրի շուրջ:

¹⁴⁵ Миротников Л., Английская экспансия в Иране. 1914-1920. М., 1961, тл. 1:

¹⁴⁶ Матвеев К., Ассирийцы и ассирийская проблема в новое и новейшее время. М., 1979, с. 92-106:

¹⁴⁷ АВВР, ф. НАИ, сер. А., д. 39:

¹⁴⁸ Ն.տ. Պ., 147:

Վրաց մենչեիկներին ինչ-որ չափով թուրքական հարձակումը ձեռնառու էր, որովհետև, ինչպես 1919թ. սեպտեմբերի 4-ին խոստովանեց Գեգեչկորին, այն «կարվածահար էր» անելու «Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը»¹⁴⁹:

Իսկ հայ գործիչները, բնականաբար, տրամագծորեն հակառակ դիրքորոշումն ունեին: Դեռ ավելին, Արամ Մանուկյանը մտահոգություն արտահայտեց. «Վախենում եմ՝ տարվենք թուրքաց Հայաստանով եւ Կովկասը կորցնենք»¹⁵⁰: Այդ մտահոգությունն ավելի քան հիմքեր ուներ: Էնվերը 1918թ. փետրվարի 27-ին գաղտնի հրաման արձակեց՝ ոչնչացնել հայ ցեղը: «Թեև գեներալ Վեհիբը հավաստիացնում էր, որ նրա զորքերը թշնամական մտադրություններ չունենին... եւ իրենց հարձակողական գործողության իրական նպատակը Անդրկովկասի մեծ մասի վրա թուրքական հսկողության հաստատումն էր», - գրում է Տրուսպենները¹⁵¹:

«Այդ ահեղ վտանգի... դեմ հանդիման Անդրկովկասյան սեյմը եւ ազգային խորհուրդները խղճուկ պատկեր էին ներկայացնում, - պատմում է ժամանակակիցը, - խճճվելով ու սայթաքելով ամեն քայլին, դողալով մոտեցող վտանգից, Անդրկովկասյան կառավարությունը չկարողացավ կազմակերպել երկրամասի պաշտպանությունը, չնայած ռուսական բանակի թողած զգալի զինամթերքներին եւ, ինչպես հետո պարզվեց, թուրքական զինված ուժերի չնչինությանը»¹⁵²:

Իսկ թուրքական զորքերը ժամանակ չէին կորցնում, նրանք արագ առաջանում էին: Թուրքիստական արբեցումը նորից տիրապետող էր դառնում: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանը 1918թ. մարտի 17-ին տեղեկագրեց, որ թուրքական «բոլոր ազդեցիկ շրջաններն այս պահին ուղղակի արբեցած են հաղթության գիտակցությամբ, ազգայնամոլությամբ եւ համիլանությամբ»: Հ. Տաշյանի կարծիքով «այդպիսի ոգի մը պիտի չսանձվեր դյուրավ, մանավանդ, երբ ռուս բանակները քաշված էին հայ հողեն»¹⁵³:

Հայ ջոջերը միայն մի անգամ ճիշտ եզրահանգում ունեցան, երբ Ազգային խորհուրդը որոշեց մնալ Ալեքսանդրապոլում եւ կազմակերպեց քաղաքի պաշտպանությունը ու նաեւ ուշադրություն դարձրեց այն իրողությանը, որ բանակի գլուխն էին կանգնած «հին բյուրոկրատ, հասարակական ջիղ չունեցող զինվորականներ եւ ծառայությունից խուսափողներ», որ բանակի գեներալը վաճառվում էին, որ «հարուստների տղաները հովանավորչության շնորհիվ

¹⁴⁹ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 27:

¹⁵⁰ ՀՀ ԿՀԿՊԿԱ, Հայ Ազգային խորհրդի արձանագրություններ, 1918թ., p. 76:

¹⁵¹ ԲՀԱ, 1970, N2:

¹⁵² Мелик-Каракозов Г., նշվ. աշխ.:

¹⁵³ Տաշեան Հ., Հայ ազգային տարագրութիւնը գերմանական վավերագիրներուն համեմատ, մաս Ա, Վիեննա, 1921, էջ 37:

հետ էին կանչվում պահեստի գնդերից գրագետի անվան տակ»¹⁵⁴։

Քարոզչական բնույթի ոչ փոքրաթիվ աշխատություններում արտահայտված կարծիքը, թե ռազմաճակատում հայկական զորքերի պարտությունը նաև հետեւանք էր բոլշեիկյան հեղափոխության ազդեցության, իրականության հետ միայն մասնակի առնչություն ունի։ Մարշալ Բաղրամյանը, որ այդ ժամանակ Կարսում էր, իր հուշերում գրում է, թե ինքը եւ տեղում եղած մյուս բանակայինները շատ քիչ բան գիտեին Ռուսաստանում տիրող վիճակի մասին, որ իրենք բոլորը «լի էին վճռակամությամբ ամեն կերպ, կյանքի գնով փրկել հարազատ Հայաստանը...»¹⁵⁵։ Նա նաև գրում է բացասական այն մեծ ազդեցության մասին, որ ունեցավ Բրեստի դաշնագիրը հայկական բանակի տրամադրության վրա, իրենք հարկադրված էին «կատարել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանները։ Մյուս կողմից, քանի որ վատ գիտեին աշխարհի անցողարձի մասին եւ ղեկավարվելով ազգային շահերով՝ պաշտպանել հայրենի հողը... շարունակում էին դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին... այսինքն ձեւականորեն չընդունեցին Բրեստի դաշնագիրը»¹⁵⁶։

Ռազմաճակատում կռվող հայն, իսկապես, ընդհանուր իրավիճակի մասին տեղեկատվություն չունեն, նրան անհասկանալի էր հայկական զորքերի պարտությունների շարանի պատճառը։ Դրա հետեւանքով ոչ քիչ դեպքերում ծայրահեղ կարծիքներ էին արտահայտվում։ Երզնկայից նահանջելուց հետո Մուրադը ասաց. «Ա. Ջամայանը պատճառ դարձավ 6000 հոգու կորստյան»¹⁵⁷։ Տարօրինակ չհամաձայնեցվածությունը նույնպես աղետներ գործեց։ Երզնկայի նահանջի ժամանակ Տրապիզոն-Երզնկա զծի վրա դեռ մի քանի հազար ռուս զինվոր կար, որոնց հետ հայկական ուժերը կապ չունեին։ 1918թ. սկզբին արդեն Էրզրում-Վասպուրական հատվածում 22.000 հայ զորք կար։ Սակայն այդ զորքը դեռևս կանոնավոր բանակ չէր դարձել եւ, ինչպես գրում է ռուս պատմաբան Ջ. Գոգոլը. «Անդրանիկի հայկական չեթների մանր ջոկատները չէին կարող կանգնեցնել թուրքական հարձակումը»։

Ազգային խորհրդի 1917թ. դեկտեմբերի 15-ի նիստում Անդրանիկը, նկատի ունենալով ռազմաճակատի քայքայվելը, տարակուսեց. «Ես դեռ մտածում եմ, թե գուցե պետք է թուրքերի հետ հաշտվել, եթե ճակատն այդպես քայքայվի»¹⁵⁸։

Ջ. Գոգոլեի խոսքերով «Կարսի մարզի հայ եւ ռուս բնակչությունը թողնվել բախտի բնահաճույքին» եւ «թուրքական զորքերը կազմակերպե-

¹⁵⁴ ՀՀ ԿՀԿՊԿԱ, Հայոց Ազգային խորհրդի արձանագրություններ, ք. 198։

¹⁵⁵ Баграмян И., 674. աշխ., с. 54։

¹⁵⁶ Ն.տ.։

¹⁵⁷ Ամիրխանյան Ա., Ռուս եւ թուրք զինադադար, Ֆրեզնո, 1921, էջ 96։

¹⁵⁸ ՀՀ ԿՀԿՊԿԱ, Հայոց Ազգային խորհրդի արձանագրություններ, 1917-1918թ.թ.։

ցին քրիստոնյաների, առանձնապես բնակչության հայ հատվածի, սարսափելի կոտորած»¹⁵⁹։

Ազգային խորհուրդը, որպեսզի «թուրքերին չզրգռի» ղեկտեմբերի կեսերին մերժեց թուրքահայերի դիվիզիա կազմավորելու առաջարկը։ Կանոնավոր գործառնաբեր ստեղծելու փոխարեն «ցանկալի համարվեց... կազմել Հայաստանի զանազան վայրերում երկրապահ անջատ գնդեր»¹⁶⁰։ Դրան Անդրանիկը պատասխանեց. «Թուրքերը պիտի գրգռվեն թուրքահայ գործառնաբեր կազմության համար, դրա պատճառը ձեռն ու ամունը չեն, այլ էությունը, այն, որ հայերը ուժ են կազմում։ Այդ պատճառով չարժե հապաղել. ընդհակառակը, որքան արագ կազմակերպենք, այնքան ավելի ապահով կլինենք... դավաճանություն կլինեն մանր մտահոգությունների համար զոհել մեր պատմական դատը»¹⁶¹։

Սակայն նաև անհնար է չնշել, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո անվերապահ խաղաղության անհրաժեշտության վերաբերյալ բոլշեիկյան կոչերը լայն արձագանք ունեցան տեւական պատերազմից հոգնած ու հյուծված զինվորականության վրա եւ արագացրեց զանգվածային «տունդարձը»։ Ռազմաճակատը մերկացվեց։ Չեռնացան փոքր թվով ռուսական սպաներ, այդ ռազմաճակատում կռվող հայեր (նրանց մեծամասնությունը գտնվում էր արեւմտյան ռազմաճակատում) եւ որոշ թվով արեւմտահայ աշխարհագորայիններ։ Հայերը թուրքերին լուրջ, իսկ շատ հատվածներում, ընդհանրապես, դիմադրություն ցույց չտվեցին։

Նույն բանը կրկնվեց 1,5 տարի անց 1920 թվին։ Ինչո՞ւ։ Հայ որոշ պատմաբաններ ՀՀ դաշնակցության օրինանքով պատճառը համարում են բոլշեիկներին, թե նրանց հակահայկական եւ քեմալամետ քարոզչությունը քայքայեց, բարոյագրկեց հայկական բանակը։ Ընդունենք, որ 1920թ. բոլշեիկները, իրոք թշնամությամբ էին վերաբերում ՀՀ դաշնակցությանն ու նրա կառավարությանը, ապա 1918-ին դեռ դաշնակցական կառավարություն չկար եւ թուրքերի հետ Խորհրդային Ռուսաստանի հարաբերություններն ամենեւին էլ բարիդրացիական չէին, ո՞վ բարոյալքեց հայոց բանակը։ Այո, 1920թ. մայիսից հետո Ռուսաստանի խորհրդային կառավարությունը կոշտ կեցվածք դրսևորեց Հայաստանի հանդեպ, այո, այդ կեցվածքը դեր խաղաց թե 1920թ. ռուս-թուրքական պատերազմում, թե Արեւելի ժողովուրդների համագումարում, երբ Ջինովելի եւ Ռադեկի «աննկատ» ջանքերով Հայաստանը մեկուսացվեց, իսկ թուրքերն ու աղբրեջանցիները նրան կոչեցին «իմպերիալիստական», մինչդեռ

¹⁵⁹ Гоголев З., Советско-турецкие отношения в 1918-1920. См. "Ученые записки Якутского педагогического института", вып. II, 1950։

¹⁶⁰ ՀՀ ԿՀԿՊԿԱ, Հայոց Ազգային խորհրդի արձանագրություններ, 1918թ., ք. 98։

¹⁶¹ Ն.տ. Դ. 102։

1918թ. նման որևէ գործոն գոյություն չունենալը: Ընդհակառակը, խորհրդային կառավարությունն ամեն ինչ անում էր Թուրքիայի գիշատիչ ֆիտրաթակը փչացնելու համար:

1918-ին հայերն ինչո՞ւ լքեցին ռազմաճակատը, ինչո՞ւ առանց կռվի թուրքերին բողեցին ոչ միայն Արեւմտյան Հայաստանն, այլև Արեւելյան Հայաստանի զգալի մասը: Գուցե սամանյան բանակը մեծաթիվ էր, հզոր: Ոչ: Այդ բանակը քայքայված էր, վատ զինված, հուսալքված:

Ուժեղ չէր նաև Անդրկովկասյան բանակը, բայց այդ բանակի կորիզը հայերն էին, յարադանից մագապուրծ, արյունն աչքերն առած արեւմտահայերը, ցարական բանակի հազարից ավելի գրագետ, փորձառու հայ սպայությունն էր, որոնցից ավելի քան տասը առաջնակարգ կարողությունների ու հմտությունների տեր բարձր չին ունեցող հրամկազմից էր: Հայկական բանակը ռազմամթերքի պակաս չունենալով:

Հայերը, ռուսների հեռանալուց հետո, թուրքերին համառ դիմադրություն ցույց տվեցին Երզնկայի շրջանում, Տարոնում, Վանում, մի քանի ամիս անց նաև Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում, բայց բացարձակապես չդիմադրեցին սկսած Էրզրումից մինչև Ալեքսանդրապոլ: Ստացվեց մի իրավիճակ, երբ նրանք կռվում էին ոչ թե տարածքը, հայրենի հողը պաշտպանելու, այլ միայն բնաջնջման վտանգի դեմ: Այդ էր պատճառը, որ Արեւմտյան Հայաստանում մի քանի մարտական հաջող գործողություններից հետո այն լքեցին առանց կռվի, իսկ երբ բնաջնջման վտանգը կախվեց Արեւելյան Հայաստանի՝ հայերին մնացած միակ ու վերջին օթեանի վրա, կռվեցին: Դա բնորոշ էր հայ ժողովրդի ամբողջ պատմությանը: Որպես կանոն հայը ռազմադաշտում պարտվել է ոչ թե վատ կռվելու կամ կռվել չկարողանալու, այլ քաղաքական կյանքի այլեւայլ ապակողմնորոշող երեսույթների հետեւանքով: Հայը կռվող ժողովուրդ է եւ կռվել գիտի, եթե որոշեց կռվել դժվար է նրան պարտության մատնել: Հայության պարտությունների պատճառը հարկ է փնտրել ոչ թե հայ զինվորի մեջ, այլ քաղաքական կյանքում:

Ընդհանրապես, չի կարելի ամբողջությամբ սեւ գույներով ներկայացնել մինչև Սարդարապատ հայ զինվորականության գործունեությունը: Փաստորեն նա մենակ էր պահում երկարաձիգ ռազմաճակատը եւ, ինչպես գրում է Լյուդեն-դորֆը. «1918թ. սկզբին եւ ուր ամիսներին կասեցրեցին Բաքվի գրավումը»¹⁶²:

Անդրկովկասի սեյմն ու նրա կառավարությունն են գլխավոր մեղավորները, որ երկրամասը թուրքերին լուրջ դիմադրություն ցույց չտվեց: Պարսկաստանից մինչև Սեւ ծով ձգված ռազմաճակատում սեյմը պահում էր 18-20 հազար կազմալուծված զինվոր. մինչդեռ միայն հայերն ունեին 30.000 զորք: «Այդ

¹⁶² Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 296:

ուժով հրաշքներ կարելի էր գործել,- գրում է Ս. Շահումյանը,- ես էլ չեմ խոսում զինված գյուղացիության հսկայական զանգվածի մասին, որը մենակ կարող էր հաշիվ տեսնել թե թուրքերի եւ թե Անդրկովկասի բոլոր հակահեղափոխական ուժերի հետ»¹⁶³:

Ընդ որում՝ Կովկասյան ճակատի քայքայումով հանդերձ այնտեղ կար 190 գումարտակ, 98.000 սվին, 6600 սուր, 1200 գնդացի, 300 քնդանոթ: Ջորջերի ընդհանուր թիվն հասնում էր հարյուր հազարի:

Երզնկա-Էրզրում ուղղությամբ հարձակվում էին Զ. Կարաբեքիրի զորքերը՝ երեք դիվիզիա, որոնցից մեկը՝ պահեստային: Թուրքական այդ կորպուսում կար 23772 մարդ¹⁶⁴:

Ջորախավաքը հայերի շրջանում, չնայած անգլիացիների խոստումին, որ մեծ վարկ կտրամադրի, եթե հայերը ռազմական ուժեր ձեւավորեն ռուսներին փոխարինելու համար, էական հաջողություններ չէր արձանագրում: Հիմնական պատճառը հայ երիտասարդության վարքագիծը չէր: Հովհ. Թումանյանը, որին Ազգային խորհուրդը գորախավաքը կազմակերպելու համար ուղարկել էր Լոռի, գանգատվում էր, թե անտերություն էր, գորակոչիկներին ոչ ընդունող կար էր ոչ էլ նրանց սնունդն ու օթեանը կազմակերպող, որի հետեւանքով գորակոչվածներից շատերը վերադառնում էին տուն:

Լեոն գրում է, թե Տրապիզոնի բանակցությունների արդյունքներն ամփոփելու համար Ազգային խորհրդի Ալեքսանդրապոլում հրավիրված նիստին մասնակցելու համար եկածները տեսան «անկարգության ամենաբարձր աստիճան... ոչ ոք չհետաքրքրվեց, թե ինչ կա, ամենքն անձնատուր եղած էին իրանց առեւտրին, փախչում էին զինվորությունից, այնպես որ դաշնակցությունը մի քանիսին տեռորի ենթարկեց մյուսներին վախեցնելու համար», սակայն դրանք էական արդյունք չէին տալիս, որովհետեւ առեւտրով, այն էլ հրացանների, զբաղվում էին նաև իրենք՝ դաշնակցականները:

Մի հայ սպա հայտարարեց. «Մինչդեռ թուրք ասկյարը պատերազմ էր գնում աջից ու ձախից ունենալով մի-մի զինված քուրդ կամ թուրք, հայ զինվորը դաշտում կռվելիս, տեսնում էր, որ իր թիկունքում գտնվող հայ գյուղացիները, մինչև ատամները զինված, փախչում են... Այս ճիշտ որ մի մեծ աղետ էր»¹⁶⁵:

Ռազմաճակատի դրության վատացման գլխավոր պատճառներից մեկը վրացիների կեցվածքն էր: «Օգտվելով, որ իշխանության գլխավոր դիրքերն իրանց ձեռքումն էին, նրանք աշխատում էին դուրս քաշել Կարսից եւ այլ բերդերից ռազմամթերք՝ փամփուշտներ եւ այլ իրեր ու այդպիսով հարստացնել ի-

¹⁶¹ Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 5, էջ 26:

¹⁶⁴ Баграмян И., նշվ. աշխ., с. 45:

¹⁶⁵ Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 295:

րենց պահեստները»¹⁶⁶: Նազարբեկյանը, որպեսզի փրկի Կարսում եղած ռազմամսերքը, հրաժարվեց կատարելու փամփուշտները Թիֆլիս ուղարկելու վերաբերյալ Օդիշելիձեի հրամանը:

ՀՀԴ ղեկավարությունը Տրապիզոնից հետո որդեգրեց պարտվողական վարքագիծ: Հանդես գալով Ալեքսպոլում Հ. Քաջազունին հայտարարեց, թե «պատերազմ մղել թուրքերի դեմ մենք չենք կարող»: Դրան Մ. Արզումանյանը պատասխանեց, թե եկեք գնացք նստենք ու գնանք Կարս, տեսնենք «մրա ամբողջությունները, նրա զինվածության չափը: Եթե այդ բոլորը տեսնելուց հետո դուք ասեք, թե կարելի է այդպիսի մի բերդ հանձնել թշնամուն առանց պատերազմի, այն ժամանակ հարցը միանգամայն լուծված կլինի»: Այս եւ նման մի քանի ելույթներ հեղաբեկեցին միտքը, որոշվեց շարունակել պատերազմը: Սակայն այդ որոշումը չամրապնդվեց քարոզչական, կազմակերպական համապատասխան աշխատանքով եւ թուրքերը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու սլանում էին արեւելք: Դա նորից առաջին պլան հանեց Չխենկելիին, որի Տրապիզոնում «մի ամսվա ողորմելի գործունեությունը նրան դարձրել էր թե աչքի ընկնող դիվանագետ եւ թե Վեհիբ փաշայի եւ, առհասարակ, թուրքերի բարեկամ»¹⁶⁷:

Ռուսական բանակում դասալքությունը, մասնավորապես Բրեստից հետո «լավայի բնույթ ստացավ»: Սկսվեց մի հեղեղ ռազմաճակատից դեպի Ռուսաստան, որը թե հեռացող զորքերի եւ թե տեղական բնակչության համար աղետի աղբյուր դարձավ: «...Մեծամեծ չարիքներ, արյունահեղ ընդհարումներ, քալան եւ անխնա կոտորած: Ռուսական զորքերի փախուստը եւ ճակատների կատարյալ մերկացումը ճակատագրական նշանակություն ունեցավ մեր երկրի համար»¹⁶⁸:

Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչը Հայ ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանին ցույց տվեց փաստաթղթեր, որոնք նույնպես հաստատում էին, որ Կ. Պոլիսը որոշել էր հայերին բնաջնջել նաեւ Անդրկովկասում: Այդպես էր մինչեւ 1918-ի մայիսը: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆը գրում է. «Թուրքիան, որ ութ օր առաջ լսել անգամ չէր ուզում Հայաստան ստեղծելու մասին (մանավանդ Էնվեր եւ Թալեաթ փաշաները), հանկարծ համաձայնություն տվեց...»¹⁶⁹:

Բաթումում մայիսի 27-ին Քաջազունուն եւ Խատիսյանի հետ գրույցի ժամանակ Խալիլն ու Վեհիբը խնդրեցին Հայոց ազգային խորհրդին հայտնել, որ

¹⁶⁶ Լեո, նշվ. աշխ., էջ 295 :

¹⁶⁷ Ն. տ. էջ, 397:

¹⁶⁸ Պարսջան Գ. (Արկունը), Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918թ., Թիֆլիս, 1919, էջ 25-26:

¹⁶⁹ ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ. 4047, գ. 260:

Թուրքիան դեմ չէ Կովկասում «Հայաստան կազմելուն»: Նրանք առաջարկում են հայերի հետ առանձին պայմանագիր կնքել:

Սակայն նման շաղկրատանքներն անգոր էին հայերին դուրս բերել հուսալքությունից: Մայիսի 25-ին Ազգային խորհուրդն արձանագրում է. «Բոլորին համակել է լրումն ու անորոշ տրամադրությունը»¹⁷⁰: Այդ չէր կարող չհանգեցնել ինքնավերլուծության: Ոմանք գտնում էին, որ դաշնակցությունը պետք է հեռանար եւ հայության քաղաքական ղեկավարությունը հանձնեք որիչ կուսակցության կամ կաթողիկոսին:

Այս առաջարկի պատճառներն են, նախ՝ Երեւանի նահանգում ընթացող հայ-թուրքական պատերազմական գործողությունները, որոնք ամենեւին Թուրքիայի օգտին չէին, երկրորդ՝ երիտթուրքերը հասկանում էին, որ աշխարհամարտում Քառյակ զինակցության պարտությունն անխուսափելի էր եւ սկսվելի լավ էր Անդրկովկասում գոյություն ունենալ փոքրիկ, թույլ Հայաստան քան իսպառ հեռանալ այդ աշխարհատարածքից, երրորդ՝ Խորհրդային Ռուսաստանի ուժեղացման դեպքում այդ փոքր Հայաստանը կխաղար բուֆեր դեր եւ, վերջապես, ինչ-որ ժամանակ այդ Հայաստանը պահելը ավելի հեշտ էր, քան այն խլելը որեւէ մեծ տերությունից:

Թիֆլիսում հայերը պահանջում էին անցկացնել նոր գորակոչ: Ադրբեջանցիները դեմ էին, իսկ վրացիները ձգձգում էին: Մի քանի հայկական ազգային խորհուրդներ հարկադրված եղան հայտարարելու տեղական զինակոչներ: Միայն մարտի 24-ին սեյմը օրինագիծ ընդունեց գորահավաքի մասին, թույլատրվում էր գորակոչել սկզբում մինչեւ 28, ապա նաեւ մինչեւ 3 տարեկաններին:

Պատերազմը շարունակելու սեյմի կողմնորոշման առաջացրած ոգեւորությունը շատ կարճ տեւեց, որովհետեւ ապրիլի 1-ին ընկավ Բաթումը եւ ընկան առանց դիմադրություն ցույց տալու: Վրացական զորքերի մի մասը փախուստի դիմեց, իսկ մյուս մասը հանձնվեց թշնամու ողորմածությանը: Թուրքերի միացան Աջարիայի եւ Ախալցխայի մահմեդականները: Ընկավ նաեւ Արաս բումանը: Վրացին կռվել չէր ուզում:

Թուրքական բանակի հարձակումը Երեւանում խուճապ առաջացրեց: Աջամալյանի ղեկավարությամբ պատվիրակություն ուղարկվեց Բեռլին: Պատվիրակությունը գտնում էր, որ Կովկասի հայերի անվտանգությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ էր Կարսի, Արդահանի եւ Բաթումի բնակչությանը տալ ինքնորոշման իրավունք, դրանց կարգավիճակը որոշելու համար անցկացվելիք հանրաքվեին թույլատրել փախստականների մասնակցությունը, ստեղծել կայուն երաշխիք, որպեսզի թուրքերը չխախտեն Բրեստի դաշ

¹⁷⁰ ՀՀ ԿՀԿՊԿԱ, Հայոց Ազգային խորհրդի արձանագրություններ, ք. 222:

նագրով որոշված սահմանները, բուրբերին թույլ չտալ միջամտելու Կովկասի ներքին գործերին, երաշխավորել Թուրքիայում բնակվող հայերի եւ այնտեղ վերահառնակ ցանկացողների անվտանգությունը:

Պատվիրակության տեղեկագրում ասված էր. «Հայ ժողովուրդը, անկախ տարիքից, դիրքից ու սեռից, բարձրացել է պայքարի եւ լի է վճռականությամբ մինչեւ վերջին շունչը պաշտպանել իր գոյությունը: Ներկայումս խոսքը գնում է հայերի լինել-չլինելու մասին. նրանց համար սա պայքար է հանուն գոյատևման»:

Որքան էլ խոսեն կոմունիստների հասցեին, նրանք անվերապահ կանգնեցին բուրբական զավթիչներից հայրենիքը պաշտպանելու դիրքերում: Ալեքսանդրապոլի բոլշեիկյան կոմիտեն 1917թ. դեկտեմբերի 27-ին կոչով դիմեց քաղաքի բնակչությանը. «Բոլորս դեպի բանվորների կարմիր գվարդիա, բոլորս դեպի մերկացված ռազմաճակատ... ոչ թե նեղուցները գրավելու համար, այլ ժողովրդական գույքը կողոպուտից պահպանելու համար, մարդու ֆիզիկական գոյության իրավունքը պաշտպանելու համար»¹⁷¹: Ս. Շահումյանի նախածեռնությամբ մարդիկ ուղարկվեցին Սարիղամիշ եւ այլուր ռուսական բանակի զինաթափումն ու հայերի ջարդերը կանխելու համար: Նա լավ էր հասկանում, որ բզկտված Անդրկովկասը փրկության մի հնարավորություն ուներ՝ «խորհուրդների բանվորա-գյուղացիական հանրապետություն»¹⁷²:

Ս. Կասյանի կարծիքով բուրբերին ահաբեկում էր այն, որ «խորհուրդների իշխանությունը Կովկասում կարող է տարածքային վնաս հասցնել նրանց գիշատիչ իշխանությանը եւ ավազակային շահագործությանը, պնդելով եւ պաշտպանելով ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետը Տաճկական Հայաստանի ինքնորոշման վերաբերյալ»¹⁷³:

Կասյանը գտնում էր՝ թույլ տալ բուրբերին իրագործելու իրենց զավթողական ծրագրերը, «նշանակում է ոչ միայն ինքնասպանություն գործել, այլեւ դավաճանել սոցիալիզմին»¹⁷⁴:

Այս եւ բազմաթիվ այլ վկայություններն ասում են, որ հայ բոլշեիկների շուրջը ստեղծված կարծիքը, թե նրանք պատրաստ էին հայ ժողովրդին գոհաբերել սոցիալիզմի շահերին, արտաքին կեղեւ էր, դասակարգային առաջնության ցուցադրում: Իրականում հայ կոմունիստների համար առաջնայինն ու գլխավորը հայապահպանությունն էր:

¹⁷¹ «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ...», էջ 156:

¹⁷² Շահումյան Ստ., ԵԼԺ. հ. 3, էջ 69:

¹⁷³ Կասյան Ս., ԸԵ, էջ 100:

¹⁷⁴ Ն.տ., էջ 101:

ՉԼՈՒՆ V

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐ

1. ՀՈԿՏԵՄԵՐԸ ԱՆԳԿՈՎԿԱՍՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունը նաեւ նշանավորվեց Ռուսաստանի միացյալ քաղաքական մարմնի հիմնահատակ քայքայում ու կազմալուծում, կայսրության տարածքում հանդես եկան տասնյակ պետություններ, անկախ քաղաքական միավորներ: Դա լավ էր թե վատ: Լավ, որովհետեւ դարավոր ճնշումից վերջապես ազատագրվում, անկախ գոյության ուղի էին բռնում ցարական մահակի տակ հարյուրավոր տարիներ գոյատևած մի քանի տասնյակ ժողովուրդներ, որոնց մեջ քիչ չէին նաեւ այնպիսիները, որոնք երբեք ինքնուրույն պետականություն չէին ունեցել, երբեք քաղաքականապես, որոշակի առումներով՝ նաեւ տնտեսապես եւ հոգեւոր-մշակութային ասպարեզում, անկախ չէին եղել: Բայց զարգացման սոցիալ-տնտեսական տրամաբանության բերումով մասնատումը նաեւ խոչընդոտ էր նույն այդ ժողովուրդների զարգացման համար՝ մեկուսացած առիճքնամ միայն սեփական ուժերին, ինչը 20-րդ դարում փոքր ցեղերի եւ ազգությունների համար աղետաբեր էր բոլոր առումներով:

Ինչո՞ւ այդքան արագ փլուզվեց ռուսական կայսրությունը: Պատճառները քիչ չէին: Բայց գլխավորները երկուսն էին: Նախ՝ այդ կայսրության ժողովուրդների գիտակցության եւ վարքագծի մեջ ազգայինը շատ ավելի հզոր դուրս եկավ, քան սոցիալ-տնտեսական շահերն ու դասակարգային գիտակցությունը: «Տեղային», «անհատական» շահերի զարգացման պաշտպանության կույր, տարերային եւ սխալ ըմբռնումը, որով հետ էր մղվում ընդհանուրը եւ համերկրայինը, առանց որի մասնավորը եւ տեղայինը դատապարտված էին ճահճային վիճակի, հետամնացության եւ դանդաղկոտության, պաշարեց նույնիսկ այնպիսի հասարակական եւ քաղաքական խավերին ու խմբակցություններին, որոնց նման ըմբռնողությունը օտար պիտի լիներ»¹:

Երկրորդ պատճառը ռուսական հեղափոխության առաջադրած խնդիրների արժատականությունն էր՝ ամեն հինը ոչնչացնելու, անհետացնելու ուղղվածությունը, որը հասկանալի չէր անգամ զարգացման բարձր մակարդակ ունեցող ազգերին, ուր մնաց, թե կայսրության ժողովուրդների ճնշող մեծամասնությանը, որոնց զարգացման մակարդակն ավատատիրականից վեր չէր

¹ Դարաջեան Գ., նշվ. աշխ., էջ 16:

քարծրանում: Հոկտեմբերյան հեղափոխության այս արձատականությունը, մարտիմալիզմը թե հիպնոզացրեց լայն զանգվածներին եւ թե ծնեց համընդհանուր անիշխանություն՝ անարխիզմ. որը գումարվելով ցարական դարավոր ճնշման հետեանքով ենթակա ժողովուրդների մեջ կուտակված ատելությանն ու մադձին, վերածվեց ամեն ինչ գլխիվար շուռ տալու ամբոխային տրամադրության, ինչը կայծակնային արագությամբ հանգեցրեց տնտեսական եւ քաղաքական կյանքի հաշմանը, ջուր լցրեց հպատակ ժողովուրդների անջատողական տրամադրությունների ջրաղացին:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ձեւավորվեց միմյանց հակոտնյա երկու մոտեցում՝ բոլշեիկյան Ռուսաստանի հետ կապերի խզում եւ Ռուսաստանից ոչ մի կերպ չհեռանալ: Դրանով է բացատրվում երկրամասի իշխանությունների ու քաղաքական ուժերի երկատված, անհետևողական կեցվածքը: Թուրքական առաջխաղացումը վրացիներին եւ, մասնավորապես, հայերին որեւէ լավ բան չէր խոստանում: Այդ էր պատճառը, որ նրանք անմիջապես նետվեցին Արեւմուտքի գիրկը՝ սկսելով Գերմանիայի, ապա՝ Անգլիայի:

Մինչ Անդրկովկասը նոր հովանավորներ էր փնտրում, Ռուսաստանը լքեց պատերազմը եւ Բրեստ-Լիտովսկում գերմանացիների, ինչպես նաեւ թուրքերի հետ նստեց բանակցությունների սեղանի շուրջ: Ինչից անմիջապես օգտվեցին երիտթուրքերը եւ պատերազմական գործողություններ սկսեցին համաթուրանական ծրագրերը կյանքի կոչելու համար:

Սակայն երկրամասում առկա հակասությունները լույս ազգային բնույթ չունեին: Չորրի եւ բանվորության մի մասը հեղափոխության կողմն էր, որի հաղթանակից երեք օր անց Անդրկովկասի գինվորական ներկայացուցիչների երկրամասային ժողովը ճանաչեց խորհրդային իշխանությունը: Եվս երեք օր եւ Բաքվի խորհուրդն իր ձեռքը վերցրեց իշխանությունը ու նույնպես ճանաչեց խորհրդային կառավարությանը: Մինչդեռ անդրկովկասյան իշխանությունների առաջին կոչերից մեկը պահանջ էր՝ օգնել «Անդրկովկասը գերծ պահելու բոլշեիկների ազդեցությունից...»²:

Ս. Վրացյանը ճիշտ չէր, երբ գրում էր, թե Հոկտեմբերյան հեղափոխության հանդեպ թշնամական վերաբերմունքը Անդրկովկասում ավելի սուր էր եւ դա զուտ քաղաքական-կուսակցական պատճառներով: Հակահեղափոխական տրամադրություններն ամենեւին էլ ավելի թույլ չէին Ուկրաինայում կամ Միջին Ասիայում, քան Անդրկովկասում: Վրացյանն իզուր էր կարծում, թե բոլշեիկների ու մենշեիկների միջեւ թշնամությունն ավելի մեծ էր, քան բոլշեիկների ու պետյուրականների, բոլշեիկների ու կադետների միջեւ:

² ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 41, գ. 33:

1917թ. նոյեմբերի 11-15-ին (24-27-ին) Թիֆլիսում հրավիրվեց մի խորհրդակցություն, որին մասնակցում էին նաեւ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Պրժեյակսկին, շտաբի պետ Լերեյինսկին, անգլիական եւ ֆրանսիական զինվորական առաքելությունների ներկայացուցիչները, Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Ֆ. Սմիթը, որը ժողովի նախօրյակին պետական քարտուղար Լանսինգին գրեց, թե մասնակցելու է «Անդրկովկասի կառավարություն ստեղծելու խորհրդակցությանը, կառավարություն, որը միավորվելու է Հարավային դաշնության հետ եւ մերժելու է գինադադարը կամ անջատ հաշտությունը: Անհրաժեշտ է ֆինանսական օգնություն ցույց տալ նրան»³:

Խորհրդակցությանը մասնակցում էին նաեւ Կովկասյան վարչության քաղաքացիական մարմինների, բանվորական եւ գյուղացիական խորհուրդների եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Նախագահում էր Ե. Գեզեչկորին:

Երկրամասում առաջին անգամ այս խորհրդակցությունն ընդունեց պետական կառավարմանն առնչվող ինքնուրույն, այսինքն՝ Պետրոգրադից չբեւադրված, որոշում՝ վերացնել ՕՅԱԿՈՄ-ը եւ ստեղծել հասարակական անվտանգության կոմիտե, որի գլխավոր առաքելությունն էր ձեւավորել իշխանության ժամանակավոր մարմին: Այդ մարմինը ղեկավարելու էր երկրամասը մինչեւ կառավարման համառուսաստանյան համակարգի վերջնական ձեւավորվելը, այսինքն՝ մինչեւ Սահմանադիր ժողովը:

Նպատակն ակնհայտ էր եւ այն բացեիբաց արտահայտեց Ծերեթելին. «Անդրկովկասյան ժողովրդավարությանն ուրիշ բան չէր մնում անելու, բայց եթե անջատվեր բոլշեիկյան իշխանությունից»⁴:

Անդրկովկասի ոչ բոլշեիկյան, բայց սոցիալիստական կողմնորոշում ունեցող կուսակցությունները նույնպես մերժում էին Հոկտեմբերյան հեղափոխությունը, թե «խսկական հեղափոխությունը ոչ թե սոցիալիստականն է, այլ բուրժուա-ժողովրդավարականը» եւ ժամանակի գլխավոր խնդիրը համարում էին «միավորել եւ համախմբել ժողովրդավարներին միատարր ժողովրդավարական իշխանություն ստեղծելու հիմքի վրա»⁵: Նրանք գտնում էին, որ բոլշեիկներն իրենց պայքարով ժամանակավոր կառավարության դեմ «օգնում են Ռուսաստանի արտաքին ու ներքին թշնամիներին»:

Իշխանությունը բոլշեիկներին չտալու համար խորհուրդների երկրամասային կենտրոնը գործն այն ուղղությամբ էր տանում, որպեսզի իր վերահսկողության վերցնեք հասարակական անվտանգության նորաստեղծ

³ "История гражданской войны в СССР", т. 3, М., 1957, с. 53:

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 127:

⁵ Революция 1917г. в Закавказье: Документы и материалы, Тифлис, 1927, с. 288:

կոմիտեն, որը կազմված էր ազգայնամոլական կուսակցությունների ներկայացուցիչներից: Անդրկովկասի բնակչությանն ուղղված կոչում խորհուրդների երկրամասային կենտրոնն ասում էր. «Սոցիալիստ-հեղափոխականները, սոցիալ-ժողովրդավարները, մենշևիկներն ու ինտերնացիոնալիստները եւ մյուս սոցիալիստական կուսակցությունները միանգամայն խզվել են պետրոգրայան բոլշևիկներից եւ ներկայումս ստեղծում են նոր ժողովրդավարական իշխանություն, բավական հեղինակավոր եւ ուժեղ՝ ընդունակ տանելու եռանդուն պայքար ինչպես ձախերի անիշխանական ելույթների, այնպես էլ աջ հակահեղափոխականների դեմ եւ երկիրն առաջնորդելու Սահմանադիր ժողովը»⁶:

Այս շարժումն Անդրկովկասում ղեկավարում էին վրաց մենշևիկները: Ն. Ժորդանիան պահանջում էր «վերացնել Պետրոգրադի ապստամբությունը» եւ բոլոր ժողովրդավարական ուժերին միավորել ձեւավորելու նոր իշխանություն⁷:

Հասարակական անվտանգության կոմիտեն 1917թ. նոյեմբերի 27-ին որոշում կայացրեց կազմավորել իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ, որի մեջ մտան վրաց մենշևիկներ՝ Ե. Գեգեչկորին եւ Ա. Չխենկելին, ՀՀԴ՝ Ղ. Տեր-Ղազարյանը, Խ. Կարճիկյանը, Հ. Օհանջանյանը, մուսավաթականներ՝ Ս. Ջաքարյանը, Խ. Սելիք-Ասլանովը, Ֆ. Խան Խոյսկին, Խ. Խասանհանդովը: Կոմիսարիատում ներկայացված էին նաեւ սոցիալիստ-հեղափոխականները, սոցիալիստ-ֆեդերալիստները եւ այլն: Նախագահ ընտրվեց Ե. Գեգեչկորին: Ս. Շահումյանը գրեց. «Սա ավելի լավ կառավարություն չէ, քան Կերենսկու կառավարությունն էր...»: Դա «կարգի» կառավարություն էր, հեղափոխության դեմ պայքարի կառավարություն: Բոլշևիկները չմասնակցեցին այդ կառավարությանը⁸:

Անդրկովկասյան կոմիսարիատը որոշակի առումով վրացական կառավարություն էր, որի գլխավոր հենարանը վրաստանի բանվորական խորհուրդն էր: Նաեւ ստեղծվեց յուրօրինակ բազմիշխանություն, որովհետեւ կոմիսարիատի գոյությանը զուգահեռ բարձրագույն իշխանությունը պատկանում էր հայ, վրաց եւ թաթար ազգային խորհուրդներին: Այդ էլ պայմանավորեց կոմիսարիատի օրապակասությունը, որովհետեւ խորհուրդներն արտահայտում էին այն լուրջ հակասությունները, որոնք գոյություն ունեին այդ երեք ազգերի միջեւ: Եվ, չնայած ՀՀԴ կովկասյան համագումարն արձանագրեց, թե «հայ եւ մահմեդական գյուղացիության հարաբերություններում նկատվում են դասակարգային համերաշխության

բազմաթիվ արտահայտություններ⁹», այնուամենայնիվ ազգամիջյան մանր ու մեծ բախումները չէին դադարում, այլ, ընդհակառակը, նույն այդ ազգային խորհուրդների «ջանքերով» ավելի սուր բնույթ էին ստանում: Չխենկելին գրեց. «Մահմեդական զինված բնակչությունը, որն ունի թուրքական կողմնորոշում, իրեն անվանում է թուրքական զինվոր եւ ահաբեկում է... քրիստոնյա ազգաբնակչությանը»¹⁰:

1917թ. վերջերին հայ-թաթարական բախումներ տեղի ունեցան Երեւանի, Ելիզավետպոլի, Ջանգեզուրի գավառներում:

Ազգային խորհուրդները արտաքուստ ձգտում էին հաղթահարել ազգամիջյան բախումները, բայց գործնականում «միմյանց դեմ էին ուղարկում իրենց գնդերը»:

Անդրկովկասյան կոմիսարիատն ինքնավստահ չէր, խաղում էր մի քանի լարի վրա, ոչ քիչ դեպքերում խաբում երկրամասի բնակչությանը, թե ինքը գործում է կենտրոնական (բոլշևիկյան) կառավարության հետ համաձայնեցված: Նա գործն այդպես էր ներկայացնում, երբ խոսքը գնում էր Օսմանյան կայսրության հետ իր վարած քաղաքականության, մասնավորապես, անջատ գինադադար կնքելու իր մտադրության մասին:

1917թ. դեկտեմբերի 5-ին կոմիսարիատը կոչով դիմեց բանակին ու ժողովրդին եւ կեղծելով իրականությունը, հայտարարեց, թե իր վրա է վերցրել գինադադարի պայմանագիր կնքելու նախաձեռնությունը, որովհետեւ «տվյալ պահին չկա միասնական կենտրոնական, բոլորի կողմից ճանաչված կառավարություն եւ քաղաքացիական կռիվների ընթացքում ավերվել է Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմականը»¹¹: Իրականում այդ նույն օրերին կենտրոնական կառավարությունը Գերմանիայի ու նրա դաշնակիցների, այսինքն՝ նաեւ Թուրքիայի հետ կնքեց 28 օր զինադադար հայտարարելու փաստաթուղթ¹²:

Անդրկովկասյան հասարակական-քաղաքական ուժերի ներկայացուցիչների ժողովի կողմից կոմիսարիատի առջև դրված երեք հիմնական խնդիրներից՝ Սահմանադիր ժողովի ընտրությունների կազմակերպում, ազգային հարցի լուծում եւ Թուրքիայի հետ հաշտության հասնել, առաջինն իրականացվեց, երկրորդն ամբողջությամբ տապալվեց, իսկ երրորդն արվեց ի վնաս երկրամասի:

«Հորիզոնը» 1917թ. նոյեմբերի 7-ի իր համարում կանխատեսելով այդ ձախողումը, գրում է, որ բազմացեղ Անդրկովկասում ազգային գործոնը «արտա-

⁶ Революция 1917г. в Закавказье, документы и материалы, Тифлис, 1927, с. 294.

⁷ Протоколы Закавказских революционных советских организаций, т. I, с. 208-209.

⁸ Шаумян С., Избр. произведения, т. 2, с. 150.

⁹ «Մուրճ», 14.11.1917:

¹⁰ ՎՀ ԴԿԴԱ, ֆ. 1819, ց. I, գ. 4:

¹¹ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлис, 1919, с. 15:

¹² История внешней политики СССР, т. I, М., 1980, с. 34:

հայտվում է համարյա բոլոր հարցերում եւ նույնիսկ ինտերնացիոնալիստական պատմուճան հագած կուսակցությունները մեծ չափով համակված են ազգային ոգով: Չեմստվոյի ընտրություններում բոլոր վրացիները՝ բոլշեիկ, մենշեիկ, սոցիալ-ֆեդերալիստ, նացիոնալ-դեմոկրատ, պրոլետար եւ իշխան, միացած ձայն տվին ընդդեմ բոլոր հայ ներկայացուցիչների՝ նույնպես առանց կուսակցական խտրականության»: Այլ կերպ ասած, ներերկրամասային հակասությունների առանցքն, այնուամենայնիվ, ազգային ակունք ուներ:

Հատկանշական է, որ Անդրկովկասյան կոմիսարիատը ստեղծվեց ոչ թե որպես անկախ երկրի գործադիր իշխանություն, այլ երկրամասի, որ շարունակում էր մնալ Ռուսաստանի կազմում: Դեռ ավելին, գործադիր այդ իշխանությունից բացի ստեղծվեց մի մարմին, որը ներկայացնում էր Ռուսաստանի կենտրոնական կառավարությունը՝ Անդրկովկասի արտակարգ կոմիսար՝ Ստ. Շահումյան:

Բայց դա իրավիճակի լոկ արտաքինն էր: Իրականում կոմիսարիատի ստեղծմամբ սկսվեց Անդրկովկասի անկախացման գործընթացը: Ինքը՝ կոմիսարիատը, իր կողմից իշխանության տիրանալը բացատրում էր նրանով, որ Ռուսաստանի ժողովրդի հույսերը չի ճանաչվել «Ռուսաստանի ժողովուրդների, ինչպես նաեւ արեւմտյան տերությունների կողմից»: Բայց քանի որ կոմիսարիատը երկյուղում էր բացահայտ խոսել իր դիտավորության մասին, հավաստիացնում էր, որ «իշխանությունը պետք է իրականացվի՝ մշտապես պահպանելով համառուսական ճակատի միավորումը...»¹³:

Անդրկովկասյան կոմիսարիատը ոչ միայն չմեղմացրեց ազգամիջյան հակասությունները, այլև դրան գումարեց պայքարի նոր ասպարեզ՝ Ռուսաստանի հետ, թե առանց նրա:

Հենց սկզբից թշնամական հարաբերություններ ձեւավորվեցին Անդրկովկասյան կոմիսարիատի եւ Անդրկովկասի արտակարգ կոմիսարի միջև:

Երե կոմիսարիատը դաշն կնքեց Հյուսիսային Կովկասի, Դոնի եւ Դաղստանի հակահեղափոխական իշխանությունների, սերտ կապեր հաստատեց գեներալներ Կոռնիլովի, Կալեդինի, Կարաուլովի հետ եւ ձգտում էր աստիճանաբար երկրամասը անջատել Խորհրդային Ռուսաստանից եւ պայքարել նրա դեմ, ապա արտակարգ կոմիսարը աշխատում էր Անդրկովկասում եւս հաստատել խորհրդային կարգեր եւ այն իրապես մտցնել Խորհրդային Ռուսաստանի կազմի մեջ:

Երկրամասի հակախորհրդային ուժերին հաջողվեց միավորվել եւ Ստ. Շահումյանն հարկադրված եղավ տեղափոխվել Բաքու եւ այնտեղ ղեկավարել պայքարը խորհրդային կարգերի համար: Կովկասում բոլշեիկների

¹³ «Հորիզոն», 19.11.1917:

պարտության պատճառները մի քանիսն էին. նախ՝ երկրամասում բոլշեիկյան կազմակերպություններն ուժեղ էին միայն Բաքվում, մյուսներում տոն տվողները վրաց մենշեիկներն էին, ՀՀԴ- եւ մուսավաթականները: Երկրորդ՝ Ռուսաստանում սկսված քաղաքացիական պատերազմները Անդրկովկասին կտրեցին Մոսկվայի հետ ուղիղ կապի հնարավորությունից: Երրորդ՝ երկրամասում բոլշեիկների համար հիմք հանդիսացող բանակը քայքայվում, հեռանում էր՝ եւ հեռանում էր ոչ այնքան կենտրոնի, որքան սեփական նախաձեռնությամբ:

Այն պայմաններում, երբ թուրքական զինված ուժերը, չնայած դանդաղ, բայց ուշքի էին գալիս, ռուսական բանակը երկու ամիս շարունակ լքում էր երկրամասը: Ռուսները հեռանում էին երեք ուղղություններով՝ Երեւանի վրայով Պարսկաստանից, Կարսի վրայով Էրզրումից եւ Ելենովկայով անցնում էին Ալեքսանդրապոլ ու շարժվում հյուսիս: «Բոլորն ալ ինքզինքնին պոլշեիկ կը համարեին՝ յայտարարելով, թե իրենք կը պատկանին այն կուսակցութեան, որ զիրենք դեպի տուն կը հրավիրե: Բոլորն ալ ունեին այն համոզումը, թե իրենց հայրենիքին մեջ արդեն հողեր կը բաժանեին...»¹⁴:

Թուրքական առաջխաղացումը հեշտանում էր ոչ միայն Կովկասյան ռազմաճակատի, այլև տնտեսության փլուզման հետեւանքով: Դադարեց հացի ներկրումը Հյուսիսային Կովկասից, ընդհատվեց երկաթուղային կապը Թիֆլիսի ու Բաքվի միջև: Այլևս չհավատալով հող ստանալու խոստումներին գյուղացիությունը ապստամբություններ էր բարձրացնում եւ ինքնուրույն լուծում խնդիրը: Չանգվածների պայքարը գնալով սուր քաղաքական բնույթ էր ստանում, առաջ էին քաշվում իշխանությունը խորհուրդներին հանձնելու պահանջներ: Բանվորների եւ զինվորների պատգամավորների խորհուրդների Անդրկովկասյան 2-րդ համագումարի մասնակիցների զգալի մասը 1918թ. հունվարի 1-ին անվստահություն հայտնեց մենշեիկներին, էսեռներին, ազգայնամոլ կուսակցություններին: Շուտով հավաքվեց Արեւելյան Անդրկովկասի եւ Հյուսիսային Կովկասի խորհուրդների արտակարգ համագումարը, որը չճանաչեց Անդրկովկասի կոմիսարիատի իշխանությունը եւ համախոհվեց Ռուսաստանի խորհրդային իշխանության հետ:

Ստ. Շահումյանը չընդունեց Անդրկովկասի կոմիսարիատին նաեւ այն պատճառով, որ հասկանում էր դրա անճարակությունը Թուրքիայի դեմ: 1917թ. նոյեմբերի 27-ին նա հեռագրում է Լենինին. «Պաշտպանողականներից եւ ազգայնամոլներից կազմվել է անդրկովկասյան իշխանություն Գեգեչկորու գլխավորությամբ, այն չի ընդունում ժողովրդական կոմիսարների իշխանությունը: Մենք նրանց պատերազմ ենք հայտարարել այդ իշխանությունը հա-

¹⁴ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 20:

մարելով հակահեղափոխական: Չորրեքը նրանց գործողությունները համարում են հեղափոխական Ռուսաստանից անջատվելու քայլ:

Թուրքիան համաձայնվել է զինադադարի: Անհրաժեշտ է ձեր ներկայացուցիչների մասնակցությունը հաշտության բանակցություններին»¹⁵:

Սի ուրիշ անգամ նա գրում է. «Սի³թե կարելի է մի այնպիսի ժամանակ դավաճանել ռուսական հեղափոխությանը, որի շնորհիվ ենք մենք ապահովվել մեզ համար ինքնորոշման իրավունքը»¹⁶:

«Անջատողական եւ ազգայնամուլական քաղաքականության նախաձեռնողները Կովկասում,- նկատում է նա,- այս անգամ, 1917թ., եղան մենշևիկները, որոնք բացահայտորեն դարձան վրացական ազգային կուսակցություն: Ոչ թե հին նացիոնալիստ-դաշնակցականները, այլ առաջինը նրանք դրեցին Վրաստանի ազգային տարածքային ինքնավարության պահանջը, նրանք եղան ազգային գնդեր ստեղծելու նախաձեռնողները...»¹⁷:

1918թ. հունվարի 18-ին Պետրոգրադում քացվեց համառուսաստանյան Սահմանադիր ժողովի անդրանիկ նիստը: 703 պատգամավորներից բուլշևիկ էր 168-ը եւ, ինչպես սպասվում էր, Սահմանադիր ժողովը ցրվեց: Անդրկովկասից այդ մարմնի պատգամավոր էր 31 հոգի, որից 12 սոցիալ-դեմոկրատ՝ հիմնականում վրաց մենշևիկներ, 10-ը՝ մուսավաթ, 9-ը՝ դաշնակ:

Երբ կամավորական գնդերը լուծարվեցին, Հայկական ազգային բյուրոն բուլացավ, ազդեցությունից զրկվեց, Բայց ցարական վարչակարգի տապալումով նորից աշխուժացավ եւ դա նաեւ այն պատճառով, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջին պլան դուրս եկան ազգամիջյան հակասություններն ու առճակատումները:

Սահմանադիր ժողովի ցրումից հետո Անդրկովկասի խորհուրդը որոշեց. «Երկրամասի կենսական շահերը պահանջում են մոտակա օրերին հավարել Անդրկովկասից եւ Կովկասյան ռազմաճակատից Սահմանադիր ժողովի պատգամավորներին, ովքեր նախ պետք է ստեղծեն ուժեղ, հեղինակավոր իշխանություն, որն ընդունակ լինի երկրում պահպանել հեղափոխական կարգուկանոն եւ կյանքի կոչի կայունացման բարեփոխումներ»¹⁸:

Սկզբում նախատեսվում էր, որ Անդրկովկասյան սեյմը պետք է կազմված լիներ միայն Ռուսաստանի սահմանադիր ժողովի համար ընտրված պատգամավորներից, հետո որոշվեց սեյմում տեղեր հատկացնել նաեւ այն կուսակցություններին, որոնք պատգամավոր չունեին եւ սեյմի անդամների թիվը եռապատկել: 1918թ. փետրվարի 10-ին քացվեց սեյմի անդրանիկ նիստը: Մաս-

¹⁵ "Известия", 08.12.1917:

¹⁶ "Кавказский рабочий", 03.12.1917:

¹⁷ Ն.ս., 17.12.1917:

¹⁸ ՎՀ ՊԿՊԱ, №. 1839, գ. 1, գ. 34:

նակցում էր 125 պատգամավոր: Նրանում ներկայացված էին մենշևիկների 32 պատգամավոր, որից չորսը հայ (Ա. Չոհրաբյան, Հ. Բեկզադյան, Ղ. Տեր-Ղազարյան, Ս. Փիրումյան), 25 վրացի (Ճերեթելի, Գեգեչկորի, Չխենկելի, Ժորդանիա...): Պատգամավորների թվով երկրորդ խմբակցությունը «մուսավաթ եւ անկուսակցական խմբակն» էր (Թոփչիբաշեւ, Ջաֆարով, Ռասուլ Ջադե, Աղաեւ, Սուլթանով, Խան Խոյսկի...):

ՀՀԳ խմբակցությունն ուներ 27 պատգամավոր (Ռոստոմ, Մ. Հովհաննիսյան, Կ. Համբարձումյան, Հ. Օհանջանյան, Հ. Ջավրիյան, Ա. Շախխարունյան, Հ. Քաջազնունի, Ս. Տիգրանյան, Ս. Վրացյան, Ա. Խատիսյան, Խ. Կարճիկյան եւ ուրիշներ): Ռոստոմը Թիֆլիսից բացակայում էր եւ սեյմի ոչ մի նիստի չմասնակցեց: Սեյմի անդամների թվում կար 19 սոցիալիստ-հեղափոխական, 7 մահմեդական դաշինքային: Սեյմի նախագահ ընտրվեց Ն. Չխենկեւ: Բուլշևիկները հրաժարվեցին մասնակցել նաեւ սեյմի աշխատանքներին:

Հ. Քաջազնունին սեյմի երրորդ նիստում հայտարարեց. «Քանի որ կենտրոնական համապետական իշխանութիւնը բացակա է, ժողովուրդներն ու երկրները հարկադրված են տեղերում սեփական ուժերով լուծելու կեանքի հրամայական ընթացքով առաջ եկած ամենեւն անետաձգելի խնդիրները... (նրանք) դրանով իսկ դնում են ամուր հիմքը մեկ ամբողջի՝ մեկ համառուսական ռամկավար դաշնակցային հանրապետութեան կառուցման»¹⁹: Նշանակալից հայտարարություն է՝ կառուցել նոր դաշնակցային Ռուսաստան: Նա նաեւ ասաց. «Դաշնակցութեան խմբակցութիւնը դնում է հերթից դուրս պատերազմը վերջացնելու եւ Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիայի ազդարարած սկզբունքներով հաշտութիւն կնքելու հարցը... Մեր ճակատում այս սկզբունքը պետք է հանգի Թիւրքահայաստանի ինքնավարութեան ստեղծմանը»: Եվ ապա, Անդրկովկասում «իշխանութիւնը պետք է լինի միատարր՝ ընկերավարական, որովհետեւ միայն այդպիսի իշխանութիւնը կարող է իրականացնել աշխատավոր ժողովրդի ակնկալութիւնները...»²⁰: Այս առաջարկություններն առաջացրեցին ադրբեջանցիների բուռն ընդդիմությունը: Նրանք պահանջում էին Անդրկովկասը հայտարարել անկախ:

«Մուսավաթականները, սպասելով հաղթողների՝ թուրքերի գալուց, տենչում էին հաշվեհարդար տեսնել հայերի եւ հաշիվ մատել վրացիների հետ, իսկ ապա դառնալ տիրապետող ազգ Անդրկովկասում»²¹: Նրանց թշնամության սուր ծայրն ուղղված էր դեպի հայերը եւ դա պատահական չէր: Ռուս պատմաբան Վ. Ստավրոսելսկին այդ թշնամության պատճառը համարում է այն, որ

¹⁹ Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 72:

²⁰ Закавказский Сейм. Стенографический отчет. Сессия первая, заседание третье. Тифлис, 1918, с. 15:

²¹ Ставропольский В., Кавказская драма, СПб, 1906, с. 33-34:

քարարները տարված էին պանթուրքիզմի եւ պանիսլամիզմի գաղափարներով. «Թուրքիայից եկածներն ու տեղական մուսուլման-մուլանները էլեկտրակա-նացրել էին զանգվածներին, հավատացնելով, որ սկսվելու է կրոնական պատերազմ եւ քրիստոնյա ժողովուրդը (հայերը) կործանվելու է»²²:

Սեյմի 1918թ. ապրիլի 9-ի նիստում Լեւոն Թումանյանը «էսեռների անունից մեծ եռանդով ընդդիմանում է տվյալ պահին Անդրկովկասը անկախ հայտարարելուն», քանի որ, ասաց նա, «ոչ մի ժողովուրդ հարց չի դրել Ռուսաստանից լրիվ անջատվելու մասին... Հարկ է ազնվորեն ընդունել, որ այն (անկախության գաղափարը) ծնել է թուրքական իմպերիալիզմը...»

Երբ մեզ մոտ՝ Անդրկովկասում ընթանում էին Մահմանադիր ժողովի ընտրությունները... քաղաքական կուսակցությունների կարգախոսներում չէր դրվում Ռուսաստանից անջատվելու հարցը: Այդպիսի կուսակցություն չկար... Դուք ինչո՞ւ չեք հարցնում ժողովրդին՝ նա այդ անկախությունը ուզո՞ւմ է, թե ոչ»: Խոսքը գնում է «Անդրկովկասի ապրելուն կամ մեռնելուն, դուք ինչո՞ւ չեք դիմում հանրաքվեի: Ես հայտարարում եմ, որ ռուսական կողմնորոշումը հեղափոխական կողմնորոշում է... Անդրկովկասը անկախ հայտարարելն այլ բան չի նշանակում, եթե ոչ թուրքական կողմնորոշում եւ դուք այդ փաստը ոչ որից թաքցնել չեք կարող: Այս պայմաններում Անդրկովկասն անկախ հռչակելը նշանակում է անցնել Թուրքիայի ստրկության տակ, Դուք կապում եք մեր ձեռներն ու ոտները» եւ «սեփական ձեռներով ձեր համար գերեզման եք փորում»²³:

Աղաներ հայտարարեց, թե «չպետք է խառնվել հարեւան պետութիւնների ներքին գործերին», այսինքն պահանջում էր հրաժարվել Արեւմտյան Հայաստանի խնդրից: Նա նաեւ գտնում էր, որ Անդրկովկասյան կոմիսարիատը պետք է կազմված լինի ազգային ներկայացուցչության սկզբունքով: Ժողովանիայի հայտարարությունը արտաքուստ էր հակասում Աղանի ասածներին. «Եվ մեր սեյմը այժմ իր համար հիմնական նպատակ պետք է դնե սեփական ուժերով այս երիտասարդ երկիրը՝ Անդրկովկասը, վերածել իրավականորեն կազմակերպված Անդրկովկասյան հանրապետության»: Դա նշանակում էր, որ սեյմում միայն հայերն էին Անդրկովկասը տեսնում Ռուսաստանի կազմում:

Ժողովանիան նաեւ ասաց, թե մենք Թուրքիայի հետ չենք կնքի այնպիսի հաշտություն, ինչպիսին ստորագրեցին բուլղեիկները եւ «ավելի լավ է մեռնել պատվով դիրքերում, քան սերունդների անեծքին արժանանալը»:

Հանդես գալով Անդրկովկասը Ռուսաստանից անկախացնելու դեմ Սմիռնովն ասաց, որ Ռուսաստանից անջատվելով «դուք ստիպված կլինեք» թե

²² Ставропольский В., Кавказская драма, СПб, 1906, с. 33-34:

²³ Ն.ս.:

Վրաստանն ու Ադրբեջանը եւ թե Հայաստանն անջատել Անդրկովկասից, ապա նաեւ «Վրաստանն էլ բաժանել մասերի՝ Իմերեթիայի, Քարթլիայի եւ վերադառնալու եր 13-րդ դար... Անկախություն յայտարարելուց հետո դուք մտնելու եք թուրքական օրինատացիայի մեջ, անկախ ձեր կամքի դատնալու եք Թուրքիայի մի մասը կամ նրանից կախված, մտնելու եք նրա հովանավորության տակ...»²⁴: Այդպես էլ եղավ: Հակառակ հայերի ջանքերի Անդրկովկասը քաշվեց հակառուսական խմբակցության մեջ:

Թուրքերն արտակարգ շահագրգռվածություն էին հանդես բերում Անդրկովկասի անկախացման խնդրում: Նրանք անգամ խնդրեցին Բեռլինին ճնշում գործադրելու Ռուսաստանի վրա ճանաչելու Անդրկովկասի անկախությունը: Իր հերթին Գերմանիան պլանավորում էր ստեղծել Կովկասի դաշնակցային հանրապետություն՝ կազմված հայերից, վրացիներից, ադրբեջանցիներից, չերքեզներից: Այդ նպատակով էմիսարներ ուղարկվեցին Բաքու, փորձ արվեց Թուրքիային սահմանակից շրջաններում ապստամբություն հրահրել: «Այդ նոր պետության նշանակությունը պիտի կայանա,- գրում է Պալավիչինին,- Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ որպես բուֆեր ծառայելու եւ միաժամանակ խզելու կապը Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ»²⁵:

Բուլղեիկները հենց սկզբից դեմ էին սեյմի բուն գաղափարին: Դրա դեմ պայքարը ղեկավարում էր Մտ. Շահումյանը: Շահումյանը «ընդհանուր հայրենիքի» ջատագովն էր, դեմ էր երկրամասն ազգային սկզբունքով մասնատելուն, մասնավաճի, որ այդ մասնատումը կատարվելու էր ազգայնամոլական կուսակցությունների ղեկավարության ներքո: Նա 1918թ. փետրվարի 24-ին կոչ արեց «կովկասյան ժողովրդավարությանն» ուշքի գալ, որովհետեւ «այդ սեյմը, սեպերատիզմի եւ նացիոնալիզմի այդ քաղաքականությունը... վերջնական կործանման կհասցին հեղափոխությունը Անդրկովկասում»²⁶:

Դա այդպես էր: Սեյմում Բրեստ-Լիտովսկի պայմանագրի մասին զեկույցման մեջ Ռամիշվիլին ասաց, թե Ռուսաստանը պարզապես ամտեսում է Կովկասը եւ սեյմն է, որ պետք է պաշտպանի այն:

Անդրկովկասում սեյմի իշխանության շրջանն անիշխանության շրջան էր, որ «ձեռք բերեց ազգային բախումների ձեւ»: Այդ ձեւը դառնում էր հիմք հարեւանի հաշվին սեփական ազգայնամոլական ախորժակը հազեցնելու համար: Ժողովանիան չէր թաքցնում, որ երկրամասային «եղբայրություն» ասածը կեղծիք էր, «քանի որ հեղափոխությունը ժողովուրդներին տալիս է ինքնորոշում եւ այն ի վերջո, լինելու է ազգային»: Հետեւաբար, Անդրկովկասում հարկ է ստեղ-

²⁴ Ставропольский В., նշվ. աշխ., с. 33-34:

²⁵ Wien HHSTA PA 1947 Konstantinopel, 15 Oktober 1918, N87/P.S:

²⁶ Շահումյան Մտ., ԵԼԺ, հ. 3, էջ 119:

ծել «ազգային տարածքային միավորներ սահմանափակ ծավալներով, այսինքն՝ բերես հարկ լինի, որ մի ազգը, օրինակ, հայ, վրացի կամ թաթար, բաժանվի մի քանի ինքնավար միավորների...»²⁷: Աղաեսն ավելի հստակ էր արտահայտվում. «Մեր մերձավոր խնդիրը համարում ենք գործնականում իրականացնել ազգային-տարածքային ինքնավարություն Ադրբեջանում»: Նաև շատ արագ ակնհայտ դարձավ, որ ազգային խորհուրդները կիրառում էին գոտարյուն ազգայնամոլական քաղաքականություն և երկրամասի ժողովուրդներին ներարկում էին թշնամություն միմյանց հանդեպ²⁸:

Մուսավաթականները նույնպես պահանջում էին ստեղծել «ազգային գորամիավորներ»:

ՀՀԴ հակառակ կարծիքին էր, որ Անդրկովկասում այնքան ժամանակ տիրապետող կլինեն քաղաքական խառնակությունն ու ազգամիջյան բախումները, քանի դեռ «մենք չենք սահմանափակել ազգային խորհուրդների իրավունքներն ու պարտականությունները, նրանց իրավունքները՝ ձեռավորելու ազգային գորամասեր»: ՀՀԴ առաջարկում էր ցրել ազգային խորհուրդներն ու նրանց գորամասերը և ձեռնամուխ լինել ձեռավորելու «տարածքային գորամասեր»: Մենչևիկները գտնում էին, որ ազգային խորհուրդները պետք է ցրվեին, իսկ ազգային գորամասերը՝ ոչ:

Վրացական «Ծօրեճա»-ն 1918թ. փետրվարի 6-ին գրում է. «Մեր ողորմելի գործունեության հորիզոնին կուտակվում է նոր սեւ ամպ: Դա ազգամիջյան ջարդն է»: Թուրքերը թաթարներին մղում էին առճակատման հայերի հետ, իսկ թաթարները հաճույքով գնում էին դրան, որովհետև հույս ունեին, որ թուրքական բանակն օգնության կհասնի:

Ադրբեջանական բնակչությունը վերածվում էր հինգերորդ շարայունի, բացեիբաց թույլ չէր տալիս, որ ռազմաճակատը մատակարարվեր, համալրումներ ստանար: Եվ որպեսզի բողարկի այդ վիճակի իսկական պատճառն ու կազմակերպչին, Մ. Ռուստամբեկովը հայտարարեց. «Այն բանի հետևանքով, որ չկա այս կամ այն չափով ուժեղ և կազմակերպված իշխանություն... Անդրկովկասի բոլոր մասերում ազգամիջյան ջարդերն առաջ են գալիս ոչ թե որոշակի կազմակերպությունների ջանքերով, այլ՝ տարերայնորեն»²⁹:

Վրաց մենչևիկները երկերեսանի էին իրենց պահում՝ խոսքով դատապարտում էին հայ-թաթարական բախումները, իսկ իրականում մատը մատին չէին տալիս դրանց առաջն առնելու համար:

Վրաց պարագլուխները նաև պառակտված էին: Ժորդանիան ու Գեգեչ-

կորին գտնում էին, որ պատերազմը թուրքերի դեմ պետք էր շարունակել, իսկ Չխենկելին և Ռամիշվիլին՝ դրան դեմ էին և առաջարկում էին սկսել հաշտության բանակցություններ և Անդրկովկասն անկախ հռչակել: Վերջիններս ստանում էին ադրբեջանցի պատգամավորների ջերմ աջակցությունը: «Մուսուլմանական ժողովրդավարության կրոնական գագսմունքը թույլ չի տալիս մեզ մասնակցելու Թուրքիայի դեմ պատերազմին»,- հայտարարեցին նրանք:

Տարօրինակ մի երեսույթ. որ մենչևիկներն ու, մասնավորապես, մուսավաթականները, դեմ էին Բաքվի կոմունային, հասկանալի է, բայց որ Խ. Կարճիկյանն էր հայտարարում, թե «անհրաժեշտ է բոլշևիկյան անիշխանական շարժմանը հակադրել կառավարական գործերի կազմակերպված ուժը»³⁰, պարզապես անհասկանալի էր, որովհետև դա նշանակում էր, որ նա կառավարական գործեր էր պահանջում կռվելու Բաքվի հայկական, այդ թվում նաև ՀՀԴ, գորամասերի դեմ:

Սեյմի երեք խմբակցությունները համախուհ չէին նաև երկրամասի վաղվա օրվա հարցում: Մենչևիկները հայտարարեցին. «Եթե դուք ցանկանում եք փրկել մեր երկրամասն ու ժողովուրդը, այս պահին Անդրկովկասը պետք է դառնա քաղաքականապես անկախ», այսինքն՝ իրեն անկախ հայտարարի Ռուսաստանից: Նրանց հետ համերաշխվեց նաև Հ. Քաջագունին: Սակայն այդ համերաշխվելը շատ ավելի ցուցադրական էր, քան համոզմունք, որովհետև ՀՀԴ այդ շրջանում դեմ էր Ռուսաստանից անջատվելուն: Ա. Խատիսյանը սեյմի փետրվարի 16-ի նիստում ասաց. «Թող Ռուսաստանի քաղաքացիները տապալեն բոլշևիկները, թող ռուս ժողովուրդը թոթափի գերմանական այդ լուծը և այն ժամանակ հարկ չի լինի, որ ոչ մահմեդականները, ոչ վրացիները և ոչ էլ հայերը փնտրեն նոր կողմնորոշում»³¹:

Սեյմի գրեթե բոլոր նիստերում Անդրկովկասի անկախության հարցը դրվում էր, որովհետև մենչևիկները հանձինս անկախացման տեսնում էին այն «իրական գործոնը, որի շուրջ կարող էին համախմբվել Անդրկովկասի բոլոր ժողովուրդները...»³²:

Գրեթե նույն միտքն արտահայտեցին նաև Խան Խոյսկին ու Ս. Վրացյանը: Մենչևիկների իրական կարծիքը ձեռակերպեց Վ. Թեւոյանը: Նա ասաց. «Մենք չէինք ցանկանում հեռանալ Ռուսաստանից, բայց, երբ մեր առաջ կա ընտրության հնարավորություն Անդրկովկասի ստրկացման և կործանման միջև, ապա պետք է ընտրել երկրորդը: Սակայն մենք կարծում

²⁷ Саркисян А., Великий Октябрь и непролетарские партии Закавказья, Е., 1990, с. 97:

²⁸ «28-ր մայիս», Փարիզ. 1926, էջ 27:

²⁹ Саркисян А., նշվ. աշխ., с. 100-101:

³⁰ ՎՀ ՊԿՊԱ. ֆ. 1819, ց. 1, գ. 4:

³¹ Саркисян А., նշվ. աշխ., с. 105:

³² Ն.տ., с. 106:

ենք, որ բուրբական կայսրությունը շահագրգռված է, որ Անդրկովկասը լինի բուլիեր պետություն հենց բուրբական կայսրության ինքնապաշտպանության համար»³³ :

Ինչեփոք, 1917թ. Կովկասյան դաշնությունն իրողություն էր: Հայ ժողովրդին այդ դաշնությունում ներկայացնում էր ՀՀԴ, այն առաջադրում էր չորս պահանջներ՝ ինքնուրույն Անդրկովկասը մասն է Ռուսաստանի, պատերազմի ավարտին դնել Արեւմտյան Հայաստանի ինքնավարության հարցը, Անդրկովկասի տարածքի վերաբաժանում ըստ ազգային կանտոնների, ստեղծել միատարր ընկերավարական վարչակարգ:

Շահան Նաթալին նկատում է. «...Սեյմը հայ ժողովրդի կեանքին եւ հողերուն դեմ դավադիր մեկ մարմին է, գլուխը մատած Ժորդանիան: Իսկ Աղաւեսները, Սուլթանովները աչքերնին սեւեռած են Էնվերի զինուորներուն, թուրք ու քարաք թուրանականութեան իրագործումի ձգտումներով»:

Ծերեթեյին գտնում էր. «Սեյմի գոյության արդարացումը Թուրքիան Կովկաս բերելուն մեջ էր: Ան կամ պիտի բերեր Էնվերը ու պիտի լուծուեր, կամ պիտի լուծուեր, որ Էնվերը բերեր Կովկաս»³⁴:

Երե Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը դարձավ երկրամասի անկախացման առաջին քայլը, ապա սեյմը այդ գործընթացին տվեց անշրջելի բնույթ: Ստ. Շահումյանը դատապարտեց Ռուսաստանից անջատվելու ընթացքը: Նա մարգարեացավ՝ անդրկովկասյան նոր իշխանությունները երկրամասը կբաժանեն «երեք ազգային սատրապության՝ Վրաստանը կվերցնեն մենչելիկները, հայերին կդնեն Դաշնակցություն կուսակցության տրամադրության տակ, մուսուլմաններին կտրամադրեն մուսուլման մացիոնալիստներին»³⁵: Նա ասում էր այն մասին, որ սեյմը մարմնավորում է սեպարատիզմի եւ մացիոնալիզմի քաղաքականություն եւ վերջնական կործանման էր հասցնելու Անդրկովկասի ամբողջականությունը: Պահանջվեց ընդամենը երեք ամիս այդ գործընթացը տրամաբանական վախճանի հասցնելու համար:

Սակայն սեյմի ստեղծմանը չի կարելի միանշանակ գնահատական տալ: Այն ինքնուրույն պետական կառույց էր, անկախ կարգավիճակով, իսկ օրենսդիր բարձրագույն իշխանության գոյությունը միանգամայն տրամաբանական էր ու անհրաժեշտ: Բանվորա-գյուղացիական եւ զինվորական խորհուրդները եւ դրանց երկրային կենտրոնները միայն մասամբ էին լրացնում նման օրենսդիր իշխանության բացակայությունը: Դրանք նպատակաուղղված էին ոչ այնքան կառուցելուն, որքան «հին աշխարհը» հիմնահատակ անելուն: Անդր-

կովկասյան կոմիսարիատը եւ խորհուրդների երկրային կենտրոնները, չճանաչելով հանդերձ Ռուսաստանի բոլշեիկյան խորհուրդների իշխանությունը, բնականաբար, ձգտում էին ունենալու զոմե ժամանակավոր օրենսդիր մարմին: Այդ մարմնի՝ սեյմի, պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1918թ. փետրվարի 10-ին, այսինքն՝ այն բանից հետո, երբ Պետրոգրադում ցրվեց համառուսաստանյան սահմանադիր ժողովը: Սեյմը այն պայմաններում ժողովրդավարության ամենահասանելի եւ, զույգե նաեւ, ամենաարդյունավետ կառույցն էր եւ հնարավորություններ ուներ լուրջ դեր խաղալու երկրամասի կյանքում: Բայց այդպես չեղավ: Ներքին եւ արտաքին այլեայլ ուժերի հարձակումները երկրամասի ու նրա քաղաքական կառույցների, նրա միասնության վրա սեյմին օրապակաս դարձրեցին եւ այն միայն երեք ամսվա կյանք ունեցավ: Այդ միասնական մարմնի եւ, ընդհանրապես, երկրամասի քայքայմանը մեծ չափով նպաստեցին ազգային խորհուրդները, որոնք «պետություններ էին պետության մեջ» հակոտնյա շահերով ու ծրագրերով:

2. «ԱՆԿԱՄՈՒԹՅՈՒՆ»

1918թ. ապրիլի 15-18-ը Թիֆլիսում տեղի ունեցավ Հայոց ազգային ժողովի նիստը, որին մասնակցում էին նաեւ քաղաքական կուսակցությունները (բացի բոլշեիկներից) հնգական ներկայացուցիչներով, Ազգային խորհրդի անդամները, սեյմի հայ պատգամավորները: Օրակարգն էր՝ վերաբերմունք Անդրկովկասի անկախության խնդրին, Ազգային խորհրդի եւ սեյմի հայ խմբակցության փոխհարաբերությունները: Ազգային խորհուրդը որոշում էր ընդունել Անդրկովկասի անկախանալու դեմ: Ա. Շահխաթունին, Ի. Ամիրյանը եւ այլոք երկրամասի անկախանալը համարեցին իրողություն եւ գտան, որ ժողովրդին պետք է կտրել Ռուսաստանից, բարելավել հարաբերությունները հարեւան ժողովուրդների հետ: Ս. Մամիկոնյանը նրանց պատասխանեց, որ «ժողովրդի առողջ բնագոյը թողնեն կենդանի» եւ չզուշակեն, որ անկախ «Անդրկովկաս չկա, Բաքուն Անդրկովկասի շնչելու եւ ապրելու միակ աղբյուրը, ռուսական ձեռքերում է»: Հ. Առաքելյանի կարծիքով ժողովուրդը չէր հաշտվի նոր՝ բուրբական կողմնորոշման հետ:

Ազգային ժողովը չհաստատեց Ազգային խորհրդի որոշումը եւ հանդես եկավ անկախության օգտին: Ա. Միարոնյանը մտավախություն հայտնեց, թե անկախությունն ավելի աղետաբեր է լինելու հայերի համար, քան Բրեստի պայմանագիրը, որովհետեւ քիկունքում չունենալով Ռուսաստանը «ուժի ձայնով չպետք է խոսենք, մեր պատվիրակությունն ավելի խեղճ է լինելու բանակցությունների ժամանակ, քան երբ անկախություն հայտարարված չէր»: Նա

³³ Саркисян А., նշվ. աշխ.,.:
³⁴ Շահան Նաթալի, նշվ. աշխ., էջ 144:
³⁵ Շահումյան Ստ., նշվ. աշխ., էջ 22-23:

մաեւ ասաց, որ Թուրքիան պատերազմ է հայտարարելու պատրվակ բռնելով բոլշեւիկների առկայությունը Կովկասում եւ թաթարների շարժումը, որը նախապատրաստված եւ կազմակերպված է թուրք էմիսարների միջոցով: Թուրքիան Կովկասում աշխատելու է «լուծել» Հայկական հարցը, որովհետեւ «այնքան ժամանակ, քանի դեռ այստեղ թուրքահայեր կան, Թուրքիան իր առջեւ ցցված է տեսնելու Հայկական հարցը, իբրեւ մի արյունոտ դրոշակ»: Թուրքերը հասկանում են, որ ոչ ոք չի կարողանալու մերժել հայի իրավունքը՝ վերաստեղծելու իր հայրենիքը՝ Արեւմտյան Հայաստանը: «Եթե Թուրքիան կամենար բռնի ստեղծել... չէր խլի մեր գավառները»³⁶:

Ապրիլի 7 (21)-ին Ալեքսանդրապոլում սկսվեց մի ուրիշ խորհրդակցություն, որին մասնակցում էին սեյմի եւ կոմիսարիատի հայ անդամները, կուսակցությունների ներկայացուցիչները, նահանգային կոմիսարները, Հայոց ազգային խորհրդի լիազորները, Ալեքսպոլի գործիչները: Քննարկվեցին հաշտություն կնքելու վերաբերյալ պատվիրակության, կառավարության անդամների գեկուցումները, ռազմական դրության եւ պաշտպանության վերաբերյալ հարցեր:

Հանդես եկան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Լեբեդիմսկին, որը Նազարբեկյանի, Վիշինսկու եւ նրա տեղակալ Ղորղանյանի հետ նոր էր վերադարձել ռազմաճակատից: Լեբեդիմսկին ընդհանուր առմամբ գոհունակություն հայտնեց հայկական զորքերի մարտունակությունից, որի շնորհիվ ճակատի ձախ թեւում թշնամին հետ էր շարտվել: Նա մաեւ նշեց, որ եթե Բաթումի շրջանում դրությունն անհասկանալի է, ապա Կարսը բավարար ուժեր ունեն թշնամուն դիմադրելու³⁷: Կոմիսարիատի գործունեության մասին գեկուցումով հանդես եկավ Ղազարյանը: Ա. Ջոհրաբյանը հնչեցրեց տագնապը, որը պատել էր ժողովի բոլոր մասնակիցներին. «Ի՞նչ երաշխիք, որ Թուրքիան կբավարարվի 1877թ. սահմաններով եւ ավելի առաջ չի գա... եւ մեզ չի կոտորի, Թուրքիայի ասածներին հավատալը վտանգավոր արկածախնդրություն է... Տաճկաստանի նպատակն է մեզ բաժանել Ռուսաստանից ու ենթարկել իրեն», իսկ ժողովուրդը, ասաց Լ. Սարգսյանը «բնավ չի ուզում բաժանվել Ռուսաստանից»³⁸:

Ա. Խատիսյանը պատմեց Տրապիզոնի հաշտության բանակցությունների անդրկովկասյան պատվիրակության ադրբեջանցի անդամների դավաճանության, հոգուտ թուրքերի բացահայտ ու թաքուն գործելու մասին: «Տաճիկները զգում էին իրենց, ինչպես սեփական տանը»: Թուրքական պատվիրակությունը, շարունակեց նա, պնդում էր Անդրկովկասի անկախացման վրա եւ խոստա-

³⁶ Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 174:

³⁷ ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 213:

³⁸ Ն.տ.:

նում ամեն ինչով օգնել երկրամասին՝ «գորք կուղարկենք ձեզ ընդդեմ բոլշեւիկների, կօգնենք կազմավորել հայկական տարածքներ Կովկասի սահմաններում»: Սեյմում բացի հայերից մյուս բոլորը կողմնակից էին տարածքների մարսիմալ զիջումների, ավելի շատ, քան Բրեստի պայմանագիրն էր տվել թուրքերին: Հայկական պատվիրակության առաջարկությամբ Արեւմտյան Հայաստանի ինքնավարությունը Թուրքիայի կազմում սահմանափակվելու էր հարկերի վճարմամբ: Վեց նահանգները (նվազագույնը չորսը) միավորվելու էին սեփական օրենսդրական հաստատություններով: Թուրքերը պատասխանել էին, թե հայերը դավաճանել են Թուրքիային, այդ էր պատճառը, որ ոչնչացվել էր 600.000 հայ: Այդ նույն ժամանակ 300.000 թուրք կոտորվել էր հայերի եւ ռուսների կողմից: Թուրքիան եթե գրավի Կարսը, հայերին անվտանգության երաշխիք չի տա, հայերը չպետք է հույսը դնեն միջազգային խորհրդաժողովների վրա: Հայերի թուրքական կողմնորոշումը պետք է ոչ միայն թուրքերին, այլեւ հայերին: Թուրքիայում ընդամենը 400.000 հայ է բնակվում, որոնք այլեւ վտանգավոր չեն, դրա փոխարեն նրանք լավ արհեստավորներ ու բարեխիղճ հարկատուներ են, մաեւ հակաթույն են հույների դեմ: Քրդերը թուրքերին պետք չեն: «...Եթե հայերը ստիպեն, որ Կովկասը կռվի մեր դեմ, կլինենք անողոր: Վրացիներն ու ադրբեջանցիները վտանգավոր չեն մեզ համար: Մեղավորը հայերն են, ովքեր Երեսնի նահանգում ավերում են թուրքական գյուղերը»:

Քաջազունին հայտարարեց, թե թուրքերը Բրեստի պայմանագրից որեւէ զիջում չեն կատարի: Նրանք Բրեստում հաղթել են հզոր Մոսկվային եւ Տրապիզոնում չէին պարտվի Անդրկովկասին: Նրանց համար Կովկասում տարածքների ձեռքբերումը նշանակում էր փոխհատուցում Միջագետքում եւ այլուր կորցրած տարածքների: Անդրկովկասին տիրանալը մաեւ անհրաժեշտ էր համարվում ազգային վերածննդի, կայսրության տարածքային ամբողջականացման, Ռուսաստանից պաշտպանվելու համար:

Թուրքիան մաեւ համոզված չէր, որ Անդրկովկասը նորից չէր հակվի դեպի Ռուսաստան: Դրա համար իրեն անհրաժեշտ էին այնպիսի ռազմավարական հզոր կետեր, ինչպիսիք են Կարսը, Արդահանն ու Բաթումը: Թուրքիան անպայման հանրաքվեն այնպես կացկացնի, որ ազգաբնակչությունը «քվեարկի հոգուտ Թուրքիայի կազմի մեջ մտնելու»: Սակայն հազիվ թե, շարունակում է Քաջազունին, պետությունները Անդրկովկասի ճակատագրի տնօրինումը բողոնեն Թուրքիային: Պատերազմում վերջինիս անխուսափելի պարտությունը ի չիք կդարձնի Բրեստի պայմանագիրը: Իսկ եթե Անդրկովկասը ներկա պահին հրաժարվի ճանաչել Բրեստի պայմանագիրը, աղետն անխուսափելի է լինելու: Թուրքերը շարունակելու են հարձակումը, իսկ այդ լինելու է ոչ միայն պատերազմ, այլեւ արեւելահայության ջարդ ու մաեւ ջարդ Փոքր Ասիայում

մնացած ու Միջագետք տարագրված հայերի: Եվ չնայած այն բանի, որ Թուրքիան տիրանալով Կարսին ու Արդահանին, դրանք հայաթափելու է, էապես կրճատվելու էին հայաբնակ տարածքները, փակվելու էր դեպի Բասեն եւ Ալաշկերտ տանող ուղին, ամրանալով Կարսում Թուրքիան մշտական վտանգ կդառնար Երեւանի եւ Ալեքսանդրի համար, այնուամենայնիվ, եզրակացրեց նա, դա չարիքներից փոքրագույնն է: Դեռ մինչեւ այս խորհրդակցության սկսվելը, ապրիլի 18-ին ստացվել էր Խ. Կարճիկյանի նամակը, որը միանգամայն հակառակն էր ապացուցում՝ Բրեստի ընդունումը Անդրկովկասին չի փրկի թուրքական հարձակումից, քանի որ «Կովկասի գրավումը Տաճկաստանի համար քաղաքական ծրագիր ու անհրաժեշտություն է»: Բաթումն ու Կարսը ձեռք ձգելը երկրամասին տիրանալու առաջին քայլն է: Անդրկովկասը անկախ հայտարարելը նշանակում է երկրամասը վերածել Թուրքիայի վասալի:

Անդրկովկասի անկախանալը որեւէ ձեռով չի կարող կանխել վերը նշված մարզերի անդառնալի կորուստը: Իր «անվտանգությունը» ապահովելու համար, գրում է Կարճիկյանը, Թուրքիան պետք է «ներս գա Անդրկովկաս եւ բռնե այն դռները, որով Ռուսաստանը մտադիր կլինի առաջանալ: Դա կլինի Անդրկովկասի փաստացի գրավում, որ դյուրանալու էր տեղական թուրք բնակչության վերին աստիճանի ազդեցիվ եւ սանձարձակ տրամադրության հետեւանքով»: Անդրկովկասում եւս պետք է վերացվի «վտանգավոր տարրը»՝ հայությունը: Կարճիկյանը համոզված էր, որ Կարսն ու Բաթումը տալուց հետո Անդրկովկասի անկախ հայտարարելը վրացիների եւ հայերի համար ինքնասպանություն է, քանի որ այն դիտվելու է ոչ թե անկախության գաղափարի իրականացում, այլ բռնի գործողություն, որին Անդրկովկասը հարկադրված գնում է Թուրքիայի ճնշման տակ: Դրա հետ Ռուսաստանը երբեք չի հաշտվի, չի հաշտվի նաեւ երկրամասի հայությունը, որովհետեւ մշտապես զգալու է իր գլխին կախված յաթաղանը եւ ձգտելու է դեպի Ռուսաստան:

Կարճիկյանը եզրակացնում է. «Պատերազմը դադարեցնելը մեզ համար ինքնասպանության նշանակություն ունի», իսկ պատերազմը շարունակելն ամենեւին էլ չի նշանակում, թե անպայման անհույս հետեւանքներ է ունենալու³⁹:

Ս. Մամիկոնյանը փրկվելու միակ երաշխիքը համարեց թշնամուն հակահարված տալը: «Հավատալ թուրքերի խոստումներին, դա վատագույն արկածախնդրություն է: Տաճկաստանն ուզում է մեզանից ստեղծել բուֆեր պետություն... Տաճկաստանի նպատակն է բաժանել մեզ Ռուսաստանից ու ենթարկել իրեն»:

³⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122:

Կարճիկյանից ստացվում է նաեւ մի հեռագիր, թե սեյմի մահճեղական անդամները հայտարարել են, որ իրենք լքում են կառավարությունը եւ շուտով Ադրբեջանն անկախ են հայտարարելու, որ «իրենք չեն ուզում մնալ Ռուսաստանի սահմաններում»: Լեոն այդ անվանեց «երկրորդ ճակատի ստեղծում»:

Մտքերի փոխանակությունը համոզեց Հ. Քաջագունուն, որ պատերազմը դադարեցնելը, իրոք, կործանարար էր եւ հայտարարեց. «...Պետք է շարունակենք պատերազմը»: Ապա հանդես եկավ Նազարբեկյանը: Նա ռազմաճակատում դրությունը գնահատեց «հաստատուն»: Նույն գնահատականը տվեց բանակի շտաբի պետ Վիշինսկին:

Սակայն ապրիլի 8 (21)-ին ստացվում է հեռագիր, որ Վրաց ազգային խորհուրդը կողմ է քվեարկել Անդրկովկասն անկախ հայտարարելուն: Դա շշմեցնող ազդեցություն ունեցավ: Բոլորի ուղեղներում մի հարց մխրճվեց. «Ի՞նչ անել»: Հովհ. Թումանյանը գտնում էր, որ ոչ մի դեպքում չպետք է քայքայել Անդրկովկասի միասնությունը: «Անջատումը,- ասաց Ս. Վրացյանը,- ավելի շատ կվնասի մեզ, հայերիս, այդ դեպքում մենք կմնանք կղզիացած, կտրված արտաքին աշխարհից»: Նա առաջարկեց դիմել Գերմանիային: Ս. Ստամբոլյանն ու Բ. Ղարիբջանյանը փրկության միակ միջոցը համարեցին խորհրդային իշխանության հաստատումը: Ս. Հարությունյանն առաջարկեց Անդրկովկասի կառավարության մեջ մտցնել «կենտրոնական կառավարության կողմից ռուսական տարրի ներկայացուցիչ»:

Տերտերյանի կարծիքով փրկության համար հարկավոր էր «ժողովրդական պատերազմ, ընդհանուր զորակոչ, բռունցք»: Նաեւ առաջարկություն եղավ ստեղծելու հայ-վրացական միացյալ կառավարություն, իսկ Ադրբեջանի անջատվելու հարցը դնել հանրաքվեի:

Քննարկման ներկայացված բանաձեռի վեց մախագծերին չանդրադարձան, որովհետեւ խորհրդակցության աշխատանքը ապրիլի 18(21)-ի երեկոյան ընդհատվեց սեյմի արտահերթ նիստ հրավիրելու կապակցությամբ: Նաեւ նշենք, որ Բաքվի խորհուրդը նույնպես հանդես եկավ Անդրկովկասի անկախանալու դեմ: Խորհրդի ընդունած բանաձեռում ասվում էր, որ Ռուսաստանից անջատվելը հանդիսանալու է «առաջին եւ վճռական քայլն Անդրկովկասը ենթարկելու թուրքական տիրապետությանը եւ հանգեցնելու է երկրամասում խաների իշխանության վերականգնմանը»⁴⁰: «Մշակ» թերթը մարտի 8-ին գրում է. «Եթե մեր երկրամասի երեք գլխավոր ազգությունները՝ հայերը, վրացիները եւ ադրբեջանցիները միավորվեն ու գործեն միասնաբար, թուրքական վտանգը կանհետանա: Դա էլ հանդիսանում է միակ ելքն ու փր-

⁴⁰ "Baky", 09.03.1918:

կուրյունը, այլ ոչ թե Անդրկովկասն անկախ հայտարարելը»: Անկախանալուն դեմ արտահայտվեցին նաև ծախ էսեռները:

Բայց վրաց մենչեիկները հիմնավորապես էին նախապատրաստվել Անդրկովկասի անկախության հռչակմանը: Նրանք նախապես ստեղծել էին երկրամասի անկախության հռչակման հանձնաժողով մենչեիկ Դ. Օնիաշվիլու նախագահությամբ:

Սեյմի ապրիլի 22-ի արտակարգ նիստում Օնիաշվիլին հանդես եկավ Անդրկովկասն անկախ հայտարարելու վերաբերյալ գեկուցումով: Նա հայտարարեց. «Անդրկովկասը կանգնած է ողբերգական կացության առաջ, կամ այժմ Անդրկովկասը հայտարարել Ռուսաստանի անբաժան մաս եւ դրանով Ռուսաստանի քաղաքացիական կռիվների բոլոր սարսափները կրկնել այստեղ, իսկ ապա դառնալ օտարների, սվյալ դեպքում թուրքական արշավանքների հրապարակ, կամ իրեն հայտարարել անկախ եւ սեփական ուժերով պաշտպանել ամբողջ երկրամասի ֆիզիկական գոյությունը»⁴¹:

Մուսավաթականները ցնծությամբ ընդունեցին Անդրկովկասն անկախ հռչակելու առաջարկը: Ռասուլզադեն առաջարկեց, Դադատանից բացի, Անդրկովկասի դաշնության մեջ ներառել ամբողջ Հյուսիսային Կովկասը: Նա սեյմի ուշադրությունը հրավիրեց Մուխոմի եւ Բաքվի վրա, որոնք «տառապում էին իրենց խորհրդային իշխանության գաղափարների ջատագով համարող ավագանների լծի տակ»:

Լորդկիպանիձենն ասաց, թե այս դահլիճում կան մարդիկ, ովքեր գտնում են, որ «թե անկախ ենք, պետք է օգնության կանչենք թուրքական զորքերին եւ թուրքի սվիններով պաշտպանենք Անդրկովկասի անկախությունը հյուսիսից արշավող բուլչեիկների դեմ»⁴²:

Սեյմումը հայտարարեց, թե անկախանալով «դուր հարկադրված եք լինելու քայլ առ քայլ անել այն, ինչ որ հրամայեն ձեզ թուրքերը... երբ թուրքական զորքերն անցնեն Անդրկովկասով, դա կնշանակի Անդրկովկասի գրավումը թուրք-գերմանական դաշինքի կողմից»:

ՀՀԴ խմբակցության անունից հանդես եկավ Հ. Քաջագունին եւ ասաց, թե որեւէ անհրաժեշտություն չի տեսնում անմիջապես անկախանալու: Չնայած դրան՝ թե նա եւ թե ՀՀԴ ամբողջ խմբակցությունը քվեարկեց «ինքնուրույն անդրկովկասյան պետություն հայտարարելու» օգտին⁴³: Այդ վարքագիծն առաջացրեց մույնիսկ Բաքվի դաշնակցականների պաշտոնաթերթը՝ «Աբեի» գալույթը:

Կարճիկյանը սեյմի այդ նիստում առաջ քաշեց «Անդրկովկասի տարած-

քային միավորումների», ասել է թե, ազգային-տարածքային-վարչական միավորումներ ստեղծելու հարցը:

«Չեմ ցանկանում այն անկախությունը, որը գալիս է թուրքական սուլթանի մահիկի տակից... անկախություն, որը հռչակվում է այնպիսի պայմաններում, ինչպիսիք ներկայումս իշխում են Անդրկովկասում, նշանակում է Թուրքիայի կողմից լրիվ ստրկացում... Անդրկովկասն անկախ հռչակելը ոչ այլ ինչ է, եթե ոչ կողմնորոշում դեպի Թուրքիա...»⁴⁴:

Այդ առթիվ Չիչերինը 1918թ. մայիսի 15-ին գրում է Գերմանիայի ներկայացուցիչ Միրբախին. «Անդրկովկասի շատ վայրերում այսպես կոչված Անդրկովկասի կառավարության իշխանությունն ամենեւին չեն ճանաչում եւ, ընդհանրապես, ժողովրդական լայն զանգվածներն արտահայտվում են այդ կառավարության դեմ... Հայկական գյուղերն ու քաղաքներն ավելի մեծ համառությամբ են պահանջում անցկացնել հանրաքվե՝ պնդելով, որ իրենց պատվիրակները հեռանան սեյմից...»⁴⁵: Այնուամենայնիվ սեյմը Անդրկովկասը հայտարարեց «Անկախ ժողովրդավարական դաշնակցային հանրապետություն»⁴⁶:

Նորահռչակ անկախ պետության բարձրագույն մարմինը սեյմն էր, որի նախագահին տրվեց պետության ղեկավարի ստատուս: Սեյմի նախագահ ընտրվեց մենչեիկ պարագլուխ Ն. Չիսեիձեն:

Գեգեչկորին դեմ էր երկրամասը անկախ հայտարարելուն, եւ նրա կառավարությունը հրաժարական տվեց: Սեյմի կառավարության նախագահ եւ ԱԳ նախարար նշանակվեց Ա. Չիսեիկին: Վրացիներ էին նաև ՆԳ եւ ռազմական նախարարները՝ Ն. Ռամիշվիլին եւ Գ. Գեորգաձեն: Այդ կառավարության մեջ հայերից մտան Հ. Քաջագունին՝ խնամատարության նախարար եւ Ա. Խատիսյանը՝ ֆինանսների նախարար:

Այսպիսով, Անդրկովկասի կարգավիճակի խնդրի պերմանենտ քննարկումները ստացան իրենց հանգուցալուծումը, որի արագացման գործում անպայման մեծ դեր խաղացին պարտությունները ռազմաճակատում, իսկ Բաքումի անկումն (ապրիլի 1-ին) այն իրողություն դարձրեց:

Բայց նաև ակնհայտ էր, որ այդ որոշումը կայացվեց հակառակ երկրամասի շահերի, ի վնաս ոչ մահմեդական ազգաբնակչության անվտանգության, առանց հաշվի առնելու լայն զանգվածների տրամադրությունները:

Հանդես գալով սեյմում այդ հարցի քննարկման ժամանակ Ս. Հարությունյանն ասաց. «Սենք քաջ գիտենք, որ Թուրքիայի պահանջն ընդունելը կամ

⁴¹ Закавказский Сейм: Стенографический отчет заседания 22, с. 6:

⁴² Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 107-108:

⁴³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 197:

⁴⁴ «Документы и материалы...», док. N99:

⁴⁵ ДВП СССР, т. 1, док. N179:

⁴⁶ Закавказский Сейм: Стенографический отчет заседания 22, с. 6:

չընդունելը, միեւնոյն է. մեր ժողովրդի համար միատեսակ հետեւանքներ կունենան...»: Նա հայերի դրութիւնը համեմատում է փակուղի բշված վագրի հետ, որը «պետք է պաշտպանի իր կյանքը»⁴⁷:

Օնիաշվիլին ասաց որ սոցիալիստական հեղափոխությունից հետո ռուսական կողմնորոշումը դարձել է հետադիմական եւ առաջարկեց դեն նետել այն եւ «ունենալ ավելի լավ եւ նոր կողմնորոշում»⁴⁸: Նրան պատասխանեց Թումանյանը. «Անդրկովկասի անկախության հանձնաժողովի նախագահն այստեղ հայտարարեց, թե իբր Անդրկովկասի ժողովուրդները ձգտում են անկախության եւ ներկայումս իրականացնում են իրենց վաղեմի երազանքը: Բայց մենք գիտենք, որ Անդրկովկասի ժողովուրդներն ավելի քան մեկ տարի հնարավորություն ունենին հայտարարելու իրենց անկախության, իրենց հայացքների, իրենց ինքնուրույնության, իրենց ձգտումների մասին, բայց ոչ մի ժողովուրդ չդրեց Ռուսաստանից լիովին անջատվելու հարցը: Եթե ներկայումս առաջացել է անջատման, անկախության, ինքնուրույնության այդ գաղափարը, ապա հարկ է ազնվորեն խոստովանել, որ այն սկիզբ է առնում թուրքական ինսպիրալիստներից:

Արդյոք համոզված եք, որ այդ հարցն ազատ քվեարկությամբ որոշելու դեպքում ժողովուրդը չի ասի. «Չեմ ցանկանում անկախություն թուրքական սուլթանի մահակի տակ»: Ներկա իրավիճակում հռչակված անկախությունը նշանակում է դառնալ Թուրքիայի ստրուկ»⁴⁹:

Որ սեյմը քվեարկեց անկախության օգտին, առաջին հերթին, հետեւանք էր մենչելիկների ու մուսավաթականների հետեւողական անազնիվ կեցվածքի, որոնց հետեւից ի վերջո գնացին նաեւ դաշնակները: Քաջագունունին լսելի ձայնով իր կուսակցության անունից փնթփնթաց. «Միանում է ինքնուրույն պետություն հայտարարելուն»⁵⁰: Վրացյանը խոստովանեց. «Այդ հանգամանքը հայերի համար ունեցավ ճակատագրական հետեւանքներ»⁵¹:

Չխենկելին հեռագրեց Վեհիբին. «Կատարված է նաեւ այն պայմանը, որի մասին ավելի է օսմանյան պատվիրակության 1918թ. ապրիլի 13-ի դեկլարացիայում»: Չխենկելին խնդրում է վերսկսել հաշտության բանակցությունները»⁵²:

Վեհիբը լռեց, իսկ թուրքական հարձակումը գնալով նոր թափ էր առնում: Միայն քաղաքականության այբուբենը չհասկացողը կամ դավաճանը կարող էր Թուրքիային հաշտության բանակցությունների հրավիրել մի պահի, երբ

⁴⁷ "Документы и материалы...", с. 174-176:

⁴⁸ Ն.տ., с. 178:

⁴⁹ Ն.տ., с. 208-209:

⁵⁰ Борьян Б., 6շվ. աշխ., Զ, 2, p. 34:

⁵¹ Վրացյան Ա., 6շվ. աշխ., էջ 107:

⁵² "Документы и материалы...", док. N112:

կովկասյան ճակատը գրեթե մերկացած էր, Անդրկովկասում բազմափորում էր անիշխանությունն ու փլուզումը, ինչը Թուրքիային «հրավիրում էր» Անդրկովկաս, եւ բանակցությունները վերջինիս որեւէ լավ բան չէին խոստանում:

Սեյմի որոշման հետեւանքները գլուխ ցցեցին հաջորդ օրն իսկ: Չխենկելին անմիջապէս «ինքնագլուխ, առանց սեյմի հրամանատարության գիտության ու համաձայնության եւ առանց համաձայնեցնելու Հայկական ազգային խորհրդի հետ, հրամայեց Կարսը հանձնել թուրքերին: Այդ գիջումի գնով նա զինադադար ստացավ եւ կանգնեցրեց թուրքերի առաջխաղացումը Իսեթրեքիայի խորքերը»⁵³:

Գրեթե նույն ժամանակ իրեն անկախ հայտարարեց նաեւ Հյուսիսային Կովկասը: Այնտեղ ձեւավորված Լեռնականների միության կենտկոմը Կ. Պոլիս ուղարկեց Բամաթովի ղեկավարած պատվիրակությունը, որը ստացավ սուլթանի հովանավորությունը եւ Էնվերի եռանդուն աջակցությունը:

Մի հետաքրքիր եւ վրաց պարագլուխների վարքագծին բնորոշ փաստ: Կարսը դավաճանաբար թուրքերին հանձնելու կապակցությամբ, երբ Հ. Քաջագունունին եւ Ա. Խատիսյանը հայտարարեցին, թե նախարարական պաշտոններից հրաժարական էին տալիս, նրանց այցելեցին Ծերեթելին, Ժորդանիան, Գեգեչկորին եւ Ռամիշվիլին ու առաջարկեցին, որ Քաջագունունին ձեւավորի նոր կառավարություն:

Քաջագունունին հրաժարվեց, ասելով. «Այժմ ամեն բան լմնցած է. Կարսը յանձնում է, զայն ետ ստանալ անկարելի է, պետք է հաշվի առնել կատարում իրողությունները: Անկարելի է մեր վրա վերցնել վաղվա պատասխանատվութիւնը: Եթե մենք ընդունենք վրացիների առաջարկը, այդ պիտի նշանակե, որ մենք մարտահրավեր կընենք մահմեդականներուն եւ մենք պատերազմի կանցնեինք թուրքերի դեմ: Մեր ներկա ուժերով մենք իրավունք չունենինք այդպիսի քայլ ընելու»:

Այս դատողության հետ դժվար է համաձայնվել երկու պատճառով. նախ՝ հայերը մարտահրավեր կնետեին, թե ոչ, միեւնոյնն էր, թուրքերն Արաքսն ու Արփաչայն անցնելու էին եւ անցան, նրանց ու տեղի մահմեդականների դեմ կռվելու էին միայն հայերը, այսինքն՝ անկախ հայ գործիչների ցանկության կամ վարքագծի, նրանց վրա էր ընկած պատասխանատվությունը: Երկրորդ, նշված պահին Թուրքիայի ռազմական հզորությունը շատ ավելի տպավորություն էր, քան իրականություն եւ կասկածից վեր էր, որ հայկական ռազմական ուժերն ի գորտ էին հակահարված տալու:

Չխենկելին անկախությունն անվանեց Անդրկովկասի ժողովուրդների միասնության երաշխիք: «Հասկանալի է, որ Անդրկովկասը կարող է մնալ

⁵³ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 1874, ց. 1, գ. 4:

միասնական միայն անկախ վիճակում, այլ ոչ թե Ռուսաստանի կազմում լինելու դեպքում»⁵⁴ :

Ռուսաստանը չճանաչեց Անդրկովկասի անկախությունը: Ստ. Շահումյանը լավ էր հասկանում վրացիների իսկական դիտավորությունները՝ նրանք ձգտում էին խզել հարաբերությունները Ռուսաստանի հետ: «Եվ իզուր չէր սեյմում Օնիաշվիլին հայտարարում, որ ռուսական կողմնորոշումը հետադիմական է եւ որ պետք է ուրիշ կողմնորոշում փնտրել, իսկ Չխեիձեն պաշտպանեց այդ հայտարարությունը, թե լավ է ընկնել Թուրքիայի, քան բոլշեւիկների գիրկը»⁵⁵ :

Անդրկովկասի անկախանալը հիմք հանդիսացավ ոչ թե նրա միասնության, այլ մասնատման հետագա խորացման համար:

Անմիջապես առաջին պլան ելան պատերազմից դուրս գալու եւ Բրեստ-Լիտովսկի պայմանագրին վերաբերմունքի հարցերը: «Անկախ» Անդրկովկասի կառավարությունն ի լուր աշխարհի հայտարարեց, որ չի ճանաչում այդ պայմանագիրը, որովհետեւ «Անդրկովկասը երբեք չի ճանաչել ժողովուխորի բոլշեւիկյան իշխանությունը»⁵⁶ : Ստեղծվեց Թուրքիայի հետ պայմանագրի նախագիծ պատրաստող հանձնաժողով Ն. Ռամիշվիլու նախագահությամբ, որը հայտարարեց, թե «կնքվելիք խաղաղության պայմանագրի հիմքում պետք է դրված լինի Թուրքիայի եւ Ռուսաստանի 1914թ. սահմանի վերականգնումը»⁵⁷ :

Մուսավաթական Հաջինսկու կարծիքով՝ «անկախության պաշտոնական հռչակումը թուրքերի համար հանդիսանալու էր նաեւ փոխհատուցում, քանի որ մեր անկախությունը թուրքերին օգտակար է»⁵⁸, իսկ Հայդարովը հայտարարեց. «Անդրկովկասյան պետության անկախության փաստը Թուրքիային ձեռնտու է, եւ դրա վրա պետք է կառուցենք մեր բանակցությունները»⁵⁹ :

Տեքյանն Անդրկովկասն անկախ հռչակելու առթիվ գրում է. «Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական խորհուրդների հետ միանալու փոխարեն, կարճամիտ դաշնակցականները միացան թուրք բեգերի ու վրացի ազնվականների շահը պաշտպանող ազնվականների հետ՝ Չխենկելի, Չխեիձեի, Գորբելիայի, Խան Խոյսկու հետ... Եվ մի տգեղ օր, մի զվելի օր դավաճանները Կովկասը Ռուսաստանից անկախ հայտարարեցին... Արյունաբորու իմպերիալիստ (թալանչի) Տաճկաստանն էլ հենց այդ էր ուզում... իսկույն եւեթ զորքը շարժեց առաջ եւ գրավեց Կովկասի հայաբնակ երկրները: Տաճկաստանն

⁵⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

⁵⁵ Շահումյան Ստ., նշվ. աշխ., հ. 5, էջ 85:

⁵⁶ "Борьба", 03.03.1918:

⁵⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9:

⁵⁸ Ն.տ.:

⁵⁹ Ն.տ.:

այսպես ասաց՝ քանի որ դուր Ռուսաստանից անկախ պետություն եր, ուրեմն իմ՝ Ռուսաստանի հետ կապած պայմանները ձեզ չեն վերաբերում... իսկ այդ պայմաններում ասված է, որ Թուրքիան Կարսից դեմն անցնելու իրավունք չունի: Այժմ, երբ Կովկասը անկախ է, ասաց Թուրքիան... մենք պահանջում ենք, որ թույլ տար մեր զորքը մտցնելու Երեւան, Ալեքսանդրապոլ, Ախալքալար եւ այլն»⁶⁰ :

Տեքյանի խոսքերն արտահայտություն էին հայ ժողովրդի լայն զանգվածների մտահոգության, թե Ռուսաստանից անջատվելը հայության համար սարսուղանակում է նոր ցեղապանության վտանգ: Անդրկովկասի անկախության դեմ հանդես եկան բազմաթիվ հաստատություններ ու կազմակերպություններ: Օրինակ, Սարիղամիշի խորհուրդը 1917թ. դեկտեմբերի 1-ին որոշում ընդունեց ճանաչել Լենինի կառավարությունը եւ պահանջեց երկրամասում կազմակերպել այդ կառավարության տեղական կառույց⁶¹ :

Նման տրամադրությունները գնալով բափ էին առնում: «Գերմանիային եւ Թուրքիային, որպես օժանդակ պետության, հնարավորություն էր տրվում առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի վրա ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետեւ անդրկովկասյան բանակն այն չի ընդունում, որովհետեւ Կովկասն անկախ է»⁶² :

Դաշնակցության շատ պարագլուխներ այդպես էլ չկարողացան ազատվել գույց որոշ առումով, նաեւ արդարացված, ռուսական մաղձից, ինչը նրանց նետեց թուրքերի գիրկը: Հ. Չավրիյանը 1918թ. հունիսին իր գործընկերներից խորհուրդ էր տալիս. «Ինձ բվում է, որ անհրաժեշտ է անպայման բարեկամանալ Թուրքիայի հետ... Թուրքերը եւ թաթարները այժմ մեր եղբայրներն են, եւ մենք պետք է ամբողջությամբ նրանց հետ լինենք»⁶³ :

Մեյմի որոշմանը՝ վերսկսելու բանակցությունները Թուրքիայի հետ, Վեհիբը գոհունակությամբ պատասխանեց. «Օսմանյան կայսրության կառավարությունը ճանաչել է Անդրկովկասի անկախությունը»:

Չխենկելիի ջանքերով սեյմը մեկը մյուսի հետեւից ընդունեց թուրքերի բոլոր պահանջները՝ դատարկել Կարսի մարզը, զորքերը հետ քաշել մինչեւ Արփաշայ, ոչնչացնել ափամերձ ամրությունները: Ապրիլի 23-ին հրաման արձակվեց ռազմաճակատի ամբողջ երկարությամբ դադարեցնել ռազմական

⁶⁰ «Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ», Ե., 1982, էջ 391:

⁶¹ "Кавказский рабочий", 13.12.1917:

⁶² Լենին Վ., ԵԼժ, հ. 36, էջ 417:

⁶³ ԱՄԲ(Մ.), ֆ. 17, օր. 1, ձ. 12:

գործողությունները: Գործող բանակի հրամանատարությունը դեմ արտահայտվեց այդ հրամանին, բայց հանրապետության վարչապետ Չխենկելին եւ ռազմական նախարարի տեղակալ Օդիշելիձեն ապրիլի 24-ին հրամայեցին քողնել Կարսը⁶⁴:

Առաջ անցնելով նշենք, որ թուրքերի առաջխաղացումն անհնար է հիմնավորել ռազմական գործոններով: Պատերազմական գերի Դ. Բրանդները, որ եղել էր Կովկասում ու ծանոթ իրավիճակին, գրում է. «Չորամասերը, որոնք կանգնած են ռազմաճակատում՝ Տրապիզոնից արեւելք, մինչեւ Վանա լիճ (40.000 մարդ) ռուսական զորամասերին փոխարինած հայկական զնդերն են»⁶⁵: Սինչդեռ թուրքերը Կովկասյան ռազմաճակատում այդքան զորք չունեին: Այդ առաջխաղացումը հնարավոր դարձավ բարոյական, ռազմավարական եւ հոգեբանական որոշակի գործոնների պատճառով:

«Հորիզոնը» փետրվարի 26-ին գրում է. «Կովկասում վխտում են ոչ միայն թուրքական գաղտնի գործակալներ, այլեւ թուրքական սպաներ եւ ասկյարներ, որոնք լույս ցերեկով աշխատում են Թուրքիայի օգտին: Թուրքական էմիսարներին չեն զիջում եւ գերմանական գործակալները, որոնք եռանդուն աշխատում են Թիֆլիսում...»:

Չխենկելին Վեհիբին անմիջապես հայտնեց ոչ միայն երկրամասի անկախանալու եւ Բրեստի դաշնագիրը ճանաչելու մասին, այլեւ այն, որ ինքը հրամայել է ռազմաճակատի ամբողջ երկայնքով դադարեցնել կրակը, Կարսը դատարկելու պայմանները մշակելու համար բերդապետը պատվիրակներ կուղարկի թուրքական հրամանատարի մոտ:

Հայկական եւ վրացական կորպուսների հրամանատարներին հանձնարարվեց, «անմիջապես համաձայնության գալ... թուրք զինվորական իշխանությունների հետ» պատերազմական գործողությունները դադարեցնելու համար:

Հայկական կորպուսը պատրաստ էր, մանավանդ Կարսում, թշնամուն ուժեղ դիմադրություն ցույց տալ, բայց Չխենկելու եւ Օդիշելիձեի հրամաններն անմիջապես կրակը դադարեցնելու մասին գլխովին շուտ տվեցին տրամադրությունները:

Վիշինսկին գրեց. «Բեզլի Ամեդի գորամասի կողմից գրավված առաջավոր դիրքի բախտը որոշվել էր երեկ (ապրիլի 23-ին) գեներալ Օդիշելիձեի կարգադրությամբ՝ պատերազմական գործողությունները դադարեցնելու եւ բանագնացներ ուղարկելու մասին: Այդ կարգադրությունը բացասական ազդեց զորքերի վրա: Սակայն շոշափեց Կարսի բերդապահ զորքին: Հավանաբար Կարսը դիմաճար երկու շաբաթից ոչ պակաս, գուցե անգամ մի ամբողջ ամիս... այ-

⁶⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 49:

⁶⁵ OZFT-W-1110, N112, 71, 77, p. 4/22, N2168:

սօր էլ բերող շատ լավ պաշտպանված էր, մինչդեռ ստացվեց վարչապետ Չխենկելու եւ գեներալ Օդիշելիձեի կարգադրությունը... Չորքերը ենթարկվելով հրամանին հեռացան Աղաջ-Աղրարա-Հարամ Վարդան ստաջավոր դիրքերից»⁶⁶: Մորելն ուղարկվեց թուրքերի հետ զինադադարի հարցով պայմանավորվելու, սակայն թուրք հրամանատարը հայտարարեց, թե զինադադարի մասին ինքը հրաման չի ստացել եւ շարունակելու է հարձակումն ու հայերին խորհուրդ տվեց հետ քաշվել Կարս, Բերդից երկու կիլոմետր հեռավորության վրա:

Ահա Անդրկովկասն անկախ հռչակելու առաջին պտուղը հայության համար:

Նաեւ նշենք, որ այդ նույն ժամանակ Բեռլին էին մեկնել Ա. Ջամալյանն ու Գ. Մելիք-Կարակոզովը խնդրելու Գերմանիայի միջամտությունը՝ թույլ չտալու, որ Թուրքիան ներխուժի Անդրկովկաս: Եվրոպայում էր նաեւ Հ. Օհանջանյանի, Ա. Ջուրաբյանի պատվիրակությունը: Բեռլինում նրանց ասացին, որ Գերմանիան չի ճանաչի Հայաստանը ոչ դե ֆակտո եւ ոչ էլ դե յուրե: 1918թ. օգոստոսի 30-ին Հ. Օհանջանյանը գրեց Երեւան. «...Այստեղ ամեն ինչ կատարվում է (մեր կովկասյան խնդիրների մասին է խոսքս, իհարկե) առանց մեր գիտության ու մասնակցության եւ առանց մեր այստեղ գտնվելուն կարեւորություն տալու» (խոսքը գերմանական կառավարության հետ Թալեաթի բանակցություններին է վերաբերում)⁶⁷: Սակայն այդ մասին հետագա շարադրանքում:

3.ՎՐԱՅ ՄԵՆՉԵՎԻԿՆԵՐԻ ԳԵՐԻՇԵԼՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչո՞ւ վրաց մենչելիկները գերիշխող դիրքեր գրավեցին: ՀՀԳ գործիչները պատճառները համարում են, նախ՝ թվական գերակշռությունը եւ ապա՝ վրաց մենչելիկների պարագլուխների գործունեությունը համառուսական ասպարեզում:

Երկու պատճառներն էլ ճիշտ են մասնակիորեն: Մեյմում վրաց մենչելիկների թիվն ավելի փոքր էր, քան մուսավաթինը եւ երկու հոգով ավելի, քան դաշնակներինը, իսկ եթե չորս հայ մենչելիկներին ավելացնենք դաշնակների թվին, ապա վերջինները թվապես փոքր չէին: Վճռական դեր չէր կարող խաղալ նաեւ այն, որ վրաց մենչելիկների մի քանի պարագլուխներ համառուսական մասշտաբի աշխատանքի փորձ ունեին: Ստ. Շահումյանը համառուսական աշխատանքի փորձ գրեթե չուներ, բայց շատ ավելի մեծ հեղինակություն էր, քան համառուսական գործունեության մեջ եղած բուլշեիկ գործիչները:

Գլխավոր պատճառն այն էր, որ ոչ մուսավաթը եւ ոչ էլ ՀՀԳ քաղաքական-պետական գործունեության համար բացարձակապես պատրաստ

⁶⁶ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 110:

⁶⁷ ՀՀ ԿԿՊԿՄ, ֆ. 4047, ց. 1, գ. 280:

չլին: Կատարվեց գրեթե նույն բանը, ինչ 1908-ին Թուրքիայում: ՀՀԴ գլխավորությանի մեջ ընկած իշխանությունից գրկվեց Թուրքիայում երիտթուրքերի պարագլուխների հետ «բարեկամության եւ եղբայրության»՝ էֆենդիության, պատճառով, իսկ 1918-ին իշխանությունից գրկվեց, որովհետեւ վրաց մենչեիկների «քատոնոն» էր:

Այնուամենայնիվ, վրացիները շատ ավելի էին պատրաստ հեղափոխությանը, քան հայերը: Թե վրաց մենչեիկները եւ թե բոլշեիկները ավելի հզոր ուժ էին համառուսական առումով: Չխեիժեն «բուրժուական հեղափոխության հրամանատարն էր» Ռուսաստանի մասշտաբով, Ծերեթեյիին անվանում էին «ռուսական հեղափոխության գեղեցկություն», ապա նաեւ Ժորդանիա, Գեգեչկորի, Ռամիշվիլի, Չխենկելի, Ստալին, Օրջոնիկիժեն, Մախարաձե, Մդիվանի...

20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին Վրաստանում քաղաքական կյանքի առաջատարը մենչեիկներն էին, իսկ Հայաստանում՝ ՀՀԴ: Չի կարելի ասել, թե վրաց հասարակությունում մենչեիկներն ավելի ազդեցիկ եւ հզոր ուժ էին, քան ՀՀԴ՝ հայ հասարակությունում: Բայց վրաց մենչեիկներն ունեին երկու առավելություն՝ ա) նրանց ոչ միայն գաղափարախոսությունը, այլեւ ռազմավարությունն ու մարտավարությունը մշակվում էին հիմնականում Ռուսաստանում եւ մշակվում էին հիմնավորապես ու բարձր մակարդակով, բ) վրաց մենչեիկները նպատակասլաց էին, պրագմատիկ, քաղաքականության մեջ՝ ցիմիկ: ՀՀԴ հարկադրված էր ինքնուրույն մշակել իր գաղափարախոսությունը, ռազմավարությունն ու մարտավարությունը եւ այդպես էլ չկարողացավ գործն ավարտել ու գերի մնաց էլեկտիկությանն ու անորոշությանը՝ Դաշնակցությունը չկարողացավ ազատվել հեղափոխական ռոմանտիզմից եւ իջնել հայկական գետնի վրա, հանդես բերել քաղաքական նպատակասլացություն եւ ճկունություն: Ա. Ջամալյանը խոստովանում էր, թե «քանի դաշնակցական թերթ կա, այնքան էլ ուղղություն կուսակցության մեջ»: Այդ էր պատճառը, որ կուսակցությունը հաճախ էր կորցնում նպատակային գիծը, տարվում առօրյա մանր խնդիրներով: «Հայրենիքը» կենսական խնդիր էր դարձրել Խրիմյան Հայրիկին սրբերի թվին դասելը, իսկ «Հորիզոնը», ինչպես նշում է Լեոն, առաջնորդող առաջնորդողի հետեւից էր տպում այն մասին, որ Թիֆլիսի ոստիկանապետը թույլ չի տվել, որ Վարդանանց տոնի օրը խանութները չբացեին: Երբ տեղի ունեցավ փետրվարյան հեղափոխությունն, այդ թերթը տպեց «Կեցցե ինտերնացիոնալը» առաջնորդողը⁶⁸:

⁶⁸ Լեո, նշվ. աշխ., էջ 354:

Լեոն այդ էլեկտիկության արտահայտություն էր համարում «ֆիդայականության եւ սոցիալիզմի» համատեղումը ոչ միայն կուսակցական, այլեւ պետական քաղաքականության մեջ: Նա գրում է. «Մենք ունեինք լավ խմբապետներ, բայց չունեինք քաղաքական առաջնորդներ»: Լեոն չափազանցեցնում է. երբ ասում է. «Եվ այդ խմբապետները պիտի լինեին մարդիկ, որոնց համար մեծագույն պատվանունը սուլթանական «փաշա» անունն էր, դրանք պիտի լինեին եւ քաղաքական առաջնորդներ եւ պաշտպանեին հայ ժողովրդի շահերն այնպիսի միջավայրում, որտեղ խոսքը մատուցեին կամ մոսիմուն չէր պատկանում, այլ քաղաքականապես կրթված, հասարակագիտական լուրջ պատրաստությամբ ամուր եւ ուժեղ մարդկանց»⁶⁹: Չափազանցեցնում է այն պարզ պատճառով, որ ՀՀ առաջին շրջ կառավարություններն էլ իրենց կազմով շատ ավելի ռուսական-եվրոպական ճաշակի էին, քան թուրքական-ֆիդայական: Բանն այդ չէր, այլ այն, որ հայ ժողովուրդը դարերով օտարված լինելով կառավարման համակարգից, գրկված էր քաղաքական գործիչներ, դիվանագետներ ունենալու հնարավորությունից: Հ. Քաջազանուն, Ալ. Խատիսյանի, Հ. Օհանջանյանի, Ս. Վրացյանի եւ մյուսների դիվանագիտական ու քաղաքական ձախողումների պատճառը ոչ թե նրանց կրթական ցածր մակարդակն էր կամ միապետական-միջնադարյան կողմնորոշումը, այլ, առաջին հերթին, փորձի իսպառ բացակայությունը: Վրաց մենչեիկներն այդ առումով շատ ավելի բարվոք վիճակում էին: Նախ՝ նրանք անհամեմատ ուշ (1801թ.) էին կորցրել պետականությունը, եւ, ինչը գլխավորն է, ցարական կարգերում հնարավորություն ունեցան պահպանելու վրաց հասարակության քաղաքական-դասային-ազնվականական կառուցվածքը, որը ներթմված լինելով ազգային պետականության ավանդություններով կարողացավ մնալ վրացական պետության բաղադրիչները կազմող ինստիտուտների շրջանակներում: Դրան օգնեց նաեւ այն, որ Կովկասի վարչական կենտրոնը, փոխարքայի նստատեղին Թիֆլիսն էր, ինչի շնորհիվ վրաց մտավորականությունը հնարավորություն ուներ ինտեգրվելու ռուսական կառավարական կառույցներում, քաղաքական-պետական գործունեության փորձ ձեռք բերել եւ այդ առումով շատ առաջ անցնել թե հայերից եւ թե ադրբեջանցիներից:

ՀՀԴ նախանձով էր նայում իր անդրկովասյան գործընկերներին, ովքեր հնարավորություն ունեին հասարակական-քաղաքական գործունեությամբ զբաղվելու սեփական հայրենիքում, ինչից ինքը զուրկ էր, որովհետեւ Երեւանի նահանգը դրա համար շատ փոքր էր ու հետամնաց: Իսկ ՀՀԴ հարկադրված էր գործել դրսում. Արեւելյան բյուրոն Թիֆլիսում էր, իսկ Արեւմտյան բյուրոն՝ հիմնականում Կ. Պոլսում:

⁶⁹ Լեո, նշվ. աշխ., էջ 356

Նման իրավիճակը ՀՀ-ը ոչ թե մեղքն էր, այլ դժբախտությունը, ինչից էլ բխում էր այդ կուսակցության գործունեության սովորաբար կողմերի մի մասը: Դժբախտաբար կուսակցությունների ոչ միայն գործունեությունն է խիստ քաղաքական, այլև խիստ քաղաքականացված է նաև դրանց պատմությունը, որի անաչառ արժեքավորումը թե դժվար է եւ թե անշնորհակալ:

Լեոյի մոտ կան որակավորումներ, որոնք ոչ թե բխում են իրական կյանքի երևույթների ճիշտ թե սխալ ընկալումից, այլ կարծես թե ասվում են ասվելու համար: Եթե այդպես չէ, ապա ինչպես հասկանալ նրա հետեւյալ նախադասությունը. «Եվ ահա երբ եկան նոր օրեր, նոր եւ մեծ պահանջներով լեցուն, դարձյալ նույն (Սասունի) լեռներից իջան բլթակի շահերով ապրող մարդիկ, եկան մեզ առաջնորդելու նոր պայմանների մեջ: Հասկանալի է, որ մենք պիտի թույլ լինեինք, պիտի պարտվեինք եւ ոչ մի ուրիշը»⁷⁰:

Իրականում ովքե՞ր էին կազմում ՀՀ-ի կորիզը, նրա ղեկավար կազմը: Նրանք հայրուկայի՞ն, թե 20-րդ դարի քաղաքական կյանքի ծնունդ էին: Անպայման երկրորդը: Ուրիշ բան է, որ նրանց շարքում կային նաև պաշտոնաձուլներ, կուսակցության շահն անձնականին ենթարկողներ եւ այլն: Լեոն բերում է Ա. Խատիսյանի օրինակը, որն, ըստ նրա «գործելու եռանդով լցված էր, զեղեցիկ ընդունակություն ուներ, բայց անսկզբունք էր՝ պատահական կարիերիստ... Բուրժուազիայի սիրատուն զավակը, նրանից երես առած, նրանով առաջացած մինչեւ Թիֆլիսի քաղաքագլխի բազկաթոռը, նա հանկարծ դուրս եկավ իր այդ ծնող մոր դեմ... Այսպես են մի գիշերվա մեջ սոցիալիստ դառնում, երբ հարկավոր է: Կարիերիզմի բնագործ չէր դավաճանել Խատիսյանին»⁷¹:

Մի կողմ բողոքելով այս մտքի վուլգար սոցիոլոգիական աստառը, հարկ է նշել, որ Խատիսյանի բնութագրության հարցում Լեոն միանգամայն ճշմարիտ է: Ա. Խատիսյանը ոչ միայն քաղաքական հիմնարար սկզբունքներ չունեւ, այլև գործնական աշխատանքում պատեհապաշտ էր, անգամ ամենասկզբունքային խնդիրներում անսկզբունքային, ըստ պեղան, անցողիկ շահին տրված:

Երբ Ա. Խատիսյանը հայկական պատվիրակության կազմում Կ. Պոլսում էր, «Բուզանդիոնը» գրեց, թե նա երիտթուրքերին դուր գալու համար հայտարարել էր. «Հայկական հարցի համար Թուրքիան պատասխանատու չէ, որ հայերին ոչ որ չի ճնշել եւ միշտ հայերն են սաղորդել»⁷²: Ի դեպ, ՀՀ-ը ոչ միայն մեծ պատեհապաշտ անձինք կային, այլև թերթեր: Նույն այդ օրերին «Հայ-

⁷⁰ Լեո, նշվ. աշխ., էջ 64:

⁷¹ Ն.տ. էջ 357:

⁷² Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N655:

րենիք» թերթը գրեց, թե հայերի ու թուրքերի կենսական շահերը համահունչ են: ⁷³ Թերթը տպեց Կոնիայի մի հայ գործչի փառաբանող խոսքերը արդար, ազատամիտ Բ. Դռան մասին եւ անեծքն այն հայերի հասցեին, ովքեր ավիրեցին հայ-թուրքական հարաբերությունները ⁷⁴:

Լեոն նաև ճիշտ է նկատում, որ ՀՀ-ի Խատիսյանի մեծ «պալատական սոցիալիստների» գոյությունը բացատրվում էր կադրերի պակասով: Կուսակցությունը չունեւ, եւ դա հասկանալի էր, պետական ղեկավար աշխատանքի պիտանի կադրեր:

ՀՀ-ի թուլության պատճառներից մեկն էլ արեւելահայ զանգվածների, մասնավորապես, հայաստանաբնակների հետ նրա կապերի թուլությունն էր: Այս առումով նույնպես վրաց մենչեիկները նկատելի առավելություն ունեին: Այդ էր պատճառը, որ Թիֆլիսում տեղական կառավարման մարմինների ընտրություններում մենչեիկներին հեշտությամբ էր հաջողվում ՀՀ-ի պարտության մատնել, չնայած այդ քաղաքում, նրա հասարակական կյանքում հայերն ազդեցիկ դիրքեր ունեին: ՀՀ-ի արտաքուստ լինելով համահայկական կուսակցություն, իրականում էական ազդեցություն չունեւ հայ հասարակության լայն շրջանների վրա:

Բոլոր հասարակություններն են փեղկված՝ ազգային, դասարգկային, կրոնական եւ այլ պատճառներով, իսկ հայ հասարակությունը՝ այդ ամենից բացի՝ նաև արեւելահայ եւ արեւմտահայ հասկացությունների գոյության պատճառով: Մեր պատմական եւ այլ գրականության մեջ այս խնդիրը հասկանալի պատճառներով շրջանցվում է, բայց նաև անհնար է չնկատել, որ այդ տարիներին արեւելահայերի ու արեւմտահայերի միջև կյանքի պայմանների, թե սուբյեկտիվ բնույթի գործոնների պատճառով, մասնավորապես, մտավորականության եւ քաղաքական, ռազմական գործիչների միջև սուր հարաբերություններ կային, ինչն անպայման բացասական լուրջ ազդեցություն էր բողոնում Հայաստանի եւ հայ հասարակության քաղաքական ու ռազմական կարողությունների վրա:

Ըստ այդմ էլ՝ «Հայ ժողովրդի մեջ գոյություն ունեցող միակ խոշոր եւ ուժեղ կազմակերպությունն անկարող էր դառնել մի այլ դրություն ստեղծելու համար, բացի մեկուսացումից, եւ այս հանգամանքը բխում էր նրա ամբողջ էությունից, ամբողջ անցյալից, ամբողջ բովանդակությունից»⁷⁵: Հավանաբար այս միտքը ավելի ճիշտ կլինեւ, եթե նախադասության երկրորդ մասի «նրա» դերանունի փոխարեն դրվեւ «հայ ժողովրդի» բառերը, որովհետեւ, ըստ իս, Անդրկովկա-

⁷³ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N656:

⁷⁴ Ն.տ.:

⁷⁵ Ն.տ. փաստ. N657:

սի հատուկ կոմիսարիատում կամ սեյմում հայերի մեկուսացած վիճակը ոչ այնքան հայերի կեցվածքի, որքան հայերի դեմ վրաց մենչելիկների ու մուսավաթի մերձեցումը փոխադարձ ձգտման հետեւանք էր: Եվ որովհետեւ թուրք-աղբրեջանական բունոտ վրեժխնդրությունը հիմնականում ուղղված էր Հայաստանի դեմ, վրացիներն աչք փակեցին այն իրողության առաջ, որ Կովկասի մահմեդականությունը զանգվածաբար զինվում էր եւ նախապատրաստվում պատերազմի:

Սրան գումարվեց Թիֆլիսում Հայ ազգային բյուրոյի ղիրքերի նկատելի բուլացում: Լեոն դա բացատրում է նրանով, որ Վորոնցով-Գաշկովի մեկնելուց հետո Գետրոզ V կաթողիկոսը վրեժ լուծեց Մետրոպոլիտանի Կոստանի եւ նրան աշխատանքի ուղարկեց Աստրախան: Հասկանալի է, որ բանը միայն Ազգային բյուրոյի ղեկավարի անձը չէր, այլ առաջին հերթին այն, որ ցարիզմի տապալումից հետո Անդրկովկասի կառավարումը փաստորեն անցավ վրացիներին եւ, ի տարբերություն ռուսների, որոնք աշխատում էին կովկասյան երեք ժողովուրդների միջեւ հավասարակշռություն պահպանել, ինչը բխում էր Ռուսաստանի շահերից, նրանք աշխատում էին իրենց դերը երկրամասում հզորացնել եւ այդ անել Հայ ազգային բյուրոյի, ապա նաեւ խորհրդի իրավասությունները խուզելու միջոցով, որովհետեւ աղբրեջանցիների հետ այդպես վարվել անկարող էին:

Այս փափուկ վիճակում հայերը մի հնարավորություն ունեին ստեղծված կացությունից բխող վտանգին դիմակայելու համար՝ ամեն ինչ ենթարկել ազգի համախմբմանը: Հավանաբար, նաեւ այդ խնդիրն էր հետապնդում 1917թ. աշնանը Թիֆլիսում հրավիրված խորհրդաժողովը: Սակայն, ինչպես ասում են. «Օ՛, զարմանք»: Այդ անկուսակցական հավաքը կուսակցական-դասակարգային սկզբունքով տարանջատվեց, ինչը հանգեցրեց նաեւ հայության ներքին առճակատման:

Ի վերջո, հաջողվեց «զեզու գտնել», ընտրել Ազգային խորհուրդ Ավ. Ահարոնյանի նախագահությամբ: Նման խորհուրդներ ստեղծեցին նաեւ վրացիներն ու աղբրեջանցիները: Այդ խորհուրդները փաստորեն փոխարինեցին ազգային կառավարություններին՝ նշանակում էին հարկեր, իրականացնում գորակոչ եւ այլն: Դա սկիզբն էր Անդրկովկասի մասնատման եւ նրա միասնության փլատակների վրա ազգային պետությունների ստեղծման:

Ազգային խորհուրդները ձեւավորեցին իրենց կառավարման համակարգը, նշանակեցին նախարարներ (Ս. Մամիկոնյան, Ս. Հարությունյան, Ն. Աղբալյան, Մ. Բարաջանյան եւ ուրիշներ):

Երբ Ռուսաստանում հաղթանակեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, Ծերեթեիւն ու Զխեիծեն փախան Վրաստան ու Թիֆլիսում մենչելիկները հզո-

րացան, դարձան Անդրկովկասի իրական կառավարողներն ու ամեն ինչ անում էին երկրամասը Ռուսաստանից անջատելու համար: Այդ գործում նրանց եռանդուն օգնություն էր ցույց տալիս մուսավաթը: Սկզբում այդ կողմնորոշմանը նույնքան եռանդուն դեմ էր հանդես գալիս ՀՀԴ: Իհարկե, այդ ամենը ծնեցին դաշնակցության ոչ միայն մեկուսացում, այլեւ վրացիների ու աղբրեջանցիների բացարձակ առճակատում հայերի հետ: Դա ՀՀԴ հարկադրեց «կովկասյան ազգերի միացման գաղափարը փրկելու համար հարել մենչելիկ-մուսավաթական համաձայնությանը»:

Նոյեմբերին ձեւավորված Անդրկովկասի կառավարությունը համարվում էր ժամանակավոր՝ իբր մինչեւ Սահմանադիր ժողովի հրավիրումը: Այս կառավարությունն օրինականացրեց այն իրողությունը, որ Անդրկովկասի նախկին առաջատար կուսակցությունը, ցարիզմի դեմ երկրամասի ժողովուրդների պայքարի առաջատարը մղվեց երկրորդ պլան՝ տեղը զիջելով վրաց մենչելիկներին: Դա նաեւ դե ֆակտո Անդրկովկասի անջատում էր Ռուսաստանից, որովհետեւ սեյմը իր կազմի ճնշող մեծամասնությամբ հակաբոլշեւիկյան էր: Թերեւս նաեւ այդ պատճառով սեյմի կառավարությունը ցրված հայտարարեց ռուսական զորամասերը եւ որոշեց դրանց փոխարեն ստեղծել ազգային զորամասեր: Դա նշանակում էր արագացնել ռուսական բանակի կազմալուծումն ու հեռանալը Անդրկովկասից:

Հակառուսական հիստերիան Վրաստանում գլուխ էր բարձրացնում, իսկ Աղբրեջանում՝ վայրագ բնույթ ստանում: Աղբրեջանցիները (թաթարները) հարձակվում էին ռուսաբնակ գյուղերի վրա, ավիրում, բնակիչներին ոչնչացնում, սկսվեց ռուսների զանգվածային փախուստ Անդրկովկասից: Ռուսական զորքը Անդրկովկասից հեռանում էր թուրքաբնակ վայրերում զենքի ուժով ճանապարհ բացելու միջոցով: Մի քանի տեղերում թուրքերը ոչ միայն զինաթափեցին, այլեւ ոչնչացրեցին ռուս բանակայիններին: Այդ ստոր գործում անմասն չէին նաեւ որոշ վրաց գործիչներ: Հայ ազգային խորհուրդը դրանցից տարանջատվելու համար հայտարարեց, թե ինքը ղեկավարություն է համարում ռուսական զորքերի հեռանալը:

Եվ իսկապես, ռուսական զորքերի հեռանալը ծայրահեղ սրեց ազգամիջյան հարաբերությունները, սկսվեցին ազգամիջյան բախումներ, տեղ-տեղ՝ նաեւ ջարդեր: Չնայած անդրկովկասյան կառավարությունը հայտարարել էր, թե իր վրա էր վերցնում ռազմաճակատի պաշտպանությունը, բայց իրականում ստացվեց այնպես, որ վրացիները չէին շտապում ազգային զինված ուժեր կազմակերպել, իսկ աղբրեջանցիները ոչ միայն դեմ էին ռազմաճակատը պաշտպանելուն, այլեւ թուրք սպաների ղեկավարությամբ հրոսակախմբեր ձևավորեցին ու սկսեցին քիկունքից հարվածել հայոց զորքերին ու հարձակվել հայկական բնակավայրերի, երկաթուղիների վրա:

Նման պայմաններում ավելի քան վտանգավոր էր, որ Հայաստանի տարածքի կենտրոնական գոտին՝ սկսած Վեդիից մինչև Սպիտակ, բնակեցված էին բուրբ-թաթարներով, եւ Արամ Մանուկյանը որոշեց տարատեղիական կարևոր նշանակություն ունեցող տարածքներից հեռացնել նրանց: Իհարկե, այդ գործընթացը խաղաղ չընթացավ, շատ տեղերում ազգամիջյան պատերազմի բնույթ ստացավ, երկուստեք կատարվեցին դաժանություններ, անմեղ մարդկանց սպանություններ, սակայն հաջողվեց խնդիրը հիմնականում լուծել:

Բնութագրական մի երեւոյթ. եթե սեյմում վրացիներն ու ադրբեջանցիները ներկայացված էին բազմակուսակցական կազմով, ապա հայերը՝ գրեթե միայն դաշնակցական կուսակցությունով: Դաշնակցությունը Կովկասում վերակենդանացրեց Օսմանյան կայսրությունում իր կողմից արդեն դրսևորած վարքագիծը՝ չխորշել որեւէ գործարքից, որպեսզի խորհրդարանի անդամ դառնան միայն դաշնակցականները: ՀՀԴ այս աղանդավորական նեղմտությունը հայ հասարակության տարանջատման, հետեւաբար նաեւ Հայաստանի եւ հայերի ուժերի ջլատման պատճառներից մեկն էր:

Հարցը հոգուտ սեփական ժողովրդի լուծելու համար խիզախություն էր պետք, ինչով ՀՀԴ օժտված չէր:

Ժամանակի հայ գործիչներից շատերն այն կարծիքին էին, որ հայ ժողովրդի շահերը պահանջում էին, որ Ռուսաստանում խորհրդային կարգերի հաղթանակից հետո ՀՀԴ ղեկավարները Հայաստանի կառավարման ղեկը հանձնեին «Ռուսիոյ վատահոփունը վայելող անձնավորութիւններու, որոնք ոչ թե ավելի լավ պայմաններ պիտի ստանային, այլ նաեւ Կարսի եւ թերեւս ուրիշ նահանգներու սեփականութիւնը պիտի ապահովէին Հայաստանին»⁷⁶:

Ռուսաստանին փարվելու հարցում անվերապահ կարծիքի էր Ա. Թյուրապյանը: Նա համոզված էր, որ «առանց Մեծ Ռուսիոյ բարեկամութեան եւ պաշտպանութեան Հայաստանը գոյութիւն իսկ չի կրնար ունենալ... Հայ ժողովուրդը միշտ փնտրում է ռուս ժողովրդին եղբայրակցութիւնը, մենք կը սիրենք Ռուսիան, որովհետեւ թե անցեալին եւ թե ներկային մեզ երախտապարտ ըլլալու շատ մը պատճառներ ունինք. մեր յարաբերութիւնները ինչ գոյն ալ ստանան ուրիշ ժողովուրդներու հետ, միշտ մտերմական յարաբերութիւններ պիտի ունենանք մեր վաղեմի բարեկամներուն հետ: Ոչ մեկ ազգութիւն կարող է այս զգացումը վտարել հայ սրտերն «pour la vie ef pour la mort» (կյանքի եւ մահվան համար) մեր միակ նշանաբանը Ռուսիոյ հանդէպ»⁷⁷:

Մեկուսացումը Ռուսաստանից խորանում էր նաեւ օրյեկտիվ պատճառներով: Ռուսաստանում ծայր առած քաղաքացիական կռիվները գրեթե անհնար

⁷⁶ Թյուրապեան Ա., նշվ. աշխ., էջ 19:

⁷⁷ Ն.տ., էջ 20:

էին դարձնում նրա կողմից օգնությունը Հայաստանին: Նոր հովանավորի անհրաժեշտությունը կենսական էր: Ընտրությունը կանգ առավ Գերմանիայի վրա: Որոշվեց պատվիրակություններ ուղարկել Բեռլին: Առաջին պատվիրակության կազմում էին Ա. Ջամալյանը, Լ. Նազարյանը, Գ. Մելիք-Կարապոյազյանը: Պատվիրակությունը մարտի 25-ին հասավ Մոսկվա եւ հանդիպումներ ունեցավ Ստալինի, Տրոյսկու, Կարախանի, Չիչերինի հետ, ովքեր հասկացությամբ վերաբերվեցին հայերի հարցադրումներին, նրանց մասնակցությամբ կազմվեց Ռուսաստանի ԱԳ ժողկոմատի մարտի 31-ի հուշագիրը գերմանական կառավարությանը, որով դատապարտվում էր Բեռլինի թողտվությունը, որից օգտվելով թուրքերը հեղում էին հայության արյունը: Տրոյսկին իր հեռագրակայքն առաջարկեց պատվիրակությանը Մեծ տերություններին դիմելու համար, Կարախանը լուծեց պատվիրակության արտասահման մեկնելու հետ կապված խնդիրները: «...Կարախանը մեզ չափազանց մեծ օգնություն ցույց տվեց,- գրել է Ա. Ջամալյանը,- այնպես որ ես չգիտեմ, թե առանց նրա օգնության մեր գնալու խնդիրն ինչպես կլուծվեր»⁷⁸:

Պատվիրակությանը եռանդուն օգնություն ցույց տվեց գերմանա-հայկական ընկերությունը, որը ապրիլի 27-ին ռայխստագ տեղեկանք ուղարկեց հայերի վիճակի մասին: «Ուր գնում է թուրքի գորքը,- գրված է այդ փաստաթղթում,- այնտեղ բնաջնջվում է քրիստոնյա ժողովուրդը: Կովկասահայությունը, ինչպես մինչ այդ թրքահայությունը, կանգնած է ամբողջական ոչնչացման վտանգի առաջ»⁷⁹:

Նույն ընկերության մայիսի 3-ի հուշագրում անհետաձգելի խնդիր էր համարվում՝ հայկական բնակավայրերը Թուրքիայում այնպիսի վիճակում դնելը, որ հայ ազգաբնակչության կյանքի, պատվի եւ ունեցվածքի անվտանգությունն ապահովվեր Գերմանիայի կողմից, Թուրքիային պարտադրվեր ճշտությամբ կատարել Բրեստի պայմանագիրը, չնեխուժել Անդրկովկաս, չմիջամտել Կովկասի գործերին:

Ներկայացված փաստաթղթերը քննարկվեցին ամենատարբեր մակարդակներում: Ռայխստագում մայիսի 2-ի քննարկմանը մասնակցում էին Ֆ. Նոյմանը, Պ. Ռոհրբախը, Էյցներբերգերը, Շեյդմանը, Նոսկեն, Էբերտը եւ շատ ուրիշ նշանավոր գործիչներ: Սակայն Բեռլինը խուսափում էր հրապարակայնության տալ հայկական պատվիրակության Բեռլինում գտնվելուն ու նաեւ թերահավատություն էր դրսևորում հայերի առաջարկությունների նկատմամբ: Գերմանական պաշտոնատարները խուսափում էին նրանց ընդունել թուրքերի հետ խնդիրներ չառաջացնելու համար:

Ռայխստագում հանդես եկավ նաեւ Պ. Ռոհրբախը: Նա պահանջեց «զս-

⁷⁸ ՀՀ ՊԿՊԱ, ք. 222, ց. 1, գ. 132:

⁷⁹ OZFT-W-1110, X, 157:

պել կուլտուրայից գուրկ թուրքական կառավարությանը, որը չի ճանաչում Գերմանիայի բարոյական պատասխանատվությունը պատմության առջև՝ ամբողջ հայ ազգի ոչնչացման առթիվ»։ Նա գտնում էր, որ Գերմանիան պետք է հավաստիացնի հայությանը, թե իր հովանավորության ներքո նա այլևս գերծ կմնա ջարդերից⁸⁰։

Գերմանիայի հայամետ շրջաններին հաջողվեց համոզել պատվիրակությանը «որոշ չափով փոխըմբռնման գալ Թուրքիայի հետ» եւ գերմանացիների «վախը վերացավ»։ Հայ պատվիրակները դրեցին հետեւյալ խնդիրները՝ անմիջապես դադարեցնել թուրքական բանակի հարձակումը, ինքնորոշման հնարավորություն տալ Կարսի, Արդահանի եւ Բաթումի բնակչությանը՝ քվեարկության իրավունք տալով նաեւ այդ շրջանից փախած բնակչությանը, դադարեցնել թուրքերի միջամտությունը Կովկասի գործերին, կանոնավորել կյանքը Արեւմտյան Հայաստանում, փախստականներին հնարավորություն տալ վերադառնալու եւ ապահովել նրանց կյանքի, պատվի եւ սեփականության անվտանգությունը⁸¹։

Նրանք նաեւ խնդրում էին, որ նշված պայմանների կատարումն ապահովելու վերահսկողության համար ստեղծվեր գերմանական հանձնաժողով։ Գերմանիայի ԱԳ նախարարությունը մերժեց այդ առաջարկությունները պատճառաբանելով, թե հայերն են «ասրսափելի չարագործությունների» հեղինակները, մինչդեռ թուրքական զորքերը «խստագույն կարգապահություն են դրսևորել», ձգտել են չխախտել Բրեստի դաշնագիրը։ Ինչ վերաբերում է երեք մարզերին, ապա հայերը թող այդ հարցը բարձրացնեն Բաթումի խորհրդաժողովում, որի հաջողությունն ապահովելու համար հարկ է դադարեցնել հայկական քարոզչությունը չեզոք երկրներում⁸²։

Այդ մասին ժամանակակիցներից մեկը գրում է, թե պաշտոնական Բեռլինը կշտամբելով հայերին թուրք բնակչության հանդեպ գործադրած բռնությունների համար, պատվիրակների երեսին էր շարտում, թե «զուրբը թուրքահպատակ հայերի սոսկալի ջարդերի մասին հնարված են...»⁸³։ Վերջում էլ հայերին ասվեց՝ այսուհետեւ «իրենց ցանկություններն ու առաջարկությունները... արտահայտեն Անդրկովկասի կառավարության միջոցով, որին պատկանում են»։

Պատվիրակությանը զգուշացրեցին, որ Բաթումում սկսվելիք բանակցությունների վրա «վնասակար ազդեցություն կունենան հայկական ավագակախմբերի մարտական գործողությունները եւ չեզոք երկրներում ծավալված հայկական քարոզչությունը», նաեւ սպառնացին, թե «հայերի համար ճակա-

տագրական կլիներ Երզնկայի շրջանի նրանց գործողությունների կրկնությունը եւ եթե այն վայրերում, որտեղ հայերը մեծամասնություն են կազմում, հալածանքներ սկսվեն մահմեդական բնակչության դեմ»⁸⁴։

Բեռլինի նման կեցվածքը պատահական չէր եւ Գերմանիայի օգնությունն այդ պահին հայցելու հայերի ջանքերն՝ ապարդյուն, քանի որ նույն օրերին՝ ապրիլի 27-ին, Գերմանիայի ու Թուրքիայի միջեւ կնքված համաձայնագրով Կովկասը բաժանվեց ազդեցության գոտիների, Թուրքիայի ազդեցության գոտու մեջ մտցված էին Ախալցխան, Ախալքալաքը, Բաթումը, Հայաստանն ու Ադրբեջանը։ Բեռլին մեկնած հայերը հասկացան, որ Գերմանիան «հայերին գերմանական կողմնորոշում չի առաջարկում, միաժամանակ նրա նպատակն էր փոքր ազգերի բարեկամությունը շահել, որպեսզի անհրաժեշտության դեպքում» իր շահերն առաջ տանելու համար հնարավորություն ունենար հենվելու նրանց վրա։

Հայերի փորձը՝ ռուսական կողմնորոշումը գերմանականով փոխարինելու, ձախողվեց, ինչն ավելի սանձարձակ դարձրեց Թուրքիային։ Դրա փոխարեն հայությունն ավելի հուսահատվեց, որովհետեւ մեն մենակ մնաց թուրքական սպառնալիքի առաջ։

Նույն ապրիլ ամսին թուրքական զավթումների շրջաններ այցելած ավստրո-հունգարացի զինվորական լրագրող Շտայները գրում է. «Քաղաքացիական եւ զինվորական պաշտոնյաները մեզ ամեն օր մշակում էին, համոզում, որ հայերը տիեզերքի ամենամեծ ոճրագործներն են, իսկ թուրքերը՝ հայկական բարբարոսությունների ամենո զոհերը։ Որ թուրքերը 1915թ. ողջ ժողովրդին Թուրքահայաստանում բնաջնջել էին, ընդունում են, բայց համարում են անհրաժեշտ կարգավորում։ Չէ՞ որ միայն հայերին են ջարդել, մինչդեռ ներկա պահին խոսքը վերաբերում է մահմեդականներին, իսկ նրանց ու հայերի միջեւ մեծ տարբերություն կա»։ Յ.Պոմյանկովսկին հաստատում է. «Երբ թուրքական բանակը հարձակման անցավ գրավելու Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանները, տեղի ողջ հայ ժողովուրդը՝ 188.000 մարդ, փախավ հյուսիս։ Հայերը գիտեին, թե թուրքական զորքը ինչ վախճան է իրենց համար բերում։ Տեղում մնացած փոքրաթիվ հայեր, իրոք, ոչնչացվեցին։ Նախ հայկական գյուղեր ուղարկվեցին թուրք հրոսակներ, որոնք իրականացրեցին կոտորածներ, ապա միայն հանդես եկավ թուրքական կանոնավոր բանակը։ Գրավված շրջաններում հայ չմնաց»⁸⁵։

Այսպիսով, 1918թ. առաջին կեսին Անդրկովկասում ձեւավորվեցին քաղաքական, գաղափարախոսական իրողություններ, որոնք անմիջականորեն ուղղված էին հայության դեմ։ Այդ իրողություններից ամենավտանգավորը հա-

⁸⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 120:

⁸¹ Wien HHSTA PA XII 463, Berlin, 22 April 1918, N46/P.B.:

⁸² Ն.ս.:

⁸³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 457, ց. 1, Գ. Մելիք-Նարագյոզյանի հավաքածու:

⁸⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 457, ց. 1, Գ. Մելիք-Նարագյոզյանի հավաքածու:

⁸⁵ OZFT-W-1110, 57/9:

մարրությունն էր, որն այստեղ եւս վերածվել էր քաղաքականության:

«Красная книга» գրքում Գ.ր. Չալխաշյանն Անդրկովկասյան երկրային իշխանության մասին գրում է. «Երկրամասային այդ իշխանությունը ձեւավորվեց արհեստականորեն ազգային սկզբունքով եւ իրենից ներկայացնում էր անգոր եւ հաշմանդամ կառույց, որովհետեւ ինքն իր մեջ պարունակում էր քայքայիչ տարրեր... Այն ժամանակ, երբ հայերը, համձինս իրենց բոլոր քաղաքական կուսակցությունների եւ խմբակցությունների, ռուսական հզորության եւ Անդրկովկասում ռուսական պետականության խորտակման հենց սկզբից շարունակեցին մնալ նախկին ռուսական-ղաշնակցային կողմնորոշմամբ եւ մնացին հավատարիմ համաձայնական տերություններին... Թաթարները մուսավաթ կուսակցության պարագլուխների՝ Բաքվի մտավորականներ Խան Խոյսկու, Ջիվանշիրի, Թոփչիբաշեի, Ջաֆարովի, Աղաեփի եւ մյուսների ղեկավարությամբ, սկսեցին համառոտն առաջ տանել համախալածականությունը: Նրանց երեւակայության մեջ արդեն գծագրվում էր համախալածական պետությունը եւ հանդիսանալով ռուսների եւ անգլիացիների ռիսերիմ թշնամիներ, Թաթարները տանել չէին կարողանում հայերին... Նրանք ջերմեռանդությամբ ցանկանում էին Ռուսաստանի պարտությունը... եւ մի բան էին երազում՝ միատեղվել Օսմանյան կայսրության հետ եւ դառնալ նրա հպատակներ»⁸⁶:

Երբ թուրքերը անցան հարձակման, Խան Խոյսկին մուսավաթականների անունից հայտարարեց, եթե թուրքերը շարժվեն դեպի երկրի խորքերը, ապա Թաթարները, ելնելով թուրքերի հանդեպ իրենց ունեցած համակրանքից, բացահայտանցնելու են նրանց կողմը, իսկ «մուսավաթականները պահպանելու են չեզոքություն»⁸⁷:

Ի դեպ, սեյմի մայիսի 25-ի նիստում ունեցած ելույթում Ծերեթեփին, առաջին հերթին, աղրբեջանցիների վարքագծով, այսինքն թուրքերի հետ նրանց համագործակցությամբ, փորձեց հիմնավորել Անդրկովկասի դաշնությունից վրաստանի դուրս գալը, հրապարակեց Ելիզավետպոլի նահանգի, Ախալքալարի գավառի եւ մի քանի ուրիշ շրջանների աղրբեջանցիների նամակները թուրքական հրամանատարությանը խնդրանքով՝ արագ առաջանալ եւ իրենց առնել թուրքական հովանավորության տակ:

⁸⁶ Чалхушьян Гр., Красная книга, Р.-на Д., 1919, с. 135:

⁸⁷ Ն.տ., с. 141:

ԳԼՈՒԽ VI

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Հայկական բանակի ստեղծման համար հիմք հանդիսացան առաջին հերթին ռուսական բանակի կազմում ծառայող հայերը, բայց կազմակերպական առումով այն ձեւավորվեց հայ կամավորական գնդերի (գումարտակների) հիմքի վրա:

Իսկ կամավորական գնդերի թե ստեղծման եւ թե ձեւավորման նախաձեռնողը, հեղինակն ու իրականացնողը ոչ թե հայերն էին, այլ ցարական իշխանությունները եւ մինչեւ օրս էլ միանշանակ պատասխան չի տրվում մի հարցի՝ այդ գնդերի ստեղծումը բխո՞ւմ էր հայ ժողովրդի շահերից, թե ոչ:

Ազգային բյուրոն կամավորական գնդերի կազմակերպումը ղեկավարելու համար ստեղծել էր հատուկ կառույց: Լեոն մասնակցել է վերջինիս նիստերից մեկին ու պատմում է, թե երբ Վանից նոր վերադարձած Հ. Քաջագունին ասաց, որ Երկրի ընկերները դեմ էին կամավորական շարժմանը, Ա. Ջամալյանը պատասխանեց, թե Վանի այդ ընկերները սխալ են հասկացել ՀՀԴ 8-րդ (Էրզրումի) համագումարի որոշումները ռուս-թուրքական պատերազմում չեզոքություն պահպանելու վերաբերյալ: Մերժվեց նաեւ Կ. Պոլսի Ջավեն պատրիարքի խնդրանքը՝ ձեռնպահ մնալ կամավորներ հավաքագրելուց:

Վ. Փափազյանի վկայությամբ Արամ Մանուկյանը «թրքահայ ժողովրդի համար կորստաբեր կը համարեր կամավորական շարժումներու կազմակերպութիւնը եւ մանավանդ գործոն մասնակցութիւնը՝ ենթարկուելով ռուսական բանակին»¹:

Արեւմտահայությանը շատ ավելի ահաբեկում էր կամավորական գնդեր ձեւավորելու աղմկոտ, ցուցամուլ եղանակը: Նրանք կովկասցիներին խնդրեցին հրաժարվելու գոնե «ցուցական գործունեութեն եւ գաղտնի գործելու: Բայց կովկասահայութեան ոգետրութեան ալիքը իր գագաթնակետին հասած էր...»²: Ա. Խատիսյանը նկատում է, որ անգամ Էրզրումի համագումարի պատվիրակները, որոնք «պատերազմում չեզոք մնալու» օգտին էին քվեարկել, Կովկաս վերադառնալով «չկարողացան դիմադրել ընդհանուր տրամադրութիւններուն եւ անցան կամավորական բանակներու կազմակերպման գործին գլուխը»:

¹ «Ժամանակ», 17.09.1914:

² "The Orient", 14.10.1914:

Հայ կամավորական շարժումը, սակայն, միայն ռուսական ակունք չուներ: Պատերազմը դեռ նոր էր սկսվել, պատմում է Մալխասը, երբ Ֆրանսիայի վարչապետ Դումերեկը հարցնում է Վ. Բերարին, թե պատերազմում հայերն ում կողմն են լինելու եւ հանձնարարում է հորդորել ՀՀԴ. որպեսզի կռվեր Ամստամտի կողմում, դրա դիմաց խոստանալով Արեւմտյան Հայաստանին «նվազագույնը դքսություն»³:

1915թ. ռուսական բանակում ծառայում էր 120.000 հայ: Ավելի շատ հայ էր գորակոչված թուրքական եւ ուրիշ երկրների բանակներում: Ընդհանուր թվով առաջին աշխարհամարտի տարիներին բանակ էր գորակոչվել 600.000 հայ: Այդ պայմաններում ռազմական առումով ի՞նչ էին իրենցից ներկայացնում 5.000-10.000 կամավորները, որոնց ունենալուն այնքան համառորեն ձգտում էր ցարական կառավարությունը: Իհարկե, նշանակություն ուներ նաեւ լրացուցիչ ռազմական ուժ ստեղծելու ցանկությունը, բայց գլխավորն այդ չէր, այլ այն, որ կամավորները հիմնականում արեւմտահայեր էին եւ նրանց կռվելը հոգուտ Ռուսաստանի լուսապսակ էր Ռուսաստանի մղած պատերազմի «ազատագրական» բնույթի համար: Եվ որպեսզի այդ գնդերը ստեղծվեին, ցարական կառավարությունը «մոռացավ» հայերի «բոլոր մեղքերը», թույլատրեց բոլոր փախստական հայերին վերադառնալու Կովկաս, խոստացավ արտոթից ազատել հին հայդուկներին ու խմբապետներին, ընդհանուր ներում շնորհել:

Ոչինչ զարմանալու չկա, որ հայ կյանքում կամավորական շարժմանը մոտեցումները միանշանակ չէին եւ չեն:

Եթե ՀՀԴ այն աստվածացնում էր, ապա, օրինակ. Պ. Նուբարը գրում է. «...Կամավորները միայն թուրքերուն քստմնելի պատրվակ ճը հայթայթեցին իրենց ահռելի դիակալութեան եւ սարսափելի ջարդերուն համար»⁴:

Տեղին է նշել, որ նույն Նուբարը 1916թ. ֆրանսիական կառավարության հետ ստորագրեց փաստաթուղթ Արեւելյան (Հայկական) լեզեռն, այսինքն՝ հայկական կամավորական միավորումներ ստեղծելու եւ Ամստամտի գործերի կազմում Կիլիկիայում թուրքերի դեմ կռվելու համար:

Ծարունակներ ներկայացնել կամավորական շարժման մասին կարծիքներ:

«Այդ անխորհուրդ եւ մեղապարտ քայլը,- գրում է Ա. Ալպոյաճյանը,- որ ոչ միայն կուսակցականները, այլ նույնիսկ ամենեն խոհական հայերը առին, զարհուրելի սխալ ճըն էր...»⁵:

Հ. Առաքելյանը զարգացնում էր նույն միտքը, թե դաշնակցությունն «իր րիբը խոթեց, իր կուսակցական շահերը գերադասեց ազգի շահերից, ամեն բան

³ «Հայրենիք», 05.08.1942:

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 2, գ. 669:

⁵ Ալպոյաճյան Ա., Պատմություն Մալաթիոյ հայոց, Բեյրութ, 1961, էջ 927:

փչացավ ու կորավ: Այս անիծեալ կուսակցությունը կարծես աստված տտեղծեց հատկապես հայ ազգը պատժելու եւ ջնջելու համար»⁶: Ի դեպ, Հ. Առաքելյանն ինքն ահաբեկչության ենթարկվեց:

Բնորոշ է Ռուստոմի խոսքերն ասված 1916թ. հունվարի 29-ին. «Ոչ առայայնքան պիտի ոգեւորվեինք, ոչ էլ այժմ այսքան զայրանալիք»⁷: Նա նաեւ մերժում էր, թե կամավորական շարժումը կազմակերպել էր դաշնակցությունը⁸:

Ռ. Գարբինյանը 1959թ. գրեց, որ ինքը աղետալի է համարել «հայ կամավորական շարժումը, որովհետեւ ան անտեղի կերպով պիտի գրգռեր թուրքերն ու գերմանացիները հայ ժողովրդի դեմ»⁹:

Գ. Անանունը նույնպես անդրադառնում է խնդրին ու նկատում, թե «հայ երեւելիները, դաշնակցական քաղաքագետները... չէին նախատեսել սպառնացող արհավիրքի չափը: Գլխակորույս մեզ մղել էին մեծ գազանների կրկեսը, որտեղ հայկական գառը անպայման պիտի ճխլովեր ոտքի տակ»:

«Պետք էր օգտագործել թուրքահայերի կենդանի ոյժը եւ հրահանգվում էր կամավորներ ընդունել առավելապես թուրքահայերից: Դա արվում էր երկու նպատակով, առաջինը՝ մի չնախատեսնված ուժ էր օգտագործվում, երկրորդ՝ դա մի այնպիսի գայթակղիչ ոյժ էր, որ սահմանից այն կողմը բիրապատիկ շահ էր ընձեռում...»¹⁰:

Ա. Թերզիբաշյանը գրում է, ոչ «Արեւելյան պիրոն, ոչ ալ Էջմիածնի կարողիկոսը, եթե ուզեին ալ, պիտի չկրնային այլեւս կասեցնել տարերային շարժումը, զոր ցարական Ռուսիան՝ շնորհիվ հենց կարողիկոսին եւ Պիրոնին, ավելի ճիշդը, Թիֆլիսի պուրժուազիային, որուն ձեռքին մեջ պարզ խամաճիկներ էին թե մեկը եւ թե միւսը, յառաջ բերած էր արդեն: Ծարժումին մեջ Գետրոզ կարողիկոսն իր անմահութիւնը կը փնտրեր, դաշնակցութիւնն՝ իրենը»¹¹:

Իրողությունն այն էր, որ այդ շարժումը ծնվելով ռուսական արքունական գրասենյակներում, շուտով վերածվեց հայության վարքագծի դրսեւորման միջոցի: Բայց եթե ռուսական հրամանատարության համար կամավորական գնդերը լրացուցիչ ռազմական ուժ էին, ապա հայ գործիչների համար՝ նաեւ կոտորածի վտանգի մեջ գտնվող հայերին օգնելու հնարավորություն: Այդ էլ դարձավ գլխավոր պատճառը կամավորների եւ ռուս հրամանատարության միջեւ առաջացած հակասության:

⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 282, գ. 1:

⁷ ՀՀ ՀԶԿՊԿԱ, ֆ. 4047, գ. 1, գ. 142:

⁸ «Պայքար», 18.05.1917:

⁹ Գարբինյան Ռ., Կեսնքիս գրքեմ. «Հայրենիք», 1959, N8:

¹⁰ «The Orient», 14.12.1914:

¹¹ Թերզիբաշյան Ա., Անդրանիկ, էջ 129-130:

1915թ. փետրվարին դաշնակ գործիչներից մեկը հայտարարեց. «Թուրքահայերը միշտ դեմ են եղել մեր գործունեությանը, եւ ռուսական կառավարությունն այդ գիտի, հավանաբար նաեւ գիտի, որ մենք ծրագրում ենք ինքնավար Հայաստան Թուրքիայի սուվերենության ներքո: Բնականաբար, այս ամենը հանգեցնում է նրան, ինչ ինձ բարուն ասաց գեներալ Օգանովսկին, թե «այժմ հայերը ռուսական կառավարության համար հանդիսանում են անբարեհոյ տարրեր, քանի որ նրանք խաբել են, կեղծել են իրերի իսկական վիճակը Թուրքահայաստանում... Մենք հետապնդում ենք նպատակ՝ պատերազմից հետո արագ զինաթափել հայերին, որովհետեւ կասկած կա, որ նրանք խաղաղության համաժողովում կարող են ձայն բարձրացնել եւ համաժողովը հարկադրված կլինի նրանց հետ հաշվի նստել, ինչը կհակասի Ռուսաստանի արմատական շահերին... Ռուսական կառավարությանը շահեկան է, որ հայերը փոքր տոկոս կազմեն Թուրքահայաստանում»¹²:

Մյուս կողմից, կամավորական շարժումը երիտթուրքերն օգտագործեցին անցնելու հայերի բացահայտ ահաբեկմանը: Նրանցից Նաջին Վանում հայտարարեց. «Եթե հայերը Ռուսիոյ կողմը բռնեն, մենք զանոնք պիտի ջարդենք»: Մինչդեռ ջարդերը սկսվել էին մինչեւ կամավորական զնդերի հանդես գալը: Բայց որ այդ շարժումը նպաստեց ջարդերին անմիջապես համընդհանուր բնույթ տալուն, անվիճելի է:

ՀՀԴ Արեւելյան բյուրոն գտնում էր. «Կամավորների կազմակերպումով նպատակ ունենք մեր մասնակցությունը բերելու այս պատերազմին, որով ընդհանուր հաշվեհարդարի միջոցին ավելի մեծ իրավունքով պահանջել, որ գումարվելիք վեհաժողովը լուծի մեր հարցն էլ»: Եվ դաշնակցությունը կլանվեց կամավորական շարժման կողմից: Տասնամյակներ շարունակ իր անելիքները, գլխավոր խնդիրը որոշել չկարողացող կուսակցության համար կամավորական շարժումը քաղաքական անձկությունից դուրս գալու, հասարակությանը լրջմիտ, գործունեության հստակ պլան ունեցող կուսակցություն ներկայանալու հիանալի հնարավորություն էր:

Կամավորական շարժմանն առնչվող խնդիրները հետին թվով քննարկման նյութ դարձան արեւելահայ համագումարում: Բարձրացվեցին ամենատարբեր բնույթի հարցեր՝ Ազգային բյուրոն ո՞ւմ խոստումներով էր առաջնորդվել, արդյոք կաթողիկոսը, պատրիարքը, Պ. Նուբարը տեղյակ եղե՞լ են, համաձայնություն տվե՞լ էին կամավորական զնդեր կազմակերպելուն, ո՞վ է պատասխանատուն, ինչպե՞ս վերաբերվել ՀՀԴ Կարինի համագումարի որոշմանը, որը պահանջում էր կուսակցության ղեկավարությունից պատե-

րազմին մասնակցելուց ձեռնպահ մնալ: Դաշնակցության պարագլուխները խուսափում էին պատասխանից եւ ինչպես «Պայքար» թերթը գրեց 1917թ. հոկտեմբերի 10-ին, նրանք ասում էին, թե «ինչ կարիք կա յոթըրորս Արեւմտյան Հայաստանի մոխրակույտերի եւ հարյուր հազարավոր հեկատոմբերի պատճառները»: Անդրանիկը դառնացած հայտարարեց, թե «կախվելու արժանի են Մեքոպ եպիսկոպոսը եւ ինքը, որ հավատացել են (ռուսական) կառավարության խոստումներին»¹³:

Կամավորական շարժման կազմակերպման ղեկավար գործիչներից Ս. Հարությունյանն արդարացավ, թե այդ շարժումից ձեռնպահ մնալու մասին «որոշումը շատ ուշ հասավ բյուրոյին, երբ խմբերն արդեն կազմակերպված էին»¹⁴: Նա նաեւ խոստովանեց, որ ցարական կառավարությունը չբարեհաճեց պաշտոնական գրագրություն վարել բյուրոյի հետ: Միակ գրությունը դա կաթողիկոսին ցարական վարչապետի գրած անձնական նամակն էր, որն էլ լի էր անորոշ արտահայտություններով ու գովասանքներով, հայ ժողովրդի ապագայի վերաբերյալ ակնարկներով:

Այս քննադատությունները տարօրինակ բնույթ ունեին, դրանք մերժելով կամավորական շարժումը, փոխարենը ոչինչ չէին առաջարկում: Դրանք ոչ թե սրտացավ, կառուցողական քննադատություն էին, ոչ թե հայրենիքի ու ժողովրդի բախտի համար սրտացավության արտահայտություն, այլ պատասխանատվությունից փախչելու տհաճ փորձեր: Գլխավոր մեղադրանքն այն էր, որ բյուրոն անպատրաստ ուժերով, առանց «հաշվի առնելու արեւմտահայության պայքարելու պատրաստականությունը», թեթեւամտորեն ստանձնեց այդ ավելի քան պատասխանատու գործը ու հլու գործիք դարձավ ցարական կառավարության ձեռքին:

Տիպական էր Հ. Առաքելյանի վարքագիծը: Պատերազմի սկզբին «Մշակը» ողջունում էր կամավորական շարժումը, իսկ արեւելահայ համագումարում դրա խմբագիրը՝ նույն ինքը՝ Հ. Առաքելյանը, լուտանքներ էր թափում բյուրոյի գլխին, որն այլ բան չէր, եթե ոչ «դաշնակցությունը լրացրած դիմազուրկ վաճառականներով»¹⁵: Հավանաբար երեսույթի լուսապատճենային վերարտադրության առումով իրավացի էր Բոնապարտյանը, որի կարծիքով դաշնակցությունն իրավունք չունեւ «երկու միլիոն թուրքահայ ժողովրդի բախտը այդ ժողովրդից անկախ լուծել: Դաշնակցությունը ձախորդ գործելակերպի հետեւեց»¹⁶: Ա. Թերզիբաշյանը լրացրեց այդ միտքը, թե «բյուրոն մինչեւ անգամ

¹² ՀՀ ՀՔԿԳԱ. Ֆ. «Արձանագրություն հայոց ազգային համախորհրդի»:

¹³ Ն.ս.:

¹⁴ Ն.ս.:

¹⁵ Ն.ս.:

¹² Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, էջ 26:

չկամեցավ լսել Տաճկահայաստանից եկած պատգամավորներին... արդարանալով, թե բանը բանից անցել էր»¹⁷: Միանգամայն իրավացի էր Ն. Աղբալյանի հասցեին ծավալված քննադատությունը, որը հայտարարեց, թե «մենք հարյուր հազարավոր գոհեր ենք տվել, էլի կտանք հարյուր հազարներ»:

Ըստ իս, ավելի ճիշտ էր Շահխաթունյանը, որը խոսում էր կամավորական շարժման «բարոյական եւ քաղաքական մեծ նշանակության» մասին, քան Ա. Երզնկյանը՝ հայերի դրությունը պահանջում էր, որ միանգամայն չեզոք մնային, ոչ ցարական եւ ոչ թուրքական նպատակներին չձառայեին¹⁸: Նախ՝ մնան դիրքորոշում առաջինը որդեգրել էր հենց ինքը՝ ՀՀԴ-ի Երզրումի համագումարում: Երկրորդ, արդեն նշվել է, որ կամավորական շարժումը միայն անունով էր կամավորական, այն նախաձեռնեց եւ Ազգային բյուրոյի միջոցով իրականացրեց ցարական կառավարությունը: Երրորդ, կամավորական շարժումը պատճառ չէր եւ այդպիսին լինել չէր կարող, որ թուրքերը բնաջնջեին հայերին: Այն պատրվակ դարձնելու հանգամանքը նույնպես լուրջ չէ, որովհետեւ որեւէ դեր չխաղաց թուրքերի վարքագծի փոփոխման գործում: Մանավանդ սխալ ու դատապարտելի են նրանք, ովքեր բացահայտ կամ ակնարկով ասում էին, թե եթե չլինեք կամավորական շարժումը, եթե հայերը հնազանդ մնային, հնարավոր էր, որ խույս տային ջարդերից: Չորրորդ, ոչ թե կամավորական շարժումն էր սխալ, այլ այն, որ այդ շարժումը չհանդիսացավ թուրք ջարդարարների դեմ համազգային պայքարի բաղադրիչ, Ազգային բյուրոն եւ ՀՀԴ-այդ պայքարն ամբողջությամբ հանգեցրեցին կամավորական շարժմանը, չօգտագործեցին յարադանի դեմ համաժողովրդական պայքարի եղած հնարավորությունները, արեւմտահայությանը կողմնորոշեցին ոչ թե դեպի ինքնապաշտպանություն, այլ դեպի «դրսի օգնություն», ինչը հային ավելի կամագուրկ դարձրեց եւ նա առանց դիմադրության գնաց սպանդանոց: Եթե ՀՀԴ հաջողվեք թուրքական բանակ գորակոչված շուրջ 300.000 հայերից 60-70 հազարին «զեռ հանել», ծավալել պարտիզանական կռիվներ ու ինքնապաշտպանական մարտեր, իհարկե, այնժամ կամավորական գնդերն ունենալու էին ոչ միայն ռազմական, այլեւ վիրխարի բարոյաքաղաքական նշանակություն:

Այնուամենայնիվ, կամավորական գնդերը, որոնց ցարական հրամանատարությունը երկար չհանդուրժեց եւ վերածեց բանակային ստորաբաժանումների մեջ մտնող գումարտակների, հերոսաբար կռվեցին. արժանացան ոչ միայն հայկական, այլեւ ռուսական հրամանատարության հարգանքին: Այդ գնդերը այն բռնիքներն էին, որ հազարամյա ընդմիջումից հետո ծնեցին հայոց բանակը, հիմք դրեցին հայկական բանակային անդրանիկ ավանդույթներին:

¹⁷ ՀՀ ՀԲԿԳԱ, ֆ. «Արձանագրություն հայոց ազգային համախորհրդի»:

¹⁸ Ն.տ.:

Այդ էր պատճառը, որ կենսագործելով Ժամանակավոր կառավարության պահանջը բանակը ազգային սկզբունքի վրա վերակառուցելու վերաբերյալ, ռուսական հրամանատարությունը Կովկասում հանձնեց այդ գումարտակների տեսավ այն զինվորական կառույցները, որոնց վրա հնարավոր էր բարձրացնել ազգային բանակի շենքը: Ազգային գործառնների գաղափարը ծնվեց տեղերում դեռ մինչեւ փետրվարյան հեղափոխությունը եւ Ժամանակավոր կառավարության հավանությանն արժանացավ 1917թ. կեսերին: Հայկական վեց գումարտակների հիմքի վրա ձեւավորվեցին վեց գնդեր միավորված դիվիզիաների մեջ: Ռուսական բանակի գլխավոր հրամանատար Կոռնիլովի 1917թ. հուլիսի 28-ի հրամանով այդ դիվիզիաների միավորմամբ ստեղծվեց հայկական բանակային կորպուս:

Նորաստեղծ կորպուսի գորակազմը համալրելու համար աշխատանքներ ծավալվեցին ռուսական բանակում ծառայության մեջ գտնվող հայերին Կովկաս տեղափոխելու ուղղությամբ:

«Հայկական կորպուսի ստեղծման գաղափարը,- գրում է գեներալ Կուլեբյակինը,- որպես հիմնական զինվորական կազմակերպություն, որը ռազմական առումով միավորում էր ամբողջ ժողովրդին, դարձավ կենսական խնդիր ոչ միայն ռազմաճակատի, այլեւ հայերի ֆիզիկական գոյության համար: Հայ զինվորները գիտակցում էին, որ ռազմաճակատի մերկանալը սպառնում էր դարավոր թշնամու նոր եւ արդեն անվերապահ ներխուժում իրենց հարազատ, արյունահեղ Հայաստան: Նրանք գգում էին, որ Կովկասյան ռազմաճակատի կորուստը հավասարագոր էր իրենց ժողովրդի վերջնական կործանմանը»¹⁹:

1917թ. մայիսին Պետրոգրադում փոխգնդապետներ Ի. Տիգրանյանի եւ Ն. Մելիք-Փարսադանյանի նախաձեռնությամբ գլխավոր շտաբի Պետրոգրադի ռազմական օկրուգի հրամանատարի օգնական գեներալ Լ. Տերտերյանի գլխավորությամբ հայկական կոմիտեին կից ստեղծվեց Հայկական զինվորական հանձնաժողով: Այդ հանձնաժողովի աշխատանքներում ներգրավվեց նաեւ ռազմական նախարարության պատասխանատու աշխատակից գեներալ Ա. Բազրատունին, որը լայն կապեր ուներ կառավարական շրջանակներում եւ փորձեց ռուսական բանակի հրամանատարությանը համոզել, թե «հայերը վախենալով ռուսական բանակի փլուզման վտանգից խնդրում են թույլ տալ ստեղծելու հայկական ազգային կորպուս»²⁰: Այդ հարցով հայերի միջնորդության վրա Ժամանակավոր կառավարության նախագահ եւ ռազմական

¹⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 34:

²⁰ Ն.տ.:

նախարար Ա. Կերեմսկին մակագրեց. «Գտնում եմ ժամանակին ու անհետաձգելի հայկական հրաձգային գումարտակների վերածումը գնդերի եւ դրանցից դիվիզիաների միավորումը»²¹: Համապատասխան հրամանները տրվեցին հունիսի 29-ին եւ հուլիսի 28-ին:

1917թ. օգոստոսի 4-ին Բագրատունին եւ Լ. Տիգրանյանը Սավինկովին ներկայացրեցին հայկական կորպուսի ստեղծման ծրագիրը: Գեներալներին օգնության հասավ Թուրքահայաստանի գլխավոր կոմիսարի օգնական Հ. Չավրիյանը, որն առաջարկեց ստեղծել հայկական զինվորական կոմիսարի պաշտոն եւ այդ պաշտոնում երաշխավորեց գեներալ Բագրատունին: Ազգային խորհուրդը համաձայնվեց, իսկ Ժամանակավոր կառավարությունը հաստատեց Ազգային ժողովի որոշումը՝ Բագրատունուն հայկական զինվորական կոմիսար նշանակելու վերաբերյալ:

1917թ. ամռանը Ժամանակավոր կառավարության երկրամասային իշխանության՝ Անդրկովկասի հատուկ կոմիտեի ղեկավար Խառլամովը նկատի ունենալով, որ ռուսական բանակին սպառնում էր կազմալուծում, նույնպես առաջարկեց ձեռնարկել ազգային, մասնավորապես, հայկական զորամասեր:

Բայց բանի որ հայկական կորպուսի ստեղծումը խանգարվում էր չարությամբ էր ընդունվում վրացիների եւ ադրբեջանցիների կողմից, սկզբում ձեռնվորվեցին հայկական փոքրիկ զորամասեր՝ լեռնային հրետանային մարտկոց, հետախուզական հեծյալ ջոկատ եւ այլն²²:

Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետ Լեբեդինսկին 1917թ. սեպտեմբերի 30-ին հեռագրեց Պետրոգրադ, թե հայկական գումարտակները (կամավորական գնդերը) չէին լքել իրենց դիրքերը, ամբողջ կարողությամբ մարտում էին թուրքերի դեմ: Այդ գումարտակները վատահեղի էին: Լեբեդինսկին խնդրում էր թույլ տալ ստեղծելու հայկական նոր գումարտակներ:

Հոկտեմբերի 23-ին Պետրոգրադից ստացվեց հրաման. «1. Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի տրամադրության տակ կազմակերպել 2-րդ հրաձգային բրիգադ... 2. Հայկական 1-ին, 2-րդ եւ 5-րդ հրաձգային գնդերն ընդգրկել Հայկական հրաձգային 2-րդ բրիգադի կազմը»²³:

Այս հրամանով հայկական բանակային կորպուսի մեջ մտան վեց գնդեր, գումարտակների թիվը կրկնապատկվեց եւ հասցվեց 24-ի: Դրանցով ձեռավորվեց երկու հրաձգային դիվիզիա: Ապա կազմավորվեցին նաեւ հայկական հեծելազորային բրիգադը, հրետանային դիվիզիոնը, սակրավորների գունդը, ռադիոհեռագրական ծառայությունը: Հայերով համալրվեց նաեւ Վանա ծովի նավատորմը:

²¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 34:

²² АВПР, ф. 2003, оп. 2, л. 338:

²³ Ն.տ.:

Դեկտեմբերի 13-ին հայկական կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը, կոմիսար՝ Դրոն: Կորպուսն ուներ 17.000 սվին, 16 մարտկոց²⁴:

Նշենք, որ Նազարբեկյանին այդ պաշտոնում նշանակելու հարցում կային լուրջ վերապահումներ: Ոմանք գտնում էին, որ նա «հուսահատ, հոգնած, գործի հաջողությանը չհավատացող» անձնավորություն էր:²⁵ Դժբախտաբար այդ վերապահումներն ունեին լուրջ հիմքեր: Նա արհեստավարժ գորահրամանատար էր, ազնիվ մարդ, բայց նաեւ թույլ կազմակերպիչ, դանդաղաշարժ էր եւ ոչ միշտ՝ սկզբունքային:

1917թ. հուլիսի 7-ին կայացավ հայ զինվորների ժողով, որն անհրաժեշտ համարեց ստեղծելու հայ զինվորների միություն²⁶: Այն փաստորեն հայ սպաների կազմակերպություն էր: Միության կանոնադրությունը նախատեսում էր աջակցություն ցույց տալ հայկական զորամասերի կազմակերպմանը, զինվորների ուսուցմանը, բանակային կարգապահությունը պատշաճ հիմքերի վրա դնելուն: Օգնել պատերազմի հայ հաշմանդամներին, նրանց ընտանիքներին, որբերին: Համաձայն կանոնադրության միությունը քաղաքական կազմակերպություն չէր եւ քաղաքական նպատակներ «չէր հետապնդում»: Սակայն շատ չանցած միության ամբողջ գործունեությունը քաղաքականացվեց, այն ներքաշվեց խարդախ, առանձին դեպքերում նաեւ դավաճանական հետեւանքներ ծնած գործարքների մեջ: Նույն ժամանակ Ալեքսյուի հայ զինվորները ստեղծեցին «Թափք» անունը կրող կազմակերպությունը, որի նպատակն էր քաջալերել զինվորների պատվախնդրությունը:

Հուլիսի 25-ին Ալեքսյուի կայսագորի հայկական մի վաշտ մեկնեց ռազմաճակատ համալրելու հրացանաձիգ գնդերից մեկը²⁷:

Հայկական զորամասերում եղած մարդկանց թվի վերաբերյալ նույնպես չափազանցությունները հաճախ էին տեղ գտնում Կովկասի ու սփյուռքի մամուլում: «Հայրենիքը» գրում է, թե ռուսական հրամանատարությունը Կովկաս էր փոխադրել 130.000 հայ²⁸: Բայց մի բան իրական էր՝ արդեն հոկտեմբերին Կովկասյան ռազմաճակատի հայկական տարածքների ռազմաճակատային գծի զորամասերում հայերը բացարձակ մեծամասնություն էին կազմում²⁹:

Միսլ է Վ. Մելիքյանի միտքը, թե Կովկասյան ռազմաճակատի հայ զին-

²⁴ Лудинвейг Е., Турция в годы первой мировой войны, М., 1966, с. 161:

²⁵ Հայ ազգային խորհրդի արձանագրություն, ք. 199:

²⁶ «Հորիզոն», 09.08.1917

²⁷ «Ժայռ», 06.08.1917:

²⁸ «Հայրենիք», 28.08.1917:

²⁹ «Ազատամարտ», 05.11.1917:

վորների դասալքությունների պատճառներից մեկը բոլշևիկների ազդեցությունն էր: Մինչդեռ ազգային զորամասերի ստեղծումը նաև դիտվում էր «որպես բոլշևիկացնող Ռուսաստանին ընդդիմադիր ուժ»³⁰:

Ռուսական կառույցներն ազգային դարձնելու համար անհրաժեշտ էր համարվում «1. Խուսափել նոր զորամասերի ստեղծումից, 2. Ազգայնացնել հիմնականում մոտիկ անցյալում ձեւավորված զորամասերը, որոնք կազմված են ռազմական տեսակետից առավել անհուսալի տարրերից եւ 3. Առաջին հերթին ազգայնացնել պահեստային զորամասերը...»³¹:

Հայկական ազգային զորամասեր ձեւավորելու համար ապրիլի 19-ին Թ. Նազարբեկյանը մեկնում է ռազմաճակատի շտաբ: Եվ սկսվում է առաջարկների հեղեղ այդ զորամասերը ձեւավորելու վերաբերյալ: Գերագույն գլխավոր հրամանատար Կոռնիլովի հարցմանը Կերենսկին պատասխանեց, թե հայկական վաշտերը գնդերի, իսկ վերջիններն էլ դիվիզիաների վերակազմավորումը խիստ հրատապ է ու անհետաձգելի³²: Դրան հաջորդեց հոսքը դեպի ազգային զորամասեր:

Ռուսիական ճակատից հեռագրում էին Պիտեր, թե տեղի զորամասերի «հայերն ու վրացիները խնդրում են իրենց տեղափոխել Կովկասյան ճակատ, ազգային զորամասեր»³³: Նման ցանկություններ էին ստացվում Արեւմտյան ռազմաճակատի բոլոր հատվածներից:

Հոկտեմբերի 4-ին ռազմական նախարարությունը հայտնեց, որ չի արգելում, որպեսզի թուրքական բանակում ծառայած հայ զբոհներին տեղափոխեն Կովկաս, եթե նրանց թիվը չի անցնում մի քանի հազարից եւ չի ազդի անդրկովկասյան բանակի մատակարարման առանց այդ էլ ծանր վիճակի վրա³⁴:

Սակայն դժվարություններ կային նորաստեղծ հայկական գնդերի կազմը մեծացնելու գործում, որովհետեւ ռազմաճակատում կռվող ուժի մեծ պակաս կար: Նազարբեկյանը բանակի շտաբից համալրում է խնդրում, քանի որ զինվորների թիվը չէր համապատասխանում գրաված դիրքերի երկարությանը³⁵: Սակայն համալրումներ չստացվեցին ու միաժամանակ արգելվեց հայկական նոր զորամասերի կազմավորումը:

Բագրատունին միաժամանակ ղեկավարում էր ռազմական խորհուրդը: «Զաջատեղյակ լինելով ռազմական գործին,- գրում է Կուլեբյակինը,- ունենա-

³⁰ Մեխրյան Վ., նշվ. աշխ., էջ 286:

³¹ РГВИА, ф. 2015, оп. 1, д. 3:

³² Ն.տ., ф. 2003, оп. 2, д. 338:

³³ Ն.տ., ф. 2015, оп. 1, д. 3:

³⁴ ГАРФ, ф. 1779, оп. 1, д. 435:

³⁵ РГВИА, ф. 2300, оп. 1, д. 39:

լով հանգիստ բնավորություն Բագրատունին մեծ ծառայություն մատուցեց հայկական կորպուսի ստեղծմանը»³⁶:

Նախատեսվում էր ռուսական բանակում ծառայող 130.000 հայերից 40000-ին կենտրոնացնել Անդրկովկասում: Կերենսկու համաձայնությամբ եւ Պետրոգրադի ռազմական օկրուգի հրամանատարի հրամանով Բագրատունին Հյուսիսային ռազմաճակատից կանչեց Պետրոգրադ հատուկ ռազմական ջոկատ, որի մեջ մտնում էին հետեւակային բրիգադ, հեծյալ գունդ եւ հրետանային գումարտակ³⁷: Նա Պետրոգրադ բերել տվեց նաև ուրիշ ռազմական ուժեր բոլշևիկների հոկտեմբերյան ելույթը ճնշելու համար: Սակայն չհաջողվեց, իսկ ինքն էլ բանտարկվեց ու բանտում մնաց մինչև դեկտեմբերի 15-ը: Սկսվեց հայ զինվորականների տեղափոխությունը Անդրկովկաս:

1918թ. մարտին Բագրատունու տրամադրության տակ մի գրահագնացք դրեցին եւ ուղարկեցին Բաքու: Նրան դիմավորելու գնաց Ռուստոմը: Սակայն Բաքվում Բագրատունին ահաբեկչության գոհ դարձավ եւ չորս ամիս մնաց անկողնային վիճակում:

Նկատի ունենալով Կովկասյան ռազմաճակատում ստեղծված ծանր կացությունը Կերենսկին առաջարկեց Բագրատունուն ղեկավարել այդ ռազմաճակատը: Դա ինքնին նշանակում էր, որ Ժամանակավոր կառավարությունն այդ ռազմաճակատը հանձնում էր հայերին: Իսկ որպեսզի նրանք ի վիճակի լինեին այն պաշտպանել նախատեսվեց ձեւավորել հայկական ռազմական ուժ՝ կազմված 80.000 հոգուց:

Կովկասյան ռազմաճակատում տիրող վիճակը, մասնավորապես ռուսական բանակի շարքերում ծնունդ առած դասալքությունն ու դրա հարաճուն բնույթը, իհարկե, հայերին ավելի քան անհանգստացնում էին: Նրանք մեն-մենակ, դեմ-դիմաց էին մնում թուրքերի ու քրդերի հետ: Դա նաև զգաստացրեց հայ բնակչությանը, նրան մղեց ինքնապաշտպանության: Պահանջ առաջացավ ձեւավորելու ինքնապաշտպանության ցանց, մարտական ջոկատներ, ռազմական այլեայլ կազմակերպություններ:

Հայկական կորպուսի կադրերը նշանակում էր Ազգային խորհրդի ռազմական մասնաճյուղը:

Կորպուսի շտաբը սկզբում տեղավորված էր Թիֆլիսում՝ Հայոց բարեգործական ընկերության շենքում, ապա տեղափոխվեց Ալեքսանդրապոլ:

Հայկական կորպուսը կազմավորվեց ոչ միայն Կովկասյան եւ Արեւմտյան ռազմաճակատների հայ զինվորականներից, այլ նաև նոր զինակազմի միջո-

³⁶ РГВИА, ф. 2300, оп. 1, д. 39:

³⁷ Октябрьское вооруженное восстание в Петрограде. Документы и материалы. Ленинград, 1957, с. 277-278:

ցով: Իհարկե, բոլոր հայերը չէ, որ հաճույքով էին ծառայության անցնում հայկական զորամասերում: «Ամօր մեզ,- գրում է Նազարբեկյանը,- շատ հայեր, որպեսզի խուսափեն հայկական զորամասեր կանչվելուց, դիտավորյալ ռուսական զորամասերի հետ գնացել են, միայն թե ծառայության չմտնեն հայկական զորամասում»³⁸:

Այնուամենայնիվ, 1918թ. հունվարի սկզբին հայկական կորպուսը գրեթե համալրված էր: Լեբեդինսկու հրամանով նորաստեղծ գնդերից մեկը տեղավորվեց Շուշիում, իսկ մյուսը՝ Շուշիում: Գումարտականներ տեղակայվեցին Նուխիում, Ախալքալաքում, Նախիջևանում, Ելիզավետպոլում: Կոմունիկացիաները պաշտպանելու համար ստեղծվեցին Վանի, Երզնկայի եւ Սակուի գնդերը: Չեափորվեցին երեք հրաձգային բրիգադներ: Հայկական կորպուսին վիճակված էին ծանր պարտականություններ՝ փոխարինել ռուսական զորամասերին, իրականացնել բերդաքաղաքների եւ ամրացված շրջանների պաշտպանությունը, պահպանել ռուսական բանակի թողած վիթխարի չափերի հասնող ռազմական ունեցվածքը, հակահարված տալ թուրքերի եւ քրդերի հարձակումներին, իսկ վերջինների առաջխաղացման դեպքում՝ հայ ազգաբնակչությանը տեղափոխել անվտանգ շրջաններ: Այդ ամենը մի այնպիսի պայմաններում, երբ ռուսական կեն միլիոնանոց բանակի հեռանալը գործողության մեջ էր, իսկ Անդրկովկասում միայն հայերն էին շահագրգռված կռվելու՝ թուրքերի առաջխաղացում թույլ չտալու համար: Պատահական չէ, որ երբ սեյմում քննարկվում էր ռազմաճակատի հարցը, մահմեդական կորպուսի հրամանատար Շիխլիսկին հայտարարեց, թե ինքը դեռևս ոչ մի զորամաս չունի, վրացական կորպուսի հրամանատար Ախմետալիեւն էլ ասաց, թե ունի միայն մի գնդի չափ զորք, այն էլ նշանակված է պաշտպանելու Բաթումը: Իսկ թե վրաց մենչեիկներն ինչպես էին պաշտպանում Բաթումը, վկայում է Լեոն, որը Բաթումում ակնատես է լինում վրաց զինվորների դասալքությանը, երբ նրանց պարտականությունները կատարում էին սպաները: Բաթումում ձեռավորված վրացական զորամաս գոյություն չուներ: Լեոն նկատում է. «Ինքնապաշտպանական միջոցների վրա էին դրել իրենց հույսը վրաց մենչեիկները, երբ շտապում էին ամեն գնով իրագործել Ռուսաստանից անջատվելու իրանց տենչանքը»³⁹: Խան Խոյսկին այդ հայտարարությունները պատրվակ դարձրեց պահանջելու, որ այլևս ծախսեր չկատարվեն ազգային կորպուսներ պահելու վրա⁴⁰: Հարկ է նաև նշել, որ նույն Խան Խոյսկու կառավարության ջանքերով մի քանի ամիս անց զգալի թվով թաթարական զորամասեր մտան Բարվի վրա շարժվող Նուրի փաշայի իսլամական բանակի շարքերը:

³⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45:
³⁹ Լեո, նշվ. աշխ., էջ 377:
⁴⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 141, ց. 2, գ. 45:

Ազգային խորհուրդը կոչով դիմեց հայությանը, որում ասվում էր. «Կովկասյան ճակատի մերկացումը սպառնական կերպարանք է առել հայ ժողովրդի ֆիզիկական եւ քաղաքական գոյության համար: Ռուս հեղափոխության արժեքավոր նվաճումները պաշտպանելու, ինչպես նաև հայ ժողովրդի գոյությունը վտանգից փրկելու համար հայությունը պարտավոր է լարել իր բոլոր կենդանի ուժերը: Ծակատագրի բերումով Ազգային խորհրդին է վիճակված վարել հայ ժողովրդի բախտն այս վտանգալից ժամանակ... Ազգային խորհուրդը գեճի է կանչում ճակատի պաշտպանության համար բոլոր հայերին Անդրկովկասի եւ Ռուսաստանի սահմաններում...»:

Այդ նպատակով հանձնարարվում էր.
 «1. Այն բոլոր հայերը, որ ...դարձել են 25 տարեկան, պարտավոր են անմիջապես անցնել հայկական զորքերի շարքերը...
 2. Հայ զինվորները պարտավոր են մնալ այն զորամասերում, որտեղ են, իսկ ովքեր զորացրվել կամ բանակից հեռացել են, պարտավոր են նույնպես անցնել հայկական զորքերի շարքը»:

Նաև հայտնվում էր, որ «ազգային տեղական միլիցիա կազմելու միջոցով պետք է ապահովվի հայ ազգաբնակչության պատվի, կյանքի եւ գույքի անվտանգությունն ավազակների դեմ՝ Անդրկովկասի կոմիսարիատի հավանությանը եւ նրա բարյալացված աջակցությանը...»:

Այն հայերը, որ կփորձեն որեւէ միջոցով խուսափել զորակոչից, կհայտարարվեն հայրենիքի, ազգի եւ հեղափոխության դավաճաններ եւ կենթարկվեն պատասխանատվության: 4-ը փետրվարի 1918թ.»⁴¹:

Ինքնին ազգային զորամասերի ձեռավորումը ավելի քան դժվար խնդիր էր: Չորս տարի տեսած պատերազմը հոգնեցրել էր բոլորին: Ջինվորական խորհրդի անդամներից մեկն այդ կապակցությամբ գրում է. «Սկսեցին ստեղծել ազգային զորամասեր. բանակ կամավոր գնացողների թիվը քիչ էր, ուստի եւ սկսվեց հարկադիր զորահավաքը: Ժամանակին չներկայացողներին ձերբակալում էին եւ ուղարկում համապատասխան ազգային զորամասեր»⁴²: Ինչը նույնպես չէր ստացվում: Ինչպես գրում էր 4-րդ զորաջոկատի հրամանատարը. «Հրամանատարական կազմն ի վիճակի չէ պայքարելու դասալքության դեմ եւ հեղինակությունից չի օգտվում»⁴³:

Համադանի կայազորի զինվորների հանրահավաքի որոշման մեջ ասված է. «...Քննարկելով ազգային գնդեր ստեղծելու վերաբերյալ գեներալ Պրժե-

⁴¹ Գեղամյան Ե., Տարիները Կովկասում եւ Ռազուի անկումը, Ե., 1994, էջ 17-19:
⁴² ԱԳԱՕՔ, ֆ. 1318, ձ. 40:
⁴³ Մարգարյան Ե., Դավադիր գործարք, Ե., 1995, էջ 11:

լավակու հեռագիրը, միաձայն որոշեցինք բողոքել ազգային գնդեր կազմավորելու եւ մարդկանց ըստ ազգությունների բաժանելու դեմ»⁴⁴:

Ազգային զորամասերի ստեղծումը սրեց հարաբերությունները ռուս եւ ոչ ռուս զինվորականների միջեւ: Ռուս զինվորները ձգտում էին գեներալ վերադառնալ Ռուսաստան, իսկ Անդրկովկասի կոմիսարիատը որոշում ընդունեց՝ հանձնարարել Գյանջայի ազգային խորհրդին զինաթափել տուն վերադարձող ռուս զինվորական գնացքակազմերը: Ն. Շորդանիայի գաղտնի ցուցումով Գյանջայի ազգային խորհուրդը հանցագործներից հավաքագրեց 10.000 մարդ, զինեց եւ հանեց ռուսական գնացքակազմերի դեմ: Ավազակներին օգնության ուղարկվեց զրահագնացք եւ Շամխորի կայարանում խաղացվեց հունվարի 9-ի արյունահեղ ներկայացումը:

1918թ. նախօրյակին Կովկասյան ռազմաճակատը ձգվում էր մոտ 1200 կմ, այն Երզրումից արեւմուտք էր 200-250 կմ: Ծակատը պաշտպանում էին բանակային յոթ կորպուս, 16 դիվիզիա, 11 բրիգադ, 298 թեթեւ, 243 լեռնային հրանոթ, 69 հաուբից, 1533 գնդացիր: Գործող բանակում հաշվվում էին 150.000 զինվոր եւ 7351 սպա: Ռազմական ճանապարհները պաշտպանում էր 20000 զինվոր եւ սպա: Դրանց գումարած գեների եւ զինամթերքի պահեստներում, բուժսանիտարական, տրանսպորտային զորամասերում ծառայողներին: Միայն քիկունքային ծառայություններում զբաղված էր 120.000 մարդ:

Ահա այս վիթխարի ուժերին էին պարտադրված փոխարինել հայերը: Նրանք մահ պարտադրված էին կռվելու թուրքական 3-րդ (հրամանատար՝ Վեհիբ, շտաբի պետ՝ գերմանացի Գուգե) եւ 2-րդ (հրամանատար՝ Ա. Իգեր, շտաբի պետ՝ գերմանացի Ֆրանկենբերգ) բանակների դեմ: Դրանցում կար 309 գումարտակ, 156 հեծյալ հարյուրյակ, 1200 քուրդ:

Ռուսական բանակի քայքայումը սկսվեց դեռ ցարական կարգերի ժամանակ: Փետրվարյան հեղափոխությունից հետո այն ընդհանրական բնույթ ձեռք բերեց: Անդրկովկասում քայքայումն ավելի սուր բնույթ ընդունեց եւ անդրկովկասյան հատուկ կոմիտեն եւ բանակի հրամանատարությանն այլ բան չէր մնում, եթե ոչ աշխատել, որպեսզի զորացրումը կազմակերպված ընթանար:

Օդիշելիձեն 1917թ. դեկտեմբերի 12-ին Երզրումից հեռագրեց Թիֆլիս «... Կորպուսի զորամասերն սկսել են ինքնակամ նահանջը, որը սպառնում է մոտ ապագայում ռազմաճակատի մերկացում: Նման պայմաններում այդ շրջանները զբաղեցնելուն կոչված հայկական գնդերի հապաղումը կհանգեցնի

⁴⁴ «Кавказский рабочий», 21.01.1918:

Երզնկայի գրավմանը, եթե ոչ թուրքերի, ապա քրդերի կողմից... Մենք Արեւմտյան Հայաստանն անվերադարձորեն կորցնում ենք»⁴⁵:

Օդիշելիձեն նման եզրահանգման հիմքեր ուներ, որովհետեւ Էրզրում-Երզնկա գիծը ռազմավարական առումով գլխավոր ուղղությունն էր, այդ ճակատում էին առաջին կովկասյան եւ երկրորդ թուրքեստանյան կորպուսները, որոնց դասալքությունն օր օրի հյուծում էր:

Միայն 1917թ. դեկտեմբերին ռազմաճակատը լքել էր 40.000 մարդ: Դեկտեմբերի 31-ին 4-րդ կորպուսի հրամանատարն ահազանգեց. «Տրանսպորտի բոլոր միջոցները գրավված են դասալքների կողմից, զինվորները փախչում են, կորպուսի բոլոր օղակները կազմալուծված են: Հայկական գեներն անգոր են ապահովելու պահակային ծառայությունը բոլոր տեղամասերում: Թիկունքից թարմ ուժեր չուղարկելու դեպքում, հետեւանքների համար պատասխանատու չեմ»⁴⁶:

Նույն օրերին Էրզրումից հայտնեցին, թե Քեմախ-Երզնկա երկաթուղային գծամասում ոչ մի զինվոր չի մնացել եւ այն անպաշտպան է: Ապա՝ 6-րդ կորպուսի զորքերը լքել են իրենց բնագծերը եւ մեկնել են դեպի Սարիղամիշ: Ներկայումս դիրքերը լքում է վերջին՝ 17-րդ գումդը եւ հունվարի 1-ից Շայթանդաղից հարավ ոչ մի զինվոր չի լինելու: Առաջին կորպուսի զորքերը եւս հիմնականում շարժվում են դեպի արեւելք եւ վտանգ կա, որ կորպուսի զորամասերը Երզնկան կթողնեն ավելի վաղ, քան որոշված է: Ռուսական զորքերի կողմից լքված դիրքերին տիրանում էին քրդերը, որը նպաստեց թուրքերի կողմից զինադարի պայմանների խախտմանը եւ ընդհանուր հարձակման անցնելուն:

4-րդ կորպուսի հրամանատարի կարծիքով Երզնկայի գրավումը կհանգեցնի Արեւմտյան Հայաստանից զրկվելուն, որն, իր հերթին, կնշանակի գրավված ամբողջ տարածքի կորուստ:

1918թ. հունվարի 6-ին Կարսից ռազմաճակատի շտաբին գրեցին, թե երե մինչեւ հունվարի 10-ը հայկական զորամասեր չուղարկվեն ամբողջ հրետանավորներին փոխարինելու, իրենք ինքնագլուխ հեռանալու են քերդից⁴⁷:

Ռազմաճակատի հրետանու տեսուչը գրում է, թե Էրզրումի հրետանային պահեստները թալանվում էին: Ռուսական բանակի հրամանատարը Կարսի, Բաթումի եւ Տրապիզոնի պարետներին հրամայեց. «...Անհապաղ ներգրավել տվյալ շրջանում գտնվող ազգային զորքերին քերդերի սպասարկման եւ պահպանման գործում»⁴⁸:

Թուրքական եւ քրդական հրոսակները հարձակվում էին լքված օբյեկտներ-

⁴⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 33:

⁴⁶ Ն.ս.:

⁴⁷ Ն.ս.:

⁴⁸ Ն.ս.:

րի վրա, քաղաքում, իսկ երբեմն նաեւ հրդեհում էին եւ խուճապ առաջացնում ազգայնական շրջանում:

Հ. Օհանջանյանը գերմանական կառավարությանը 1918թ. հունիսին գրեց, որ բուրժական բանակի հարձակումը հայերին «սարսափեցրեց ու հուսահատեցրեց... եւ նրանք բախտի բնահաճույքին բողոք իրենց տներն ու ունեցվածքը, փախան բուրժական բանակից փրկվելու համար»⁴⁹:

Հ. Օհանջանյանը սեփական ահաբեկվածությունը համազգային մակարդակի էր բարձրացնում մի ժամանակ, երբ բուրժական բանակը ավելի ծանր վիճակում էր:

Թուրքերը նույնպես հոգնել էին պատերազմից եւ այլեւս կռվել չէին ուզում: Այդ տրամադրությունը տիրապետող դարձավ Ռուսաստանում փետրվարյան հեղափոխությունից հետո: 1917թ. մարտին Կ. Պոլսից ռազմաճակատ ուղարկված զորակոչիկների 40 տոկոսը ռազմաճակատ չէր հասել, դասալքել էր: Դասալիքները կազմում էին չեթեական խմբեր, քաշվում էին լեռներն ու անտառները եւ գրադվում ավազակությամբ, կռվում ռուսականության եւ ժանդարմների դեմ:

Համաձայն Բրեստի դաշնագրի՝ պատերազմական գործողությունները պետք է դադարեցվեին մինչեւ 1918թ. հունվարի 14-ը: Սակայն բուրքերը հունվարի 9-ին դիմեցին Անդրկովկասյան կոմիսարիատին՝ «կնքելու դաշնագիր Թուրքիայի եւ Անդրկովկասի միջեւ փոխադարձ արդարության սկզբունքի հիման վրա»:

Դա արտահայտություն էր նույն իրողության՝ բուրք զինվորը հոգնել էր ու այլեւս կռվել չէր ուզում եւ, ինչպես գրում է Լ. Սանդերսը. «Դասալքությունն այժմ դարձել է սովորական երեւոյթ: Ի տարբերություն անցյալի, դասալիքներն իրենց հետ տանում էին հրացաններ, նռնակներ եւ անգամ զնդացիներ»⁵⁰:

Մ. Լարչեն վկայում է, որ բուրժական հրամանատարությունը հարկադրված էր ամեն ամիս Միջագետքի ռազմաճակատից տեղափոխել 4000 հիվանդների եւ վիրավորների, իսկ այդ կորուստների փոխարեն համալրումների ապահովումը գնալով ավելի ու ավելի բարդ խնդիր էր դառնում⁵¹:

Կովկասյան ռազմաճակատում «եղբայրացման» գործընթացը, չնայած ոչ մեծ ծավալներով, սկսվեց փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո: Թուրք զինվորներին հասցեագրված մի կոչում, որը կազմվել էր ռուսական բանակի շտաբում, ասվում էր, որ այդ պատերազմը «օգուտ է քե-

րում միայն կայսրերին, սուլթաններին եւ նրանց մանկավարժներին... պատերազմի հետեւանքն է... սովը: Դուք գիտե՞ք, որ Էնվերն ու Թալեաթը հանում իրենց շահամուլ նպատակների եւ հօգուտ գերմանացիների են վարում այս սարսափելի արյունահեղ, արդեն եռամյա պատերազմը, որից դուք ի՞նչ ստացաք՝ ձեր ընտանիքների քայքայում, ողբերգություն եւ ստրկական հնազանդություն գերմանացիներին...»

Մենք, ռուս զինվորներս, միավորվելով ժողովրդի հետ, տապալեցինք իրն կառավարությունը եւ հաստատեցինք միություն, հավասարություն եւ եղբայրություն եւ ձեռք մեկնեցինք ձեզ, մեր եղբայրներին ու նույն բանը սպասում ենք ձեզանից: Տապալեք ձեր բռնատիրական իշխանությունը եւ այս արյունահեղ պատերազմի մեղավոր գերմանացիներին քշեք ձեզանից հեռու: Երբ դուք այդ անեք, ապա մեզ ձեռք կմեկնեք եւ պատերազմն ավարտված կլինի»⁵²: Շուտով ստացվում է բուրքերի պատասխանը. «Մենք միանգամայն համաձայն ենք, որ խաղաղությանը սպասում է աշխարհը: Օսմանյան զինվորները բոլոր ջանքերը կգործադրեն, որպեսզի հասնեն այդ սրբազան ավարտին»⁵³:

Արդեն 1917թ. մայիսին ստացված մի զեկուցագրում ասվում էր, որ առկա են «բոլոր նշանները... որ սկսվելու են խաղաղության սեպտեմբերյան բանակցություններ»⁵⁴: Օսմանյան կայսրության նախկին ՆԳ նախարար Ռաշիդը Փարիզին համոզում էր, որ եթե դաշնակիցները Թուրքիային խաղաղություն առաջարկեն եւ կոչ անեն բուրք հայրենասերներին ապստամբելու, դա կստեղծի բարենպաստ մթնոլորտ Էնվեր-Թալեաթ խմբին վռնդելու համար⁵⁵:

Վերջիններս անտարբեր չմնացին, զգուշացան, եւ Թալեաթը սկսեց բուրքերին համոզել, որ իրենք մղում էին պաշտպանողական պատերազմ: Նա միաժամանակ հուշում էր, որ ցարական վարչակարգի պատերազմը բուլացրել է Ռուսաստանին, ինչը Թուրքիայի համար հնարավորություն է նրանից «պատառիկներ խլելու»:

Բեռլինում Թուրքիայի դեսպան Ս. Ֆուադը հայտարարեց, թե իր կառավարության կայծիքով «անիշխանության մեջ ընկած եւ կայուն կառավարություն չունեցող Ռուսաստանի հետ խաղաղություն կնքելու հույսը խիստ բուլացել է»: Անջատ խաղաղության հասնելու երկուստեք ձգտումը թե Պոլսում եւ թե Պետրոգրադում գնալով թուլանում էր: Ա. Մենդելշտամը, որն այդ ժամանակ Ժամանակավոր կառավարության հավատարմատարն էր Շվեյցարիայում, իր ԱԳ նախարար Տերեչչենկոյին գրեց, թե բուրքերին Եվրոպայից քշելու վերա-

⁴⁹ R 11047 Ab. 24553:

⁵⁰ Sanders L., Funf Jahre Turkei. Berlin, 1920:

⁵¹ Larcher M., La guerre turque dans la guerre mondial. Paris, 1926, p. 273:

⁵² ГУТШ, ф. 2168, оп. 1, д.279:

⁵³ Алиев Г., Турция в период первой мировой войны. М., 1972, с. 306:

⁵⁴ ГУТШ, ф. 2003, оп. 1, д. 1231:

⁵⁵ Габидуллин Х., Младотурецкая революция. М., 1936, с. 214:

քերյալ Վիլսոնի ձգտումը, այն բանի հետեւանքով, որ ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականությունը, մասնավորապես Կ. Պոլսի եւ նեղուցների հարցում, մնացել է անփոփոխ, թուրքական ընդդիմության եռանդուն գործունեությունը սեպարատ պայմանագիր կնքելու համար սկսել է մարել: Մասնավաճ թուրքերը նկատում էին, որ ռուսական գորքերը հայկականով փոխարինելու գործը գնում էր շատ դանդաղ եւ անկազմակերպ, առաջացել էր մի քառս, որի հաղթահարումը ժամանակ ու լուրջ ջանքեր էր պահանջում:

Պատճառները մի քանիսն էին. նախ գործընթացը ղեկավարելու համար լիազորություններ եւ անհրաժեշտ հնարավորություններ ունեցող օղակի չգոյությունն էր, Հայ ազգային խորհրդի անլուրջ, հպանցիկ մոտեցումը խնդրի լուծմանը: Ծանապարհների, մասնավորապես, երկաթուղու, մասնավորապես Թիֆլիս-Ալեքսանդրապոլ գծի փակ լինելը ձախողում էր Ռուսաստանից եկող հայ գինվորների հասնելը ռազմաճակատ:

Սաղախլուի եւ շրջակա գյուղերի մահմեդականներն ապստամբել էին եւ չէին ճանաչում կոմիսարիատի իշխանությունը, իսկ թուրքերը շրջափակել էին Ախալցխան: Հայկական զինված ուժերը բուլշեիկների երկրային կոմիտեին հավաստիացնում էին, որ եթե ռուսական գորքերը շարժվեն դեպի Անդրկովկաս, Արսենալում գտնվող հայկական ուժերի օգնությամբ հնարավոր էր գրավել Թիֆլիսը: Ս. Կիրովի հետ կապ հաստատելու համար Վլադիկավկազ մեկնեց Թորգոմը: Թիֆլիսի գրավումը ոչ միայն կփրկեր Բաքվի կոմունան, այլև կնշանակեր խորհրդային կարգերի հաստատում Անդրկովկասում:

Մենչեիկներն ու մուսավաթականները սարսափեցին, նրանք գերադասում էին, որ Էնվերը գրավեր երկրամասը: Շուտով բուլշեիկյան առաջխաղացման դեմ հակահեղափոխական ուժերի բլոկին միացավ նաև ՀՀԴ, որ մերժեց Ս. Շահումյանի առաջարկը՝ օգնելու խորհրդային բանակին շարժվելու դեպի Թիֆլիս, միավորելու Ալեքսանդրապոլ-Կարս գծի վրա եղած հայկական ուժերին եւ հակահարված տալու թուրքերին: Դրան հետևեց Բաքվի ժողկոմխորհրդի որոշումը՝ Հայկական ազգային խորհուրդը ցրելու վերաբերյալ⁵⁶:

Չլուծվեց բախտորոշ նշանակության մի ուրիշ հարց եւս: Ռազմաճակատում ուժերի հարաբերակցությունը հօգուտ թուրքերի փոխվելը թելադրում էր՝ որքան կարելի էր նեղացնել ռազմաճակատը՝ խոսքը գնում էր 1200 կմ հասցնել առնվազը 200-250 կմ: Այս խնդիրը հստակ եւ, առանց ժամանակ կորցնելու, լուծում էր պահանջում, քանի որ առանց այդ անելու ռազմաճակատի քայքայման առաջն առնելն անհնար էր, առանց այդ անելու ռազմաճակատային գծի իրական գոյությունը խաթելանք էր, առանց այդ անելու պատերազմը շարունակելն անիմաստ էր, որովհետև ոչ պաշտպանություն էր հնարավոր կազմակերպել եւ ոչ էլ հարձակում:

⁵⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 413, ց. 1, գ. 1

Թուրքերն ունեին մի մեծ առավելություն եւ դա ոչ թե նրանց բանակային ուժերի մեծաթիվ լինելն էր, այլ այն, որ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիական բնակչության 90-95 տոկոսը մահմեդական եւ թուրք էին եւ այն, որ թուրքական բանակն ու ազգաբնակչությունն ունեին միմյանց հետ համագործակցելու փորձ ու հմտություն: Ռազմաճակատային գծի չփոքրացնելը հօգուտ թուրքերի էր եւ կոմիսարիատն ու, մասնավորապես, հայ գործիչները այս խնդրում օբյեկտիվորեն կողմնորոշվեցին հօգուտ բշնամու:

Իհարկե, ինչ-որ կերպ կարելի է նաև հասկանալ հայ, մասնավորապես արեւմտահայ գործիչներին: Կատարվել էր նրանց դարավոր իղձը՝ Արեւմտյան Հայաստանի տարածքի նշանակալից մասն ազատագրվել էր եւ անսահման դժվար էր այն հոծարակամ վերադարձնել թուրքերին: Այս դիրքորոշումը նաև թելադրում էր արեւմտահայ փախստականների տրամադրությամբ: Բայց սովյալ դեպքում խոսքը չէր գնում գրավված ամբողջ տարածքը վերադարձնելուն, այլ ռազմաճակատի գիծը հետ քաշելուն մինչեւ Օլթի-Երզնկա-Մուշ-Վան:

Շահումյանն աղետալի էր համարում ռուսական բանակի նահանջը հայ ժողովրդի համար եւ քայլեր ձեռնարկեց կանխելու համար: «Ռուսական գորքերի անակնկալ հետ քաշվելը չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում: Մենք արդեն գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին: Հավանորեն դրանից պակաս թվով խաղաղ քրդեր եւ թուրքեր չեն ոչնչացել պատերազմական գործողություններից, սովից ու ցրտից: Ռուսական գորքերի հետ քաշվելու լուրն առաջ կրերի հարազատ վայրերից փախած, մի կողմից թուրքերի ու քրդերի, մյուս կողմից՝ հայերի շարժում: Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու: Մեր հեղափոխական բանակը չի կարող անտարբեր մնալ այդ բնակչության բախտի համդեպ»⁵⁷:

Թուրքական վտանգը պահանջում էր ուժերի առավելագույն մոբիլիզացում, ճկունություն, խնդիրների արագ լուծում, վիթխարի կազմակերպական ու քաղաքական աշխատանք, եւ, որը գլխավորն էր, թույլ չտալ ժամանակի վատնում, որովհետև հայերին նախապատրաստվելու համար շատ քիչ ժամանակ էր տրված:

Դժբախտաբար այդպես չստացվեց՝ քաշքշուկը, բամբասանքը, շահարկումները, խուլ պայքարը կազմալուծում էին գործը:

Բազմաթիվ օրինակներից բերենք միայն մեկը:

⁵⁷ “Бакинский рабочий” 20.12.1917:

Ազգային եւ Անվտանգության խորհուրդների ու նրանց զինված ուժերի հրամանատարների միջեւ համաձայնություն կայացվեց ճակատը բաժանել երկու մասի: Հայկական կորպուսը պաշտպանելու էր Խնուս-Էրզրում-Տրապիզոն հատվածը, բայց բանի որ կորպուսի զորամասերի ձեւավորումը դեռեւս ավարտված չէր, Անդրանիկի դիվիզիան առաջինը մարտական դիրքեր զբաղեցրեց: Կորպուսի ուժերից միայն Սիլիկյանի դիվիզիան է մեկնում Վան, իսկ Արեշյանը, որ պետք է դեռ փետրվարին լիներ Էրզրումում, մեկնումն այնքան ձգձգեց, որ հազիվ Ալեքսանդրապոլ հասավ, իսկ Վանս լճի շրջանի պաշտպանության պետ նշանակված Բաղդասարյանը այդպես էլ մնաց Երեւանում:

Հավանաբար ճիշտը ուշադրության կենտրոնացումն էր նախ ռուսական բանակում գտնվող 120.000 հայերի ուժերի օգտագործման վրա: Եթե նրանց անգամ կեսին հաջողվեր բերել հայկական բանակ, վերջինս երկու անգամ ավելի մեծ կլիներ, քան Կովկասյան ռազմաճակատում ունեին թուրքերը: Դա միանգամայն լուծելի խնդիր էր, եթե նկատի ունենանք նաեւ այն, որ դրանում շահագրգռված էր նաեւ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը եւ հայկական զինվորական ուժերի ձեւավորմանը մեծ օգնություն էր ցույց տալիս ռուսական կովկասյան բանակի հրամանատարությունը (Լեբեդինսկի, Ջենկելիչ):

Փետրվարի 25-ին հայկական կորպուսի շտաբը Թիֆլիսից տեղափոխվեց Ալեքսպոլ: Կորպուսի շտաբի պետ նշանակվեց գեներալ Ե. Վիշինսկին: Մարտի 3-ին Օդիշելիձեն ռազմաճակատի հրամանատարությունը հանձնեց Թ. Նազարբեկյանին: Նա գրում է. «Պայքարի ամբողջ ծանրությունն ընկնում էր միայն հայերի վրա: Վրացիները զբաղված էին բացառապես Բաթումի հարցով, իսկ ադրբեջանցիները թուրքերի կողմն էին»⁵⁸:

Երեւանի նահանգում հայտարարվեց մինչեւ 32 տարեկան տղամարդկանց զորահավաք: Անդրկովկասյան կոմիսարիատը անվավեր ճանաչեց այդ որոշումը եւ թույլատրեց մինչեւ 28 տարեկանների զինակոչ: Արդեն փետրվարի վերջին հայկական կորպուսի մեջ մտնում էին հայկական 6-րդ գունդը (Էջմիածին) գնդապետ Դուրյանյանի, պարտիզանական հեծյալ գունդը (Երեւան) Պերեկրեստովի, հետեւակային պարտիզանական գունդը Կորոլկովի, հայկական 2-րդ հեծյալ գունդը (Քանաքեռ) Չալինյանի, սահմանապահ գումարտակը Սիլիկի, հայկական 5-րդ գունդը Փիրումյանի հրամանատարությամբ, ինչպես նաեւ 2-րդ գնդի 2-րդ գումարտակը (Արմավիր), Ջեյրուհի հեծյալ գունդը, Վանի առաջին եւ երկրորդ գնդերը, դաշտային երկու կայան, կապի զորամաս, երեք ինքնաբիռ, հրետանային բրիգադ: Երեւանյան զորքերի ընդհանուր հրամանատարը Մ. Սիլիկյանն էր:

⁵⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 20:

Հայկական կորպուսի կազմում էր հայկական առաջին դիվիզիան գեներալ Տեր-Հակոբյանի (քիչ անց գեներալ Արեշյանի) հրամանատարությամբ, որի մեջ էր մտնում նաեւ Լոռվա գունդը, ինչպես նաեւ Շուշում կազմավորված հայկական գումարտակ: Գումարտակներ կազմավորվեցին նաեւ Վարդաշենում, Ախալքալաքում, Ախալցխայում, Նախիջեւանում, Դիլիջանում, Լոռիում, Թիֆլիսում: Ստեղծվեցին Երեւանի պահեստային գնդերը, հեծելազորային պահեստային բրիգադը, էսկադրոնը, ինչպես նաեւ ուսումնական մարտկոցը (Կարս), ենթասպաների դպրոցը (Թիֆլիս), երկաթգծային գումարտակը (Մակու):

Ահա թե ինչպես է ներկայացնում հայկական բանակի ստեղծումը մարշալ Հ. Բաղրամյանը. «Իր մարտական կազմով մեծաթիվ, լավ զինված ռուսական բանակը հանդիպելով... Անդրկովկասի հակահեղափոխական կառավարության թշնամական վերաբերմունքին, 1917թ. դեկտեմբերին սկսեց զանգվածային նահանջ Կովկասյան ռազմաճակատից...»⁵⁹:

Հայկական առանձին բանակային կորպուսի ձեւավորումը սկսեց հենց այդ ժամանակ: Նախատեսվում էր նրանում ունենալ 17.000 սվին եւ 16 հրետանային մարտկոց:

Հայկական կորպուսին հանձնարարված էր պաշտպանել ռազմաճակատի Բայրուրդից պարսկական սահման ընկած հատվածը 375 կմ երկարությամբ, այդ թվում Էրզրումի եւ Կարսի բերդերը: Կորպուսի N1 եւ N2 հայկական հրաձգային դիվիզիաները ձեւավորվեցին հայկական կամավորական գնդերի փոխարեն 1916թ., ստեղծված հայկական հրաձգային գումարտակների հիմքի վրա: «Հարկ է ասել, որ այդ գնդերն ունեին փորձված սպայական կադրեր եւ մարտունակ կազմ»⁶⁰:

1917-ի դեկտեմբերին ձեւավորվեցին Սարիղամիշի N7 եւ Ալեքսանդրապոլի N8 հայկական հրաձգային գնդերը Բեյ-Մամիկոնյանի եւ իշխան Արդուտիանսկի-Դուզորուկու հրամանատարությամբ: Ահա այդ ութ գնդերից ձեւավորվեցին երկու հայկական դիվիզիաներ: Առաջին դիվիզիայի հրամանատարը գեներալ Արեշովն էր, տեղակայման վայրն՝ Ալեքսանդրապոլը, երկրորդ դիվիզիայի հրամանատարը գեներալ Սիլիկյանն էր, տեղակայման վայրը՝ Երեւանը:

Կորպուսի նորակազմ հեծյալ բրիգադի հրամանատարն էր գնդապետ Դորդանյանը: Բրիգադն ուներ երկու գունդ: Բրիգադի շտաբը 1918թ. մարտին տեղակայվեց Սարիղամիշում:

⁵⁹ Баграмян И., նշվ. աշխ., с. 46:

⁶⁰ Ն.տ., с. 47:

Արեւմտահայերից ձեւավորվեց հայկական կամավորական հատուկ դիվիզիա Անդրանիկի հրամանատարությամբ: Այս դիվիզիան ստեղծվեց մեկ հրաձգային գնդի եւ մի քանի մարտական խմբերի հիմքի վրա: 1917թ. դեկտեմբերից 1918թ. հունվար ամիսներին այս դիվիզիայի կազմում ստեղծվեցին երեք հետեւակային բրիգադներ, որոնցից N1-ի մեջ մտան Երզնկայի ու Էրզրումի, N2-ի մեջ՝ Ղարաքիլիսայի եւ Խնուսի, իսկ N3-ի մեջ՝ Վանի եւ Սակուի գնդերը: Դիվիզիան այդպես էլ չամբողջացավ, նախ, ցրված լինելու, ինչպես նաեւ ոչ լրիվ կազմի ու վատ զինվածության պատճառով:

Քիչ անց ձեւավորվեցին նաեւ Երեւանի շրջանում պարտիզանական եւ Իգդիրում՝ հետեւակային, իսկ Թիֆլիսում՝ Չեթունի հեծյալ գնդերը:

Երբ թուրքերը 1918թ. մարտին ներխուժեցին Անդրկովկաս հայկական կորպուսի գործերը տեղակայված էին հետեւյալ կերպ.

– Անդրանիկի դիվիզիան եւ հայկական N1 հետեւակային բրիգադը (գնդապետ Մորելի հրամանատարությամբ) ռազմաճակատի կենտրոնական գծի վրա՝ Էրզրումն ու հարակից տարածքները պաշտպանելու համար:

– Երկրորդ բրիգադը (գնդապետ Հովսեփյանի հրամանատարությամբ)՝ Իգդիր-Ալաշկերտ ուղղությամբ:

– Երրորդ բրիգադը (գնդապետ Բաղդասարյանի հրամանատարությամբ)՝ Վանի ուղղությամբ մինչեւ Բայազետ:

Հայկական կորպուսի գլխավոր ուժերը տեղակայված էին.

– Առաջին դիվիզիան կենտրոնացած էր Սարիղամիշ-Կարս գծի վրա:

– Երկրորդ դիվիզիան Երեւանում էր: Այստեղ էին նաեւ վեցը առանձին գնդեր:

« Ի տարբերություն որոշ պատմաբանների, - գրում է մարշալ Հ. Բաղրամյանը, - ես լրիվ հիմքեր ունեմ ասելու եւ խորապես համոզված եմ, որ 1918թ. ողբերգական շրջանում հայկական բանակն իսկական ազգային էր»⁶¹:

Հայերի դեմ (մասամբ նաեւ վրացիների) կանգնած էին թուրքական 3-րդ բանակը՝ 10 դիվիզիա, քրդական մի քանի հեծյալ խմբեր, թուրքական եւ ուրիշ անկանոն ջոկատներ:

«Չնայած թուրքական զորքերի թիվը համեմատաբար մեծ չէր, բայց մարտական պատրաստությամբ՝ գերազանցում էին մեր զորքերին, եթե նաեւ նկատի առնվի, որ հայկական զորամիավորումները ձեւավորման շրջանում էին»⁶²:

⁶¹ Баграмян И., 624. աշխ., с. 49:

⁶² Ն.տ., с. 50:

1917թ. սեպտեմբերին ստեղծված բազմակուսակցական Անվտանգության խորհրդին կից ձեւավորվեց Երկրապահ ռազմական խորհուրդ, որը խնդիր ուներ կազմակերպել ոչ կանոնավոր մարտական ուժեր եւ օգնել ռազմաճակատի պաշտպանությանը:

Դժվարանում ենք ճշտել Հ. Գանգրունու վկայությունն այն մասին, թե Անգլիան խոշոր միջոցներ էր տրամադրել, որպեսզի «ռուս զորքի քաշվելն էտրը Կովկասյան ճակատի համար արեւմտահայ 300.000 գաղթականներն կռուող զինուորներ եւ խումբեր կազմել»⁶³: Նաեւ հարկ է նշել, որ խոսքը ոչ թե 300.000-ոց բանակի մասին է, ինչպես հասկացել է Վ. Մելիքյանը, այլ 300.000 գաղթականներից հավաքագրված բանակի, որի զինվորների թիվը նախատեսվում էր մինչեւ 30.000: Դիշտ չէ նաեւ Հ. Գանգրունին, թե Կովկասյան բանակի հայ զինվորների թիվը կազմում էր 150.000⁶⁴: Այդքան հայ ծառայում էր ամբողջ ռուսական բանակում, որի ճնշող մեծամասնությունը ոչ թե Կովկասյան, այլ Արեւմտյան ռազմաճակատում էր:

Վ. Մելիքյանը բացարձակապես իրավացի է, երբ գրում է, թե ոչ բոլոր հայ քաղաքական ուժերն էին կողմնակից հայկական զորամասերի ստեղծմանը եւ մեջբերում է կատարում Վ. Անանունուց. «...Ազգայնամուլները ուժ են հավաքում եւ եռանդ են քափում՝ կազմակերպելու ազգային զորագնդեր... Ազգային առանձնացման գայթակղությունը տեղահան է արել կարճամիտ ազգասերների միտքը»⁶⁵:

Հազիվ թե հնարավոր է համաձայնվել Վ. Մելիքյանի հետեւյալ հարցադրման հետ, թե ՀՀԴ «սկզբից եւեթ պաշտպանել է ազգային զորամասերի ստեղծման անհրաժեշտությունը, նախ՝ ընդդեմ բոլշեիզմի եւ ապա՝... թուրքական ներխուժման առաջն առնելու նպատակով»⁶⁶: Այս գործում բոլշեիզմի դեմ պայքարը որեւէ դեր չի խաղացել, մանավանդ որ այդ շրջանում ՀՀԴ եւ հայ կոմունիստների միջեւ հարաբերություններն ամենեւին էլ թշնամական չէին:

1917թ. նոյեմբերի վերջին Թիֆլիսում ստացվեց Պ. Նուբարի հեռագիրը. «Եթե թուրքահայերն իրենց սեփական ուժերովը պաշտպանելու լինեին իրենց սահմանները, դաշնակիցները պիտի ճանչնային անոնց անկախութիւնը եւ պաշտպանեին զայն»⁶⁷: Այս հեռագիրը քննարկման նյութ դարձավ Արեւմտահայ համաժողովում, որը որոշեց արեւմտահայության շրջանում զորահավաք

⁶³ Թերզիպաշեան Ա., Անդրանիկ, էջ 310:

⁶⁴ Գանգրունի Հ., Հայաստանը 1918թ. և հայ քաղաքական միտքը. Բեյրութ, 1984, էջ 179:

⁶⁵ Ն.տ., էջ 125:

⁶⁶ «Բանվոր», 18.06.1917:

⁶⁷ Մելիքյան Վ., նշվ. աշխ., էջ 284:

սկսել կանոնավոր զորամասեր ձեռավորելու համար: Դրան ընդառաջ գնաց ռուսական բանակի հրամանատարությունը, որը պատրաստակամություն հայտնեց օգնել ամեն ինչում՝ զենքով, զինամթերքով, հանդերձանքով:

Սեկ ամսում բանակ զորակոչվելու ցանակություն հայտնեց 20.000 մարդ: Նման արձագանքի պատճառներից մեկն Անդրանիկի հմայքն էր, ձգտում կոչվել նրա հրամանատարության տակ: 500 զրագետ երիտասարդների համար բացվեց ենթասպաների եռամսյա դասընթաց: Մատակարարման գործն իր վրա վերցրեց անգլիական ռազմական առաքելությունը:

Ռուսական բանակում տիրապետող դարձած հակապատերազմական մթնոլորտը չանսաց նաեւ հայությանը: «Կորչի պատերազմը» կարգախոսը հնչում էր նաեւ հայկական շրջաններում ու ծանր անդրադառնում զինվորական կարգապահության վրա: Հայկական կորպուսի առաջարկը բանակում մահապատիժ մտցնելու վերաբերյալ Ազգային խորհրդի դաշնակցական մեծամասնության ջանքերով մերժվեց: Նազարբեկյանը համոզում էր. «Մենք ունինք զինվոր, ունինք սպայ, ունինք մասնագետ, ունինք զինամթերքի եւ պարենավորումի անհատնում պաշար», իսկ «թուրքը չունի ոչ բավական զորք, ոչ բավական սպայ, ոչ ալ բավական մասնագետ: Անոր զենքի պահեստը սահմանափակ է, պարենավորումին պաշարը զերո... բայց թուրքն ունի բան մը, որ մենք չունինք, եւ այդ բանակը՝ հակառակ մեր առավելություններուն, պիտի յաղթե մեզի»: Դա կարգապահությունն է:

Արեւմտահայ խորհրդի նիստում, երբ քննարկվում էր Անդրանիկի զորամասի Էրզրում մեկնելու հարցը, Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Սամիկոնյանը հանդես եկավ Անդրանիկին դիվիզիայի հրամանատար նշանակելու դեմ եւ քննադատական խոսք ասաց ռուսական բանակի հրամանատար Լեբեդինսկու հասցեին, որ իրեն «իրավասու նկատած էր զորավարի տիտղոս տալու դպրոցի երեսը չտեսած անձի մը, եւ իր հավանությունը տուած էր, որ այդ անձը պաշտպանելու երթար Էրզրումի պես բերդաքաղաք մը»⁶⁸:

Նա նաեւ առաջարկեց զորքերը հետ քաշել նախապատերազմյան սահման եւ պաշտպանել միայն Արեւելյան Հայաստանը, ինչը հավասարակշռությունից հանեց նիստին մասնակցող Անդրանիկին: Նա բղավեց. «Թող տա՞նք, ուրեմն, որ Շիրվանգաղեի փափաքը իրականանայ»: Սա շատ ավելի դարձվածք էր, քան իրական կարծիք: Սի անգամ Շիրվանգաղեն նեղված արեւմտահայերի ողբից, բերանից բաց է թողնում: «Թուրքերը ինչո՞ւ ջարդած չէին բոլոր թուրքահայերը, որպեսզի վերջ գտնային անոնց տախտուկները», որի համար Անդրանիկն ապտակել էր նրան⁶⁹:

⁶⁸ Թերզիպաշեան Ա., Անդրանիկ, էջ 321:

⁶⁹ Ն.տ., էջ 323-324:

Թիֆլիսի կայսրանում Անդրանիկին ու նրա դիվիզիայի մի գնդին ճանապարհելու էին եկել Ազգային խորհրդի ղեկավարները. կանգնած էր սլատով տողան: Ներկաները ցնծությամբ դիմավորեցին Անդրանիկին: Այստեղ նա ասաց իր թեւավոր խոսքը. «Անկախութիւնը իր զինն ունի, եւ, այդ գինը փափուկ անկողիներում տաքութիւնը չէ»⁷⁰:

1917թ. նոյեմբերին տեղի ունեցավ արեւմտահայերի 2-րդ համագումարը, որը Ազգային խորհրդի փոխարեն ձեռավորեց Անվտանգության խորհուրդ Վ. Փափսազյանի նախագահությամբ: Խորհրդի կազմում կային երեքական ներկայացուցիչ ՀՀԴ եւ ժողովրդական կուսակցությունից եւ երկու հոգի հնչակից:

Արեւմտահայ Անվտանգության խորհուրդը ստանձնում է Արեւմտյան Հայաստանի կառավարության որոշ պարտականություններ: Արեւմտահայ համագումարը բուռն օվազիայով Անդրանիկին ընտրեց արեւմտահայերի դիվիզիայի հրամանատար: Համագումարը տեղի էր ունենում Թիֆլիսի հայոց առաջնորդարանում, որի գավթում մեծ թվով մարդիկ էին հավաքվել եւ ցնծությամբ դիմավորեցին այդ որոշումը:

Արեւմտահայ բանակին որոշվեց տալ դիվիզիայի կարգավիճակ եւ որովհետեւ դիվիզիայի հրամանատարը պետք է ունենար գեներալ-մայորի կոչում, իսկ Անվտանգության խորհուրդը զինվորական կոչումներ չնորհելու իրավունք չունէր, հարց հարուցվեց ռուսական բանակի շտաբի առաջ Անդրանիկին շնորհելու այդ կոչումը: Գործնականում ստեղծվում էր հայկական երկու բանակ՝ հայկական կորպուս ռուսական բանակի կազմում եւ արեւմտահայ հարվածային ջոկատ՝ ինքնուրույն: Երկուսի հրամանատարության նստատեղին Թիֆլիսն էր: Անդրանիկի ստորաբաժանումները ցրված էին Հայաստանով մեկ՝ Վանա գունդը (Գր. Բուլղարացի) տեղակայված էր Վանի շրջանում, սասունցիների գունդը (Փեթարա Սանուկ)՝ Տարոնում, Խնուսի գունդը (Մասունցի Մուշեղ)՝ Խնուսում, Տարոնի 2-րդ գունդը (Արեշյան, Սմբատ)՝ Երեսնում: Մարտական ջոկատներ էին գործում Ալաշկերտում (Սմբատ), Երզնկայում (Ս. Մուրադ), Բաբերդում (Սեպուհ):

Արեւմտահայերի ազգային խորհրդի վերացումն ինքնին նշանակեց, որ Արեւելահայ ազգային խորհուրդը դառնում էր համազգային մարմին: Նրա իրավասությունների մեջ էր մտնում նաեւ հայկական զորքերի վերին հրամանատարության նշանակումը: Այսինքն՝ Անդրանիկին դիվիզիայի հրամանատար պետք է հաստատեր այդ խորհուրդը: Եվ քանի որ խորհրդի կազմի մեծամասնությունը դաշնակցականներ էին, մերժեցին: Կարծիք կա, որ մերժման իսկական պատճառն այն էր, որ 1912թ. հոկտեմբերին Անդրանիկը պաշտո-

⁷⁰ Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ. էջ 329:

նապես դուրս էր եկել այդ կուսակցությունից, չնայած մերժումը հիմնավորվեց այն բանով, որ Անդրանիկը «գինվորական կրթություն է կանոնավոր գործեր ղեկավարելու փորձ չունեք»: «Դաշնակցականները,- գրում է «Արև» թերթը, 1917թ. սեպտեմբերի 3-ին,- արհամարհելով արեւմտահայերի համագումարի ընտրությունն ու նրա կայացրած որոշումները եւ հույսը դնելով բժիշկ Ջավրիեի «Թուրքահայաստանի գրավված նահանգների կոմիսար» լինելու վրա որոշեց հանձնարարել արեւմտահայ դիվիզիային եռիշխանությամբ՝ Սեպուհ, Ռուբեն, Վ. Փափագյան կազմով, առանձին որոշելու խնդիրը՝ հույսով, որ նրանց որոշումը կարժանանա Ազգային խորհրդի հավանությանը:

Հայ նավթարդյունաբերող Հ. Մելիքյանի տանը եւ Մատենադարանում տեղի ունեցան Ազգային եւ Անվտանգության խորհուրդների համատեղ նիստերը: Նախագահում էր Ա. Ահարոնյանը: Երկու օր շարունակ գնացին բուռն քննարկումներ: Երկրորդ օրը հանդես եկավ Անդրանիկը. «Ես հասարակ գյուղացի եմ, իսկ դուք բարձրագույն կրթությամբ մարդիկ: Դուք այս գրքերն ընթերցել եք, իսկ ես՝ ոչ, բայց ես գիտեմ հայ ժողովրդին, զգում եմ նրա ցավերը... Ես մերժում եմ Ձեր առաջարկած հրամանատարությունը... Վաղ առավոտ կհագնեմ հասարակ զինվորի քրջերը, հրացանը կառնեմ ուսիս եւ կգնամ գեներալ Նազարբեկյանի մոտ ռազմաճակատ եւ կմեռնեմ այնտեղ...»⁷¹:

Եվ Անդրանիկը հեռացավ նիստից: Տիրեց ճնշող լռություն: Ապա տեղից բարձրացավ Ն. Աղբալյանը, թե «հայ ժողովուրդը խոսում է Անդրանիկի թեքանով: Նա իրավունք ունի»: Ապա խոսեց Պ. Լետոնյանը. «Անդրանիկը դրոշ է: Ժողովուրդը գնում է նրա հետեւից եւ անտեղի են նրան նվաստացնելու ճիգերը: Նման վերաբերմունքով ձեր շուրջը ստեղծում եք դատարկություն»:

Անցկացվեց քվեարկություն. 12 մասնակցից հօգուտ Անդրանիկի ձայն տվեց 9 հոգի, մեկը քվեարկեց Սիլիկյանի օգտին:

Ամիսներ անց՝ 1918թ. դեկտեմբերի կեսերին Անդրանիկը գեներալ Բազրատունուն գրած նամակում պատմում է, թե ինչ հանգամանքներում ծնվեց արեւմտահայ զինվորական միավորում ստեղծելու միտքը:

«1917թ. դեկտեմբերին,- գրում է նա,- համաձայն Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուրբար փաշայի հեռագրով արված առաջարկին, ես ձեռնամուխ եղա ստեղծելու արեւմտահայ զորամաս Արեւմտյան Հայաստանի երեք վիլայեթները՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, պաշտպանելու, որոնք գրավված էին ռուսական զորքերի կողմից»⁷²: Բանն այն էր, որ ռուսական զորքերը սկսել էին հեռանալ այդ շրջաններից եւ կանոնավոր ուժեր էին

պետք նրանց փոխարինելու: Արեւմտահայերի 1917թ. դեկտեմբերին կայացած համագումարն այդ նպատակով որոշեց հայտարարել զորակոչ: Խնդիր էր դրված ստեղծել 1.5 դիվիզիա, կազմված երեք բրիգադից, յուրաքանչյուրում երկու գունդ, որոնցից երկուսը Վանի, երկուսը Խնուս-Ալաշկերտի եւ երկուսը Էրզրումի համար: Պ. Նուրբարը հավաստիացնում էր, որ զորքի կազմավորման բոլոր ծախսերը հոգալու էին դաշնակիցները:

Մինչեւ մարտի 2-ը հնարավոր եղավ հավաքել 9000 կանոնավոր զինվոր, չհաշված ոչ կանոնավոր մարտական խմբերը: Դրանով գեներլի տակ եղած արեւմտահայերի թիվը հասավ 25.000-ի:

Բոլորն էին խոստովանում, որ կարճ ժամանակում կատարվեց վիթխարի աշխատանք արեւմտահայ ռազմական ուժեր ձեւավորելու ուղղությամբ: Բայց դա որեւէ կերպ չբարվորեց Անդրանիկի հանդեպ ՀՀԴ վերաբերմունքը եւ նրանք այդպես էլ մնացին հակոտնյա ուժեր:

Երբ Անդրանիկին շնորհվեց ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում, նա դիմեց հայերին՝ կամ հետ վերցրեք ինձ տված «Ժողովրդական հերոսի» տիտղոսը եւ կամ այնքան զինվոր տրամադրեք, որ կարողանամ ձեր տված կոչումն արդարացնել:

1917թ. դեկտեմբերի 22-ին Անդրանիկը կոչով դիմեց հայ եւ վրաց ժողովուրդներին, որում տրված է իրավիճակի հետեւյալ գնահատականը. «Ներքին քաղաքական իրադարձությունները Ռուսաստանում հանգեցրեցին այն բանին, որ ռուսական մեծ բանակի ճակատը փոփոխություն կրեց, որի հետեւանքով հայ ժողովուրդը մնաց դեմ առ դեմ դժբախտ ճակատագրին հանդեպ: Ռուսական բանակը, հայ ժողովրդի աջակցությամբ, տիրացավ Թուրքահայաստանի երեք նահանգների եւ այսօր զինադադարի, իսկ վաղը՝ հավանական դաշնագրի միջոցով այդ նահանգները, որոնցում բնակվում է արեւմտահայության 100.000 փրկվածներ, մարդիկ, ովքեր դեռ երեկ ակամատես էին եղել օսմանյան կառավարության ասրքած սպանդին, իսկ այսօր էլ վտանգվում են: Շատ հավանական է, որ այդ նահանգները մոտից ենթարկվեն բուրքական բանակի ներխուժմանը... Մենք ապրում ենք մեր պատմության ահեղ օրերը. մեր ժողովուրդը կամ կապրի իր վերջին օրերը եւ կամ կզտնվի գալիք ազատագրության նախաշեմին»⁷³:

Նա առաջարկում ու պահանջում էր բարձրանալ ինքնապաշտպանության, այլապես բնաջնջումն անխուսափելի էր:

Անդրանիկի կոչն անարձագանք չմնաց: Հովի. Թումանյանն ասաց. «Ահեղ վտանգի հանդիման յուրաքանչյուր մարդ գոհասեղանին պետք է հանի ինչ ունի եւ կարող է... Ես ունեմ չորս տղա եւ չորսին էլ դնում եմ կառավարության, Ազ-

⁷¹ «Արև», 03.09.1917:

⁷² «Մանկավարժ», 1990, N8:

⁷³ «Հայաստան», 22.12.1917

գային խորհրդի եւ քո տրամադրության տակ, իսկ չորս աղջիկներս պատրաստակամ գնում են կատարելու քիկունքային աշխատանքներ, ով ինչ կարող է»⁷⁴:

Արեւմտահայոց դիվիզիան 1917թ. դեկտեմբերի 22-ին անվանվեց Հայկական հատուկ հրաձգային դիվիզիա⁷⁵:

Անդրանիկի գլխավոր հոգսը շարունակեց մնալ դիվիզիայի կազմի համալրումը, որ իրականացվում էր թե արեւմտահայ քաղաքացիական եւ թե այլեւայլ զորամասերում ծառայողների միջոցով: 1918թ. հունվարի սկզբին նրա եւ իր շտաբի պետ գնդապետ Զինկեւիչի ստորագրությամբ նամակ ուղակվեց կովկասյան 7-րդ բանակային գնդի հրամանատարին խնդրանքով, որ այդ զորամասում ծառայող հայերի համար հնարավորություն ստեղծվի տեղավորվելու հայկական դիվիզիա⁷⁶:

Հունվարի 3-ին նա կոչով դիմեց հայությանը մտնելու նորակազմ դիվիզիա⁷⁷:

Հաջորդ օրը նա խնդրեց ռազմաճակատի հրամանատարությանը դիվիզիան ապահովելու հեռախոսային եւ հեռագրական կապի միջոցներով⁷⁸:

Հունվարի 16-ին ռազմաճակատի շտաբի պետ Լեբեդինսկին Անդրանիկին ներկայացրեց գեներալ-մայորի կոչման, նկատի ունենալով, որ դիվիզիայի ստորադաս հրամանատարները զինվորական աստիճաններ ունեին, իսկ Անդրանիկը՝ ոչ⁷⁹:

Նույն օրը ստացվեց Լեբեդինսկու հրամանը՝ Հայկական համահավաք ջոկատ (կորպուս) ստեծելու վերաբերյալ, որի մեջ մտցվում էին հայկական երեք առանձին հրաձգային բրիգադներ հրետանու եւ գնդացրային պարկի հետ միասին, Հայկական առանձին հեծյալ եւ հրաձգային գնդերը, ինչպես նաեւ Հայկական առանձին հեծյալ դիվիզիան՝ հաղորդակցության ուղիները պաշտպանելու եւ 3-րդ հրաձգային պարկը: Ստեղծվեց նաեւ այդ հավաքական ուժի վարչություն⁸⁰:

1917թ. դեկտեմբերի 25-ին Անդրանիկը հրապարակեց մի նոր կոչ. «Ռուսական զորքը պատերազմի երկարատեւ գրկանքներից եւ վերջին անցուղարձերից լքված թողնում է Հայաստանը եւ հեռանում է անպաշտպան թողնելով մեր հայրենիքի սահմանները եւ խաղաղ ազգաբնակչությանը, որի համար ստեղծված է օրհասական դրություն:

⁷⁴ «Հայաստան», 23.12.1917:

⁷⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 72:

⁷⁶ Ն.տ., ֆ. 121, ց. 1, գ. 40:

⁷⁷ «Հայաստան», 09.01.1918:

⁷⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 37:

⁷⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 1082, ց. 5, գ. 183:

⁸⁰ ЦГВИА РФ, ф. 521, оп. 5, л. 41:

Թշնամի բանակները եւ քրդական մի շարք ավագակալներ տեղյակ լինելով այս վիճակին, պատրաստվում են օգտվել հանգամանքից՝ դարձյալ արյունով ողողելու մեր հայրենիքը, սրի քաշելու խաղաղ հայ եւ ուրիշ ժողովուրդներին եւ Հայաստանը կցել Թուրքիային...

Հայրենիքը վտանգի մեջ է.

Վտանգի մեջ է մեր գոյությունը,

Արձագանք տվեք մեր կոչին»⁸¹:

Անդրանիկի եւ գնդապետ Դուրխանյանի ստորագրությամբ մի ուրիշ կոչով հայ երիտասարդությունը հրավիրվում էր դառնալու հրետանավոր եւ ծառայելու «միացյալ հայ զորաբաժնում, ուր մտնում են գլխավորապես քուրքահայերը»:

Անդրանիկի դիմումները հայությանը մասնակցելու զորահավաքին նաեւ կամավորներ գրանցելու նշանակություն ունեւ: «Ռուսաստանի ներքին քաղաքական իրադարձություններն այնպես դասավորվեցան, որ ռուս մեծ բանակի կռվի ճակատը փոխվեցավ... Ռուս բանակը հայ ժողովրդի օգնությամբ գրավեց Թուրքահայաստանի երեք մահանգները եւ այսօր զինադադարի ու վաղվան հավանական հաշտության բերումով՝ վտանգի ենթարկված են այդ մահանգները, որտեղ կը բնակի հարյուր հազար վերապրող ժողովուրդ...

Այս վերապրողները, որոնք կը կազմեն վաղվան Հայաստանի միակ տարրը, պետք է պաշտպանենք...

Հասած է ժամը վերջին մարտնչումի...»⁸²:

Անդրանիկը հուշագիր ուղարկեց դաշնակիցներին՝ օգնել կազմավորելու հայկական երկրապահ զորագնդեր:

Հայ-թուրքական սահմանի վիճակն Անդրանիկը տեսնում էր հետեւյալ կերպ: Հունվար ամսին թուրքական զորքերի առաջխաղացում չի նկատվել, որովհետեւ նրանք զուրկ էին գումակից: Դրա փոխարեն առկա էր քրդական ուժեղ շարժում, որը ձգվում էր Մակուի լեռներից մինչեւ Մասիսի փեշերն եւ դրանում կար 6000-7000 քուրդ: Քրդերը սննդամթերքով ապահովված էին՝ խլել էին ռուսական զորքերից, թալանել Երեւանի մահանգի հայկական գյուղերը: Բայց ճնառատ ձմեռը նրանց հնարավորություն չէր տալիս դիմելու եռանդուն գործողությունների եւ սպասում էին գարնան բացվելուն:

«Իմ ստացած տեղեկություններով, - ասում է Անդրանիկը, - Մշո դաշտում մեծաթիվ ուժեր են կուտակվել: Քրիից Մամախաթուն եւ մինչեւ Դերսիմ նույն-

⁸¹ Գեղամյանց Ե., նշվ. աշխ., էջ 20-22:

⁸² Մնացականյան Ա., Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 159-160:

պես նրանց թիվը փոքր չէ... Բաբերդի, Հյալքիդի, Իսպիրի շրջաններում կան մոտ 10.000 զինված թուրք, լազ եւ քուրդ»⁸³:

«Ռուսական բանակի 90 տոկոսը,- շեշտում է նա,- արդեն լքել հեռացել է...»:

Անդրանիկն անվերապահ դեմ էր ռուսական հեռացող զորքի վրա հարձակումներին՝ նրանց զինաթափելու նպատակով: Նա ասում էր, թե «Գյանջայի դեպքը (Շամխորը) ծնում է տխուր մտորումներ: Չի կարելի այդպես վարվել Ռուսաստանի զավակների հետ, ովքեր երեք տարի իրենց արյունն են տվել մեր լեռներում... Ռուս ժողովուրդը պետք է մնա եւ պաշտպանի Կովկասը եւ Կովկասի ժողովուրդներին: (Կովկասում) Պետք է պահպանվի համառուսական պետականությունը: Եվ եթե ռուս զինվորը հեռանա, թողնի (Կովկասը), կովկասյան ժողովուրդների ուժերը չի բավականացնի պաշտպանելու (պետականության) գաղափարը»:

Հատկանշական մի դեպք: 1918թ. մարտին Ա. Խատիսյանի հրավերով Անդրանիկը մասնակցում է անդրկովկասյան մի ժողովի, որը քննարկում էր Ալեքսանդրապոլով տուն վերադարձող ռուսական զորքերին զինաթափելու հարցը: Անդրանիկը զայրույթով մերժեց նման ստորությունը: Նա այդ որոշումն անվանեց «ծիծաղելի եւ աղետաբեր», որը նշանակում է «հայ եւ ռուս ժողովուրդներու միջև խրամատ մը բանալ»: «Դուք ո՞վ եք, կամ ինչո՞ւ համար ռուս զինուորը զինաթափ պիտի ընենք... Հոն է մեր դարավոր բշնամին,- ասում է նա ձեռքը պարզելով դեպի Թուրքիա,- գայն զինաթափ ընենք... Ռուսիա մեզի հսկայ ռազմամթերք, հարստութիւն, ուտելիք եւ հագնելիք թողուց, մենք պետք չունինք անոնց քանի մը հատ հրացաններուն, մենք անոնց բարեկամութեան պետք ունինք... Մեր միակ բարեկամը Ռուսիան է...»⁸⁴:

Նա գտնում էր, որ հայրենիքի պաշտպանության հանդեպ անտարբեր վերաբերմունքը դավաճանություն է, քանի որ «հայերն ունեն բոլոր հնարավորությունները ազատություն նվաճելու համար... պաշտպանության եւ ազատագրական շարժման խնդիրներում մենք չենք կարող գործել ոստիկանական նպատակներով: Այդ գործը պետք է հենված լինի գիտակից մոտեցման, ինքնապաշտպանության սրբազան բնագոյի վրա: Անդրանիկը գտնում էր, որ պայքարի պարտիզանական, հայդուկային եղանակները նոր պայմաններում պիտանի չեն: Դեռ ավելին, ասում է նա. «Եթե պահպանվի պարտիզանական ոգին, դրանից կտուժի գործը, հայ ժողովրդի ազատագրության առաքելությունը»: Նա անվերապահ մերժում էր հայության երկու հատվածների միմյանցից անջատ գործունեությունը, այն որ արեւմտահայ եւ արեւելահայ ազգային խորհուրդների միջև կապ ստեղծվում էր միայն այն ժամանակ, երբ հրամա-

յական էր դառնում «փրկելու գործը»: Հարցին, թե ինքն ինչ հարաբերությունների մեջ է արեւելահայ Ազգային խորհրդի հետ, Անդրանիկը պատասխանում է. «Ոչ մի: Դրանից առաջ գոյություն ուներ Ազգային բյուրո եւ... 15 ամիս առաջ նրա նիստերից մեկում ասացի, որ անհրաժեշտ է կազմակերպել ինքնապաշտպանություն, բայց ինձ չսեցին: Իսկ ներկայումս նրանք ինքները տեսան, թե ինչ վիճակի մեջ ընկավ հայ ժողովուրդը»: «Հայ ազգային խորհուրդը ֆինանսական որեւէ կապ չունի հայկական հավաքական ջոկատի հետ»⁸⁵:

Դրա փոխարեն, ասում էր Անդրանիկը, լազ հարաբերություններ են հաստատված Հայկական հավաքական ջոկատի եւ Հայկական կորպուսի միջև, բացառությամբ մի խնդրի՝ Նազարբեկյանն արգելում է, որ արեւելահայերը ծառային հավաքական ջոկատում⁸⁶:

Անդրանիկին չհաջողվեց լինելու Արեւմտյան Հայաստանում տեղակայված իր զորամասերում, բայց մշտապես զբաղված էր դրանց մատակարարման եւ համալրման խնդիրներով: Արդեն նշվել է, որ 1918թ. հունվարի 30-ին նա Խնուս է ուղարկում 500 մարտիկ եւ 1000 կոմպլեկտ հանդերձանք եւ հանձնարարում է Էրզրումում եղած հրացաններից 1000 հատ նույնպես ուղարկել Խնուս: Նախատեսվում էր եւս 500 զինվոր Խնուս ուղարկել Քանաքեռում տեղակայված Մմբատի զորամասից, որտեղ «ավելորդ զինվորներ» կային⁸⁷:

Բոլշեիկյան հեղափոխությունից եւ խաղաղության կոչերից հետո Արեւմտյան Հայաստանի հարցի լուծումն ավելի անորոշ դարձավ: Արեւմտահայ ազգային խորհուրդը առաջարկեց Անդրանիկին մշակել ինքնապաշտպանության ծրագիր: Նաև այդ խնդրին էր նվիրվում արեւմտահայ 2-րդ համաժողովը: «Ժողովում երեւան եկավ ներդաշնակ ամբողջություն՝ պաշտպանել Հայաստանն ամեն գնով,- հիշում է Վ. Թոթովենցը,- զոհել արյան վերջին կաթիլը, միությանը եւ համերաշխությանը գործել բոլոր կուսակցությունների եւ հատվածների հետ»:

Արեւմտահայ կամավորականները 1918թ. ապրիլի 4-ին գրում են Անդրանիկին. «Անցած 1,5 ամսվա ընթացքում մեր ներկայիս ղեկավարներից ստացել ենք միմյանց հակասող ուրբ հրաման եւ ներկայումս անորոշության հանդիման ենք... Համաձայն քո հրամանի մեր հայրենակիցներից ձեւավորել ենք մի հարյուրյակ ու գնդացրային թիւ եւ սպասում ենք քո հրահանգին»:

Ըստ էության ստեղծվել են արեւմտահայերի եւ արեւելահայերի բանակներ: Տեղի ղեկավարների հրամանով բոլոր արեւմտահայ մարտական խմբերին դրել են Բեկ Փիրումյանի հրամանատարության տակ, իսկ մեր տղաները

⁸³ «Մշակ», 25.01.1918:

⁸⁴ «Չոր. Անդրանիկի Կովկասեան...», էջ 187-188:

⁸⁵ «Մշակ», 26.01.1918:

⁸⁶ Ն.տ.:

⁸⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. I, գ. 40:

չեն ցանկանում ենթարկվել, քանի դեռ չի ստացվել քո պատասխանը եւ քո ապագա գործունեության ծրագիրը»⁸⁸ :

Նման հակասությունները պարզապես բզկտում էին հայկական ուժերը եւ րացասական որոշիչ դեր խաղացին ռազմաճակատում:

Այնուամենայնիվ 1918-ի սկզբներին հայերի վիճակն անմխիթարական չէր: Հայերը ռազմաճակատում ունեին 30-35 հազարանոց բանակ:

Թուրքերը թվական գերակշռություն չունեին եւ հետագայում էլ պատերազմի բախտը որոշեց ոչ թե թշնամու թվական գերակշռությունը, այլ այն, որ հայկական զորքերը չհասցրեցին լրիվ կազմավորվել, կռվելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք բերել: Կեղծում են նրանք, ովքեր գրում են. «Հայկական ուժերը հերոսաբար կռուեցան, բայց ցավով տեղի տուփն թուրքերու թուական առավելության առջեւ»⁸⁹ :

⁸⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 36

⁸⁹ Տառնապետեան Հ., ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհանուր ժողով (1890-1924), Արեւնք, 1988, էջ 124:

ՓԼՈՒԽ VII

ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. ՄԵՆՉԵՎ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

Անդրկովկասն անկախ հայտարարելը ազատություն տվեց թուրքերի ձեռքերին, որովհետեւ մինչ այդ երկրամասը համարվում է ռուսական, այն էլ բոլշևիկյան Ռուսաստանի տարածք, որից, չնայած վերջինումս տիրող քաոսին, թուրքերը պատմական փորձի մղումով վախենում էին, եւ ապա, երիտթուրքերը ձգտում էին Խորհրդային Ռուսաստանի հետ լեզու գտնել Անտանտի դեմ, քանի որ, թե մեկի եւ թե մյուսի դիսերիմ թշնամի համարվում էր Անտանտը:

Անդրկովկասի անկախացումն այդ խոչընդոտը վերացրեց: Եվ երբ խորհրդային կառավարությունը բողոքեց Կովկասում թուրքական վայրագությունների դեմ, թուրքերը պատասխանեցին. «Մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, քանի որ Անդրկովկասյան բանակն այն չի ճանաչում, որովհետեւ Կովկասն անկախ է»¹:

Սեյմի քաղաքականությունը երկրամասին եւ, մասնավորապես, հայությանը, կանգնեցրեց աղետի առաջ: Ս. Շահումյանը գրում է, որ այդ «քաղաքականությունը վաղուց էր պատրաստվում: Եվ իզուր չէր սեյմում Օնիաշվիլին հայտարարում, որ ռուսական կողմնորոշումը ռեակցիոն է եւ որ պետք է ուրիշ օրինատացիա փնտրել, իսկ Չիսեիձեն պաշտպանեց այն հայտարարությունը, թե լավ է ընկնել Թուրքիայի, քան՝ բոլշևիկների գիրկը»²:

Վրացական եւ Ադրբեջանական հակառուսական կողմնորոշմանը, չնայած վերապահումներով, բայց միացավ նաեւ ՀՀԴ, ինչը եւ դարձավ 1918թ. հայոց ողբերգության գլխավոր պատճառը: «Անդրկովկասում,- գրում է Ս. Շահումյանը,- կար հսկայական զինված ուժ, որ պատրաստ էր դուրս գալ թույլ Թուրքիայի դեմ: Միայն հայկական ուժերը բավական էին հաշիվ տեսնելու, սակայն դուր (դաշնակները) մենշևիկների եւ մուսավաթականների հետ կազմալուծեցիք զորքերի շարքերը, ոչ թե այն զորքերի, որոնք երեք տարվա պատերազմից հետո ծարավ էին հաշտության, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին մեռնել ու պահել իրենց երկիրը: Դուր այլասերեցիք այդ զորքերը,- ահա թե որն է ձեր մեղքը, ահա թե որն է ձեր ոճրագործությունը»³:

¹ Լենին Վ., ԵԼԺ, հ. 27, էջ 462:

² Շահումյան Մու., ԵԼԺ, հ. 3, էջ 275-276:

³ Ն.տ., էջ 229:

Գեո մինչև անկախության հռչակումը՝ ապրիլի 2-ին, Անդրկովկասի պատվիրակությունը մեկնեց Բաթումի բանակցությունները շարունակելու: Սակայն նախորդ օրը բուրբերը վերջնագիր էին ներկայացրել քաղաքը հանձնելու եւ Բաթումի վրա արդեն ծածանվում էր թուրքական դրոշակը: Պատվիրակությունը հարկադրված էր վերադառնալ Փոթի: Իսկ թուրքական զորքերն, առանց ժամանակ կորցնելու, սլանում էին դեպի Թիֆլիս: Բաթումի անկումից հետո վրացիներն իսպառ դադարեցրեցին դիմադրությունը: Նաեւ հայտնի դարձավ, որ Տրապիզոնի բանակցություններից հետո ընկած ժամանակահատվածում Չխենկելին մշտական կապի մեջ էր եղել թուրքական հրամանատարության հետ: ՀՀԴ սխալ չմտածված քայլերի հետեւանքով հայտնվել էր այնպիսի թեք հարթության վրա, որ կամա թե ակամա համաձայնվում էր մենչեիկների հետ՝ վախենալով լրիվ մեկուսացումից, այսինքն՝ բուրբերի դեմ միայնակ մնալուց: Մենչեիկները հասկանում էին ՀՀԴ այդ մտավախությունը եւ նրա հետ վարվում էին քմահաճ: Այդ օրերին է, որ Ժորդանիան հրապարակ հասնեց իր բարոյականությունից զուրկ հերթական արտահայտությունը. «Հայ ժողովուրդը սովոր է ջարդերի եւ կոտորածների, իսկ մենք պարտավոր ենք փրկել մեր ժողովրդին, որ դրան սովոր չէ»⁴:

Մեկ ամիս անց՝ մայիսի 6-ին Բաթում այցելեց սեյմի մի նոր պատվիրակություն նորից Չխենկելիի գլխավորությամբ: Հայերից պատվիրակության կազմում էին Հ. Քաջազնունին եւ Ա. Խատիսյանը, խորհրդականն էր Ս. Վրացյանը: Պատվիրակության կազմում էին նաեւ Նիկեյաձեն, Հաջինսկին, Ռասուլզադեն:

Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր Խալիլը: Նրա հետ էր նաեւ Վեհիբը, Թեֆիկ Սելիմը, Նասրեդինը:

Բանակցություններին պատվիրակություններ էին ուղարկել Դադստանի ու Հյուսիսային Կովկասի հանրապետությունները, իսկ Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը գրկել էին այդ իրավունքից:

Բեռլինը բանակցություններին մասնակցելու էր ուղարկել չորս հոգի ֆոն Լոտովի ղեկավարությամբ՝ հաշվի առնելով, որ նա «փր երկարամյա անձնական կապերի շնորհիվ ավելի մեծ հնարավորություններ ուներ թույլ չտալու, որ բուրբերը չափից ավելի պահանջներ դնեն»⁵:

Բայց Լոտովի առաքելության հիմնական նպատակն էր՝ թույլ չտալ, որ բուրբերը տիրանային Բաթու-Բաթում երկաթուղուն եւ նավթամուղին, հարկադրել նրանց մնալ Բրեստի դաշնագրի որոշած սահմաններում:

Խորհրդաժողովը սկսվեց մայիսի 11-ին: Հենց սկզբից ակնհայտ դարձավ

⁴ «Նոր աշխարհ», 1922թ., N3:

⁵ Wien HHSTA PAX 155 Konst-pel, 02.05.1918, N29485:

բուրբերի արհամարհական-ձեւական մոտեցումը բանակցություններին: Հովհ. Բեկվադյանը Բաթումից վերադառնալուց հետո Ազգային խորհրդի նիստում հայտարարեց, թե Խալիլը հայ պատվիրակների հետ խոսում էր հեզմանքով: Նա ուղղակի ասում էր. «Մենք հաղթող ենք, իսկ դուք պարտված եւ պետք է ընդունեք մեր պայմանները»⁶:

Խալիլի ողջույնի ճառից հետո Չխենկելին հայտարարեց, թե Անդրկովկասն անկախ պետություն է: Նրա պատվիրակությունը սկսված բանակցությունները համարում է Տրապիզոնում տեղի ունեցածի շարունակությունը եւ դրանց համար հիմք է Բրեստի դաշնագիրը: Խալիլը պատասխանեց. «Տրապիզոնի բանակցութիւններն յետոյ տեղի են ունեցած բախումներ եւ արիւնահեղութիւն Թիւրքիոյ եւ Անդրկովկասի զորքերուն միջեւ: Ուստի, մեր յայտարարութեանց բնոյթը եւ հիմքը արդեն փոխուած են, հետեւաբար, ես չեմ կրնար թոյլ տալ, որ մեր ներկայ բանակցութեանց իբրեւ միակ հիմք ծառայե Բրեստ-Լիթովսկի դաշնագիրը»⁷: Նա Չխենկելին հանձնեց հաշտության պայմանագրի նոր տարբերակ⁸:

Այն իրապես վերջնագիր էր, որով պահանջվում էր՝ Ալեքսանդրապոլի գավառը՝ 157.000, քաղաք Ալեքսանդրապոլը՝ 45.600, Ախալքալաքի գավառը՝ 82.600, Սուրմալուի գավառը՝ 32.600, Ախալցխայի գավառը՝ 28.200, Նախիջեւանի գավառը՝ 54.000, Երեւանի եւ Էջմիածնի գավառների 1/3-ը 74.000, Կարս եւ Բաթում քաղաքները՝ 133.300, ընդամենը 607620 հայ բնակչություն ունեցող տարածքներ: Եթե դրան ավելացվեին 200.000 գաղթականներին, ապա խոսքը գնում էր 800.000 հայի ճակատագրի մասին: Ընդ որում, Կովկասում հայերի ընդհանուր թիվը երկու միլիոն էր, որից 880.000-ը բնակվում էր Հայաստանում, 470.000՝ Ադրբեջանում եւ 310.000՝ Վրաստանում: Այսինքն՝ Հայաստանում կար մոտ 1.200.000 հայ, որից 607620 (807620-ը փախստականների հետ) անցնելու էր թուրքերին, իսկ Հայաստանին մնալու էր 10.000 կմ² տարածք 350.000 բնակիչով: Եթե Թուրքիայի պահանջած տարածքների հայերը վերաբնակվեին ՀՀ, ապա կստացվեր, որ վերջինիս յուրաքանչյուր կմ² բաժին կընկներ 160 մարդ, ինչն այն ժամանակներում չունեւ աշխարհի ամենախիտ բնակված երկիրն իսկ: Ակնհայտ էր, որ հայաստանաբնակ հայությանը սպասվում էր համատարած սով, կամ զանգվածային արտագաղթ: Թուրքերը պահանջում էին Ալեքսանդրապոլ-Կարս-Ջուլֆա երկաթուղին, ինչը Կ. Պոլսին հնարավորություն էր տալիս Կարս-Սուրմալու-Նախիջեւան-Չանգեզուր-Ղա-

⁶ Հայ ազգային խորհրդի արձանագրություններ, ք. 222:

⁷ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 49-50:

⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 2:

րաբաղ զծով միանալու ռուսական Ադրբեջանի եւ վերջինիս միջոցով՝ թուրքական աշխարհի հետ⁹։

Նաեւ նշենք, որ թուրքական պատվիրակությունն իր հետ բերել էր 200 թուրք պաշտոնատարներ գրաված տարածքներում օսմանյան իշխանության մարմիններ ձեւավորելու համար¹⁰։

Արեւմուտքի գործարար աշխարհը ուշադիր հետետում է Բաթումի բանակցություններին։ Այդ օրերին տեղ հասան նաեւ գերմանական առեւտրականների մի խումբ Կովկասի հետ տնտեսական կապեր հաստատելու, մարզանեց, բամբակ, պղինձ, մետաքս, կաշի եւ այլն արտահանելու իրավունք ստանալու համար։

Թ. Նազարբեկյանը 1918թ. մայիսի 24-ին հայտնեց, որ «թուրքերը, չնայած զինադադարին, առաջանում էին, շարունակում ռազմական գործողությունները», «թուրքերը իրենց համարում են պատերազմի մեջ հայերի հետ»։ Անդրկովկասի կառավարության նոտային թուրքերը չեն պատասխանում։ Կապի ուղիղ զծով «սեյմի վրացական խմբակցությունը գաղտնի բանակցություններ է տանում Բաթումում գտնվող վրացական պատվիրակության հետ հայերին հանձնելու թուրքերի հոշոտմանը եւ միաժամանակ Թուրքիային ու, գլխավորապես, Գերմանիային հնարավորություն տալու Բաթու հասնելու, որպեսզի ոչնչացնեն այնտեղի բուլշեւիկներին եւ տիրանային բարձրորակ նավերին»։

Խալիլը 1918թ. մայիսի 14-ին Չխենկելուն հայտնեց Վեհիբի նամակի բովանդակությունը. «Դիմադրել Պարսկաստանում անգլիացիների գործողություններին։ Ուստի ինքը, առանց հետագա ձգձգումների, հրաման է տալիս զորքերի առաջանալու մասին Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով», որի մասին «հայտնված է հայկական պատվիրակներին։ Խնդրում են տեղյակ պահել անդրկովկասյան պատվիրակությանը, որ զորքերի շարժումը նախատեսված է վաղը, մայիսի 15-ի առավոտյան»¹¹։

Վերջնագիրը սեյմի պատվիրակությանը հասավ տրված ժամկետի սահմանագծին, այսինքն՝ նույնպես մայիսի 15-ի առավոտյան։ Երկու ժամ անց թուրքերը սկսեցին հարձակումը։ Խատիսյանի բողոքին Լոռու վր պատասխանեց, թե ինքը դեմ է այդ հարձակմանը եւ ընդդիմացել էր դրան, միաժամանակ խորհուրդ տվեց թուրքերին թույլ տալ օգտվելու երկաթուղուց։

Մայիսի 18-ին Անդրկովկասի կառավարությունը հայտարարեց, որ հրաման է տրված «ամեն ինչ անել հեշտացնելու թուրքական զորքերի փոխադրումը Պարսկաստան Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով»։ Այդ ժամանակից,

⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 19։

¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 2։

¹¹ Ն.տ., ֆ. 200, ց.1, գ. 22։

գրում է Արքոմեդը, Արեւելյան Հայաստանը դարձավ հրապարակ «ամեն տեսակի խժոժությունների, բռնությունների, զանգվածային կոտորածների, քաղաքներից ու գյուղերից բնակչության փախցնելու։ Պատերազմական հրդեհը, որը մայիս եւ հունիս ամիսներին ընդգրկել էր Ղարաբիլիսայի, Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղամարուլի, Նախիջեւանի շրջանները եւ Երեւանի նահանգի մյուս մասերը, ներկայացնում էր միջնադարյան բարբարոսության ու վայրենության պատմությունը, որի մասնակիցներն էին 20-րդ դարի ժամանակակիցները»։

Վկայում է Ավալովը. «Ռեւսային ճանապարհը դեպի Պարսկաստան ընկած էր հայկական նահանգներով, թուրքերը զայթակղվեցին այստեղ եւս շարունակելու ոչնչացման այն քաղաքականությունը, որը նրանց կողմից կիրառվել էր Թուրքիայի հայության հանդեպ»։

Մայիսի 20-ին Շահումյանը Լենինին է ուղարկում Կարճիկյանի հեռագիրը՝ ստացված Թիֆլիսից. «Մայիսի 13-ին Թուրքիան Բաթումում պահանջ է ներկայացրել թույլ տալ թուրքական զորքերին Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով անցնելու Պարսկաստան, այդ բանը պատճառաբանելով, թե անգլիացիները նեղում են Մոսուլի կողմից, թե թուրքերին անհրաժեշտ է ամենակարճ ժամկետում գրավել Պարսկաստանը։ Թուրքիան իր պահանջը պնդում է ուժով։ 15-ի առավոտյան սկսել են ռմբակոծել Ալեքսանդրապոլը։ Հանկարծակիի եկած մեր զորքերը չեն կարողանում կանգնեցնել հարձակումը եւ... հանձնում են Ալեքսանդրապոլը։ 17-ին թուրքերը պահանջեցին ապահովել իրենց զորքերի անցումը դեպի Ջուլֆա, խոստանալով ձեռք չտալ բնակչությանը, հակառակ դեպքում սպառնում էին ուժով ճեղքել ու անցնել։ Նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլի նահանգի զորքերն ամբողջովին կազմալուծված էին եւ որ դիմադրության դեպքում Սուրմալուի, Էջմիածնի գավառների ամբողջ բնակչությունը սարսափելի աղետների կենթարկվի, մենք հարկադրված եղանք համաձայնել թուրքերի պահանջներին։ Ալեքսանդրապոլի ամբողջ բնակչությունը հեռացել եւ կուտակվել է Փամբակի, Լոռու շրջանում, նույնը նաեւ Սուրմալուի գավառի բնակչությունը։ Այսօր տեղեկություն ենք ստացել, թե Ախալքալաքի բնակչությունը շարժվել է Ծալկայի կողմը։ Բաթումում գտնվող պատվիրակությունը բողոք է ներկայացրել վերջնագրի առթիվ...»¹²։

Երկու օր անց Շահումյանը հաստատելով այս տեղեկությունը, գրում է Ստալինին, որ «Ելիզավետպոլի բեգերն էլ մեր դեմ նոր արշավանք են սկսել։ Հաջկարույի շրջանում երեկ տեղի ունեցան հեծելազորի ընդհարումներ Բաքվի մատույցները պահպանող մեր ջոկատների հետ։ Շտապ հարկավոր է օգնություն մարդկանցով եւ զենքով»¹³։

¹² ЦИАСА, ф. s, оп. 1, д. 38։

¹³ “Красный архив”, 1938, N4-5։

Նույն օրը նա գրեց Ժողկոմխորհին. «Արդեն հաղորդել եմ, որ թուրքերը գրավել են Ալեքսանդրապոլը եւ գորքեր են փոխադրում Ջուլֆա: Այդ ունի երկու նպատակ՝ Հյուսիսային Պարսկաստանի գրավում եւ Բաքվի վրա շարժվել... Նրանք ուզում են Հյուսիսային Պարսկաստանում կազմակերպել 200.000 մարդուց բաղկացած մի բանակ: Տեղական քրդերը եւ շախսեվանները մոտ 40.000 սվին արդեն ունեն... Հյուսիսային Պարսկաստանը խիստ թուրքասեր է... Ջուլֆայից մինչեւ Բաքու երկաթուղի է կառուցվում: Այժմ ամբողջ հողային պատանոն արդեն պատրաստ է, պատրաստ է Քոչի վրայի կամուրջը... Այդ ամենը մեծ հարմարություններ են հակառակորդի համար: Դրա հետ միասին գծի երկու կողմում էլ մուսուլմանական հոծ բնակչություն կա...

Միաժամանակ Թիֆլիսից հաղորդում հաղորդման վրա ենք ստանում, որ Բաթումում թուրքերի ու գերմանացիների գլխավոր պահանջը գորքերի փոխադրումն է Բաքու: Թիֆլիսում ուժեղանում է գերմանո-թուրքական կողմնորոշումը... Նույնիսկ անգլիացիների ամենահավատարիմ բարեկամները (եւյերը) երես են դարձնում նրանցից... Գեգեչկորիի կառավարությունը չափազանց «ձախ» դուրս եկավ եւ նրան փոխարինել է Չխենկելին... Դաշնակցականները Թիֆլիսից հաղորդում են ստացել, թե իբր Բաթումում վրացիներին ինքնավարություն են խոստանում՝ Վիլիելմի հովանավորությամբ: Մնացած ամբողջ Անդրկովկասը պետք է ներկայացնի ինքնավար Ադրբեջանը...

Մենք պատրաստվում ենք ամենամոտ ժամանակները գնալ Ելիզավետպոլի վրա, որովհետեւ ըստ ստացված տեղեկատվության այնտեղից հարձակում է պատրաստվում Բաքվի վրա: Եթե դրանք միայն Ելիզավետպոլի ուժերը լինեն, հեշտ կլինի նրանց ջարդել: ...Եթե նրանց հետեւից գնալու էլ լինեն թուրքական զորքերը... մեզ պետք է շտապել Ելիզավետպոլ, իսկ հետո էլ ավելի այն կողմ հայերի ապստամբություն բարձրացնելու համար: Այդ կազդի նաեւ վրացական գյուղացիության վրա»¹⁴:

Ականատեսներից մեկը պատմել է, որ մայիսի 30-ին «Թիֆլիսի կայսրանում ծածանվում է գերմանական դրոշը եւ ստեղծված է գերմանական պարետություն: Պալատի վրայի կարմիր դրոշը հանված է: Կան գերմանական սպաներ: Խոսում են հայկական զնդերը զինաթափելու մասին: Հիմնարկներում մտցվում է պարտադիր վրացերեն, ռուս սպաները, չինովիկները, ծառայողները հեռանում են քաղաքից: Ելիզավետպոլում սպասում են Էմվեր փաշայի եղբոր գալուն: Կայսրանը զարդարել են, մուսուլմաններն ու մտավորականները խոսակցությունների ժամանակ շնորհավորում են միմյանց այն բանի համար, որ առաջիկայում հռչակվելու է Ադրբեջանի անկախությունը, ժամանելու են թուրքական զորքեր...»¹⁵:

¹⁴ Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 3, էջ 199-203:

¹⁵ ԱԴԱՕՐ, փ. 130, օր. 2, ժ. 580:

Անդրկովկասից ստացված այս տեղեկատվությունները, իհարկե, ասուջացրեցին բոլշևիկների անհանգստությունը: Հարցը քննարկվեց Ժողկոմխորհում եւ հանձնարարվեց Ստալինին այդ քննարկման արդյունքների մասին նամակով տեղյակ պահել Ս. Շահումյանին:

1918թ. մայիսի 12-ին Ստալինը նամակ պատրաստեց Շահումյանին ուղարկելու համար, թե Մոսկվան պաշտոնական վերջնագրով Թուրքիային հայտնել է, որ «1) ոչ մի անդրկովկասյան կառավարություն չկա, այլ կան մի բուռ ինքնակոչ մարդիկ, 2) Ռուսաստանը չի ճանաչում այսպես կոչված անդրկովկասյան կառավարության հետ Թուրքիայի կնքած պայմանագրերը: Դու, իհարկե, հասկանում ես, որ դրանից Թուրքիայի դեմ պատերազմի հոտ է գալիս, Թուրքիա, որ տվյալ պահին խախտում է Բրեստի դաշնագիրը»¹⁶: Բայց Ստալինը չի հասցնում այս նամակն ուղարկել, երբ «դրությունը այնպես փոխվեց, որ նամակի ուղիղ կեսը պետք է դեմ նետեր: Նախ, գերմանացիները բացահայտ միջամտում են Անդրկովկասի գործերին, որովհետեւ ա) Թիֆլիսի կառավարությունը դիմել է ոչ միայն թուրքերին, այլև գերմանացիներին, բ) գերմանացիները Միրբախի միջոցով մեզ հայտարարություն են ներկայացրել, թե Թիֆլիսի կառավարությունը դիմել է իրեն եւ ինքն առաջարկում է միջնորդ լինել Ժողկոմխորհի եւ Թիֆլիսի միջեւ. դա նշանակում է, բացատրում է Ստալինը, որ նա կպաշտպանի Չխենկելուն, ձեւացնելով, թե նպաստում է ինքնորոշմանը: Երկրորդ, գերմանացիները պահանջում են (հեռացնել) մեր նավատորմը Մեւ ծովի ափերից: Դա նշանակում է, որ մենք չենք կարող համատեղ գործել Փոթի-Սուխումիի դեմ եւ այլն: Հակառակ դեպքում սպառնում են շարժվել Ռոստովից այս կողմ»¹⁷:

Այնուհետեւ նա գրում է, որ վտանգը Գերմանիայի կողմից մնում է եւ Շահումյանին խորհուրդ է տալիս «խոսք բացել Թիֆլիսի կառավարության հետ համաձայնության գալու վերաբերյալ (չկանգնեցնելով հարձակումը Թիֆլիսի ուղղությամբ), բանակցել Թիֆլիսի խանության սահմանների վերաբերյալ (կատակ չեմ անում) ընդունելով հետեւյալ մոդուսը՝ ձեզ՝ Անդրկովկասի արեւմուտքը, մեզ՝ արեւելքը, ձեզ՝ Թիֆլիսը, մեզ՝ Բաքուն, ընդսմին խոստանալ, որ նավթ կտանք ձեռնտու գնով, իհարկե, համարժեքով»¹⁸: Այս նամակից ակնհայտ է, որ Մոսկվան 1918թ. կեսերին հույս չունեւ ամբողջ Անդրկովկասին տիրանալու եւ պատրաստ էր կորցնելու Վրաստանը Բաքուն պահելու համար:

¹⁶ «Ստ. Շահումյան, կյանքի և գործունեության տարեգրություն», էջ 527:

¹⁷ Ն.տ., էջ 529-530:

¹⁸ Ն.տ., էջ 530-531:

Մայիսի 15-ին, երբ թուրքերն արդեն Ալեքսպոլում էին Հայ ազգային խորհուրդը ընդարկեց Խատիսյանի եւ Քաջազնունու նամակը, թե գերմանացիները պահանջում են թույլ տալ թուրքական զորքերին անցնել Ջուլֆա, հայկական զորքերն ու բնակչությանը հետ քաշել երկաթգծից 25 կմ, այսինքն՝ տեղահանել 80.000 մարդ:

Քննարկումն անցավ ցածր մակարդակով եւ հանգեց այն բանին, որ ամեն ինչ պետք է արվի գերմանացիների հովանավորությունը վաստակելու համար: Ա. Ահարոնյանն այս խնդրում ավելի իրատես ու վճռական էր: Նա ասաց. «Ոչ ոք չի կասկածում, որ թուրքերն ուզում են գրավել Կովկասը, իսկ գերմանացիները բավական ուժ չունեն նրանց խանգարելու եւ միայն խորհուրդ են տալիս՝ թուրքերի պայմաններն ընդունել: Պետք է նրանց ասել՝ քանի որ դուք չեք գալիս, իսկ թուրքերի գալը մեր ժողովուրդը չի կարող հանդուրժել, ուստի ստիպված ենք պատվով մեռնել»:

Որոշվեց դիմել ամենատարբեր լուծումների՝ պատվիրակությանը (Քաջազնունի, Խատիսյան) հնարավորություն տալ բանակցելու ոչ միայն Բաքուում, այլև Կ. Պոլսում, Սոֆիայում եւ Բեռլինում, ընդունել ավստրո-հունգարական կողմնորոշում, երկաթուղին հանձնել Գերմանիայի տնօրինությանը, հայաբնակ շրջանները (Արեւելյան Հայաստանը) անջատել Անդրկովկասից եւ դնել Գերմանիայի գրավման տակ:

Աշխարհատարածքում եռանդուն քաղաքականություն վարող Գերմանիայի դիրքորոշումը մնում էր հստակ՝ Թուրքիան պետք է անվերապահ կատարի Բրեստի պայմանագիրը, ինչին Կ. Պոլիսը հակադրում էր Հայկական (Երեսանի) նահանգի վերացման պահանջը: Բեռլինը դեմ էր Սուրմալում թուրքերին տալուն, իսկ հայկական երկաթուղով թուրքական զորքերի տեղափոխությունները պետք է կատարվեին գերմանական զորքերի հսկողության ներքո: Գերմանացիները գտնում էին, որ Հայաստանին պետք է թողնվեն Ալաշկերտը, Ուրմիան, Վանը:

Լոսովը դիմեց կայզերին, որպեսզի Թիֆլիսում Գերմանիայի դեսպան Շուլցենբերգի տրամադրության տակ զորքեր դրվեն «հայերի սպասվող կոտորածը կանխելու»: Գերմանական ներկայացուցիչները Ա. Ահարոնյանին ասել էին. «Թուրքերն ուզում են կոտորել ձեզ, իսկ իրենք անկեղծորեն չեն ցանկանում: Բայց զենք չունենք կանխելու»:

Հավանաբար թուրքական անհագության առաջն առնելու անզորությունն էր պատճառը, որ Լոսովը մայիսի 25-ին հայտարարեց, թե լքում է խորհրդաժողովը, որովհետեւ սպասվում է Անդրկովկասի մասնատում:

Լոսովը նաեւ հեռագրում է Բեռլին. «Թուրքական քաղաքականության նպատակն է... տիրանալ հայկական շրջաններին ու բնաջնջել հայերին: Հակառակը պնդող Թալեաթի եւ Էնվերի խոսքերն անարժեք են: Պոլսում իշխում է ծայրահեղ հակահայկական թշնամական ուղղությունը: Հայ ժողովուրդն այլևս ապրելու տեղ չունի, նա փախչում է արեւելք, որտեղ կոտորածը դառնում է անխուսափելի: Եթե պետք է արգելվի հայերի ոչնչացումը, անհրաժեշտ է անհապաղ ամենաազդու ճնշում Թուրքիայի վրա»¹⁹:

Մի փաստաթղթում այդ մասին կարդում ենք. «...Օսմանյան կառավարությունը ոչ միայն գրավելու է հայկական հողերը, այլև ոչնչացնելու է հայ ժողովրդին: Ստացված է Գերմանիայի դաժան սանկցիան: Գերմանական ներկայացուցիչները ֆոն Լոսովի հետ գնում են Գերմանիա, փոխել տալու այդ որոշումը»²⁰:

Պարզվում է, որ նույն մայիսի 25-ին Լոսովը Քաջազնունուն եւ Խատիսյանին առաջարկել էր՝ պատվիրակություն ուղարկել Բեռլին, Կ. Պոլիս չմեկնել եւ թուրքերի հետ անջատ պայմանագիր չկնքել, թուրքական հարձակմանը չդիմադրել, Հայաստանը հռչակել անկախ, քանի որ Խալիլը մի անգամ եւս խոստացել էր հարգել Հայաստանի անկախությունը եւ նրա տարածքն ընդլայնել Կովկասի հաշվին, պայմանով, որ ՀՀ կառավարությունը վերացնի «ավազակախմբերը» եւ խզի կապերը բուլղարիկյան կառավարության հետ²¹:

Մայիսի 28-ին Խ. Կարճիկյանը ՀՀԴ խմբակցության կողմից Ազգային խորհրդին առաջարկում է մերժել թուրքական վերջնագրի պահանջները: Ժողովրդական կուսակցության անունից Մ. Բաբաջանյանը հակառակ առաջարկն է մտցնում, իսկ Ս. Հարությունյանը հրապարակում է այդ խմբակցության կազմած բանաձեւի նախագիծը, որը ներկայացնելով հայերի եւ Հայաստանի անելանելի վիճակը առաջարկում էր անջատ զինադադար կնքել, ինչը կփրկեր ժողովրդին եւ հնարավորություն կտար պատերազմի ավարտից հետո միջազգային ատյանների միջոցով համապատասխան լուծում տալ Հայկական հարցին: «Վերջինիս ընդունումը կարող է ապահովել մեզ հնարավորություն ունենալու ազգային մի փոքր տարածք, որը կդառնա ապագա ազգային կյանքի սաղմը»²²: Ժողովրդականներն առաջարկում էին համաձայնվել, որ միայն Էջմիածինը մնա Հայաստանի անվիճելի տարածք, մյուսները ժամանակավորապես անցնեն Թուրքիային որպես վիճելի

¹⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120:

²⁰ Ն.տ.:

²¹ Հայ ազգային խորհրդի նիստերի արձանագրություններ, ք. 231:

²² Ն.տ., ք. 233-234:

տարածքներ եւ դրանք հետ ստանալու համար պատվիրակություն ուղարկել Կ. Պոլիս: Ազգային խորհուրդը միանգամայն իրավացիորեն մերժեց ժողովրդավարների նախագիծը²³:

Երբ ընթերցում ես արխիվային այս նյութերը պարզապես ապշում ես, թե այն տարիների հայ քաղաքական գործիչներն ինչպիսի թեթեւ, անլուրջ վերաբերմունք ունեին հայրենիքի, նրա տարածքների համդեպ: Նրանց համար հայրենիքը, տարածքային խնդիրները դրված էին նույն հարթության վրա, ինչ, օրինակ, վերաբերմունքն այս կամ այն կուսակցությանը, քաղաքական իրադարձությանը: Ըստ Խատիսյանի հայ ժողովրդի ծանր վիճակի պատճառներն էին՝ «Բաքվի դեպքերը», հողային բարենորոգումներին անժամանակ ձեռնամուխ լինելը, «Սուրմալուի եւ Երեւանի հակաթուրքական դեպքերը»²⁴: Պետք էր քաղաքական լրջությունից իսպառ զուրկ լինել պնդելու, թե հայոց դժբախտության պատճառներն էին Բաքվի պաշտպանությանը հայերի մասնակցությունը եւ Սարդարապատի ճակատամարտը: Սեժ քաղաքականությունում փողոցային շարժու նման գործողին վստահվեց թուրքերի հետ բանակցություններ վարելը:

Հայաստանի անկախության օրը ստեղծվեց Բաթումի բանակցությունների հայկական պատվիրակություն՝ Ա. Խատիսյան (նախագահ), Հ. Քաջազունի եւ Մ. Բաբաջանյան: Պատվիրակությունը Բաթումում մնաց մինչ հունիսի 5-ը եւ դարձավ անկախ Հայաստանի միջազգային առաջին, բայց դժբախտ, պայմանագրային ակտի ստորագրողը:

Մայիսի 30-ին տեղի ունեցավ բանակցությունների առաջին նիստը: Վեհիբն անձամբ գծեց Հայաստանի սահմանները, որոնք ամփոփում էին 9000 կմ² տարածք:

Բայց Հայաստանի տարածքների թալանով էին տարված ոչ միայն թուրքերը, այլև վրացիներն ու ադրբեջանցիները: Վրաստանը պահանջում էր Լոռին մինչև Վանաձոր, իսկ Ադրբեջանը՝ Ղարաբաղից մինչև Երեւան: «Անվիճելի» Հայաստանի տարածքներ ընդունվում էին միայն Նոր Բայազետի գավառն ու Ալեքսանդրապոլի լեռնային շրջանները: Վեհիբը հայկական պատվիրակությանն ասաց. «Հայկական հողամասն այսօր փոքր է, որովհետեւ ձեր մոտ շատ մահմեդական տարրեր կապրին. տվեք զանոնք մեզի եւ ձեր տեղը կմեծանա: Հայկական հարցը միջազգային է, կըսեք, եւ պիտի նկատի առնուի հաշտության ընդհանուր խորհրդաժողովին մեջ: Այդ բանը շատ լավ գիտենք, բայց հենց ատոր համար ալ մենք առաջինը ըլլալով յանձն կառնինք լուծելու

²³ Հայ ազգային խորհրդի նիստերի արձանագրություններ, ք236

²⁴ Ն.ս., ք. 234:

գայն եւ կընդունինք Հայաստանի անկախ գոյութիւնը: Գալով քննամութեան զգացումներուն հողամասի փոքրութեան պատճառով, պետք է ըսեմ, որ բոլոր պետութիւններն ալ քիչով սկսեք են եւ աստիճանաբար են աճեր: Կարեւորն այն է, որ մենք բարեկամներ դառնանք եւ փոխադարձաբար պաշտպանենք զիրար: Մեզ պետք է հայերու նպաստավոր պրոպագանդը արտասահմանի մեջ»: Վեհիբը նույնիսկ առաջարկեց հայոց դրոշակի իր տարբերակը՝ խաչ սպիտակի վրա:

Նա հայերին համոզում էր իրենց հետ ռազմական դաշինք կնքել, տրամադրել 10.000 զինվոր եւ միասին արշավել Բաղդադի վրա: Հայերը մերժեցին այդ առաջարկությունը:

Ա. Խատիսյանն իրավացի է, երբ գրում էր, թե այն ինչ կատարվեց Բաթումում թուրքերին գոհացրեց նաեւ այն պատճառով, որ Հայկական հարցը լուծվում էր այնպես, որ դյուրանալու էր «ասպագա միջազգային հաշտության խորհրդաժողովի մեջ ունենալիք իրենց գործը»:

«Խաղաղության եւ բարեկամության» անունը կրող թուրքական ծրագիրը հափշտակությունների համապարփակ փաստաթուղթ էր եւ պարունակում էր «քաղաքական, տնտեսական, իրավական եւ ռազմական տեսակետներ»:

Խալիլը նաեւ մերժեց Չիսենկելու առաջարկը՝ քաղաքական խնդիրները քննարկելու բոլոր պատվիրակությունների նախագահների մասնակցությամբ եւ ասաց, թե այն «հարցերը, որոնք վերաբերում են երկու երկրներին», կքննարկեն երկու շահագրգիռ կողմերը: Ի դեպ, բացառություն արվեց միայն Լոռույին, որը պահանջեց իր մասնակցությունը բոլոր քննարկումներին, որպեսզի հնարավորություն ունենար պաշտպանելու Գերմանիայի շահերը²⁵:

Թուրքիայի պահանջները զարմացրեցին անգամ նրա դաշնակիցներին: Հինդենբուրգը գրեց. «Թուրքերը օսմանյան Հայաստանի սահմաններից նետվեցին Անդրկովկաս: Համիլամիզմի ոգեշնչող ուժը եւ զինվորականության կիրքը Կ. Պոլսում կխաղաղվեն միայն այն ժամանակ, երբ նաեւ Բաթում հանձնվի Թուրքիային...», որտեղից կբացվեին դեպի Անդրկասպիա շարժվելու հեռանկարները²⁶: Պոմյանկովսկին թուրքական հավակնությունների արժատական քնույթը բացատրում էր նրանով, որ Անդրկովկասի մահմեդականները «վախենալով բոլշեիկների վտանգից, ձգտում են սերտորեն կապվել թուրքական հողին»²⁷: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆը գրեց. «Թուրքերի հայացքը սեւեռվել է Բաքվի եւ Վլադիկավկազի վրա», նրանք ձգտում են տիրանալ ամբողջ Կովկասին:

²⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 25:

²⁶ "Воспоминания Гинденбурга", с. 103-104:

²⁷ Pomiankowski J., Der Zusammenbruch des Ottomanischen Reiches, Vienna, 1969, s. 387:

Լոսովը Բեռլինից հանձնարարություն ուներ՝ երկրամասում, որտեղ հայ համախումբ բնակչություն կար, ապահովել տեղական ինքնավարություն, այսինքն՝ ինչ-որ ներքին ինքնուրույնություն կրոնական եւ մշակութային խնդիրներում:

Գերմանիան քայլեր կատարեց զսպելու Կ. Պոլսի ախորժակը, որովհետեւ, ինչպես արդեն նշվեց, ինքը նույնպես անտարբեր չէր Բաքվի նավթի, դեպի Պարսկաստան, Միջին Ասիա, Աֆղանստան, Հնդկաստան տանող մայրուղիների հանդեպ: Գերմանական գլխավոր շտաբի կազմած քարտեզ-ուղեցույցի վրա ընդգծված էին, որ Օդեսա-Բաթում ծովային եւ Բաթում-Բաքու, Բաթում-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղիներն ամենակարճ ճանապարհներն են դեպի Պարսկաստան եւ Հնդկաստան:

Էնվերը հասկանում էր Բեռլինի դիտավորությունները եւ տեղի չէր տալիս:

Լոսովը Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանին հեռագրում է. «Ամեն սահման անցնող թուրքական պահանջները՝ անջատելու զուտ հայկական գավառները, ինչպիսիք են Ախալքալաքը, Ալեքսանդրապոլը եւ Երեւանի նահանգի մասերը, խախտում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը աղաղակող կերպով եւ ձգտում են ոչնչացնել հայերին Անդրկովկասում: Այսօր երեկոյան թուրքերը վերջնագիր ներկայացրեցին թույլ տալու, որ իրենց զորքերն Ալեքսանդրապոլի վրայով անցնեն Ջուլֆա...»²⁸:

Դեսպանը գտնում էր, որ Թուրքիան պարտավոր էր ճանաչել Բրեստի պայմանագիրը մի բացառությամբ՝ ստանալ Ախալքալաքի գավառի թուրքաբնակ մասը եւ հետ տալ Կադզվանը, որ հայաբնակ էր: Խալիլն ու Վեհիբը համաձայնվեցին, բայց Էնվերը պահանջեց անմիջապես վերջնագիր ներկայացնել: Գերմանական դեսպանը Բ. Դռանը խորհուրդ էր տալիս հրաժարվել վերջնագրից, որը չէր կարող արժանանալ Թուրքիայի դաշնակիցների հավանությանը եւ պատճառ էր դառնալու Կովկասում նոր պատերազմի:

Նույն օրերին Գերմանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալը հայտնեց Հայոց ազգային խորհրդի ներկայացուցչին. «Թուրքերը ուզում են ընդարձակել Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սահմանները: Դա առաջ է բերելու բախում նրանց եւ հայերի միջև: Այս հարցի շուրջ գերմանական կառավարությունը բանակցություններ է վարելու թուրքական կառավարության հետ: Անհրաժեշտ է, որ դուք գնաք Կովկաս եւ հանդիպեք զորավար ֆոն Կրեսի եւ զորավար ֆոն Լոսովի հետ»: Նույն առիթով Հինդենբուրգը հունիսի 9-ին հեռագրեց Էնվերին. «...Խնդրում եմ Ձերդ գերազանցությանը հրամայել, որպեսզի թուրքական բոլոր զորքերը դուրս գան Կովկասի սահմաններից, բացի Կարսից, Արտահանից եւ Բաթումից»:

Բայց Բրեստի դաշնագրի խախտման մասին գերմանական կառավարության հորդորները Կ. Պոլսում հաշվի չէին առնվում եւ գերմանացիները դրա հետ հաշտվում էին, նախ՝ այն պատճառով, որ իրենք առաջինը խախտեցին այդ պայմանագիրը եւ, երկրորդ՝ Բեռլինը հույս ուներ, որ թուրքական առաջխաղացումն Անդրկովկասում կհանգեցնի նրանց բախմանը հարավից դեպի Կովկաս շարժվող անգլիացիների հետ:

Այնուամենայնիվ Բաթումում հայերը համառեցին, որին Վեհիբն ու Խալիլը պատասխանեցին, թե իրենք երիտթուրքական կոմիտեի ամենաչափավոր թեւն են ներկայացնում. «Թալեաթ եւ Էնվեր փաշաները կուզեն իսպառ ոչնչացնել հայկական հողը: Օգնեցեք մեզ մեր դիրքն ուժեղացնել, ըրեք բոլոր զինվորները, հնարավորութիւն ստեղծեք մեզ երթալու Ջուլֆա-Ղարաքիլիսա-Եվլախ ճանապարհով: Երբ պատերազմը վերջանայ, մենք ձեզ օգնութեան կը հասնինք եւ կվերադարձնենք այն, ինչ որ այսօր ձեզմէ կառնենք»²⁹:

Քաջագունին եւ Խատիսյանը համաձայնվում են, որ գերմանացիների վերահսկողությամբ թուրքական զորքերը Հայաստանի տարածքով անցնեն Ջուլֆա: Սակայն բանակցությունները դեռ չէին ավարտվել, երբ թուրքերը հարձակման անցան Ալեքսանդրապոլի վրա:

Լոսովն առաջարկեց, որ ինքը միջնորդի դեր ստանձնի բանակցություններում: Անդրկովկասի պատվիրակությունը համաձայնվեց, իսկ թուրքերը Ալեքսպոլով չբավարարվեցին: Նազարբեկյանը մայիսի 20-ին հեռագրեց. «Հակառակ զինադադարին՝ թուրքերը շարունակում են առաջ շարժվել Ղարաքիլիսայի ուղղությամբ եւ դուրս են բշել մեր պահակազորքը Արտիբետ գյուղից: Նրանք առաջ են շարժվում Լոռիի ուղղությամբ Ղարաքիլիսայի վրա եւ հավանաբար այնտեղից անցնելու են Թիֆլիս: Դրանից եզրակացնում եմ, որ Ալեքսանդրապոլի երկաթուղու գրավումը պատրվակ էր միայն»:

Բաքու է մեկնում Ազգային խորհրդի պատվիրակությունը՝ Հ. Օհանջանյան եւ Ա. Ջորաբյան՝ հույս ունենալով գերմանական միջնորդությամբ խույս տալու աղետից: Լոսովը հայերի խնդրանքը փոխանցեց Կ. Պոլսի իր դեսպանին: Նա պնդում էր չհավատալ Թալեաթին եւ Էնվերին, նաեւ շեշտում, որ հայերը կանցնեն պարտիզանական կռիվների եւ կփչացնեն երկաթուղին, ինչը կխափանի գերմանական ծրագրերի իրականացումը:

Մայիսի 22-ին Բաթումի այցելեց նաեւ Ջեմալը, որ Անդրկովկասի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, թե աղբրեջանցիները «թիրբերու սիրելի եղբայրներն են եւ թե թիրբերը եկած են «ազատագրելու»

²⁸ Из истории иностранной интервенции в Армении в 1918г., Е., 1970, с. 16:

²⁹ Տես Խատիսեան Ա., նշվ. աշխ.:

զանոնք»։ Նա նաեւ ասաց. «Թիրքերու եւ վրացիներու միջեւ, ճիշտ է, եղած են անցողակի թիրիմացութիւններ, բայց ինքը վատահ է, որ ապագային անոնք պիտի չկրկնվին այլեւս...»։ Ապա շարունակեց. «Թիրքերու վեճը հայերու հետ հին է, եւ հայերը ոչ մեկ քայլ կրնեն հաշտվելու համար թիրքերու հետ։ Այս ընթացքը պատճառ պիտի դառնայ հայերու նոր դժբախտութեանց»³⁰։

Պոմյանկովսկին նկատում է, որ Գերմանիան հաշվի առնելով Թուրքիայի անզիջում կեցվածքը, որոշեց «ուղղակի բանակցությունների միջոցով իր նպատակին հասնել Անդրկովկասյան հանրապետության, նույնիսկ Ռուսաստանի հետ փոխըմբռնման ճանապարհով։ Այստեղից քաղաքական հակասությունը Գերմանիայի եւ Թուրքիայի միջեւ»։ Նա նաեւ նշում է, որ գերմանական այս կողմնորոշումը առաջ էր տարվում Լոսովի միջոցով եւ «թուրքերի նկատմամբ խորապես թշնամական ոգով։ Բեռլինից Թիֆլիս ուղարկվեց գերմանական առաքելություն. գնդապետ բարոն Կրես Կրեսենշտեյնի գլխավորությամբ։ Վերջինս նույնպես բարեկամաբար չէր տրամադրված թուրքերի նկատմամբ...»³¹։

Իսկ թուրքերը շարունակում էին խուսանավել, անգամ ձեւանում հայերի բարեկամ։ Խատիսյանի ու Քաջազնունու հետ գրույցների ժամանակ Խալիլը թուրքական պահանջների աճը բացատրում էր, որ, մախ՝ Տրապիզոնի բանակցություններից հետո հայերը հարկադրեցին թուրքերին արյուն թափել, եւ երկրորդ՝ «Կովկասից եկող լուրերը՝ Բաքվում եւ Երեւանի նահանգում մուսուլմանների նկատմամբ հայերի բռնությունը։ Թուրքիայի հասարակական կարծիքը սարսափելի զայրացած է եւ պահանջում է բավարարում»։ Նա նաեւ խորամանկեց, թե ինքն այնքան էլ չի համակրում ներկայացված պահանջները, եւ ամեն ինչ «անում է այն փոխելու»։ Թե ինքը շատ վաղուց իր վրա է վերցրել հայերին եւ թուրքերին հաշտեցնողի դերը ու դրանից հետ չի կանգնի։ Վեհիքը նույնպես խոսեց «հայերի վայրագությունների», թուրքական զինվորների ցատումի, իր «մարդասիրական հրահանգների, գրավված շրջաններում հայերի նկատմամբ միանգամայն վայելուչ վերաբերմունքի», տեղում մնացած հայ բնակչության կյանքի եւ ունեցվածքի անվտանգության ապահովման իր ձեռնարկումների մասին։ Բայց երբ առաջարկեցին թույլ տալ գաղթականներին վերադառնալու իրենց բնակավայրերը, Վեհիքը մերժեց։ Նա նաեւ սպառնաց, որ եթե հայերն իր տրամադրության տակ չընեն Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին, ինքը «կանցնի հանդիսավոր քայլով, այսինքն՝ առանց հայերի կարծիքը հաշվի առնելու»։

³⁰ Խատիսյան Ա., նշվ. աշխ.։

³¹ Pomiankowski J., նշվ. աշխ., s. 336:

Հ. Քաջազնունին Վեհիքին պատասխանեց. «Ես գիտեմ, որ մերժելու դեպքում դուք կգործադրեք ուժ, եւ դա սպառնում է մեզ պատճառել մեծ վնասներ։ Բայց եւ այնպես, եթե դուք չհրաժարվեք այլեւայլ հավակնություններից, ձեր գործերի անցմանը մենք համաձայնություն չենք տա»³²։

Պոմյանկովսկին միանգամայն հստակ է ներկայացնում թուրքերի վարքագծի կռվանները՝ Թուրքիան իրականացնում էր համաթրքական ծրագիրը։ «Թուրք-բաքարական ժողովուրդներով բնակեցված երկրներից դեպի Ռուսաստան տանող կամուրջը Կովկասն էր, որի ստացումը կամ զավթումը թուրանական պլանների իրականացման գլխավոր պայմանն էր»³³։

«Кавказское слово» թերթը մայիսի 17-ին գրեց, «Թուրքերի գործունեության ուխտադրուժ բնույթը Անդրկովկասի հանդեպ ակնհայտ էր հենց սկզբից... Թուրքերի բոլոր հաջողությունները... հանդիսացան ոչ այնքան ռազմական գործողությունների, որքան դիվանագիտական խորամանկությունների ու միջազգային իրավունքի եւ զինադադարի մի շարք պայմանների խախտման հետեւանք։ Մեր կողմից Թուրքիան, բացի անվերջ զիջումներից ու սիրալիրությունից, ոչ մի այլ բան չի տեսել»։

ՌԽԴՍՀ ԱԳ ժողկոմատի մայիսի 15-ի նոտայում նշվեց, թե առանց Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցության Բաքումի խորհրդաժողովը իրավասու չէ լուծելու տարածքային հարցեր, որովհետեւ Մոսկվան չի ճանաչել Անդրկովկասի անկախությունը եւ Անդրկովկասի կառավարության կնքած պայմանագիրը նույնպես չի ճանաչելու³⁴։

Մայիսի 26-ին թուրքական պատվիրակությունը մի նոր վերջնագիր է ներկայացնում, թե քանի որ Անդրկովկասյան հանրապետությունն արդեն փաստորեն գոյություն չունի, բանակցությունները շարունակելը դառնում է ավելորդություն։ Դա պահանջ էր լուծարելու Անդրկովկասի սեյմը։ Հայկական պատվիրակությունը հանկարծակիի չեկավ, որովհետեւ նախորդ օրը Ժողդանիան Խատիսյանին ասել էր, թե քանի որ հայերը շարունակում են առճակատման մեջ մնալ թուրքերի հետ, որոնք անարգել առաջանում են, Վրաստանը պարտադրված է իրեն անկախ հռչակել։ Խատիսյանը հուզված բացականչել էր, թե երբ հայերի արյունն է հեղվում, «ինչպես կրնար մեզ լքել, մի՞թե ազնիվ բան է այս», Ժողդանիան պատասխանել էր. «Ազնիվ բան է այն, ինչ օգտակար է ժողովրդին... Մենք չենք կրնար խեղդուիլ ձեզի հետ միասին»³⁵։

³² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 25:

³³ Pomiankowski J., նշվ. աշխ., s. 334:

³⁴ ДВП СССР, т. 1, док. N179:

³⁵ Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 82:

Մայիսի 26-ի վերջնագրին կցված էր Խալիլի նամակը, որում մասնավորապես ասվում էր, որ մայիսի 11-ից հետո թուրք-անդրկովկասյան բանակցություններում որևէ առաջընթաց չէր կատարվել, մինչդեռ «Կովկասի վիճակն ավելի քան անհուսալի ու անորոշ է եւ պետք է հստակեցվի առանց հետագա ձգձգումների»:

Բարվում ու շրջակայքում հարյուր հազարավոր թուրքեր եւ մահմեդականներ կրում են անխիղճ ավազակների, այսպես կոչված, հեղափոխականների արյունալի լուծը»: Վիճակը նույն է ամբողջ Կովկասում եւ Թուրքիան այլևս չի կարող հանդուրժել նման վիճակը: Բացի դա. «ընդհանուր պատերազմի անխուսափելի պահանջն է... ապահովել զորքերի ազատ անցումը Կովկասով՝ դրանք երկաթուղով ազատ տեղափոխելու հնարավորություն ունենալ» ու նաեւ պահանջվում է սահմանագծի փոփոխություններ: Պատասխանի համար տրվում էր 72 ժամ³⁶:

Իսկ բուն վերջնագիրը պահանջում էր՝ Թուրքիային տալ Նախիջևանի գավառը, քացի Օրդուբադի շրջանից, Շարուր-Դարալագյազի գավառի կեսը, Երեւանի գավառի կեսը, Սուրմալուի եւ Էջմիածնի գավառները, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը Ալեքսանդրապոլ քաղաքով, Ախալցխայի եւ Ախալքալաքի գավառները, ինչպես նաեւ թույլտվություն թուրքական զորքերը տեղափոխելու երկրամասի բոլոր երկաթուղիներով³⁷:

2. ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄ

Մայիսի 25-ին Չիչերինը հեռագրեց Բեռլին, թե խորհրդային կառավարությունը պատրաստ է սկսելու բանակցություններ Անդրկովկասի կառավարության հետ:

Նույն օրը թուրքերը մերժեցին Գերմանիայի առաջարկությունը ստանձնելու միջնորդի դեր: Առաջացավ փակուղի: Ադրբեջանցիներն ու վրացիները պահանջում էին օր առաջ դադարեցնել պատերազմական գործողությունները եւ պայմանագիր կնքել:

Անդրկովկասի վարչական միասնության փլուզման գործընթացը մոտենում էր վերջնագծին:

Նույն մայիսի 25-ին Բաթում է մեկնում Ժորդանիան Վրաստանի անկախության վերաբերյալ խորհրդակցելու Չխենկելիի հետ: Համաձայնությունն անմիջապես է կայանում:

³⁶ «Документы и материалы...», с. 309-310:

³⁷ «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 17»:

Մինչդեռ թուրքերի մայիսի 26-ի վերջնագիրը Հայաստանին ու հայերին դնում էր անելանելի վիճակում: Պատերազմը շարունակելու համար հայերն արդեն ձեռնարկեցին Վրաստանն ու Ադրբեջանն անկախացնելու թշնամական դիրք էին գրավել: Դեռ ավելին, ադրբեջանցիները հայերին սպառնում էին միանալ թուրքական հարձակմանը, եթե անմիջապես պատերազմական գործողությունները չդադարեցվեին:

Հետագայում պարզվեց, որ վրաց մենչեիկները թուրքերի ու գերմանացիների հետ տեսական գաղտնի բանակցություններ էին վարել Վրաստանն անկախ հռչակելու հարցի շուրջ: Նրանք ստացել էին Գերմանիայի համաձայնությունը Վրաստանի անկախությունը երաշխավորելու, այսինքն՝ նրան առնել իր հովանավորության տակ:

Մայիսի 26-ին Ա. Ծերեթեիլին սեյմում հայտարարեց. «Վրաց ժողովուրդը մնացել է միայնակ. նրանից անջատվել են հայերը եւ կամովին՝ թուրքերը: Անդրկովկասի կեղծ անկախությունը խանգարում է նրան վարվելու ազատորեն եւ իր ուժերը գործադրելու սեփական անկախությունը պաշտպանելու համար... Դժբախտաբար այլևս անդրկովկասյան միություն գոյություն չունի, փաստորեն չկա մերկայացուցչական կենտրոնական մարմին եւս: Ուստի սեյմը պիտի հայտարարի, թե հրաժարվում է իր վրա դրված լիազորություններից ու ցրվի»:

Վրացական խմբակցությունը սեյմին առաջարկեց բանաձեռի հետեւյալ նախագիծը. «Նկատի ունենալով, որ պատերազմի եւ խաղաղության խնդրում երեւան են եկել հիմնարար նշանակության տարածայնություններ Անդրկովկասի անկախ հանրապետությունը ձեւավորող ազգերի միջեւ, ինչն անհնար է դարձնում Անդրկովկասի ամբողջության համար մի ընդհանուր հեղինակավոր իշխանության գոյությունը, սեյմն արձանագրում է Անդրկովկասի քայքայման իրողությունը եւ անվավեր հայտարարում իր լիազորությունները»³⁸:

Նույն օրը Հայոց ազգային խորհուրդը որոշեց «բողոքել վրաց գործիչների ընթացքի եւ Վրաստանի անկախության դեմ», սակայն այդ բողոքը որևէ տեղ չառաքվեց ու մնաց խորհրդի գգոնցներում:

Մայիսի 27-ին Թիֆլիսի քաղաքապետարանի շենքի պատշգամբից կոմս Շուկենբերգը Վրաստանը հայտարարեց Գերմանիայի հովանավորյալ: Մայիսի 28-ին կնքվեց վրաց-գերմանական պայմանագիրը. Գերմանիան ճանաչում էր Վրաստանի անկախությունը:

Մայիսի 27-ին Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգները հայտարարվեցին

³⁸ «Документы и материалы...», с. 330:

Աղբրեջանի հանրապետություն, ինչը քայլ էր միտված դեպի միացյալ Աղբրեջանի (ռուսական եւ պարսկական) ստեղծումը:

Հայերն ընկան անելանելի կացության մեջ: Հայոց ազգային խորհուրդը ծնկի եկավ:

Մայիսի 28-ին Ազգային խորհուրդը ստեղծեց մի հանձնաժողով (Ս. Հարությունյան, Ս. Մամիկոնյան, Լ. Թումանյան, Ա. Երզնկյան) մշակելու Ազգային խորհրդի հետագա քայլերն ու դրանց ուղղությունները համակարգող մի ծրագիր, ինչպես նաև որոշակիացնելու ՀՀ կարգավիճակին առնչվող սկզբունքները եւ ստեղծելու համապատասխան բանաձեւերի նախագծեր:

Նույն նիստում Մ. Բաբաջանյանը հայտարարում է, թե դեռես հունվար ամսին վրացական մենչելիկները ստացել էին թուրքերի գրավոր համաձայնությունը Վրաստանի անկախության վերաբերյալ³⁹:

Թուրքական պատվիրակության մայիսի 26-ի վերջնագրում ասված էր. «Օսմանեան կայսերական պատվիրակութիւնը պարտք է համարում պահանջել, որ անմիջապէս հաղորդվի իրեն անդրկովկասեան պատվիրակութեան պատասխանը նախապէս արված առաջարկութիւններին, այլեւ սահմանների սրբագրութեան վերաբերվող նոր առաջարկին...»⁴⁰: Նաև սպառնալիք կար, որ երկու երկրների հարաբերությունները կմնան բարեկամական, եթե «թիրք գործերի գործողութիւնները Կովկասի հարավում ուրեւ դիմադրութեան չհանդիպեն»⁴¹:

Նույն օրը Խալիլն իր վերը նշված վերջնագիրն առանձին-առանձին ուղարկեց հայ, վրաց եւ թաթար պատվիրակներին:

Նույն օրվա երեկոյան Թիֆլիսից Չխենկելին ստանում է հեռագիր. «Այսօր ցերեկը ժամը 5-ին Ազգային խորհուրդը Վրաստանը հայտարարեց անկախ հանրապետություն: Վարչապետ է Ռամիշվիլին, ԱԳ նախարար՝ Չխենկելին... Անդրկովկասի միությունը վերջացավ»: Այս պայմաններում անկախ պետության կառուցմանը ձեռնամուխ լինելն, իրոք, ծանրագույն ու բարդագույն խնդիր էր:

Եվ ահա մայիսի 28-ի գիշերը Ազգային խորհուրդը Ա. Ահարոնյանի նախագահությամբ, մասնակցությամբ Ն. Աղբալյանի, Ս. Վրացյանի, Ռ. Տեր-Սիմասյանի, Ա. Բաբալյանի, Տ. Բեկզադյանի, Ս. Մամիկոնյանի, Ա. Երզնկյանի, Մ. Հարությունյանի, Մ. Բաբաջանյանի, Բունիաթյանի, Հ. Քաջազնունու, Ա. Խատիսյանի, որոշում է կայացնում ընդունել թուրքական վերջնագիրը:

³⁹ Հայ ազգային խորհրդի նիստերի արձանագրություններ, ք. 251:

⁴⁰ "Документы и материалы...", с. 150:

⁴¹ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 150:

Սակայն նաև անհնար է չնկատել, որ անկախ Հայաստանի շենքի առաջին քարը դնողները ոչ միայն անփորձ էին, այլև խճճված միջկուսակցական զգվոտոցներում եւ նույնիսկ այդ հույժ պատասխանատու, բախտորոշ պահին կուսակցական նեղմտությամբ էին քննարկում նորածին մասկան ապրեցնելուն առնչվող ամենակենսական հարցերը: Ա. Բաբալյանի վկայությամբ անկախության դեմ քվեարկեցին ինքը, Ա. Ահարոնյանը եւ Ռուբենը⁴²:

ՀՀ Ազգային խորհուրդն իր անդամներին մի օր ժամանակ տվեց ներկայացնելու իրենց կուսակցությունների կարծիքը Հայաստանի անկախության վերաբերյալ, ապա հանձնարարեց Լ. Թումանյանին, Ա. Ահարոնյանին, Հ. Քաջազնունուն եւ Ա. Խատիսյանին կազմել անկախության հայտարարության տեքստը: Տեքստի առաջին տարբերակը պատկանում էր Ն. Աղբալյանի գրչին: Ցերեկվա ժամը 12-ին այն ընդունվեց Ազգային խորհրդի կողմից. «Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Աղբրեջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարած է հայկական գավառների գերագույն եւ միակ իշխանութիւնը: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարութիւն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապէս ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական ու վարչական ղեկը վարելու համար»⁴³:

Նշենք, որ նույն նիստում Մ. Հարությունյանն առաջարկեց Ազգային խորհուրդը հայտարարել կառավարություն: Խորհուրդը միաձայն ընդունում է այդ առաջարկությունը: Սակայն Խատիսյանը, թե առանց Հայաստանն անկախ հայտարարելու թուրքերը հայկական պատվիրակության հետ չեն բանակցի: «Պետք է օգտվել պահից եւ տեսականորեն անկախ հայտարարել Հայաստանը, - ասաց նա, - մենք արդեն ականա անկախանում ենք»⁴⁴:

ՀՀ-ի ղեկավար մարմինների միացյալ նիստը ՀՀ վարչապետի թեկնածու առաջադրեց Հ. Քաջազնունուն:

Մայիսի 30-ին Ազգային ժողովը հրապարակեց Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ մայիսի 28-ին իր ընդունած հռչակագիրը: Հռչակագիրը սկզբում քննարկվեց ՀՀ-ի ներկայացուցչական ժողովում, որի որոշմամբ «ղիկտատուրական իրավունքներով օժտված» Ազգային ժողովը պետք է տեղափոխվեր Երեւան՝ Հայութեան կենտրոն»: Բայց Ազգային խորհուրդ-կառավարությունը Երեւան մեկնել չկարողացավ: Այդ մասին Կրեւը հուլիսի 10-ին գրեց

⁴² «Հայրենիք», 1923, N28:

⁴³ ՀՀ ՀԶԿՊԿԱ, ֆ. 222, ց. 1, գ. 1ա:

⁴⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120:

Բեռլին, թե թուրքերն արգելակում էին նրա մեկնումը Երեւան: Թույլ չէին տալիս նաեւ գաղթականների վերադարձը, որպեսզի բերքը չհավաքվեր: «Թուրքերի մտադրությունն է՝ քաղցի մատնել ամբողջ հայ ժողովրդին...»⁴⁵:

Ազգային խորհուրդը լիազորություններ տվեց Մ. Բաբաջանյանին եւ Ռուբենին «միջոցներ ձեռնարկել թուրքերի հետ միասին ճանապարհը բանալու համար»: Ռուբենը գտնում էր, որ միջոցների պետք է դիմել, անգամ մարդ ուղարկել Բաքու «հայ զորքերն այնտեղից հանելու» եւ եթե հարկավոր է (ձեւականորեն) «պատերազմ հայտարարել» Խորհրդային Բաքվին:

Թերեւս նաեւ այդ հարկադրանքը, ստեղծված մթնոլորտը նկատի ունենալով, Ղ. Գազարյանը, որը հունիսի 7-ի նիստում հայտարարեց. «Այս անկախությունը մենք ընդունում ենք որպէս մի բռնի քայլ, որ մեր ժողովրդի ստրկությունն է, այն էլ տաճկական լծի տակ»⁴⁶:

Երբ հունիսի 8-ին Քաջազնունին կառավարության համար տվեց միայն երեք նախարարի թեկնածություն՝ մյուսներին Երեւանում նշանակելու պայմանով, Ա. Երզնկյանը, զարմացավ, թե երեք հոգով կառավարություն չի լինի, թե անհրաժեշտ է կառավարական հայտարարություն հրատարակել: Վարչապետը պատասխանեց. «Մեզ դեկլարացիա հարկավոր չէ, մեր դեկլարացիան հաշտության պայմանագիրն է, որ պետք է իրագործել կյանքի մեջ»⁴⁷: «Իսկ հաշտության դաշնագիրը թուրքերի վերջնագիրն էր պարտված հայերին, որը եւ Քաջազնունու համար դարձել էր կառավարական հայտարարություն»⁴⁸:

Հայերը չէին շտապում, իսկ թուրքերն՝ ընդհակառակը: Նրանք անմիջապէս ունեցան Մեհմեդի նշանակեցին Օսմանյան կայսրության դեսպան չէլ-ուն:

Հռչակագիրն ինքնին նշանակում էր, թե որքան չնախապատրաստված ու հանկարծակի էր մի փաստաթղթի ընդունումը, որը կոչված էր լինելու հազար տարի պետականությունը կորցրած Հայաստանի անկախության ազդարարագիրը, որն անգամ «անկախություն» բառը չէր պարունակում: Վրաստանն ու Ադրբեջանն իրենց անկախ էին հայտարարել, իսկ Հայ ազգային խորհուրդն իրեն համարում էր «հայկական գավառների գերագույն եւ միակ իշխանությունը»⁴⁹:

Հայոց հռչակագրում նորաստեղծ պետության վարչակարգն իսկ չէր նշ-

⁴⁵ "Deutschland und Armenien", s. 402-403:

⁴⁶ Հայ ազգային խորհրդի նիստերի արձանագրությունները, p. 248:

⁴⁷ Ն.տ., p. 250:

⁴⁸ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1965, էջ 121:

⁴⁹ Հայ ազգային խորհրդի նիստերի արձանագրություններ, p. 239:

ված: Միայն Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո Ազգային ժողովը համարձակություն ունեցավ հռչակելու, որ Հայաստանը հանրապետություն էր: Չի ստեղծվում անգամ ժամանակավոր կառավարություն: Դա Խատիսյանը բացատրում է հետեյալ կերպ. «Կառավարութեան կազմութիւնը հետաձգուեցավ մինչեւ հաշտութեան պատվիրակութեան Բաթում երթալն ու վերադառնալը, որովհետեւ Քաջազնունիի եւ իմ մասնակցութիւնը կառավարութեան մեջ անհրաժեշտ կը նկատվեր, իսկ մենք պետք է նորեն երթայինք Բաթում: Թիւրքերու վերջնագրին պայմանաժամը կը լրանար հետեյալ օրը՝ մայիսի 29-ին...»: Բայց նորից պարադոքս. Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը հայտարարեց. «Մենք անկախություն չենք ուզում... Մենք ժամանակավորապէս վերցնում ենք կառավարական լիազորությունները, իսկ Ազգային խորհուրդն ընտրված լինելով բոլոր հայերի կողմից, չի կարող մի որեւէ մասի կառավարություն կազմել: Պետք է այդ իրավունքը փոխանցել Երեւանի ազգային խորհրդին, որը եւ իրավաւոր է կառավարություն կազմելու, եթե թուրքերի առաջխաղացումը դադարի»⁵⁰:

Ստացվում է՝ 1. ՀՀԴ դեմ էր անկախությանը, 2. Մի կողմից պատվիրակություն էին ուղարկում Բաթում թուրքերի հետ բանակցություններ վարելու, մյուս կողմից առանց անունը տալու առաջ է քաշվում Միացյալ Հայաստանի գաղափարը, 3. Կառավարություն կազմելը պայմանավորվում էր թուրքերի «առաջխաղացման դադարելով»:

Ա. Հարությունյանը կառավարություն կազմելուց իր կուսակցության հրաժարվելը արդարացնում էր նրանով, որ այդ կառավարությունը փոքրաթիվ անդամներ ուներ եւ «նրա վարիչները նույնպէս մեղավոր են կամավորական շարժման մեջ»⁵¹: Ժողովրդականների համար կամավորական շարժմանը մեղսակցությունն այնպիսի մեծ հանցագործություն էր, որ չ. Առաքելյանը շտապեց ապացուցել, որ «ժողովրդական կուսակցությունը կամավորական շարժման մեջ դեր չի խաղացել», որ դրա ամբողջ մեղքն ընկնում է ՀՀԴ վրա: Հենց դրա համար էլ չ. Առաքելյանը գտնում էր, որ կազմվելիք կառավարության մեջ ՀՀԴ չպետք է ղեկավար դեր ունենար: Նա ուղղակի ասաց, որ ՀՀԴ «երեսնամյա գործունեությունը բացասական հետեւանք տվեց եւ նրա ղեկավար դերը կարող է խանգարել մեր բարեկամական հարաբերություններին ոչ միայն հարեւանների, այլեւ դրսի պետությունների հետ»⁵²:

Մի փաստ եւս. երբ հունիսի 1-ին Բաթումից ստացվում է հայկական պատ-

⁵⁰ Հայ ազգային խորհրդի նիստերի արձանագրությունները, p. 240-241:

⁵¹ Ն.տ.:

⁵² Ն.տ.:

վիրակության հեռագիրը, Ազգային խորհուրդն արձանագրում է, որ «մեր պատվիրակությունը, թերևս ստիպված, ընդունել է մեր անկախությունը»:

Անորոշություն կար նաև Հայաստանի առաջին հանրապետության ծննդյան ճիշտ օրվա հարցում՝ մայիսի 28, թե մայիսի 30: Ըստ Վրացյանի ճիշտը մայիսի 30-ն էր, երբ հրապարակվեց Ազգային խորհրդի հայտարարությունը, իսկ մայիսի 28-ին հաստատվել էր հայ պատվիրակության կազմը որպես անկախ պետություն, այլպես այն իրավասու չէր պետության անունից բանակցություններ վարել ու պայմանագիր ստորագրեր:

Թվում է, թե Ս. Վրացյանը սխալ է: Անկախության օրը հռչակագրի հաստատման օրն է՝ մայիսի 28-ը:

Հայ ժողովրդի ողբերգությունների ծովում ծնվեց Հայաստանի Հանրապետությունը եւ այդ ողբերգություններից գերագույնն այն էր, որ թուրքական բաշնակը շարունակում էր խոշտանգել փոքրիկ Հայաստանը:

Հայաստանի կառավարությունը Երևան հասավ օգոստոսին, որտեղ այն լրացվեց նոր անդամներով՝ Արամը նշանակվեց ներքին գործերի նախարար: Հոկտեմբերին ձեռնադրվեց նոր՝ կոալիցիոն կառավարություն, որում կար հինգ դաշնակ, չորս ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ: Մինչ այդ ահաբեկչության գոհ դարձավ կառավարության առանցքային դեմքերից մեկը՝ Կարճիկյանը:

Բայց դա չէր խանգարում, որ Հայ ազգային խորհրդում շարունակվեր երկար քննարկումներ կառավարություն կազմելու հարցի շուրջը: Վեճերի գլխավոր թեման ոչ թե անելիքներն էին, այլ անցյալի քչփորելը: Նույն «մեղքերն» էին թմբկահարվում, թե որ կազմակերպությունն է համագործակցել ցարիզմի հետ, նորից ու նորից անդրադարձներ կամավորական շարժմանը: Ստ. Մամիկոնյանը հայտարարեց. «Եթե խոսքը վերաբերում է վնասակար գործունեության հատկապես կամավորական խնդրում, ապա պետք է ասել, որ միայն դաշնակցությունը չէ մեղավոր: Ոչ միայն Ջավրիեն է գնացել Գիրսի մոտ, այլև Բաբաջանյանը, որ եղել է Սազոնովի մոտ եւ նպաստել կամավորական գործին»⁵³: Վերջինս, իր հերթին, գտնում էր, որ «դաշնակցությունը ղեկավար դեր չպետք է ունենա կառավարության մեջ, այդ է պահանջում ժողովրդի շահը»:

Ռուբեն Տեր-Մինասյանը, որ իրեն համարում էր հայդուկային շարժման միջոցով թուրքական բռնատիրության դեմ պայքարի առաջամարտիկ, Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո հայտարարեց, թե «մեզ

⁵³ Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 449:

ձեռնտու է թուրքերի ձեռքի տակ ինքնավարություն», թե թուրքերն «անկեղծորեն ուզում են Հայոց հարցը վճռել»: Իսկ 1918թ. հուլիսի 4-ին Ազգային ժողովի նիստում հայտարարեց. «Քաղաքականություն չենք ունեցել, ունեցել ենք լոկ ջղաձգություններ: Ամեն օր նոր գիզագզներ ոչ լուրջ պատճառներից: Դիշտ ունեցել ենք արիվատելի հոգեբանություն»⁵⁴: Միանգամայն օբյեկտիվ ինքնաքննադիր է:

1918թ. հունիսի 9-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության շենքում տեղի է ունենում հազար հոգանոց մի ժողով, որը որոշում է. «Նկատի ունենալով, որ ներկա ղեկավարող կուսակցության (ՀՀԴ) տարիների ընթացքում վարած քաղաքականության ու նրա գործելակերպի, հետեւանքը եղավ հայ ժողովրդի ներկա օրհասական վիճակը, չի համապատասխանում պահին, եւ որ այդ կուսակցությունը չէ վայելում հարեւան ազգերի կողմից անհրաժեշտ հավատ ու վստահություն... ընդունել, որ 1. այժմյան Ազգային խորհուրդը իրավունք ունի եւ պարտավոր է կազմել ազգային ժամանակավոր կառավարություն... հանձնելով դրա իրագործումը Հայ ժողովրդական կուսակցությանը...»⁵⁵:

Ի դեպ, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունն էլ հրաժարվեց մտնել Հ. Քաջազնունու կառավարության մեջ⁵⁶:

Անդրկովկասում անկախ պետությունների ստեղծվելն, ինչպես եւ սպասվում էր, անմիջապես մակերես հանեց երեք ժողովուրդների շահերի միջեւ եղած հակասությունները եւ դրանից բխող թշնամական դիրքորոշումները: Ս. Շահումյանը 1918թ. հունիսի 10-ին գրում է, որ վրաց մենչելիկները գերմանացիներին վատ չեն ընդունել, որ Թիֆլիսի կայարանում բարձրացված է գերմանական դրոշակ, մտցված է պարետային ժամ, գերմանական սպաները խոսում են հայկական գնդերի զինաքափման անհրաժեշտության մասին:

Այն, որ Քաջազնունու կառավարությունը Երևան հասավ միայն օգոստոսին, նույնպես տարօրինակություն է հաղորդում հայկական վարչակարգի ձեւավորմանը եւ արտահայտություն էր հայոց պետականության հանդեպ դրա ճարտարապետների մտտեցումների «ինքնատիպության»:

Այնուամենայնիվ, Բաթումը չկարողացավ փակել Հայկական հարցը: Հունիսի 25-ին Կ. Պոլսում հրավիրվեց միջազգային խորհրդաժողով, որին մասնակցում էր նաև ՀՀ պատվիրակությունը հույս ունենալով, որ այն կվերանայի Բաթումի պայմանագիրը: Պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյան, Ա. Խատիսյան, Մ. Բաբաջանյան, խնդիր ուներ՝ Հայաստանի սահմանների ընդլայնում

⁵⁴ Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 451:

⁵⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 2:

⁵⁶ «Հորիզոն», 09.06.1918:

եւ գտնել հնարավորություններ Կովկասում հայերին ծանր վիճակից դուրս բերելու: Պատվիրակության գլխավոր հոգսն էր՝ ապացուցել Ախալքալաքի, Լոռու, Չանգեզուրի, Ղարաբաղի եւ Նախիջեւանի հայերի օրինական իրավունքները միավորվելու մայր .հայրենիքի հետ:

Բնականաբար այդ ջանքերը հանդիպում էին թուրքերի դիմադրությանը եւ դա երկու պատճառով, նախ՝ նրանք զգուշանում էին ուժեղ Հայաստանի գոյությունից եւ, երկրորդ՝ Ղարաբաղի եւ Չանգեզուրի տալը Հայաստանին փակում էր Ադրբեջանի հետ Թուրքիայի ուղղակի կապը, իսկ Լոռիի եւ Ախալքալաքի տալը փակում էր թուրքերի ճանապարհը նաեւ դեպի Ղազախ ու Գանձակ:

Սակայն այդ խնդիրները չընկճեցին, որովհետեւ ռազմաճակատներում Քառյակ զինակցության անհաջողությունների պատճառով խորհրդաժողովն այդպես էլ չբացվեց:

3. ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայերի մայիսյան հաղթանակները փոխեցին Բաթումի բանակցությունների մթնոլորտը: Մայիսի 27-ին հայ պատվիրակները գրույց ունեցան Խալիլի եւ Վեհիբի հետ, ովքեր աշխատում էին հավատացնել, որ «թուրքերի մեջ էլ կան հայերի բարեկամներ», որ իրենք թույլ չեն տա «անկարգություններ հայերի նկատմամբ»: Վեհիբն առաջարկեց Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքել ռազմական կոնվենցիա, քանի որ ինքը դեմ չէ հայկական անկախ պետության ստեղծմանը եւ թաթարներին «խորհուրդ է տվել... հայերին զիջել ունեցած տարածքի մի մասը, որպեսզի նրանք կարողանան կազմավորել իրենց պետությունը»:

Թուրք պատվիրակների տրամադրության փոխվելը նաեւ արդյունք էր Արեւմտյան Հայաստանի հարցի գոյության: Գերմանիան համոզված էր, որ խաղաղության վեհաժողովում այդ հարցը կբարձրացվի եւ Թուրքիային համոզում էր, թե մինչ վեհաժողովի սկսվելն ապացույցներ տալ, որ ինքը ձգտում է հայկական նահանգների քրիստոնյա բնակչության հետ «հաստատել մեղմ եւ արդար հարաբերություն»: Պահանջվում էր ապահովել արեւմտահայերի վերադարձն իրենց բնակավայրերը: Նաեւ թույլտվություն միջազգային ներկայացուցիչներ ուղարկելու հայկական նահանգները «խեղճերին»՝ հայ փախստականներին օգնելու:

Արեւմտյան Հայաստանի ինքնավարության հարցը դիվանագիտական քրթածրարներից հանված չէր, իսկ այդ ինքնավարությունը ձախողելու հա-

մար ՀՀ ստեղծումը ելք էր, հնարավորություն հայտարարելու, որ Կ. Պոլիսը հայերին ոչ միայն ինքնավարություն, այլեւ անկախ հայրենիք էր ապահովել:

Փոքր չէր նաեւ այն բանի դերը, որ Բեռլինը հրամանի նման խորհուրդ տվեց Թուրքիային՝ «չհեռանալ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սկզբունքներից»: Բեռլինը Կ. Պոլսին էր մեղադրում Բաթումի բանակցությունների ձախողված ընթացքի համար, որի հետեւանքով փլուզվեց Անդրկովկասի համրապետությունը: Բեռլինում կազմված մի հրահանգում ասվում է, թե զինակցության անդամ պետությունները չեն կարող պատասխան տալ ոչ իրենց ժողովուրդներին եւ ոչ էլ աշխարհին, եթե ընդունեն, որ իրենց օգնությամբ իրականացված Բրեստի պայմանագրի հիմնադրույթը օգտագործվում է որպես արտոնագիր Կովկասում քրիստոնյաներին հետապնդելու համար»⁵⁷:

Բաթումի պայմանագիրը ստորագրվեց 1918թ. հունիսի 4-ին եւ ուներ 14 հոդված: Ստորագրեցին՝ թուրքական կողմից Խալիլը, Վեհիբը, Հայաստանի կողմից՝ Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին եւ Մ. Բաբաջանյանը: Պայմանագիրը ստորագրվեց հանդիսավոր պայմաններում: Տոնական արտահագուստի մեջ էին ոչ միայն թուրք, այլ նաեւ հայ պատվիրակները:

Ստորագրելու ժամանակ Խալիլն ասաց. «Այսօր մենք դնում ենք մեր ստորագրությունները մի ակտի տակ, որ տեղ է տալիս Հայաստանի անկախությանը»: Խատիսյանը պատասխանեց. «Հայ ժողովուրդը ակնկալում է խաղաղություն եւ հավիտենական համաձայնություն տաճիկների հետ»⁵⁸:

Վեհիբը հայտարարեց. «...Մենք ինքներս մեր ձեռքով ստորագրեցինք Հայաստանի ազատությունը... Այդ պետությունը մենք համարում ենք մերը...»⁵⁹:

Պայմանագրով սահմանվում էր, որ երկու պետությունների միջեւ «հաստատվում է կայուն խաղաղություն եւ հարատեւ բարեկամություն»: Երկրորդ հոդվածը որոշում է սահմանները՝ Արաքսի եւ Ախուրյանի երկայնքով: Ընդամենը 10.000 քմ2 տարածք: Երրորդ հոդվածը պարտադիր էր համարում, որ Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանները որոշելիս «տեղյակ պահվի օսմանյան կայսերական կառավարությանը»: Հետաքրքիր է 4-րդ հոդվածը. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է զենքի ուժով օգնություն հասցնել ՀՀ կառավարությանն այն դեպքում, երբ վերջինս խնդրի երկրում կարգ ու հանգստություն ապահովելու համար»: 5-րդ հոդվածով ՀՀ կառավարությունը պարտավորվում է «եռանդով դիմադրել հրոսակախմբերի կազմակերպմանը եւ սպառազինմանն իր սահմաններում եւ զինաթափել ու ցրել բոլոր այն հրոսակախմբերը, որոնք կգան այնտեղ թաքնվելու»:

⁵⁷ OZFT-W-1110, X-155, d. N2676:

⁵⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120:

⁵⁹ Ն.տ., ֆ. 289, ց. 1, գ. 13:

Թե 4-րդ եւ թե 5-րդ հողվածները սուվերեն պետության ներքին գործերին կոպիտ միջամտություն էին՝ 4-րդ հողվածն ուղղված էր բուլշեւիկների, 5-րդը՝ հայդուկների եւ արեւմտահայ մարտական ջոկատների դեմ, իսկ երկուսը միասին հնարավորություն էին տալիս ցանկացած պահին զավթելու Հայաստանը:

Նույն բռնի միջամտության արտահայտություն էր նաեւ 6-րդ հողվածը, որով պահանջվում էր հարգել ՀՀ բնակվող մահմեդականների կրոնն ու սովորությունները: պարտադիր էր համարվում սուլթանի անվան հիշատակումը մահմեդականների աղոթքներում: Մահմեդականներին իրավունք էր վերապահվում կրթություն ստանալու մայրենի լեզվով: Թուլյատրվում էր ստեղծել մահմեդական համայնքներ, որոնք իրավունք ունենային պահելու մզկիթներ, հիվանդանոցներ, դպրոցներ, կրոնական եւ բարեգործական հաստատություններ: Գլխավոր մուֆթիի նստավայրը լինելու էր Երեւանը: Այսինքն՝ միլիոնների համակարգը, որ երիտթուրքերը Օսմանյան կայսրության հայերի համար վերացրեցին, ներդրվում էին Հայաստանում՝ մահմեդականների համար: 7-րդ հողվածը սահմանում էր հյուպատոսական, առեւտրական եւ այլ պայմանագրերի կնքման ժամկետները: 8-րդ հողվածը տարիֆային եւ այլ դյուրություններ էր սահմանում միմյանց երկաթուղիներից օգտվելու գործում: 9-րդ հողվածը վերաբերում էր փոստ-հեռագրական կապին, 10-րդը՝ երաշխավորում էր անշարժ սեփականության անձեռնմխելիությունը, նաեւ սահմանվում էր. «Ոչ մի արգելք չպիտի դրվի այդ համայնքների ներկայացուցիչներին եւ բնակիչներին սահմանն անցնելու համար»: Ապացուցելու հարկ չկա, որ այդ կետը խնդիր ուներ ապահովելու Հայաստանում բնակվող աղբբեջանցիների անխափան կապը Թուրքիայի հետ: 11-րդ հողվածը պարտավորեցնում էր ՀՀ կառավարությանը Բաքվից հեռացնել «հայկական ուժերը եւ ապահովել, որ այդ հեռացումը ոչ մի ընդհարման տեղիք չտա»: Ինչը նշանակում էր հարկադրանք, որ ՀՀ կառավարությունը դաշնակցեր Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ ընդդեմ Բաքվի կոմունան, որովհետեւ վերջինիս բանակը այդ «հայկական ուժերն» էին: Ու նաեւ Հայաստանի վրա էր դրվում հայ-աղբբեջանական հնարավոր բախման պատասխանատվությունը:

12-րդ հողվածը փաստորեն չեղյալ էր հայտարարում Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որովհետեւ այդ դաշնագրի միայն այն կետերն էին պահում իրենց ուժը, որոնք «չեն հակասում ներկա (Բաթումի) դաշնագրին»: 13-րդ հողվածը սահմանում էր գրավված տարածքներից, այսինքն՝ Բաթումի պայմանագրով Հայաստանին թողնված 9000 քառ. կմ, թուրքական բանակի դուրս բերելու կարգը:

Ստորագրվեցին նաեւ լրացուցիչ համաձայնագրեր եւ արձանագրություններ Հայաստանի ճանապարհների օգտագործման, հայկական բանակի անհապաղ գորացրման վերաբերյալ: Թուրքերին իրավունք էր վերապահվում ՀՀ պահելու կոմիսարներ փոխադրումների վրա վերահսկելու համար: Հայաստանը գրկվում էր բանակ պահելու իրավունքից:

Երբ Բաթումի պայմանագրի լուրը Հայաստան հասավ, բարձրացավ դժգոհության վիթխարի ալիք: Երեւանում հունիսի 3-ից սկսվեցին ցույցեր ու հանրահավաքներ եւ տեսեցին միմյանց հունիսի 13-ը:

Մինչդեռ այդ պայմանագիրը դրական երեւույթ էին համարում ոչ միայն թուրքերը, ոչ միայն ՀՀԴ, այլեւ ոչ փոքր թվով այլեւայլ հասարակական-քաղաքական գործիչներ: Ե. Գեղամյանցը գրում է. «Այս դաշնագիրը եղավ մի այլ եւ արդեն երրորդ անգամ, լավ առիթ ընծայելու հայ ազգին՝ տաճիկների հետ հաշտվելու»⁶⁰: Նա ծաղրում է հայ քաղաքական գործիչներին եւ մեջբերում կատարում Բաքվի Ազգային խորհրդի որոշումից. «Ստեղծվում է «անկախ Հայաստան»: Ազգային խորհրդի պատվիրակությունը Տաճկաստանի հետ խաղաղության պայմանագիր է ստորագրել եւ իրեն ժամանակավորապես հայկական գավառների «բարձրագույն» եւ « միակ» իշխանություն հայտարարել:

Կատարվել է այսպիսով մի ոճիր: Կատարվել է մի ակտ, որ ծաղր էր հայրուր հազարով զոհերի թափած արյան»⁶¹:

Խորհուրդն իրավացիորեն գտնում էր, որ հռչակված «Անկախ Հայաստանը», հակառակ հայ ժողովրդի կամքի, երկաթե շղթաներով կաշկանդում էր հայությանը, նոր պարան ձգում այդ տանջված ժողովրդի վիզը եւ վերջնականապես նրան հեռացնում Ռուսաստանից:

Այդ պայմանագրով Թուրքիային անցան Բաթումի մարզը՝ 6254, Օլթիի օկրուգը՝ 2621, Արդահանի օկրուգը՝ 4024, Կաղզվանի օկրուգը՝ 3843, Կարսի մարզը՝ 5083, Ախալցխայի գավառը՝ 2367, Ախալքալաքի գավառը՝ 2407, Սուրմալուի գավառը՝ 3147, Ալեքսանդրապոլի գավառից՝ 2540, Երեւանի գավառից՝ 1360, Շարուր-Ղարաբագյազի գավառից՝ 590 վերստ2 տարածություն:

Այսինքն՝ 1918թ. հունիսին արդեն թուրքերը Հայաստանից ու Վրաստանից գավթել էին 38.000 վերստ2 տարածություն 1.250.000 բնակչությամբ: Այդ բվում, Վրաստանից՝ 10.000 վերստը2 350.000 բնակչով, իսկ Հայաստանից 28.000 վերստը2 900.000 բնակչությամբ: Թուրքիային անցած տարածքներում կային 404.000 հայ, 218.470 մահմեդական, 14.240 վրացի, 12400 ռուս եւ 4150 ուրիշ ազգեր:

⁶⁰ Գեղամյանց Ե., նշվ. աշխ., էջ 107:

⁶¹ Ն.տ., էջ 108:

Երիտրուրքերը հափշտակեցին Անդրկովկասի տարածքի 20,6 տոկոսը, ազգաբնակչության՝ 18,5 տոկոսը⁶²:

Իգուր չէ ասված. «Այն, ինչ որ կատարվեց մեծ չափով Բրեստ-Լիտովսկում, կատարվեց ավելի փոքր չափով Տրապիզոնում եւ Բաթումում շնորհիվ Չիտենկելիների եւ Ռամիշվիլիների: Անհերքելի է, սակայն՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը հանդիսացավ Տրապիզոնի եւ Բաթումի դաշնագրերի պոստուլատը»⁶³:

Ստացվում է հետևյալ պատկերը. սկզբում թուրքերը լսել անգամ չէին ուզում ինքնուրույն Հայաստանի մասին. նրանք որոշել էին այն բաժանել իրենց ու ադրբեջանցիների միջև: Սակայն երկու գործոններ դա խափանեցին՝ հայության մայիսյան հերոսամարտերը եւ խաղաղության վեհաժողովում ձախողվելու վտանգը:

Պատմական գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել, թե հայկական պատվիրակները հայոց մայիսյան հերոսամարտերի մասին տեղեկացան պայմանագիրը ստորագրելուց հետո⁶⁴: Ճիշտ չէ: Նրանք այդ մասին գիտեին դեռ Թիֆլիսում եղած ժամանակ, որովհետեւ Սարդարապատի ճակատամարտի մասին Ազգային խորհուրդը հեռագիր ստացել էր:

Բաթումի հայ-թուրքական պայմանագիրը դասական առումով ոչ թե երկու կողմերի բանակցությունների արդյունք էր, այլ անճանաչուր լինելու ակտ՝ հայկական կողմին բեկաղոված թուրքերի կողմից, որը «դերձակի անողորմ կրատի վարպետությամբ կտրել-անցել էր գավառների, գավառամասերի, գյուղերի ու դրանց արտերի ու այգիների միջով: Նահանգի հարուստ եւ պողպատե տարածքները, որոնք նրա շտեմարանն էին, կտրում եւ խլում էին նրանից, ինչը հետագայում ստեղծում էր սովի եւ անիշխանության հեռանկար»⁶⁵:

Թուրքերը ստեղծում էին մի Հայաստան, որն ինքնուրույն ապրել չէր կարողանալու եւ մշտապես վասալական կախման մեջ էր լինելու Օսմանյան կայսրությունից:

Մարդկության պատմության մեջ դժվար է գտնել ուրիշ դեպք, երբ ռազմաճակատում հաղթած ազգը պայմանագիր է կնքել որպես պարտված, օկուպացված ազգ: Մինչեւ օրս էլ չի պարզված, թե հայկական պատվիրակությունն ինչու, ի՞նչ հարկադրանքի տակ շտապեց կնքել այդ կապիտուլյացիոն պայմանագիրը:

Բաթումում մուսավաթականները պնդում էին, որ Երեւանն ադրբեջանա-

⁶² Завриев Д., К новейшей истории северо-восточных вилайетов Турции. Тбилиси, 1947, с. 70-71

⁶³ Կարաջեան Գ., նշվ. աշխ., էջ 21-22:

⁶⁴ «Էրոշակ», 17.12.1997:

⁶⁵ Ն.ս.:

կան քաղաք է եւ պետք է տրվեր Ադրբեջանին, իսկ Հայաստանի մայրաքաղաք դառնար Էջմիածինը: Ադրբեջանական ուղեղն անընդունակ է որեւէ ինքնուրույն բան հղանալ, այն թուրակի նման կրկնում էր թուրքերին: Այս դեպքում էլ նույնն էր կատարվում: Արդու Համիդ 2-րդ սուլթանը դեռ 1890-ական թվականներին հայերին առաջարկում էր Էջմիածնից Նոր Բայազետ ընկած տարածքում ստեղծել անկախ Հայաստան Էջմիածին մայրաքաղաքով, դրա դիմաց խոստանալով Հայաստանի տրամադրության տակ դնել սեւծովյան Ռիզե նավահանգիստը: Այդ կարծիքը թուրք-ադրբեջանական շրջաններում լայն տարածում ուներ: Բաթումում Վեհիքը հայ պատվիրակներին ասաց, թե Արեւմուտքի դռներն այլեւս փակ են Օսմանյան կայսրության առաջ եւ նա հարկադրված է ծավալվել դեպի Արեւելք, որտեղ է «մեր արյունը, մեր կրոնը եւ լեզուն... Մենք պետք է ճամփա ունենանք դեպի մեր եղբայրները»: Հայերը կանգնած են այդ ճանապարհի վրա: «Դուք պետք է մի կողմ քաշվեք եւ մեզ ճանապարհ տաք: Մեր բանակի առաջ պետք է բաց լինեն հյուսիսում՝ Կարս-Ախալքալակ-Բորչալու-Ղազախ-Գանձակ, իսկ հարավում՝ Շարուր-Նախիջեւան-Չանգեզուր- Քոնի հովիտ ուղիները: Դուք կարող եք մնալ դրանց արանքում, այսինքն՝ Նոր Բայազետի եւ Էջմիածնի շուրջը»⁶⁶:

Նույն միտքն են արտահայտել նաեւ Բեհաեդդին Շաքիրն ու Խալիլը: Առաջինը Հայաստանին անվանում էր սեպ խրված Անատոլիայի եւ «փղեալ հայրենիքի» միջև, ընկած թուրքերի «համախալանական եւ համաթուրքական սրբազան իդեալների իրականացման ճանապարհի վրա»: Հետեւաբար, թուրքերի ու հայերի բախումն անխուսափելի էր: «Մենք հարկադրված ենք մեր ճանապարհին ոչնչացնելու այն ամենը, ինչ արգելք է հանդիսանում մեր ազգային սրբազան իդեալների (իրականացմանը)»⁶⁷:

Խալիլը 1918թ. օգոստոսի 31-ին Երեւանում Հայաստանի կառավարության հետ բանակցությունների ժամանակ ասաց. «Մենք ցանկանում ենք վերականգնել կապը մեր հայրենիքի՝ Թուրանի հետ եւ դրա համար ուզում ենք, որ մեր երկու հայրենիքներն իրար միացնող ճանապարհը ուրիշների տիրապետության տակ չլինի»⁶⁸:

Թուրքերը հռչակեցին, թե իրենք ստեղծեցին Հայաստանի Հանրապետությունը: Նրանք Հայաստանի Հանրապետություն չստեղծեցին, բայց նրա սահմաններն այնքան նեղացրին, որ ժամանակի քաղաքական գործիչները համահունչ պնդում էին, որ այդ Հայաստանը երկարակյաց լինել չէր կարող, նա այն-

⁶⁶ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 86:

⁶⁷ Ն.ս., էջ 77:

⁶⁸ Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Ե., 197, էջ 171:

պես էր հաշվված, որ անգոր էր լինելու բնականոն կենսագործնության համար: Այդ ընդունում էին նաև թուրքերը. «Մենք հայերին մատների վրա կխաղացնենք այնքան ժամանակ, քանի դեռ մեզ չի բավարարի զինվորներ ճակատի համար,- գրում է Վեհիբը,- իսկ հետո քրդերի ու բաթարների օգնությամբ նրանց կստիպենք խեղդվել այդ տուպրակում, որի մեջ նրանք նստած են»⁶⁹:

Կ. Պոլիս այցելած հայկական պատվիրակությանն Էնվերն ասել էր. «Թուրքական նախարարները երկու շաբաթ մտածում էին՝ ստեղծել թե չստեղծել Հայաստան եւ վերջապես որոշեցին ստեղծել, որովհետեւ այդպես ավելի ձեռնտու էր ինչպես հայերին, այնպես էլ թուրքերին»⁷⁰:

Հայ պատվիրակությունը նրան երաշխավորեց, թե ՀՀ Բաթումի պայմանագրի վերանայման խնդիր չի դնի, քանի որ «ընդունել ենք տաճկական օրինատացիա»:

Հասկանալի է, որ թուրքական թուրքիստական քարոզչությունը հսկայական ազդեցություն ուներ աղբրեջանական հետամնաց զանգվածների վրա եւ մեծ եռանդով էր օգտագործվում մուսավաթական ազգայնամուլների կողմից:

Արդյունքում աղբրեջանցիները դեմ էին Ռուսաստանին՝ անկախ վերջինումս տիրող վարչակարգից: Այդ գործում երկրորդական դեր չէր խաղում նաև հետեյալ հանգամանքը.

«Ազրպեյճանը ազգային գիտակցութեան եկավ եւ դաստիարակուեցավ Թուրքիոյ կողմէ, հասկցավ, թե ինք բաթար-թուրք է, իրեն ներշնչուեցավ համաթուրանականութիւնը եւ առնուազն իր եղբայրակիցներուն հետ միանալու ծրագիրը: Իր առջեւ փռուած է քարտեզ մը՝ մեկ Թուրքիա եւ մեկ Թաթարիստան... Այն եռանկիւն երկրամասը, Հայաստանը, որ սեպի մման ինկած էր Թուրքիոյ, իրեն եւ Պարսից Ատրպատականի միջեւ, արդեն վերցուած է Թալեաթի, Էնվերի միաներու ձեռքով, երեք ցեղակից լեզուակից ժողովուրդները բաժանող պատուար չէ մնացած գրեթե: Թուրքը կանգնած է Արաքսի եւ Արփաչայի ափը, Պարսից Ատրպատականը՝ Արաքսի ափը, իսկ ինքը՝ Ղարաբաղի բարձունքների եւ Բարկուշատի հովիտները: Ի՞նչ կը մնա տակավին, որպէսզի իրեն ներշնչուած թուրանականութիւնը խոշոր մասով իրագործուի՝ փոքր տարածութիւն մը միայն, փոքրիկ Չանգեզուրը եւ ոչինչ Երեսանը...»:

Ընդ որում՝ «Ատրպեյճան անունը պատրուակ է ծածկելու Արեւելեան Թուրքիա կազմելու ձգտումը: Ատրպեյճանի նպատակը չէ Ռուսիան հեռացնել՝ իր եւ Անդրկովկասի անկախութիւնը ձեռք բերելու համար, այլ Ռուսիան

⁶⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 11:
⁷⁰ «Չանգակ», 1918, N58-74:

հեռացնել իր եւ Անդրկովկասեան ժողովուրդներու ազատութեան տենչերը քաղելու եւ Թուրքիան հաստատելու մինչեւ Մեծ Կովկաս»⁷¹:

Հունիսի 8-ին Ս. Շահումյանը հեռագրեց Լենինին. «...Ազգային խորհրդի պատգամավորները ստորագրեցին հաշտության պայմանագիրը Թուրքիայի հետ, որով Թուրքիային են անցնում Ալեքսանդրապոլի եւ Երեւանի գավառների մեծ մասը, Նախիջեւանի, Ախալքալաքի գավառները: Էջմիածինը, Երեսանը, Աշտարակը... մնում են Հայաստանի սահմաններում: Սահմանագիծը մտավորապես անցնում է Չորանքյարա, Բոյուր Վեդի, Արփա: Արեւելյանը՝ դեպի Արեւմուտք Քասախ գետի ուղղությամբ ուղիղ գծով Էջմիածնից դեպի Արեւմուտք Արագածի գագաթով... Պարսկաստանում գտնվող գորամասերին ու գաղթականներին թույլ է տրված Ջուլֆայով անցնել Կովկաս... Ազգային խորհուրդը իրեն հայտարարել է Հայկական մարզերի միակ գերագույն իշխանություն... Թաթարների հետ բանակցություններ են վարվում տարածքները սահմանագատելու համար»⁷²:

ՀՀԴ Բաքվի պաշտոնաթերթ «Արեւը» 1918թ. հունիսի 9-ի համարում Բաթումի պայմանագրի առնչությամբ տպագրեց «Նոր դավադրություն» առաջնորդողը, որում ասվում է. «Մենք ամենաեռանդուն կերպով բողոքում ենք բոլոր նրանց դեմ, որոնք ուռնատակ են տալիս հայ ժողովրդի կամքն ու ուզում են անջատվել Ռուսիայի դեմոկրատիայից: Հաշտության այն պայմանը, որ կապել է Թուրքիայի հետ Թիֆլիսի Ազգային խորհուրդը, մատնության մի նորակտ է հանդիսանում, որի նպատակն է խորտակել կովկասյան ողջ դեմոկրատիայի միությունն ու մեր երկիրը սրի ու հրի մատնել... Մենք վճռակամորեն գտնում ենք, որ Կովկասի բոլոր ազգերի աշխատավոր մասսաները դեմ են Անդրկովկասի, Վրաստանի եւ Հայաստանի անկախության:

Վերջին խոսքն այժմ պատկանում է Բաքվի պրոլետարիատին, աշխատավոր գյուղացիությանը, արի կարմիր արմիային եւ դրանց գլուխը կանգնած խորհրդային իշխանությանը, որ պետք է զենքի ուժով ջնջխե բռնավորներին, դեսպոտներին ու մատնիչներին եւ հաստատե Անդրկովկասի կենտրոններում խորհուրդների իշխանության դրոշակը»:

Չնայած հայերի համար Բաթումի պայմանագրի աղետալի բնույթին, այն խախտում էին ոչ թե հայերն այլ թուրքերը: Թուրքական զորքերը մինչեւ հոկտեմբերի 18-ը շարունակում էին ասպատակությունները Հայաստանի հյուսիսային մասերում: 1918թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսպոլից գրում են. «Հայ գյուղացին այժմ ոչինչ չունի, կերակրվում է միայն կանաչով, արմտիքներով... Տա-

⁷¹ «Հայրենիք», 1928թ., հունիս:

⁷² Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 3, էջ 279-280:

ազգային խորհրդին. թե «մեր պատվիրակությանը հաջողվեց մի քիչ ընդլայնել մեր բանտի դռները եւ շահել 1300 կմ2 տարածք ու մի քանի ուրիշ բարենպաստ պայմաններ: Նաեւ հույս կա Կ. Պոլսում հետ ստանալու Ախալքալաքն ու Ալեքսանդրապոլը, անգամ Կարսը, Շիրակը մինչեւ Կաղզվան... Մեզ է մնալու Բորչալուի հայկական մասը... Ղազախի լեռնային մասերը... Ամբողջ Նոր Բայազետի գավառը: Մենք պահանջում ենք Դարալագյազի գավառը... Ավա Երեւան քաղաքը եւ նրանից յոթ վերստ հեռավորության վրա գտնվող կայաքանը, Էջմիածինը՝ Կարասու սահմանով, ամբողջ Ապարանը Արագածի գագաթի սահմանով...»

Տեղական բաթարները կարծում են, որ ի վերջո թուրքերը մեզ են թողնելու Սուրմալում»:

Համեմատեք այս նամակում շարադրվածը Կ. Պոլսում Ա. Ահարոնյանի եւ Ա. Խատիսյանի ասածների հետ: Էլ ինչպես են լինում բարոյական անկումն ու անպարկեշտությունը:

4. ԲԱԹՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Անհամաձայնությունը Բաթումի պայմանագրի հետ Բեռլինին մղեց Կ. Պոլսում հրավիրելու նոր խորհրդաժողով, նվիրված անդրկովկասյան պետությունների եւ Թուրքիայի «սահմանների վերջնական կարգավորմանը»: Իրական պատճառը Ադրբեջանին կաշառելն էր, նրանց թուրքերից հեռացնելը, այսինքն՝ հող նախապատրաստել Բաքվին տիրանալու համար: Այդ կաշառքը Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ մտցնելն էր: Հայտնի իրողություն էր, որ գերմանացիները տուն վերադարձող ռուսական զորքերից զենք էին գնում ադրբեջանցիներին զինելու եւ Բաքվի կոմունայի դեմ ուղարկելու համար:

Ենվերը փորձում էր բացատրել գերմանացիներին, թե Թուրքիան ինչու էր ձգտում նվաճել Կովկասը: Բրեստից հետո Ռուսաստանը հետ է քաշվել Կովկասից, գրում է նա, եւ չի ընդդիմանում թուրքական ծրագրի իրականացմանն այդ երկրամասում: Բացի դա, Անդրկովկասի անկախանալով Բրեստի պայմանագիրը կորցրել էր իր ուժը եւ պատերազմն ընթանում էր Կովկասի անկախ պետությունների հետ, որոնք Բրեստի խորհրդաժողովին ոչ մասնակցել էին եւ ոչ էլ պայմանագիր ստորագրել: Այդ պետությունները Թուրքիայի հետ պատերազմում պարտվել էին եւ ստիպված ընդունել այն պայմանները, որոնք թելադրվել էին «գերմանական զլխավոր հրամանատարության եւ գերմանական կառավարության հետ համաձայնեցված»

վերջնագրով» եւ Բ. Դուռը հավատարիմ էր մնում գերմանո-թուրքական պայմանավորվածությանը: Պայմանավորվածությունը պայմանավորվածություն, բայց թուրքերն այն ուղղությամբ չէին գնում, որով պիտի գնային: «Թուրքերը Կովկասում ունեցած իրենց պլանների իրականացմանը զոհաբերում են ամբողջ Արաբիան, Սիրիան, Պաղեստինը, որտեղ պետք է ծավալվեին նրանց բանակի գործողությունները, այլ ոչ թե Կովկասը», - բացականչեց Սանդերսը: Բերնսդորֆը նրան հանգստացնում էր, իսկ Լյուդենդորֆը խորհուրդ էր տալիս. «Միայն Անդրկովկասի նավթը կկարողանա ծածկել մեր կարիքները, պայմանով, եթե լուծվի այդ նավթի տեղափոխման հարցը»⁸⁰: Եվ նա երկու գումարտակ ուղարկեց վերահսկողության տակ առնելու Փոթի-Թիֆլիս երկաթգիծը, նաեւ մասամբ հանվեցին Քութայիսի-Բաթում երկաթգծի ռելսերը թուրքերի առաջխաղացումը խանգարելու համար⁸¹: Դա չէր կարող չհանգեցնել գերմանո-թուրքական բախման, որի ընթացքում գերմանացիներն ունեցան նաեւ մարդկային կորուստներ:

Բաթումից հետո Հայկական հարցի շուրջ հարաբերություններում առաջացավ տարօրինակ վիճակ: Ա. Ահարոնյանի գլխավորած պատվիրակությունը Կ. Պոլսում սիրախաղի մեջ էր թուրքերի հետ, նրանցից հայցում էր ճանաչելու ՀՀ, իսկ նույն ժամանակ Պ. Նուբարի պատվիրակությունը Հայկական հարցին ինչ-որ լուծում տալու խնդրանքով թակում էր Լոնդոնի եւ Փարիզի կառավարությունների դռները:

Կ. Պոլսում թուրքերը ՀՀ պատվիրակությունից հաշիվ պահանջեցին Պ. Նուբարի գործունեության համար: Ա. Խատիսյանը հարկադրված եղավ մատուցել ներկայացուցիչների միջոցով «թուրք հասարակությանը» հանգստացնել, թե միայն ՀՀ պաշտոնական պատվիրակությունն է իրավասու հայ ժողովրդի անունից հայտարարություններ անելու:

Նույն օրերին Կ. Պոլսի հայ մամուլը գրում էր, թե արեւմտահայությունն ընդհանուր ոչինչ չունեւ ՀՀ հետ եւ հավատարիմ էր թուրքական հայրենիքին: Այդ տրամադրությունների հանդեպ անտարբեր չմնացին նաեւ հայ պատվիրակները:

Ա. Ահարոնյանը Պոլսի թերթերից մեկի թղթակցին ասաց, թե կովկասահայերի հարցն էլ կարող է լուծվել միայն Թուրքիայի բարյացակամ վերաբերմունքի դեպքում: «Եվրոպական տերությունների բարեկամությունն ու հովանավորությունը շատ թանկ նստեցին մեզ, այլեւս նրանցից որեւէ օգուտ սպա-

⁸⁰ Wien HHSTA PAI 946, August 1918, N143990/4:

⁸¹ Ն.տ. PAX 157 Tiflis, 12.08.1918, N10/P.C.:

սել չենք կարող,- ասաց նա ու շարունակեց,- հույսով ենք, որ թուրքական կառավարություն մեր հանդեպ կգործի ներողամիտ եւ բարյացակամ»⁸²:

Այս ստորաբարձրությունը ինչ-որ մի շրջանում վերացվեց կուսակցական բնավորություն: Բեռնում ֆրանսիական դեսպանը տեղեկացրեց, թե «Բյուզանդիոն» եւ «Հայրենիք» թերթերը տպագրեցին Ա. Խատիսյանի հայտարարությունը. «Հայկական հարցի համար Թուրքիան պատասխանատու չէ, թե իրականում ճնշողներ չեն եղել եւ, որ միշտ էլ սադրիչները եղել են հայերը»: Դեսպանը նկատում է, որ թուրքական թերթերը հաճույքով էին արտատպում ՀՀ ներկայացուցիչների այս հայտարարությունները: Նաեւ գրում է, թե «Հայրենիքը» այնքան էր իրեն ստորացրել, որ հայտարարում էր, թե հայերի կենսական շահերը կապված են Թուրքիայի հետ: Թերթը տպել էր Կոնիայի մի հայի խոսքերը, որոնք փառաբանում էին թուրքական կառավարության արդարությունն ու ազատամտությունը եւ անիծում նրանց, ովքեր փչացրին հայ-թուրքական հարաբերությունները»⁸³:

Ընդունելով հայկական պատվիրակությանը, սուլթանն ասաց. «Հայաստանի անկախությունը թանկ է ինձ համար, եւ Հայաստանի կառավարությանը համարում եմ իմ հարազատ զավակը»: Դրան հետեւեց հայերի պատասխանը. «Եթե չլիներ սուլթանը, չէր լինի ազատ ու անկախ Հայաստանը»:

Խատիսյանի եւ Ահարոնյանի թուրքամետ ստորաբարձրությունը սահմաններ չէր ճանաչում: Թքել նույն այդ սուլթանի հայաջինջ քաղաքականության հարյուր հազարավոր զոհերի հիշատակի վրա եւ թուրքերի հետ համահունչ կրկնել հայերի ցեղասպանության արդարացման թուրքական բանաձեւը. «Երբ մենք Թուրքիոյ գոյութեան դեմ կը դավադրեինք, բնականաբար, ան չէր կրնար ձեռները ծալած անտարբեր մնալ: Ինքնապաշտպանութիւնը բնական է»⁸⁴, կարող են իրենց թույլ տալ միայն բարոյագուրկ պնակալեզւն ու փողոցային աճապարարը: Դա բավական չէր նորին վեհափառության «բարի ժպիտը» շահելու համար: Պահանջվում էր լրացուցիչ խոստովանություններ ու զոհողություններ եւ ամենից առաջ հրաժարվել Արեւմտյան Հայաստանից: «Ճակատագիրը մեզի կուտայ միայն գոյութիւն մը Կովկասի մեջ, որուն համար պարտական ենք Թուրքիոյ: Ասիկա հպարտութիւն մըն է, որ կարելի չէ ծածկել, որ պետք է նոյնիսկ հրապարակավ եւ երախտագիտությամբ հայտարարել»⁸⁵:

⁸² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7:

⁸³ Beyerlian A., նշվ. աշխ. փաստ. NN655,656,657:

⁸⁴ Ժամկոչեան Ա., նշվ. աշխ., էջ 55:

⁸⁵ Ն.տ.:

Թալեաթն ընդունելով հայկական պատվիրակությանը ճգնում էր իր վրայից դեն նետել ցեղասպանության պատասխանատվությունը: Դիմելով հայ պատվիրակներին ասաց՝ դուք ինքներդ կհամոզվեք, թե «ինչպես երբեմն պաշտոնյաները կամայական կերպով կաղավաղեն վերեն եկած հրամանները»: «Մեր թշնամիները ռուսներն էին,- շարունակեց նա,- բայց երբ անոնք իրենց հրացանները կը պարպեին մեր զինուորներու վրայ, անոնց փամփուշտները կը դիպչեին մեր զինուորներուն ոտներուն: Իսկ երբ սկսան կրակել թրախապտակ հայերը, իրենց հայրենիքի դավաճանները, այն ատեն փամփուշտները կդիպչեին մեր զինուորներու սրտին»:

Ենվերը շատ ավելի ուղղակի պատասխանեց հայերի բարձրացրած հարցերին: «Արտաքին նկատառումները մեզ թույլ չեն տար,- ասաց նա,- որ ազատութիւն տանք գաղթականներուն (հայ) վերադառնալ մեր գրաված շրջանները, տեղական մահմեդականները չեն ուզեր զանոնք տեսնել, եւ չեմ կրնար երաշխավորել անոնց կեանքը... Եվ յետո, չէ՞ որ հայերը դեռ պատերազմ կմղեն մեզի դեմ: Բարվի մեջ անոնք կազմակերպած են բանակ մը եւ կը կռվին, ինչպես նաեւ Զանգեզուրի մեջ Անդրանիկը կշարունակե պատերազմի մեր դեմ: Մենք չենք կրնար մտածել սահմաններու (Հայաստանի) ընդարձակութեան մասին... Ես եւ իմ ընկերներս ստեղծեցինք Հայաստանը եւ ատով գոհացում տուինք հայերու ազգային ձգտումներուն եւ լուծեցինք Հայկական հարցը: Միեւնույն ատեն մենք այդ ըրինք Թիւրքոյ սահմաններն դուրս, ռուսական հողին վրայ եւ ունեցանք երկու հաջողութիւն. ա) Ստեղծեցինք Հայաստան եւ բ) Անվթար պահեցինք Թիւրքոյ հողը: Միայն այդ գնով է, որ մենք համաձայնեցանք հաշտվիլ Հայկական հանրապետութեան գոյութեան հետ: Այդ ինչպե՞ս կարելի է այժմ պահանջել, որ նոր հոռամասեր կցենք Հայաստանին...»:

Ենվերը նաեւ ասաց, թե Հայաստանին չի վստահում: Նա պահանջեց դաշինք կնքել, կռվել Թուրքիայի թշնամիների դեմ, պաշտպանել թուրքերի բիկունքը, հակառակ դեպքում բացառվում է Հայաստանի տարածքային խնդիրների բննարկումը: Այսինքն՝ Ենվերը ձգտում էր Հայաստանին լծել իր համաթուրանական ծրագրերի իրականացման կառքին, ինչն առաջին հերթին ուղղված էր հայ ժողովրդի դեմ:

Իհարկե, Կ. Պոլսում լավ էին հասկանում, որ այդ խնդիրն անհնար էր լուծել՝ մեծ եղեռնը փակել էր հայ-թուրքական համերաշխության դռները:

Հայերի հակաթուրք կողմնորոշումն արտահայտություններ ունեցավ 1918թ. տեղի ունեցող մի շարք իրադարձություններում՝ Բարվի կոմունա,

Անդրանիկի կոիվները Նախիջեանում ու Ջանգեզուրում, Պ. Նուբարի եւ Հ. Օհանջանյանի պատվիրակությունների գործունեությունը Եվրոպայում, ՀՀ խորհրդարանի կողմից Բաթումի պայմանագրի չվավերացնելը եւ այլն: Այդ պետք է, որ հասկանալի Մ. Ահարոնյանն ու Ա. Խատիսյանը, բայց չհասկացան: Նրանք Թուրքիայի ԱԳ նախարար Նեսիմին հայտնեցին, թե համաձայն են Էնվերի առաջարկին՝ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ չեղոքության եւ բարեկամության պայմանագիր կնքելու վերաբերյալ: Ա. Խատիսյանը նաեւ գնաց ոչ գեղեցիկ քայլի: Նա շրջաբերական ուղարկեց գերմանական կոալիցիայի երկրների կառավարություններին խնդրանքով՝ ճանաչել ՀՀ, որպես փաստարկ նշելով Բաթումի պայմանագրով Հայաստանի անկախության ճանաչումը:

Ա. Ահարոնյանը «Գազանին հետ դեմ առ դեմ» հուշագրությունում պատմում է իթիհադի ակումբում իր հանդիպումը Բ. Շաքիրի հետ, որն ասաց. «Մեր մեջ պատահածը ի՞նչ է՝ պարզ թիրիմացություններ... Այո՛, հավատացե՛ք ինձ, առանց մեծ պետությունների անդադրում, չարամիտ միջամտությունների, հաշտ ու սիրով պիտի ապրեինք կողք-կողքի, որպես եղած է անցյալում...»⁸⁶:

Ա. Ահարոնյանի հարցին, թե ի՞նչ եղան հայ մտավորականները, Բ. Շաքիրը պատասխանեց. «Ա՛հ պատերազմի դաժան, անողորմ անհրաժեշտություն... ինչպե՛ս կարող եք դուք նրանց մահվան մասին խոսել: Ինչպե՞ս են գործում ձեր շրթներն այդ բառն արտասանել... Ակնհայտ է, պարզ է... որ մեր տեղական իշխանությունները դիտմամբ աչք գոցեցին եւ թողին, որ նրանք ազատ անցնեն ավելի հեռուները, իրանց ընտրած վայրերը... եւ անշուշտ այդ մարդիկ հիմա ողջ-աողջ ապրում են ամեն մեկը որեւէ արաբի մոտ...»⁸⁷:

Դեգերումները օսմանյան մայրաքաղաքում ակնհայտ ժամավաճառություն էին: Դա Մ. Բարաջանյանին մղեց սեպտեմբերի 28-ին պատրիարքարանում հայտարարելու, թե ճիշտն այն է, որ ՀՀ կառավարությունը պատվիրակություն ուղարկի Մոսկվա՝ «բոլշևիկյան կառավարության հետ հարաբերություններ հաստատելու համար»⁸⁸:

Ի դեպ, հայկական պատվիրակության թուրքամետ կեցվածքը անհանգստացրեց Երեսանին: Խորհրդարանի 1918թ. նոյեմբերի 5-ի նիստում հնչեց առաջարկություն. «...Հիմնովին փոխել մեր արտաքին քաղաքականությունը, հետ կանչել Կ. Պոլսում գտնվող պատվիրակությանը եւ նոր պատվիրակու-

⁸⁶ Մապունճեան Ջ., Հրայ ֓ափազեան, Բեյրութ, 1987, էջ 32-33:

⁸⁷ Ն.տ., նշվ. աշխ., էջ 36-37:

⁸⁸ ՀՀ ԿՀԶՊԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 252:

թյուն ուղարկել, որը պետք է ձեւավորվեր խորհրդարանի խմբակցությունների մասնակցությամբ»⁸⁹:

Թուրքական իշխանություններին նույնպես ձանձրացրել էր հայ պատվիրակների անբան բրեւ գալը Կ. Պոլսում եւ որոշեցին նրանց նույնպես օգտագործել իրենց խորտակվող նավը փրկելու՝ դառնալ միջնորդ Թուրքիայի եւ դաշնակիցների միջեւ:

Երբ ծովային նախարար Ռեուֆը պատրաստվում էր մեկնելու Մուդրոս գիմադարի բանակցություններին մասնակցելու, հայերին ասաց. «Այս գիշեր ես պիտի երթամ անգլիական ծովակալին մոտ գիմադար կնքելու, կառաջարկեմ Ձեզ ալ անոր մոտ երթալ ինձ հետ միասին: Թող անգլիացիները տեսնեն, որ մենք հաշտուած ենք. չէ՞ որ խորհրդաժողովի համար շատ կարեւոր է իմանալ, որ թուրքերն ու հայերը այլեւս վեճ չունին իրարու հետ»:

Բայց չհաջողվեց օսմանյան խորտակվող նավը փրկել: Դրա փոխարեն հոկտեմբերի 5-ին Երեսանում օսմանյան բանակի արեւելյան ռազմաճակատի շտաբի պետ Բասրին եւ հայկական բանակի շտաբի պետ Ջենկելիչը ստորագրեցին արձանագրություն թուրքական զորքերը Հայաստանի տարածքից դուրս հանելու վերաբերյալ: Այդ զորքերի դուրս բերումը սկսվեց հոկտեմբերի 24-ին:

Խատիսյանը գրում է. «Պետք է նկատի ունենալ, որ թուրքերը շատ կը վախենային Հայկական հարցին ապագայ խորհրդաժողովին մեջ: Այդ մասին լսած եմ Ռեուֆ բեյեն, Վեհիպ փաշայեն, Խալիլ բեյեն, Էնվեր փաշայեն եւ շատ մը ուրիշ թիրք գործիչներ»:

Նա իր հուշերում վերադառնում է Թալեաթի խոսքերը. «Էնվեր փաշան կզտներ՝ քանի որ հայերը եղած են եւ պետք է միշտ ըլլան մեր թշնամիները ու հանգիստ պիտի չթողուն մեր Անատոլիոյ նահանգները, ավելի լավ է, որ հիմնապես բնաջնջուին անոնք նաեւ Կովկասի մեջ, ինչպես եղած են Թիւրքոյ մեջ: Իսկ փոքր Հայաստան մը Կովկասի մեջ պատճառ պիտի դառնայ, որ միշտ ձգտի ընդարձակելու յուր սահմանները եւ դառնայ հավիտենական վտանգ Թիւրքիոյ համար: Իսկ ես պատասխանեցի, որ այդ ծրագիրն անկարելի մըն է բեկուզ այն պատճառով, որ այսպես թե այնպես երկու միլիոնի չափ ողջ մնացած հայեր կան այժմ եւ անհնար է զանոնք բոլորն ալ ոչնչացնել, ուստի ավելի լավ է, որ անոնց գոհացում տրվի, որովհետեւ եթե նույնիսկ 100.000 հայեր մնան աշխարհի երեսին մեզի հանգիստ պիտի չտան երբեք: Եվ, վերջապես, փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ մենք լուծած կըլ-

⁸⁹ «Կառավարական լրագիր», 1918թ., N18:

լանք Հայկական հարցը եւ այդպէս կը ներկայանանք հաշտութեան միջազգային խորհրդաժողովին»:

Փոքրիկ Հայաստան ունենալու ոչ թե թալեաթյան, այլ աբդուլ-համիդյան միտքը հաստատել է նաեւ Կարաբեքիրը Ալեքսանդրապոլում: Նման մտտեցում թուրքական այս կամ այն գործչի անձնական տեսակետը չէր, այլ ընդհանուր քաղաքական կողմնորոշում, փաստարկ, որ թուրքերն օգտագործում են նաեւ մեր օրերում: Իսկ Լոզանի խորհրդաժողովում Իսմէթ Ինյունյուն չորս ամսում ամենատարբեր առիթներով 32 անգամ կրկնեց, որ Հայաստանի հանրապետության ստեղծումը վերջնականապէս լուծեց Հայկական հարցը:

Կ. Պոլսի ներկայացուցչական խորհրդաժողովն այդպէս էլ չկայացավ: Թալեաթի պահանջով խորհրդակցության հավաքվեցին միայն Քառյակ զինակցության պետությունների ներկայացուցիչները, այսինքն՝ Անդրկովկասի հանրապետությունների եւ լեռնականների ներկայացուցիչները զրկվեցին դրան մասնակցելու իրավունքից:

Մինչեւ Բեռլին մեկնելը Թալեաթը սեպտեմբերի 3-ին հայկական պատվիրակության անդամներին խոստացավ «Բեռլինում ձեռքից եկածն անել Հայաստանի անկախությունը ճանաչելու համար»⁹⁰: Բայց երբ հասավ Բեռլին եւ լսեց, որ ռուս-գերմանական լրացուցիչ պայմանագիրն արդեն ստորագրվել է, «այնպէս վրդովվեց, որ մինչեւ անգամ ուզում էր նույն րոպեին վերադառնալ Պոլիս»⁹¹:

Կովկասի հարցերի շուրջ սեպտեմբերի 5-ին Վիեննայում եւ սեպտեմբերի 8-ին Բեռլինում տեղի ունեցած խորհրդակցություններում Թալեաթը հանդես եկավ անդրկովկասյան հանրապետությունների ճանաչման, բայց նաեւ դրանք ազդեցության գոտիների բաժանման օգտին. Վրաստանը՝ Գերմանիայի, իսկ Հայաստանը, Ադրբեջանը եւ Հյուսիսային Կովկասը՝ Թուրքիայի ազդեցության տակ: Թալեաթը դա բացատրում էր նրանով, որ Թուրքիան չէր ցանկանում «ընդհանուր սահման ունենալ Ռուսաստանի հետ»:

Հինցեն Թալեաթի կովկասյան քաղաքականության մասին ասում է. «Վրաստանը (Թուրքիային որոշ տարածքներ զիջելու դեպքում), Հայաստանը եւ Ադրբեջանը պետք է Ռուսաստանի հանդէպ կազմավորեն բուֆերային պետություն: Բարուն պետք է մտնի Ադրբեջանի կազմի մեջ: Ադրբեջանը պատրաստակամ լինի երաշխավորել, որ Գերմանիային կտրամադրի նավթ: Նա ունի նոր պլան՝ ռազմական առումով կազմակերպել Թուրքեստանը (որտեղ

⁹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 9:

⁹¹ Ն.տ., գ. 1, գ. 17:

նրա խոսքերով ապրում է 14 միլիոն մուսուլման), որպեսզի իբր հնարավոր լինի մասնակցելու Անգլիայի եւ Ռուսաստանի դեմ պատերազմին»⁹²:

Թալեաթը Չխենկելուն համոզում էր. «Հայերի հետ ինքներս կկարգավորենք մեր գործերը. եթե գերմանացիները չմիջամտեն, մենք դեռ Բարունում կվերջացնենք բոլոր խնդիրները, չնայած հայերի հանդէպ վստահություն չունեն»⁹³:

Թալեաթը խաղում էր աներեւակայելի անամոթ եւ, նույնքան աներեւակայելի հաջող: Նույնիսկ եվրոպական դիվանագիտության առաջին ջութակի վրա նվազողներն էին շփոթված: «Թալեաթ փաշան այնքան հիմնովին է փոխել իր դիրքորոշումը հայերի հանդէպ, որ այստեղ նույնիսկ չեն հավատում, որ Տաճկաստանի քաղաքականությունը կարող է այդքան արմատական փոփոխություն կրել եւ կարիք են զգում զգուշորեն վերաբերել նրա խոսքերին»⁹⁴:

Անգամ Լոսովին էր թվում, թե իրենց հաջողվել է Անդրկովկասի հարցում Թալեաթին տրամադրել զիջումների: «Ինչպէս երեւում է,- գրում է նա,- Թալեաթը համոզվում է, միայն պայման է դնում, որ դա կատարված լինի Թուրքիայի ազատ կամքով, իբր մի շնորհ Թուրքիայի կողմից վրաց եւ հայ ժողովուրդներին...»⁹⁵:

Ի դէպ, Եվրոպային խաբելու գործում Թալեաթին մեծ ծառայություն մատուցեց Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակությունը: «Թալեաթը ժողովներում (Բեռլինի եւ Վիեննայի) միշտ ասելիս է եղել,- գրում է Լոսովը,- թե հայերի հետ ինքը խոսել է. նրանք քիչ պահանջներ ունեն եւ տաճիկների ու հայերի միջեւ խնդիրները հեշտությամբ էին լուծվելու»: Լոսովը դրան առարկել է, թե հայերը «Պոլսում ուրիշ կերպ չեն կարող խոսել, բայց ուրիշ տեղ, որտեղ կարող են ազատ խոսել, նրանցից ուրիշ բաներ ենք լսում»⁹⁶:

Թալեաթի այդ խաղերի դրդապատճառները մեկից ավել էին: Ա. Էմինը թուրքական «Վաքթը» թերթի 1918թ. սեպտեմբերի 3-ի համարում ուշագրավ միտք է արտահայտում. «Եթե մենք ցանկանում ենք պաշտպանել հայերին, ապա ոչ այն պատճառով, որ նրանց սիրում ենք, այլ այդ են պահանջում մեր շահերը: Թուրքիան հնարավորություն կունենա խաղաղության վեհաժողովում հայտարարել, թե անցյալը հետեւանք էր կործանարար քաղաքականու-

⁹² "Армянский вопрос...", с. 573-574:

⁹³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 180:

⁹⁴ Ն.տ.:

⁹⁵ Ն.տ.:

⁹⁶ Ն.տ.:

թյան... մենք այժմ ՀՀ հետ իսկական բարեկամներ ենք... Անկախ Հայաստանը մեզ համար վտանգ չի ներկայացնում... ավելի հեշտ է հաշիվ մաքրել անկախ Հայաստանի հետ, քան արտասահմանյան պետությունների հովանավորության տակ գտնվող հայերի հետ... Հայաստանը իբրև պետություն նեղ կծառայի թուրքիայի և Ռուսաստանի միջև, իր գոյությունն ապահովելու համար հարկադրված կլինի օգտվել թուրքիայի տարածքից... ծովային, թե ցամաքային ուղիներից... Այդպիսով, քաղաքական առումով Հայաստանը մեր տրամադրության տակ կլինի»⁹⁷:

Ա. Խատիսյանը, չնայած ուրիշ բառերով, կիսում էր Ա. Էմինի կարծիքը: Նա 1918թ. նոյեմբերին դեմ արտահայտվելով Ռուսաստանի հետ մերձեցմանը, ասում էր. «Մենք եւ թուրքերը այժմ մեկս մեկու կարիքն ունենք եւ պետք է լավ հարաբերություններ ունենալ նրանց հետ»: Նա սիրով համաձայնվեց Էմինի առաջարկին՝ պաշտպանել թուրքիայի «արեւելյան թիկունքը», ասելով, թե Հայկական հարցի լուծման գործում ինքը թուրքերի ցանկությունից ավելի մեծ բան է սպասում, քան որեւէ ուրիշ պետության, այսինքն՝ Ռուսաստանի⁹⁸: Պատահական չէ, որ «Յառաջը» 1920թ. նոյեմբերի 20-ին հնչեցրեց նաեւ Ա. Վրացյանի «մարգարեությունը»: «Մեր դարավոր բշմամբն, Տաճկաստանը կարող է ի վերջո հաշտվել մեր պետության գոյության հետ միայն այն ժամանակ, երբ մենք մի անգամ ընդմիջտ կիրառարվենք ռուսական օրենսդրությանը...»:

Վրացյանի մի այլ ձայնափող «Ազատ Հայաստանը» գրեց. «Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը...»⁹⁹: 1921թ. մարտի 9-ին Ա. Վրացյանը գրում է. «Տաճիկների հետ մեր հարաբերությունները լավ են, հույս ունենք անկեղծ բարեկամություն հաստատել... Մեր միակ վտանգն այժմ հյուսիսից է, որի համար պետք է միանա հարավի բոլոր ժողովուրդները»¹⁰⁰:

Ռուբենը, Վրացյանը ժանտախտ էին եւ վարակել էին հայոց պետականության կառույցները: 1919թ. փետրվարի 4-ին ՀՀ ԱԳ նախարար Ա. Տիգրանյանը գրում է վարչապետին, թե ՀՀ կարիք ունի «գորեղ հովանավորի» եւ այդ հովանավորին պետք է տրամադրել «հատուկ դիրք եւ որոշ իրավունքներ Հայաստանի ներքին կյանքում»: Խորհրդարանի խոսնակ Սահա-

⁹⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 220, ց. 1, գ. 644:

⁹⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, գ. 12:

⁹⁹ «Ժողովրդի ձայն», 27.06.1921:

¹⁰⁰ Ն.տ., 22.06.1921:

կյանը դիմելով Հասկելին ասաց, թե հայերի «հոգու լույսը ծագում է... բարեկամ Ամերիկայից»: Իսկ Խատիսյանն Անգլիայի ներկայացուցչին հավաստիացնում էր, թե Հայաստանը ֆինանսական օգնությունը կփոխհատուցի իր «բնական ճոխ հարստություններով եւ հայ ժողովրդի ստեղծագործական կարողություններով»¹⁰¹:

ՀՀԳ դիվանագետների առաջին սերնդի գործունեությունը Ա. Խատիսյանին հասցեագրած նամակում Անդրանիկը բնութագրում է հետեւյալ կերպ. «Երբ ընկերներուդ հետ Տրապիզոն կը մեկնեիր թուրքիոյ հետ դաշնագիրը ստորագրելու, ինչո՞ւ այդ դաշնագրեն վերջ Բաբում գացիր եւ Վեհիբ փաշային հանձնեցիր Հայաստանի ճամբաները, երկաթուղիները, ռազմամթերքները... Օսմանյան զինուորներուն ալ աջակցութիւն խոստանալով... եւ անպատվութեան խարանով մթագնեցիր հայ ճակատը եւ բարի անունը... (սպա գնացիր Կ. Պոլիս) ըմնելով սուլթան Ռեշատի ոտքին եւ մեկ միլիոն անմեղ հայերու արեան մեջ հրճուող սրտեն «հայրական գութ»... հայցելով: Ի՞նչ սրտով կամ ի՞նչ հոգով քեզ ընկերակցող Ա. Ահարոնյանը ծունկի եկած օսմանեան գահին յառաջ՝ «Օսմանեան կայսրութեան հայրական գուրգուրանքը միշտ եղած է հայ ժողովրդին հանդէպ եւ կը հուսանք, որ ասկէ վերջ ալ պիտի ըլլայ» ըսավ: Այս ստրուկ բառերուն դեմ սուլթան Ռեշատի խրոխտ եւ արհամարհական խոսքերն են, որ կը հնչեն. «Սթափուեցա՞ք եւ խելքներնիդ գլուխնիդ եկա՞՞վ, սակայն ուշ մնացիք»¹⁰²:

Գերմանիան անօրինական համարելով Բաբումի բանակցությունները, որովհետեւ դրանց չէին մասնակցել Բրեստի պայմանագիրը ստորագրած կառավարությունները, նպատակահարմար համարելով Կ. Պոլսում խորհրդածոցով հրավիրել եւ քննարկել Կովկասի հարցերը եւ դրան մասնակից դարձնել նաեւ Ռուսաստանին եւ Ուկրաինային, խնդիր էր հետապնդում թուրքիային հարկադրել կատարելու Բրեստի պայմանագիրը: Զյուլմանը գրում է Կ. Պոլսի իր դեսպանին. «Բոլոր կողմերից՝ Վատիկանից, Իսպանիայի թագավորից, Շվեյցարիայից, ինչպես նաեւ հենց մեր այստեղ եղած հայոց ազգային խորհրդի պատվիրակներից մեզ կոչ է արվել օգնել հայերին եւ մենք պատասխանատու ենք այն ամենի համար, ինչ պատահի նրանց հետ... Թուրքերը. հակառակ իրենց խոստումների, Կովկասում ամենուր իրականացնում են հայերի ոչնչացում»: Անհրաժեշտ համարվեց հարկադրելու թուրքիային «ոչ միայն կատարելու իր խոստումները՝ անհապաղ դադարեցնի հարձակումը, այլև իրական երաշխիքներ ստեղծի՝ արդեն գրավված

¹⁰¹ ՀՀ ԿՀՔԿԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 375:

¹⁰² «Զոր. Անդրանիկի Կովկասեան...», էջ 193:

մարզերում հայերին պաշտպանելու բաշխվածությունների, խուժանների հարձակումից... ամբողջ քաղաքակիրթ աշխարհը բողոքում է Թուրքիայի եւ նրա դաշնակիցների դեմ»¹⁰³:

Չնայած գերմանական իշխանությունները դեմ էին, որ հայկական պատվիրակությունը այցելեր Բեռլին, Հ. Օհանջանյանը եւ Հ. Չուրաբյանը հունիսի 3-ին հասան Գերմանիայի մայրաքաղաք: Երկու օր անց նրանց ընդունեց ԱԳ նախարար Ռոզենբերգը, որը հավաստիացրեց, թե ձեռնարկված են միջոցներ, որպեսզի թուրքերի կողմից գրավված տարածքներում հայերն անվտանգ լինեին: Այս պատվիրակությունը Բեռլինում մնաց հինգ ամիս եւ Քառյակ գիւնակցության կառավարություններին ներկայացրեց մոտ 30 հուշագիր եւ տեղեկանք, որոնցում բարձրացվում էին ՀՀ ճանաչման, թուրքական զորքի առաջխաղացում եւ կոտորածներ թույլ չտալու, ՀՀ ռազմական եւ մարդասիրական օգնություն ցույց տալու եւ մնան այլ հարցեր:

Պատվիրակությունը կազմեց եւ գանազան միջոցներով եվրոպական պաշտոնական շրջաններում տարածեց Հայաստանի քարտեզը, այն տպագրվեց նաեւ Պ. Ռոհրբախի ամսագրում: Հրատարակվեց մի գրքույկ, որում ամփոփված էին Հայկական հարցին առնչվող հուշագրեր, քարտեզներ, տեղեկանքներ, չնայած գերմանական իշխանությունները «շատ հակառակ են, որ մի ուրեւեւ բան տպագրվի տաճիկների դեմ»¹⁰⁴:

Պաշտոնական Բեռլինը հակասությունների մեջ էր, քանի որ թուրքերի գործողությունները թե նրա օգտին էին եւ թե դեմ: Որ թուրքերը հայկական տարածքներին տիրանալով շարժվում էին դեպի Ջուլֆա անգլիացիների դեմ, նրա օգտին էր, բայց որ ձգտում էին տիրանալ Բաքվին, դեմ էր նրա պլաններին: Դրա համար էլ խուսանավում էր, շատ հաճախ իրավիճակը խեղաթյուրված ներկայացնում: Ռայխստագում Գ. Շտրեգեմանը հայտարարեց. «Երեկ պետական քարտուղարն ասաց, որ Բաթումը, Կարսը, Արդահանը հաշտության պայմանագրով անցնում են Թուրքիային: Դա ամբողջությամբ ճիշտ չէ: Այն զինագրավում է, որին անմիջապես պետք է վերջ տրվի եւ վերականգնվի նախկին վիճակը»:

Կայզերի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում Լյուդենդորֆը հայտարարեց, թե Կովկասում ամենակարեւորը նավթի հարցն է եւ պետք է գործել անհապաղ, քանի դեռ Նուրին չի շարժվել Բաքվի վրա: Այդ ժողովում նաեւ առաջարկություն հնչեց, թե ավելի ճիշտ կլիներ, եթե Բաքուն մնար բոլշեիկներից, քան անցներ թուրքերին, պայմանով, որ Ռուսաստանը

¹⁰³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 644:

¹⁰⁴ Ն.տ., գ. 656:

նավթ մատակարարեր Գերմանիային: Վիլհելմին դուր չեկավ ոռոսամետ այդ կարծիքը, եւ ժողովը փակեց համաձայնարականով՝ «Թիֆլիսում ստեղծել հակառուսական կենտրոն»¹⁰⁵:

Ամերիկահայերի մանդատով Բեռլին է գնում նաեւ Ավ. Իսահակյանը եւ հանդիպումներ ունենում գերմանական պաշտոնատարների հետ: Նա գրեց, թե Գերմանիան «հայերին օգնելու մեջ միայն մի շահ ունի՝ մորալ, բարոյական, որը սակայն այնքան չի կշռվում, դժբախտաբար, քան մարզանցը կամ նավթը»: Նա մեջբերում է կատարում Ռիխտերից. «Գերմանիան չի կարող թույլ տալ, որ մի ամբողջ ազգ ոչնչանա...» եւ ավելացնում է, թե այդ ու նման հայտարարություններն այլ բան չեն, եթե ոչ դիվանագիտական մարզանքներ:

Այնուամենայնիվ, գերմանական քաղաքագետները տարբերակներ էին առաջ քաշում Անդրկովկասում վիճակը կայունացնելու եւ այդ տարածքում Գերմանիայի շահերի անվտանգությունն ապահովելու համար:

Կրեսի կարծիքով տվյալ պահին Հայկական հարցի լուծման հնարավոր տարբերակը մեկն էր՝ «Օսմանյան կայսրությունն անհապաղ հետ է քաշում իր զորքերը Հայաստանից, թույլ է տալիս փախստական հայերին վերադառնալու իրենց հայրենիք, երաշխավորում է, որ հայերը կարող են հավաքել բերքը՝ առանց որեւէ արգելքի կամ վտանգի նրանց կյանքին եւ ունեցվածքին, իսկ այն հայերը, ովքեր աշխատանքային գումարտակներ են ուղարկված հարկադրաբար, անմիջապես ազատ արձակվեն ու վերադառնան հայրենիք»¹⁰⁶:

Բերնսդորֆը Կ. Պոլսից գրում է. «Այստեղ հայկական պատվիրակությունն ամեն օր խնդրում է Հայաստան ուղարկելու գերմանական կամ ավստրո-հունգարական ջոկատներ, զինագրավել Հայաստանը: Առանց մեր միջամտության հնարավոր չէ ճնշել անիշխանությունը Հայաստանում: Ահարոնյանը ներկայացրել է հուշագիր մեծ վեզիրին Հայաստանի վիճակի մասին: Թալեաթ փաշան արել է սովորական հայտարարություն՝ դա հնարավոր չէ»: Հինգն անհանգստացավ. «Գերմանացիների ազդեցությունն Արեւելքում խիստ կթուլանա, երբ 0,5 միլիոն քրիստոնյաները մեռնեն քաղցից»¹⁰⁷:

Սակայն նաեւ ակնհայտ էր, որ Գերմանիան չէր ուզում օգնել Հայաստանին՝ ստիպել թուրքերին հեռանալու գրաված տարածքներից, իբր «շատ էր վախենում, որ Թուրքիան կարող էր միանալ Անգլիային եւ Ֆրանսիային, որի հետեւանքով կազատվեր Համաձայնության երկրների մոտ մեկ միլիոնանոց զորքը, որ նրանք պահում էին Թուրքիայի դեմ տարբեր ռազմաճակատներում:

¹⁰⁵ "Советско-германские отношения...", т. 1, с. 269:

¹⁰⁶ Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 92:

¹⁰⁷ "Deutschland und Armenien", s. 414:

Գերմանիան վերցրեց Վրաստանի հովանավորությունը, բայց հրաժարվեց նույն անել նաև Հայաստանի համոզեալ և խորհուրդ տվեց, որ վերջինիս հովանավորությունը վերցնել Ավստրո-Հունգարիան: Այդ առաջարկությունը Վիեննայում առաջացրեց թեր և դեմ մոտեցումներ: Դեմերը պատճառաբանում էին, թե Հայկական հարցը բարդ է ու անշահավետ: Երկու երկրների միջև բացակայում է անմիջական կապը, ինչը բարդություններ է առաջացնելու Հայաստանում զորքեր պահելու հարցում: Հայաստանը հրապուրիչ չէ նաև տնտեսական առումով, աղքատ երկիր է, առանց երկաթուղու: Հայաստանն ունի լուծում պահանջող բազմաթիվ բարդ խնդիրներ:

Բայց գերմանացիները պնդում էին իրենց առաջարկի վրա, ամենատարբեր փաստարկներով հիմնավորում այն:

Շայնեի կարծիքով, «միակ տերությունը, որը... կկարողանար ստանձնել Հայաստանի հովանավորությունը, Ավստրիան էր»¹⁰⁸:

ՀՀ հովանավորության տակ առնելը նշանակում էր նրան օգնել մահմեդական հրոսակների դեմ պայքարում, փախստականների պարենավորման և ՀՀ de fakto ճանաչելու գործերում:

Հայաստանի կառավարությունը դիմեց Վիեննային՝ Հայաստան ուղարկել «մի քանի ավստրո-հունգարական զորամասեր», որոնք նույն դերն էին կատարելու, ինչ գերմանական զորքերը Վրաստանում: Այս առաջարկը Դանուբի ավերին ոգետությունը չընդունեցին, պատճառաբանելով, թե այն հիմնահարցեր էր ծնելու Թուրքիայի, իսկ հետագայում՝ նաև Ռուսաստանի ու Գերմանիայի հետ: Այդ կապակցությամբ ստեղծված մի փաստաթղթում ասված է. «Հիրավի, սա Կովկասյան Մակեդոնիա է, կարծում եմ, հազիվ թե հարմար դառնալու կայսրության առաջին գաղութը»: Փաստաթղթի հեղինակն առաջարկում էր. «...Թուրքերին թողնել իրենց սահմանների կարգավորման գործը», առանց դրանց թուրքերին պատկանելի պայմանագրով ձեռակերպելու և սահմանափակվել հնարավորին չափ տնտեսական առավելություններ ստանալով, ինչպես նաև քրիստոնյաներին պաշտպանելով¹⁰⁹:

Հուլիսի 30-ին Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակությունը վերը նշված բովանդակությամբ մի նոր հուշագիր հանձնեց Ավստրո-Հունգարիայի Կ. Պոլսի նորանշանակ դեսպան Սիլիասին, որը գրեց Վիեննա. «Զրուցակիցներիս դատողություններից ստացա տպավորություն, թե խառը տնտեսական հանձնաժողովն անգամ իր ներկայությամբ կարող է որոշակի խոչընդոտ հան-

¹⁰⁸ Wien HHSTA PAX 157, Wien, 02.09.1918, N403:

¹⁰⁹ Wien HHSTA PAX 946, August 1918, k.u.k. AOK, N143990/4:

դիսանալ թուրքերի բարբարոսության դեմ»¹¹⁰: Երեսան ուղարկվեց Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ Ֆրանկենշտայնը:

Վիեննան իր ներկայացուցչին տեղյակ պահեց, թե զորքեր Հայաստան ուղարկել հնարավոր է երկու նախապայմանով՝ համապատասխան մասնակցություն շահույթներ ստանալուն, գերմանական և ավստրո-հունգարական ռազմական ուժերի համատեղ գործողություններ թե Վրաստանում և թե Հայաստանում: Վիեննան իրեն պահովագրում էր Թուրքիայի զայրույթից և համոզված էր, որ անգամ իր զորքերի Հայաստանում գտնվելու ժամանակ էլ գազանությունները բացառված չէին: Չորք ուղարկելու դեմ էր ավստրիական բանակի գլխավոր շտաբը՝ պատճառաբանելով, թե դա մեծ ծախսեր էր պահանջում¹¹¹:

Երբ Կարսը հանձնվեց թուրքերին, Ավստրո-Հունգարիայի կայսրը սուլթանին սրտանց շնորհավորեց «օսմանյան քաջարի զորքի կողմից Բերդի գրավման առթիվ»¹¹²:

Հավանաբար Վիեննայում գերակշռողն այս կողմնորոշումն էր: Դրա համար էին ամենատարբեր պատրվակները Հայաստան գորք ուղարկելուց ձեռնպահ մնալու համար: Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպանը օգոստոսի 20-ին գրում է. «Թուրքիան Հայաստանը համարում է իր կողմից ստեղծված mirabile doctu և, հավանաբար, հարկ է սպասել, թե ինչպես է (օսմանյան) կայսրության ներկայացուցիչը Երեսանում մտնելու քննույթ մանկաբարձուհու դերի մեջ: Մակայն չեմ կարծում, թե թուրքական իշխանություններն իրենց սեփական ստեղծագործությանն անկատամբ միայն մաքիավելական մտադրություններով են տոգորված: Ընդհակառակը, կարծում եմ, որ ոմանք, այդ թվում և մեծ վեզիրը (Թալեաթը), շատ ցավում են հայերի դեմ կատարված գազանությունների համար: Եթե ոչ այդ, ապա աշխարհի հանրային կարծիքի պատճառով և նոր պետական կազմավորման մեջ ստեղծի հայերից մեկուսանալու և նրանց տնտեսական ճնշումից պաշտպանվելու հնարավորություն են տեսնում... (արքայազնը) ինձ ասաց, թե թուրքահայերի տեղահանումը ռազմական տեսակետից միանգամայն հիմնավորված էր, միայն խայտառակություն է, որ այն առիթ է տվել գազանությունների համար»¹¹³:

Բնականաբար, Մոսկվան լավ հասկանում էր, որ անդրկովկասյան հանրապետություններ ստեղծելու վերմանիան հետապնդում էր ռուսականին

¹¹⁰ Ն.տ. 157, Pera, 31.07.1918, N453:

¹¹¹ Ն.տ. Berlin, 13.09.1918, N32734:

¹¹² Wien KMA 69-18/5, Reichenan, 27.04.1918, N2905/MK.S.N:

¹¹³ Wien HHSTA PAX 157, Pera, 29.08.1918, N506:

հակադիր տնտեսական ու քաղաքական շահեր ու դեմ էր արտահայտվում այդ անկախությանը եւ, սովորաբար, որպէս փաստարկ օգտագործվում էր ՀՀ: Ասվում էր, որ այդ պետությունը շատ փոքրիկ է ինքնուրույն գոյատեւելու համար: Բերնսդորֆը համաձայնվելով ռուսական փաստարկի հետ, առաջարկեց Հայաստանը մտցնել Վրաստանի կազմի մեջ, ի դեպ, նա այս առաջարկությունն արեց Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակությանը:

Վիեննան դեմ արտահայտվեց, պատճառաբանելով, թե քանի դեռ Ռուսաստանը հավակնություն ունի Հայաստանի հանդեպ, նշանակություն չունի՝ նա անկախ է, թե Վրաստանի կազմում¹¹⁴:

Բեռլինում Թալեսթը կարծիք հայտնեց, որ խաղաղության բանակցություններում բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ էր Հայկական հարցը լուծել մինչեւ պատերազմի ավարտը: Հայերը դեմ էին օգոստոսի 27-ի ռուս-թուրքական համաձայնագրին, որովհետեւ այն ճանաչելով միայն Վրաստանի անկախությունն անհավասար վիճակի մեջ էր դնում անդրկովկասյան պետություններին, ինչը կարող էր ավելի սրել նրանց հարաբերությունները: Դրա համար էլ Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակությունը ավստրիական դեսպանի միջոցով խնդրեց Վիեննայի միջնորդությունը, որ Ռուսաստանը ճանաչեր Հայաստանի անկախությունը: Պատասխանը միանշանակ էր՝ Ռուսաստանն այդ անկախությունը կճանաչի, եթե Թուրքիան հետ քաշվի մինչեւ Բրեստի պայմանագրով որոշված սահմանագիծը¹¹⁵:

Հենց այդ օրերին էլ Պ. Նուբարը հայտարարեց, թե չի ճանաչում ՀՀ: Դա առաջացրեց համընդհանուր զայրույթ: Չայներ հնչեցին, որ նա այլևս իրավունք չունեի գլխավորելու Ազգային պատվիրակությանը:

Այս իրավիճակում ՀՀ հանդեպ ուշադրությունը մեծացավ: Եթե մինչեւ այդ Վիեննայի կառավարության անգամ միջին օղակների չինովնիկներն էին հրաժարվում ընդունել Հ. Օհանջանյանի գլխավորած պատվիրակությանը, ապա հոկտեմբերի 7-ին նրան Վիեննա հրավիրեցին ընդունելության ԱԳ նախարար Բրիանի մոտ, որին Հ. Օհանջանյանը հանձնեց հետեւյալ հուշագիրը:

Հայկական պատվիրակությունը Վիեննայից խնդրում էր Հայաստան ուղարկել ընդամենը երկու գումարտակ (2500-3000 զինվոր), 1-2 մարտկոց, հիվանդանոց, հրաձգային ջոկատ, հեծյալ էսկադրոն, ռադիոկայան, մեկ ավտոշարասյուն, օդանավային ջոկատ: Թույլտվություն Ավստրո-Հունգարիայում ու Գերմանիայում գտնվող հայ ռազմագերիներին վերադառնալու տուն: Նաեւ Վիեննայի օգնությունն էին հայցում աջակցելու Հայաստանի արտաքին հարա-

բերությունների ձեւավորմանը, պայմանագրերի կնքմանը, ինչպէս նաեւ Հայաստանը մաքրելու թուրքական զորքերից եւ հարկադրելու թուրքերին հավատարիմ մնալ Բրեստի պայմանագրին՝ մասնավորապէս սահմանների հարցում:

Հայերը Վիեննայից խնդրում էին՝ պաշտպանության տակ վերցնել Հայաստանը եւ այնտեղ «անվտանգություն հաստատել, վերականգնել կարգ ու կանոնը եւ այն իր վերահսկողության տակ առնել»:

Դրանց դիմաց Հայաստանը Ավստրո-Հունգարիային մատակարարելու էր հումք, պատրաստական էր նրա տրամադրության տակ դնել իր քաղաքական եւ առեւտրական հնարավորությունները: Տարեկան Հայաստանում արտադրվում էր երկու միլիոն փոք բամբակ, 200.000 փոք պղինձ, մեծ քանակությամբ բուրդ, կաշի, մետաքս: ՀՀ համաձայն էր, որ Հայաստանում եւ հայերից կազմակերպվեի ռազմական ուժեր եւ դրանք օգտագործվեի երկու կողմերի կարիքների համար, նկատի ունենալով, որ Հայաստանն ուներ քսան հազարանոց բանակ եւ 80.000 հայ էլ ծառայում էր ռուսական բանակում¹¹⁶:

Բրիանի հետ երկրորդ հանդիպման ժամանակ (16.09.1918թ.) Օհանջանյանը կրկնեց նույն խնդրանքները, ավելացնելով Երեսնում Ավստրո-Հունգարիայի ներկայացուցչություն բացելու հարցը:

Բրիանը սիրալիի խոսքեր ասաց, բայց նաեւ գզուշացրեց, թե հայերը պետք է հաշտվեն թուրքերի հետ: Ինչ վերաբերում էր տարածքային խնդիրներին, ապա Վիեննան դրանք լուծել չէր կարող, որովհետեւ, նախ՝ չէր ճանաչել Բրեստի դաշնագիրը եւ, երկրորդ՝ այդ հարցերը քննարկվում էին Բեռլինում ընթացող խորհրդաժողովում:

Ահա եւ բոլորը: Դրա փոխարեն Պոմյանկովսկին ասաց, թե «Վիեննան դեմ չէր լինի իր երցիեթոզներից մեկին տեսնելու հայոց գահի վրա»¹¹⁷:

Վիեննան կայսերական ցնորքների մեջ էր՝ անհաղորդ հայության շարունակվող եղեռնին:

Իզուր էին Հ. Օհանջանյանի ջանքերը Ավստրո-Հունգարիայի դեսպանի գուրը շարժել՝ նրան «տեղյակ պահելով», որ Բաքվում «կոտորվել են հազարավոր խաղաղ հայեր, այդ թվում անվանի մտավորականներ, կանայք, երեխաներ ու ծերեր, նրանց բնակարանները կողոպտել են, բանտերը լցված են հայերով, որտեղ նրանք շարունակում են ենթարկվել սարսափելի տանջանքների: Թաթարները պնդում էին, որ իրենց թույլ էր տրված երեք օր շարունակ սպանել ու թալանել: Ինչն արվել է հիմնավորապէս»¹¹⁸:

¹¹⁴ Wien HHSTA PAX 157, 02.09.1918, N403:

¹¹⁵ Ն.տ. Baden, 06.09.1918, N32536:

¹¹⁶ «Кавказское слово», 28.09.1918:

¹¹⁷ Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 295-296:

¹¹⁸ Wien HHSTA PAX 157, Berlin, 30.10.1918, N2118:

Ավստրո-Հունգարիայի կառավարությանն օգնության խնդրանքով դիմեց նաև կաթողիկոսը, որին Բրիտանը պատասխանեց. «...Հայտնի պատճառներով Հայաստանին հացով օգնելու մասին խոսք լինել չի կարող, մյուս կողմից, ծայրահեղ կարիքի մեջ գտնվող քրիստոնյա ժողովրդի օգնության կանչն անտեսելը անհամատեղելի է Բ. Դռան ավանդությունների հետ...»¹¹⁹:

Նույն ժամանակ Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի հավատարմատարը նորից հայտարարեց, թե իրենց զորքերի ժամանումը Հայաստան առճակատում է առաջացնելու Վիեննայի եւ Մոսկվայի ու Կ. Պոլսի միջեւ: Դրա հետ միասին Պոմյանկովսկին հայ փախստականների հարցով գրույց ունեցավ Էնվերի հետ եւ առաջարկեց իրենց բնակավայրերը վերադարձող հայերին գոնե սննդամթերքով օգնել, որ չմեռնեն սովից ու ցրտից¹²⁰:

Հարկ ենք համարում փոքր-ինչ հանգամանալից անդրադառնալ հայթորքական հարաբերություններին 1918թ. կեսերին կապված Հայկական հարցի հետ:

Լոսովը մայիսի 29-ին Բեռլինին տեղեկատվություն հաղորդեց Չխենկելիի հետ իր մայիսի 15-ի հանդիպման մասին: Չխենկելին «թաթարական շրջաններում թուրքական քարոզչությունը վտանգավոր համարեց Կովկասյան միության հետագա գոյության համար, քանի որ ամրացնում էր թուրքերի թիկունքը նրանց արտակարգ մեծ պահանջները բավարարելու համար: Եթե տարածքային անչափ մեծ պահանջները... շարունակեն առաջ քաշել վերջնագրի ձեւով, ապա բանակցությունները դադարեցվելու են եւ անպայման դրան կհետեւի Կովկասի պետությունների միության քանդվելը, ինչը կհանգեցնեք թաթարական տարածքները Թուրքիային անցնելուն, նրա կողմից երկրամասի ճանապարհների գրավմանը եւ բռնի ներխուժմանը Հայաստան, որը հայերի համար կնշանակեր, ամենից առաջ, պայքար ոչ թե կյանքի, այլ մահվան համար, իսկ վրացիների համար՝ մեկուսացում»: Չխենկելին խնդրեց Վրաստանը մտցնել գերմանական կայսրության կազմի մեջ ինչ կարգավիճակով, որ վերջինս նպատակահարմար կգտներ: Նա նաև ասաց, որ եթե թուրքերի ծրագրերն իրականանան, ապա հայերի «կյանքը վտանգի մեջ է եւ շուտով կհետեւեն Վրաստանի օրինակին... Հնարավոր է, որ ավելի ուշ թաթարները նույնպես ձգտեն միավորվելու Գերմանիայի հետ», գտնելով, որ Թուրքիային միանալը կխոչընդոտի իրենց զարգացմանը: Ապա ավելացրեց. «Անդրկովկասի հիմ-

¹¹⁹ Ն.տ. Wien, 19.09.1918, s. 130:

¹²⁰ Ն.տ. Baden, 24.09.1918, N33035:

նահարցի նման լուծումը՝ Գերմանիայի տիրապետության տակ անցնելը ամենալավագույն տարբերակը կլինեք»¹²¹:

Մայիսի 31-ին Բերնադորֆն անդրադառնալով այդ խնդրին, գրեց, որ Անդրկովկասի միության փլուզումից հետո, այլ ելք չկա, եթե ոչ Վրաստանին եւ Հայաստանին վերցնելը «գերմանական զորքերի պաշտպանության տակ»: Ինչ վերաբերում է Հայաստանի անկախությանը, ապա Թուրքիան բոլոր հնարավոր եւ անհնար միջոցներով կխանգարի դրան, որովհետեւ չի ուզի «իր սահմանի վրա ունենա մահացու բշնամու», եւ չի սխալվում, որովհետեւ որտեղ հայերը մեծամասնություն են, ոչնչացնելու են թուրքերին, իսկ որտեղ թուրքերն են մեծամասնություն, ոչնչացնելու են հայերին¹²²:

Հաջորդ օրը նա հեռագրեց, թե Էնվերն ասել է իրեն, որ Խալիլը անջատ պայմանագիր է կնքել Վրաստանի եւ անջատ՝ «Հարավկովկասյան հանրապետության», այսինքն՝ հայերի ու թաթարների հետ¹²³:

Մայիսի 31-ին Թուրքիան Վրաստանից պահանջեց հանձնել Ախալցխան եւ Ախալքալաքը եւ վրացական ողջ երկաթուղին տրամադրել Թուրքիային ռազմական բեռներ տեղափոխելու համար: Վրացիների հույսը Բեռլինում Չխենկելիի վարած բանակցություններն էին:

Թուրքական սպաներն անցան հրոսակների գլուխ, գրավեցին Սադախուլու կայարանը: Թուրքերն անգամ գերմանական զինվորներին թույլ չէին տալիս անցնելու Սանահին եւ Քոլազիրան գծով: Գերմանական ռազմական իշխանությունները Վեհիբից պահանջեցին հեռանալ այդ շրջանից: Նկատի ունենալով թուրքերի սանձարձակ կեցվածքը գերմանական հրամանատարությունը հարց բարձրացրեց իր կառավարության առաջ՝ չճանաչել Բաթումի պայմանագիրը:

Նույն օրը Քյուլմանը գրեց կանցլերին. «Մենք պատասխանատվությունից խույս տալ չենք կարող, որովհետեւ Բրեստը բացեց թուրքերի ճանապարհը դեպի Կարս ու Բաթում: Թուրքերը չեն կատարում իրենց խոստումները եւ պլանաչափ իրականացնում են Կովկասում հայերի բնաջնջման քաղաքականություն...»¹²⁴:

1918թ. հունիսի 3-ին կանցլերի հրավիրած խորհրդակցությունում Լոսովն ասաց, որ Թուրքիան շահագրգռված է Բաթումով, Կարսով եւ Արդահանով, որովհետեւ այնտեղ գտել են պղինձ եւ այլ հանքային հանածոներ. «Անդրկով-

¹²¹ R 7308, Ab. 22774:

¹²² Ն.տ., 23259:

¹²³ Ն.տ., 23308:

¹²⁴ R 14100 Ab. 23533:

կասի արեւելյան մասում (Բաքու եւ Ելիզավետպոլ) Թուրքիայի համար կան համախալսական շփման հին կետեր՝ ամբողջ Կովկասը իրենց դարձնել... որպէսզի բալանի երկիր»:

Հետաքրքիր է Լոսովի հետեւյալ միտքը՝ Բրեստի պայմանագրի խախտումը թուրքերը պատճառաբանում էին նրանով, թէ իբր ռուսները շատ ուշ ազատեցին տարածքները: Դա ճիշտ չէ, ասաց նա, օրինակ, «Կարսը հանդիսավոր ձեւով, առանց մարտի տրվեց թուրքերին: Թուրքական հաղորդագրությունը, թէ իրենք գրավել են Կարսը, կեղծիք է»:

Լոսովը Կովկասում գերմանո-թուրքական հակասության տնտեսական պատճառը համարում էր Թուրքիայի կողմից Հայաստանի հարուստ շրջաններին (մինչեւ Երեւան) տիրանալը եւ տնտեսական վերահսկողությունը Անդրկովկասում ու Բաքու տանող երկաթուղու վրա: «Իսկ այդ ամենին գերմանացիների մասնակցության մասին ոչ մի խոսք: Խալիլն ամենուրեք հավակնում է գերիշխանության եւ համաձայն է մեզ վաճառել միայն մնացորդները»¹²⁵:

«Անդրկովկասցիները պատրաստ էին ամեն ինչի, միայն թէ Գերմանիան դառնար պայմանավորվող կողմ: Սակայն թուրքերն այդ մերժեցին... Նրանց պահանջները գնալով աճեցին, հասան մինչեւ Հյուսիսային Կովկասի հանդեպ հավակնության:

Երկրամասը հարուստ է: Շատ բան կարելի է դուրս քաշել... Կոստանցիայից Փոթի կամ դրանից հյուսիս ընկած լեռները դեպի Հնդկաստան ամենակարճ ճանապարհն է:

Քյուլմանն ասաց, թէ թուրքերը շատ անհույս, անպարտաճանաչ են: «Էնվերն արկածախնդիր է, փայփայում է նապոլեոնյան երազներ, ցանկանում է վրեժխնդիր լինել կովկասյան նախկին խայտառակության համար: Թալեաթն ուզում է ազատվել իր հասցեին հաճախ հնչող հանդիմանանքից՝ կիսատպատություն եւ թուլություն:

Հարկ է կնքել պատերազմական ժամանակի պայմանագիր կովկասցիների, մասնավորապէս վրացիների հետ, որոնք մյուսներից համեմատաբար պետական առումով լավ են կազմակերպված եւ տալ համաձայնություն կայսերական հովանավորության:

Թուրքերը պլանավորում են հայերի նոր ջարդ, որի մասին մենք Կ. Պոլսին խստորեն զգուշացրել ենք:

Այնուամենայնիվ, եթէ կովկասցիները բախտ ունենան ազատվելու Մեծ Ռուսաստանից, մեզ համար իրավիճակը զգալիորեն կլավանա»:

¹²⁵ Պոտսդամի կենտրոնական արխիվ, RK 2458/9:

Գերմանացիներին հետաքրքրում էր Բաքվի եւ Գրոզնու նալին ու մերձկասպյան բամբակը:

Ի դեպ, Էնվերը 1918թ. հունիսին հեռագրում է Լյուդենդորֆին, թէ Գարաքիլիսայի ճակատամարտում թուրքերի դեմ կռվին մասնակցել են գերմանական հատուկ նշանակության երկու ջոկատներ, որոնց թուրքերը գերի են վերցրել ու զինաթափել: Էնվերը կարծում էր, որ դա արվել էր Լոսովի նախաձեռնությամբ, ինչը «վրացիների ու հայերի մեջ հույս առաջացրեց, թէ կովկասյան խնդրում Թուրքիան եւ Գերմանիան միասնական չեն»¹²⁶: Նա հավաստիացնում է, որ թուրքերն «այլեւս շահեր չունեն Վրաստանում, բայց մեր եւ արեւելքում բնակվող մահմեդական զանգվածների միջեւ տեղավորված են հայերը, հանգամանք, որ մեզ մղում է չմնալ դիտորդի դերում»¹²⁷:

Լոսովը հունիսի 13-ին հեռագրեց. «Թուրքերը ազատում են Վրաստանի հարավը»: Թուրք սպաները հրահրում են տեղական բաթարներին հայերի հանդեպ չարագործությունների: Թուրքական բանակը շարժվում է դեպի Բաքու:

Գերմանական սպաները պատմում էին, թէ ինչպես են հարկադրել թուրքերին ազատելու Ալեքսանդրապոլի հարավում ընկած մի տարածք: Վեհիբը գենրով կանգնեցրեց գերմանացիների հարձակումը¹²⁸:

Գերմանիայի ԱԳ նախարարությունում կայացած մի ժողովում Լոսովը հետեւյալ կերպ ներկայացրեց Բաթումի բանակցությունները: «Առաջին ընդհանուր նիստին թուրքերը ներկայացրին պահանջներ, որոնք շատ ավելի մեծ էին, քան մինչեւ այդ նրանք պահանջել էին: Թուրքերը ցանկանում են լինել պայմանավորվող միակ կողմը: Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն այլեւս բանակցությունների հիմք չէր, քանի որ կովկասցիները ռազմական դիմադրություն են ցույց տվել Կարսի, Արդահանի եւ Բաթումի գրավմանը: Պահանջ առաջ քաշվեց սահմանի հետագա ուղղման մասին: Տնտեսության բնագավառում թուրքերը ձգտում էին անպայման գերիշխանության եւ ցանկանում ամբողջ երկաթուղու շահագործումը վերցնել իրենց ձեռքը: Գերմանիայի մասնակցությունը հանգեցվում էր նրան, որպէսզի որոշ թվով գերմանացի սպաներ թուրքական հանդերձանքով օգտագործվեին երկաթուղու շահագործման մեջ...»

Կովկասի ներկայացուցիչները հենց որ ստացան տեղեկություններ թուրքերի պահանջների մասին, անմիջապէս երես թեքեցին Թուրքիայից եւ սկսեցին փնտրել մեր աջակցությունը: Նրանք մեզ դիմեցին առաջարկով, որպէսզի Կովկասը ինչ-որ ձեւով (զաղութ, դոմինիոն) միացվեր Գերմանիային: Այդ

¹²⁶ R 14100 Ab. 24688:

¹²⁷ Ն.տ.:

¹²⁸ R 7310, Ab. 27170:

նույն ժամանակ բուրբերը իրենց գործակալների միջոցով գործում էին Անդրկովկասի մուսուլմանական շրջաններում: Նուրի բեյին եւ նրա սպաներին հաջողվեց ստանալ vox populi Թուրքիային միանալու խնդրում: Թաթարները սկսեցին անջատվել Անդրկովկասի հանրապետություններից եւ պատվիրակներ ուղարկել Խալիլի մոտ, Թուրքիային միանալու պահանջով: Քանի որ ես չէի կարող բացեիքաց խոչընդոտել բուրբերին, իսկ մյուս կողմից, չէի կարող պաշտպանել նրանց պահանջները, կովկասցիները աստիճանաբար այն մտքին հանգեցին, որ ոչ թե գերմանացիները, այլ բուրբերն են Քառայակ զինակցության առաջատար տերությունը»:

Գրանից հետո Վրաստանն ու Ադրբեջանն իրենց անկախ հայտարարեցին, իսկ «հայերը սպասողական կեցվածք որդեգրեցին, քանի որ վախենում էին, որ հակառակ դեպքում լրիվ ոչնչացվելու էին:

Փոքիում գերմանացի պատերազմական գերիներից ես կազմակերպեցի մի քանի հարյուր հոգանոց զորամաս: Այդ գերիները պաշտպանեցին երկաթուղային շինությունները մինչեւ Ալեքսանդրապոլ եւ ապահովեցին մեր շահերն այդ երկրում»: Եթե բուրբերը պլանավորեն հարձակում Ադրբեջանի վրա, ապա Բաքում-Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղին նրանց անհրաժեշտ է:

Քյուլմանը համաձայնվելով բերված փաստարկների հետ, միաժամանակ ասաց, որ պատերազմը շարունակվում է եւ «մեր հարաբերությունները Թուրքիայի հետ չպետք է ենթարկվեն ոչ մի լուրջ փոփոխության... իհարկե, շատ դժվար կլինի Թուրքիային հետ պահել իր պլաններից, քանի որ դրանց կրողը հենց ինքը՝ Էնվերն է»:

Լոսովն ասաց, թե Վեհիբը մի քանի անգամ հայտարարել է, թե ինքը դեմ է հետագա հարձակմանը, նա նաեւ հավաստիացրել է, թե «հանդիսանում է հայերի ոչնչացման թշնամի: Ալեքսանդրապոլ մտնելու նախօրյակին նա հրաժարական տվեց, բայց Էնվերն այն չընդունեց: Այնպես, որ նա Էնվերի հետ չէ»:

Քյուլմանը, թե «Բաքվի գրավումը կարող է վճռական հետեւանքներ ունենալ գերմանո-ռուսական հարաբերությունների վրա», մանավանդ, որ հայերը հայտարարել են, թե մինչեւ բուրբերը գրավեն Բաքուն, իրենք կոչնչացնեն բոլոր սարքավորումները, իսկ Գերմանիան այդ չի ուզում: Լոսովը պատասխանեց, որ հայերն այդ չեն անի, եթե Բաքուն գրավեն գերմանական զորքերը:

1918թ. հունիսի 3-ին կանցյելը Հերտլինգի մոտ տեղի ունեցած նիստում Լոսովը հայտարարեց. «Անդրկովկասի արեւելյան մասում Թուրքիայի համար կան շփման հին պանթուրքիստական կետեր: Կա ամբողջ Կովկասին տիրելու ցանկություն... երկիրը թալանելու համար: Ակնառու են երեք ուժեր. 1) Էնվերի

թիկունքում կանգնած է նոր բուրքական ինպերիալիզմը, 2) Թալեարի կառավարող կուսակցությունը, որը ձգտում է բնաջնջել բոլոր հայերին ոչ միայն Թուրքիայում, այլեւ նրա սահմաններից դուրս: Խալիլը հավասարակշիռ է, բայց ոչ վճռական, 3) Հալիպոլիսում ֆինանսական վճռորոշ ուժը՝ հզորացող գոչերի կլիկը: Այդ ուժը, թերեւս, ամենահարուստն է: Գերմանիային փորձում են գործի մեջ քաշել, սակայն հետետղականորեն նրանից բարցնում են Կովկասում իրապես կողմնորոշվելու ամեն մի հնարավորություն: Անդրկովկասի եւ Թուրքիայի միջեւ հաշտությունը, ըստ Խալիլի, բուրբերին կտա ամբողջ Հայաստանը, ընդհուպ մինչեւ Երեւանի եւ Էջմիածնի մատույցները, նաեւ տնտեսական գերիշխանություն Անդրկովկասում եւ Բաքվի երկաթուղու նկատմամբ: Գերմանիայի մասնակցության մասին ոչ մի բառ»¹²⁹:

Թուրքական հավակնությունների դեմ եռանդուն քայլերի դիմեց Լյուդենդորֆը, որը մայիսի 15-ին Սեկտին հանձնարարեց՝ «Էնվեր փաշային անհապաղ հետ պահել այն պահանջներից, որոնք Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված տարածքների շրջանակների մեջ չեն մտնում»¹³⁰: Նա ձգտում էր բուրբերին Բաքվի ուղղությունից շուտ տալ դեպի հարավ: Հինգ օր հետո նորից հեռագրեց. «Ես կրկնում եմ իմ պահանջը՝ բուրբերը պետք է իրենց ուշադրությունը դարձնեն Պարսկաստանի ու Միջագետքի վրա»¹³¹, որտեղ անգլիացիներն են: Էնվերը հակառակ կարծիքին էր՝ Թուրքիայի հայացքը պետք է հառված մնա Արեւելքին¹³²:

Լյուդենդորֆն Սեկտից համառորեն պահանջում էր ամեն ինչ անել, որպեսզի «Թուրքիան դադարեցնի իր ռազմական գործողությունները Անդրկովկասում» եւ սպառնում էր, որ եթե Թուրքիան Գերմանիայի համար «դժվարություններ հատուցի Կովկասում... ապա նա չպետք է հուսա, որ մենք կարող ենք... հետագայում նրան վերադարձնել իր կորցրած տարածքը», այսինքն՝ Միջագետքը¹³³:

Էնվերի պատճառաբանություններին ու սակարկություններին նա պատասխանեց. «Չեմ ցանկանում թարցնել իմ զարմանքը, թե իբր գերմանական հրամանատարությունն է դարձել Կովկասում ծագած տարածայնությունների պատճառը: Թուրքիան իրեն ինքնուրույն է պահում, անտեսում դաշնակիցներին եւ Բրեստի պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում են Անդր-

¹²⁹ “Армянский вопрос и геноцид армян...”, с. 512-514:

¹³⁰ Muhlmann C., նշվ. աշխ., s. 200:

¹³¹ Ն.տ., s. 198:

¹³² Ն.տ., s. 199:

¹³³ Ն.տ., s. 198-199:

կովկասին... Եթե Թուրքիան չհարգի Բրեստի պայմանագրով որոշված սահմանները, Գերմանիան իրեն ազատ կհամարի հետագա գործողություններում: Գերմանիան չի ճանաչում Թուրքիայի եւ Անդրկովկասյան պետությունների միջեւ այն պայմանագրերը, որոնք կնքվել են շրջանցելով Գերմանիային, Ավստրիային եւ Բուլղարիային»¹³⁴:

Գերմանիան Վրաստանի եւ Հայաստանի կառավարություններին մղում էր շվավերացնելու Բաթումի պայմանագիրը: Գործին միջամտեց Հինդենբուրգը, որը հունիսի 9-ին Էնվերից պահանջեց դատարկել Անդրկովկասի այն տարածքները, որոնք գրավել է խախտելով Բրեստի պայմանագիրը:

«Առաջին անգամ,- արձանագրեց Բյուլմանը,- գերմանո-թուրքական քառամյա եղբայրության խզման վտանգ առաջացավ՝ Կովկասյան քաղաքականության մեջ ծագած հակասությունների պատճառով... Գործը բացահայտ խզման ու պատերազմի չհասավ... պատերազմի մյուս ճակատներում եղած իրավիճակի պատճառով»¹³⁵: Բավության նոխազ դարձվեց Վեհիբը: Նա հունիսի վերջերին բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնից ազատվեց եւ նրա տեղը նշանակվեց Էսադը, որը սերտ հարաբերությունների մեջ էր գերմանացիների հետ: Թուրքերը նաեւ պարտավորվեցին հրաժարվել Բաքվի նկատմամբ ունեցած հավակնություններից¹³⁶: Բայց միայն առերես, որովհետեւ նկատի ունենալով, որ Գերմանիայի զինվորականների թիվը Անդրկովկասում 6000-ի չէր հասնում, շարունակեցին հարձակումը Գյանջա-Բաքու ուղղությամբ: Այն, որ Թուրքիա-Գերմանիա դիվանագիտական առճակատումը շարունակվեց նաեւ Բաթումի պայմանագիրը կնքելուց հետո, նույնպես ասում է, որ դրա պատճառը ոչ թե Արսարտյան դաշտն էր, այլ Կասպից ծովի ափերը:

Օգոստոսի 4-ին Լյուդենդորֆը սպառնաց Էնվերին, որ եթե նա չղաղաբեցնի հարձակումը Բաքվի վրա, ապա ինքը հարկադրված կլինի խնդրելու կայսերին գերմանական սպաներին հետ կանչել թուրքական բանակից: «Ես չեմ հանդուրժի, որ թուրքական պատասխանատու անձանց բացահայտ ուխտադրուժ վարքագծի պատճառով պատերազմի վտանգ ծագի Ռուսաստանի հետ»¹³⁷:

Բեռլինը դեմ լինելով Բաքվի վրա թուրքական հարձակմանը, ինքն էր պատրաստվում այդ անել: Վրաստանում կուտակվեց 15000 գերմանական ռազմական ուժ: Սեպտեմբերի 25-ին Լյուդենդորֆը հրամայեց Կրեսին.

¹³⁴ Muhlmann C., նշվ. աշխ., s. 200:

¹³⁵ Ն.ս., s. 205:

¹³⁶ Ն.ս.:

¹³⁷ Ն.ս., s. 297:

«Անհրաժեշտ է նախապատրաստել գրոհ Բաքվի վրա...»¹³⁸: Բայց թուրքերը Գերմանիային կանգնեցրեցին կատարված փաստի առաջ՝ հակառակ տված խոստումների՝ նրանք զարգացրեցին հարձակողական գործողությունները եւ սեպտեմբերի 15-ին մտան Բաքու: Գերմանիան դժգոհ էր, իսկ աղբբեջանցիները՝ երջանիկ: Ուսուրեկովը հայտարարեց. «Տվյալ դեպքում մենք կարող ենք ուրախ լինել հանգամանքների այն երջանիկ դասավորության համար, որ այստեղ եկող արտաքին ուժը՝ Թուրքիան, մեծ բարեկամ ու եղբայրական ուժ է»¹³⁹:

Եվ պատահական չէ, որ մուսավաթականները Բաթումի բանակցությունների ամբողջ ընթացքում բաքուն կապերի մեջ էին թուրքական պատվիրակության հետ, նրանց տեղեկացնում էին Անդրկովկասի անցուղարձերի, տրամադրությունների, նրա պատվիրակության պլանավորած քայլերի մասին:

Նույն ժամանակ վրացիները գաղտնի բանակցություններ էին վարում թե գերմանացիների եւ թե թուրքերի հետ: Նրանք ստացան գերմանացիների հավաստիացումը՝ երաշխավորելու Վրաստանի անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը:

Շահի անբարոյական ճահճում խեղդվում էր ամեն մի պարկեշտություն: Այն ամենակարող տիրակալի ուժով ձեռքի խաղալիք էր դարձնում անգամ ամենախոշոր տերությունների ամենահզոր տիրակալներին:

1919թ. Բեռլինում Մարկվարտը հայտարարեց. «Սիւնչե 1919-ի նոյեմբերը կառավարությունը (Գերմանիայի) խստիվ արգելել էր հրապարակել հայերի համար նկատառվող տեղեկություններ... արգելել էր այն ամենը, ինչ կարող էր հասարակության աչքերը բացել տեսնելու իրական դեպքերը: Հայերի հանդեպ գազանությունների վերաբերյալ երբեմն ներթափանցող լուրերը ներկայացվում էին որպես մեր թշնամիների չարամիտ հորինվածքներ»¹⁴⁰:

«Արդարացնելու համար մահմեդականների կողմից ձեռնարկված սատանայական միջոցառումները հանդեպ մի ժողովրդի, որի միակ մեղքն այն էր, որ չէր ցանկանում հօգուտ իսլամի հրաժարվել իր ազգությունից ու իր նախնիների քրիստոնեական հավատից, գերմանական մամուլը անտեղյակ քաղքենուն հեղեղեց զրպարտիչ լուրերով, որոնք մասամբ գալիս էին թուրքական աղբյուրներից, մասամբ էլ այդ նույն մամուլի հորինած կեղծիքն էին: Հայերը ներկայացվում էին ամենամռայլ գույներով՝ չարչիների ու վաշխառուների մի ըմբոստ

¹³⁸ Muhlmann C., նշվ. աշխ., s. 210:

¹³⁹ Ставровский А., նշվ. աշխ., с. 50-51:

¹⁴⁰ Marquart J., Die Entstehung und Wiederherstellung der Armenischen Nation. Berlin, 19189, s. 13-14:

խառնամրոխ, մինչդեռ «օսմանյան փառապանծ դաշնակիցները... երկինք էին հանվում իրենց կարծեցյալ խիզախության համար»¹⁴¹:

Վերջապես Գերմանիան հասկացավ, որ Բրեստը թուրքերին այնպիսի հնարավորություններ էր տվել, որ այլևս գրեթե անհնար էր դառնում նրանց համարուրթական ախորժակը գսպել:

Իսկ Թիֆլիսում Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչը գրեց Բրիանին. «Հայաստանն անկում ապրեց հյուսիսում եւ հարավում, արեւելքում եւ արեւմուտքում: Այն Հայաստան է առանց Լոռու եւ Ղազախի, առանց Արարատյան դաշտավայրի, առանց Շիրակի եւ Ախալքալաքի, առանց Ղարաբաղի եւ Չանգեզուրի»¹⁴²:

Կրեսը 1918թ. օգոստոսի 1-ին գրում է կանցլեր Հերտլինգին. «...Միայն դաշնակից տերությունների օգնությունն է ի վիճակի Հայաստանին փրկել կործանումից: 500.000 փախստականների ծանր վիճակն ավելի է ծանրանում ավազակների նոր հարձակումով: Հայաստանը գրավված է Թուրքիայի կողմից, ինչը խափանում է առեւտուրը, հայկական կառավարությունը զգուշանում է թուրքական նոր հարձակումներից: Թուրքիան չի պահպանում նաեւ Բաթումի պայմանագիրը: Հայաստանի կենսունակությունը հնարավոր է միայն Բրեստի դաշնագրով որոշված սահմաններում... Թուրքերը տարել են մասնավորապես բամբակը: Հացահատիկի բերքը մասամբ ոչնչացված է: Նախիջևանի երկաթգիծը պետք է անպայման պատկանի Հայաստանին»¹⁴³: Բեռլինից պատասխանեցին. «Սենը դժվար թե կարողանանք օգնել Հայաստանին»¹⁴⁴: Իսկ թուրքական բերքերը երանությանը էին գրում թուրանիստական ծրագրերի իրականացման մասին: Ադրբեջանի հանրապետությունը «թուրքական թագավորություն է Կովկասում»¹⁴⁵, «Կովկասը մեր կյանքն է, մեր հոգին»¹⁴⁶: «Մահիկի եւ կիսալուսնի բարձրացվող դրոշի լույսը թափանցում է «Խիվա, Տաշքենդ, Բուխարա, Դերբենդ, ոգեշնչում իսլամներին»¹⁴⁷: Ադրբեջանում էլ նույն երանությանը էին սպասում խալիֆի առաքյալներին:

Խան Խոյսկին հայտարարեց. «Սենը համոզված ենք, որ մեր ցեղակից ու կրոնակից եղբայրների՝ Մեծ Թուրանի ավագ որդիների աջակցությամբ մեր հայրենիքը կլինի ուժեղ եւ բախտավոր»¹⁴⁸:

¹⁴¹ Marguarf J., նշվ. աշխ., էջ 413:

¹⁴² Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 256:

¹⁴³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80:

¹⁴⁴ Ն.տ.:

¹⁴⁵ Ն.տ., գ. 614:

¹⁴⁶ Ն.տ.:

¹⁴⁷ Ն.տ.:

¹⁴⁸ Стеглов А., Армия мусаватского Азербайджана. Баку, 1927, с. 7:

Դրա հետ միասին ակնհայտ էր աշխարհի հզորների ուշադրության բեռնացումը տարածաշրջանին:

Ստացվեց մի վիճակ, երբ Անդրկովկասում հանգուցվեցին ոչ միայն Անտանտի ու Քառյակ զինակցության, այլև, առանձին վերցրած, Անգլիայի եւ Գերմանիայի, Թուրքիայի եւ Գերմանիայի շահերը: Իհարկե, այդ գործում մեծ էր, Վ. Մայակովսկու խոսքերով «աշխարհի պիջակի յուղոտ բծի» Բաքվի հիմնահարցի դերը, բայց ոչ միայն:

Գերմանիան ձգտում էր տիրանալ Բաքվին, բռնակցել Վրաստանը, իր հովանու ներքո ստեղծել հայ-վրացական դաշնություն եւ ամբողջ Անդրկովկասը դնել Վիլիելմ 2-րդի որդի Իոսահիմի իշխանության տակ: Բայց Բեռլինը դրանով չէր բավարարվում: «Անդրկովկասում եւ Հյուսիսային Պարսկաստանում ծավալվում է անգլիական եւ գերմանական կապիտալի մեծագույն գոտեմարտ, գրում է Գ. Կորգանովը,- գավթելով Անդրկովկասն ու Հյուսիսային Պարսկաստանը, գերմանական իմպերիալիստները Թուրքեստանի եւ Աֆղանստանի վրայով իրենց թաքը մեկնում են դեպի Հնդկաստան՝ անգլիական կայսրության մեծագույն գաղութը: Անգլիացիները, պայքարելով դրա դեմ, արագորեն մոտենում են Կասպից ծովին, նրանց գրահապատ շարասյունները խնդրի ունեն փակելու Պարսից ծոցից եկող պատը: Եվ ահա, երբ նրանք բարձու էին վերջին նավը, գերմանական զիշատիչները ճարպկորեն շրջանցեցին իրենց հակառակորդներին»¹⁴⁹:

Էնվերը կատաղում էր, որ գերմանացիները հասել են մինչև Անդրկովկաս: Նա ասում էր, թե «վրացիները կսխալվեն, եթե հավատան գերմանացիների հովանավորությանը»¹⁵⁰: Բանը հասավ նրան, որ Ախալքալաքում ու այլուր թուրքերը կրակ բացեցին գերմանացիների վրա եւ կրակեցին գերմանական զենքերից: Կ. Մյուլմանը նույնպես գրում է, որ Կովկասում գերմանական եւ թուրքական զորքերը «քշամաբար միմյանց դեմ կանգնեցին»¹⁵¹:

Բաթումի բանակցությունների կապակցությամբ թուրք-գերմանական վեճերը հրապարակային բնույթ ստացան: Շտրեյմանը ռալիստագում պահանջեց «բարեկամական ճնշում» գործադրել Թուրքիայի վրա, Ռեենտալովը թուրքական հավակնություններն անվանեց «թուրանական գաղափարի» մարմնացում: Դա զայրացրեց թուրքերին, եթե Գերմանիայի հետ դաշնակից լինելուց իրենք օգուտ չեն ունենալու, ապա ինչի է պետք այդ դաշինքը: «Չաման» թերթը վիճակի մեղավոր համարում էր հայերին: «Անկեղծորեն ասած,- գրում

¹⁴⁹ “Большевики в борьбе за...”, с. 419:

¹⁵⁰ Лудшвейг Е., նշվ. աշխ., с. 205:

¹⁵¹ Muhlmann C., նշվ. աշխ., с. 203:

է թերթը,- մենք չենք հասկանում, թե ինչու Բաքվի հայերը, անգամ հայկական սլտուրյան ստեղծումից հետո, ձգտում են Հայաստանից դուրս եւ խնդրում օտարերկրյա միջամտություն, չցանկանալով Բաքուն տալ իր իսկական տիրոջը՝ թուրքերին ու մուսուլմաններին»¹⁵²:

Սովորաբար Գերմանիայի օգնությանը ձգտելու մեջ մեղադրվում էին միայն հայերը: Իրականում այդ օգնությունից առանձնապես չօգտվեց նաեւ Վրաստանը: Ժորժանիայի. «Այժմ մեր կողքին միայն մի ուժ կա՝ Գերմանիան: Նրան պետք է դիմել» եւ Քաջազունու. «Եթե տվյալ պահին բրեւե մեկը կարող է մեզ օգնել... ապա դա միայն Գերմանիան է»¹⁵³ խոսքերը չէին արտահայտում աշխարհատարածքում տիրող իրավիճակի հրամայականները:

Հայերի եւ Հայաստանի գործոնի օգտագործման հաշվին առեւտուրը երկար շարունակվեց: Երբ անգլիացիները մտան Բաքու, այլեւս դադարեցին գործելուց այն հիմնավորումները, որոնք անհրաժեշտ էին դարձնում գերմանացիների հարձակումը այդ քաղաքի վրա: Բեռլինում Գերմանիայի ԱԳ նախարար Հինցեն այս հարցի շուրջ բանակցում էր Իոֆեի հետ: Նրանք համոզված էին, թե Բաքու մտնելու են միայն գերմանացիները, իսկ թուրքական զորքերը կանգ են առնելու քաղաքից դուրս: Եթե Իոֆեի համար դա նշանակում էր ապահովել Բաքվի հայ բնակչության անվտանգությունը, ապա Բեռլինի համար՝ մեծանում էր հնարավորությունը միայնակ տիրանալու կասպիական նավթին:

Օգոստոսի 27-ին ստորագրված ռուս-գերմանական լրացուցիչ համաձայնագրով գերմանացիներին բաժին էր հասնելու Բաքվի նավթի 1/4-ը: Դրա դիմաց Գերմանիան պարտավորվում էր Անգլիային դուրս վճարել Բաքվից: Սակայն գերմանացիներին շահողվեց համոզել թուրքական հրամանատարությանը չմտնել Բաքու, այլ կանգ առնել քաղաքի մերձակայքում: Գերմանիան նաեւ հարկադրված եղավ համաձայնվել, որ իր բաժին նավթի 1/4-ը կտրամադրի Ավստրո-Հունգարիային: Վերջինիս դա քիչ բվաց եւ Վիեննան բանակցություններ սկսեց ռուսների հետ՝ առաջարկով, որ ինքը նույնպես մասնակցի Բաքվի վրա հարձակման՝ իր զորքերը ուղարկի ոչ թե Հայաստան, այլ՝ Բաքու:

Գերմանո-ռուսական նշված համաձայնագիրը շփոթեցրեց Թալեաթին: Նա կորցրել էր Վրաստանը, կորցնում էր Ադրբեջանը (համեմայն դեպս Բաքվի նավթը), մնում էր Հայաստանը: Եվ հայության դահճի հույսը մնացին հայերը: Ահա թե ինչու նա 1800 շրջադարձ կատարեց հայերի հանդեպ իր քաղաքականությունում: Դրա համար էր, որ երբ շտապում էր Բեռլին գերմանո-ռու-

¹⁵² Завериев А., նշվ. աշխ., с. 40:

¹⁵³ Ն.տ., с. 66:

սական համաձայնության հետեւանքով առաջացած հիմնահարցերը քննարկելու, ընդունելության հրավիրեց հայկական պատվիրակությանը եւ ակնարկելով, թե Հայաստանի անկախությունը ոչ մի պետության կողմից, բացի Թուրքիայից ճանաչված չէ, առաջարկեց համագործակցել, նույնիսկ խոստացավ ընդլայնել ՀՀ սահմանները¹⁵⁴:

Բեռլինում հանդիպելով գինակցության ղեկավարներին, Թալեաթը հասկացավ, որ հայերի հետ համագործակցության գաղափարը հրապուրում էր նաեւ նրանց, որովհետեւ, եթե հայերին գրավեին իրենց կողմը, հնարավոր կդառնար Բաքվին տիրանալ առանց կռիվի:

Թալեաթը Բեռլին մեկնելով հույս ուներ, որ Գերմանիան մեկ անգամ եւս կերաշխավորի Օսմանյան կայսրության ամբողջականությունը, պայմանով, որ Կ. Պոլիսը Հայաստանին տար ինքնավարություն, ինչը կհեշտացներ բանակցությունները Ռուսաստանի հետ: Հայաստանի ինքնավարության տակ հասկացվում էին էրզրումի, Վանի, Սեբաստիայի, Դիարբեքիի, Բիթլիսի եւ Մամուրեթ ու Ազիզի նահանգները: Գերմանիան դրանով ձգտում էր «1. իրենից հեռացնել հայկական ջարդերի պատասխանատվությունը եւ 2. ազատվել ...Հայաստանի ստեղծման պատասխանատվությունից»¹⁵⁵:

Թալեաթի այդ հույսերի հիմքում, իհարկե, ընկած էր ցարական վարչակարգի տապալվելը, ինչը հնարավորություններ էր բացում, որ ռուսական նոր վարչակազմը նոր մոտեցում հանդես բերեր Արեւելյան հարցին, որ հող կստեղծեր ռուս-թուրքական համագործակցության համար Արեւմուտքի դեմ:

Արդեն ասվել է, որ խախտելով Բրեստի դաշնագիրը եւ «հանրաքվե» անունը կրող կեղծարարության միջոցով տիրանալով Կարսին, Արդահանին ու Բաթումին, թուրքերը սկսեցին տեղի հայ բնակչության հաշվեհարդարը: Մտցվեցին օկուպացիոն կարգեր, 19 տարեկանից բարձր արական սեռի բնակչությունը հավաքվեց¹⁵⁶:

Խորհրդային կառավարությունը հայտարարեց, թե «չի կարող համաձայնել Կարսի, Արդահանի եւ Բաթումի մարզերի բնակչության, այսպես կոչված, կամքի արտահայտության արդյունքների հետ, իրենց մարզերում նոր կարգ հաստատելու այդ բնակչության իրավունքը համարում է չօգտագործված և նշված մարզերի նոր կարգի հարցը՝ բաց»: Խորհրդային կառավարությունն ամե-

¹⁵⁴ Wien HHSTA PAX 157, Pera, 05.09.1918, N521:

¹⁵⁵ Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N365:

¹⁵⁶ ДВП СССР, т. 1, с. 514:

նայն որոշակիությամբ արձանագրում էր. «Անցած կես տարում օսմանյան կառավարությունն անընդհատ խախտել է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը՝ հակառակ խորհրդային կառավարության բոլոր բողոքներին: Ներկայումս, ի լրում ամենի, նա նաև զավթել է սարսափելի ավերածության է ենթարկել Ռուսաստանի Հանրապետության կարեւորագույն քաղաքներից մեկը:

Օսմանյան կառավարությունը դրանով ցույց տվեց, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջև այլևս գոյություն չունի»¹⁵⁷: Դա 1918թ. սեպտեմբերի 20-ին էր, այսինքն, երբ թուրքերը Բաքվում ավարտում էին հայերի ջարդը:

Վերջնագիրը հանձնվեց Թալեաթին, որը նկատի ունենալով օսմանյան բանակի խոշոր պարտությունները Մակեդոնիայում ու Պաղեստինում եւ զգալով, որ իր կառավարության վախճանը մոտ էր, դիմում է Իռֆեին բանակցություններ սկսելու «առաջացած առճակատումը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար»¹⁵⁸:

Մոսկվան համաձայնվեց, բայց պայմանով. «1. Թուրքիան իր զորքերը հեռացնում է մինչև Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները: Խոսքը գնում էր կանոնավոր եւ անկանոն զորքերի՝ զինվորական հանդերձանքով, թուրք բոլոր կամավորների, ինչպես նաև թուրքական քաղաքացիական ծառայողների եւ նշված տարածքները Ռուսաստանի զորքերին հանձնելու մասին: 2. Թուրքերի կողմից Բրեստի պայմանագրի խախտման պատճառով Ռուսաստանին հասցված վնասների չափը պարզելու համար ստեղծել միջազգային հանձնաժողով: 3. Երկու կողմերը դիմեցին գերմանական կայսերական կառավարությանը, խնդրելով երաշխավորել այդ պարտավորությունների կատարումը»¹⁵⁹:

Թալեաթը պատասխանի համար պետք է խորհրդակցեր «իր ընկերների հետ» եւ արդյունքների մասին տեղյակ էր պահելու Բեռլինում խորհրդային դեսպանությանը: Որոշ ժամանակ անց Բեռլինում թուրքական դեսպան Ռիֆատը հայտնում է Իռֆեին, թե թուրքական զորքերն արդեն սկսել են նահանջել դեպի Բրեստի պայմանագրով որոշված սահմանագիծը: Դրա հետ միասին Կ. Պոլիսը հրաժարվեց ազատված տարածքը հանձնել խորհրդային զորքերին: Մոսկվան նոր վերջնագիր ներկայացրեց: Ռիֆատն առաջարկեց ստորագրել արձանագրություն Կովկասի իրավիճակը կարգավորելու վերաբերյալ: Թուրքերը փաստորեն ընդունեցին խորհրդային պահանջները, բացի

¹⁵⁷ ДВП СССР, т. 2, с. 492:

¹⁵⁸ Ն.տ.:

¹⁵⁹ Ն.տ.:

հետ տրվող տարածքները կարմիր բանակին հանձնելու պահանջից: Խոսքն, իհարկե, առաջին հերթին Բաքվի մասին էր:

Իռֆեն ավելի համառ էր եւ սպառնաց Թուրքիայի հետ խզել դիվանագիտական հարաբերությունները, քանի դեռ «թեկուզ թուրքական մեկ զինվոր կա ռուսական տարածքում» (նա Անդրկովկասը համարում էր ռուսական տարածք) Թուրքիայի հետ համաձայնագիր չի ստորագրվելու¹⁶⁰:

Թալեաթը նորից առաջ քաշեց հետեւյալ ծրագիրը՝ Վրաստանը որոշ տարածքներ զիջեր Թուրքիային, իսկ Հայաստանը եւ Ադրբեջանը միավորվեին եւ ստեղծեին բուֆեր պետություն Ռուսաստանի եւ Թուրքիայի միջև: Բարուն մտներ Ադրբեջանի կազմի մեջ: Նա մտադիր էր ստեղծել Թուրքեստան ռազմական միավորը, որպես միջոց պատերազմելու Անգլիայի եւ Ռուսաստանի դեմ: Դրա համար խնդրեց Գերմանիայից Թուրքիային տրամադրել սպաներ եւ ենթասպաներ¹⁶¹:

Ռուսաստանի ներկայացուցիչը Թալեաթի պլանին հակադրեց ուրիշ տարբերակ՝ եթե հայերն առաջարկեին, Ռուսաստանը հավանաբար կճանաչեր Հայաստանի անկախությունը, պայմանով, որ Թիֆլիս-Ջուլֆա երկաթուղին մնար Հայաստանին, քանի որ «միակ երկաթուղին էր դեպի Պարսկաստանի կարևոր մասերը»¹⁶²:

1918թ. սեպտեմբերի 23-ին Բեռլինում թուրքերն ու գերմանացիները ստորագրեցին համաձայնագիր՝

– Թուրքիան ճանաչում էր Վրաստանին, Հայաստանին, Ադրբեջանին: Գերմանիան ճանաչում էր միայն Վրաստանին, իսկ Հայաստանում եւ Ադրբեջանում պահելու էր հյուպատոսներ: Գերմանիան միջնորդելու էր, որ Ռուսաստանը նույնպես ճանաչեր այդ երկու պետություններին այն բանից հետո, երբ թուրքական զորքերը հանվեին դրանց տարածքներից, բացառությամբ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծից:

– Թուրքիան ձգտելու էր ստեղծել ինքնուրույն պետություններ Հյուսիսային Կովկասում եւ Թուրքեստանում:

– Թուրքիան եւ Գերմանիան անելու էին հնարավորը, որպեսզի Քառասյակ զինակցությունը առավելագույնս օգտվեր Կովկասի տնտեսական կարողություններից: Թուրքիան համաձայնվում էր, որ Գերմանիան տնօրիներ նավթային արդյունաբերությունը, Թիֆլիս-Բաքու երկաթուղին եւ նավթամուղը:

¹⁶⁰ ՀՀ ԿՀԲԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 251:

¹⁶¹ R 14104 Ab. 37656:

¹⁶² R 11063 Ab. 37804:

– Անգլիայի դեմ ռազմական գործողությունների ավարտից հետո Թուրքիան իր գործերը դուրս էր հանելու Պարսկաստանից¹⁶³։

Հ. Օհանջանյանի հետ հանդիպումների ժամանակ Իոֆեն այն միտքն էր զարգացնում, թե «Պայերն անշնորհակալ են։ Բոլշևիկները փրկեցին նրանց՝ հարկադրելով բուրբերին նահանջել, այն ինչ գերմանացիներին չէր հաջողվում... ի դեպ նրանք (գերմանացիները) երբեիցե ձգտե՞լ են այդ անել լրջորեն»¹⁶⁴։

Գերմանիայի հարցում Իոֆեն ճիշտ էր։ Քանի դեռ աշխարհամարտն ընթանում էր առանց Թուրքիայի համաձայնության, որեւէ քայլ չէր կատարվում եւ չէր կարող կատարվել։ Նա հոգեհարազատացել էր երիտթուրքերի հետ։ Եվ երբ ստեղծվեց վտանգ, որ իրիհադի իշխանության անկումն անխուսափելի էր, Բեռլինն անմիջապես իր ծառայությունն առաջարկեց։ Ռայխսկանցելարիայում շրջանառության մեջ էր մի ծածկագիր, որը հաստատում էր. «Թալեափի եւ Էնվերի առաջ, ովքեր մեզ հետ դաշինքի մեջ էին եւ հավատարիմ մնացին, մեր երկրի դռները բաց են»։ Ապա տրվում էր հանձնարարություն Կ. Պոլսի դեսպանին. «Բոլոր հնարավոր միջոցներով օգնել նրանց, ովքեր կորոշեն փախչել Թուրքիայից»։ Բայց ովքեր «կձգտեն հայերին հալածելու համար պատասխանատվությունից խույս տալ փախուստի միջոցով, մենք օրեւան չենք տա»։ Այնուհետեւ սկսում է բացարձակ կեղծարարությունը. «Այն բախտորոշ ժամանակներում մենք հնարավորն արեցինք... որպեսզի կանխենք չարագործությունը եւ մենք իրավունք չունենք հետին թվով մեր վրա վերցնել մեղքի մի մասը՝ պաշտպանենք հանցագործներին»¹⁶⁵։

Գիվանագիտությունն անպարկեշտությամբ սնողն է կամ ինքն է սնվում դրանից։ Պարզվում է, որ Թալեափն ու Էնվերը միամիտ գառնուկներ էին եւ որեւէ դեր չէին խաղացել հայկական ջարդերի իրականացման գործում։

Իոֆեն նկատի ուներ իր եւ Ռիֆափի կողմից ստորագրված ռուս-թուրքական արձանագրությունը, որի առաջին կետում ասվում էր. «Թուրքական կանոնավոր եւ անկանոն գործերը, ներառյալ հրահանգիչներն ու պաշտոնատարները, Կովկասից հանվելու էին, բացառությամբ այն գավառներից, որոնք նշված են Բրեստի խաղաղության դաշնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետում։ Ընդ որում նրանք իրենց հետ պետք է տանեին թուրքական ամբողջ ռազմական տեխնիկան։ Չորրի եւ ռազմական տեխնիկայի հանելը պետք է կատարվեր չորս շաբաթվա ընթացքում»¹⁶⁶։

¹⁶³ R 11060 Ab. 3997811։

¹⁶⁴ R 11063 Ab. 41928։

¹⁶⁵ R 14104 Ab. 45718։

¹⁶⁶ R 11060 Ab. 4207018։

Իոֆեն Հ. Օհանջանյանին նաեւ զգուշացրեց, թե խորհրդային կառավարությունը չի ճանաչի ՀՀ կառավարությանը, քանի դեռ վերջինը չի ճանաչել Մոսկվայի կառավարությանը։ Նա միաժամանակ ասաց, թե խորհրդային կառավարությունը պնդում էր Կարսի ու Բաթումի ինքնորոշման եւ Արեւմտյան Հայաստանի ինքնավարության վրա։ «Ռուսաստանը ներկայումս խզել է արդեն յուր խաղաղ ժամանակի հարաբերությունները Տաճկաստանի հետ...»¹⁶⁷։

Նույն օրերին Վիեննայում կայացած խորհրդաժողովում, որին մասնակցում էին Բուլղարիայի քաղաքոր ֆերդինանդը, Գերմանիայի ԱԳ նախարար Պ. Հինցեն, Թալեափը եւ այլոք, վերջինս նորից առաջ քաշեց Անդրկովկասը գերմանական եւ թուրքական ազդեցության գոտիների բաժանման հարցը եւ նորից պաշտպանեց Հայաստանի անկախությունը։ Մինչդեռ Գերմանիան Թուրքիային «զիջեց» Հայաստանը ինքնավարության կարգավիճակով¹⁶⁸։ Ավստրո-չունգարիան, թերեւս այդ պատճառով հրաժարվեց Հայաստանի հովանավորությունը վերցնելուց, որովհետեւ չէր «ուզում դաշնակից Թուրքիայի հանդեպ որեւէ անախորժ քայլ անել»։ Վիեննայում Հ. Օհանջանյանին ասացին, թե «թուրք ղեկավար շրջանները ներկայումս հիասթափվել են համախալամիզմից՝ արաբների բռնած դիրքի պատճառով եւ տարված են համաթուրանիզմի գաղափարով, իսկ Հայաստանը գտնվում է նրանց ճանապարհի վրա։ Այն, որ Թուրքիան կարծես հաշտվում էր Հայաստանի գոյության հետ, որովհետեւ կարծում է, որ Հայաստանին հնարավոր էր սահմանափակել Բաթումի պայմանագրով նշված սահմաններում, այսինքն՝ խոսք չի կարող լինել Թուրքիայից նրան տարածք տալու մասին (Վան, Ալաշկերտ եւ այլն), հակառակ պարագայում «բոլորովին կփակվեր Տաճկաստանի ճանապարհը դեպի թուրանական արեւելք...»¹⁶⁹։ Վիեննայում հայ պատվիրակներին նաեւ խորհուրդ տվեցին «զգույշ վերաբերվել Թալեափի խոսքերին»։ Եվ դա հենց այնպես չէր ասվում, որովհետեւ Թալեափի սիրալիրությունը հայկական պատվիրակության հանդեպ մի խնդիր էր հետապնդում՝ Հայաստանին ներքաշել ծրագրավորված «Արեւելյան դաշնակցության» մեջ։ Թալեափը խնդրի լուծմանը հասնելու համար գնում էր ամեն ինչի, անգամ արտասանում էր հանրահայտ երգի տողերը. «Անդրանիկը քաջ՝ գնանք դեպ Սասուն»։ Հ. Օհանջանյանը սեպտեմբերի 23-ին գրեց. «Թալեափ փաշան ինձ ընդունեց շատ սիրալիր, բայց երեսու է, որ չի

¹⁶⁷ ՀՀ ԿՀԶԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 251։

¹⁶⁸ "Kreizer Zeitung", 13.09.1918։

¹⁶⁹ ՀՀ ԿՀԶԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 251։

ուզում մտնել մեզ հետ մեր խնդրի խոր քննության մեջ»¹⁷⁰։ Դա հասկանալի էր, որովհետև անորոշ էին դարձել թուրք-գերմանական հարաբերությունները։ «Տարածայնություններն Անդրկովկասի հարցում 1918-ին,- գրում է Տրումպե-ները,- գերմանո-թուրքական դաշինքը շատ ավելի լարված դարձրին, քան պատերազմի որևէ ուրիշ իրադարձություն։ Եթե պատերազմը շարունակվեր, կարող էր հասցնել երկու դաշնակիցների բացահայտ խզման»¹⁷¹։ Այդ պայքարի առանցքը մնում էր Բաքվի նավթը։ Թալեաթը դժգոհ էր, որ ռուս-գերմանական լրացուցիչ համաձայնագրով Բաքուն թողնվում էր Ռուսաստանին։ Որպեսզի դաշնակից թուրքի մոլուցքը սանձի Գերմանիան 45 միլ. լիթառուբյուն տվեց Թուրքիային։ Բայց դա էլ երկու երկրների հարաբերություններում էական փոփոխություն չմտցրեց։ Հակասությունները դրսևորվում էին անգամ մանրուքներում։ Փոքրիկ թուրքերը պոկեցին գերմանական դրոշը եւ հայտարարեցին, թե շփոթել էին վրացականի հետ։

Ի դեպ, Կ. Պոլսի խորհրդաժողովը նույնպես թուրքական ծուղակ էր։ Թուրքերը ցանկանում էին այդ կերպ որոշել կովկասյան հանրապետությունների միջև սահմանները եւ իրենց համար ցանկալի «սահմանները դաշնակիցների եւ կովկասցիների վզին փաթաթել» Գերմանիայի օգնությամբ։

Խորհրդաժողովում Բերնսդորֆն առաջարկեց Կովկասը բաժանել երկու մասի՝ քրիստոնեական եւ մահմեդական։ Թուրքերը համաձայնվեցին, բայց վրացիները մերժեցին, որովհետև այդ դեպքում «նրանք ընկնելու էին հայերի գերիշխանության տակ։ Հայերը ցանկացած առումով,- գրում է գերմանական ղեսպանը,- առավելության հասնելու էին վրացիների նկատմամբ, ովքեր մշտապես թուրքերից հեռանում, խորթանում են Հայաստանի հանդեպ պատալոգիական թշնամության եւ վախի պատճառով»¹⁷²։

Նա գտնում էր, որ «Բաքուն ու Բաթումը պետք է դառնային բաց նավահանգիստներ։ Այդ ժամանակ վրացիներն ու հայերը կարող են փորձել նեցուկ գտնել մեզանում, իսկ մուսուլմանները թուրքերի մոտ։ Ծիշտ է, վրացիները կդիմադրեն, սակայն ի վերջո կվիջեն, որովհետև տնտեսական կյանքում նրանք զգում են հայերի կարիքը»¹⁷³։

Քյուլմանը հավանություն տվեց Բերնսդորֆի նախագծին։ Նա նաև զգուշանում էր, որ այն դառնալու էր խոչընդոտ ամբողջ Կովկասին տիրանալու Բեռլինի ծրագրերի կենսագործման առաջ։ Սակայն հավանություն տվեց ա-

¹⁷⁰ ՀՀԿՀԲԿՊԱ, №4047, ց. 1, գ. 251։

¹⁷¹ ԲՀԱ, 1970, N2։

¹⁷² R 14102, Ab. 27839։

¹⁷³ "Армянский вопрос и геноцид армян...", с. 541-542։

ռաջարկված նախագծին, քանի որ այն խնդիր ուներ Անդրկովկասի փլուզման ընթացքում «ինչ-որ բան փրկելու Գերմանիայի համար եւ հույս ունեն, թե Անդրկովկասի հարստություններից (նավթ, երկաթ, մարգանեց, բամբակ, բուրդ եւ այլն) իրենց բաժին կհասներ»¹⁷⁴։

Ուշագրավ է նաև Կրեսի տեղեկատվությունը, թե թուրքերը Հայաստանն «ամբողջությամբ պահում են իրենց բռի մեջ»։

Գերմանացիները դեռևս 1918թ. հունիսին ներկայացուցիչներ ուղարկեցին Բաքու իրենց ռազմագերիներին տեղափոխելու եւ «խնդրելու Բաքվի հայկական պարետությանը գերմանացիներին պաշտպանելու թուրքերից եւ Բաքվի նավթի ամբողջ պաշարն անվնաս դնելու գերմանացիների հովանավորության տակ...»¹⁷⁵։

Բաթումում հայկական պատվիրակությունը համաձայնվեց գործարքի մեջ մտնել թուրքերի հետ Բաքվի կոմունայի դեմ։ Ազգային խորհրդի հունիսի 6-ի նիստում Խատիսյանն ասաց. «Բաքվի հարցը երկար խորհրդակցությունների նյութ դարձավ, թուրքերը պահանջում էին ակտիվ միջամտություն հեղափոխականներից ազատվելու եւ կռվին վերջ տալու։ Մենք միայն ասացինք, որ գործի կղնենք մեզինք կախված բոլոր միջոցները... հետներս մի սպա էր եկել մեր ներկայացուցչի հետ Բաքու գնալու եւ այդ խնդիրը լուծելու...»¹⁷⁶։

Քաջազունին հաստատեց, որ «թուրք սպան եկել էր պատվիրակության խնդրանքով»¹⁷⁷։

Սի³թե պատահական է, որ Լենինը սկզբում համաձայնություն տվեց րանակցություններ սկսելու ՀՀԴ հետ, սակայն դրանք չկայացան, որովհետև, ինչպես գրում է Տրոցկին «Դաշնակցութիւնը կը հետեւի անգլիական օրինատասինին, որով մեր ընդհանուր աշխատանքը անհնար կը դառնայ»¹⁷⁸։

Բայց արդար չի լինի նաև շասեկ, որ հայ բոլշեիկներից ոմանք այդ փաստերն օգտագործում էին մեղ կուսակցական, անգամ անձնական շահերի, վրեժխնդրի լինելու համար։ Օրինակ, ինչ անուն տալ Զավրիեի, Նազարյանցի եւ Դարբինյանի ձեռքակալությանը։

Բանը հետեւյալն է։ Ս. Տեր-Գաբրիելյանը միջամտում է Մոսկվայի կառավարության առաջ ՀՀ կառավարության ներկայացուցիչների հետ բանակցություններ սկսել երկու երկրների միջև համաձայնագիր կնքելու նպատակով։ 1918թ. օգոստոսի 28-ին վերը նշված երեք գործիչները Հայկական գործերի կո-

¹⁷⁴ R 14102, Ab. 27839։

¹⁷⁵ R 11053 Ab. 31351։

¹⁷⁶ Հայ ազգային խորհրդի նիստերի արձանագրություն. ք. 246։

¹⁷⁷ Ն.տ.։

¹⁷⁸ Փիրումեան Ռ., նշվ. աշխ, էջ 160։

միսարիատում նշանակված ժամին սպասում էին ռուսական կառավարության ներկայացուցիչների՝ Կամենեի, Ավանեսովի եւ Տեր-Գաբրիելյանի գալուն: Բայց նրանք այդպես էլ չեկան: Նույն օրվա գիշերը ՀՀԴ այդ գործիչները ձերբակալվեցին որպես պատանդ 26 կոմիսարների համար: Նրանք բանտում մնացին մինչեւ 1919թ. մարտ ամիսը:

Ռուսաստանի եւ Հայաստանի հարաբերությունները սրելու գործում հատկապես մեծ է Գ. Հայկունու ներդրումը, նա թե անձամբ էր զբաղվում հակա-դաշնակցական քարոզչությամբ եւ թե գործակալներ էր ուղարկում Հայաստան «ժողովրդին դաշնակների դեմ հանելու» համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1916 ԵՎ 1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԽԱՉՍԵՐՈՒԿՈՒՄ
(Ներածության փոխարեն)----- 3

ԳԼՈՒԽ I

ՀՐՈՎԱՐՏԱԿ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ----- 53

ԳԼՈՒԽ II

ԵՐԶՆԿԱՅԻՅ ՄԻՆՉԵՎ ՏՐԱՊԻԶՈՆ
1. ԹՈՒՐՔԵՐԸ ՍԿՍՈՒՄ ԵՆ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ----- 90
2. ՄԻՆՉԵՎ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿՍՎԵԼԸ---- 108
3. ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ----- 121

ԳԼՈՒԽ III

ԲՐԵՍ-ԼԻՏՈՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ----- 146

ԳԼՈՒԽ IV

ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՍԱԼՔՈՒԹՅԱՆ ԱՄԻՄՆԵՐ
1. ԷՐԶՐՈՒՄԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ----- 178
2. ՍԱՐԻՂԱՄԻՇԻՅ ՀԵՏՈ----- 209
3. ՍԱՄՆՈ ԼԵՌՆԵՐԻՅ ՄԻՆՉԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳԱՇՏ----- 235

ԳԼՈՒԽ V

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐ
1. ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԱՆԳՐԿՈՎԿԱՍՈՒՄ----- 249
2. «ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ»----- 263
3. ՎՐԱՅ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ----- 275

ԳԼՈՒԽ VI

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ-----287

ԳԼՈՒԽ VII

ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

- 1. ՄԻՆՉԵՎ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ----- 319
- 2. ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄ-----334
- 3. ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ-----342
- 4. ԲԱԹՈՒՄԻՑ ՀԵՏՈ-----352

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ ԿԱՐՈ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԵՎ

ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հատոր ԵՐՐՈՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ 1917Թ. ԵՐԿՐՈՐԳ ԿԵՄԻՅ ՄԻՆՉԵՎ ՀՀ
ՍՏԵՂԾՈՒՄԸ

Գ ի թ թ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Մ ա ս Ա

СТЕПАН ПОГОСЯН КАРО ПОГОСЯН
ИСТОРИЯ АРМЯНСКОГО ВОПРОСА
И АРМЯНСКОГО ГЕНОЦИДА

Том 3

Армянский вопрос: со второй половины
1917г. до создания РА

Книга 3
Часть А
(на армянском языке)

Ереван "Айастан" 2003

Խմբագիր՝ Ռ.Մարգարյան
Համակարգչային մակետավորումը՝ Ա.Լանջունու



Տպագրությունը՝ «Եգես» հրատարակչատան
Երևան 9, Իսահակյան 28:

Ստորագրված է տպագրության՝ 01.04.2004թ.: 24,5 տպ. մամուլ: 26,8 հրատ. մամ.:
Գինը պայմանագրային:

«Հայաստան» հրատարակչություն. Երևան 9, Իսահակյան 28: